



ՀԱԿՈՐ ՓԱՓԱԳՅԱՆ

ՀՈԴԿԱԾՆԵՐ



ՀԱՏՈՐ Բ







**MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT
MANUSCRIPTS**

НАКОВ РАПАЗИАН

ARTICLES

VOLUME II

**YEREVAN
2020**

**МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ
МЕСРОПА МАШТОЦА**

АКОП ПАПАЗЯН

СТАТЬИ

ТОМ II

**ЕРЕВАН
2020**

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԿՈՒԲ ՓԱՓԱԶՅԱՆ

ՀՈՒՎԱԾՆԵՐ

Հատոր Բ

**ԵՐԵՎԱՆ
2020**

ՀՏԴ 93/94:070
ԳՄԴ 63.3+76.01
Փ 311

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ
Խմբագիր՝ Վ. Տեր-Ղևոնդյան
Կազմող՝ Բ. Կոստիկյան*

ՓԱՓԱԶՅԱՆ ՀԱԿՈՒՅ

Փ 311 Հոդվածներ/Հ. Փափազյան.- Եր.: Մատենադարան, 2020.
Հատոր Բ.- 376 էջ:

*Հակոբ Փափազյանի հոդվածների ժողովածուի երկրորդ հատորում
գիտնականի՝ արևելագիտության և հայագիտության տարբեր խնդիրնե-
րին առնչվող, 1973-1994 թթ. լույս տեսած ուսումնասիրություններից
բացի, առանձին ենթաբաժիններով ներկայացված են նաև նրա գրա-
խոսությունները և հրապարակախոսական նյութերը:*

ՀՏԴ 93/94:070
ԳՄԴ 63.3+76.01

ISBN 978-9939-9237-7-2
© Մատենադարան, 2020

ՕՏԱՐ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԵՐԿՐՈՒՄ (ԺՁ դ.)*

Հ. Գ. ՓԱՓԱՋՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

1502 թ. շահ Իսմայիլի հիմնադրած կըզըլբաշների կիսաթեոկրատիկ տերությունը կոչված էր վերածնելու իրանական պետության ավանդներն ու նպաստելու ֆեոդալական միապետության դարգացմանը նոր պայմաններում: Հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքում նկատվող տեղաշարժերը թելադրում էին նոր պետության բնույթը, որն արտահայտվում էր նրա որդեգրած ներքին և արտաքին քաղաքականությանը:

Շիրվան հայտարարելով պետական կրոն, շահ Իսմայիլը ձեռք էր բերում բնակչության մեծամասնության համակրանքը: Նորաստեղծ պետության զբաղվոր ռազմական հենարան թրքախոս քոչվոր ցեղերը, որոնք մտել էին կըզըլբաշների օրդենի մեջ, ևս համակրանքով են ընդունում այդ որոշումը: Նույնը պետք է ասել նաև հողագործ գյուղացիության մեծ մասի վերաբերյալ: Ասկայն վերջիններին ավելի հրապուրում էին երիտասարդ շահի այն միջոցառումները, որոնք անմիջապես վերաբերում էին բնակչությանից գանձվող հարկերի թեթևացմանը:

Շուրջ 40 տարի առաջ Աղկոյունլու Ուզուն-Հասանի «ապօրինի» հայտարարած մի շարք հարկեր և տուրքեր, առանձին հրովարտակներով հայտարարվեցին արգելված: Դա միաժամանակ հաստատում էր, որ շնայած Ուզուն-Հասանի օրոք աշխատավոր գյուղացիության ծանր վիճակը որոշ չափով հաջողվել էր թեթևացնել, սակայն դրությունը գնալով վատթարացել էր, դարավերջում դառնալով ավելի քան անտանելի: 1503—1506 թթ. շահ Իսմայիլի հրապարակած հրովարտակներում շուրջ 12 անուն հարկեր ու տուրքեր հայտարարվեցին «արգելված պահանջմունքներ» կամ «արգելված դիվանական պարտավորություններ»: Սրանով շահը նպատակ ուներ մեղմացնելու բնակչության մեջ դարավերջում առաջացած բուռն դժգոհությունները:

Արագ կերպով կազմակերպելով նոր ռազմունակ բանակ, շահ Իսմայիլը կարողացավ կարճ ժամանակում տիրել իրանի մեծ մասին, Ադրբեջանին, Հայաստանին ու Միջագետքին: Համարձակ առաջխաղացման ընթացքում նա

* 1960 թ. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագրում» (№ 7—8) հրապարակելով նույն վերնագրով մի հոդված, փորձել էինք նոր աղբյուրների օգնությամբ պարզաբանել Արարատյան երկրում օտար տիրապետության սկզբնավորման հանգամանքներն ու ճշգրտել այնտեղ իշխող ամիրների ու հաբիմների ծագումն ու ժամանակագրական կարգը, այն հասցնելով մինչև XV դ. վերջը: Ներկա հոդվածում քննում ենք XVI դ. Արարատյան երկրում իշխած կըզըլբաշ ամիրների ու բեկլարբեկիների և օսմանյան փաշաների ինքնության և ժամանակագրության հետ առնչվող հարցերը:

1 Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, կազմեց Հ. Գ. Փափաջյան, պրակ Ա (ԺԵ—ԺԶ դդ.), Երևան, 1956, վավ. 8—10 (այսուհետև՝ «Հրովարտակներ» I):

դեմ հանդիման կանգնեց ժամանակի հզոր կայսրությունը՝ Օսմանյան Թուրքիային, որը, թեև սուլթան Բայազիդի (1481—1512) օրոք հաշտ աչքով էր նայում նորակազմ պետության հաջողություններին և նույնիսկ պաշտոնապես ճանաչել էր Իսմայիլի թագադրությունը, սակայն նրա հաջորդ՝ սուլթան Սելիմի ժամանակ (1512—1520) հալածելով իր սահմաններում ապրող շիաներին՝ խիստ թշնամական դիրք բռնեց շահ Իսմայիլի նկատմամբ:

Սելիմի օրոք ծայր առան և հետզհետե մեծ ծավալ ընդունեցին թուրքիրանական ավերիչ պատերազմները, որոնք մղվում էին մերթ շայտեպես բարձրավանդակին, մերթ Անդրկովկասին, Ատրպատականին ու Միջագետքին տիրելու համար և կարճատև ընդմիջումներով շարունակվեցին մինչև XVII դ. 30-ական թվականները:

Թուրք-պարսկական կռիվների ընթացքում Արարատյան երկիրն ու նրա կենտրոն Երևանը բազմիցս ավերվել են ու ամայացել, կործանվել են քաղաքներ ու շենքեր, հրկիզվել գյուղեր ու ավաններ, երկիրը ձեռքից ձեռք է անցել, հաճախակի փոփոխության են ենթարկվել նրա սահմաններն ու ներքին վարչական բաժանումը:

1512—1514 թթ. ծավալված ռազմական գործողություններն ավարտվեցին երկու տերությունների միջև 1515 թ. կնքված պայմանագրով, որով ամբողջ Արևմտյան Հայաստանն ու Հյուսիսային Միջագետքն անցնում էին Թուրքիային: Պետական սահմանների այսպիսի փոփոխության հետևանքով Արևմտյան Հայաստանում բնակչության նշանակալից տեղաշարժեր կատարվեցին: Քրդական տարրը սկսեց կայուն բնակություն հաստատել Պատմական Հայաստանի նաև կենտրոնական նահանգներում:

Սուլթան Սելիմը ի դեմս քրդական աշիրաթների տեսնում էր մի ուժ, որը կոչված էր կարևոր դեր խաղալու Օսմանյան կայսրության արևելյան սահմանների պաշտպանության գործում: Օգտագործելով դավանակցության փաստը, նա առաջ քաշեց և սիրաշահեց այդ ցեղերի ամիրներին, որոնցից այդ ժամանակ առավել հայտնի էր և մյուս աշիրաթների մեջ ևս լայն ժողովրդականություն էր վայելում, Բաղեշի Ռոժակի մեծ ցեղից Մուլլա Իդրիս Բիթլիսին:

Շարաֆ խան Բիթլիսիի վկայությամբ՝ այս տարիներին «բազմաթիվ աշիրաթներ Սուլեյմանի քրդերից, որոնք բնակվում էին Միաֆարդինի կողմերում, գնացին բնակություն հաստատելու կըզըլբաշներից զբաղված վայրերում, միաժամանակ հանձն առնելով պաշտպանել սահմանները: Այդ աշիրաթների պարագլուխները կարևոր պաշտոններ՝ զիամեթներ, ալայբեկիներ և սանջաքներ ստացան»²: Շարաֆ խանը հատկապես հիշում է Բեսյան ցեղի առաջնորդ Շահսուվար բեկին, որին վստահված էր «Երևանի վիլայեթի Բայազետի բերդի պաշտպանությունը»³:

Այսպիսով, Արարատյան երկիրը կամ Զոլփուր-Սա՛ղի վիլայեթը, որը XV դ. Կարակոյունլուների և Աղկոյունլուների տերության կազմում ընդգրկում էր Պատմական Հայաստանի համարյա ամբողջ Այրարատ նահանգը՝

² Schéref-nameh ou Histoire des Kourdes, par Schéref, prince de Bidlis, publiée par V. Veliaminof-Zernof, SPB, 1860, t. I (պարսկ. բնագիր), էջ 269—270 (այսուհետև՝ Schéref-nameh).

³ նույն տեղում:

արևելքից տարածվելով մինչև Սևանա լճի ավազանն ու արևմուտքից մինչև վանանդ ու Բագրևանդ⁴, կորցնում էր Ախուրյան գետից և Հայկական պարից դեպի արևմուտք և հարավ ընկած շրջանները: Վիլայեթի կազմից դուրս էին դալիս վանանդը, Ալաշկերտն ու Բայազետի բերդը մերձակա շրջաններով, որտեղ ժառանգական տիրությունը հողեր էին ստանում հարավային և հարավարևմտյան Հայաստանից գաղթած քրդական ցեղերի առաջնորդները: Իսկ քրդական Մահմուդի և Փազուկի ցեղերը, որոնք շարունակում էին հավատարիմ մնալ շահ Իսմայիլին, օլթաններ էին ստանում Ալաշկերտի արևելյան հատվածում և այդ ժամանակ Չուխուր Սադի մեջ մտնող Մակվի և այլ շրջաններում⁵:

Չափազանց կցկտուր են տեղեկությունները XVI դ. առաջին երկու տասնամյակների վերաբերյալ: Պարզ չէ հատկապես թե շահ Իսմայիլի օրոք, մինչև Չալդրանի ճակատամարտը և նրանից հետո, երբ Արարատյան երկրում նորից վերահաստատվել էր կրգըլթաշների իշխանությունը, ովքե՞ր են իշխել Չուխուր-Սադի վիլայեթում:

Ղ. Ալիշանը «Ալրարատում», հավանաբար, թուրքական աղբյուրների հիման վրա, շահ Իսմայիլի կառավարման առաջին տարիներին հիշում է ոմն Ռեան խան, գտնելով, որ վերջինս հավանաբար այսպես է կոչվել Երևան քաղաքի անունով⁶: Պետք է ենթադրել, որ թուրքական որևէ ժամանակագրության մեջ Արարատյան երկրում իշխող կրգըլթաշ իշխանավորը կոչված է «ռեան խանի», որը նշանակում է «Երևանի խանը» (թուրքերը Երևանը անվանում են Ռեան): Դժվար չէ նկատել, որ այստեղ տեղանունը սխալմամբ դիտված է որպես անձնանուն:

Թեև որոշակի վկայություններ չկան, սակայն հավանական է, որ այս տարիներին, երբ նոր իշխանությունը դեռևս վերջնականապես չէր հաստատվել նորաստեղծ պետության բոլոր ծայրամասերում, և Իսմայիլը շարունակում էր հաղթական կռիվներ մղել Իրանի հարավային և արևմտյան նահանգներում, Արարատյան երկրում տիրել են կրգըլթաշներին հարած Սադուլ մեծ ցեղի ամիրները, որոնք այդ շրջանի ամենամեծ և ազդեցիկ էլի իշխանավորներն էին և Սուրմալիում, Կաղզվանում, Կողբում, Արագածոտնում ու Արարատյան դաշտի մերձակա վայրերում ընդարձակ ժառանգական տիրույթներ ունեին⁷:

1503—1510 թթ. Հավուց Թառի և Տաթևի վանքերին շահ Իսմայիլի սոված հրովարտակները⁸ հաստատում են, որ այդ տարիներին ամբողջ Հարավային Անդրկովկասն ու Պատմական Հայաստանի կենտրոնական ու հարավային շրջանները, այդ թվում նաև Չուխուր-Սադի վիլայեթը ընդգրկված են եղել կրգըլթաշների պետության կազմում:

⁴ Տե՛ս Շ. Դ. Փ ա փ ա զ յ ա ն, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ժծ դ.) (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1960, № 7—8, էջ 26—27):

⁵ Ի ս ք ա ն դ ա ռ-ր ե կ Թ ու ռ ք ե մ ա ն, Մ ու ն շ ի, Ք ար ի ի-և ա լ ա մ ա ռ-յ և ար բ ա ի, Թեհրան, 1957 (պարսկ. բնագիր): Կ. 1, էջ 141 (այսուհետև՝ Ի ս ք ա ն դ ա ռ Մ ու ն շ ի):

⁶ Ղ. Ա լ ի շ ա ն, Ալրարատ, Վենետիկ, 1890, էջ 300:

⁷ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, Կալվածագրեր, պրակ Ա, կազմեց՝ Շ. Դ. Փ ա փ ա զ յ ա ն, Երևան, 1968, վավ. 31, 23, 25, 27 (այսուհետև՝ «Կալվածագրեր» I):

⁸ «Հրովարտակներ» I, վավ. 8—11:

Ինչպես հիշյալ հրովարտականները, այնպես էլ այլ աղբյուրներ վկայում են քրիստոնյա համայնքների, հատկապես հայ աշխարհիկ և հոգևորական վերնախավի հանդեպ շահ Իսմայիլի վարած մեղմ քաղաքականության մասին: Առանձնապես ընդգծված է նրա սիրաշահող վերաբերմունքը էջմիածնի Զաքարիա կաթողիկոսի նկատմամբ⁹:

Դա, ինչպես իրավացի կերպով նշել է Ի. Պ. Պետրուշևսկին, հիմնականում թեևադրված էր շահ Իսմայիլի վարած արտաքին քաղաքականությանը, որով նա ձգտում էր ընդդեմ Թուրքիայի դաշնակիցներ գտնել եվրոպական քրիստոնյա պետությունների շարքում: Այդ նպատակով նա փորձում էր օգտագործել նաև հայ վաճառականությանը¹⁰:

Արարատյան երկրում իշխող կրճրբաշ ամիրների մասին հետագա տեղեկությունները հիմք են տալիս ենթադրելու, որ Զալբրանի ճակատամարտից և 1515 թ. հաշտության պայմանագրից հետո, երբ Անդրկովկասն ու Արարատյան երկիրը կրճրբաշները վերագրավեցին, շահ Իսմայիլը Չուխուր-Սաղի վիլայեթը խոշոր ավատի կամ օլբաշի իրավունքով սովել է Ռումլու մեծ ցեղի ամիրներին:

1517 թ. դեպքերը նկարագրելիս, Հասան-բեկ Ռումլուն հիշատակում է, որ այդ թվականին Դիվ-սուլթան Ռումլուն ասպատակում և կողոպտում է վրաստանի արևմտյան շրջանները և վերադառնում Չուխուր-Սաղի¹¹, որը հավանաբար նրա նստավայրն էր:

Կան նաև տեղեկություններ Երևանում Դիվ-սուլթանի կատարած շինարարական աշխատանքների մասին: Ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Շարդենը թվարկելով Երևանի նշանավոր կառույցները, հայոց առաջնորդարանից ոչ շատ հեռու նկարագրում է մի ավերակ մզկիթ և նշում, որ այն «իբ հիմնադրի անունով կոչվում էր Դիվ-սուլթանի մզկիթ»¹²:

Դիվ-սուլթան Ռումլուն շահ Իսմայիլի օրոք, նրա որդու՝ Թահմասպ միրզայի դաստիարակն էր, իսկ 1524 թ. հետո, երբ Թահմասպը 11 տարեկան հասակում հաջորդեց հորը, ստանձնել էր պետության «վեքիլ» կամ խնամակալի պաշտոնը¹³:

Որպես նորընծա շահի խնամակալ, Դիվ-սուլթանը մեծ ազդեցություն ուներ և կարևոր տեղ էր զբաղում կրճրբաշների ռազմա-ֆեոդալական հիերարխիայում: Սակայն ինչպես վկայում են Հասան-բեկ Ռումլուն և Իսքանդար Մունշին, խնամակալի պաշտոնը շուտով կովախնձոր է դառնում նրա և Քյո-

⁹ Raphael du Mans, *Estat de la Perse en 1660*, Paris, 1890, էջ 274—275:

¹⁰ И. П. Петрушевский, *Азербайджан в XVI—XVII веках* («Сборник статей по истории Азербайджана», Баку, 1949, стр. 239).

¹¹ A chronicle of the early Safawis being the Ahsanu'ttawarikh of Hasan-Rumlu, vol. I (Persian text), Baroda, 1931, էջ 167 (այսուհետև՝ Հասան-բեկ Ռումլու):

¹² J. Chardin, *Voyages du Chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient*, Paris, 1811, t. II, էջ 164: Շարդենի նկարագրությանից դժվար չէ կտանել, որ մզկիթը եղել է ներկայիս «Գյոզ մեջլիս» կամ «Հուսեյն-Ալի խանի մզկիթ» տեղում, որտեղ այժմ տեղավորված է Երևան քաղաքի պատմության թանգարանը: Դիվ-սուլթանի մզկիթը հավանաբար լիովին ավերվել է 1679 թ. մեծ երկրաշարժի ժամանակ, իսկ նրա տեղում 1766 թ. Երևանի Հուսեյն-Ալի խանը (1762—1783) կառուցել է նոր մզկիթ, որն իր անունով կոչվում էր «Հուսեյն-Ալի խանի մզկիթ»:

¹³ Իսքանդար Մունշի, հ. I, էջ 47—48:

փաղ-սուլթան Ուսթաշլուի միջև: Այդ հողի վրա ծայր են առնում միջցեղային կռիվները, որոնք գնալով ավելի են բորբոքվում, պատճառ դառնալով մեծ ավերածութիւններ:

Ընդհարումները շարունակեցին մինչև 1527 թ., երբ Գիւանից Քյոփուզ-սուլթանը, ուսթաշլու կըզըլբաշներին գլուխն անցած, արշավեց նախ Արդաբիլ և ապա Քավրիզ, բայց լսելով, որ Դիվ-սուլթանը Զովհեն-սուլթան Քաքալուի հետ մեծաքանակ զորքով գալիս է ընդառաջ, խուսափեց նրանց հանդիպելուց և կես ճանապարհից ուղղութիւն վերցրեց դեպի Երևան:

Այս փաստը ևս վկայում է, որ Դիվ-սուլթանը նաև Չուփուր-Սա'դի վիլայեթի տերն էր, քանի որ Քյոփուզ-սուլթանը փոխանակ նրա դեմ ճակատելու, հարմար գտավ ասպատակել ու կողոպտել նրա երկիրը: Բայց Դիվ-սուլթանը կարողացավ կանխել այդ և արագ երթով հետապնդելով հակառակորդին, դեռ Երևան չհասած, Շարուրի դաշտում հարկադրեց նրան ճակատամարտ տալ, որտեղ, շնայած համառ դիմադրութեանը, ուսթաշլուները ջախջախիչ պարտութիւն կրեցին: Մարտում զոհվեց նաև Քյոփուզ-սուլթանը:

Սակայն Դիվ-սուլթանին վիճակված չէր վայելելու այս հաղթանակի պտուղները: Երկու տարի անց՝ Քաքալու ցեղի առաջնորդ Զովհեն-սուլթանին հաջողվում է սադրանքով սպանել տալ նրան և գրավել պետութեան խնամակալի պաշտոնը¹⁴:

Այս կարևոր պաշտոնի գրավումը մեծ չափով ամրապնդեց Քաքալունների դիրքերը սեֆեկների պետական վարչական կազմակերպութեան մեջ: Շուտով Ազերբայջանի կուսակալ նշանակվեց Ուլամա Քաքալուն և իշխանութեան առաջին իսկ օրերից սկսեց մեծ հավակնութիւններ դրսևորել: Իշխանական իրավունքների շարաշահումը վերջինիս կողմից առիթ հանդիսացավ, որպեսզի կըզըլբաշ ավագանին երիտասարդ շահին դրդեր թշնամական դիրք գրավելու Քաքալունների նկատմամբ:

1531 թ. Քաքալունների դեմ կիրառվող դաժան հալածանքների ու ճնշումների հետևանքով, Ուլամա Քաքալուն ասպատամբեց և, կողոպտելով Քավրիզում գտնվող արքունի ստացվածքները, ասպատանեց Քուրքիայում¹⁵: Սուլթան Սուլեյմանը Ուլամային տվեց Բիթլիսի էյալեթը, որն այն ժամանակ գտնվում էր ամիր Շարաֆի ձեռքում: Վերջինս ստիպված եղավ փախչել Իրան. շահ Քահանասպի մոտ:

Այս դեպքերը առիթ հանդիսացան երկու երկրների միջև ավելի քան երկու տասնամյակ շարունակվող ավերիչ պատերազմների, որոնք ընդհատվեցին միայն 1555 թ. Ամասիայում կնքված հաշտութեամբ: 1531—1555 թթ. ավելի շատ ավերվեցին Արևմտյան Հայաստանի Բասենի, Խնուսի, Կարնո, Բաբերդի, Երզնկայի, Դերջանի, Մուշի, Խլաթի, Արծկեի, Արճեշի և Վանի շրջանները, որոնք մի քանի անգամ ենթարկվեցին կըզըլբաշ զինվորների ասպատակութեանը¹⁶: Արարատյան երկիրն այս բախումների ժամանակ համեմատաբար քիչ տուժեց:

Հետևելով երկուստեք ձեռնարկվող ասպատակութիւններին ընթացքին,

¹⁴ Քազարե-յե շահ Քահանասպ (պարսկ. բնագիր), Կալկաթա, 1912, էջ 9, հմտ. Հասանբեկ Ռումլու, էջ 199, 205, Իսթանբուր Մուսնշի, հ. I, էջ 48:

¹⁵ Քազարե-յե շահ Քահանասպ, էջ 16:

¹⁶ Նույն տեղում, էջ 37—60:

դժվար չէ կոահել, որ այդ տարիներին Արարատյան երկրի Ախուրյանից դեպի արևմուտք ընկած շրջանները նույնպես գտնվել են Երևանում նստող ամիրի կամ հաքիմի իշխանության ներքո: Կարսը, Զարիշատը, Մաղասբերդը, Բալազետը, Մակուն և Կաղզվանը, որոնք հաճախ, որպես օլթա տրվում էին Սա'դու, Չըմշկաձագու, Բայաթ, Դունբուլի և այլ կըզըբաշ ու քուրդ, սուլթան հորջորջվող առաջնորդների, ենթարկվում էին Չուխուր-Սա'դի բեկլարբեկին:

Այս տարիների Արարատյան երկրի կըզըբաշ տիրակալների վերաբերյալ մեր ձեռքի տակ եղած աղբյուրներում որոշակի տեղեկություններ չկան: Հայտնի է, սակայն, որ 1549 թ. էրզրումի Իսթանդար փաշայի՝ դեպի Երևան կատարած արշավանքների ժամանակ Երևանի հաքիմն էր Հուսեյն-ջան սուլթան Ռումլուն, որը խուսափում է թուրքերի հետ ընդհարվելուց: Իսթանդար փաշայի զորքերն անարգել մտնում են Երևան, այրում ու կողոպտում շուկան և ետ վերադառնում¹⁷: Այս վկայությունը միաժամանակ հաստատում է, որ 1527 թ. Շարուրի ճակատամարտից հետո ևս երկու տասնամյակ Արարատյան երկրում իշխել են ումլունները:

Շահ Թահմասպը ի պատասխան Իսթանդար փաշայի դեպի Երևան, իսկ նրանից առաջ նաև դեպի Խոյ կատարած արշավանքների, 1552 թ. մեծ բանակով նորից է ասպատակում Արևմտյան Հայաստանի վերոհիշյալ շրջանները¹⁸: Այս արշավանքների և հայ ժողովրդի համար նրանց աղետալի հետեւանքների մանրամասն նկարագիրը տրված է Թաղեոս Սեբաստացու հիշատակարանում¹⁹:

Նույն դեպքերի մասին Իսթանդար Մունշու տվյալները թույլ են տալիս եզրակացնելու, որ հավանաբար 1549 թ. իրադարձություններից հետո, շահ Թահմասպը Հուսեյն-ջան սուլթանից վերցրել է Չուխուր-Սա'դի բեկլարբեկությունը և տվել Շահկուլի սուլթան Ուսթաշլուին: 1552 թ. շահ Թահմասպի հրահանգով դեպի էրզրում կազմակերպված արշավանքին մասնակցող ամիրների շարքում Մունշին հիշում է նաև Շահկուլի սուլթանին, ավելացնելով նաև, որ նա այդ ժամանակ իշխում էր Չուխուր-Սա'դում²⁰:

Շահկուլի սուլթան Ուսթաշլուն շահ Թահմասպի խելացի և սիրված զորավարներից էր և մեծ վստահություն էր վայելում արքունիքում: Իսթանդար Մունշու պատմության երևելի անձանց ցուցակում նա ևս դասված է այն հոշակավոր ամիրների շարքը, որոնք «ընդարձակ օլթաներ ունեին»: Նրանց շնորհված էր նաև լավագույն թիովներ, ունեին բանակ, թմբուկ և դրոշակ»²¹:

¹⁷ Հասանբեկ Ռումլու, էջ 341: Իսթանդար Մունշին օգտվելով Հասանբեկ Ռումլուից, վերապատմում է այս դեպքերը, սակայն Երևանի հաքիմին անվանում է Հուսեյն-խան սուլթան. թվում է, թե ավելի հավաստի պետք է համարել Հասանբեկին, որը դեպքերի ժամանակակիցն է և մասնակիցը: Մունշի «Հուսեյն-խանը» հավանաբար գրչի սխալ է չ-ի և չ-ի շփոթում, պարզապես կետը սխալ է դրված եղել: Դա հաստատվում է նաև, այն փաստով, որ եթե մեկին արդեն տրված էր «խան» տիտղոսը, այլևս ավելի ցածր «սուլթան» տիտղոսի հիշատակումը անտեղի է: Հետևաբար Երևանի Ռումլու տիրակալի անունը ոչ թե Հուսեյն է եղել, այլ Հուսեյն-ջան:

¹⁸ Հասանբեկ Ռումլու, էջ 328, 338, 341:

¹⁹ Տե՛ս Մ. Չամչեան, Պատմություն Հայոց, հ. III, Վենետիկ, 1786, էջ 514—515:

²⁰ Իսթանդար Մունշի, հ. I, էջ 76:

²¹ Նույն տեղում:

Արարատյան երկրում Շահկուլի սուլթանի իշխանության ժամանակի մասին աղբյուրներում որոշակի տեղեկություններ չկան: Հայտնի է սակայն, որ 1558 թ., երբ ապագա սուլթան Սելիմ II-ի եղբայր Բայազիդը գահակալական պայքարում պարտություն կրելով, էրզրումի վրայով անցավ Երևան, նրան ընդունողն ու ապաստան տվողը Շահկուլի սուլթանն էր²²: Ժամանակագրական հաջորդ տեղեկությունը Շահկուլի սուլթանի մասին վերաբերում է 1367 թ.: Հասան-բեկ Ռումլուի և Թուրք ժամանակագիր Մուստաֆա էֆենդի Սելանիկիի հաղորդմամբ՝ Շահկուլի սուլթանն այդ թվականին մեծ պատվիրակության գլուխն անցած մեկնում է սուլթան Սելիմ II-ի մոտ՝ շահ Թահմասպի անունից շնորհավորելու նրա գահակալությունն ու եվրոպական մայրցամաքում տարած հաղթանակները²³:

Հստ նույն աղբյուրների, 1576 թ. վերջերին արդեն, սուլթան Մուրադ III-ի մոտ ուղարկված պատվիրակությունը, որպես Չուխուր-Սադի բեկլարբեկի, գլխավորում էր Շահկուլի սուլթանի որդին՝ Մուհամմադի խան Թոխմախ Ուսթաշլուն²⁴: Հավանաբար հոր մահից անմիջապես հետո բեկլարբեկության իրավունքը ժառանգաբար փոխանցվել էր որդուն:

Մուհամմադի խանի այս բանազնացությունը կարճ տևեց: Պոլիս ժամանելու 16-րդ օրը առնելով շահ Թահմասպի մահվան լուրը, նա ստիպված եղավ ընդհատել բանակցություններն ու շտապ գնալ Ղազվին՝ ներկայանալու հոր գահը ժառանգած շահ Իսմայիլ II-ին²⁵:

Ենթարկվելով որոշ բանասարկությունների, որ հրահրում էին ուսթաշլունների թշնամիները, նորընծա շահը նախապես որոշում է Չուխուր-Սադի բեկլարբեկությունը վերցնել Մուհամմադի խանից և տալ նրա հորեղբոր որդուն՝ Աբուֆտուրաբ սուլթանին: Սակայն թաքալունների դեմ նույն օրերին սկսված հալածանքների ժամանակ շահը նորից ստիպված է լինում փոխել իր վերաբերմունքը և վերահաստատել նրան նույն պաշտոնում, իսկ Աբուֆտուրաբ սուլթանին տալ Շիրվանի վիլայեթը²⁶: Մուհամմադի խան Թոխմախին հանձնարարվում է նաև վեզիր Միրզա-Շուքրուլլայի, թագաժառանգ Իբրահիմ-Միրզայի և Միրզա-Ալի սուլթան Կաշարի հետ միասին կատարել Բարձրա-

22 Թագաբարեյե շահ Թահմասպ, էջ 75: Սեանի Առաքելոց վանքի քանդակագործ դուան արձանագրության թվականի սխալ վերծանության հետևանքով Շահխաթունյանցն ու Ալիշանը 1557 թ. Երևանում հիշում են ոմն Յաղուր-բեկ: Նրանք արձանագրության «ՋԷԱ Թվկնի Լն Թիի Աիեի» հատվածը վերծանում են՝ 971+35+551=1557 (Հ. Շահխաթունյանց, Ստորագրություն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. II, Վաղարշապատ, 1842, էջ 213, Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 300): Իրավացի են սակայն հետագայի վերծանողները, որոնք այդ հատվածը կարդում են «Ջ Հա[յոց] Թ[ա]կ[ա]նի Լն Թիւ աւելի», այսինքն՝ 900+35+351=1486 (Գ. Հովսեփյան, Սեանա Առաքելոց վանքի հարավային դուռը «Անահիտ» նոր շրջան, Գ տարի, № 5—6, 1932, Ե. Մուշեղյան, Հայերեն արձանագրության արձանագրություն, Երևան, 1964, էջ 64): Այդ թվականը համապատասխանում է արձանագրության մեջ հիշված Աղկոլունյու Յաղուր-բեկի իշխանության տարիներին: Այն հաստատվում է նաև արձանագրության «լաթոռակալութեան տեանն Սարգսի» հատվածով:

23 Հասան-բեկ Ռումլու, էջ 440, հմմտ. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին (այսուհետև՝ «Թուրքական աղբյուրները»), կազմեց Ա. Խ. Մաֆրաստյան, հ. II, Երևան, 1964, էջ 117:

24 Նույն տեղում, էջ 118, տե՛ս նաև, Հասան-բեկ Ռումլու, էջ 483, Իսթան-դար Մուշեղյան, հ. I, էջ 139—204:

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում, էջ 204, 216—217:

գույն դիվանում կուտակված բողոքների և զանազան դատական գործերի քննություն²⁷։ Այդ գործերի մեջ քիչ չէին նաև Չուխուր-Սա'դի վիլայեթի ուսուցիչներից ստացված բողոքները²⁸։

Իսլամական Մուսուլման «Աբբասյան աշխարհարար պատմության» առաջին հատորում թվարկում է շահ Թահմասպի օրոք «Բարձրագույն դիվանի դաֆթարում» արձանագրված 114 ամիրների անուններ։ Այդ ցուցակից պարզվում է, որ XVI դ. երկրորդ կեսում Չուխուր-Սա'դի վիլայեթի մեջ մտնող առանձին շրջաններ որպես օլթա պատկանում էին բոլորովին տարբեր ցեղերի ամիրների։ Մուհամմադի խան Թոխամախի բեկլարբեկության ժամանակ Շորագյալի և ապա Ալաշկերտի հաքիմն էր Կարախան Բայբուրդուն, Չուխուր-Սա'դի ամիրներից էր նաև Կլիշ-խալիֆա Փազուկին, օլթաներ ուներ նաև Ալիավութ Իբրահիմ-խալիֆան²⁹։

Մուհամմադի խանի բեկլարբեկության առաջին տարիները համեմատաբար խաղաղ էին, որոնց ընթացքում նա ձեռնարկեց որոշ շինարարական աշխատանքներ։ Նրա ժամանակներին է վերաբերում Երևանում, ոռոգման մեծ հնարավորություններով օժտված, խոշոր լճի կառուցումը, որ մինչև վերջերս կոչվում էր «Թոխամախ-խան գյուղ»³⁰։

Սակայն այս խաղաղությունը խաբուսիկ էր և հղի նոր ու ավելի ծանր արհալիրքներով։ 1578 թ., երբ Իրանում սրվել էին կրճրբաշ ցեղերի միջև թագավորական գահի թեկնածության շուրջ ծավալված հակասությունները, և դավադրաբար սպանված շահ Իսմայիլ II-ի տեղ գահ էր բարձրացել շահ Թահմասպի կուրացած որդի Սուլթան-Մուհամմադ Խուզաբանդան, նորից բորբոքվեցին և ավելի մեծ ծավալ ստացան պատերազմական գործողությունները Թուրքիայի և Իրանի միջև։

Կռիվներն սկզբում սահմանազլխային մանր ընդհարումների և ասպատակությունների բնույթ էին կրում։ Այն բանից հետո, երբ Վասպուրականի արևելյան շրջաններում բնակվող քրդական ցեղերի ամիրներն ասպատակության և ավարառության ենթարկեցին Խոյի, Մալմաստի և Ուրմիայի շրջանները, էրզրումի փաշան ևս 1577—1578 թթ. ձմռանը մեծ արշավախումբ ուղարկեց ասպատակելու Շորագյալի շրջանը, սակայն Կարախան սուլթան Բայբուրդուն կարողացավ փոքրաթիվ ուժերով ետ մղել այդ հարձակումը։

Նմանօրինակ մանր հարձակումներով շոշափելով կրճրբաշների պաշտպանության թույլ կետերը, ինչպես նաև ծավալելով քայքայիչ գործունեություն Անդրկովկասի սյուննի մահմեդականության և լեռնականների մեջ, 1578 թ. գարնանը օսմանյան 100.000-անոց բանակը Լալա Մուստաֆա փաշայի գլխավորությամբ էրզրումի վրայով շարժվեց դեպի Վրաստան։ Ցանկանալով կանխել արյունահեղ ընդհարումները, Խուզաբանդա շահը որոշում է Մուհամմադի խան Թոխամախի խորհրդականներից վալի բեկ Ուսթաջլուի միջոցով մի հուշագիր ուղարկել սուլթան Մուրադին, պահանջելով վերջ տալ սահմանամերձ փաշաների ոտնձգություններին։ Սակայն նրանք վալի բեկին ճանապարհին ձերբակալում են և սպանում։

27 Նույն տեղում, էջ 207։

28 «Հրովարտականք» I, վավ. 19։

29 Ի ս ք ա ն դ ա Ր Մ ու Ն շ Ի, հ. I, էջ 141։

30 Ներկայումս Կոմերիտիության անվան զբոսայգու լիճը։

Մուստաֆա փաշան հասնելով Կարս, անմիջապես ձեռնամուխ եղավ բերդի վերակառուցմանը, որը 1555 թ. հաշտության պայմանագրի համաձայն իրավունք չունեին ամրացնելու: Մուհամմադի խանը շտապեց այս մասին տեղեկացնել շահին և օգնություն խնդրել: Թեև շահը Ղարաբաղի և Ազերբայջանի բեկլարբեկներին հրահանգել էր իրենց զորքերով օգնության հասնել Մուհամմադի խանին, սակայն օգնության եկան միայն Ղարաբաղի Իմամկուլի խանի զորամասերը, իսկ ուսթաշուներին թշնամի, թաքալու ցեղի առաջնորդ, Ազերբայջանի բեկլարբեկի Ամիր խանը դանդաղեց, նպատակ ունենալով ուսթաշու կրգըլբաշներին միայնակ թողնել թուրքական զերազանց ուժերի առաջ: Եվ իրոք Մուհամմադի խանի և Իմամկուլի խանի ընդամենը 15.000 կովոդներին բաղկացած ուժերը չդիմանալով Մուստաֆա փաշայի զերակշիռ զորքերի հարձակմանը, պարտություն կրեցին ու դիմեցին փախուստի³¹:

Այս շահագանց հեշտ ձեռք բերված հաղթանակից հետո Մուստաֆա փաշան համարյա առանց դիմադրության հանդիպելու մտավ Վրաստան, գրավեց բոլոր ամրությունները, ապա անցավ Շիրվան, որտեղ նույնպես առանց լուրջ ընդհարումների տիրեց Շամախու, Արեշի, Բաքվի և այլ բերդերի, ամրացրեց դրանք և անհրաժեշտ ռազմամթերքով ու հանդերձանքով ապահովված բերդապահ կայազորներ թողնելով, ետ վերադարձավ:

Երևանի գրավման նպատակով ծրագրված արշավանքը իրագործվեց մեկ տարի հետո միայն՝ 1579 թ. աշնանը: Դա կալա Մուստաֆա փաշան հանձնարարեց էրզրումի Հուսեյն փաշային, նրա հրամանատարության տակ դնելով 40.000-անոց բանակ: Իսքանդար Մունշիի պատմության Մատենադարանում պահվող XVII դ. մի ձեռագրում պահպանվել է այս ղեկավարի մանրամասն նկարագրությունը, ըստ որի Մուհամմադի խանի փոքրաթիվ զորքերը կատաղի դիմադրում են: Չնայած թուրքերին հաջողվում է կոտորել այդ դիմադրությունն ու մտնել Երևան, սակայն նրանք միայն մեկ օր են կարողանում մնալ այնտեղ, քանի որ կրգըլբաշների ուժեղ ճնշման տակ ստիպված են լինում թողնել քաղաքն ու նահանջել դեպի էրզրում³²:

Սակայն այս մեկ օրը նույնիսկ բավական էր, որպեսզի գազազած ենիչերիները անասելի կողոպուտի և գերեվարության ենթարկեին քաղաքի բնակչությանը: Թուրքերը նախապես ասպատակել էին նաև Երևանի մերձակա 18 գյուղերը³³: Այս աղետալի իրադարձությունների պատկերավոր նկարագրությունը պահպանվել է նաև Հովհաննես գրչի շահածո մի հիշատակարանում³⁴:

Այս ղեկավարից հետո Երևանը չորս տարի մնաց կրգըլբաշների տիրապետության տակ:

1583 թ. սուլթան Մուրադ III-ը Ֆարհադ փաշային նշանակեց արևելյան բանակների հրամանատար և հրամայեց արշավել դեպի Երևան ու նախիջևան: Մուհամմադի խան Թոխմախը, թեև այդ մասին տեղեկացրեց Իմամկուլի և Ամիր խաններին, սակայն նրանցից ոչ մի օգնություն չստանալով՝ ստիպված

31 Ի ս ք ա ն դ ա ր Մ ու ն շ ի, հ. I, էջ 233, տես նաև, «Թուրքական աղբյուրները», հ. I, էջ 35—36:

32 Տե՛ս Մատենադարանի արաբատառ ձեռագրեր, № 11, էջ 237ա:

33 Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հ. I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 172:

34 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 300—301:

եղավ մանր պարտիզանական կռիվներ մղելով թողնել Երևանը և ամրանալ Երնջակի բերդում³⁵։

Կռիվների նկարագրությունից պարզ երևում է, որ Երևանի բերդը, եթե այն ընդհանրապես այդ ժամանակ եղել է, ապա լավ ամրացված չի եղել։ Դա հաստատվում է նախ այն իրողությունից, որ Մուհամմադի խանը երկարատև դիմադրություն համար հարմար գտավ միայն Երնջակի բերդը։ Բացի այդ, ո՛չ թուրքական և ո՛չ էլ պարսկական ու հայկական աղբյուրները չեն նշում բերդի գրավման մասին, այլ տալիս են միայն քաղաքի գրավման նկարագրությունը։ Իսկ, որ ամենից ուշագրավն է՝ բոլոր ժամանակակից աղբյուրներն ու հետագա ժամանակագիրները արձանագրում են, որ Ֆարհադ փաշան Երևանը գրավելուց հետո անմիջապես ձեռնարկեց նոր և ամուր պարիսպներով շրջապատված բերդի կառուցումը, օգտագործելով Երևանի ավերված եկեղեցիների քարերը³⁶։

Իսթանբուլի Մուռադի իմամ է, որ այդ բերդի կառուցումից հետո, որտեղ Ֆարհադ փաշան թողել էր լավ սպառազինված մեծ կայազոր և վերադարձել էր դրում, մոտակա ժամանակների համար այլևս անհնարին դարձավ կրզըլբաշներին իշխանություն վերահաստատումը Արարատյան երկրում³⁷։

Ռազմական գործողություններն այնուհետև օսմանցիների ու կրզըլբաշների միջև ընթացան վերջիններիս համար ոչ նպաստավոր պայմաններում։ Հատկապես 1586 թ. հետո, երբ խորհրդավոր պայմաններում սպանվեց գահի առաջին ժառանգորդ, խիզախ զորահրամանատար Համզա Միրզան։ Դա շափազանց ծանր կորուստ էր կույր և անձեռներեց հուղաբանդա շահի համար, որը 1587 թ. ստիպված եղավ հեռանալ հորասան, գահը զիջելով կրտսեր որդուն՝ Աբբաս I-ին։

Երիտասարդ շահն առաջին հերթին ձգտելով ամրացնել երկրի արևելյան սահմանները, բոլոր ուժերը կենտրոնացրեց դուրս մղելու ուզեցեցական զորքերին, որոնք գրավել էին ամբողջ հորասանն ու Սիսիանը։ Այս պայմաններում նա ստիպված էր ստորագրել 1590 թ. թուրքերի առաջարկած չափազանց ծանր պայմանագիրը, ըստ որի ամբողջ Անդրկովկասն ու Ատրպատականը, բացի Արդաբեյլի ու Թալիշի շրջաններից, անցնում էին թուրքիային։ Այսպիսով, 1583 թ. մինչև 1604 թ., շահ Աբբասի կողմից վերագրավումը, Արարատյան երկիրը գտնվում էր թուրքիայի տիրապետություն տակ։

Շարաֆ խան Բիթլիսին, որն այդ ժամանակ գտնվում էր Վրաստանն ապատակող Հասան փաշայի բանակում, հաստատում է, որ Ֆարհադ փաշան Երևանը գրավելուց և այնտեղ բերդ կառուցելուց հետո բեկլարբեկի է նշանակել Խըզըր փաշային, որի վեզիրն էր Ջզալ-Օղլի Սինան փաշան³⁸։ 1588—1589 թթ. դեպքերը նկարագրելիս Իսթանբուլի Մուռադի իմամն Սինան փաշային հիշում է որպես Բաղդադի բեկլարբեկի, որը գլխավորում էր այդ կողմերում ձեռնարկված ռազմական գործողությունները³⁹։ Ալիշանը այլ աղբյուրների հիման վրա նույնպես գրում է, «և էր յայնժամ կողմնակալ սոցա լԵրևան Խզըր

35 Իսթանբուլի Մուռադի իմամ, հ. I, էջ 293։

36 Տե՛ս նույն տեղում, Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1896, էջ 64, «Մանր ժամանակագրություններ», հ. I, էջ 159։

37 «Մանր ժամանակագրություններ», հ. I, էջ 293 և 305։

38 Schéref-nameh, հ. II, էջ 270։

39 Իսթանբուլի Մուռադի իմամ, հ. I, էջ 406։

կամ հտորը ոմն պէլլէրպէկի»⁴⁰։ Իսկ բերդի կառուցման մասին խոսելուց հետո, որպես բերդապահ կայսրոսի հրամանատար հիշում է ոմն Չղալյան Յուսուֆ փաշայի⁴¹։ Թվում է թե այս անունը շփոթված է Զրդալ-օղլի Սինան փաշայի անվան հետ։

Շարաֆ խանի ժամանակագրության մեջ նշված է նաև, որ Օսման փաշայի կողմից Թավրիզի գրավումից երեք տարի հետո, այսինքն 1589 թ., Ֆարհադ փաշայի հրահանգով հրդրը փաշան արշավում է դեպի Նախջևան և առանց լուրջ ընդհարումների գրավում ամբողջ Թուման-ե Նախջևանի օլթան և միացնում Երևանի բեկլարբեկությունը⁴²։ Այնուհետև, ինչպես այդ հաստատում է նաև Իսքանդար Մունշին, Նախջևանը մնաց Չուխուր-Սա՛դի վիլայիթի կազմում և ենթարկվում էր Երևանում նստող փաշային⁴³։

Թուրքական 20-ամյա տիրապետության շրջանում, իրդրը փաշայից հետո հիշվում է Սեյիդ-Մուհամմադ փաշան, որը վերանվանված էր Շարիֆ փաշա։ Պարզ չէ, սակայն, թե ո՞ր թվականից է սկսվում նրա բեկլարբեկությունը։ Հայտնի է միայն, որ 1604 թ. շահ Աբբասի կողմից Երևանի գրավման ժամանակ նա եղել է Չուխուր-Սա՛դի բեկլարբեկին⁴⁴։ Իսքանդար Մունշու տված կենսագրական տեղեկությունների համաձայն, նա ծագումով պարսիկ էր, սպահանցի, երիտասարդ հասակում զնացել էր Կ. Պոլիս և ծառայության մեջ մտնելով բանակում, հասել փաշայության։ Բերդի գրավումից հետո նա ներում խնդրեց շահից, ցանկություն հայտնելով զնալ Մեշեդ՝ ապաշխարելու Շահը ներեց նրան և նշանակեց Մեշեդի իմամ Ռիզայի սրբավայրի մուֆավալի (տնօրեն)⁴⁵։ Սակայն և՛ Իսքանդար Մունշին, և՛ Քյաթիբ Չելեբին հաստատում են, որ Շարիֆ փաշայի օրոք Չուխուր-Սա՛դում բարձր պաշտոն ուներ նաև իրդրը փաշայի որդին՝ Մուհամմադ փաշան, որը բերդի գրավումից և շահ Աբբասից ներում ստանալուց հետո բերդում գտնվող 300—400 տուն թուրքերի հետ մեկնեց Կարս⁴⁵։

Այսպիսով, ինչպես տեսանք, մեր ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրների տվյալները բավարար չեն ճշգրտելու XVI դ., կամ, ինչպես բնորոշված է մեր նախորդ հոդվածում, վաղ սեֆյան շրջանում Արարատյան երկրում իշխած բեկլարբեկների ու թուրք փաշաների ժամանակագրական հաջորդականությունը։

Վերը կատարված ուսումնասիրության հիման վրա, սակայն, կարելի է հաստատապես ասել, որ 1515 թ. կնքված պայմանագրից հետո Չուխուր-Սա՛դում իշխել է Դիվ սուլթան Ռումլուն։ Այնուհետև հայտնի չէ թե ո՞ր թվականին է նրան հաջորդել Հուսեյն-ջան սուլթանը, նույնպես Ռումլու ցեղից, որից 1549—1552 թթ. Երևանի բեկլարբեկությունը վերցվել է և տրվել Շահ-կուլի սուլթան Ուսթաջլուին։ Շահ-կուլի սուլթանին 1567—1576 թթ. հաջորդել է նրա որդին՝ Մուհամմադի խան Թոխմախ Ուսթաջլուն, որի բեկլարբեկությունն ավարտվեց 1583 թ., Ֆարհադ փաշայի կողմից Երևանի գրավումով։

40 Ղ. Ա ի շ ա ն, Այրարատ, էջ 301։

41 Schéref-nameh, 4. II, էջ 292.

42 Ի ս կ ա ն դ ա Ր Մ ու ն շ ի, 4. II, էջ 643։

43 Տ հ ա ն ու յ ն տեղում, էջ 643 և 656, հմտ. «Թուրքական աղբյուրներ», 4. II, էջ 88—93.

Ղ. Ա ի շ ա ն, Այրարատ, էջ 301։

44 Նույն տեղում։

45 Նույն տեղում։

Թուրքական քսանամյա տիրապետության շրջանում (1583—1604) հիշվում են միայն Խրդըր և Շարիֆ փաշաների անունները, որոնցից առաջինի փաշայության սկիզբն է միայն հայտնի (1583), իսկ վերջինի՝ ավարտը (1604):

Կասկածից դուրս է, որ նոր աղբյուրների, հատկապես ձեռագրերի հիշատակարանների ու դիվանական վավերագրերի հետազոտ հրատարակությունները կարող են մեծ շահով օգնել լրացնելու և ճշգրտելու Արարատյան երկրի և քաղաքամայր Երևանի պատմության համար որոշակի հետաքրքրություն ներկայացնող այս խառն ու աղետալի իրադարձություններով բնորոշվող հարյուրամյակի ժամանակագրությունը:

XVII դ. ժամանակագրության հարցերին, որոնց վերաբերյալ պատմական սկզբնաղբյուրներում և դիվանական վավերագրերում անհամեմատ ավելի հարուստ նյութ է պահպանված, կանդիդատական ատաճին հոգիվածով:

ИНОЗЕМНОЕ ГОСПОДСТВО В АРАРАТСКОЙ ОБЛАСТИ (XVI в.)

А. Д. ПАПАЗЯН

Доктор исторических наук

Р е з ю м е

Данная статья является хронологическим продолжением одноименной статьи автора, опубликованной в № 7—8 «Известий» АН Арм. ССР (общ. науки) за 1960 год. После заключения турецко-иранского договора 1515 г. районы Араратской страны или вилайеты Чухур-Са'д, лежащие к западу и югу от Ахуряна и хребта Агри-Даг, отошли к Турции. Несмотря на то, что до 1590 г. с короткими перерывами велись разрушительные войны, оказалось возможным уточнить на основе скудных данных, содержащихся в источниках, имена и хронологическую последовательность правления бывших там кызылбашских бекларбеки и турецких пашей.

Представляется вероятным предположение, что с начала века по 1515 г. Араратской страной правили амиры из племени Са'длу, пользовавшихся там большим влиянием. С указанного года амиром Чухур-Са'да был Див-султан румлу. Затем, неизвестно с какого года, его преемником был Хусейн-джан-султан также из племени румлу. В 1549—1552 гг. бекларбекство Еревана было отобрано у него и передано Шахкули-султану устаджлу. В 1567—1576 гг. преемником Шахкули-султана стал его сын Мухаммади-хан Тохмах устаджлу, бекларбекство которого окончилось в 1583 г. завоеванием Еревана Фархадом-пашой.

В период же двадцатилетнего турецкого господства (1583—1604) упоминаются лишь имена Хыдыра-паши и Шарифа-паши. Известен лишь год начала правления первого из них (1583) и год окончания правления другого (1604).

ՀԱԿՈՐ ՓԱՓԱԶՅԱՆ

ՁՐԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՎԱՆԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ
ԵՎ ՇԱՀ ՍԱՖԻԻ 1638 Թ. ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Միջնադարյան Հայաստանի հողատիրության պատմությունը սերտորեն աղերսվում է նույն ժամանակաշրջանի ջրատիրության իրավունքի հետ:

Թեև հողատիրության տարբեր ձևերի հետ միասին, քիչ թե շատ հետազոտված է նաև ջրատիրության հարցը¹, սակայն դեռևս լիովին չեն ճշգրտված ջրի նկատմամբ ֆեոդալական սեփականության հիմնական ձևերը:

Հայկական սկզբնաղբյուրներին զուգահեռ XVI—XVIII դդ. պարսկերեն կալվածագրերը մեծ չափով նպաստում են պարզաբանելու ջրի սեփականության իրավունքի հետ առնչվող բազմաթիվ հարցեր: Այդ վավերագրերը առաջին հերթին գալիս են հաստատելու այն իրողությունը, որ թեև կալվածագրերում հատկապես նշվում էր, որ գյուղատիրոջ կամ մալիքի սեփականատիրական իրավունքը տարածվում էր գյուղի սահմաններում գտնվող բոլոր հանդերի, լեռների, դաշտերի, գետերի, ջրերի ու ջրանցքների և այլնի վրա, սակայն քիչ դեպքերում էր, որ գյուղատերը հանդես էր գալիս նաև որպես իր մուլքը հանդիսացող գյուղի հանդերը ոռոգող ջրանցքների ու առուների իրավական սեփականատեր:

Գյուղատիրոջ ֆեոդալական սեփականատիրությունը իր մուլքը հանդիսացող գյուղի սահմաններում գտնվող բոլոր հարստությունների, այդ թվում նաև ջրային ռեսուրսների՝ գետերի, լճերի, ջրհորների և այլնի վրա հաստատվում էր միայն դրանց օգտագործողներից որոշյալ քանակի ռենտա գանձելու իրավունքով: Փաստորեն ջրերի նկատմամբ ֆեոդալական սեփականության իրավունքը խնդրո առարկա ժամանակաշրջանում արտահայտվում էր սովորական հողերի համեմատությամբ ջրարբի հողերից կրկնակի ռենտա գանձելու պրակտիկայով²: Սակայն դա սոսկ ֆեոդալական սեփականության իրավունքն էր միայն, որից անկախ ոռոգման սիստեմում գործում էին սեփականատիրության շատ ավելի որոշակի սկզբունքներ:

¹ Թադ. Ավդալբեկյան, Բահրան և մուլքը 17—18-րդ դարերում (Հայագիտական հետազոտություններ), Երևան, 1969, էջ 426, 429, Ս. Պողոսյան, Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանությունում 17—18-րդ դդ. և էջմիածինը որպես խոշոր հողատեր, Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ» հ. 13, Երևան, 1940, էջ 177—179; Ե. Մ. Арсютю-мян, Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., Ереван, 1940, стр. 41—46, Ս. Մարկոսյան, Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում, Երևան, 1959, էջ 130—145:

² А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII вв. Ереван, 1972, стр. 182—287.

Աղբյուրները միաբերան վկայում են, որ ջրի սեփականատիրության իրավունքը մեծ մասամբ վերապահված է եղել այն անձնավորություններ, որի նախածնունդով և միջոցներով ու ջանքերով հանվել է տվյալ ջրանցքը: 1722 թ. մի կալվածագրում, ըստ որի, Օշական գյուղի համայնքը էջմիածնին է վաճառում գյուղի առվի $\frac{1}{3}$ մասը, ընդգծված է, որ «հիշյալ առվի վրա կատարված աշխատանքի և ծախքի իրավունքը պատկանում է նույն գյուղի ռայաթներին»³: Դա նշանակում էր, որ այդ ջրանցքի համայնքային սեփականությունը պայմանավորված էր այն բանով, որ այն կառուցված էր ռայաթների սեփական միջոցներով և համատեղ աշխատանքով:

Նույն սկզբունքով որևէ ջրանցք կարող էր պատկանել մասնավոր անհատի կամ կալվածատիրոջ, եթե վերջինս ծախսելով որոշ գումար նոր առու էր հանել տալիս: Այս մասին ևս աղբյուրներում բազմաթիվ վկայություններ կան:

Այսպես օրինակ, պահպանվել է Փիլիպպոս կաթողիկոսի (1633—1655) Շահ Աբբաս II-ին ներկայացրած 1650 թ. խնդրագիրը, որտեղ այլ հարցերի շարքին զեկուցված է նաև, որ մեծ ծախսերի գնով նրան հաջողվել է Արագածի հյուսիսային լանջերից դեպի արևմուտք հոսող ջրերի հունը փոխել և բերել խառնել Քասախ գետին: Ծնորհիվ դրա, ավելացել են ոռոգման հնարավորությունները, ընդարձակվել է շրջակա գյուղերի ցանքատարածությունը և բարձրացել բերքատվությունը⁴:

Խոսելով այս խնդրագրի մասին, Սիմեոն կաթողիկոս Երևանցին հիշում է նույն թվականին շահ Աբբաս II-ին ներկայացված մի այլ խնդրագիր, որով Փիլիպպոս կաթողիկոսը ավելի մանրամասն զեկուցել է շահին, բողոքելով շրջակա գյուղերի բնակիչներից, որոնք շեն ուզում ճանաչել վանքի իրավունքները այդ ջրերի նկատմամբ: Շահն այս խնդրագրի վրա տվել է իր հրամանը, կարգադրելով, որ գետի ամբողջ ջուրը բաժանվի երկու հավասար մասերի, կեսը վանքին և մյուս կեսը՝ մերձակա այն գյուղերին, որոնց սահմաններով անցնում է գետը⁵:

Խնդրագրում Փիլիպպոս կաթողիկոսի բերած ջրի քանակը մոտավորապես նշված է 6—7 ջրաղացի ջրի չափ, սակայն Սիմեոն Երևանցին միշտ շեշտում է «որ է ինչ ջրաղացի ջուր»: Կարևորը սակայն այն է, որ շահը, ելնելով ընթացիկ օրենքներից, հաստատել է ջրի ակունքներից հանվող առուների վրա թափված

³ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1 գ, վավ. 289, حق السعی و اعانتی

نهر مزبور تعلق برعايای قريه مزبوره دارد

⁴ «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, 1, Հրովարտականք», պրակ երկրորդ, կազմեց Չ. Դ. Փափազյան, Երևան, 1959, վավ. 39:

⁵ Սիմեոն Երևանցի, Ջամբո, Վաղարշապատ, 1873, էջ 191—192, 213: Փիլիպպոս կաթողիկոսի այս խնդրագրին և շահի հրամանագրին Սիմեոն Երևանցին անդրադարձել է մի քանի անգամ, միշտ շեշտելով Քասախ գետի ջրերի նկատմամբ էջմիածնի ունեցած սեփականատիրական իրավունքները: Եվ քանի որ այս հույժ կարևոր փաստաթուղթը ինչ-որ պատճառներով անհետացած է եղել վանքի դիվանից, նա անհրաժեշտ է համարել մանրամասն պատմել այդ մասին, նկարագրելով նաև ջրի բաժանման արարողությունը և ավելացնելով, որ «այս կանոն լայն օրէ տարածեալ հոշակի լերկրոջս Երևանու և արձանանայ յամեննսին ի հայս և ի տաճիկս, և է այսպէս մինչև ցայսօր մինչ զի՝ եթէ կանանց և մանկանց երկրիս ևս հարցանիցես զորպիսութենէ ջրոյս այսմիկ, պատասխանեն թէ՛ կէսն էջմիածնի է և կէսն երկրիս: Բայց շահաւոր և օգտակար ռաղամս այս զոր գրէ Շահապասն, որպէս ասացաք, ոչ զիտեմ առ խանն մնայ և ոչ տան Աթոռոյս, և այնպէս անհետանայ, թէ՛ յԱթոռոջս կորնչի: Զի մեք ոչ տեսաք, թէպէտ շատ որոնեցաք և խնդրեցաք» (Նույն տեղում, էջ 192):

աշխատանքից ու կատարված ծախսերից բխող սեփականութեան իրավունքը: Բայց և այնպես, քանի որ գետը միշտ էլ հոսել է այդ գյուղերի սահմաններով և նրա ջրերից գյուղացիները օգտվել են իրենց հանած առուններով, ուստի ճշգրտված է միայն օգտագործվելիք ջրերի քանակը:

Թե որքան կայուն էին հիշյալ ջրերի նկատմամբ հաստատված էջմիածնի վանքի սեփականատիրական իրավունքները, կարելի է եզրակացնել այն փաստից, որ դրանք հետագայում ևս խստորեն պաշտպանվել են թե՛ տեղական խաների և թե՛ թուրք իշխողների կողմից: XVIII դարի 20-ական թվականներին, երբ նորից մոտակա գյուղերի ոռոգմանը փորձել են անտեսել էջմիածնի իրավունքները, Երևանի Ռաջաբ փաշան ցանկանալով ընթացք տալ էջմիածնի բողոքին, դիմել է Շարիին, որը հիմնվելով շահ Աբբաս II-ի հիշյալ հրամանագրի վրա, նորից հաստատել է, որ ջրի կեսն է միայն պատկանում գյուղերին, իսկ մյուս կեսը՝ վանքի սեփականությունն է, «Հիշյալ ջրանցքի ամբողջ ջուրը կիսվեց, կեսը տրվեց վանքին, իսկ մյուս կեսը՝ հիշյալ 20 գյուղերին և վեճը հարթվեց», — ասված է Շարիի որոշման մեջ⁶, որը հաստատված է Ռաջաբ փաշայի հետևյալ մակագրությամբ. «Թող վարվեն ըստ Շարիի որոշման և այսուհետ հիշյալ ջուրը օգտագործեն միայն կես առ կես, ոչ ավել լինի, ոչ պակաս»⁷:

Այն մասին, որ այս որոշումը առանձին երևույթ չէր և բխում էր հնուց անտի հաստատված օրենքներից, կարելի է եզրակացնել թեկուզ այն փաստից, որ 1732 թ., երբ մշեցի կամ խոշաբեցի Աբրահամ կաթողիկոսը Մեծամորի վերին հոսանքներից փորձում է մի նոր առու հանել, տեղական Շարի ատյանն ու թուրքական իշխանությունները, լսելով գյուղացիների բողոքը, որոշում են, որ այդ նոր առվի ջրի կեսը պետք է պատկանի էջմիածնին, իսկ մյուս կեսը՝ այն գյուղերին, որոնցով անցնելու է առուն⁸:

Ֆեոդալական հողատիրութեան տարբեր ձևերի առկայության պայմաններում, անձնական միջոցներով առուններ հանելու, ջրի նոր ակունքներ հայտնաբերելու կամ հորատման ու քանքանների միջոցով ստորերկրյա ջրերից նոր քահրիզներ բանալու և այդպիսիք որպես սեփականություն օտարելու մասին բավական ուշագրավ փաստաթղթեր են պահպանվել: Դրանք առավելապես վերաբերում են XVI—XVIII դարերին և հետաքրքիր են հատկապես ջրի մեծ

⁶ Մատենադարան, Կթղզ. դիվան, թղթ. 1 գ, վավ. 304. حرق مزبورك صويي جمله معر فتيله تنصيف الالئوب نصفى اوج كليساياه و نصف آخرى يگرمى پاره قريهيه وييريلوب نزاغلىرى قطع اولندى

⁷ նույն տեղում, «اعلام شرعيه سى موجبجه عمل الالئوب بعد اليوم ما مزبورى مناصفه ائزره استسقا ايدوب زياده و نقصان ايتدرلميه ديو

⁸ նույն տեղում, թղթ. 1 գ, վավ. 339, 340, հմմտ. Զամրո, էջ 200. «...և շարն վեճն թէ ջուրդ այդ որքան և կայցէ՝ երկու բաժին լիցի, մին բաժինն բերողին և միւսն այնց գեողորէիցն՝ ընդ որովք անցանէ առուն և ջուրդ այդ»: Ուշագրավ է այս տեսակետից այն փաստը, որ Մխիթար Գոշի Դատաստանագրքի տարբեր խմբագրություններում հանդիպում ենք երկու հակադիր հոգվածների: Մի գեպքում՝ «գետք յորոց հոսին սահմանաց ոչ է, բայց առ որ հասանեն», իսկ մյուս գեպքում՝ «գետք ուստի ակն ելանէ նոցա է և ոչ առ ուր հասանեն» (Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց, Վահան ծ. վարդապետ Բատամանեաց, Վաղարշապատ, 1880, էջ 327): Դժվար չէ նկատել, որ XVII դարին վերաբերող վերոհիշյալ երկու գեպքերում էլ ջրի սեփականության իրավունքը բաժանված է ակունքի տիրոջ կամ առուն հանողի և առվի ճանապարհին դտնվող գյուղերի միջև:

ու փոքր չափերով վաճառքի և օգտագործման սկզբունքների ու եղանակների մասին տվյալներով:

Ցարդ կատարված ուսումնասիրությունները դեռևս հնարավորություն չեն տալիս որոշակի գաղափար կազմելու ջրաչափման ընդհանուր սկզբունքների վերաբերյալ, որքանով որ դրանք ըստ տեղի և ժամանակի բավական տարբեր են եղել: Դրանով հանդերձ մեր ձեռքի տակ եղած նյութերը թույլ են տալիս ասելու, որ ջրաչափումը կատարվել է և՛ ըստ ծավալի և՛ ըստ ժամանակի կամ հոսքի տևողության:

Ջրի չափի միավորները նույնպես առանձին շրջաններում տարբեր են եղել: Ջրի սեփականություն տարբեր չափերի մասին որոշակի տեղեկություններ են տալիս հատկապես այն վավերագրերը, որոնք վերաբերում են այս կամ այն սեփականատիրոջ, որևէ առվի կամ ջրանցքի ջրի մի մասի նկատմամբ ունեցած սեփականատիրական իրավունքին: Այդպիսին է, օրինակ, Փիլիպպոս կաթողիկոսի վերոհիշյալ խնդրագրի առնչությամբ տրված շահ Աբբաս II-ի հրովարտակը, որով հաստատված են էջմիածնի իրավունքները Քասախ գետի ջրերի կես մասի նկատմամբ: Նույնպիսի սեփականության օտարման մասին է խոսում նաև 1722 թ. մեզ արդեն ծանոթ կալվածագիրը, ըստ որի, Օշականի համայնքը իր առվի 1/3 մասը վաճառում է էջմիածնին:

Նման դեպքերում մենք գործ ունենք մի ամբողջական միավորի որոշյալ մասի նկատմամբ ունեցած սեփականատիրական իրավունքի հետ: Տվյալ գետի կամ ջրանցքի ջրի առատանալու կամ նվազելու հետ միատեղ ավելանում կամ պակասում էր յուրաքանչյուր բաժնետիրոջ բաժինը, որը իրավական փաստաթղթերում, կալվածագրերում և հրովարտակներում պարսկերեն անվանվում էր «սահմ - سهم» (բաժին):

Շահ Թահմազ I-ի Մակվի Թագեոս առաքյալի վանքին տված հիշրեթի 969 (1562) թ. հրովարտակում նշված է, որ «Ղարաքիլիսայի հանդին Աբբասյուն գյուղի գետի վեց բաժնից երեք բաժին ջրի իրավունք է տրված»⁹: Ինչպես սույն փաստաթղթում, այնպես նաև ամենուրեք պարսկալեզու վավերագրերում և գրականության մեջ որևէ ջրից ուղղման նպատակով օգտվելու իրավունքը, որ պարսկերեն բառացի կոչվում էր «ջրի իրավունք» («حق آبی» - հակկարե») դիտվել է որպես սեփականություն կամ «մուլք» և որպես այդպիսին ժառանգվել է սերնդից սերունդ կամ ենթարկվել տարբեր կարգի օտարման¹⁰:

Ջրի սեփականության տարբեր ձևերի և կատեգորիաների մասին բավական արժեքավոր տեղեկություններ է տալիս Սիմեոն Երևանցին «Ջամբուի» 18-րդ գլխում, նպատակ ունենալով ծանոթացնել իր հետնորդներին վանքի ջրատիրական կարողությունների հետ: Այստեղ նա մանրամասն անդրադառնում է նաև Փիլիպպոս կաթողիկոսի վերոհիշյալ ձեռնարկումներին և ապա Օշականի, ինչպես նաև Երևանի Դավթայի առվին և այլ կառուցած, դնած կամ վակֆ ստացած ջրանցքների ու ջրամբարների, ձշտելով նաև այդ ջրերի քանակն ու ուղղման հնարավորությունները:

Այստեղ դժվար չէ նկատել, որ մեծաքանակ ջրերի չափի միավորը մեկ ջրաղացին բավարարելու չափով հոսող ջուրն էր: Այդպես էր հաշվված, օրի-

⁹ «Հրովարտակներ», 1, վավ. 10 «حق آبی مزرعة مذکور (قرا کلیسیاه) از رود خانه ارکویین از ششسهم سه سهم مقرراست»

¹⁰ Տե՛ս «Կալվածագրեր», կազմեց Հար. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 109—125:

նակ, Փիլիպպոս կաթողիկոսի բերած ջուրը, որ պարսկերեն վավերագրերում նշված է 6—7, իսկ «Ջամբուում»՝ մինչև 9 ջրաղացի ջրի չափ:

Ինչպես «Ջամբուում», այնպես նաև հայերեն ու պարսկերեն դիվանական վավերագրերում ավելի հաճախ հանդիպում է բահով հաշվվող չափը՝ «մեկ բահ ջուր», «երկու բահ ջուր» և այլն: Դա նշանակում էր, որ հոսող ջրի տրամագիծը հավասար էր բահի բերանի լայնքին: Այս չափը բավական տարածված է եղել ոչ միայն Հայաստանում, այլև Ադրբեջանում և Իրանում¹¹:

Զրաչափման տարածված միավորներից էր նաև «թուխը», որը փաստորեն յուրաքանչյուր բահրիզի ամբողջ ջրի 1/4 մասն էր: Ուստի մեկ թուխը ջրի քանակը ամեն մի առանձին դեպքում սերտորեն պայմանավորված էր տվյալ բահրիզի ընդհանուր ջրաքանակով¹²:

Ուշագրավ են այս տեսակետից Զաքարիա Ազուլեցու հաղորդած տեղեկությունները, որոնք հիմնականում վերաբերում են ազուլեցի Խոջենց Մեհարբի որդի Թումանի նախաձեռնությամբ բացված աղբյուրի ջրերին: 1662 թ. հիշատակագրությունների մեջ նա արձանագրում է. «Ազուլիս Մնասեց կհափ (պետք է լինի «կնաւ»—Չ. Փ.) լին անունն Գ(3) կհաւ կասին. այս կհափս Բ(2) կհաւն քոռացելայ, ջուրն ցամաքել, ահայ ազուլացի այր ոմն անունն Խոջինց Թուման, այս Թումանս այս կհափս մին կհաւն հանեց, մին մատն ջուր եկաւ, ձգեց յուր այգին, որ է թվին ՌՃԺԱ (1111): Այս Թումանս իւր այգին կհավովն ծախեց սուրբ Թումաչի առաջնորդ Պետրոս վարդապետին»¹³:

Մի այլ տեղ նույն անձնավորութեան ջանքերով բացված այլ աղբյուրից հոսող ջրերի քանակը նշելիս Ազուլեցին օգտագործում է «լուպ» (խողովակ) տերմինը, խոսքն անշուշտ որոշյալ տրամագծով խողովակի մասին է, որն ընդունված է եղել տվյալ վայրում, որպես ջրաչափման միավոր¹⁴:

Աղբյուրների համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ վերոհիշյալ չափերը վերաբերում են անընդհատ հոսող ջրերին: Այսինքն ջրի տվյալ քանակի հոսքը չէր սահմանափակված նաև ինչ-որ ժամանակով: Հոսքի տեղումնությամբ կամ ժամանակով չափվում էին այն ջրերը, որոնք հատկացված էին որոշակի հողատարածությունների կամ այգիների ոռոգման:

«Ջամբու» նույն գլխում Սիմեոն Երևանցին թվարկում է նաև տարբերակունքներից կամ քահրիզներից զանազան ուղիներով ձեռք բերած ոռոգման իրավունքների մասին, որը նա անվանում է «չափաջուր»: Այդ ջրերի քանակը, սակայն, նա չափում է միայն հոսքի տեղումնությամբ՝ օրերով կամ շաբաթներով՝ «մէկ շաբաթէն ջուր», «երկու շաբաթէն ջուր» կամ «13 օրեն մէկ, մէկ աւուր ջուր» և այլն: Այդ նշանակում էր, որ տվյալ աղբյուրի կամ քահրիզի ջուրը, որքան որ կար, մեկ շաբաթ, երկու շաբաթ կամ 13 օրը մեկ, լրիվ 24 ժամ պետք է հոսեր դեպի վանքապատկան հանդերն ու այգիները: Թեև չէր բացառվում նաև այդ իրավունքի ժամանակավոր օտարումը այլ հողագործների ու այգետերերի, մանավանդ, որ դրանք մեծ մասամբ վերաբերում են թավրիզում, տարբեր առիթներով վակֆ ստացած ջրերին: Այս ջրերը սովորաբար

11 «Ջամբու», էջ 154, 212, հմմտ. «Հրովարտականք», 11, վավ. 11, 26. տե՛ս նաև սույն հոդվածին առնթիւ հրատարակվող շահ Սաֆիի հրովարտակը:

12 «Կալվածագրեր», կազմեց Հար. Աբրահամյան, Երևան, 1941, վավ. 9:

13 Զաքարիա Ազուլեցի, Օրագրություն, Երևան, 1938, էջ 140—141:

14 Նույն տեղում, էջ 140:

հաշվվում էին շաբաթով, որը ժողովրդական լեզվով, աղբյուրներին կոչվում էր «հավթադի»¹⁵:

Սակայն ոռոգման իրավունքը հայերեն վավերագրերում ավելի հաճախ չափվում է «գլխով»: Արձանագրելով, որ այսինչ քահարիզից մեկ, երկու, չորս կամ ավելի գլուխ ջուր պատկանում է որևէ անհատ սեփականատիրոջ կամ կրոնական հաստատության, միաժամանակ անպայման նշվում էր, թե շաբաթվա որ օրերին է տեղի ունենալու ոռոգումը¹⁶: Սա, իհարկե, նույնպես կարելի է դիտել որպես ջրաշափման այնպիսի ձև, որի հիմքում ընկած է հոսքի տեղումնային որոշակի ժամանակով սահմանափակման սկզբունքը: Այստեղ նույնպես ուշագրավ է այն փաստը, որ այս ձևով չափվող ջրի օգտագործման իրավունքը ևս դիտվել է որպես սեփականություն և ենթարկվել տարբեր կարգի օտարման¹⁷:

Աղբյուրներից հոսող որոշակի տրամաչափով ջրերի կամ «կանաթներ» (öliq) ժամով կատարվող հաշվարկը առավելապես կիրառվում էր պտղատու, ինչպես նաև խաղողի այգիների ու բանջարանոցների ոռոգման ժամանակ:

Հիշերթի 1090 (1679) թ. Օրդուբադի Շարի ատյանում կազմված մի ընդարձակ կալվածագրում մանրամասն խոսվում է այն մասին, որ վերոհիշյալ հոջենց Մեհրաբի որդի Թումանը ունեցել է, անձնական միջոցներով հանած, մի այլ աղբյուր (կանաթ), որի ջրի ընդհանուր քանակը հաշվվում էր 80 ժամ: Այդ ջրով նա ոռոգում էր իր խաղողի և այլ պտղատու այգիները: Սկսած հիշերթի 1082 (1671) թվականից, նա այդ այգիների մեծ մասը համապատասխան քանակի ջրով մաս առ մաս վաճառում է նախ ոմն ագուլեցի Կարախանի որդի Իսմիխանին, որն իր հերթին վերստին վաճառում է Խասսե-յե շարիֆի ղուլամ, հետագայում Ագուլիսի Քալանթար Խախան-բեկի որդի Մուսա-բեկին: Վերջինս Թումանից գնում է ևս երկու տախտակ խաղողի այգի 24 ժամ ջրով, և այսպիսով, ըստ կալվածագրի վերջում կատարված հաշվարկի, հիշյալ 80 ժամ ջրի 62 ժամը, համապատասխան տարածությամբ այգիներով դառնում է Մուսա-բեկի սեփականությունը¹⁸:

Վերոհիշյալներով, իհարկե, չեն սահմանափակվում ջրի սեփականատիրության ձևերն ու օգտագործման ու բաշխման ժամանակ կիրառվող ջրաշափման սկզբունքները: Սույն համառոտ ակնարկով մենք փորձեցինք միայն վավերագրական սկզբնաղբյուրների ընդհանուր նյութերի հիման վրա թուցիկ կերպով ծանոթանալ XVI—XVIII դդ. ջրի սեփականության իրավական հիմունքներին և ջրաշափման ու օգտագործման առավել տարածված մի քանի ձևերի հետ:

Կատարված հայանցիկ հետազոտությունը, սակայն, գալիս է մի անգամ ևս հաստատելու այն իրողությունը, որ պատմողական սկզբնաղբյուրներին ղուգահեռ դիվանական փաստաթղթերը, իսկ առավել ևս պարսկերեն պաշտոնական վավերագրերը հսկայական փաստական նյութեր են պարունակում, որոնց ավելի հանգամանալից ու ամբողջական հետազոտությունը մեծ չափով կարող է նպաստել ֆեոդալական հողատիրության կարևոր խնդիրներից մեկի՝

¹⁵ «Կալվածագրեր», կազմեց Հար. Արրահամյան, Երևան, 1941, վավ. 96:

¹⁶ Նույն տեղում, վավ. 86, 87, 88, 89, 91, 92, 93:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 171:

ջրատիրության պատմության առավել լիակատար և համակողմանի ուսումնասիրությանը:

* * *

Ձևոնարկելով Մատենադարանի կաթողիկոսական դիվանի պարսկերեն վավերագրերի մատենաշարային հրատարակությանը, բնագրագիտական աշխատանքների ընթացքում հաճախ առիթ ենք ունեցել անդրադառնալու նաև որոշ հայագետների անցյալում այս բնագավառում կատարած աշխատանքներին, ընդդեմելով, հատկապես, այդ ուսումնասիրությունների շնորհիվ տարբեր մշակութային կենտրոններում կամ եկեղեցական հաստատություններում պահպանված պարսկերեն վավերագրերի մասին մեզ հասած տեղեկությունների նշանակությունը¹⁹:

Որքան ավելի ենք ծանոթանում նախահեղափոխական շրջանի հայագիտական գրականությանը, այնքան ավելի համոզվում ենք, որ Հայաստանի մեծ ու փոքր վանքերի դիվանական վավերագրերի ոչ մեծ մասն է մեզ հասել: Էլ չենք խոսում առանձին արևելահայ ազնվական ընտանիքների իրավունքներին վերաբերող դիվանական նյութերի մասին, որոնցից նույնպես հատուկ ենտ վավերագրեր են պահպանվել:

Նախասովետական ուսումնասիրողների մեծ մասը չի տիրապետել պարսկերենին և վավերագրերից օգտվել է միայն թարգմանչի միջնորդությամբ, նպատակ ունենալով սոսկ վերահասու լինել բովանդակությանն ու օգտագործել դրանք իրենց հետաքրքրող հարցերի լուսաբանման համար:

Ոմանք, սակայն, փորձել են տալ նաև իրենց ձեռքն անցած վավերագրերի թարգմանությունները: Այս բնագավառում առավել մեծ երախտիբ ունեն Ս. Զալալյանցն ու Մ. Սմբատյանցը, որոնց կատարած աշխատանքներին, ինչպես արդեն ասվեց, հաճախ առիթ ենք ունեցել անդրադառնալու: Նշենք միայն, որ օտար, մեծ մասամբ ոչ այնքան գրագետ պարսկագետների միջնորդությամբ կատարված այդ հայերեն «թարգմանությունները» զգալի չափով հեռացած լինելով բնագրերից, չեն կարող բավարարել ներկայիս բնագրագիտության և աղբյուրագիտության պահանջները:

Բարեբախտաբար պահպանվել ու մեզ են հասել Ս. Զալալյանցի հրատարակած վավերագրերի խնամքով հանված պատճենները, որոնց մի մասը ընդգրկված է «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշարի «Հրովարտակներ» շարքի արդեն լույս տեսած պրակներում²⁰: Մյուսները ևս ժամանակագրական կարգով, նույն ձևով լույս կտեսնեն: Ավելի բարվոք վիճակում են գտնվում Մ. Սմբատյանցի «Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի» աշխատության հավելվածում հրատարակված վավերագրերը, որոնց պարսկերեն բնագրերը պահպանվել են ներկայումս Մատենադարանի «Անհատական արխիվների» բաժնում գտնվող «Մելիք-Շահնազարյանների գործում»²¹:

1904 թ. լույս տեսած «Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակա և շրջակայից նորա» աշխատության մեջ Մ. Սմբատյանցը հրատարակել է նույն

¹⁹ Տե՛ս «Հրովարտակներ», 1, էջ 12, 17:

²⁰ Տե՛ս «Հրովարտակներ», 1, վավ. 3, 6, 18, 2-րդ 5, 7, 2, 3

²¹ Մատենադարան, Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 21, 23, 25, 27, 29, 31, 33, 35, 37, 39, 41, 43, 44, 47, 49, 51, 58, 126, 127:

վանքի դիվանում գտնվող մի բավական արժեքավոր վավերագիր, որի բնագիրը մեզ չի հասել, կամ ավելի ճիշտ, ցարդ մեզ չի հաջողվել գտնել այդ վանքի դիվանի հետքերը, որտեղ կարող է պահպանված լինել նաև հիշյալ վավերագիրը:

Ինչ-որ նկատառումներով, սակայն, Մ. Սմբատյանցը այս վավերագիրը հրատարակելիս ավելի մեծ խնամք է դրսևորել և փորձել է գիտական տեսք տալ այդ հրատարակությանը: Թեև խիստ անհաջող և համարյա անընթեռնելի, փորձ է արված ընթերցողին ներկայացնել վավերագրի լուսանկարը: Ապա տրված է հայատառ պարսկերեն բնագիրը, ադրբեջանական արտասանությունով, նույնպես բավական մեծ աղավաղումներով: Այնուհետև հայերեն և ռուսերեն թարգմանություններն են, ինչպես նաև վավերագիրն ընթերցողի ադրբեջաներեն բանավոր թարգմանության զրառումը, որը և հիմք է ծառայել հայերեն և ռուսերեն թարգմանություններին²²:

Լուսանկարի ընդհանուր տեսքը հուշում էր, որ դա Սեֆյան շահերից մեկի հրովարտակն է, կնիքի վրա, թեև աղոտ, նշմարվում էր «Սաֆի» (صفی) անունը: Ինչպես կնիքի, այնպես նաև գրության ձևի ու այլ բնագրական հատկանիշների ուշադիր համեմատությունը շահ Սաֆիի (1629—1642) արդեն լույս տեսած հրովարտակների հետ, այլևս կասկած չէր թողնում ասելու, որ հրովարտակը տրված է շահ Սաֆիի կողմից հիշյալ 1048 (1638) թվականին:

Հայատառ պարսկերեն բնագրի համեմատումը լուսանկարի քիչ թե շատ ընթեռնելի տողերի հետ, ինչպես նաև նման հրովարտակների վերծանության փորձված մեթոդների կիրառումը, նպաստեցին վերացնելու բնագրի բոլոր աղավաղումներն ու վերականգնելու հրովարտակի պարսկերեն ամբողջական բնագիրը:

Շահ Սաֆիի սուլն հրովարտակն աղբյուրագիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն որպես Երնջակի Ս. Կարապետի վանքից ցարդ մեզ հայտնի միակ պարսկերեն պաշտոնական վավերագիրը, այլ ավելի մեծ է նրա արժեքը՝ որպես ջրի սեփականության, օգտագործման և ջրաշարժման վերջ շարադրված ձևերի մասին կարևոր տվյալներ պարունակող հավաստի սկզբնաղբյուր:

Ստորև տալիս ենք հրովարտակի վերականգնված պարսկերեն բնագիրն ու հայերեն թարգմանությունը:

هو

الملك لله

[مهر شاه صفی]

فرمان همايون شد آنکه چون درينولا عيسى فرطابيت که در معبد
وانك اسر آئيل واقعه در النجق تومان نخچوان ميباشد بدرگاه جهانپناه
آمه بعرض رسانيد که ازقديم الايام الى الان معمول است که از قريه
مارالى آريک بيل آب و از قريه ابره قونيس خمس آب بمعبد وانك

²² Մ. Սմբատյանց, Նկարագիր Սուրբ Կարապետի վանքից Երնջակի և ջրաշարժից նորա, Տփլիս, 1904, էջ 476—481:

اسرائیل مزبور جاری میسده الحال جمعی بخلاف شرع و حساب مانع میشود و درین باب استدعا حکم اشرف بعینه عالیجاه بینگلم بیگی چخور سعد و اهالی شرع انور نمود بنابرین مقرر فرمودیم که عالیجاه بینگلم بیگی چخور سعد و حاکم آنجا بحضور اهالی شرع انور بحقیقت رسیده هرگاه نموده واقعی بوده باشد مقرر دارند که حصه معینه آب مزبوره را که از قدیم الایام الی الآن بوانک مزبور جاری میشده باشد بدستور معمول قدیم و نهج استمرار سنوات سابقه جاری بوده احدی از مردم آنجا بخلاف حق و حساب مانع و مزاحم نشوند و بمقتضای قانون شرع و حساب عملنمایند و نوعی باشد که بجماعت مزبور ستمی واقع نشود درین باب قدغن دانسته از فرموده تخلق نورزند

تحریر آ فی شهر صفر سنه ۱۰۴۸

նա է:

Իշխանությունն աստծունն է:

Շահ Սաֆիի կնիքը

Արքայական հրաման եղավ այն մասին, որ օրերս Թուման-ե Նախչևանի Ալնջակում²³ գտնվող Իսրայելի²⁴ աղոթավայրի և վանքի նսալի վարդապետը եկավ Աշխարհի ապավենի դուռը և զեկուցեց այն մասին, թե հին ժամանակներից իվեր մինչև օրս ընդունված է եղել, որ Մարալիար²⁵ գյուղից մեկ բահ ջուր և Ապրակունիս գյուղի ջրի մեկ հինգերորդը հոսի դեպի հիշյալ Իսրայելի վանքն ու աղոթավայրը, իսկ այժմ ոմանք հակառակ Շարի և անիրավ կերպով, արգելք են հանդիսանում: Նա խնդրեց, որ այս մասին Չուխուր-Սադի բեկլարբեկիին և Շարի երեկելիներին ուղղված սրբազան հրամանագիր հրապարակվի: Ուստի կարգադրեցինք, որ Չուխուր-Սադի բարձրաստիճան բեկլարբեկին և տեղի հաքիմը լուսավոր Շարի երեկելիների ներկայությամբ իրողությունը ստուգի և եթե ներկայացվածը համապատասխանում է իրականության, թող կարգադրեն, որ հիշյալ ջրի որոշյալ բաժինը, որ հին ժամանակներից իվեր առ այսօր հոսել է դեպի հիշյալ վանքը, հնուց ընդունված կարգով և անցած տարիների նման շարունակի հոսել, և տեղի մարդկանցից ոչ ոք ապօրինի և անիրավ արգելք չհանդիսանա ու անհանգստություն չպատճառի: Թող վարվեն Շարի օրենքների և արդարության սկզբունքներով և այնպես լինի, որ հիշյալ համայնքի նկատմամբ անարդարություն տեղի չունենա:

Այս ընդունել որպես խիստ կարգադրություն և հրամանին չհակառակել:
Գրվեց 1048 թ. սաֆար ամսին (1638 թ. հունիս 14—հուլիս 12):

²³ Երնջակ:

²⁴ Երնջակի Ս. Կարապետի վանքը տեղի մահմեդականները Իսրայել մարզարեի անունով կոչում էին «Իսրայել փելչլամբար», ինչպես որ Գարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի կամ Մաղարդա վանքը Գանիել մարզարեի անունով կոչվում էր «Գանիալ փելչլամբար»:

²⁵ Գյուղն այժմ անվանվում է Բանանիար:

A. D. PAPAŽIAN

АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ О ВОДОВЛАДЕНИИ
И УКАЗ ШАХА САФИ ОТ 1638 года

(Р е з ю м е)

История землевладения в средневековой Армении тесно связана с вопросом о водовладении, который, однако, по сей день не стал предметом серьезного научного исследования ввиду недостаточного изучения соответствующих источников и, в частности, архивных документов, а также отсутствия поныне научных публикаций большей их части.

В статье делается попытка вкратце обрисовать некоторые особенности водовладения, водопользования и водоизмерения в XVI—XVIII вв. и показать роль архивных и, в частности, официальных персидских документов в деле освещения этих вопросов.

В приложении даются также обнаруженный в 1904 г. М. Смбалянцем и восстановленный автором персидский текст указа шаха Сафи от 1638 г., подтверждающего водовладельческие права монастыря св. Карапета в Ерынджаке, и его армянский перевод.

H. D. PAPAŽIAN

LES DOCUMENTS D'ARCHIVES CONCERNANT LE DROIT DE
PROPRIÉTÉ SUR L'EAU ET LE DÉCRET DE 1638 DE SHAH SAFI

(R é s u m é)

L'histoire de la propriété foncière en Arménie médiévale est étroitement liée au problème du droit de propriété sur l'eau, lequel, cependant, n'a pas fait jusqu'à présent l'objet d'une sérieuse analyse scientifique à cause de l'étude insuffisante des sources correspondantes, particulièrement des documents d'archives, et l'absence de publications scientifiques de la majorité de ces sources.

L'auteur de l'article esquisse brièvement quelques particularités du droit de propriété sur l'eau, du droit d'usage et de mesure de l'eau aux XVI—XVIII siècles et montre le rôle des documents d'archives et particulièrement des documents officiels persans dans l'éclaircissement de ces questions.

L'article comporte en appendice le texte persan, découvert en 1904 par M. Smbatians et reconstitué par l'auteur, du décret de 1638 de Shah Safi, confirmant les droits de propriété sur l'eau du monastère St. Karapet de Yerindjak, et sa traduction arménienne.

ՄԱՍԵՆԱԳԱՐԱՆԻ ԹՈՒՐՔԵՐԵՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ
ԱՐԺԵՔԸ

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Գ. ՓԱՓԱՋՅԱՆ

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան Հին ձեռագրերի ինստիտուտ «Մատենադարանում» պահվող «Կաթողիկոսական դիվանի» արաբատառ վավերագրերի մեջ ուրույն տեղ են գրավում շուրջ 400 թուրքերեն փաստաթղթերը, որոնց ժամանակագրական սահմանը սկիզբ է առնում 1586 թ. և հասնում է մինչև առաջին համաշխարհային պատերազմի տարիները:

Շուրջ 350 տարվա պատմական ընդարձակ մի ժամանակաշրջան ընդգրկող այս վավերագրերը պահպանվել են վանական արխիվներում և հիմնականում վերաբերում են էջմիածնի, Մակվի Թաղետոս առաքյալի, Դարաշամբի Ստեփանոս նախավկայի, Ազուլիսի Թովմա առաքյալի, Մշո սուրբ Կարապետի, Աղթամարի, Բայազետի, Բաբերդի և այլ վանքերի:

Հիշյալ վանքերում պահպանված վավերագրերի կենտրոնացումը էջմիածնի դիվանում կատարվել է ավելի ուշ՝ XIX դարի վերջերում և հատկապես XX դարի սկզբներին, իսկ Աղթամարին և Վանի եկեղեցիներին վերաբերող ոչ մեծ թվով փաստաթղթերը էջմիածին են բերվել 1915—1916 թթ.:

Սիմեոն Երևանցին իր մեծարժեք ուսումնասիրության մեջ նկարագրել է էջմիածնի դիվանում առկա ընդամենը 88 թուրքական հրովարտականեր, կալվածագրեր և այլ պաշտոնական վավերագրեր, որոնց ժամանակագրական սահմանը հասնում է մինչև XVIII դարի 70-ական թթ.: Նա առաջին անգամ արխիվային մշակման է ենթարկել դրանք, դասակարգել ըստ շնորհող ինստանցիաների և 22-րդ գլխում շարադրել Արևմտյան Հայաստանում էջմիածնի ունեցած իրավունքների և օսմանյան պետության ու հայոց եկեղեցու փոհհարաբերությունների պատմությունը¹: Գնահատելով օսմանյան հրովարտակաների և այլ պաշտոնական վավերագրերի քաղաքական ու իրավական նշանակությունը և մտահոգված դրանց հետագա պահպանության մասին, նա խրատում է իր հետնորդներին, ասելով. «Թէպէտ տուողքն են այլազգիք և թշնամիք մերոյս կրօնի, սակայն՝ տուրք և հրամանագիրք նոցին են ըստ աշխարհիս օգտակարք, բուժիչք և ապահովացուցիչք, որպէս ի յօձից թունաւորաց սպասեմք առնուլ զթրակէզս ի բուժումն պես-պես ցաւոց: Զայս վասն այսօրիկ երկարեմ, զի և դու ի յունիլդ զգուշութեամբ պահեսցես զմնացեալսն առ քեզ, եւ մի ասիցես թէ այժմ այսինչ ռաղամ անօգուտ է և կամ թէ թագաւորքն ոչ գոն զի՞նչ օգտեն հրամանք նոցա, զի պիտոյանան բազմիցս, և իւրաքանչիւրոցն գոյ ժամանակ պիտանաւորութեան, որպէս մեր փորձեցաք բազմիցս»²:

Ինչպես պարսկերեն, այնպես էլ թուրքերեն վավերագրերի դասակարգումը Սիմեոն Երևանցին կատարել է՝ ելնելով դրանց պաշտոնական բնույթից:

¹ Սիմեոն Երևանցի, Զամբո, Վաղարշապատ, 1873, էջ 234—252.

² Նույն տեղում, էջ 210:

Սուլթանական հրովարտականների մասին նա խոսում է 22-րդ գլխում, իսկ մյուս թուրքերեն փաստաթղթերը նկարագրված են հաջորդ՝ «Գրեանք օսմանցոց փաշայից Շիս-խալամից և այլոց իշխողաց, զորս տուեալ են սրբոյ Աթոռոյս» խորագիրը կրող գլխում³:

Սիմեոն Երևանցու ձեռքի տակ եղած 88 վավերագրերը բացառապես վերաբերում էին էջմիածնին, հաստատում էին կաթողիկոսներին և նրանց իրավունքները, կամ լուծում վանքի կալվածատիրության ու հարկային արտոնությունների հետ առնչվող հարցեր: Ուստի միանգամայն պատճառաբանված էր դրանց դասակարգումն ու ուսումնասիրությունը վերոհիշյալ կարգով:

Ներկայումս սակայն, ինչպես նշվեց և՛ ժամանակագրական, և՛ բովանդակության, ինչպես նաև աշխարհագրական առումով մեզ հասած մեծաքանակ վավերագրերը խիստ բազմազան են ու տարատեսակ: Այսուհանդերձ, իրենց գերպաշտոնական բնույթով առանձնանում են սուլթանական հրովարտականները կամ բերաթիւները, որոնք և՛ ծավալով, և՛ շարադրման եղանակով, և՛ արժարժված հարցերի ամբողջական խմբավորմամբ ուրույն գիտական հետաքրքրություն են ներկայացնում:

Բերաթիւները գլխավորապես հրապարակվում էին սուլթանին ներկայացված որևէ խնդրագրի կամ դիմումի հիման վրա, որոշելու կամ հաստատելու համար խնդրարկուի պաշտոնն ու իրավունքները: Կաթողիկոսներին տրվող բերաթիւների համար կար նախապես հաստատված ձև: Դարերի ընթացքում մշակված էին բոլոր տիտղոսներն ու էպիտետները, ինչպես նաև հաստատման ենթակա իրավունքների և արժարժվող հարցերի հաջորդականությունը:

Հայ կաթողիկոսների իրավունքները հաստատող բերաթիւների համեմատություները նույն ժամանակաշրջանի զիամեթիւների, թիմարների, փաշայրքների, վոյեվոդությունների և օսմանյան կայսրության այլ ֆեոդալական տիրույթների հաստատման ֆերմանների հետ հնարավորություն է տալիս ճշտելու դրանց և՛ դիվանական, և՛ պաշտոնական ընդհանրություններն ու առանձնահատկությունները:

Օսմանյան դիվանագրությանը բնորոշ ընդհանուր հատկանիշներով հանդերձ, կաթողիկոսական բերաթիւները առանձնանում են որպես կրոնական համայնքների իրավական վիճակն արտացոլող փաստաթղթեր և օգնում են պարզելու եկեղեցական իշխանությունների իրավասության սահմանները: Դրանց մեջ արտահայտված է օսմանյան պետության կողմից դարերի ընթացքում հաստատված որոշակի վերաբերմունքը այլակրոն համայնքների ներքին վարչության և նրանց նկատմամբ կիրառվող տնտեսական-հարկային քաղաքականության վերաբերյալ:

Ծանոթանալով հրովարտականների (մեծ մասամբ մեկը մյուսին կրկնող) բովանդակությանը, դժվար չէ նկատել, որ եկեղեցական համայնքները Օսմանյան կայսրության մեջ դիտվել են որպես հասուն բեր հաստատություններ, ինչպես տարբեր կարգի տիրույթներ ու ավատներ ստացող ֆեոդալները, այնպես էլ հոգևոր վիճակներին ու վանքերին տիրող հոգևորական առաջնորդները պարտավոր էին հավատացյալներից գանձվող եկամուտի դիմաց որոշ գումար մուծել արքունի գանձարանը:

Պետական պաշտոնների ու ռազմա-ֆեոդալական տիրույթների վարձա-

³ Նույն տեղում, էջ 249:

կալական-կապալային կամ «մուկաթիայի» սիստեմը, որն ընկած էր կայսրության ֆինանսների հիմքում, հավասարապես վերաբերում էր հոգևոր պաշտոններին ու վանական հաստատություններին բերաթնելու արդյունքում է, որ կաթողիկոսներից գանձվող գումարները գրանցված էին «Եպիսկոպոսական մուկաթիայի դաֆթարներում»⁴։ Որ այդ գումարները պայմանավորված էին տվյալ թեմից կամ թեմերից գանձվող հոգևոր տուրքերի ընդհանուր քանակով, դա պարզ երևում է այն բանից, որ երբ Պոլսի պատրիարքների հետ երկար վեճերից հետո Հակոբ Շամախեցու օրոք (1759—1763) Զմյուռնիայի թեմը նորից մտցվում է տերունի թեմերի շարքը, նախապես որոշված 6800 ալչե կաթողիկոսական տուրքի կամ «մակթուի» վրա գումարվում է նաև մուկաթիաների դաֆթարում գրանցված Իզմիրի վիճակի 4000 ալչեն, և այնուհետև կաթողիկոսական մակթուն դառնում է 10800 ալչե⁵, «քանզի Իզմիրում մախթուն, — գրում է Սիմեոն Նրեանցին, — (որ է արքունական հարկն՝ զոր ի նստելն առաջնօրդին տալ պարտի) էր շորս հազար ստակ, որ է երեսուն և երեք զուռուշ ԺՎ փարայ և Ա ստակ, գայս ևս եղեալ ի վերայ մախթուին կաթողիկոսացն, արարաք զնա տասն հազար ութն հարիւր ստակ, որ է իննսուն զուռուշ»⁶։

Սուլթան Աբդուլ-Համիդ I-ի 1774 թ. հրովարտակով հաստատվում է, որ Շորագյալի Ագարակ գյուղի Ս. Եղիայի կամ Խըտըր Իլյազի և Չըլզըրի ու Ղարսի կազանների սահմանում գտնվող խաչվանիկի վանքերը ենթակա են էջմիածնին, որոնցից ստացվող 1000 ալչե մակթուն մուտք էր արված եպիսկոպոսական մուկաթիայի դաֆթարում, որպես արքունի տուրք կամ «միրի փիշքաշ»⁷։ Նույն սուլթանի 1775 թ. մի այլ հրովարտակով Պոլսի Զաքարիա պատրիարքի համաձայնությամբ Կարնո կազայում գտնվող Մուտուրկու Ս. Լուսավորչի վանքը վանահայր Բաղդասար վարդապետի մահվանից հետո հանձնվում է էջմիածնի տնօրինությանը և ըստ նույն դաֆթարի, որպես «միրի փիշքաշ» արքունի գանձարանն է մուծվում 7200 ալչե⁸։

Չնայած իրենց նույնատիպ շարադրանքին, կաթողիկոսական բերաթնելու մեջ տեղի ունեցած կարևոր դեպքերը, մեծ մասամբ կապված Պոլսի պատրիարքների ու էջմիածնի կաթողիկոսների միջև ծագած և երբեմն շատ սուր բնույթ կրող ընդհարումների և կաթողիկոսական աթոռի շուրջ ծավալված վեճերի ու տարաձայնությունների հետ։

Պայքարը հիմնականում մղվում էր ազդեցության շրջանների և առանձին թեմերի ու վիճակների շուրջ։ Այս հարցում խիստ կարևոր նշանակություն են ունեցել Օսմանյան կայսրության մեջ պատրիարքներին վերապահված և արքունի դիվանի կողմից հաստատված իրավունքները, որոնք վերաբերում էին կայսրության սահմաններում գտնվող հայ լուսավորչական համայնքներին։ Սակայն պատրիարքները, օգտվելով նպաստավոր դիրքերից,

⁴ Մաշտոցի անվ. Մատենադարան, Կթղվ. դիվան, թղթ. 1դ, վավ. 448, 479; يسقطوس

مقاطعه سى دفتر لرى

⁵ Նույն տեղում, թղթ. 1դ, վավ. 439։

⁶ «Զամբու», էջ 237։

⁷ Կթղվ. դիվան, թղթ. 1դ, վավ. 479։

⁸ Նույն տեղում, վավ. 480։

փորձում էին միջամուխ լինել նաև էջմիածնի գործերում և հասնել այն բանին, որ էջմիածնի և օսմանյան արքունիքի միջև տարվող բանակցությունները կատարվեն Պոլսի պատրիարքների միջնորդությամբ, իսկ նոր կաթողիկոսների և կայսրության տերիտորիայում նրանց իրավունքների հաստատման բերաթիւները հրապարակվեն պատրիարքների ներկայացմամբ ու թելադրանքով:

Պատրիարքների այս ձգտումները հաջողությամբ չէին պսակվում, քանի որ էջմիածնի կաթողիկոսարանը գտնվում էր Սեֆյան Իրանին ենթակա Արարատյան երկրում, որպիսի քաղաքական իրավիճակը թելադրում էր ավելի շրջահայաց և դիվանագիտորեն ճշգրտված հարաբերություններ: Ուստի միանգամայն հասկանալի է, թե ինչու էջմիածնի կաթողիկոսական բերաթիւների ձեռքբերման իրավունքի սեփականումը Պոլսի պատրիարքների կողմից հնարավոր դարձավ միայն 1726 թ., երբ օսմանյան զորքերը օկուպացրել էին Արարատյան երկիրը և Անդրկովկասի ու Ատրպատականի մեծ մասը: Նույն թվականին Կարապետ Ուլնեցի (1726—1729) կաթողիկոսին տրված Սուլթան Ահմեդ III-ի հրովարտակում Երևանյան նահանգն արդեն համարվում է «Իրանից նվաճված և օսմանյան ապահով երկրներին միացված»⁹:

Անսպասելիորեն պարզունակ է այս իրողության՝ Սիմեոն Երևանցու մեկնաբանությունը, երբ էջմիածնի իրավունքների բռնադատումը նա բացատրում է միայն պատրիարք Հովհաննես Բաղիշեցու և նորընծա կաթողիկոսի անձնական հատկանիշներով, շեշտելով հատկապես, որ այն տեղի ունեցավ «Ի հրաւիրիլն ի կաթողիկոսութիւն վերոյիշեալ Կարապետ կաթողիկոսիդ (որ էր յայն կուսացի, և մանաւանդ ի վիճակէն Սըսոյ), Աթոռոյս որպիսութեան, պատուոյն և իշխանութեան ամենեկին անտեղեակ, ինքն ևս ծեր և պարզամիտ, իսկ այն Հովհաննես վարդապետն Բաղիշեցի (որ էր պատրիարք Պոլսոյ) խորամանկ, շոքմոգ, կեղծաւոր և խաբող, որպես բերքն է Բաղիշու և այնց կողմանց»¹⁰: Այստեղ անգիտացված է այն իրողությունը, որ այդ ժամանակ Պոլսում գտնվող էնկլուրիո թեմի առաջնորդ Կարապետ Ուլնեցու հրավիրումն ու նշանակումը Աստվածատուր Համատանցու մահից հետո թափուր մնացած էջմիածնի կաթողիկոսության պաշտոնում, լիովին համահունչուն էր նորանըված երկրամասերը հպատակեցնելու և օսմանյան պետական վարչակարգին ենթարկելու քաղաքականությանը: Չպետք է մոռանալ, որ հնուց հաստատված կարգով Պոլսի պատրիարքը հանդիսանում էր կայսրության սահմաններում բնակվող բոլոր հայ լուսավորչական համայնքների ներկայացուցիչ:

Նվաճված երկրամասերում թուրքական իշխանությունների վարչական և տնտեսական ու հարկային քաղաքականության վերաբերյալ բացառիկ կարևոր աղբյուրներ են 1590—1605 և հատկապես 1725—1735 թթ. Արևելյան Հայաստանում թուրքական բերդապահ կայազորների հրամանատարների, փաշաների ու նրանց ստորադաս պաշտոնյաների կամ սրանց կողմից նշանակված հոգևորական դատավորների, զազիների ու շեյխ-ուլ-խալամների հրապարակած հրամանագրերն ու վճիռները (բյուրուլթիներ և ֆիթվաներ):

⁹ Կթղկ. դիվան, Թղթ. 14, վավ. 308, 309, 310, 313. ممالك ايرانك فتح و تسخير و ضمايم ممالك محروسة المسالك قلمناك

¹⁰ «Ջամբո», էջ 235:

XVI դարի վերջին տասնամյակին և XVII դարի սկզբին վերաբերող վավերագրերը անհամեմատ սակավ են և առավելապես վերաբերում են թագեի, Դարաշամբի, Աստապատի ու մերձակա վանքերին, մասամբ նաև՝ Մակվի, Զորսի, Նախիջևանի և Գողթնի առանձին գյուղական համայնքների: Առավել կարևոր են, սակայն, XVIII դարի 20—30-ական թթ. վավերագրերը, որոնք արժեքավոր տվյալներ են պարունակում ներքին առևտրի, մաքսային գանձումների և ժողովրդական տնտեսության մեջ առևտրական ու վաշխառական կապիտալի ներգործուն դերի վերաբերյալ:

Պատմական այս ժամանակահատվածի ամենաարժեքավոր վավերագրերը 1725—1730 թթ. Վաղարշապատի հարկացուցակներն են, որոնք քաղվածաբար դուրս են բերված Երևանի լիվայի ընդարձակ հարկային մատյանից (դեֆթեր-ի մուֆեսսե)¹¹: Հարկացուցակների եզակի արժեք ներկայացնող տրվյալներով հաստատված է, որ թուրքական օկուպացիոն իշխանությունները Անդրկովկասի որոշ մասին տիրելուց անմիջապես հետո սկսել են այնտեղ գործադրել Օսմանյան կայսրության մեջ կիրառվող հարկային սխեմները. կատարել են ընդհանուր աշխարհագիր և կազմել նահանգային «ընդարձակ հարկային ցուցակներ»:

Հաջորդ աշխարհագիրն ու բնակչության և հարկատու համայնքների ու օբյեկտների հաշվառումը կատարվել է 1728 թ., երբ թուրքական զորքերը, ձեռնարկելով ընդհանուր հարձակման, թափանցել են Արցախ, մասամբ նաև Սյունիք և նվաճել Անդրկովկասի գլխավոր ամրությունները: Այս իրողությունները յուրովի արտացոլված է նոր հարկացուցակում, որտեղ բազմապատկված են բնակչությունից գանձվող հարկերը և ավելացված են նոր հարկեր: Գյուղից գանձվող հարկերի ընդհանուր դրամական համարժեքը 1725 թ. կազմում էր 91515 ալշե, իսկ 1728 թ.¹² 211322 ալշե: Այդ նշանակում էր, որ բնակչության հարստահարությունն ու կողոպուտը նվաճման առաջին տարվա համեմատությամբ ավելացել էր շուրջ 2,5 անգամ¹²:

1725—1735 թթ. նվաճման շրջանի վավերագրերը կարևոր են նաև պարզելու համար թուրքական վարչակարգի և զինվորական իշխանությունների ազդեցության սահմանները: Վավերագրերը մեծ մասամբ վերաբերում են Արարատյան երկրին, Երևանին և մերձակա շրջաններին: Զգալի թիվ են կազմում նաև Նախիջևանի, Աստապատի, Ագուլիսի և Օրդուբադի շրջաններին վերաբերող վավերագրերը, այսինքն՝ այն շրջանների, որտեղ համեմատաբար ավելի կայուն է եղել օկուպացիոն իշխանությունը:

Հայտնի է, որ այս տարիներին թուրքերը հասցրել են կազմել նաև Գանձակի վիլայեթի հարկացուցակ¹³, իսկ Գանձասարի դիվանում պահպանվել են 1729 թ. հետո գրված որոշ փաստաթղթեր, այդ թվում նույն թվականի փետրվարի 14-ին հրապարակված Մուստաֆա փաշայի հրամանը, որով վախճանված Եսայի կաթողիկոսի տեղ կաթողիկոս է նշանակվում նրա եղբայր Գրիգորը¹⁴: Դա նշանակում է, որ, թեև կարճ ժամանակով, Ղարաբաղը ևս են-

¹¹ Կթղ. դիվան, թղթ. 1գ, վավ. 293, 316, 320, 332:

¹² Այս հարկացուցակների մասին ավելի մանրամասն տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 431—464:

¹³ O. L. Barkan. XV ve XVI inci asırlarda Osmanlı İmparatorlugunda zirai ekonominin hukuki ve mali esasları, I cild „Kanunlar“, İstanbul, 1945, էջ 195—197.

¹⁴ ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 52, գործ 4, վավ. 1:

թարկվել է օկուպացիոն ուժերի հրամանատարությունը: Ուշագրավ է, սակայն, այն փաստը, որ ներկայումս կաթողիկոսական գիվանում գտնվող Տաթևի վանքի ալլալեզու վավերագրերի մեջ, որտեղ պահպանվել են նույնիսկ Կարակոյունլու սուլթան Ջհանշահի և նրա որդու՝ Հասան-Ալիի XV դարի հնագույն հրովարտակները¹⁵, չենք գտնում և ոչ մի օսմանյան վավերագիր: Այս փաստը ևս գալիս է հաստատելու, որ թուրքերին երբեք չի հաջողվել Ղափանում հասնել բիշ թե շատ տեական տիրապետության: Ալլալեզու էջմիածնի, Գանձասարի, Աստապատի, Ագուլիսի և մյուս վանքերի նման Տաթևի առաջնորդները ևս պետք է իրենց հրամանագրերը ստանալին թուրքական իշխանություններից, ինչպես նաև գիվանում պահպանված կլինեին վանքի կալվածատիրական իրավունքներն ու մուաֆուկունը հաստատող օսմանյան վավերագրեր:

Եթե այս շրջանի ընդարձակ հարկացուցակներից հանված քաղվածքները օգնում են պարզելու թուրքական օկուպացիոն իշխանությունների հարկային քաղաքականությունը Անդրկովկասում, ապա նշված ժամանակաշրջանի մյուս պաշտոնական վավերագրերը չափազանց կարևոր սկզբնաղբյուրներ են՝ նվաճված երկրամասերում նույն իշխանությունների կողմից վարվող տնտեսական ու վարչական և հատկապես ագրարային քաղաքականության ուսումնասիրության համար:

Ինչպես զինվորական հրամանատարների ու փաշաների «բուլյուրուլթիները» (հրամանագրեր), այնպես էլ տեղական շարիաթական ատյաններում ու նոտարական գրասենյակներում գյուղերի, ագրարկների և այլ հողային տիրույթների շուրջ կատարվող զանազան տնտեսական գործարքների վերաբերյալ կազմված արձանագրությունները գալիս են հաստատելու, որ 1725—1735 թթ. օկուպացիայի շրջանում ղրղըլբաշների տիրապետության օրոք գործող հողատիրության սխեմանում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Մուլբալին հողատիրության հիմնական ատրիբուտները առկա են մեզ հասած բոլոր կալվածագրերում և մանավանդ իշխանության ներկայացուցիչների կողմից տրված հրամանագրերում ու շարիաթական վավերագրերում: Կարգապահական օրգանները հետևողականորեն պաշտպանում էին գյուղատերերի կամ մալիքների սեփականատիրական իրավունքները, ամենուրեք հարկադրելով հողագործ ռայաթներին՝ անթերի կատարել հողատիրոջ նկատմամբ ունեցած բոլոր պարտականությունները: Կալվածատիրական լծի թեթևացման նպատակով ձեռնարկվող որևէ փորձ, բողոք կամ ընդդիմադրություն անողոք կերպով ճնշվում էր թուրքական զինվորական իշխանությունների բռնի ուժով: Հրամանագրերում ամենուրեք հրահանգվում էր տեղական նախքներին ու մուքաշիրներին՝ խստորեն պահպանել կալվածատիրոջ ու ռայաթների փոխադարձ հարաբերությունների՝ ղրղըլբաշների տիրապետության օրոք սահմանված կարգը:

1725—1728 թթ. մի քանի շարիաթական արձանագրություններում և սրանց հիման վրա հրապարակված՝ Երևանի Ռաջաբ և Մուստաֆա փաշաների հրամանագրերում Վազարշասպատ, Օշական, Մաստարա և այլ գյուղերի ռայաթներին, որոնք ըմբոստանալով՝ թերանում էին կատարել իրենց պարտավորու-

¹⁵ «Մատենադարանի պարսկերեն վավերագրեր», 1, Հրովարտակներ, պրակ Ա. Երևան, 1956, վավ. 1, 2, 4:

թյունները և պահանջում էին վերանայել կալվածատիրոջը հատուցվող սենտայի հնուց սահմանված նորմերը, խստագույնս հրահանգվում է՝ անթերի հատուցել գյուղատիրոջը հասանելիք ունեւան¹⁶:

Այս ժամանակաշրջանին են վերաբերում նաև Քասախ և Մեծամոր գետերի ջրային ռեսուրսների օգտագործման շուրջ էջմիածնի վանքի և Կարբիի շրջանի գյուղական համայնքների միջև ծագած վեճերի կարգավորման կապակցութեամբ հրապարակված՝ Աբդուլլա և Ալի փաշաների հրամանագրերն ու Երևանի Շարի ատյանում կազմված արձանագրութեւնները¹⁷: Տրված հրամաններն ու ընդունված որոշումները հանգում են այն բանին, որ թեև ջրանցքները հանված ու նորոգված էին էջմիածնի միջոցներով, սակայն դրանցով հոսող ջրերի միայն կեսն էր պատկանում վանքին, իսկ մյուս կեսով պիտի սուգվեին այն բոլոր 20 գյուղերի հանդերն ու այգիները, որոնց սահմաններով անցնում էր ջրանցքը¹⁸:

Գյուղական համայնքների՝ ջրի նկատմամբ ունեցած և վաղնջական ժամանակներից եկող սեփականատիրական իրավունքների մասին վկայող այս վավերագրերը եզակի նշանակութեւն ունեն հատկապես Արարատյան երկրի ազրարային հարաբերութեւնների ուսումնասիրութեւն համար, որտեղ արհեստական ոռոգումը գյուղատնտեսութեւն զարգացման գլխավոր նախապայմանն էր:

Այստեղ դրսևորված է նաև արևելյան պետութեւններում էնգելսի կողմից մատնանշված երեք հիմնական վարչութեւններից մեկը՝ «հասարակական աշխատանքների վարչութեւնը» կամ, որ նույնն է, «հոգատարութեւն վերարտադրութեւն մասին», քանի որ դա վերաբերում էր 20 խոշոր գյուղերի, որոնցից պետութեւնը (ներկա դեպքում՝ օկուպացիոն իշխանութեւնները) հսկայական եկամուտ էր ստանում և որոնց բնակիչներից շատերը պետական կամ «միրի» հողեր էին մշտկում:

Ինքնին հասկանալի է, որ ինչպես Արարատյան երկրում, այնպես էլ Անդրկովկասի մյուս շրջաններում գտնվող «ղիվանի» և «խալխես» գյուղերը, որոնք պետական սեփականութեւն էին, օսմանյան օկուպացման շրջանում անմիջապես ենթարկված էին զինվորական նահանգապետների կողմից նշանակված պաշտոնյաներին և մտցված էին «միրի» հողերի շարքը: «Միրի» էին դարձված նաև օսմանցիներին դիմադրութեւն ցույց տվող կամ նվաճումից հետո էմիրացիայի ենթարկված ֆեոդալներին ու իրանական պետական պաշտոնեւնութեւնը պատկանող հողերն ու մյուս անշարժ կալվածները:

1729 թ. մի կալվածագրից իմանում ենք, որ «միրի» սեփականութեւններ հայտարարված կալվածները վաճառքի էին հանվում օսմանյան իշխանութեւնների կողմից, և առուծախի ժամանակ որպես զնորդներ հանդես էին գալիս և՛ տեղացի հողատերեր ու առևտրական դասի ներկայացուցիչներ, և՛

16 Տե՛ս հողվածի վերջում հրապարակվող վավերագրերը:

17 ԿթղԿ. ղիվան, թղթ. 1գ, վավ. 304, 339, 340, 344 և այլն:

18 Նույն տեղում, վավ. 304, 344. حرق مزبورك صوئى جمله معرفتيله

تصيف اولنوب نصفى اوج كليساياه و نصف اخرى يگر مى پاره قريهيه
ويريلوب نزاغلرى قطع اولندى

թուրք զինվորական ու վարչական պաշտոնյաներ ու առանձին հոգևորականներ¹⁹,

Այս շրջանի կալվածագրերի և հարկացուցակների շնորհիվ հնարավոր է ավելի որոշակի ուրվագծել նշված տասնամյակի ընթացքում ժողովրդական տնտեսության քայքայման, մթերքների ու այլ կենսամիջոցների արտադրության և բնակչության կենսամակարդակի աճավոր անկման մոտայլ պատկերը: Դժվար չէ նկատել, որ անշարժ կալվածների գները արագորեն ընկնում են, իսկ մթերքների գները՝ բարձրանում, նվազում է ապրանքաշրջանառությունը և զգացվում կանխիկ դրամի մեծ պակաս: Այս առումով ուշագրավ են թուրքական իշխանութիւնների կողմից մտցված մաքսային սահմանափակումները, երբ ավելի մեծ մաքս էր գանձվում ներմուծվող ապրանքներից և ընդհակառակը, շարունակ իջեցնելով արտահանվող ապրանքներից գանձվող մաքսը, օբյեկտիվ նախապայմաններ էին ստեղծում երկրի արագ աղքատացման համար²⁰,

Այս երևույթը ավելի ցայտուն կերպով էր դրսևորվում Անդրկովկասից և Իրանից արտահանվող հիմնական ապրանքի՝ մետաքսի տարբեր տեսակների մեծաքանակ արտահանման ժամանակ: Կաթողիկոսական դիվանում պահպանվել է 1729 թ. Թավրիզի փաշայի և մի խումբ թուրք վաճառականների միջև կնքված և վերջիններիս կնիքներով ու փաշայի մակագրությամբ հաստատված պայմանագրի բնագիրը, որով համաձայնություն է կայացվում, որպեսզի Գիլանից դեպի Թուրքիա փոխադրվող մետաքսի բեռներից մաքս գանձվի միայն Արդաբիլում ու Թավրիզում և կարգադրվում է Ատրպատականի մյուս քաղաքների մաքսատներին՝ մետաքսի բեռներից մաքս չպահանջել²¹: Պայմանագրի բովանդակությունից պարզ երևում է, որ թուրքական իշխանությունները այդ տարիներին ամեն կերպ աշխատել են նպաստավոր պայմաններ ստեղծել և արտոնություններ տալ թուրք վաճառականներին՝ նրանց օսմանյան տերությունը մեծ եկամուտներ բերող մետաքսի առևտրի մեջ ներգրավելու համար, եկամուտներ, որոնք գոյանում էին տարանցիկ առևտրից գանձվող և հատկապես նավահանգստային մաքսերից:

Թուրք վաճառականների հետ կնքված համաձայնագրի բնագրի պահպանումը էջմիածնի կաթողիկոսական դիվանում հուշում է, որ օկուպացիոն իշխանությունները ցանկացել են մաքսային նոր կարգի մասին տեղեկացնել նաև հայ վաճառականությանը, որն, ինչպես գիտենք, դարեր շարունակ առաջատար դեր է խաղացել իրանական մետաքսի արտահանման գործում:

Ինչպես սույն պայմանագրի, այնպես էլ մաքսերի և առևտրական տուրքերի վերաբերյալ մի քանի այլ պաշտոնական վավերագրերի բովանդակած փաստական նյութի գիտական մշակումը մեծ շահով կարող է նպաստել Անդրկովկասում թուրքական օկուպացիոն իշխանությունների վարած տնտեսական քաղաքականության թալանչիական բնույթի բացահայտմանը: Այդ քաղաքականության մեջ Օսմանյան կայսրությանը բնորոշ ձևերով դրսևորված է էնգելսի մատնանշած՝ Արևելքի երկրների մյուս երկու (Ֆինանսական և ռազմական) վարչությունների գործունեությունը, որ ուղեկցվում էր «սեփա-

¹⁹ Նույն տեղում, վավ. 324:

²⁰ Նույն տեղում, վավ. 308, 310, 311, 325, 343, 347 և այլն:

²¹ Նույն տեղում, վավ. 325: Այս մասին տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 9, Երևան, 1969, էջ 241—253:

կան ժողովրդի կեղեքմամբ» և «ներքին ու արտաքին երկրների ավարառությամբ»:

Մի հնգվածում հնարավոր չէ մեկ առ մեկ անդրադառնալ Կաթողիկոսական դիվանի թուրքական վավերագրերին և վեր հանել դրանցից յուրաքանչյուրի աղբյուրագիտական արժեքը: Մենք փորձեցինք զնահատել դրանք գիտական հետաքրքրություն ներկայացնող առանձին հարցերի սահմաններում միայն: Ինչպես բերաթներն ու բույուրուլթիները, կալվածագրերն ու շարիաթական այլ կարգի արձանագրությունները, այնպես էլ Կարսի, Ախլցխայի, Բայազետի, Էրզրումի և Վանի փաշաների՝ հայոց կաթողիկոսներին և այլոց ուղարկած գրություններն ու տարբեր առիթներով Կաթողիկոսական դիվանում ամփոփված հայ առևտրական դասի ներկայացուցիչների և հայտնի կամ անհայտ անձանց անձնական նամակներն ու այլ բնույթի փաստաթղթերը բազմաթիվ ուշագրավ տեղեկություններ են պարունակում, որոնք կարող են նրպաստեղ պատմագիտությանը հետաքրքրող տարբեր հարցերի լուսաբանմանը:

Ստորև հրապարակում ենք Երևանի կազմի Աբդուլլայի հիշերթի 1137 թ. մուհառամի 4-ին (1724 թ. սեպտեմբերի 23) Կարբիի նահիայի նախին ուղարկած գրության բնագիրը, դրա վերձանությունը և հայերեն թարգմանությունը: Հստ այդ գրության էջմիածնապատկան գյուղերի ռայաթները պարտավոր էին բերքի տասանորդը ընդունված կարգով, առանց թերանալու հատուցել վանքին (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. № 298, մեծ. 23×16 սմ, բնագիր):

کربے ناجہ سندہ ناسب الشیخ العوم اولاً افندی المکریم
 بید العجمه الراضه انما اولونکر اوج کلب و او سکانه مصدره نام قریه راهی
 طراغنده حاصل ابله کلر زکمه لاندن اوج کلک محافضه و بره کلک کلری است ارکونه
 او اوده نفس استقله دیوانه روانه فرضاً اینک فدیما الاما مدرنه نکونه و بره کلک کلری
 اورره الزب زباده و نصفه طیبه رنجیده اولنماق با بنن مهجور بورلری
 بو جینجه حواسه نجور و اسار اولندی وصولنده لکر کر که بر وجب بورلری
 نه کونه و بره کلک کلری اب اولن اولوزه و بر درو. خلفه شمع و خلفه بورلری
 حوکت اما تک اورزه بنه اکبه اینه منزه صافیه حوکت ابر را سه بو طرفه اهدی
 المصنف
 دالام ۲۸۲ و ۲۸۳

کریبی ناحیه سنده نایب الشرع القویم اولان افندی المکرم.
 بعد التحیة الوافیة انها اولنور که اوچ کلیسا و اوشکان و مصدره نام
 قریه لر اهالیسی قریه مزبوره طبر اغنده حاصل ایلدکلری تر که لرندن
 اوچ کلیسا طرفته ویره گلدکلری اعشارلرینی بوسنه مبار که ده اداده
 تعلل ایتملریله دیوان روانه عرضحال ایتمکده قدیم الایا مدن نه گونه
 ویره گلمشدر ایسه اولمنوال افزره النوب زیاده و نقصان طلبیله
 رنجیده اولنمامق بابنده مههور بیورلدی صادر اولمقله موجبجه مراسله
 تحریر و ارسال اولندی و صولنده گر کدر که بر موجب بیورلدی شریف
 قدیمدن نه گونه ویره گلمشدر ایسه اولمنوال افزره ویردروب خلاف شرع
 و خلاف بیورلدی شریفی حرکت ایتمامک افزره تنبیه اکید ایلیه سن.
 خلاقیله حرکت ایدرلرایسه بو طرفه اعلام ایلیه سن.

و السلام فی ٤ محرم من سنه ١١٣٧

الفقییر عبد الله القاضی

بمدینته روان

مهر سندک ظهرنده.

«الله حسبی وحده و بقی عبده عبد الله ١١٢٩»

«Կարբիի նահիայում հաստատուն Շարի նաիր՝ հարգարժան էֆենդի:

Առատ օրհնանքներով տեղեկացնում ենք, որ Ուչքիլիսա (Վաղարշապատ), Օշական և Մաստարա կոչվող գյուղերի բնակիչները, այդ գյուղերի սահմաններում իրենց աճեցրած բերքից այս տարի Ուչքիլիսային (էջմիածնի վանք) տրվող տասանորդի (ա՛շար) հատուցման մեջ թերացել են: Այն բանից հետո երբ այս կապակցությամբ Երևանի դիվանին բողոքագիր էր ներկայացվել՝ կնքված հրամանագիր է հրապարակվել, որ «հնուց ի վեր ինչ կարգով որ տասանորդը հատուցել են, նույն կարգը պետք է պահպանել և առավել կամ նվազ պահանջմունքներով նեղություն չտալ»: Դրա համար էլ սույն գրովթյունը գրվեց և ուղարկվեց, որպեսզի ստանալուն պես կարգադրեք, որ ըստ սըրբազան հրամանագրի, հնուց ինչ կարգով որ հատուցել են, նույն կարգով շարունակեն հատուցել:

Խստորեն կզգուշացնեք, որ Շարին և սրբազան հրամանագրին հակառակ չընթանան և եթե հակառակողներ լինեն, այդ մասին կտեղեկացնեք մեզ: Ավարտվեց 1137 թվականի մուհառամի 4-ին (1724 թ. սեպտեմբեր 23):


Երևան քաղաքի կազի՝ նվաստ Աբդուլլա»:

Վավերագրի մյուս էջում դրված է կազիի կնիքը՝ հետևյալ մակագրությամբ. «Աստված միակն է, արդար և հավիտենական, և նրա ծառան է Աբդուլլան, 1129 (1717)»:

ИСТОЧНИКОВЕДЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ТУРЕЦКИХ ДОКУМЕНТОВ
МАТЕНАДАРАНА

Доктор истории, наук А. Д. ПАПАЗЯН
(Р е з ю м е)

В «Диване» армянского католикоса, хранящемся в архивном отделе Матенадарана, имеется около 300 турецких официальных документов (грамоты султана, указы визирей и пашей, шариатско-нотариальные протоколы и иная официальная и частная переписка), изучение которых может способствовать освещению некоторых вопросов социально-экономической и политической истории Армении. В статье дается характеристика источниковедческой ценности этих документов. К ней прилагаются подлинник и перевод письма ереванского казиза Абдуллы, посланного 4 мухарамма 1137 г. хиджры (23 сентября 1724 г.) наибу Карпинского нахиа.



А. Д. ПАПАЗЯН

НОВЫЕ ИСТОЧНИКИ ПО ИСТОРИИ КУРДСКОГО НАРОДА

Несмотря на возросший в последние годы интерес к историческому прошлому курдского народа, имеющиеся исследования далеко неудовлетворительны. Это объясняется тем, что еще не изучены важные для истории курдского народа первоисточники на арабском, турецком и персидском языках¹. В нашем курдоведении наметилась тенденция преодоления отмеченной выше узости, и тут важно использование сведений не только известных источников², но и расширение их круга.

Особенно важное значение имеют источники, принадлежащие перу средневековых курдских авторов³. Вопреки мнению Крича, что курды не имеют своей историографии⁴, многие выдающиеся представители средневековой науки были курдами по происхождению⁵, а некоторые из них выступали

¹ *E. M. Quatremère*: Notice et extraits des manuscrits de la Bibliothèque du roi et autres bibliothèques, Paris, 1838.

² **Г. Б. Акопов**. Арабские источники по этнической истории курдов... «Страны и народы Ближнего и Среднего Востока», вып. III, АН Арм. ССР, 1967, стр. 175—205. Его же. Курды и курдский вопрос в турецкой историографии. «Страны и народы Ближнего и Среднего Востока», вып. V, 1970, стр. 381—407.

³ Наиболее полное собрание извлечений из них: *F. Charmoy*. Chèref nameh ou fastes de la nation kourde par Chèref-ou'ddine, prince de Bidlis dans l'Viâlèt d'Arzeroume. I. I-II, s.-Pbg., 1868—1875.

⁴ *I. Creach*. Armenians, Koords and Turks, vol. II, 1880, p. 167.

⁵ См. **Н. Я. Марр**. Еще о слове «челеби». ЗВО, т. XX, вып. II—III, 1911.

именно как курдские историки. Наиболее известны среди них Молла Идрис Битлиси и Шараф-хан Битлиси, а также Махмуд-хан Дунбули и Абд-аль-Раззак-бек Дунбули из хойского племени Дунбули, оставившие достойные внимания исторические труды. Молла Идрисом написана история Османского государства от начала его возникновения до времен султана Селима I. Она озаглавлена «Хашт бехешт» или «Тарих-е ал-е Осман». Двухтомный исторический труд Шараф-хана «Шараф-наме», первый том которого целиком посвящен истории курдских племен, а второй является хроникой политических событий в Иране, Турции и Средней Азии в 1290—1596 гг., широко известен в востоковедении⁶. Известны также, хотя и не так широко, труды Абд-аль-Раззак-бека Дунбули (1762—1827). Его двухтомный «Муасир-е султанийе», охватывающий историю раннего периода Каджаров и изданный в 1826 г. в Тавризе, является первенцем иранского книгопечатания. Из неопубликованных его трудов известны рукопись «Нигаристан-е Дара», посвященная придворным поэтам Фатх-Али-шаха, и содержащая личные воспоминания автора «Таджрибат ал-ахрар ва таслиат-ал-абрар»⁷.

Этими работами исчерпывается, пожалуй, круг известных науке трудов курдских авторов. Как, однако, показало обнаружение М. Б. Руденко в Ленинграде работы курдского историка Молла Махмуда Баязиди⁸, дело не в том, что их нет, а в том, что основная их масса еще не открыта. Типична в этом отношении и история открытия в Матенадаране рукописей трех таких уникальных работ.

Еще в 1937 г. В. Минорский высказал предположение, что перу Абд-аль-Раззака должен принадлежать труд, посвященный истории феодального рода курдского племени Дунбули⁹; позднее по списку библиотеки Иранского медреса выяснилось, что действительно такой труд есть и называется он «Тарих-е данабиле»¹⁰, хотя, по сообщению Аззари, он именуется также и «Риаз аль-Джанна»¹¹. Отмечая значение основного труда Абд-аль-Раззака «Муасир-е султанийе»,

⁶ Издан и на русском языке: Шараф-хан Битлиси. «Шараф-наме», т. 1, М., 1967.

⁷ C. A. Storey. Persian literature. A bio-bibliographical survey. London, 1953, II. part 2, p. 334.

⁸ Молла Махмуд Баязиди. Нравы и обычаи курдов. М., 1963.

⁹ BSOS, IX/1, 1937, p. 254; ср. См. C. A. Storey, v. I, part 2, p. 129.

¹⁰ فهرست کتابخانه مجلس شورای ملی، تالیف یوسف اعتماسی، تهران ۱۳۱۱ ص ۳۱۵

¹¹ C. A. Storey. I, part 2, p. 1299.

И. П. Петрушевский упоминает и его «Тарих-е данабиле», сообщая, что, по сведению О. Л. Вильчевского, рукописный экземпляр этого труда хранится в ереванском Матенадаране¹².

В 1957 г. после тщательной проверки рукописей всего арабского фонда Матенадарана выяснилось, что упомянутая рукопись неверно описана и хранится под совершенно иным заглавием за номером 7938 армянского фонда. Внимательное изучение этой объемистой рукописи, состоящей из 251 листа, показало, что действительно ее последние страницы (2226—2496) содержат экземпляр (написанный красивым почерком насх) работы Абд-аль-Резака, посвященной генеалогии племени Дунбули.

Краткое описание данного текста, а также всей рукописи, хранящейся теперь под номером 622 арабского фонда, мы впервые дали в докладе, прочитанном на I Всесоюзной конференции востоковедов в Ташкенте¹³. Хотя и сведения «Тарих-е данабиле» ограничиваются пока лишь библиографическими данными и имеющийся у нас текст не озаглавлен и не имеет указания на рукопись-оригинал, однако то обстоятельство, что в нем изложена история дунбулиев, позволяет сказать, что в данном случае мы имеем дело с уникальным рукописным экземпляром «Тарих-е Данабиле». Между ним и «Таджрибат-аль-ахрар ва таслиат-аль-абрар», содержащим личные воспоминания того же автора, есть некоторое сюжетное сходство. Однако внимательное сличение его с данным Чарльзом Рио описанием рукописи, хранящейся в Британском музее, показало, что структура у них совершенно различна, сведения о событиях и лицах даны в ином распределении материала и изложении.

Наш текст начинается следующими словами:

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ. بَارِئُ مَوَدِنِ اَحْوَالِ قَبِيلِهِ وَ اَجْدَادِ جَامِعِ نَسْخَةٍ
بِدَبْعِ بِنْيَادِ يَقُولِ حَاوِيِ الْاَوْرَاقِ الْمَتَمَسِّكِ بِجَبَلِ النَّبِيِّ وَ الْوَصِيِّ ابْنِ نَجْفَقْلِي
الذَّنْمَلِيِّ عَبْدِ الرَّزَّاقِ عَفَى اللَّهُ تَعَالَى عَنْهُ...

«Во имя сострадательного и милостивого бога. Это есть начало истории составителя этой новосозданной книги и, как сказано на страницах книги, в связи с поколением пророка, истории рода и предков Абд-аль-Разака—сына Наджафкули Дунбули—пусть всемогущий бог простит его» (стр. 2246).

¹² См. И. П. Петрушевский. Очерки по истории феод. отнош. в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв. Л., 1949, стр. 43.

¹³ См. А. Д. Папазян. Историкографическая ценность персидских рукописей Гос. Матенадарана. «Материалы I Всесоюзной конференции востоковедов», Ташкент, 1958.

Эту историю Абд-аль-Раззак начинает кратким описанием принятия одним из крупных племен курдов-курманджий, Дунбули, мусульманской веры шиитского толка в начальный период Сефевидского Ирана¹⁴. Затем автор переходит к истории своего прадеда—Салман-халифе второго, подчеркивая его роль и отвагу в боях с турками в начале XVII в. (стр. 226а—226б). Далее он говорит о своем деде, Шахбазхане, властвовавшем в Хое до 1724 г. и убитом во время осады и разрушения этого города турками (стр. 226б—227а). Вслед за тем Абд-аль-Раззак переходит к изложению жизни и деятельности своего отца Наджафкули-хана, одного из крупных полководцев Надир-шаха; Наджафкули-хан участвовал во всех походах Надира, а позднее был назначен бекларбеки Тавриза (стр. 228а—237б). Особый интерес представляют страницы, посвященные изложению политических событий периода после Надира до прихода к власти Каджаров. Подробно описаны обстоятельства убийства Муртузакули-хана Надиром, затем вручение Хойского ханства его сыну Шахбаз-хану, заверение последнего в верности Ага-Мухаммад-хану, его смерть и т. д. Много места уделено также описанию возвращения из Шираза брата Абд-аль-Раззака Фазль-Алибека и в связи с этим—истории войн Наджафкули-хана с занджанским владельцем Зольфегар-ханом. Труд завершается описанием сильного землетрясения 1780 г. в Тавризе и гибели брата. Из заключительной части мы узнаем, что Абд-аль-Раззак отправился в Шираз, по-видимому, с целью распорядиться делами семьи своего брата, которому он намеревался посвятить специальную главу, озаглавленную «Въезд пишущего эти строки в Шираз, история переселения друзей, их скорби и горя, разлуки с родственниками» (стр. 249а). Однако здесь, в начале страницы 249б, наш текст кончается.

Ясно, что труд этот не мог быть завершен таким образом. После заглавия, по традициям персидской средневековой историографии, следует аллегорическое вступительное слово, за которым должен был следовать основной текст. Между тем рукопись обрывается следующим бейтом:

ببال مرغ بستم نامه سردارم سوی یارش
گواذبار است میترسم بگشابد بمقاروش

Трудно сказать, автор ли оставил свой труд незаконченным, или до нас дошла его неполная копия. Ясно одно: перед нами незавершенный текст. Но в данном случае речь не о «Тарих-е Данабиле», точнее, не только о нем. Дело в том, что

¹⁴ До этого дунбулийцы были незидами. См. «Шараф-наме», I, М., 1967, стр. 83.

بسم الله الرحمن الرحيم

باز نوبت احوال قبيله و جدار جامع ابن نوحا بدیع بنای
 بقول حاوی اوراد الفسک مجمل البیه والوصی ابن محمد علی الدین علی عبدالرزاق
 عفی الله تعالی عنده صاحب الفامعین لغة هذه التسمیه و تبتل کفتمند قبیلہ
 من الاکرام بنو امی الموصل منہ محمد بن نصر المصعبی السامعی و علی بن سید البرکات
 الخلد الدین بیان ابن طایف قبیلہ بن کندی قابل موصل و چند بن از ذمما ابن
 قوم بغداد امین کربا و اصحاب عربی برینه صدافت و دیانت موصل و اسما
 هرب در روانا عشرت فیصل و منه محمد بن وهبان الدین راب من روا البی
 حدیثا لعین کبیل بن زیاد النخعی و هو را عن امیر المؤمنین و قابل الغری محلی
 بر اسطاب صلوات الله علیه و آله و اولاده اصحاب ابن ابی عمیر الدین او مرد الحدیث
 ابو جعفر محمد بن ابی القاسم المطری قدس الله سره فی جزء الاول من کتاب ذیارة
 المصطفی لشعبه الدین فی الماراب مضمون الحدیث الثمونی الاثاب و حسن المعاشرة
 و منیا هذال کتاب انهم یحبون هذا و عن اصحاب المعاصرين و بعض القاریین من اصحاب
 الرزق الاثاب من المصنف

من اوله من الرزاق الخیر
وصل من الرزاق

ما من في قوائم الغرض و كبر في
بالجهد من الميراث و الميراث
و الغرض من الميراث

و الطالعين

Рис. 1. Первая страница «Тарих-е Данабиле».

в поисках продолжения его текста мы наткнулись на рукопись двух обширных трудов нового автора—Рустам-хана, сына Ахмад-хана Дунбули. Их текст составляет основную часть названной рукописи и занимает страницы 16—2206.

Описание этой рукописи нами дано в специальной статье о ней¹⁵. Не останавливаясь поэтому на деталях, отметим, что оба труда Дунбули переписаны по заказу автора в Мадраसे Мирза Салеха в Тегеране учеником этого мадрасе Али-Акбаром Тафреши в 1266 г. хиджры (1850); текст переписан неискусным почерком насталиг с грубыми орфографическими ошибками. 173 листа начала рукописи занимает историко-догматический труд Рустам-хана «Ишарат-уль-мазахиб»—*اشارات المذاهب* («Очерки о верованиях»). На страницах 174a—178a изображены различные астрологические таблицы, а на следующей 178b дано предсказание судьбы автора книги, сделанное в начале месяца зилхиджа упомянутого 1850 г.: «Это есть копия предсказания рождения Рустам-хан ибн Ахмад-хана Дунбули, автора этой книги и дарующего ее (отдающего в вакф). Божьей волею пусть отец, сын и мать живут долгие годы, и родители да будут довольны и счастливы своими сыновьями».

На страницах 178a—2206 помещен второй, чисто догматический труд Рустам-хана, озаглавленный «Ишарат-уль-адьян»—*اشارات الاديان* («Очерки о религиях»). Страница 221a чиста, на страницах 221b, 222a помещено более обширное предсказание судьбы автора, в начале которого говорится: «Это есть копия предсказания судьбы курда-курманджи, Исабеклу, Шамсеги и Бармаки Рустам-хана ибн-Ахмад-хана Дунбули-Яхья, дарующего эту книгу. Написано в начале месяца раджаб, в понедельник, в благородном и живописном городе Хое в турецком году собаки, что соответствует 1266 г. хиджры и 1219 г. Ездигерди (1850. IV 12). А расположение звезд таково, как описано ниже. Божьей волею пусть удостоится он долгой жизни и да принесет его рождение благополучие и счастье родителям».

Страницы 222b—249b охватывают знакомый нам труд Абд-аль-Раззака ибн-Наджафкули-хан Дунбули. В свободной части страницы 249b есть стихотворные строки о предках Дунбулиев, а на страницах 250a—253b, которыми завершается рукопись, записаны путевые заметки, принадлежащие перу, вероятно, Рустам-хана.

В нескольких местах рукопись скреплена печатью Рустам-хана, в частности, в начале и конце отдельных тек-

¹⁵ Հ. Փափազյան. Քուրդ ժողովրդի պատմության մի նոր սկզբնաղբյուր. «Բանբեր Մատենադարանի», № 8, Երևան, 1967.

стов. В начале обоих трудов помещены вакуфные протоколы почти одинакового содержания о пожаловании или наследовании книги. Вот один из протоколов, записанный в начале «Ишарат-уль-мазахиба»: «Эту книгу с заглавием «Ишарат-уль-мазахиб» Рустам-хан ибн-Ахмад-хан, проводя через истинное шариатское сиге, отдал в вакф своим наследникам, с условием, чтобы она всегда оставалась у его сыновей, никому не давалась на хранение, и если кто-нибудь захочет переписать, то ее не следует выносить из дому. Книга должна остаться в доме самого образованного наследника. Благодаря господу-богу в нашей фамилии всегда были и будут образованные люди. Пусть <они> по мере своих сил продолжат <дело> и сделают язык красивым. Если кто будет возражать или станет игнорировать этим вакфом или же сотрет протокол, да удостоится он проклятия господу-бога. Я надеюсь, <наследники мои> постараются ввести в книгу нужные поправки, будут свято хранить мое завещание и поступать согласно этой грамоте. Написано в четверг 5-го числа месяца зикада 1260 г. (1850. XI 12)».

Наши сведения об авторе ограничиваются страницами 60а—62а «Ишарат-уль-мазахиб». Это—данные самого автора, согласно которым он в возрасте двух лет лишился отца и остался на попечении матери. Последняя в свою очередь отдала его в опеку некоему Хасану из Хорасана. В пятилетнем возрасте в течение 40 дней он научился читать по-персидски. В юные годы он с большим рвением читал религиозную литературу, изучая религиозно-этические вопросы.

Небезынтересны раздумья Рустам-хана в религиозных вопросах, которые под конец приводят его к выявлению социальной сущности религии, как идеологического орудия в руках государства:

در طلب مرد حق دودم اوصافشان را در کتابها دیده بودم راه مرد خدا را
 بی پایان دیدم سراسر تنگ و خطرناک در ظاهر رهبری ندیدم در کتب ادیان
 برهانی نبود که عقل قبول نماید بیا و بمن حرف (ایشان) بی اعتبار
 بنظر آمد و رفتم ندیدم باز رفتم صلاح در آن دیده که علمای ملل مختلف
 را به بیستہ اختلاف بی یادان احوال اخلاق بی معنی زناد دیدم بعضی
 بطریق میراث دست دشناخ ضعف زده طایفهٔ بعیت پی روی خاطر و بیم
 جان پای بر کن لرزان نهاده جماعتی که علمای عربان باشند برای مال
 دنیا و یلندی مرتبه تکبہ باستخوان پوسیده کرده و مردچند را پیشوای
 خود ساخته و نام دین داری بر خود بسته و اختلاف در شناختن خالق و
 ابتدای خلقت و انتهای کار بی نهایت بعضی... بهیچ اکتفا نموده منبع
 الوجود را نفی کرده بت بزرگ از نیستی ساخته بعضی نیستی را اهریمن
 گفته هستی را بزدان بعضی که دارند و بد آرند (۴) که حضرت نوربخش

عالم را که از هزاران جلوه دارد ملک طاوس گفته‌اند قومی بعداوت او را شیطان میخوانند دیدم که اول تکلیف که بر جمیع مخلوقات که شده است شناخت خداست اول بنای عداوت را بعد اوت یکدیگر بخدای یکدیگر گذاشته اند... بعداوت و ضدیت یکدیگر راهی گرفته که من راه حق را گرفته‌ام و دیگر باطل در آرایش خود و نکوهش دیگران حرف میزنند از دین‌داری اثری ندیدم در مدت قلیل یکصد و هشتاد شهر از ولایت روم و روس و ایران و همیشه و زنک و عرب گردیدم قرار دادم که علمای هر مذهب به‌بیتم دادم که حرف بگویند ایشان نمی‌رود دایم در مشاطگی خود و برهم زدن کیشی دیگران می‌باشند که تخریب کار بی‌قاعده آسان است در همین بلا مبتلا مانده‌اند ثواب یکی و گناه دیگری و حلال آن و حرام این هر دو لغو باطل بنظر آمد اول جمیع مذاهب نظر کردم حیلۀ پادشاهان دیدم...

«Искал я настоящих людей, восхваления которых встречал я лишь в книгах. Увидел я путь божьего человека бесконечным от края до края, узким и опасным и без путеводителя. В религиозных книгах не нашел я слов, убеждающих человеческую мысль и, видишь ли, их слова тоже мне показались ничего не стоящими. Потому я решил встретиться с учеными различных религий и видел большие противоречия и весьма бессмысленные нравы. Некоторые по наследству хватаются за ветвь бессилия, другие, чтобы подчиниться мысли и боясь души, стоят на зыбкой основе, а другая группа—«нагие ученые», которые ради житейских ценностей и высокого положения опираются на гнилые кости, сотворив себе вождей из нескольких мертвецов, и называют себя верующими. И вообще, велики их разногласия в вопросе о творце и творении и конце света. Некоторые же, довольствуясь тщетой, превратили в святыню истоки бытия и сделали себе идолов из ничего, а другие небытие называют Ахриманом, бытие—Язданом¹⁶.

Некоторые, <что>... имеют осветителя земли, который в каждую секунду сияет разными цветами, называют Малак-Тавусом, а другие по вражде называют их дьяволами. Видел я также, что от всех существ требуется только признание бога, однако люди свою вражду друг к другу проявляют также в отношении богов... идут по враждебному и противоположному друг другу пути и каждый твердит, что он следует по верному пути, а другой—по ложному. Восхваляют себя и порицают противника; итак, не видел я истинного верующего.

¹⁶ Как видно, речь идет о зороастризме. См. В. В. Струве. Родина Зороастризма. «Советское востоковедение», т. V, 1948.



بهارالذخیره

۱۴

Рис. 2. Первая страница «Ишарат уль-мазахиб».

В течение короткого времени я побывал в 180 городах Рума (Турции), России, Ирана, Абиссинии, Занзибара и арабских стран. Решил я встретиться с вождями всех религий. Однако увидел, что никто из них не хочет слушать ни слова. Они заняты лишь тем, что выдают себя красивыми и стараются очернить противника. И поскольку неправому делу легко помешать, все они подвержены этому бедствию. Мне показались ложными как оправдание одного, так и осуждение другого, как признание одного, так и отклонение другого; и когда я хорошо изучил корни всех религий, увидел в них коварство и ухищрение царей».

Сделав такой вывод, Рустам-хан защищает принцип приверженности к добру, зная, что «сладости жизни всегда должны перемеживаться с горечью». Он наставляет себя не быть пленником желаний и замечает, что «такие раздумья похожи на соленую воду—сколько ни пьешь, жажда все более усиливается». Далее автор пространно говорит о тщете мира и бренности жизни, сообщая в ходе этих раздумий кое-какие сведения из своей биографии: «Пусть никто не будет соучастником пишущего эти строки в его участи. Ибо сорокалетняя служба не дала мне хлеба хоть на день. Я всегда был участником походов во время войн то с турками, то русскими, с афганами, узбеками или арабами. Я служил четверем следовавшим друг за другом царям и взамен не получил ни дня покоя. И вот однажды в возмещение моей сорокалетней службы двор захватил мои наследственные мульки, и хлеб насущный, который я получал как жалование из суммы арендной платы мульков, прекратился. Итак, из 200000 отцовского наследства я не истратил ни зернышка. Но слава господу, несмотря на это, господь-бог пожаловал мне то, что люди стремятся иметь в жизни. Всю жизнь я провел вместе с честной и верной женой. Бог мне подарил хороших детей; и всех их—сыновей и дочерей—удостоил удачного брака; построил я роскошные палаты, посадил райские сады, плодов которых, однако, не видел и не отвеживал; посещал все святые места в мире и удостоился чести увидеть многих знатных людей».

Упомянутые биографические сведения и другие данные, разбросанные по рукописи, дают возможность заключить, что отцом Рустам-хана был Ахмад-хан Дунбули, правивший после Надира до 1786 г. Хоем и его окрестностями один из самых влиятельных ханов Азербайджана и глава курдского племени Дунбули. В указанном году в результате заговора соседних азербайджанских ханов Ахмад-хан вместе с братом Салман-ханом и старшим сыном был убит. Однако, говоря о своих близких предках и перечисляя сыновей Ахмад-хана,

Рустам-хан не упоминает своего имени. Согласно нашему источнику, после убийства Ахмад-хана осталось 8 его сыновей (стр. 88б), а при их перечислении автор упоминает лишь семерых: Хусейн-кули-хан, Джафар-кули-хан, Али-Мурад-хан, Кялб-Али-хан, Кязим-бек, Хаджи Шейх-Али-хан и Амир-Аслан-хан. Неясно, считает ли он восьмым убитого старшего сына—Хусейн-пашу, имя которого он лишь раз упоминает в связи с его участием в осаде Тавриза, или же здесь следует прибавить имя самого Рустам-хана? Если иметь в виду, что речь идет о сыновьях Ахмад-хана, оставшихся после его убийства, то можно думать, что восьмой—сам автор, поскольку старшего сына в это время уже не было в живых.

Если иметь в виду, что отцом Рустам-хана был Ахмад-хан, который умер, когда Рустаму было два года, окажется, он родился в 1784 г. Тот факт, что о войнах, происходивших в 1216 г. хиджры (1801—1802 гг.), Рустам-хан говорит как очевидец (стр. 92а), подтверждает тот вывод, что датой его рождения следует считать 1784—1785 гг. По другому поводу он сообщает, что с 17 лет был на военной службе и 40 лет служил четырем царям (стр. 62а). Если, таким образом, в начале века он участвовал в войнах, то во время работы над своей книгой за его плечами была сорокалетняя служба при Ага-Мухаммад-хане, Фатх-Али-шахе, Мухаммад-шахе и Наср-эд-дин-шахе.

На странице 51б рукописи Рустам-хан дает в порядке преемственности список имен последних дунбулийских глав, начиная со своих современников до Салмана-халифе, ставшего известным в начале XVI в. при шахе Исмаиле. Первое имя в этом списке вычеркнуто и вместо него вписано «сын Ахмад-хана Рустам-хан», после чего следует одно неразборчивое имя. Эта поправка, вероятно, была сделана одним из сыновей Рустам-хана, но автор «по скромности» не считал себя достойным упоминания,—список дунбулийских вождей он завершил именем сына Хусейн-кули-хана Салман-хана, который в 1842 г. вернулся из России и был назначен хакимом Хоя (стр. 91а).

Изучение обоих трудов Рустам-хана показывает его глубокий интерес к древним иранским верованиям и к религии современных ему гебров-язданпарастов. Сами названия его трудов говорят об их религиозно-догматическом содержании, вторая работа содержит довольно обширные выписки из различных источников и, в частности, из зороастрийской литературы о древнеиранских верованиях. Несомненно, этот труд как исследование, сделанное в Иране в первой половине XIX в., явление, достойное внимания, однако как исторический первоисточник, он не представляет, конечно, особого интереса.

Совершенно иной характер имеет первый, более обширный и содержательный труд. Его начальная и конечная части также посвящены истории древнеиранской религии. После предварительного перечисления, по «Шах-наме», ряда мифических царей Ирана в специальной главе «Описание религии персидских царей, которых называют также Атрхушангом, Ахушангом, Хушангом или Ахуш-Махабадом» (21а) автор пытается дать описание дозораострийских верований иранцев. Следующая глава—«Начало упоминания религии дунбулиев и персов, которых называют также иранцами» (21б). Интересно замечание автора об источниках: «Как говорит автор книги, никто не может сказать, что такой-то материал взят оттуда-то, потому что автор по одному упоминает названия всех книг» (29а). В этой главе Рустам-хан пытается доказать, что курды-дунбули долгое время сохраняли древнеиранскую религию, и это интересно в плане теорий о зороастрийской основе иезидизма, в том числе и среди них.

Эта часть труда Рустам-хана важна еще тем, что, наряду с использованием письменных источников, автор объехал центральные области Курдистана и познакомился с сохранившимися у курдов многочисленными сектами. Так, говоря о секте спасян (سپاسیان), он пишет: «Пишущий эти строки долгое время жил с ними, расспрашивал, внимательно изучал книги их вождей, читал и вникал в их тайны и внутреннюю суть», и они «имеют веру язданпарастов». *دعا التمام. آئین یزدان پرستی دارند*. Кстати, секта спасян не известна в науке. Кроме нее автор дает описание секты Ахл-е хакк,¹⁷ Бекташи, иезидов и ряда других курдских сект¹⁸.

Интересна даваемая автором история родных ему курдов-дунбули. Отмечая, что курды и после ислама долгое время сохраняли иранскую религию, Рустам-хан пытается на основе многочисленных источников доказать, что когда Муса Бармаки был назначен Мамуном правителем Сирии и Северной Месопотамии, он взял под свое покровительство курдов-иезидов и построил в горах Санджара крепость Дунбул, и что по имени этой крепости курдские племена, объединившиеся под властью Мусы Бармаки, а в дальнейшем его сыновей и их преемников, начали называться «Дунбули».

Начав с происхождения курдов-дунбули, автор перехо-

¹⁷ О ней см., например: В. Ф. Минорский, Материалы для изучения персидской секты «Люди Истины» или Али-Илахи, ч. I. Предисловие, тексты и переводы. М., 1911.

¹⁸ О них см., например: G. R. Driver, The religion et le Ruid BSOS, 1922, vol. II. pt. 2, pp. 197—213.

дит затем к описанию всех их ветвей, начиная с эпохи раннего средневековья и кончая своим временем. Согласно его данным, от дунбулиев происходят курдские племена Бармакулу, Дунбули-Яхья, Шамсеги, Исабеклу, Алямшахбеклу, Зафранлу, Эйубхани, Шахнавазбеклу, Хытырлу, Халилбеклу, Шыкаки и др.; все они до XVI—XVII вв., а некоторые—и во времена написания нашего источника были иезидами (956—96а).

Конечно, дело тут не обошлось без того, что именуют удельным патриотизмом,—как мы видели, большую часть курдов-курманджей автор считает дунбулийцами по происхождению. Но несмотря на это, Рустам-хан сообщает весьма важные сведения о различных областях Курдистана и исторической Армении. Достойны внимания, в частности, строки, посвященные описанию поселений курдов-курманджей, начиная с гор Терзин до западных пределов Азербайджана. Большое место уделил автор описанию своего родного города Хоя, که پایتخت سلاطین ارمن بوده — который был столицей Армении (56б, 68а). С особым восхищением описаны природа и богатства Санджара и Терзина, считающихся колыбелью курдов-дунбули. Так, о Терзине он пишет: «Господь-бог защитил Терзинские горы от глаз дьяволов. Пишущий эти строки обошел большую часть этих гор. Страна эта полна всеми благами мира. Немногие знают, что в этих горах есть большие города. Вершины гор покрыты вечным снегом, а на подножье зреют финики и апельсины. Горы сплошь покрыты виноградниками и тутовниками. На высотах построены укрепления. Реки многоводны, по ним ходят корабли» (стр. 56а).

В самых различных источниках Рустам-хан выискивал данные о порядке преемственности некоторых курдских династий, происшедших от дунбулиев, пытаясь уточнить даты их ханства, бекства или бекларбекства. В соответствии с этим книга подразделяется на главы, соответствующие большей частью именам отдельных правителей. Так, несколько глав последовательно названы: «О Наджаф-кули-хане, сыне Шахбаз-хана Дунбули», «Об Амир Худадад-хане, сыне Наджафкули-хана бекларбеки», «Об Амир Фатх-Али беке, сыне Амир Худадад-хана Дунбули», «О Наджафкули хане, сыне Амир-Фатх-Али бека, сыне Амир Худадад-хана» и т. п. Исторические сведения в основном изложены на фоне биографий отдельных лиц, преимущественно вождей разных курдских племен, в ходе изложения, однако, автор часто отвлекается и излагает различные вопросы, волнующие историка.

Для изложения истории до XVIII в. включительно Рустам-хан использовал несколько десятков историографических сочинений на персидском, турецком и арабском языках,

охватывающих почти 800-летнюю историю. Конечно, эта часть его труда носит компилятивный характер, но большая часть использованных источников не опубликована, а это означает, что ссылки Рустам-хана во многих случаях для нас имеют ценность первоисточника. Нельзя, кроме того, не сказать и о том, что некоторые из его источников вообще не известны в науке, например, «Генеалогическая история курдов и персов» Динвари, в которой можно видеть свидетельство не только курдского происхождения этого выдающего представителя средневековой историографии, но и формирование в его время «национального самосознания» курдов¹⁹. Из использованных источников «Ишарат уль-мазахиб», как автор говорит, «без отклонения от буквы», отметим «Ровзат-ус-сафа» Мирхонда, «Хабиб-ус-сийар» Хандамира, «Тарих-е Джаханара» Казии Ахмад Каффари, «Тарих-е Аламара-йе Аббаси» Искандара Мунши, «Низам аль-Таварих» Абу-Абдуллы Бейзави, «Джаме уль-Таварих» Абу-Саида Бейзави, «Тарих-е ансаб-е акрад ва аджам» Абу-Ханифе Динвари, «Тарих-е хафт иклим» Амми Ахмада Рази, «Шараф-наме» Шараф-хана Битлиси, «Тарих-е Алфи», а также «Тарих-е Саяк» Мухаммада ибн-Насрулла, «Джаханнума» Кятиба Челеби. Особое внимание Рустам-хан уделяет трудам Махмуд-хана ибн-Мухаммад-хана Дунбули «Тарих-е ансаб-е салатин-е акрад» и «Муасир-е салтанийе» Абд-аль-Раззака, приводя из них ценные сведения по истории XVII—XVIII вв.

Наряду с ними Рустам-хан искал материал для своего труда и в художественной литературе. Он часто ссылается на произведения Фирдоуси, Саади, Джалал эд-дина Руми, Катрана Табризи, Атгара, Баба Тахера, Хакани и других корифеев иранской классической литературы.

Часть своего труда, относящуюся к истории конца XVIII в. и первой половины XIX в., Рустам-хан пишет как очевидец. Здесь большое место уделено Ахмад-хану Дунбули и описанию происходивших при нем событий. Записаны такие подробности, которые могут пролить свет на историю Ирана докаджаровского периода. Интересно описание событий в Закавказье и Азербайджане при Кярим-хане Зенде, связанных с походом Ахмед-хана сюда. Автор сообщает о заговоре против Ахмед-хана, хотя и его объяснения весьма путаны.

Заслуживает внимания то, что Ахмад-хан поддерживал постоянную связь с курдами-курманджи, проживавшими в областях Северной Месопотамии, в частности, Санджара и Терзина.

¹⁹ Г. Б. Акопов. Критическая история проблемы происхождения курдов. Ереван, 1969, стр. 60.

Особенно много страниц посвящает Рустам-хан тем сыновьям Ахмад-хана, которые после 1805 г. перешли в Закавказье и поступили на службу в русскую армию. Первым из них был Джафар-кули-хан, получивший от русских властей ханство Шаки. В 1814 г. его примеру последовал брат Кялб Али-хан, который в 1828 г. после взятия русскими войсками Хоя на короткий срок был назначен его правителем; он участвовал в сражениях против турок и был назначен губернатором Эрзурума. Рустам-хан упоминает и других дунбулиев, находившихся на русской службе и участвовавших в военных действиях в Европе; некоторые из них были отмечены высшими правительственными наградами, а Мухаммед Таги-хан дослужился до звания генерала русской армии. Эти факты показывают, что историк, занимающийся изучением русско-курдских отношений, найдет в «Ишарат уль-мазахиб» немало интересных данных и по этому неизученному в науке вопросу.

Итак, не имея цели осветить текстологические и историко-филологические вопросы рукописи № 622, мы хотели привлечь к ней внимание курдологов как к весьма ценному источнику по истории курдского народа. Речь идет о том, что данная рукопись содержит три труда курдских авторов, один из которых—незавершенная копия 1850 г. уникального сочинения Абд-аль-Раззака Дунбули «Тарих-е Данабиле», известного специалистам лишь по заглавию. Остальные два текста—это труды нового автора Рустам-хана Дунбули, которые до сих пор не были известны иранистам-курдоведам. Несомненно, что публикация этой уникальной рукописи, снабженная надлежащим историко-филологическим введением, комментариями и индексами, дает нашим историкам-курдологам ценнейший источник по истории курдского народа и его духовной культуре.

Հ. Գ. ՓԱՓԱՉՅԱՆ

ՔՈՒՐԴ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՍԿՉԲԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա մ փ ո փ ու մ

Մատենադարանի արաբատառ ֆոնդի № 622 ձեռագիրը բովանդակում է 3 եզակի բնագրեր, որոնցից առաջինը XIX դարի առաջին կեսի հեղինակ Ահմադ խան Դանբուլիի որդի Ռուստամ խանի գրչին պատկանող «Իշարաթ-ուլմազահիր» (էջ 1բ—173բ),


իսկ երկրորդը (էջ 178ա—220բ) նույն հեղինակի «Իշարաթ-ուլ-ադյան» խորագիրը կրող և մինչ այժմ արևելագիտությանն անհայտ բնագրերն են:

Իր երկու աշխատություններն էլ Ռուստամ խան Դունբուլին նվիրել է Դունբուլի քրդերի պատմական անցյալի և նրանց հավատալիքների ուսումնասիրությանը: Առաջին աշխատության մեջ Ռուստամ խանը բազմաթիվ աղբյուրների հիման վրա շարադրում է Կուրմանջի քրդերի պատմությունը ըստ առանձին ֆեոդալական տների, վաղ ժամանակներից մինչև 19-րդ դարը: Հատուկ արժեք են ներկայացնում XVIII դարի վերջի և XIX դարի առաջին կեսի պատմությանը վերաբերող էջերը, որոնք նա շարադրել է որպես ականատես և քաղաքական կարևոր անցուղարձերի մասնակից:

Երկրորդ բնագիրը արժեքավոր է հատկապես իրանական հին հավատալիքների և «յազդանի» քրդերի մոտ դրանց վերապրուկների հանգամանակից ուսումնասիրությամբ:

Ձեռագրի վերջին էջերում գեղեցիկ նասիս գրությամբ կատարված է պարսկալեզու միջնադարյան պատմագրության վերջին ներկայացուցիչներից մեկի՝ Աբդ-ալ-Ռազակ իբն-Նաջաֆկուլի խան Դունբուլիի արևելագիտությանը միայն վերնագրով հայտնի «Թարիխ-ե-Դանաբիլե» խորագիրը կրող աշխատության 1850 թ. մի անավարտ ընդօրինակությունը, կնքված Ռուստամ խան Դունբուլիի կնիքով:

Հոգևածում փորձ է արված պարզելու Ռուստամ-խանի ինքնությունը և պատմա-բանասիրական ու տեքստաբանական ուսումնասիրության ենթարկվելով հիշյալ երկերը, ուրվագծել դրանց աղբյուրագիտական արժեքն ու նշանակությունը քրդագիտության համար:



ՕՏԱՐ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԵՐԿՐՈՒՄ
(ժԷ ԴԱՐ)

ՀԱԿՈՐ ՓԱՓԱՋՅԱՆ

Նախապես հրապարակած երկու նույնանուն հոդվածներով փորձել ենք տալ Արարատյան երկրում մասնագրական տիրակալության պարբերացումն ու ճշգրտել հաջորդաբար այնտեղ իշխած թուրքմենն ամիրների, սեֆյան բեկլար-բեկինների, ինչպես նաև օսմանյան փաշաների կարճատև նվաճումների ժամանակագրությունը¹:

Հիմք ընդունելով սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում նկատված տեղաշարժերն ու վարչա-քաղաքական շրջադարձային փոփոխությունները, 450-ամյա պատմական այդ ժամանակահատվածի հետևյալ պարբերացումն է առաջարկված.

1. Թուրքմենական ամիրության շրջան (XV դ.):

2. Վաղ Սեֆյան կամ պարսկա-օսմանյան փոփոխակի իշխանության շրջան (1501—1603):

3. Նոր Սեֆյան շրջան (1603—1724):

4. Քաղաքական նոր վայրիվերումների և կիսանկախ խանության շրջան (1724—1795):

5. Կաշարյան տիրապետության կամ սարդարության շրջան (1795—1827):

Նախորդ հոդվածներում քննության են առնված առաջին երկու շրջանների (XV—XVI դդ.) ժամանակագրության հարցերը: Ներկա հոդվածը նվիրված է հաջորդ՝ Սեֆյան, առավել կայուն և երկարատև ժամանակահատվածի (1603—1724 թթ.) պատմությանը:

XVII դ. սկզբում Արարատյան երկիրը ենթարկվեց նոր աղետների, որոնք կանխորոշեցին երկրի քաղաքական և տնտեսական կյանքի հետագա ընթացքը: Ավերիչ արշավանքներն ու բնակչության զանգվածային տեղաշարժերը շարունակվեցին մինչև 1630-ական թվականները և ավարտվեցին 1639 թ. Սեֆյան իրանի և Օսմանյան Թուրքիայի միջև կնքված հաշտությանը:

Ատրպատականի և Անդրկովկասի վերանվաճման համար 1603 թ. աշնանը Շահ Աբբաս Ա-ի ձեռնարկած արշավանքների հետևանքով նորից վերականգնվեց կրզըբաշների տիրապետությունը Արևելյան Հայաստանում: Ութ ամիս տևող պաշարումից հետո՝ 1604 թ. հունիսին, վերագրավվեց Երևանի բերդը, որը 1583 թ. սկսած գտնվում էր թուրք փաշաների ձեռքում: Բերդի գրավումից անմիջապես հետո Զուխուր-Սա'դի վիլայեթի բեկլարբեկիությունը, որին այնուհետև ենթարկվելու էր նաև Թուման-ե Նախչևանի օլթան, տրվեց մարտերում աչքի ընկած, Շահ Աբբասի հավատարիմ զորականներից Ամիր-Գունա խանին²: Նա կրզըբաշ Կաշար մեծ ցեղի Աղջա-կոյունլու օլթաղից էր,

¹ ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1960, № 7—8 և ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1973, № 6:

² Ի ս ք ա ն դ ա - բ ե կ Թ ո Ր ք ե մ ա ն, Մ ու ն շ ի, Ք ար ի խ - ե ա լ ա մ ա ռ ա - յ ն ար բ ա ս ի, Թ ե հ Ր ա ն, 1957 (պարսկ. բնագիր), հ. II, էջ 638 (այնուհետև՝ Իսքանդար Մունշի):

որ նախքան այս արշավանքը վարում էր Սեֆեհների նախկին մայրաքաղաք Ղազվինի դարուղայի պաշտոնը և հենց այստեղից էլ իր հրամանատարության տակ գտնվող ղորշինների և ղուլամների ջոկատներով միացավ դեպի Ատուրատական արշավող շահի բանակին:

Քաջ գիտակցելով սկսված արշավանքի և ծավալվող իրադարձությունների նշանակությունն իր ղինվորական և քաղաքական կարիերայի համար, Ամիր-Գունա խանն անվերապահ նվիրվածությամբ և մատուցած ծառայություններով ջանում էր վստահություն ներշնչել և ձեռք բերել շահի համակրանքը: Այդ բանին նպաստեցին Երևանի պաշարման ամիսներին, շահի հրահանգով նրա դեպի Գանձակ, Շորագյալ և Արևմտյան Հայաստանի մերձակա շրջանները կատարած կողոպտիչ արշավանքները և հատկապես ծավալած դիվանագիտական գործունեությունը, որոնց շնորհիվ քրդական Հաքթարի, Մահ-մուդի, Դունբուլի և այլ խոշոր ցեղերի աշիրաթապետները եկան Երևան և հպատակություն հայտնեցին շահին³:

Սակայն խանը բեկլարբեկիության պաշտոնը վարելու ժամանակ շունեցավ: Պատերազմական գործողությունները դեռ շարունակվում էին և սպասվում էր թուրքական զորքերի մեծ հակահարձակում: Կրճրլբաշները Երևանի գրավումից հետո կրկին ավերել էին Գանձակն ու շրջակա գավառները և ասպատակել մինչև Կարս և Զարիշատ, երբ լուր ստացվեց, որ Ջղալ-օղլի Սինան փաշան բանակ է դրել Մշո դաշտում և շարունակում է զորաժողովը Երևան արշավելու համար: Սկսվում էր կրճրլբաշների մեծ նահանջը, որի ընթացքում Ամիր-Գունա խանը Արդաբիլի Զուֆեղար խանի հետ միասին մեծ փութաջանությամբ պետք է ի կատար ածեր իր իշխանությանը հանձնված Արարատյան երկրի և Նախջևանի շրջակայքի բնակչության տեղահանման, քաղաքների ու գյուղերի ավերման, ցանքսերի ու հացահատիկի պաշարների հրկիզման մասին շահի անողոք հրամանը⁴:

Նահանջելով Կարսի կողմերից, Շահ Աբբասն իր բանակով նախ կանգ առավ Աղաղալայում, ապա արագ երթով եկավ Վաղարշապատ: Երբ նա Վաղարշապատում էր, Ջղալ-օղլու բանակն արդեն հասել էր Կարս: Ուստի, շահը հրամայեց աճապարանքով քշել տեղահանված և Արարատյան դաշտում կուտակված ժողովրդին: Անասելի տառապանքների և ծանր կորուստների զնով զաղթականների աճեղի զանգվածն անցավ Արաքսը և կրճրլբաշ զինվորների մտրակների ներքո քշվեց դեպի Իրանի խորքերը:

Սրբնթաց նահանջով Շահ Աբբասին հաջողվեց խուլյս տալ թուրքական գլխավոր ուժերի հետ ճակատամարտ տալուց, իսկ վերջիններս անցնելով ամայացած վայրերով, Արաքսի ափը հասան հյուծված և ուժասպառ վիճակում: Սինան փաշան հարկադրված էր ենթարկվել զազազած ենիչերիներին և առանց հակառակորդի հետ ուժերը շափելու, զնալ ձմեռելու վանում:

Այս ընթացքում, երբ հակառակորդ կողմերի գլխավոր ուժերը բանակ էին դրել Թավրիզում և Վանում, երկուստեք փորձեր էին արվում տիրելու Արարատյան երկրի և Նախջևանի ամրություններին: Այսպես, Առաքել Դավրիժե-

³ Ի ս ք ա ն դ ա Ր Մ ու ն շ ի, հ. II, էջ 721:

⁴ Նույն տեղում, էջ 721, տե՛ս նաև Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1896, էջ 40:

ցու վկայություններ, Սինան փաշան իր կրտսեր զորականներից Օմար աղային վանից ուղարկում է Երևան և Նախչևան, հրահանգելով պահել երկիրը և թույլ չտալ կրզըլբաշներին վերստին հաստատվելու այնտեղ: Սակայն շահն իր հերթին այնտեղ է ուղարկում Ամիր-Գունա խանին, որը, պատերազմելով Օմար աղայի դեմ, սպանում է նրան և, հաստատվելով Նախչևանում, «պահէր երկիրն որպէս և հրամայեալ էր նմա շահն»⁵:

Իսթանդար Մունշին ևս բավական մանրամասն անդրադարձել է այս ժամանակաշրջանի անցուղարձեքին: Որպես վակիենվիս (դեպքերի արձանագրող) նա միշտ եղել է շահի մերձավորների շարքում և կազմել կարևոր իրադարձությունների ժամանակագրությունը: Նրա պատմածները ոչ թե հետագա հիշողությունների, այլ տեղն ու տեղը կատարված գրառումների արդյունք են: Մունշու տվյալներով՝ 1604—1605 թթ. ձմռանը իրոք Ամիր-Գունա խանն իր զորքերով ամրացել էր Երնջակի բերդում, որտեղից նա մի քանի անգամ դուրս է գալիս ու պարտության մատնում Մուհամմադ Քաբալուին, որն, անցնելով թուրքերի կողմը, Նախչևանի վիլայեթը ստացել էր որպես սանջաք և կռիվներ էր մղում Շահ Աբբասի կողմից Նախչևանի հաքիմ նշանակված Մակսուդ-սուլթան Քանգարլուի դեմ: Այնուհետև նա հաղթական կռիվներով ստիպում է փախուստի գիմել Մուստաֆա փաշայի և Կահիր փաշայի զորքերին, որոնք վանից եկել էին Ամիր-Գունա խանին Երնջակի բերդից արտաքսելու: Նույն աղբյուրից իմանում ենք նաև, որ Մուհամմադ խան Քաբալուն, որին Սինան փաշան ամիրայության աստիճան էր շնորհել, կարողացել է Չուխուր-Սադի տարբեր մահալներից զգալի թվով կոլտղներ հավաքել և մարտեր մղել Ամիր-Գունա խանի դեմ⁶:

Երկու աղբյուրներում էլ որոշակի խոսք չկա այն մասին, թե այդ տարիներին ում ձեռքում էր գտնվում Երևանի բերդը: Պարզ է սակայն, որ ընդհարումները մեծ մասամբ տեղի են ունեցել Նախչևանի շրջակայքում և մերձարաքսյան բնակավայրերի շուրջ, իսկ Երնջակի բերդը եղել է կրզըլբաշների գլխավոր ամրությունն ու Ամիր-Գունա խանի հիմնական ռազմակայանը:

1606 թ. վերսկսվեցին պատերազմական գործողությունները: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Թավրիզից հյուսիս գտնվող Սոֆյան ավանի մոտ, որտեղ Սինան փաշան ջախջախիչ պարտություն կրեց և փախավ: Շարունակելով արշավանքը, Շահ Աբբասը 1607 թ. գրավեց Լոռու, Գեմանիսի և Թիֆլիսի բերդերը և ձեռք բերած ավարն ամբողջությամբ փոխադրեց Երևանի բերդը: Նա այստեղ թողեց հատուկ ամրաշեն զորամասեր, որոնք հիմնովին վերանորոգեցին բերդը, ամրացրին պարիսպները և մի քանի ամիս հետո գնացին Նախչևան՝ միանալու կրզըլբաշների գլխավոր բանակին⁷:

Իսթանդար Մունշին չափազանց հետաքրքիր տվյալներ է հաղորդում 1607—1610 թթ. Արարատյան երկրի վերանորոգման և վերաբնակեցման ուղղությամբ կատարվող միջոցառումների մասին: «Երբ հաղթական զինվորները ձեռնարկեցին Երևանի բերդի նորոգումը և բերդը լցրին անհրաժեշտ պաշարով ու զինամթերքով, — գրում է նա, — այդ ժամանակ Ամիր-Գունա խանին և նրա

5 Ա. Դավրիժեցի, էջ 71—72:

6 Իսթանդար Մունշի, հ. II, էջ 676—677:

7 Նույն տեղում, էջ 716—721:

հպատակներին, որոնք մինչև այդ երբեմն Երնջակում, Օրդուբադում և երբեմն էլ Նախջևանում էին լինում, կարգադրվեց գնալ և հաստատվել այնտեղ: Ապավինելով աստծո ողորմածությանը և արքայական անվախճան բարերարությանը, Ամիր-Գունա խանը գնաց բնակություն հաստատելու այդ ավերակ ու անմարդաբնակ վայրում, որտեղ շինություն ու կենդանություն հետք անգամ չէր մնացել: Իր հպատակներից և ենթակա մարդկանցից նրանց, որոնց նկատմամբ նա առավել վստահություն ուներ, տեղավորեց բերդի ներսում, իսկ մյուսներին բնակեցրեց բերդից դուրս [քաղաքում] և ավերակ գյուղատեղերում: Ազերբայջանում գտնվող տարբեր էլերից, ուլուսներից և թարաքամաներից շատերին նա համոզեց ու բերեց Երևան, Կաջարների Աղջա-կոյունլու օյմաղին և Մուսա-օղլի Բայաթ էլին, որոնք բարձրագույն հրամանի համաձայն Արաղից հատկապես եկել էին ծառայելու նրան, բոլորին էլ Երևանի ու Շարուրի հարմար վայրերում յուրզեր ու կըշլաղներ տվեց»⁸:

Մունշիի հաղորդած ավյալներից պարզ երևում է, թե որքան դաժանորեն է ի կատար ածվել բնակչության տեղահանումը: Արարատյան երկրի կենտրոնական գավառները լիովին ամայացած են եղել, հողերը մնացել են անմշակ: Խիստ հրաման է տրված եղել, որ քանի դեռ թուրքերի հետ հաշտություն չի կայացել, այդ կողմերում վար ու ցանք չկատարվի, որպեսզի հակառակորդը նոր արշավանքի դեպքում չկարողանա պաշար ձեռք բերել: Ամիր-Գունա խանը մեծ դժվարությամբ կարողացել է շահից թուլլտվություն ստանալ Երևանի բերդի շրջակայքում եղած հողերը բերդապահ զինվորների ձեռքով մշակելու համար: Ուշագրավ է այն փաստը, որ հողը մշակելու համար տեղում լծկան անասուններ չեն եղել, և զինվորները այդպիսիք հափշտակել, բերել են Արևմտյան Հայաստանի մերձակա շրջաններից⁹: Այդ նշանակում է, որ լիակատար ամայություն էր տիրում Արարատյան դաշտի երբեմնի մարդաշատ, շեն ու բարեբեր գյուղերում:

Ուշագրավ են նաև երկրի վերաբնակեցման և տնտեսության վերականգնման ուղղությամբ Ամիր-Գունա խանի ծավալած գործունեության մասին Զաքարիա Սարկավագի հաղորդած տեղեկությունները¹⁰:

Մերթնդմբեր թորթոքվող ռազմական գործողությունների արանքում և Արևմտյան Հայաստանն ասպատակելու ընթացքում Ամիր-Գունա խանը խորանում էր մինչև Վանա լճի առափնյա գավառները և մեծ թվով հայ ուսյաթների բռնի տեղահանելով, բնակեցնում էր Արարատյան երկրի ամայացած գյուղերում: Գյուղատնտեսությունը վերակենդանացնելու նպատակով նա ժամանակավոր դուրսուսթյուններ էր ստեղծում նորաբնակների համար, զբաղվելով հատկապես Արարատյան երկրի համար բացառիկ նշանակություն ունեցող ռոտզման ցանցի վերանորոգմամբ:

Երկրի արագ վերաբնակեցման և տնտեսության վերականգնման հարցով շահագրգռված էր ոչ միայն վիլայեթի բեկլարբեկին, որը մեծ բաժին ուներ հարկային եկամուտներից: Ակներև էր նաև այն իրողությունը, որ ստրատեգիական նպատակով սահմանամերձ այս կարևոր երկրամասի բռնի ամայացումով վերացվել էր կարևոր մի պատենջ և անարգել ճանապարհ բացվել

⁸ Նույն տեղում, էջ 740:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Զ ա ջ ա Ր ի ա Ս ա Ր կ ա վ ա գ, Պատմագրություն, հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 45—47:

ահեղ հակառակորդի առաջ: Այնպես որ հայության վերաբնակեցումը ոչ միայն տնտեսական, այլև պետական-քաղաքական տեսակետից խիստ կարևոր էր: Ինչպես գիտենք, հետագա տասնամյակներում և հատկապես XVIII դ. սկզբներին, թուրքական ներխուժման ժամանակ, դարձյալ հայերն էին, որ համառ դիմադրություն ցույց տվին օսմանցիներին:

1625 թ. Գյուրգի Սահակաձեի գլխավորած ապստամբության դեմ մղվող կռիվներում Ամիր-Գունա խանը մահացու վերք ստացավ և երկու ամիս անց մեռավ Երևանում: Շահ Աբբասը Չուխուր Սա'դի բեկլարբեկությունը տվեց նրա ավագ որդուն՝ Թահմասպկուլի խանին:

Նույն աղբյուրները հաստատում են, որ Թահմասպկուլի խանի օրոք ևս Արարատյան երկիրը հետևողականորեն շարունակվում էր վերաբնակեցվել Արևմտյան Հայաստանի բռնի տեղահանված հայ բնակչությանը¹¹:

Թահմասպկուլի խանի բեկլարբեկությունը տևեց 10 տարի և ընդհատվեց 1635 թ. ամռանը՝ Սուլթան Մուրատի կողմից Երևանի բերդի գրավումով: Բերդի պաշարումը տևեց ընդամենը 7 օր, որից հետո խանն անօգուտ համարելով հետագա դիմադրությունը, բերդի բանալիներն ուղարկեց Սուլթան Մուրատին: Իսքանդար Մունշին և Զաքարիա Սարկավազը միաբերան վկայում են, որ բերդի շուտափույթ անկմանը նպաստել է խանի վաթիլ Մուրադ-բեկի և այլ մերձավորների դավաճանությունը¹²:

Այս դեպքերից հետո Թահմասպկուլի խանն այլևս չէր կարող ներկայանալ շահին: Նա քաղաքական ապաստան խնդրեց օսմանցիներից և կալվածներ ստանալով Կ. Պոլսի արվարձան Սկյուտարում, տեղափոխվեց Թուրքիա:

Հաջորդ տարվա ապրիլի սկզբին, շուրջ 3,5 ամսյա պաշարումից հետո, Երևանի բերդը վերագրավվեց Շահ Սաֆիի կողմից: Թուրքերը ծանր կորուստների գնով դիմադրեցին մինչև վերջ: Մեծ թվով բարձրաստիճան զինվորականներ գերի վերցվեցին և ուղարկվեցին Սպահան: Ավերված բերդը հիմնովի վերանորոգելուց հետո շահը Չուխուր Սա'դի բեկլարբեկությունը տվեց Ֆարսի վիլայեթի Լառ քաղաքի հաքիմ Քյալբ-Ալի խանին, որը ակտիվ մասնակցություն էր ունեցել բերդի գրավման համար մղված մարտերում¹³:

Թուրք-իրանական շուրջ 3,5 տասնամյակ (1603—1639) տևող այս պատերազմն ավարտվեց 1639 թ.՝ Կ. Պոլսում կնքված հաշտությանը, որով Արաբական Իրաքն անցնում էր Թուրքիային, իսկ Անդրկովկասի և հատկապես Արևելյան Հայաստանի սահմանները մնում էին անփոփոխ: Այսպիսով, Արարատյան երկիրը, որի բնակչության մեջ, ինչպես տեսանք, սկսած 1603 թ. զգալի տեղաշարժեր էին տեղի ունեցել, նորից բավական երկար ժամանակով (շուրջ 80 տարի) մնում էր կրքըլբաշների տիրապետության տակ:

Ի տարբերություն Սեֆեհիների պետության այլ բեկլարբեկությունների, որոնք կենտրոնական իշխանության թուլության հետևանքով մեծ մասամբ վերածվել էին ժառանգական ֆեոդալական տիրույթի¹⁴, Չուխուր Սա'դում բեկլարբեկության պաշտոնը Կաշար ցեղի սեփականությունը շարունակում էր Դեռևս

¹¹ «Զեյլ-ե Թարիխ-ե ալամարա-յե արբասի», Թեհրան, 1938, էջ 79 (պարսկ. բնագիր): Այսուհետև՝ ԶԹԱԱ:

¹² Նույն տեղում, էջ 169, Զաքարիա Սարկավազ, 5. II, էջ 4—6:

¹³ Ա. Դավրիժեցի, էջ 642, հմտ. ԶԹԱԱ, էջ 182:

¹⁴ И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Л., 1949, стр. 122—127.

Շահ Աբբաս Ա-ի ժամանակներից որդեգրվեց մի քաղաքականություն, ըստ որի ծայրամասային բեկլարբեկիները նշանակվում էին ոչ թե կրզլբաշ ցեղերի տոհմիկ առաջնորդներից, այլ շահի արքունի գվարդիայի զինվորականությունը՝ «դուլամների», շարքերից, որոնք, չնայած իրենց ոչ տոհմիկ ծագմանը, արժանանում էին «խան» տիտղոսին և զբաղեցնում բեկլարբեկիության բարձր պաշտոնը: Զգտելով ստեղծել հզոր կենտրոնածիզ պետություն, Շահ Աբբաս Ա-ն վարում էր քոչվորության ռազմա-քաղաքական հեղինակությունը նսեմացնելու որոշակի քաղաքականություն: Ստեղծված նոր տիպի կադրային բանակը հիմնականում կազմված էր կենտրոնական Իրանի ծագումով պարսիկ ազնվականության ներկայացուցիչներից: Այդ նոր զինվորականությունը հակադրվում էր ռազմա-ֆեոդալական բարձրաստիճան զինվորականությանը, իսկ հաճախ նրանց միջոցով ճնշվում էր առանձին քոչվոր ֆեոդալների որևէ անջատողական շարժում: Այս քաղաքականության շեշտված արտահայտություններից էր նաև այն իրողությունը, որ սահմանամերձ մարզերն ու բեկլարբեկիությունները չէին վստահվում անվանի և տոհմիկ կրզլբաշներին: Զուխուր Սա՛դի բեկլարբեկիությունը այս տեսակետից խիստ բնորոշ օրինակներից է:

1604—1639 թթ. երկուստեք ձեռնարկվող արշավանքների շրջանում էր միայն, որ Երևանի բեկլարբեկիությունը ժառանգաբար գտնվում էր Աղշակոյունու-կաշար ցեղից Ամիր-Գունա խանի և նրա որդու՝ Թահմասպուլի խանի ձեռքում: Իսկ այնուհետև, մինչև հաջորդ դարի 20-ական թվականները, երբ Անդրկովկասը վերանվաճվեց օսմանցիների կողմից, իրար հաջորդած 17 խաներից և տեղապահներից միայն երկուսն էին հեռավոր կերպով առնչվում Ամիր-Գունա խանի ընտանիքին:

Այսպես, 1636 թ. Երևանի վերագրավումից հետո, ինչպես տեսանք, Զուխուր-Սա՛դի բեկլարբեկի նշանակվեց լառի հաքիմ Քյալբ-Ալի խանը, որն իշխեց ընդամենը 3 տարի (1636—1639): Նրա մահից հետո խան նշանակվեց Ջաղաթա (Քյոթուզ) Մուհամմադուլի խանը, որը գործուն մասնակցություն էր ունեցել նույն թվականին Կ. Պոլսում կնքված հաշտության պայմանագրի մշակմանը¹⁵: Սկսած 1647 թ. Զուխուր-Սա՛դի բեկլարբեկիությունը գտնվում էր ծագումով վրացի Քելխոսրով խանի ձեռքում¹⁶: Սա հազիվ 5 տարի մնաց Երևանում և 1652 թ. Կաջարների և Երևանի քալանթար Ղարաղուբաթի ու այլոց խարդավանքների հետևանքով, Շահ Աբբաս Բ-ի հրամանով հեռացվեց պաշտոնից և նրա փոխարեն խան նշանակվեց շահի ղուլամներից Մուհամմադուլի խանը¹⁷:

Շուտով Մուհամմադուլի խանը ևս ամբաստանվեց դիվանական հարկերի դիմաց գանձված գումարների յուրացման, շարաշահունների և այլ հանցագործությունների մեջ: Նրան ներկայացված մեղադրանքների շարքում կարևոր տեղ էին գրավում էջմիածնի վանքի և հայ հոգևորականության (հատկապես Փրիլպոս կաթողիկոսի և Հովհաննավանքի Հովհաննես եպիսկոպոսի)

¹⁵ Ջ ա ք ա թ ի ա Ս ա Ր կ ա վ ա գ, հ. II, էջ 29, ՋԹԱԱ, էջ 246:

¹⁶ «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», I, Հրովարտական, պրակ II, կազմեց Հ. Գ. Փ ա փ ա զ յ ա ն, Երևան, 1959, վավ. 34 (այնուհետև՝ Հրովարտական II):

¹⁷ Ջ ա ք ա թ ի ա Ս ա Ր կ ա վ ա գ, հ. II, էջ 41, հմմտ. Ջ ա ք ա թ ի ա Ա գ ու լ է ց ի, Օրագրություն, Երևան, 1938, էջ 41:

նկատմամբ դրսևորած շահատակություններն ու անհանդուրժողական վերաբերմունքը: Շահ Աբբաս Բ-ն, որը հայտնի նկատառումներով հովանավորում էր էջմիածնի կղերին, Ազերբայջանի վեզիր Միրզա Իբրահիմին հրահանգեց անմիջապես ձերբակալել Մուհամմադկուլի խանին և բանտարկել Կահկահա բերդում, իսկ Ջուխուր-Սադի բեկլարբեկությունը 1656 թ. տվեց իր ղուլբերից մեկ ուրիշին՝ մեծահարուստ Նաջաֆկուլի խանին¹⁸: Սա վարչական ընդունակություններով օժտված մարդ չէր և այդ պաշտոնը ձեռք էր բերել միայն շնորհիվ այն բանի, որ նրան շահը սիրում ու վստահում էր:

Նաջաֆկուլի խանը Երևանում մնաց 7 տարի: Նա ցոփ կյանք էր վարում և անխնա կողոպտում էր բնակչությանը, դիզելով մեծ հարստություն: Տարված լինելով միայն հարստություն կուտակելով ու աշխարհիկ վայելքներով, կարճ ժամանակում նա խորը հակակրանք ու դժգոհություն էր ստեղծել իր շուրջ: 1663 թ. տեղի ունեցավ մի դեպք, որը լիովին խախտեց նրա առանց այն էլ վարկաբեկված հեղինակությունը: Երբ խանն ընտանիքով գտնվում էր Ապարանի ամառանոցում, հանկարծ լուր է տարածվում, թե Կարսի կողմերից թուրքական զինված ջոկատներն անցել են սահմանը և գալիս են դեպի Ապարանի ամառանոցը: Երբ սկսվում է խուճապահար փախուստը, խանի խոհարարը թափում է եփած բրինձը և զատարկ կաթսան շալկած փախչում է խանի ետևից: Այս դեպքից հետո ժողովուրդը խանին տվեց «փիլովթյոքան» (փլավ թափող) մականունը: Ուրիշ մեկին շահը չէր ների այս խայտառակությունը: Սակայն իր բարեկամ Նաջաֆկուլի խանին ներեց և Շամսխու բեկլարբեկությունը տվեց նրան, որպեսզի սահմանից հեռու հանգիստ կարողանա «ուտել և վայելել» իրեն շնորհված երկիրը¹⁹:

Հատկանշական է Մուհամմադ-Քահիր Վահիդի վկայությունն այն մասին, որ Շիրվանի նախկին բեկլարբեկի Մուհամմադի խանը պաշտոնից հեռացվել, կալանքի ենթարկվել և ունեցվածքը հարբունիս էր գրավվել բնակչության անողոք հարստահարության ու կողոպուտի մեջ մեղադրվելով: Եվ ահա նրա փոխարեն խան էր նշանակվում նույն հատկանիշներով հռչակված Նաջաֆկուլի խանը²⁰:

Այս դեպքերից հետո՝ 1663 թ., Երևանի բեկլարբեկությունը տրվեց Ամիր-Գունա խանի որդիներից ձերունի Աբբասկուլի խանին, որը, աղբյուրների վկայությամբ, լավ հարաբերությունների մեջ էր Հակոբ կաթողիկոս Ջուղայեցու հետ²¹: Այդ վերաբերմունքը Հակոբ կաթողիկոսը կարողացել էր ձեռք բերել այն բանից հետո միայն, երբ 7 թուման ստանալուց հետո խանը Շարիաթով հրաժարվել էր Վաղարշապատ գյուղի սեփականության նկատմամբ հայց հարուցելուց: Դա այն գյուղն էր, որի նկատմամբ վանքի սեփականատիրական իրավունքները 1620 թ. կազմված շարիաթական արձանագրությամբ ընդունել էր Ամիր-Գունա խանը²²:

¹⁸ Ձ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, հ. II, էջ 57, հմմտ. Ձ ա ք ա ր ի ա Ա գ ու լ ե ց ի, էջ 56, հմմտ. Մ ու հ ա մ մ ա դ-Ք ա հ ի ր վ ա հ ի դ, Աբբասնամե, Արաբ, 1951, էջ 204 (այսուհետև՝ «Աբբասնամե»);

¹⁹ Ձ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, հ. II, էջ 57—59; Ձ ա ք ա ր ի ա Ա գ ու լ ե ց ի, էջ 62, «Աբբասնամե», էջ 316:

²⁰ «Աբբասնամե», էջ 316:

²¹ Ձ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, հ. II, էջ 71, Ձ ա ք ա ր ի ա Ա գ ու լ ե ց ի, էջ 62:

²² Հրովարտականք, հ. II, վավ. 14:

Աբբասկուլի խանը մեռավ 1666 թ.: նրա փոխարեն խան նշանակվեց Լեզգի իշխանազուն Ալխաս-միրզան, որը ղուլամ դառնալուց հետո կոչվում էր Սաֆիկուլի խան²³: Բեկլարբեկիության 8 տարիների ընթացքում Սաֆիկուլի խանը ամենասանձարձակ կերպով կողոպտում էր Արարատյան երկրի աշխատավորությանը և կուտակած հարստությունն ու բարիքները առաքում Դաղըստան (Ավարիա): Զաքարիա Սարկավազի վկայությամբ՝ նրա ուղարկած այլևայլ բեռներից Դերբենտի խանության ռահդարները 300 թուման միայն մաքա էին գանձել²⁴:

Այս խանի և էջմիածնի կաթողիկոս Հակոբ Զուղայեցու միջև լուրջ տարածայնություններ առաջացան: Խանը ցանկանում էր յուրացնել կամ շնչին գումարով ձեռք բերել կաթողիկոսի ջանքերով կառուցված էջմիածնի մեծ լիճը, որը խոշոր եկամտի աղբյուր էր: Հակասությունները դնալով ավելի ու ավելի էին սրվում: Այս ընթացքում Հակոբ կաթողիկոսին հաջողվում է գաղտնի փախչել, գնալ Սպահան և այդ մասին զեկուցել Շահ Սուլեյմանին: Շահն Ազերբայջանի վեզիր Միրզա Իբրահիմին անմիջապես կարգադրում է Սպահանից գործուղված Սարուխան բեկի հետ միասին գնալ ու ձերբակալել Սաֆիկուլի խանին և բռնագրավել նրա ողջ ունեցվածքը (400 ուղտաբեռ, 30.000 թուման ընդհանուր արժողությամբ)²⁵:

1674 թ. հուլիսից մինչև 1675 թ. հոկտեմբերը վերոհիշյալ Սարուխան բեկը մնաց Երևանում՝ որպես ժամանակավոր տեղապահ: Իսկ 1675 թ. հոկտեմբերի 15-ին Շահ Սուլեյմանը Չուխուր Սադի բեկլարբեկիությունը տվեց Ազերբայջանի (Թավրիզի) նախկին բեկլարբեկի Ռուստամ խան սիփահասալարի որդուն՝ Սաֆիկուլի բեկին, որն իր որդի Ռուստամ-բեկի հետ միասին Ղազվիներից եկավ Երևան և ստանձնեց նոր պաշտոնը²⁶:

Մեծ տարածայնություններ և խորը հակասություններ առաջացան այս վերջին Սաֆիկուլի խանի և Երևանի հայ ու աղբբեջանցի բնակչության միջև: Հասարակության բոլոր խավերի վրդովմունքի առիթ հանդիսացավ խանի բացահայտ հովանավորությունը գողերին և հափշտակիչներին, ինչպես նաև անառակությունը քաջալիրող վարքագիծը: Բացի այդ, հայ բնակչության դեմ սանձազերծած հալածանքները մեծ հուզումներ առաջացրին համաքաղաքացի աղբբեջանցի բնակչության մեջ: Դա վերածվեց զանգվածային ապստամբություն: Ապստամբները, որոնք իրենց անվանել էին «ղարափաշաներ» (սևասրունք), Ֆաթհ-Ալի բեկի զլխավորությամբ ներխուժեցին բերդ, տնային կալանքի ենթարկեցին խանին, կնքեցին նրա ունեցվածքը և հատուկ պատվիրակություն ուղարկեցին Սպահան՝ զեկուցելու շահին²⁷:

Սկզբնաղբբերում առկա որոշ տվյալներ թույլ են տալիս ենթադրելու, որ աղբբեջանցի բնակչության ստորին խավերից սկսված այս շարժումը փորձել են օգտագործել դեռևս Ամիր-Գունա խանի ժամանակներից Երևանում

23 Զաքարիա Սարկավազ, հ. II, էջ 76, Զաքարիա Ազուլեցի, էջ 68:

24 Զաքարիա Սարկավազ, հ. II, էջ 82:

25 Զաքարիա Սարկավազ, հ. II, էջ 76—83, Զաքարիա Ազուլեցի, էջ 121—122, հմտ. Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. I ք, վավ. 162:

26 Զաքարիա Սարկավազ, հ. II, էջ 89, Զաքարիա Ազուլեցի, էջ 121—122:

27 Այս ուշադրով շարժման մանրամասն նկարագրությունը տալիս է Զաքարիա Սարկավազը (հ. II, էջ 102—103), հմտ. Զաքարիա Ազուլեցի, էջ 135—137:

հաստատված Կաջար ցեղի աղաները, որոնք ձգտում էին օգտագործել ինչպես հայ, այնպես էլ ադրբեջանցի աշխատավորության մեջ առաջացած դժգոհությունները՝ վերստին իշխող դիրք գրավելու Արարատյան երկրում: Հօգուտ այս ենթադրությունն է խոստում թեկուզ այն փաստը, որ երբ երկար քննություններից հետո՝ 1679 թ. հունվարի 26-ին, Շահ Սուլեյմանը Երևանի բեկլարբեկիությունը տվեց ծագումով վրացի Զալ խանին, միաժամանակ նրան հրահանգեց Երևան հասնելուն պես ձերբակալել և Սպահան ուղարկել Կաջար յուզբաշի Հիմմաթ-բեկին և նրա որդիներ Իսա խանին, Զաման խանին, Սալահ խանին և Կասրմ խանին, որպես խնդրո առարկա «խոսվությունների» գլխավոր կազմակերպիչների: Կաջարների կողմից Երևանի խանությունը վերստին իրենց ձեռքը ձգելու միտումների մասին է խոստում նաև այն փաստը, որ երբ վեդի գետի մոտ խանի կողմնակիցների և ապստամբների միջև տեղի ունեցած ընդհարումների ժամանակ վերջիններիս մեջ առաջացած երկպառակությունների հետևանքով Ֆաթհ-Ալի բեկը ձերբակալվում է, նրա կողմնակիցներից շատերը, որոնք Կաջարներ էին, փախչում են դեպի Գանձակ, որտեղ իշխում էին Զիադուլու-Կաջար ցեղի ամիրները²⁸:

Սակայն XVII դ. Արարատյան երկրում ստեղծված յուրահատուկ պայմանները նպաստավոր չէին այնտեղ հաստատված կըզըլբաշ ցեղերի իշխանական ձգտումների համար: Ինչպես տեսանք, տեղի ունեցած նոր տեղաշարժերից հետո կրկին հայ ազգաբնակչությունը այնտեղ մեծամասնություն էր կազմում: Իսկ ադրբեջանական հողագործ գյուղացիությունը իր սոցիալական դրությունը և դասակարգային շահերով առավել կապված էր երկրագործ հայ ռայաթի, քան դավանակից, սակայն իր արտոնյալ վիճակով ավելի խորթ իլաթի (քոչվորություն) հետ: Ուստի իլաթը, հատկապես Շահ Աբբաս Ա-ի ռեֆորմներից հետո, Արարատյան երկրում, որտեղ նա համեմատած հարևան մյուս նահանգների հետ մեծ թիվ չէր կազմում, այս կամ այն քոչվոր ֆեոդալի իշխանության ամրապնդման համար չէր կարող ռազմական հենարան ծառայել:

Էջմիածնի՝ որպես համազգային հոգևոր իշխանության կենտրոնի, հետըզհետև հզորացումը ևս կարևոր նշանակություն ուներ և մեծ էր նրա դերը նաև երկրի քաղաքական կյանքում: Վերահաստատելով և օրինականացնելով իր իրավունքները, էջմիածնի ամենայն հայոց կաթողիկոսությունը, սկսած XVII դ. 30-ական թվականներից և հատկապես Փիլիպոս Ազրակեցու (1633—1655) և Հակոբ Զուղայեցու (1655—1680) կաթողիկոսության շրջանում մեծ հեղինակություն և քաղաքական կշիռ էր ձեռք բերել և, ինչպես տեսանք, երբեմն նույնիսկ կարողանում էր որոշիչ դեր խաղալ խաների նշանակման ու հեռացման խնդրում:

1650 թ. ապրիլին Փիլիպոս կաթողիկոսը Շահ Աբբաս Բ-ից ստացավ հատուկ հրովարտակ, որին կցված էր նաև շիա մահմեդականների կրոնական բարձրագույն ատյանի՝ Դիվան-ալ-սադարաթի վճիռը (ֆեթվան), ըստ որի

²⁸ Զ ա ք ա ր ի ա Ա գ ու լ ե ց ի, էջ 135: Ուշադրության արժանի է նույն աղբյուրի հաղորդած մի այլ տեղեկություն, ըստ որի Զալ խանի օրոք իրագործված առաջին մահապատիժը 1679 թ. մարտի 21-ին Կաջար Մուրադ-բեկի սպանությունն է հղել: Երբ խանը առաջին անգամ բերդից դուրս է գալիս, անցնում Հրազդանի կամուրջն ու գնում շրջելու իր այգիները, նրա մոտ են բերում Մուրադ բեկին, որն իբր մոտակա այգիներից մեկում բռնի տիրացել էր մի կնոջ: Խանն անմիջապես զլխատել է տալիս նրան (նույն տեղում, էջ 142):

հայոց եկեղեցուն և հայ հոգևորականությանն էր վերապահվում լսել հայերի միջև տարբեր խնդիրների շուրջ ծագած վեճերն ու ընդունել համապատասխան որոշումներ²⁹։ Դա նշանակում էր, որ հայերը քաղաքացիական հարցերում կարող էին իրենք իրենց համայնքի ներսում չուլա գնալ, առանց մահմեդական շարիաթական դատական օրգանների և պետական պաշտոնեության միջամտության։ Դիվան-ալ-սադարաթի վճռի մեջ ասված է, որ, ըստ մարգարեի օրոք հաստատված օրենքի, գիմմիների միջև վեճ առաջանալու դեպքում, նրանք եթե ցանկանում են կարող են դիմել Շարի դատարանին, իսկ եթե չեն ցանկանում՝ ազատ են դիմելու «իրենց եպիսկոպոսներին և հոգևորականներին, որպեսզի վերջիններս նրանց վեճը հարթեն»։ «Ուստի որոշվեց, — ասված է այնուհետև հրովարտակում, — որ եթե քրիստոնյաներն իրար մեջ վեճ ունենան և դիմեն իրենց եպիսկոպոսներին կամ քահանաներին, ոչ ոք արգելք չհանդիսանա և նեղություն չպատճառի, իսկ եթե կողմերից մեկը մահմեդական լինի, այդ դեպքում վեճը պետք է հարթեն տեղի Շարի անդամների և մահմեդական դազիների միջոցով»³⁰։

Պատմողական սկզբնաղբյուրներն ու դիվանական վավերագրերը միաբերան վկայում են, որ թեպետ Սեֆյան շահերը, հարկատու հայ ուլաթներին հնազանդ վիճակում պահելու համար հովանավորում և պաշտպանում էին էջմիածնի կաթողիկոսներին, սակայն Երևանի խաները մեծ մասամբ, իրենց միահեծան իշխանությունն ապահովելու նպատակով, անվերջ խոչընդոտներ էին հարուցում և ձգտում էին խանզարել ու թույլ չտալ էջմիածնին՝ տնտեսապես ավելի հզորանալու։

Այսպես թե այնպես, XVII դ. 60—70-ական թվականներին էջմիածնի վանքն Արարատյան երկրի խոշորագույն կալվածատերերից մեկն էր, որն իր ձեռքում էր կենտրոնացրել նաև վիլայեթի ամենահարուստ մահալում՝ Կարբիում, առկա ոռոգման ցանցի մեծ մասը³¹։ Երբ տնտեսական այս զորեղ դիրքին զուգորդվում էր նաև հոգևոր իշխանությունն ու բնակչության մեծամասնության նկատմամբ նրան վերապահված դատական իրավունքը, ապա Երևանի խաներն ի դեմս էջմիածնի կաթողիկոսների ունեին այնպիսի ախոյաններ, որոնց հետ մեծ մասամբ տնտեսական հարցերի շուրջ ծագող վեճերն ու բախումները կարող էին նրանց համար անցանկալի հետևանքներ ունենալ։

Այս տեսակետից բնորոշ են XVII դ. վերջին երկու տասնամյակները։ Այդ 20 տարիների ընթացքում իրար հաջորդած 5 խաներից միայն Զալ խանն էր, որ իշխեց շուրջ 10 տարի, շնորհիվ այն բանի, որ, ծագումով վրացի լինելով, համեմատաբար հանդուրժողական քաղաքականություն էր վարում և լավ հարաբերությունների մեջ էր էջմիածնի հետ։

Սակայն 1689 թ., հավանաբար նորից կաջարների դրդմամբ, Զալ խանը հեռացվեց պաշտոնից, և շուրջ 2,5 տարի, որպես տեղապահ, Երևանում իշ-

²⁹ Հրովարտակներ, հ. II, վավ. 41։

³⁰ Հայ համայնքի իրավական վիճակին վերաբերող այս իրողության մասին է խոսում այն փաստը, որ Մատենադարանի կաթողիկոսական դիվանի սեփականության, ժառանգության և այլ հարցերի վերաբերյալ 1000-ից ավելի շարիաթական արձանագրությունները հիմնականում սրված են այն դեպքերում միայն, երբ կողմերից երկուսը կամ մեկն ու մեկը մահմեդական է եղել։

³¹ А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII веках, Ереван, 1972, стр. 114—151.

խում էր նախընտանի Մուհամմադ-Ռեզա խանի որդի Մուրթուզակուլի խանը³²։ Սրա օրոք նորից սաստկացան կրոնական հալածանքները։ Արգելք դրվեց գինեգործության վրա, որը Արարատյան դաշտի հայ բնակչության հիմնական զբաղմունքներից էր³³։

Մուրթուզակուլի խանը միաժամանակ մեծամեծ կաշառքներով ջանում էր ձեռք գցել Երևանի բեկլարբեկությունը։ Սակայն կարճ ժամանակի ընթացքում նա իր գրգռիչ գործունեությամբ մեծ դժգոհություն էր առաջացրել բնակչության բոլոր խավերի մեջ, որի մասին զիտեին նաև Սպահանում։

Քեև XVII դ. վերջին տասնամյակների խաների հաջորդականության վերաբերյալ Զաքարիա Սարկավազի հաղորդած տեղեկությունները կարոտ են ժամանակագրական ճշգրտման, սակայն Կարբիի Ս. Աստվածածին եկեղեցու շինությունը վերաբերող արձանագրությունը գալիս է հաստատելու, որ իրոք Մուրթուզակուլի խանի տեղապահությունը տևել է 2,5 տարի։ Արձանագրության մեջ ասված է, որ եկեղեցու կառուցումը սկսվել է «հայոց Ռձև (1691) ամին...», ի բունակալութեան երկրիս Արարատեան Զօհրայ խանին»³⁴։

Որքանով որ Զաքարիա Ազուլեցին տալիս է Զալ խանի բեկլարբեկության ճշգրիտ թվականը (1679 թ. հունվար 26), իսկ Կարբիի արձանագրության մեջ 1691 թ. հիշվում է Զոհրա խանը, ապա ճշգրտվում են նաև Մուրթուզակուլի խանի տեղապահության տարիները (1689—1691)։ Երևանի խաների ժամանակագրական ցուցակում Հ. Շահխաթունյանցը, հենվելով իր իսկ հրատարակած Կարբիի սուլյն արձանագրության վրա, Զոհրա խանին հիշում է 1691 թ. ներքո³⁵։ Սակայն նա սխալվում է նրանից հետո հիշատակելով Մուհամմադկուլի խանին՝ որպես տեղապահ 3 տարի։ Շփոթմունքն առաջացել է այն բանից, որ Զաքարիա Սարկավազը հաջորդաբար թվելով Զալ խանին հաջորդած խաների անունները, մինչև 1698 թ., մոռացության է տվել կամ ինչ-ինչ պատճառներով դուրս է թողել Զոհրա խանին, որի խանության վերաբերյալ, ինչպես տեսանք, կա վիճաբանական հավաստի վկայություն։

Նույն արձանագրությունից պարզվում է նաև, որ Զոհրա խանը ևս երկար չի իշխել Երևանում։ Արձանագրության վերջում խոսվում է այն մասին, որ եկեղեցու շինարարությունն ավարտվել է հայոց «Ռձևի» (1693) թուին, յաւուրս նույն հայրապետի (Նահապետ կաթողիկոս Եղեսացի 1691—1705—Հ. Փ.) և առաջնորդի (Հովհաննավանքի վանահայր տեր Սարգիս եպիսկոպոս—Հ. Փ), բայց ոչ նույն թագավորին և իշխանին»³⁶։ Եվ իրոք, 1663 թ.՝ Շահ Սուլեյմանի մահից հետո, Սպահանում գահ է բարձրանում Շահ Սուլեյման-Ղուանչը, որը և, ինչպես հաստատում է Զաքարիա Սարկավազը, Երևանի բեկլարբեկի է նշանակում նախկինում նույն վիլայեթի պետական հարկերի զխավոր վերակացու եղած Մուհամմադկուլի խանին³⁷։

³² Զ ա թ ա Ր ի ա Ս ա Ր կ ա վ ա զ, հ. II, էջ 128, 134։

³³ Նույն տեղում։

³⁴ Հ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի (այսուհետև՝ Հ. Շահխաթունյանց), հ. II, Վաղարշապատ, 1842, էջ 117, հմմտ. Գ. Կոստանյան, Վիճակն տարեգիր, Պետերբուրգ, 1913, էջ 197։

³⁵ Հ. Շահխաթունյանց, էջ 139։

³⁶ Նույն տեղում, էջ 117։

³⁷ Զ ա թ ա Ր ի ա Ս ա Ր կ ա վ ա զ, էջ 135։

Զաքարիա Սարկավազը դրվատանքով է խոսում այս խանի մասին, ընդգծելով հատկապես անիրավությունների սանձումը, ընդհանուր ապահովությունը և հարկային ավելի մեղմ քաղաքականությունը: Նոր խանի եռամյա տիրակալության համեմատաբար տանելի վիճակը նա բացատրում է այն հանգամանքով, որ իր նախկին պաշտոնի բերմամբ Մուհամմադկուլի խանը «գիտեր ամենայն նեղությունը և տառապանք աշխարհին և ճշդիւ կողոպտումն և բազմութիւն հարկացն», ուստի և «բարութիւն ցուցեալ ամենայնի և արար ուղղութիւն և սէր առ ռամիկ հարկատուքն... և ոչ առաքէր հարկահանս յերկիրն, զի մի նեղեսցեն զռամիկսն, այլ ինքեանք ժողովեալ առ սակաւ-սակաւ հատուցենն»³⁸:

Մուհամմադկուլի խանն իր իշխանության վերջին տարում շահի հրահանգով մասնակցում է վրաց Գեորգի թագավորի դեմ կազմակերպված պատժիչ արշավանքներին: Այս կռիվներից հետո է, որ Շահ Սուլթան-Նուսեյնը, ըստ երևույթին հաշվի առնելով Մուհամմադկուլի խանի զինվորական ծառայությունները, կանչում է նրան իր մոտ և նշանակում թուֆանկչիների (հրացանակիր զինվորների) ընդհանուր հրամանատար (թուֆանկչիբաշի): Եթե Մուհամմադկուլի խանի բեկլարբեկիությունը տևել է 3 տարի, ապա նրա ազատումը պետք է տեղի ունեցած լինի 1696 թ.:

Ինչպես երևում է, հենց այդ թվականին էլ Զուլսուր-Սադի նոր բեկլարբեկի է նշանակվում Ֆազլ-Ալի խանը, որը նույն Զաքարիա Սարկավազի վկայությամբ «էր ի թոռանց Ամիր-Գունա խանի, այր ազահ և ռշտ, կողոպտող և գերփող և կաշառող, անիրաւ ի դատաստանի և կաշառք թիրէր զգատաստանն»: Ըստ նույն աղբյուրի, սրա օրոք երկրում կատարյալ անիշխանություն էր տիրում և «էր տագնապ մեծ յաշխարհին Արարատեանն»³⁹:

Ստույգ տեղեկություններ չկան թե քանի տարի է տևել Ֆազլ-Ալի խանի բեկլարբեկիությունը: Զաքարիա Սարկավազն իր պատմությունն ավարտում է 1698 թ., նույն խանի օրոք: Հ. Շահխաթունյանցը, որ առհասարակ խաների հերթականության համար հիմք է ընդունում իր օգտագործած աղբյուրի թվականը, այս խանի անվան դիմաց նշում է 1699 թ.: Այդ նշանակում է, որ ինչ որ տեղ այդ թվականին դեռ հիշված է Ֆազլ-Ալի խանը⁴⁰: Այնուհետև, մինչև 1722 թ., որը նա սխալմամբ համարում է օսմանցիների կողմից Երեվանի գրավման թվականը, 1709 թ. հիշված են Մեհր-Ալի խանի, իսկ 1719 թ.՝ Ալլահկուլի խանի անունները⁴¹:

Խաների այս հերթականության հիմք է ծառայել հավանաբար Սիմեոն Երևանցու այն վկայությունը, որ էջմիածնի վանքը հիշրի 1121 (1709) թ. Մեհր-Ալի խանից, իսկ 1134 (1722) թ. Ալլահկուլի խանից ստացել է հրամանագրեր (թա՛լիկա), Քասախ գետի ջրի նկատմամբ վանքի սեփականատիրական իրավունքների մասին⁴²: Այժմ, սակայն, հնարավոր է մասնակիորեն ճշգրտել XVIII դ. սկզբի, մինչև 1724 թ. թուրքական նվաճումն ընկած տասնամյակների ժամանակագրությունը:

38 Նույն տեղում:

39 Նույն տեղում:

40 Հ. Շահխաթունյանց, էջ 139:

41 Նույն տեղում:

42 Սիմեոն Երևանցի, Զամբո, Վաղարշապատ, 1873, էջ 229—230:

Այսպես, անանուն մի ժամանակագրի վկայությամբ, 1705 թ. Մակվի բերդի վերանորոգումը կատարվել է «հրամանաւ շահ Հիւսէին թագաւորին և յօգնականութեամբ Երևանայ Ապրւմահմատ [Աբդու-Մուհամմադ] խանին»⁴³։ Հաշվի առնելով նույն վարքագծով նախորդ խաների կարճատև իշխանությունը, պետք է ենթադրել, որ Ֆազլ-Ալի խանը ևս երկար չի իշխել և հավանաբար դարասկզբին հեռացվել է պաշտոնից և նրան փոխարինելու է եկել Աբդու-Մուհամմադ խանը։

Ցավոք «Կաթողիկոսական դիվանում» չեն պահպանվել Սիմեոն Երևանցու վկայակոչած 1709 և 1722 թթ. հրամանագրերը։ Սակայն Քասախ գետի ջրերի օգտագործման իրավունքի մասին կան ավելի ուշ՝ 1725—1735 թթ. թուրքական տիրապետության շրջանից պահպանված վավերագրեր։ Այդ թվականներին ևս վեճեր են եղել, և էջմիածնի կաթողիկոսները հիշյալ հրամանագրերը հավանաբար ներկայացրել են թուրք փառաներին և դրանց հիման վրա ստացել նոր հրամանագրեր⁴⁴։

Պետք է կարծել, որ Սիմեոն Երևանցին սխալմամբ է առաջին հրամանագիրը վերագրել Մեհր-Ալի խանին, իսկ վերջինը՝ Ալլահկուլի խանին։ Ստույգ տեղեկություն կա, որ 1724 թ. թուրքական արշավանքների օրերին Երևանի բեկլարբեկին Մեհր-Ալի խանն էր։ Դա Երևանի հերոսական դիմադրության մանրամասն նկարագրության հեղինակ, Աբրահամ Երևանցու հավաստի վկայությունն է։ Իր «Պատմության» մեջ նա բազմիցս հիշում է Մեհր-Ալի խանին անվանելով՝ «իշխանն Երևանայ Միհրալի», պատմելով նաև, թե ինչպես նա կաթողիկոս Աստվածատուր Համադանցու միջնորդությամբ Երևանի բերդը հանձնում է Աբդուլլա-փաշային⁴⁵։

Արդ, եթե ընդունելու լինենք, որ Աբդու-Մուհամմադից հետո մինչև օսմանցիների նվաճումը Երևանում իշխել են վերոհիշյալ երկու խաները, ապա կարելի է հաստատապես ասել, որ դրանցից վերջինը եղել է Մեհր-Ալի խանը։ Ալլահկուլի խանի ինքնության և իշխանության ժամանակամիջոցի մասին ստույգ տեղեկություններ չունենք։ Այս պարագաներում հայտնի չէ նաև Մեհր-Ալիի կողմից Երևանի բեկլարբեկությունը ստանձնելու թվականը։ Գիտենք միայն, որ բերդի գրավումից հետո (1724 թ.), Աբդուլլա-փաշան «զՄիհրալին և զայլ առաջակայս խաղաղութեամբ արձակեաց՝ երթալ, ուր և կամեսցին»⁴⁶։

Այսպես ավարտվեց Սեֆյան բեկլարբեկների ավելի քան 200 ամյա տիրապետությունը Արարատյան երկրում, որի առաջին հարյուրամյակն անցավ երկարատև պատերազմների ու քաղաքական անկայուն պայմաններում, իսկ երկրորդ հարյուրամյակը սկսվեց բուռն իրադարձություններով և բնակչության զանգվածային տեղաշարժերով։

Անհրաժեշտ է նշել սակայն, որ եթե հարյուրամյակի առաջին կեսին բնորոշ էր երկրի պարբերական վերաբնակեցումը, մեծ գաղթից խուսափած և մոտակա շրջաններում ապաստանած, իսկ առավել ևս Արևմտյան Հայաստանից բռնի քշված հայ ռայթններով, ապա 50—60-ական թվականներից սկսած

⁴³ «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հ. I, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 328։

⁴⁴ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 304 և 344։

⁴⁵ Աբրահամ Երևանցի, Պատմություն պատերազմացն, Երևան, 1938, էջ 10—12, 14, 24—26։

⁴⁶ Նույն տեղում, էջ 26։

Արարատյան երկրում նկատվող սոցիալ-տնտեսական և էթնիկական նոր տեղաշարժերն իրենց բնույթով արմատապես տարբերվում էին նախորդներից և կոչված էին շրջադարձային դեր խաղալու երկրի հետագա քաղաքական կյանքում:

Կաթողիկոսական դիվանում պահպանված մի ամբողջ խումբ վավերագրեր խոսում են Արարատյան երկրում թափառող քոչվորության, մեծ գաղթի տարիներին ամայացած հայկական գյուղերում մշտական բնակություն հաստատելու բազմաթիվ փաստերի մասին: 1650 թ. էջմիածնի լիազոր-ներկայացուցիչ Թումանը Բաթինը գյուղի հայ ռայաթների անունից Բարձրագույն դիվանին ներկայացրած խնդրագրում բողոքում է քոչվոր ցեղերի կողմից վանքապատկան գյուղերի հողերը յուրացնելու և նախկին հայաբնակ գյուղերում բռնի բնակություն հաստատելու դեմ: Խնդրագրում ասված է, որ թեև բոլորին հայտնի է, որ Բաթինը գյուղը հայկական գյուղ է եղել, որտեղ նրանք իրենց եկեղեցին ունեն, սակայն ռանիծյալ խոնդկարի (թուրքաց սուլթանի)՝ տիրապետության տարիներին բնակիչները ստիպված են եղել թողնել հեռանալ: Այժմ քոչվորները (թարաքամաներ) եկել նստել են այգտեղ և հայերին թույլ չեն տալիս գալ և բնակվել իրենց գյուղում⁴⁷:

Նույնամասն մեկ ուրիշ բողոքագրում (1674 թ.) խոսվում է Վաղարշապատի մոտ գտնվող Քյուլթափա գյուղում հաստատված Հաջիկարալու կոչվող ցեղի մասին, որը բռնի օգտվում էր վանքապատկան ջրերից⁴⁸: 1704 թ. մի այլ վավերագրում ավելի մանրամասն տեղեկություններ կան Կարբիի նահիայի գյուղերում բնակություն հաստատած քոչվորական Փիրիլու, Թաթարլու և Այրումլու համայնքների մասին⁴⁹: Ինչպես Զուլսուր-Սադի վիլայեթի, այնպես նաև XVII դ. նրան ենթակա Նախչևանի օլքայում տեղի ունեցած նման դեպքերի մասին են խոսում Կաթողիկոսական դիվանում պահպանված մի շարք այլ վավերագրեր⁵⁰:

Անհրաժեշտ է նշել սակայն, որ Կաթողիկոսական դիվանում պահպանվել են միայն վանքապատկան գյուղերին վերաբերող վավերագրերը: Կասկածից դուրս է, որ նույն պրոցեսը ավելի անարգել տեղի էր ունենում նաև այլ մասնատիրական, ինչպես նաև պետական (դիվանի) կամ թիուլային գյուղերում, որոնց վերաբերյալ մեր ձեռքի տակ գրավոր տվյալներ չկան:

Հետագա տասնամյակների դիվանական և մատենագրական աղբյուրներից պարզ երևում է, որ Արարատյան երկրում քոչվորության բնավորվելու և հողագործության անցնելու պրոցեսը համատարած բնույթ է կրել: Այդ աղբյուրներում կան հիշատակություններ այն մասին, որ Երևանի խանության Կարբիի, Գրբիբուլաղի, Վեդիի, Սուրմալուի և ուրիշ մահալների բազմաթիվ գյուղերում բնակվում էին Սադլու, Ալփավութ, Այրումլու, Կազախլու (Կաջար), Աղջա-կոյունլու (Կաջար), Բայաթ, Մուհամմադխանլու, Հաջիկարալու և բազմաթիվ այլ քոչվոր ցեղերից զատված հողագործ ռայաթների բավական խոշոր համայնքներ:

47 Հրովարտական, հ. 11, վավ. 40:

48 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ր. վավ. 162:

49 Նույն տեղում, թղթ. 1ր, վավ. 214:

50 Նույն տեղում, թղթ. 2ա, վավ. 63, 69, թղթ. 2բ, վավ. 113 և այլն:

Այս երևույթը, անշուշտ, հիմնականում հետևանք էր տևական խաղաղության: Հիշյալ ցեղերը զրկված լինելով պատերազմների ժամանակ ձեռք բերվող ռազմական ավարից և ընդհանրապես սկսած Շահ Աբբաս Ա-ի ժամանակներից հետզհետե ավելի կորցնելով իրենց ռազմական նշանակությունը, այն վայրերում, որտեղ նրանք շունչին կայուն յայլաղներ և կըշլաղներ, ստիպված էին տրոհվել և առանձին գերդաստաններով ու համայնքներով հաստատվել այս կամ այն գյուղում և զբաղվել հողագործությամբ: Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միանալուն անմիջապես հաջորդած տարիների վիճակագրության մեջ պարզ երևում են նախորդ դարերում տեղի ունեցած վերոհիշյալ էթնիկական տեղաշարժերի հետևանքները⁵¹:

1725—1827 թթ. Արարատյան երկրում տեղի ունեցած վարչա-քաղաքական փոփոխությունների պատմության և օտար տիրապետության ժամանակագրության հարցերին կանդրադառնանք առանձին հոդվածով: Նշենք միայն, որ բնակչության էթնիկական կազմի այսօրինակ վերափոխությունը նպաստեց նաև քոչվոր հողատերերի դիրքերի ամրապնդմանը: XVII դ. վերջերին նրանք արդեն ձեռք էին բերել մեծ քանակությամբ մուլքային տիրույթներ և ամուր կերպով բնավորվել երկրի առավել բերքառատ շրջաններում: Հենվելով երկրում կայուն բնակչության հաստատած ցեղակից զանգվածների վրա և օգտվելով կենտրոնական զորեղ իշխանության բացակայությունից, երկարատև պայքարից հետո, 1755 թ. Կաջար ավագանուն հաջողվեց ձեռք գցել Երևանի խանությունը, որտեղ նրանք կարողացան իշխել մինչև երկրի ազատագրումը ռուսական բանակի կողմից:

ИНОЗЕМНОЕ ГОСПОДСТВО В АРАРАТСКОЙ ОБЛАСТИ (XVII век)

АКОП ПАПАЗЯН

Резюме

Анализ данных персоязычных нарративных источников и архивных документов позволяет выявить последствия длившихся десятилетиями этнических перемещений и важных административно-политических изменений, которые явились результатом бурных событий, имевших место в начале XVII в., а также уточнить хронологию политических событий и годы правления сменявших друг друга беглербеки в период наибольшей стабильности и длительности господства Сефевидского Ирана. За эти 120 лет в Араратской земле или Чухур-Са'де правили следующие ханы: Амир-гуна-хан, Каджар (1604—1625), Тахмаспули-хан, каджар (1625—1635), Кялб-Али-хан (1636—1639), Мухам-

⁵¹ И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852, стр. 599—602.

мадкули-хан-Кетуг (1639—1647), Кей-Хосров-хан, грузин, Мухаммад-кули-хан (1652—1656), Наджафкули-хан (1656—1663), Аббаскули-хан, каджар (1663—1666), Сафикули-хан-Алхас мирза (1666—1674), Сарухан-бек, наместник (1674—1675), Сафикули-хан (1675—1679), Залхан, грузин (1679—1689), Муртуза кули-хан, наместник (1689—1691), Зохра-хан (1691—1693), Мухаммадкули-хан (1693—1696), Фазл-Али-хан, каджар (1696—), Абдул-Мухаммад-хан (1765—), Аллахкули-хан (—1709), Мехр-Али-хан (—1724).

ՀԱԿՈՒ ՓԱՓԱԶՅԱՆ

ԱԿՈՒՈՒ Ս. ՀԱԿՈՒԱ ՎԱՆՔԻ ՔՅՈԹՈՒԿԸ

1973 թ. Մաշտոցի անվան Մատենադարան մուտք գործած ձեռագրերի մեջ իր ինքնատիպ բնույթով առանձնանում է 10573 համարի տակ գրանցված Ակոու Ս. Հակոբա վանքի նվիրատուությունների փոքրիկ մատյանը: Գրչագիրը բաղկացած է 204 թերթից, նյութը թուղթ է, մեծությունը 13×10 սմ., ունի կաշեպատ տախտակե կազմ, աստառը՝ կապույտ կտավից, վիճակը բավարար, տեղ-տեղ կան խոնավությունների հետքեր, մասամբ՝ ցեցակեր:

Ձեռագրի սկզբի 1ա—9ա էջերի մասը նոտր դրով գրված «յիշատակադրութիւն»-ից իմանում ենք, որ 1663—1671 թթ. Ս. Հակոբա վանքի հին եկեղեցու կաթողիկեի վերանորոգումից, ստորերկրյա ջրանցքի ու ջրամբարի կառուցումից, ինչպես նաև այլ շինարարական աշխատանքներից հետո, պատրաստվել է այս փոքրիկ մատյանը, որտեղ համառոտակի նկարագրված են շինարարական աշխատանքներն ու թվարկված նյութական միջոցներ տրամադրող նվիրատուների ու մեկենասների անունները: Այնուհետև ձեռագրի յուրաքանչյուր թերթի առաջին էջի վերին մասում խոշոր բոլորգրով գրվել է Ակոու բնակիչների, ավելի ճիշտ համայնքի անդամ յուրաքանչյուր տան կամ ծխի անունը, նրանց կողմից, նույն այդ թվականին և հետագա տարիներին վանքին կատարված և կատարվելիք նվիրատուությունների գրանցման համար:

Վանքերին ու եկեղեցիներին կատարվող նվիրատուությունների հատուկ մատյաններ ցարդ մեզ չեն հանդիպել: Ձեռագրաց ցուցակներում և ձեռագրագիտական ուսումնասիրություններում ևս այս կարգի գրչագրերի մասին հիշատակություններ չկան: Սովորաբար այդպիսի արձանագրությունները փորագրվում էին եկեղեցիների որմերին և կամ գրի էին առնվում տվյալ եկեղեցական հաստատությունում գտնվող Ավետարանների, Հայսմավուրքների և ծիսական բնույթի այլ ձեռագիր մատյանների դատարկ էջերում¹: Ձեռագրագետ-աղբյուրագետներին հայտնի է, սակայն, այս կարգի արձանագրությունների և տնտեսական գործարքների մասին գրառումների Սանահնի վանքում պահպանված հարուստ մատյանը, որն ուսումնասիրողների կողմից վկայակոչվում է «Քեթուկ Սանահնի վանուց» վերնագրով²:

1 Ձեռագիրը նախապես պատկանել է իրանահայ բանասեր Հայկ Աճեմյանին, և վերոհիշյալ թվականին, այլ ձեռագրերի հետ Մատենադարանին է նվիրել հանգուցյալի այրին՝ տիկ. Հասմիկ Աճեմյանը:

2 Այս նյութերի աղբյուրագիտական գնահատականը տրված է Լ. Խաչիկյանի «Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերեն ձեռագրերի մեջ և նրանց աղբյուրագիտական նշանակությունը» հոդվածում, տե՛ս «Քանքեր Մատենադարանի» № 5, Երևան, 1960, էջ 21—42:

3 Մատենագրան, ձեռ. № 3031: Ուսումնասիրողներից ոմանք «Տաթևի վանքի քյոթուկ» են անվանում, Մատենադարանի 6271 թվահամարը կրող և Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն

Ս. Հակոբա վանքի նվիրատվությունների մատյանը թեև անհամեմատ ափելի համեատ բովանդակություն ունի, սակայն ձեռագրագիտական տեսակետից և աղբյուրագիտական արժանիքներով այն կարող է դասվել այս կարգի հուշարձանների շարքը: Ուստի կարծում ենք իրավացի են ձեռագրի առաջին նկարագրողները, երբ մայր քարտում այն վերնագրի են «Քեթով Ս. Յակոբայ վանից Ակոուոյ»:

Պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Մասյացոտն գավառի Ակոուոի գյուղավանը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Նրա մասին առաջին անգամ հիշատակում է V դարի պատմիչ Ղազար Փարպեցին⁴, Հետագա մատենագիրների երկերում, ձեռագրաց հիշատակարաններում և այլ աղբյուրներում եղած տեղեկությունները գալիս են վկայելու, որ Մասսի լանջին թառած այս հին ավանը, կործար տալով ժամանակի արհավիրքներին ու աղետներին, շարունակել է գոյատևել մինչև 1840 թ. հուլիսի 2-ը, երբ հիմնովին կործանվեց ու բնակիչներով հանդերձ թաղվեց, մնալով լավայախառն տիղմի ու Մասսի հրաբխային ցնցումներից պոկված լեռնաբեկորների փլվածքի տակ:

«Ակոուո» տեղանվան ժողովրդական ստուգաբանությունը՝ «արկուոի», ըստ որի իբր նույր իջնելով Արարատից առաջին անգամ այնտեղ է տնկել խաղողի որթը, ավելի լայն տարածում ստացավ ու յիջնադարում: Այդ շրջանի աղբյուրներում և ձեռագրաց հիշատակարաններում մեծ մասամբ գյուղն անվանվում է «Արկուոի»:

Մատենագրական աղբյուրների և XVII—XIX դդ. ճանապարհորդների տվյալներով Ղ. Ալիշանն ու Ս. Էփրեկյանը տալիս են գյուղի աշխարհագրական և տեղագրական նկարագրը, ինչպես նաև Ս. Հակոբա վանքի լեզենդախառն, կցկտուր պատմությունը, ավարտելով այն երկրաշարժի և գյուղի կործանման նկարագրությամբ⁵:

Կործանմանը անմիջապես նախորդող տասնամյակին վերաբերող ամենահավաստի տեղեկությունները պահպանված են Ֆ. Պարրոտի «Ուղևորություն դեպի Արարատ» ուղեգրական գեկուցագրի⁶ և Ի. Շոպենի 1852 թ. լույս տեսած Հայկական մարզի վիճակագրական ուսումնասիրության մեջ⁷:

Ս. Հակոբա վանքի քյոթուկի տվյալները, ինչպես ասվեց, հիմնականում վերաբերում են XVII դ. 60—70-ական թվականներին: Թեև նվիրատվությունների մի մասին վերաբերող, տարբեր անձնավորությունների ձեռքով կատարված արձանագրությունները, XVIII դարից են (23բ էջի արձանագրությունը ունի հայոց ՌՃԾԳ (1704), իսկ 8բ էջինը ՌՃԾԶ (1707) թվականները):

նահանգին Սիսական»-ի XIV դ. ընդօրինակությունը բովանդակող ձեռագիրը, որի վերջին 337բ—383բ էջերում կան Տաթևի վանքապատկան գյուղերից ստացվող եկամուտների և այլ կալվածների ու տնտեսական հարցերի մասին կատարված արժեքավոր հիշատակագրություններ ու արձանագրություններ:

⁴ Ղազարայ Փարպեցու Պատմութիւն հայոց, աշխ. Գ. Տեր-Մկրտչյան և Սուր. Մախաչյան, Տիգրիս, 1904, էջ 123, 125:

⁵ Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 459, 470—474, Ս. Էփրեկյան, Բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1902, հ. 1, էջ 81—87:

⁶ Խ. Արավան, Երկրի լիակատար ժողովածու, Երևան, 1956, հ. 7, էջ 221—229:

⁷ Ի. Շոպեն, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852, стр. 490, 563—566, 1803—1806 (այսուհետև՝ Шопен):

Ձեռագրի գրչության ժամանակը համընկնում է Արևելյան Հայաստանի խաղաղ և համեմատաբար բարգավաճ տարիներին, երբ առկա էին տնտեսական կյանքի զարգացման քիչ թե շատ տանելի պայմաններ: Այս շրջանում մեծ թվով վանքեր ու եկեղեցիներ վերանորոգվեցին: Հատկանշական է, որ շատ եկեղեցիներ⁸ էջմիածնի մայր տաճարի, Հոփսիսմեի, Մուղնու, Դարաշամբի, Թաղեի, և ինչպես վերը նշվեց, նաև Ակոռու Ս. Հակոբա վանքի կաթողիկենները (զանգակատներ) այս տարիներին են կառուցվել կամ վերանորոգվել: Դարասկզբի մեծ արհավիրքներից բավական ժամանակ էր անցել, գյուղերն ու ավանները մասամբ վերաշինվել էին: Նվիրատվական արձանագրությունների տվյալներով, XVII դարի 60-ական թվականներին Ակոռու բնակչությունը շուրջ 250 ծուխ է եղել, այսինքն միջին հաշվով 1250—1500 շունչ⁹: Ամենայն հավանականությամբ մեկուսի և մասամբ անմատչելի վայրում գտնվելով Շահ-Աբբասի մեծ գաղթի ժամանակ տեղահանման շի ենթարկվել: Առաքել Դավրիժեցին տեղահանման ենթարկված վայրերի մեջ Սուրմալին ու Մասյացոտնը շի հիշում:

Անհավանական չէ, որ Արաքսի ձախափնյա շրջանի գյուղերից և այլ վայրերից, ովքեր որ կարողացել են դուրս արժնել գաղթի հոսանքից, ապաստան են գտել Ակոռու: Այսպես օրինակ նվիրատուների մեջ բազմիցս հիշվող փառակեցիները պետք է որ եկած լինեն նախիջևանի Գողթան գավառի Փառակա գյուղից: Հիշված են նաև այլ դրսեցիներ, ինչպես օրինակ «չուղայեցի Եզնաբախը», «ղաստակցի Վելիճանը», «ղափանցի մահդասի Ասյանը», «Ընդմեցունց Պետրոսը» և այլն: Քրթովի տվյալները թույլ են տալիս ասելու, որ XVII դ. վերջերին Ակոռու բնակչությունը անհամեմատ ավելի շատ է եղել քան XIX դ. 30-ական թվականներին, երբ Ի. Շոպենի վկայությամբ, գյուղավանի բնակչության ընդհանուր թիվը 1358 շունչ էր, որից 342-ը նորաբնակներ էին, գաղթած Արևմտյան Հայաստանի մերձակա շրջաններից⁹:

Զաքարիա Ագուլեցու վկայությամբ երթեկեկությունը դեպի Ակոռու կատարվում էր խոր-Վիրապի վրայով: Այդ հաստատում են նաև Ֆ. Պարրոտն ու մյուս ճանապարհորդները: Այս դժվարին վերելքը Զաքարիա Ագուլեցին կատարել է դեպի Ս. Հակոբա վանքը ուխտագնացության նպատակով, 1672 թ. «Ամայ գնալ գալն ԺԳ (13) աղաջ կայ. դժվար ճանապարհ է»,— գրում է նա¹⁰: Այդ նշանակում է, որ խոր-Վիրապից մինչև Ակոռու ձգվող ճանապարհի երկարությունը մոտ 36 կիլոմետր էր:

Զաքարիա Սարկավազը, պատմելով 1679 թ. Երևանի երկրաշարժի մասին, ավելացնում է, որ Ազերբայջանի վեզիր Միրզա-Իբրահիմը գալով Երևան, իր մոտ է կանչում շրջակա խաներին և սուլթաններին, հանձնարարելով նրանց վերականգնել բերրը, Հրազդանի կամուրջը և այլ շինություններ և կարգի բերել քաղաքի ջրամատակարարումն ու ռոտզման ցանցը: Հրավիրվածների մեջ եղել է նաև Ակոռուի սուլթանը¹¹: Այս փաստը խոսում է հիշյալ թվականներին Ակոռու վարչական նշանակության մասին: Ըստ Շոպենի 1828 թ. գրավումից

⁸ Եթե հաշվի առնենք, որ ձեռագրից բավական թերթեր կան պոկված, որոնց վրա նույնպես կարող էր այլ բնակիչների անուններ գրանցված լինել, ապա թվում է, թե բնակչության թիվը 1500 շնչից ավելին պետք է եղած լինի:

⁹ Մոսեո, էջ 563—566:

¹⁰ Զաքարիա Ագուլեցի, Օրագրություն, Երևան, 1938, էջ 109:

¹¹ Զաքարիա Սարկավազ, Պատմագրություն, Վաղարշապատ, 1870, հ. 2, էջ 105:

առաջ Ակոռին պետական (դիվանի) սեփականություն է եղել: Նա տալիս է նաև գյուղական համայնքի կողմից պետությունը հատուցվող հացահատիկի քանակը¹², Պետք է ենթադրել, որ XVII դ. 70-ական թվականներին գյուղից ստացվող մալոջհաթը և այլ հարկեր տրված է եղել այնտեղ նստող սուլթանին որպես թիուլ: XVII դարում առանձին շրջանների հաքիմ նշանակված սուլթանների ռոճիկները մեծ մասամբ վճարվում էին ի հաշիվ նրանց պաշտոնավայրի բնակչությունից գանձվող հարկերի: Այդպես էր օրինակ Կաղզվանի հաքիմ Նաֆաս-սուլթան Սաղուն, որ համարվում էր տեղի թիուլդարը¹³:

Քլոթուկը ուշագրավ տեղեկություններ է պարունակում գյուղի ջրամատակարարման և ռոտզման սիստեմի մասին: Պարզվում է, որ ռոտզումը հիմնականում կատարվել է մեծ ամբարտակի (բանդ) շնորհիվ ստեղծված ջրամբարի (գօլ) միջոցով, որտեղ կուտակվել են ձնհալից հոսող ջրերը: Այդ ջրերով ռոտզվել են արտերն (ջրբին) ու պարտեզները (բաղչա): Խմելու և առտինն գործածություն համար ստորերկրյա ջրանցքներ (գահրիզ) են փորվել, որոնք որոշակի մուտքեր (ղրրխայաղ) են ունեցել: Խստորեն պահպանվել է օգտագործման կարգը, արգելելով նոր անցքեր փորելն ու ջրի հոսանքը փոխելը:

Նվիրաբերվող անշարժ ստացվածքների մեջ կան հողագործության տարբեր աշխատանքների հետ առնչվող օբյեկտներ՝ արտեր, մանր հողակտորներ (պատառ), ռոտզլի հողեր (ջրբին), հացահատիկը կալեսլու առանձին հարմարություններով օժտված վայրեր՝ կալեր, այգիներ և պարտեզներ (բաղչա) և այլն: Նվիրվող կամ «վախուպ» տրվող օբյեկտների տեղն ու դիրքը ճշտող համառոտ բացատրությունները տեղագրական արժեք ունեն: Դրանց մեջ պահպանված են գյուղավանի ճանապարհների, մոտակա վայրերի, հանդերի, ագարակների և այլ տեղանուններ. «Սիղուտու ճանապարհին Կրկաբուտու պատաններն», «Գրեբումն մեկ արտ», «Գրեբումնուտի ճրակենց գլխի կալին կեսն», «...մէկ լաւ ջրբին ետ, Մագրումն էր», «Շիկին ձոր մեկ բաղչայ, Գլուտումն մեկ պատառ ճրպին» և այլն:

Նվիրատուությունների բնույթից և որոշ նվիրատուների անուններին նախորդող և նրանց զբաղմունքը հուշող «ավել անուններից» կարելի է գաղափար կազմել բնակչության սոցիալական գրություն, տնտեսության և նյութական բարեկեցության մակարդակի մասին: Գյուղավանում եղել են մեծահարուստ խոշաներ, ինչպես օրինակ Փշրկենց գերդաստանից խոշա Հայրապետը, նրա որդին խոշա Մարգարեն և վերջինիս որդիներ խոշա Սահակը և խոշա Զաքարիան, որոնց միջոցներով են կառուցվել ջրամբարի ամբարտակն ու փորվել քահրիզն իր երեք աչքով: Խոշա Մարգարեն կառուցել է նաև մի կարավանատուն (բարվանսարա) իր օթևաններով (օղա) և հիմնովին նորոգել Մ. Հակոբա վանքի կաթնուղիկն: Մեծատուն խոշաների բազմանդամ գերդաստան է եղել նաև Փառակեցոնց ընտանիքը, որոնցից նույնպես երեք սերունդի նվիրատուներ են հիշված:

Նվիրատուների մեջ հիշված են նաև տարբեր զբաղմունքի տեր արհեստավորներ. ջուլհակ, որմնադիր (բանահ), փայտահատ (բալթաճի), գինեգործ (ձմլօղ), կոշկակար (բաշմաղչի), դերձակ (դերզիկ), մաղագործ (ալաքչի), հնակարկատ (փինայչի) և այլն:

¹² Մոսե, էջ 1083—1086.

¹³ Խոջանդար-բեկ Թուրքեման (Մունչի), Թարիխ-ե ալամարա-լե Աբբասի, (պարսկ. բնագիր), Թեհրան, 1957, էջ 656, 743.

Բնակչության սոցիալական խորը շերտավորման և տնտեսական անհավասարության մասին է վկայում այն փաստը, որ մեծածախք կառուցումներով և թանկարժեք նվերներով հանդես եկող խոջաներից և ունևոր գյուղացիներից, ինչպես նաև ավելի համեստ նվիրատուներով հիշվող արհեստավորներից ու միջակ գյուղացիներից զատ, գյուղավանում զգալի թիվ են կազմել նյութական սուղ պայմաններում գտնվող ընտանիքները, որոնց հատկացված «Քյոթուկի» էջերում, տասնամյակների ընթացքում նրանց կողմից կատարված որևէ նվիրատուության մասին գրառումներ չկան: Այդպիսի տրնտեսությունների թիվը 70-ի է հասնում, որը կազմում է գյուղի բնակչության մոտ 30%-ը:

Մեծահարուստ խոջանների առկայությունը ավանում, ինչպես նաև նվիրվող իրերի ու առարկաների տեսականին, թույլ են տալիս ասելու, որ թեև Ակոռին անմիջապես առևտրական մայրուղու վրա չէր գտնվում, սակայն ապրանքաշրջանառության ոլորտից դուրս չէր մնացել: Հիշատակված են ամենատարբեր վայրերից բերված ապրանքներ. «Բուրսու բան կարպետ», «Բուրսոյ բարձ ծածկոց», «Դիզաղայ կարպետ», «Թարիզայ բան հաղլուխ», «Հնդրստանու բան դալամբար վարաքուր», «Ֆուանգի քիմիայ», «Ֆուանկի պասմայ բեմի ծածկոց» և այլն: Կարավանատան կառուցման անհրաժեշտության փաստն ինքնին խոսում է առևտրականների հաճախակի երթևեկության մասին: Առևտրականներ, որոնք հիշված են նաև նվիրատվական արձանագրություններում. «Աստուած արհնէ բազըրկաններն, Ա (1) Սարգիս գիրք բերին Ս. Յակոբին»:

Ակոռու բնակիչները, նույնպես, եկեղեցական սպասքից և հանդերձանքից զատ, մեծ թվով ձեռագիր Ավետարաններ և ծիսական բնույթի այլ գրչագրեր են նվիրել Ս. Հակոբա վանքին, որոնց թիվը հասնում է 50-ի: Այդ թվում 1 Աստվածաշունչ, 13 Ավետարան, 4-ական Հայսմավուրք և Մաշտոց, 3-ական Սաղմոսարան և Քարոզգիրք, 2-ական Շարակնոց, Հիսուս Որդի, Ճաշու գիրք (Ճաշոց), Խորհրդատետր, Գանձարան և Տոնացույց և մեկական Ճառընտիր, Հարանց վարք, Աղոթամատույց, Ավետարանի մեկնիչ, Ժամի մեկնիչ, Հարցմունք (Գր. Տաթևացու «Հարցմանց գիրք»-ը), Սարգիս գիրք (Սարգիս Շնորհալու «Մեկնութին կաթողիկեայց»-ը), Ջայնավոր գիրք (Մանրամուկ), Ջայնաքաղ (Շարակնոց) և Ֆուանկի գիրք (Ունիթոական գրակ.): Նվիրված է նաև մեկական տպագիր (պասմայ) Աստվածաշունչ, Սաղմոս և Քաղուածո շարական:

Սրանք Քյոթուկի գրչության ժամանակին հաջորդող տասնամյակների ընթացքում կատարված նվիրատուություններն են: Անշուշտ զրանից առաջ ևս վանքում եղել են ձեռագիր մատյաններ, և մինչև վանքի ավերումը այլ գրքեր էլ են մուտք գործել վանքի մատենադարանը: Ուստի անհավանական չէ, որ կործանման ժամանակ վանքում մեծ թվով գրչագրեր են եղել և թերևս մնացել են փլվածքի տակ: Հայտնի չէ, հետագայում ձեռագրեր գտնելու նպատակով որոնումներ կատարվել են ալնտեղ, թե ոչ: Քյոթուկի առկայությունը, սակայն, թույլ է տալիս մտածելու նաև, որ որոշ ձեռագրեր զանազան առիթներով դուրս են բերվել վանքից, նախքան վանքի կործանումը, կամ էլ հետո պեղվել և հանվել են հողի տակից: Պետք է հուսալ, որ մեր ձեռագրական ֆոնդերի պատմությունը ուսումնասիրող մասնագետներին երբևէ կհաջողվի պարզել իրողությունը:

Նվիրված են նաև տարբեր չափսի ու որակի սրբապատկերներ. «մէկ Աս-

տուածածնի պատկեր», «Բեմի խաչկալի պատկեր», «մէկ մեծ պատկեր», «մէկ տախտակէ Աստուածածնի պատկեր», «մէկ փոքրիկ արծաթէ Աստուածածնի պատկեր» և այլն (շուրջ 12 հատ), որոնց մեջ հավանաբար եղել են նաև արժեքավոր գործեր և որոնց հետագա ճակատագրի մասին ևս ասույզ տեղեկութիւններ չունենք:

Ժամանակի կենցաղի և ազգագրութիւնի պատմութիւն ուսումնասիրութիւն համար որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում նաև նվիրվող առտնին օգտագործման կահկարասին, ամանեղենն ու այլ առարկաները: Կան փոստիկայի դանազան տեսակներ՝ «խալի», «խալիշայ», «կարպետ», «ջաջիմ», «թաքնամաղ», տարբեր նյութի և որակի գործվածքներ. «չիթ», «պասմայ» կամ «ղալամբար» վարագույր, «զառքաշ» կամ «քաթան, պասմայ» ծածկոց, «զառ», «սուրամբաշ» կամ այլ տեսակի «մահրամաներ», «զառ» կամ «ապրիշումէ հայլուխ», «մախմուռ», «քիմխա» կամ «թալթայ» շապիկներ, «մետաքսայ» կամ ոսկեթել «մանդիլներ» և այլն:

Հետաքրքիր են նաև եկեղեցական ինվենտարի մասին տվյալները, որոնց մեջ զգալի թիվ են կազմում ծանրաքաշ արծաթե իրերն ու ոսկեբանվածք հանդերձները. «զառպապ շուրշառ», «զառ փեշկիր», «քանդաքար խաչկալ» և այլն:

Ազգագրական հատուկ հետաքրքրութիւն են ներկայացնում ամանեղենն ու խոհարարական առարկաները, ինչպիսիք են օրինակ կլայեկից կամ արծաթյա «իբրուղներ», պղնձե «սիլիփլաններ», մեծ մասամբ պղնձից կամ այլ մետաղներից պատրաստված ջրի, ճաշի և այլ սննդամթերքների և տնտեսական նշանակութիւն ունեցող ամանները. «գուկում», «բադիայ», «լական», «լանգարի», «ղազղան», «թանճարայ», «թաիշի», «նալբաքի», «սաջաղի» և այլն:

Ձեռագրի սկզբի «յիշատակագրութեան» հեղինակը, ինչպես նաև հետագա նվիրատուութիւնների մասին գրառումներ կատարողները նշումներ են արել նաև համայնքի ընդհանուր նախաձեռնութեամբ և հավաքական ջանքերով կատարված մեծ կամ փոքր կառուցումների, ծախսերի և նվիրատուութիւնների մասին: Դրանք փաստեր են, որոնք այլ աղբյուրների զուգահեռ տվյալների հետ օգնում են ավելի որոշակի զաղափար կազմելու XVII դարի գյուղական համայնքի ներքին կազմակերպութեան, իրավունքների, հավաքական ուժի և նյութական հնարավորութիւնների մասին: Մեծ մասամբ, ինչպես նույն դարաշրջանի այլ աղբյուրներում, Քյոթուկում ևս համայնքն անվանվում է «ժողովուրդ»։ «Աստուած ժողովուրդն օրհնէ, մէկ պասմայ Քաղուածոյ Շարական առին», կամ «Աստուած որհնէ ժողովուրդեան, մեծամեծաց և փոքունց, մէկ լաւ անօթի հմար ամբար շինիլ տվին»: Սակայն հաճախ «էլ» և «ըռիաթ» բառերը ևս նույն իմաստով են գործածված. «Նոր եկեղեցին էլով շինէցին, թվին ՌՃՄ (1701)-ումն աւարտեցաւ: ...[Կէս] թումանէ մինչի ճ (100) դիան ըռիաքն քումակ արին, Աստուած մեր քանդիսուդէքն, էլև, կանայքն, մեծ և փոքրն անփորձ և անսասան պահեսցէ» և այլն:

Քյոթուկում գրի առնված արձանագրութիւնների մեջ հալոց լեզվի պատմութեամբ և բարբառագիտութեամբ զբաղվողները ևս հետաքրքիր տվյալներ կարող են գտնել: Այնտեղ զգալի նյութ կա նաև արական և իգական անձնանունների, տոհմանունների, ավել անունների կամ մականունների և ազգագրութեանը հետաքրքրող տարբեր հարցերի վերաբերյալ:

Համառոտակի ուրվագծելով Ակոռու Ս. Հակոբա վանքի «Քյոթուկի» աղբյուրագիտական նշանակությունը, կարծում ենք, որ ծավալով ոչ մեծ, սակայն բովանդակութայնաբար ինքնատիպ և որպես սկզբնաղբյուր որոշակի գիտական արժեք ներկայացնող այս բնագրի հրատարակումը, կարող է օգտակար հանդիսանալ ուղ միջնադարի պատմության, վերը ընդգծված և այլ հարցերի լուսաբանման համար:

Բնագրից ղեղաված են միայն 1բ—5ա էջերի փառաբանական հատվածներ ու յուրաքանչյուր նվիրատուի անվանը նախորդող «Աստուած օրհնէ» արտահայտությունը: Ինչպես սկզբի «յիշատակագրութեան», այնպես նաև հետագա տասնամյակներում, տարբեր գրիչների ձեռքով կատարված գրառումների ուղղագրությունը պահպանել ենք նույնությամբ: Տողատակում տրված են միայն օտար բառերի և տերմինների ծագումն ու իմաստը լուսաբանող խիստ համառոտ բացատրություններ:

* * *

1ա Յաղագս հոգևորական անջնջելի յիշատակագրութիւն ի սուրբ եկեղեցիս Սբ. Յակոբայ սքանչելագործ հայրապետի, զոր բովանդակեալ զամենայն զգեստի մի ըստ միոջէ, ըստ շափու հաւատոց և ըստ կարողութեան ընչից, շարակարգեցաք զամենայն և բացայայտեմք ի սուրբ տեղիս՝ առաջի ահաւոր և փրկագործ անմահ պատարագիս յականջս ձեր: Զի և դուք ով աստուածասէր և ուղղադաւան միահամուռ ժողովուրդք՝ մեծամեծք և փոքունք, արք և կանայք, ծերք և տղայք, պարտք մտադրութեամբ ունկն դնել և ամենայն ընծայաբերաց ի սուրբ եկեղեցիս՝ օրհնել և Աստուած-ողորմի ասել միաբանութեամբ, զի և դուք ընկալչիք մասն և բաժին ի սրբոցն Աստուծոյ ॥ (1բ) առատածիր ողորմութիւն ի բարերարէն Աստուծոյ աստ հազարապատիկ և բիրապատիկ և ի միւսանգամ գալստեան նորայ՝ զերկնից արքայութիւնն ժառանգեսչիք ընդ ամենայն ննջեցելովք ձերովք. ամէն:

Բայց յառաջ բան զյիշատակարանսն կարդալոյ, պարտիմք ամենեքեան օրհնութիւն, գոհութիւն և փառս մատուցանել ամենասուրբ Երրորդութեան...⁴:

Տբ Աստուած ողորմի ասացէք միաբանութեամբ Փշրկէնց Մահդասի Հայրապետին և իւր որդի մահդասի խօճայ Մարգարէին, որ ետուն ընծայ սուրբ եկեղեցւոյս Ա. (1) զառ՝ շուրջառ, Բ. (2) մեծ խաչ, Ա. (1) մարգարտաշար վակաս, Բ. (2) ջուխտ² ծնծղայք, Ա. (1) բեմի խաչկալի պատկեր, ॥ (6ա) Ա. (1) Աստուածաշունչ, Ա. (1) Յայսմաւոր, Ա. (1) [ձա]շու գիրք, Ա. (1) մագաղաթեայ Շարակնոց, Ա. (1) խալիչայ³, Ա. (1) Ֆոանգի քիմխայ⁴ շուրջառ, Ա. (1) արծաթէ կանթեղ, քաշն ձԼ. (108) մսխալ⁵, Գ. (3) զառ եաղլուխ⁶,

* Ձեռագրի 1բ—5ա էջերը ունեն գոհաբանական բովանդակություն:

1 պրսկ. زر — ոսկեգույն, ոսկեբանված:

2 պրսկ. جفت — զույգ:

3 պրսկ. قالچه — փոքրիկ գորգ:

4 պրսկ. کتخا — մետաքսյա գունավոր դարդարուն գործվածք:

5 արաբ. مقال — թանկարժեք մետաղների քաշի միավոր, որ հավասար էր 4,72 գրամի:

6 թրք. یاایلیق — թաշկինակ:

Գ. (3) զարբաֆ⁷ սաղաւարտ, մէկ մարմար աւազան, Ա. (1) աթոռ, Սիդուտու ճանապարհին Կրկըլարտու պատառներն: Այլև մահազասի խօճայ Մարգարէն Ա. (1) քարվանսարա⁸ շինեաց իւր օտայներովն⁹. Ինչ որ օտաներուն գալուր¹⁰ լինի, ի վերայ քարվանսարին պակասութեանն խարճեն¹¹, որ հանապազ շէն մնայ:

Աստուած ողորմի ասացէք մահազասի խօճայ Սահակին և իւր եղբայր խօճայ Զաքարիային, և իւրեանց կողակցացն՝ Մարիամանց, և իւրեանց ծնօղացն՝ մահազասի խօճայ || (6բ) Մարգարէին և Նազուխանին, պապուն իւրեանց՝ մահազասի Հայրապետին, և մամուն՝ Յուստիանին, հօրաքեոցն Խօնձուն և |||ին, և |||կամին, և Մարգարտին, և այլ ամենայն առուարեան մերձաւորացն՝ կենդանեացն և առ Քրիստոս ննջեցելեացն, որ գօլին¹² հիմանէն մինչև ի Խաչի յիշատակարանն Ը. (8) գազ¹³ սկիզբն արարին հաստահիմն և կոփուածու վիմօք, գեղեցիկ բրջերօք¹⁴ և ամրախիճ կրօք շինեցին, և գահրիզի¹⁵ առաջի ձորի բանտն¹⁶, որ գահրիզի ջուրն անց են կացուցել, անտի մինչև ի դուռն սբ. եկեղեցույս Գ. (3) տեղի զրրխայաղ¹⁷ է շինած, մէկն՝ Աստուածածնի դռանն, մէկն՝ քարանսարի մօտն և մէկն՝ եկեղեցույ դռանն: Այսչափ վարձք և աշխատանք յիւրեաց հալալ և արդար վաստակոցն կատարեցին՝ մե|| (7ա) ծաւ ծախիւք և բազում նեղութեամբ վասն սիրոյն Քրիստոսի և յուսոյ արքայութեանն: Այսուհետև ի մերոց ազգականաց կամ յօտարաց, ով ոք յայտնի կամ ի ծածուկ ջուր բաժանէ և տանի յայլ տեղիս հանցէ, նա յանմահական ջրոյն ծարաւ մնասցէ, յերեք հարիւր ժ և Ը (318) հայրապետացն նզովեալ և անիծեալ եղիցի, մասն և բաժին ի Կայենէ և ի Յուդայէ ընկալցին մեր մեղացն պարտական լիցին և սներես առ մեզ գայցեն: Այլ միայն յայս Գ. (3) տեղիս հաստատուն և անշարժ մնասցէ մինչև յաւիտեան: Խնդրեմք ի ձէնջ, որ մեր հոգւոցն Աստուած ողորմի ասէք ամենեքչան. ողորմածն Աստուած ձեզ և մեզ ողորմեսցի աստ և ի միւսանգամ գալստեան իւրում, և ինքն օրհնեալ եղիցի այժմ և անզրաւ յաւիտենի յաւիտեանս. ամէն:

7բ. Գարձեալ սկիզբն գօլին, որ հիմն եղաք՝ թիւն ՌձԺԲ (1663) էր, և յորժամ կատարումն եղև, թէ գօլին և թէ աղբիւրին, թւականն էր ՌձԻ (1671)-ումն. Ը. (8) տարուամն աւարտեցաւ մեծաւ աշխատութեամբ:

7 պրսկ. زرباف — սուկերանվածք:

8 պրսկ. کاروانسرا — կարավանատուն, իջևան:

9 թրք. اوطاف — սենյակ:

10 թրք. گلور — եկամուտ:

11 արաբ. خرج — ծախսեն:

12 թրք. گول — ջրավազան

13 պրսկ. گز — երկարութիւն շափ, 0,90—1,10 մետր:

14 պրսկ. برج — աշտարակ:

15 պրսկ. کپوريز — ստորերկրյա ջրերը օգտագործելու նպատակով փորված ջրանցք:

16 պրսկ. بند — ամբարտակ, պատնեշ:

17 թրք. قرق آياق — դեպի ստորերկրյա ջրանցքը տանող սանդուղքներ, որ բառացի

նշանակում է «քառասուն ոտք» կամ «քառասուն սանդուղք»:

Ձայս ևս ծանուցումն լիցի մեծամեծաց և փոքունց, թէ գօլին և թէ աղբերն ծձ և Մ (550) թուման խարճ է գնացել. ԳՃՄ (350) թումանն գօլին է գնացել և ԲՃ (200) թումանն աղբիւրին խարճն է: Որոց փոխարէնն հաստատուն արասցէ Տէր մեր Յիսուս Քրիստոս ըստ առատ ողորմութեան իւրում՝ ի հանդերձեալ դատաստանին իւրոյ. ամէն: Հայր մեր, որ չէրկինսդ ես:

Դարձեալ եկեղեցւոյն հին կաթուղիկէն, որ խիստ քաշ և խամ էր շինած Դ. (4) սինքն, այլ Գ. (3) գօշէ¹⁸ և խախտտ, մահգասի խօճայ Մարգարէն սիններն նոր լցնել հտուր քա|| (8ա) բով և կրով, Դ. (4) անկյունք շինեաց և զկաթուղիկէն նորոգեաց և բարձրացոյց գեղեցիկ յօրինուածովք և մեծամեծ լուսամտերօք. սոցա խարճն ԻԳ. (23) թուման գնաց: Յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք սոցա հոգւոյն. ամէն:

Աստուած արհնէ¹⁹ Փշիկէնց խօջայ Մարգարի որդի նազարէթն—մէկ շարիֆ:

Տր Եւ դարձեալ նոր եկեղեցին էլով²⁰ շինեցին, թվին ՌՃՄ (1701)-ումն սուրահեցաւ, մնաց կաթուղիկէն: ՌՃՄՁ (1707) կաթուղիկէն շինեցինք: Կաթուղիկին շինութիւնն... Օվանէսի որդի Մկրտիչն հտուր ԺԴ. (14) թուման, ...Մկրտչի որդի Այվազն հտուր Թ. (9) թուման կէս, ... Փիրսօլթանէնց Վարդանի որդի Գրիգորն և Մարտիկի որդի Սարգիսն հտուն Թ. (9) թուման կէս, մահգասի Յովսէփի որդի նազարէթն Դ. (4) թուման հտուր՝ կաթուղիկին խաշն ետիր զլխին, խարջն էլ քաշեց: Դարձեալ այս կաթուղիկիս մնացեալ խարջն Ե. (5) թուման, ջառն²¹, հացն, խորակն²² էլ հտուր: || (9ա) [կէս] թումանէ մինչև ձ. (100) դիան ըրիաթն²³ քօմակ²⁴ արին: Աստուած մեր քանդիտուղէքն²⁵, էլն, կանաչքն, մեծ և փոքրն անփորձ և անսասան սլահեսցէ. ամէն:

10ա ... ներքի Ոսկանն — Ա. (1) խաշ վախմ հտուր Սբ. Յակոբին:

10բ ... Խօշխաբարէնց պառանն — Ա. (1) փոքրիկ խաշ, Գբէրումն մէկ արտ ետ:

... Քաջալ ձանոնց:

11ա ... Թարղուլու որդի Դաւիթն — Ա. (1) լաւ վարագուր, Ա. (1) լաւ սկուհավլուխ, մէկ խաշ փոքր:

11բ ... Բժունկէնց մահգասի էվազ — Ա. (1) փոքրիկ Մաշտոց:

12ա ... Մալա Մկրտչէնց Գրիգորն:

12բ ... Կարապետէնց Աւետիքն, Մարտիրոսն և Ծատուրն և դստերքն՝ Սապահն և Շնհաւորն և Մարթէն — Ա. (1) լավ մագաղաթ Շարակնոց:

13ա ... Ամիրձանն, որդի Մինասն — Դ. (4) թօփ շարիթ²⁶:

18 պրսկ. گوشه — անկյուն:

19 Յուրաբանչուր նվիրատուի անվանը նախորդում է «Աստուած արհնէ» խօսքը, որն ստորև ամենուրեք փոխարինվելու է երեք կետով:

20 թրք. آیل — ժողովուրդ, համայնք:

21 արաբ. جار — աշխատանքին օգնող:

22 պրսկ. خوراك — ուտելիք, բանվորների սնունդ:

23 արաբ. رعيت — ժողովուրդ, ույաթ:

24 պրսկ. كمال — օգնութիւն:

25 պրսկ. کدخدای — գեղջավազ, տանուտեր:

26 թրք. شريد — պարան, թուկ:

13բ ... մահդասի Սօլթանբէկն — Ա. (1) պղնձէ բուրվառ, Ա. (1) Դիզադա կարպետ, Ա. (1) շահ, Ա. (1) մեծ խաչ:

14ա ... Փառակեցոնց Սարգիսն և Մուրատն և իրեանց հայր Ղազարն — Ա. (1) սկի, Ա. (1) հաղորդատուփ, Ա. (1) սուրմայի²⁷ սկու եաղախ, Ա. (1) շիթ վարագուր, Ա. (1) ծնծղայք, Ա. (1) կաշէ բեմի ծածկոց, Ա. (1) արծաթէ իբրուղ²⁸, Ա. (1) պղնձէ սիլիփշայ²⁹, Ա. (1) արծաթէ խաչ, Ա. (1) Բուրսու բան³⁰ կարպետ: Ա. (1) լաւ արծաթէ խաչ այլ Ղազար[ն] նոր ետուր, Ա. (1) զառքաֆ շուրջառ:

14բ ... Փառակեցոնց Սարգիս և իւր որդի Մարտիրոսն — մէկ լաւ զառքաֆ շուրջառ, Ա. (1) արծաթէ խաչ, Ա. (1) Բուրսայի կարպետ, Բ. (2) շապիֆ, մէկ Յալամաուր, մէկ մեծ արծաթէ կանթեղ, առքն Զ. (6) թուման, Բ. (2) շաբիֆ, երեք լաւ մեծ շամադան³¹, առքն ՃԵ. (105) ոսկի, Ա. (1) խալիչայ, Ա. (1) մեծ խաչ, առքն |||³²:

15ա ... Փառակեցոնց Մարտիրոսն:

... Փառակեցոնց մահդասի Սարգսի որդի Յարութիւնն և Նազարն — մէկ լավ ոսկատուփ Աւետարան իւր մահլամովն³³, Բ. (2) շապիֆ:

... Նազարի կին Մանուշակն — մէկ զառքաշ³⁴ սաղաւարդ:

... Փառակեցոնց Մարումն և իւր եղբար Աւետիքն, մէկ զառքաշ փարանոց, մէկ վակազ:

16ա ... Փառակեցոնց Մկրտիչն, Պետրոսն, Մարտիրոսն, Փիլիպոսն և իւրեանց հայր մահդասի Մարգարէն — մէկ մեծ խաչ, Ա. (1) կարպետ, վարագուրին համար՝ մէկ մեծ երկաթի շամբուր:

16բ ... Մուրատէնց Ավետիկ — մէկ սկու տակի ծածկոց, մէկ Աստուածածնի պատկեր, մէկ սուրմայեախալու³⁵ շապիկ:

17ա ... Ղարիպճանն:

17բ ... Անապատի մայրապետ Եղիսապետն — երես Սբ. Յակոբայ մէկ շուխտ պազպան³⁶, մէկ վակաս:

18ա ... Տերտէրէնց Անտոնն և իւր հայրն — Ա. (1) խաչ ետ, Ա. (1) լաւ շաշիմ³⁷:

19ա ... Փառակեցոնց Յովսէփն — Ա. (1) արծաթէ խաչ ետ Սբ. Յակոբին: Իւր որդի Մատուրն — Ա. (1) լաւ արծաթէ թագ:

27 պրսկ. سرمه آي — սուրմայած, սուրմայով զարդարած, նաև՝ մուգ կապույտ:

28 արաբ. ابريق — ջրի աման՝ լվացումների համար:

29 պրսկ. سليچده — ջրամանի՝ իբրուղի տակը զրվող մեծ պնակ:

30 Բուրսա քաղաքում պատրաստված:

31 պրսկ. شمعدان — մոմակալ:

32 շարունակութունը չնջված է:

33 արաբ. محرمة — մեծ թաշկինակ, սրբիչ:

34 պրսկ. زوكش — ոսկեջրած:

35 թրք. سرمه يقهلو — օձիթը սուրմայով նախշած:

36 պրսկ. بازوبند — դաստակակապ:

37 թրք. حچيم — փոքրիկ կարպետ:

... Մահդասի Ուսէփի որդի Նազարէթն — Նոր եկեղեցուն ետուր մէկ լաւ զարբայ³⁸ շուրջառ, մէկ շամատան, Բ. (2) մումի, տեղ, մէկ Աստուածածնի պատկեր: Մատուրի կին Մարինոսն — մէծ սեղանին խաչկալ պատկեր ետ:

19բ ... Մուրատէնց Ղազարի որդի Սամուէլ — մէկ մեծ խաչ, մեծ բեմի քանդաքար³⁹ խաչկալն, Բ. (2) պատկեր, մէկ մոռոնտանէք:

... Մուրատէնց Տէր Ոհան — մէկ Գաղարան, մէկ խորհուրդի դետր մէկ դաստառակ. Աստուած իւր մեղքն թողի:

20ա ... հաշիկէնց Մուրատն:

20բ ... Մարտիրոսի կին Մարիամ — Ա. (1) լաւ շաքիկ:

21ա ... Մխիթարէնց Գրիգորն:

... Ճիհանբէկ և իւր որդիք՝ Աթանիայ և Յովակիմ — մէկ փոքր խաչ:

22ա ... հաշիկէնց մահդասի Առաքէլն և Մուրատն — Ա. (1) պղնձէ բուրվառ, Ա. (1) ժամարարի արա⁴⁰, Ա. (1) շաքիկ, Ա. (1) փոքրիկ մոմտան ետուն, Ա. (1) Բուրսու բան կարպետ, Ա. (1) լճէֆ⁴¹, Ա. (1) բարձ, Ա. (1) Բուրսու կարպետ մեռնելովն ետ:

... հաշիկէնց Մուրատ — մէկ զառպապ շուրջառ:

23ա ... Շուշէնց Պետրոսն:

23բ ... Թորոսն — Ա. (1) արծաթէ խաչ, ՃԶ (106) մսխալ, Ա. (1) ապրշմէ⁴² յեաղլախ, թվին ՌՃԺԳ (1664):

24ա ... Գուլճանն — Ա. (1) ոսկետուփ Աւետարան:

25ա ... Բաշմաղշոնց Յակոբն — Ա. (1) լաւ կարպետ:

26ա ... Նէպումի տղա Պարոն:

26բ ... Սօլթանշահ և իւր փեսայ Քօլոզ:

... Նէպումէնց մահդասի Հայրապետն և իւր եղբայր Երիշանն — ետուն Սբ. Յակոբայ մէկ պասմայ⁴³ վարագուր կաշէ, Դ. (4) կաշէ շամդանի սեղան:

27ա ... Ամիրճանէնց պառան — մին թանճարա⁴⁴:

28ա ... Սալոնց Թաթէոսն — Բ. (2) լաւ ատենի զանգակ:

29ա ... Քոսակ Յովանէս և իւր որդի մահդասի հաշատուրն — Ա. (1) մեծ խաչ, Բ. (2) արծաթէ թափշի⁴⁵, Ա. (1) արծաթէ բաժկի աման, Ա. (1) կարմիր մախմուտ⁴⁶ շուրջառ ետուր Սբ. Յա[կոբայ], Ա. (1) խաչվառ:

30ա ... Աթաբեկէնց մահդասի Պետրոսի որդիք Պողոսն, Մատուրն, հաշիկն — մէկ պասմայ Աստուածաշունչ ետուն Սբ. Յակոբայ: Մատուրն — մէկ լավ քիմխայ շուրջառ ետուր, մէկ շաքիֆ ալլ:

38 պրսկ. زرباف — ոսկե բանվածք:

39 պրսկ. کنده کار — փորագրած:

40 արաբ. عبا — թիկնոց:

41 արաբ. لحاف — վերմակ:

42 պրսկ. آبريشم — մետաքս:

43 թրք. باصمه — տպած, դաշած:

44 թրք. تنجره — կաթսա, մեծ աման:

45 թրք. تپسى — մեծ ափսե կամ փոքրիկ մատուցարան:

46 արաբ. مخمل — թավիշ:

31ա ... Բէրամն — Ա. (1) մեծ խաչ ետուր Սբ. Յակոբայ, Բ. (2) լաւ ատենի մոմտան⁴⁷:

32ա ... Եղիայի որդի Մխիթարն — Ա. (1) լաւ զառ շուրջ[առ] ետ Սբ. Յակոբայ: Իւր որդի Գէորքն—եբեր մէկ ջոխտ⁴⁸ շամտան, Բ. (2) ջարմակ ատենի մում:

33ա ... Խուժլուբէկն:

... Զուղայեցի Եզնաբաշխ — մէկ զառ փոքր ծածկոց, Ա. (1) լաւ խալի⁴⁹ տօ Սբ. Յակոբայ:

..... Քամբէկէնց Պետրոսն — մէկ շապիք ետուր:

34ա ... Մկալոնց էհանէսն — մէկ արծաթէ խաչ, քաշն 2Դ. (74) մսխալ:

35ա ... Քամբեկէնց Յովանէսի տղա Սարգիսն — Ա. (1) սաղաւարդ ետուր:

... Գօղալին հոգուն — մէկ լական ետուր Սբ. [Յակոբայ]:

36ա ... Քամբէկէնց Պետրոսն:

36բ ... Ալիբարէնց Մարգարիտ — մին մահրամայ:

37ա ... Սաւրոնց Թասալին և իւր հայր Մարտիրոսն — Ա. (1) փոքրիկ պղնձէ իբրուզ ետուր Սբ. [Յակոբայ]: Եւ իւր որդի Մուքայէլն — ետուր մէկ փոքր ծածկոց:

38ա ... Պապաճանէնց էզազն և իւր փեսայ Առաքէլն — Ա. (1) խաչվառ ետ, Ա. (1) յեաղլխ:

39ա ... Զօպանի տղա⁵⁰, Զինամիրէնց Միրզի փեսայ Մարտիրոսն — Ա. (1) ՂՖԼ⁵¹ տվօ Սբ. Ակոբին, Ա. (1) ատլաս⁵² պօղչալ⁵³:

39բ ... Փօթէնց Միքայէլի դուստր Հոռումն — ետուր մէկ Խորհրդատետր Սբ. [Յակոբայ]:

40ա ... Բաղդասարի տղա:

41ա ... Աղամն — Ա. (1) փոքրիկ ճառքնտիր, Ա. (1) դեղին փէշկիր⁵⁴, Ա. (1) չիթ փէշկիր ետուր Սբ. Յակոբին, Ա. (1) խաչ:

42ա ... Փուշկէնց Խաչատուրն և իւր որդի Ճանիհարն — Գ. (3) շամդան, Ա. (1) Քարոզգիրք ետուն Սբ. Յակոբայ:

43ա ... Խուբիեար — Ա. (1) ջուխտ զառ բազպան:

44ա ... Խուբիեարէնց Մարտիրոսն — Ա. (1) Շարակնոց, Ա. (1) հին Սաղմոսարան, Ա. (1) բաղիայ⁵⁵:

45ա ... Խուբիեարէնց Պետրոսն:

45բ ... Անդրէաս վարդապետն — մէկ խալիչալ ետուր Սբ. Յակոբայ:

47 պրսկ. مومدان — մոմակալ:

48 պրսկ. جفت — զույգ:

49 պրսկ. قالی — գորգ:

50 ջնջված:

51 արաբ. قفل — կողպեք, փականք:

52 արաբ. اطلس — մետաքսյա փայլուն կերպաս:

53 պրսկ. بچه — կապոց:

54 պրսկ. پيشگیر — գոգնոց:

55 պրսկ. بادیه — մեծ պղնձե կամ կապե ջրաման:

46ա ... Օղուլբեկէնց Կիրակոսն — Ա. (1) լաւ իպրուզ, Բ. (2) նալբաքի⁵⁶, Ա. (1) քաշած եաղլուխ, Ա. (1) ապրիշումէ մեծ բան եաղլուխ, Ա. (1) մաղաս, Ա. (1) մեծ կարպետ, մէկ Մաշտոց՝ Ժն. (15) մսխալ արծաթէ խաշ վերէն:

... Թամրազն — Բ. (2) շաքիք հտուր:

.... Իւր որդիքն Ազիզբէկն և Գիրակոսն — Բերին մէկ լաւ փառատոր խաշ տեղի պատմութեանով⁵⁷, մէկ ջուխտ շամատան ջոխտակ մուճատեղով, մէկ արծաթէ գանթեղ:

46բ ... Սարգսի որդի էվազն — հտուր մէկ լաւ շուրջառ, մէկ Աւետարան, մէկ զանկակ:

47ա ... Օղուլբէկն, իւր կինն — մէկ ջոխտ սուրմայ բազբան:

48ա ... Գալուամն և իւր եղբայր Մարտիրոսն — Ա. (1) զառ շուրջառ ետ, Ա. (1) փոքրիկ խաշ Սբ. Յակոբին, Բ. (2) զանգակ, Ա. (1) շապիկ:

49ա ... Տէր Վարդանի տղայ Յովաննէս վարդապետն — մէկ խալիշայ:

50ա ... Զլբացէնց Վարդան:

50բ ... Եաղուպի որդի մահազսի Թեղանն և որդիքն — մէկ ջոխտ լավ արծաթէ քոց, մէկ լավ սկու եաղլախ՝ զառ, մէկ էլ զառ կոոփուտայ⁵⁸, Եւ իւր դուստր Գաբարն — հտուր մէկ զառքաշ փոքր ծածկոց:

51ա ... Խարմէնց:

52ա ... Զլբացէնց Խաշատուրն — Ա. (1) ֆոանկի գիրք, մէկ թօփ⁵⁹ շարիթ:

53ա ... Զլբացէնց Դաւիթ:

54ա ... Փութէնց:

55ա ... Քաշալին տղայ Աւետիքն:

56ա ... Ճլճակ Սիմոնի թոռն:

57ա ... Պուղտիկի տղա Յովաննէսն — Ա. (1) ջահ հտուն Սբ. Յակոբին:

58ա ... Սահակէնց Մէլիքսէթն և Պօղոսն — Ա. (1) ջահ, Ա. (1) պղնձէ բուրվառ, Ա. (1) սպիտակ շարկուլ⁶⁰ եաղլախ հտուլին], Գ. (3) պղնձի կանթեղ:

59ա ... Զլբացէնց Մարկոսն:

60ա ... Անիեաթէնց Յակոբն և իւր կին Անախաթունն — հտուր մէկ խալիշայ, մէկ շապիկ, եկեղեցուն էլ շորեղենն այ տվէլ:

61ա ... Քամբագէնց տղայքն — Ա. (1) շուրջառ հտուն Սբ. Յակոբին: Եւ Կոստանդի կին Հուսումն — մէկ Աւետարան, մէկ փէշկիր եաղլուխ, գերեզմանումն Շատիբէկէնց կալի կէսն իւրան էր, հտուր գերեզմանի վախուպ:

62ա ... Մուհրիեարէնց:

63ա ... Ահլիմանէնց մահազսի Մարգարայ և իւր որդի Սիմոնն — Ա. (1) մեծ սկիհ հտուն Սբ. Յակոբին, Ա. (1) խալիշայ:

56 պրսկ. نلبکی — փոքրիկ ափսե:

57 Հավանարար՝ պատվանդան:

58 լատ. corporalis — պատարագի ժամանակ օգտագործվող ճերմակ կտավ:

59 թրք. طوب — կծիկ, գունդ, փաթեթ:

60 պրսկ. چارگل — քառանկյունի, հավանարար նաև շորս անկյունները ծաղկազարդ

65ա ... Ահլիմանէնց Պետրոսն, Մարտիկն և իւր որդի Նիկողայոսն — Ա. (1) արծաթէ աջի աման, Ա. (1) լաւ սկիհ, Ա. (1) սպիտակ մուսաջառ⁶¹ շուրջառ, Ա. (1) փոքրիկ խաչ ետ:

66ա ... Մուշաղէնց Հայրապետն:

67ա ... Կարապետէնց Գրիգորի տղայ Հայրապետն — մէկ քաթան⁶² պասմայ բեմի ծածկոց:

...Մուրաբլին և իւր դուստր Թանկսողն — Բ. (2) կարպետ, մէկ խալիչայ, մէկ ատենի Սաղմոս՝ բասմայ, մէկ Աստուածածնի պատկեր, մէկ խաչվառ: Մուքէլի դուստր Գուլին — իւր հոգոյ բաժինի փողէն՝ մէկ արծաթէ վակազ առաւ: Աստուած ողորմի իւրն. ամէն:

68ա ... Վարդաշահէնց Առաքէլն — Ա. (1) լաւ զառքաֆ շուրջառ:

69ա ... Վարդաշահէնց Յովանէսն և իւր որդի Յոհանն — Ա. (1) զառ ուրար, Ա. (1) լաւ խաչ, Ա. (1) զառ եաղլուխ՝ սկու, մէկ էլ խաչէ (՞) սեղանի ծածկոց:

69բ ... Վարդաշահէնց Զաքարէն և որդիքն — տվին եկեղեցուն մէկ լաւ զառքապ շուրջառ: Եւ միոյս որդի Փօլաթ — մէկ լաւ շուրջառ:

... Խաչատուրի որդի Թամրազն — մէկ լաւ սուրմայ սկու մահրամայ:

70ա ... Արիշէնց Մատուր — Ա. (1) Աւետարան ետ Սբ. Յակոբին:

71ա ... Խուրիեարէնց Ղազար:

71բ ... Ծմլօղէնց Ղազարի որդի Աթանիէն — մէկ լաւ սկիհ մաղզմանով⁶³, Ա. (1) լաւ մասնատուփ, Դ. (4) հատ մանր շամտան, մէկ տախտակէ Աստուածածնի պատկեր, մէկ այլ մէկ երեսէ պատկեր, մէկ լաւ խաչվառ, մէկ սեղանի սպիտակ ուրար շարապով⁶⁴:

72ա ... Ծմլօղ Յոանէսն, իւր որդի Յակոբն — մէկ փոքրիկ արծաթէ Աստուածածնի պատկեր:

73ա ... Ղլիճէնց Յովսէփն:

74ա ... Ղլիճէնց Սահակ:

75ա ... Ղլիճէնց Գրիգոր:

76ա ... Ամիրխանն — (1) փոքրիկ խաչ, Ա. (1) մեծ զազղան⁶⁵, Ա. (1) լաւ կարպետ, Ա. (1) խալիչայ:

77ա ... Վերի Մկրտչին տղայքն՝ Ղօկասն, Գրիգորն:

78ա .. Ահլիմանէնց Մարտիկ:

78բ ... Զօրհապի որդիք՝ Սարումն և Մանուկն — մէկ լավ Հնդստանայ վարքուր, մէկ արծաթէ աղանի⁶⁶:

79ա ... Թանեսն — մին շապիք, մին փոքր խաչ, մէկ շոխտ բեմի զառ փէշկիր, մէկ Մսրայ մոմտան:

... Զանիկէնց [Հայրա]պետն — մէկ լաւ ֆռ[անկի] պասմայ բեմի ծածկո[ց], Դ. (4) հատ ֆոնանկի ծաղ[իկ], մէկ զառքաշ վակ[աս]:

61 արաբ. مسجر — ծոպավոր:

62 արաբ. كتان — վուշլա գործվածք:

63 Հին պարսկ. կամ ասոր. ծագում ունեցող բառ—պնակ կամ սկավառակ:

64 արաբ. شرايط — ծոպ:

65 թրք. قوزغان — կաթնա:

66 բնագրում՝ առանի:

79բ ... Փիրսուլթանէնց Մանուկ — մէկ Յիսուս Որդի, մէկ մահճրամայ:

80ա ... Շահանշահէնց Մարգարայ — մէկ խաչ ետ:

80բ ... Զառկարտան Ղազարն:

... Մահզասի էվազն և իւր թոռն էվազն — ետուր մէկ լաւ Հնդստանու բան զալամբար⁶⁷ վարաքուր, եկեղեցուն քուլի⁶⁸ փանջարոց⁶⁹ մալթուլ⁷⁰ եբեր, եկեղեցին էլ խասիրով իլից, փանջարէքն ամէն ճամակալէց⁷¹, մէկ զառ ծածկոց իւր փէշկիրովն:

81ա ... Տէր-Աւետիսէնց Առաքէլն, իւր հարսն Մարգարիտն — ետուր մէկ սիմ⁷² սեղանի ծածկոց:

81բ ... Տէր-Բագրատն և իւր թոռն Տէր-Աբրահամն — ետուր մէկ լաւ ժամարարի զոնար⁷³:

82ա ... Պուտաղն, մէկ իբրուղ:

... Օվանէսի որդի Մկրտիչն — մէծ լաւ սկիհ, մաղրզման սուրմայ մահճրամովն:

82բ ... Տէր-Իսրայէլն և իւր որդի Յակոբն — տվին մէկ խալիշայ, մէկ լաւ փոքր ձեռաց խաչ, մէկ ժամի Մեկնիշ, Բ. (2) զառպապ շուրջառ, մէկ դեղին, մէկն կանանշ:

83ա ... սարկաւազ Ղազարն:

... Բալթաճու որդի Մինասն և որդի Օվանէս — մէկ զառ շուրջառ, մէկ էլ սուրմայի զառպապ շուրջառ, մէկ սկու տակի ծածկոց:

84ա ... Տէր-Յակոբն:

84բ ... Տէր-Ալիքսան, իւր որդիքն Օվանէս — Իբեր մէկ խաչ:

85ա ... Շնհատրն և իւր դուստր Մարիամն — Ա. (1) խաշուվառ:

86ա ... Ախոնց տղայքն՝ Մկրտիչն և Գրիգորն:

87ա ... Բալէն, իւր որդի Առաքէլն — ետուր մէկ առլազ ծածկոց սեղանի, մէկ էլ քաթան բեմի ծածկոց:

88ա ... Տօղմիշ — Բ. (2) շաբիհ:

88բ ... Պալապան Ավում — մէկ զուխտ մանդլէ⁷⁴ փէշքիր:

89ա ... Սուտարէնց Ամիրբօր և իւր որդի[ի] Սարգիս — Ա. (1) արծաթէ խաչ, Ա. (1) ապրիշումէ յեաղլուխ ետուր, Ա. (1) փոքր խաչ, մէկ լաւ զառբաֆ, շուրջառ, մէկ բեմի ծածկոց:

90ա ... Քասպարի տղա Արիստակէսն ու Ղարամէնց Մանուկն — Ա. (1) արծաթէ վակաս ետ:

Բաբաթ Արիստակէս — Ա. (1) եալաղատ⁷⁵ զառ եաղլուխ, Ա. (1) շապիբ, Ա. (1) շամտան:

67 պրսկ. قلم کار — նկարազարդ տպածո:

68 արաբ. كلمی — ամբողջ, բոլոր:

69 պրսկ. پنجبر — լուսամուտ:

70 արաբ. مفتول — ոլորած մետաղալար:

71 պրսկ. جام — ապակի բառից, լուսամուտները ապակեպատել:

72 պրսկ. سيم — արծաթ բառից, արծաթաթել բանվածք:

73 արաբ. زناار — գոտի, որ օգտագործում էին քահանաները:

74 արաբ. متديل — մեծ թաշկինակ, «մանզլէ փեշկիր» — մեծ թաշկինակից կարած գոգնոց:

75 թրք. يالاقات — փալուն ծալքերով:

91ա ... Մուրատխան — Ա. (1) եպիս⁷⁶ բարձ, Բ. (2) լաւ կարպետ: Եւ իւր որդի Ազիզբէկն — մէկ քեմխայ բեմի ծածկոց, մէկ ժամի ուրար, մէկ ջուխտ բազբան, մէկ լաւ արծաթէ կանթեղ:

92ա ... Մուրատխանէնց Առաքելն:

93ա ... Ղարիպճանի տղա Հայրապետն:

94ա ... էվազիկն:

94բ ... Սաւանդուկն — իւր տան առաջնն տնատեղ կէր մինչև Ճրակին Արամիին կալն, ետուր Սբ. Յակոբայ եկեղեցուն վախուպ, մէկ զառ եաղլուխ: Իւր հարան խսապետն և ճանիեարի դուստր Ազամաթն — ջոխտն առին մէկ լաւ զառու պարանոց. Աստուած իւրանքն օրհնէ:

95ա ... Արզանոնց մահրասի Քաթէոսն — Ա. (1) փոքր թաքնաման⁷⁷:

95բ ... Հայրապետէնց Աղամիր — մէկ լաւ կոսղած Աւետարան.

... Ամիրղուունց Ովանէսի որդի Յուսէփն — բերաւ Սբ. Յակոբին մէկ փառաւոր քսի իւր սուրմայ մահրամովն և մաղզմանովն, Բ. (2) ջարմակ մոմտան:

96ա ... Սաֆարէնց Մեսրոպն:

97ա ... Սաֆարէնց Մկրտիչն — մէկ լաւ քաշած փէշկիր:

97բ ... Տրդատէնց Պօղոս — Ա (1) արծաթէ խաչ:

98ա ... Քսուրկէնց պառան և Միքայէլն — Բ. (2) շապիկ, մէկ զանգակ:

98բ ... Երիջանէնց Գուրիազն — մէկ լաւ խաչ իւր պատոնդանովն:

99ա ... Ղարամանէնց Գրիգոր — Ա. (1) Բուրսու կարպետ: Եւ Ղարամանի կին Մարինոսն — մէկ լավ խաչվառ: Գրիգորի կին Շահասանամն — մէկ ջոխտ սուրմայ փէշկիր, մէկ սուրմայեախայ շապիկ, մէկ էլ ջարմակ փէշկիր:

100ա ... Արամիէնց Քաթէոսն և իւր որդի Անանիայն — Ա. (1) մեծ խաչ ետ:

101ա ... Ղարամանէնց Մանուկն:

102ա ... Փօլաթէնց Գրիգոր

102բ ... Աթաբէկէնց Յովսէփն, հայր Հայրապետն — Ա. (1) քաշած ծածկոց ետուն:

... Մատուրն — ետուր մէկ լաւ կանթեղի ճառ, մէկ ջառ⁷⁸, մէկ ուրար:

103ա ... Մարտիկն:

104ա ... Բէհնամէնց Յովսէփն — Ա. (1) սուրմայքաշ զունար ետ եկեղեցւոյն, Ա. (1) խորհրդայտեոր:

104բ ... Արղունէնց Յովսէփի որդի Մատուրն — մէկ լաւ արծաթէ կանթեղ, Ա. (1) լաւ պտպտոն եաղլուխ, Ա. (1) զառպապ ուրար, մէկ լաւ ճառ կանթեղով:

105ա ... Աթաբէկէնց Պետրոսն — Բ. (2) բատայի⁷⁹, Ա. (1) կարպետ, Ա. (1) պզտիկ շամդան, Բ. (2) մախազ, Ա. (1) թաւթալ⁸⁰ շապիկ մէկ մեծ խաչկալ, Ա. (1) զառ սկու մահրամայ:

106ա ... Միրիջանի տղա Աւետիքն — մէկ լաւ ջահ, մէկ [թօ]փ շարիթ:

76 հավանաբար թրք. (عی)ایلی — գզած բուրդ:

77 պրսկ. کت زنده — թաղիքե փոքրիկ կապերտ:

78 հավանաբար՝ ջահ:

79 թերևս պրսկ. բաղիա բառի աղավաղված ձևն է, պղնձե կամ կավե ջրաման:

80 պրսկ. کتاف — լավ զտված բամբակյա գործվածք:

107ա ... Վարդազարի տղա Գրիգոր և Սարքիսն և Բագարատն — մէկ սուրմաքաշ մահրամայ ևտ Սբ. Յակոբայ:

... Բագարատն — մէկ ջուխտ ծնծղայք, մէկ զանկակ, ատենի Աւետարանի արծաթէ խաչն իւր հաշիւան⁸¹ կոսողել ետուր:

108ա ... Շահիկէնց տղայքն — Գ. (3) արծաթէ կանթեղ ԲՃԿ (260) մսխալայ, թիվն ՌՃԺԳ (1664):

109ա ... Փօլաթէնց էվազն:

110ա ... Վարդան, Վարդանէնց տղա Ղասուժ — Ա. (1) խաչ ևտ Սբ. Յակոբայ:

111ա ... Ընրմեցոնց Պետրոսն:

111բ ... Մուրադխանի տղա Ազիզբէկն — Ա. (1) քիմխա ծածկոց, Ա. (1) ժամի ուրար, Ա. (1) ջուխտ բաղբան⁸²:

... Արզանունց Ոհանի որդի Աւետիքն — մէկ լաւ եկեղեցոյ դռան զափալղ⁸³ եբեր:

112ա ... Արզանունց Աւետիքն, Մուրատխանն և իւրեանց եղբայր Թաթէրոսն — Գ. (3) զառ եաղլուխ, Ա. (1) արծաթէ բուրվառ, Ա. (1) հաղորդատուփ, Ա. (1) շիթ վարագուր, Բ. (2) խաչվառի պատկեր, Բ. (2) զառ կարմիր սաղաւարդ, Ա. (1) զառ փէշկիր, Ա. (1) Աւետարան ևտ, մէկ սաջաղի⁸⁴:

112բ ... Տօղմիշէնց էվազն:

... Երանի — մէկ ժամի պարանոց, մէկ ջուխտ պազպան, մէկ ուրար:

113ա ... Փիրումն:

113բ ... Ավրամբէկն — Բ. (2) եաղլուխ, խաչկալի տախտակն վարաղով⁸⁵ շէնէց: Ավրանբէկի մայր Սօփիկն — Լուսաւորչի խաչկալն, իւր սեղանի վարաքուրն, Բ. (2) լաւ կոսղած Աւետարան, մէկ ժամարարի դունար, մէկ լաւ սկու սուրմայ մահրամայ. Աստուած ինքն օրհնէ:

114ա ... Շատիբէկէնց Գրիգոր — Գերեզմանուտի ճրակէնց կալին զլիսի կալին կէսն իւրան էր, կէսն Քամրազէնց, իւր ըռասաթն⁸⁶ ետուր զերեզմանի վախոսպ:

... Քաջալ Ճանոնց Անտոն — Ա. (1) զառ եաղլուխ:

114բ ... Շահիբարէնց Մատուրն և Մկրտիչն:

115ա ... Թանխսէնց Մատուրն, Ետգարն, Թանէսն — Ա. (1) խաչ, Ա. (1) ծնծղայք, Ա. (1) փէշկիր, Ա. (1) փոքրիկ խաչ, Թանխսն Ա. (1) Մաշտոց ետուն Սբ. Յակոբին:

115բ ... Օլբէնց Սարգիսն — մէկ պղ[ն]ձէ քշոց:

116ա ... Ետգարն և իւր որդի Յակոբն — Ա. (1) Դիզազա կարպետ ... Յակոբի որդիք Ոհան և Փռանկուլն — մէկ լաւ քիմխայ շուրջառ:

... սոցայ մայր Անիկն — Սբ. Յակոբի սեղանի խաչկալ պատկերն:

81 արաբ. حاشية — լուսանցք, շուրջ, եզր:

82 Այս տողը փորձել են չնջել:

83 Բրբ. قباليق — փականք:

84 Բրբ. ساج اياغی — կաթնայի (տապակ) ետտանի պատվանդան:

85 արաբ. فرق — Թերթ՝ մետաղյա, հավանաբար արծաթե:

86 պրսկ. — رست — բաժին:

117ա ... Անտոն — Բ. (2) շամտան եբեր, (2) շապիք: Իւրեանց Առաքէլն — մէկ խաշ, մէկ սկու մահրամայ, մէկ լաւ զոնար, մէկ լաւ ճառ, Գ. (3) փռանկի ծաղիկ: Իւրան Գրիգորի կին — երեստ մէկ ջուխտ փէշկիր, մին պլեխտուն⁸⁷ պարձ:

117բ ... Առաքէլի զուտը Համազն — մէկ զառու սկու տակի ձաձկոց, Բ. (2) ժամի փոքր խաշվառ, մէկ մասնատուպ:

118ա ... Մուղամէնց:

118բ ... Վարդաշահանց Զաքարի որդիք Սարգիսն և Փօլաթն — մէկ զառբաբ շուրշառ⁸⁸:

119ա ... Շահվելոնց Թաթոսն — մին լաւ կորփիրայ, մին լաւ զուֆլ⁸⁹:

120ա ... Շահվելոնց Յովանէսն և Թոռոնք՝ Եսաւն, Աւուսն — տվին Բ. (2) սկու մահրամայ, մէկ Աւետարան խաշովն, մէկ սկու սուրմայ մահրամայ:

121ա ... Բէկիրաբէնց Սարգիսն — Ա. (1) պատկեր բերաւ յեկեղեցոյն:

122ա ... Տէր-Բարդուղիմէոսն և իւր Թոռն Խաչումն — ետուր մէկ արձաթէ աղանի:

123ա ... Աթաճան, իւր տղա Երանի — Ա. (1) պատկեր ետուն Սբ. [Յակոբայ]:

124ա ... Երիշանն:

125ա ... Թանխսէնց Գրիգորն — մէկ մեծ պատկեր⁹⁰ ետուր, Ա. (1) Տօնացոյց ետուր:

... Թանխսէնց Մինասն և իւր որդի Սարգիսն — ետուն մէկ լաւ կարմիր քիմխայ շուրշառ:

126ա ... Տէր-Յոհան և իւր հայր Գրիգորն — մէկ Յիսուս Որդի, մէկ Զայնաւոր գիրք, մէկ գիրքակալի շապիկ, Բ. (2) զանգակ:

127ա ... Փշրկէնց Աթանեայն — Ա. (1) փոքր կարպետ, Ա. (1) շաբիք:

128ա ... Նասիպէնց Յոհանն — մէկ փոքրիկ արծաթէ խաշ ետուր:

... Իւրանց որդիքն և Թոռոնքն և Նասիպ և Շիրինն — մէկ զառպապ շուրշառ:

129ա ... Ճարակ մահրասի Հայրապետն — Ա. (1) պատկեր, Ա. (1) զանկակ, Ա. (1) կանթեղի ջահ, (1) Բուրսու կարպետ:

... Ճարակ Օվանէսի որդիք՝ Հայրապետն և իւր եղբայր էվազն — ետուն մէկ լաւ զառպաբ շուրշառ:

129բ ... Զանամիրէնց Ղազարն, Միրզէն — Ա. (1) Գիրք Գանձի ետ Սբ. Յակոբայ:

130ա ... Միրզէն — մէկ լաւ ջրբին⁹¹ ետուր, Մազրումն⁹² է:

131ա ... Ղափանցի մահրասի Ասլանն:

132ա ... Իլանչի Կիրակոսն:

87 հավանաբար սրակ. نلابدو — կլապտուն կամ կլապիտոն բռն է, որ նշանակում է մետաքսե գուլնզգույն թելերով բանվածք:

88 ջնջված:

89 արաբ. قفل — կողպեք:

90 ջնջված:

91 ջրարբին, ոռոգվող հողամաս:

92 արաբ. مزرعة — ագարակ բառից, այսինքն գյուղի հանդում:

133ա ... Գուշտոնց տղայքն՝ Մարգարէն, Կարապետն — մէկ զուկուս⁹³, էթ (7000) դիան ետուր, Ասլանէնց կալն իառ, վախմ ետուր Գերեզմաներին:

134ա ... Ասլանէնց Աւետիքն — մէկ զառ եաղլուխ, և տղայքն ետուն մէկ լավ խաչվառ:

... Հայրապետն — տվին մէկ լաւ ձեռաց խաչ, մէկ խորհրդանոցի ծածկոց:

135ա ... Պզտիկ իրիցէնց Անանիայն — Ա. (1) ժամարարի զունար տաւ:

136ա ... Պտալէնց Յակոբն — Ա. (1) արծաթէ կանթեղ, և. (30) մսխալ:

136բ ... Նաւասարդ — մէկ արծաթէ խաչ, մէկ պըղընձէ ձագար, մէկ խալիշայ:

137ա ... Շահիճանն և իւր որդիքն՝ Պետրոսն և Աթանիայն — Ա. (1) արծաթէ խաչ ետուլն] Սբ. Յակոբ[այ]:

138ա ... Եհանէսն — Ա. (1) խաչ, և տղայքն ետուն մէկ շաբիք: Խաչատուրի կին Ղանուսն — ետուր մէկ շոփստ փէշկիր:

138բ ... Նրումէնց Պետրոսին — Ա. (1) պղնձէ իբրուզ, Ա. (1) շամդան ետուր Սբ. Յակոբ[այ]:

139ա ... Գուլնադարէնց Հայրապետն և իւր որդի Սահակն, որ մեռաւ, ասկականն ինչ որ ունէր. Շինին ձոր մէկ բաղշայ, Գլուսուսն մէկ պատառ ճրպիւն⁹⁴, թէ պղինք, թէ շոր տուին եկեղեցուն վախուպ:

140ա ... Կոստանդն:

141ա ... Բուլուլի տղա:

142ա ... Փառակեցոնց Փիլիպոսն:

143ա ... Բանահ⁹⁵ Աւետիքն, Պողոս — Ա. (1) զառ շուրջառ ետ:

144ա ... Քոչբէկէնց Մատուր:

145ա ... Քոչբէկէնց Առաքէլն — մէկ լավ սուրմայ ժամարարի զունար եբեր:

146ա ... Պողոսն:

147ա ... Գալուստէնց տղա Պիտիկն:

147բ ... Փանաշուց Կարապետն — ետուր Սբ. Յակոբայ Գ. (4) տարայի⁹⁶ շապիք:

... Աւետիքն և իւր կին Խօստով — ետուն մէկ սուրմայ պարանոց՝ ժամարարի, մէկ քաթպի⁹⁷ ծախեցին, եկեղեցուն կտերն խարջեցին:

148ա ... Ճաքէնց Կիրակոսն, դուստրն — Ա. (1) փէշկիր ետ:

... Ճակէնց Դաւիթ — իտուր Սբ. Յակոբին մէկ լաւ Աւետարան իւր խաչովն և մահրամովն:

149ա ... Ամիրեաթէնց Հայրապետն:

150ա ... Քօռ Տէրունէնց տղայքն:

151ա ... Միրումէնց Ֆրանկուլն — մէկ պղընձէ փուրվառ եբեր:

93 թրք. گيوگوم — պղնձե սափոր:

94 ջրարբին, ոռոգվող հողամաս:

95 արաբ. بنا — շինարար վարպետ, որմնադիր:

96 պրսկ. دارائی — բամբակախառն մետաքսյա գործվածք:

97 արաբ. كاتبي — կարճ թեքով հագուստի տեսակ:

- 152ա ... Փիրշապանի աղջիկ Աղատն — Ա. (1) սաբաթ⁹⁸ եբեր:
- 153ա ... Կէսատ Հայրապետն⁹⁹, Մի[ր]դէն:
- 154ա ... Փիրսոթանէնց տղա Մովսէսն — Ա. (1) ջուխտ կլէկէ մեծ ատենի շամտան, Ա. (1) ջուխտ էլ փոքր շամտան, Ա. (1) կլէկէ իպրուղ իւր սալիփշովն, Բ. (2) քահարիբարէ¹⁰⁰ խաշ՝ արծաթապատ, քաշն՝ ԽԾ. (45) մսխալ, մէկն իւր հայր Ղուկասիսին յիշատակ, մէկն՝ Խաթունջանին. Աստուած ողորմի:
- 154բ ... Վարդան — մին սկուհ մալճըմայ, Ա. (1) լաւ սկիհ, իւր մաղղմանովն, մէկ էլ շաբիբ:
- 155ա ... Բաշմաղչոնց Սարգսի տղա¹⁰¹, Ա. (1) զառ ուրար ետուր Սբ. Յակոբին:
- ... Ք[ո]լիբէկէնց Մինասն — մէկ շուրջառ:
- 156ա ... Քամալ և որդիք՝ Աւաքն, Ոհանն, Կարապետն — տվին մէկ լաւ վարաքուր, եկեղեցուն մեծ դուռն շինեցին, Ժ. (10) թուման խարջ: Ոհանի որդի Վալաթն — եբեր մէկ լաւ շուրջառ:
- 157բ ... Տէրունէնց պառաւ Խսապետն — մէկ սաղաւարդ, մէկ շապիկ, վարաքուրի շանպուր շինելին երկաթ էլ ղվաւ:
- 158բ ... Աստուած ժողովուրդն շէն պահի, մէկ լաւ զառպապ շուրջառ և մէկ արծաթէ թակ առին, Աստուած իւրանքն օրհնէ:
- 159ա ... Զինարէնց Մանուկն — Ա. (1) միլաթ¹⁰² շուրջառ ետ Սբ. Յակոբին, Ա. (1) արծաթէ վակաս, Ա. (1) վարաքուր, Բ. (2) շապիկ: Եւ իւր որդի Ատոմն, — մին սիպտակ զառ շուրջառ:
- ... իւրանց Պունեաթն — մէկ դումաշ¹⁰³ շապիկ:
Четыре другие церкви, подчиненные упомянутому выше монастырю, должны весь урожай, получаемый с находящихся в их владении в качестве вакфа и обрабатываемых своими средствами земель, на том же основании тратить на посетителей, пребывающих там монахов и бедствующих черноголовых³⁰.

Не следует требовать ресма также с принадлежащих им [в качестве] вакфа 500 голов овец.

За исключением трудоспособных, не требовать джизье³¹, испендже³² и иных податей (русумат) с нетрудоспособных и не могущих заработать [деньги] жителей упомянутых церквей, а также с неимущих монахов, черноголовых и младшего [духовенства]. Не требовать ушра и ресма и с двух маслобоен и с двух мельниц дингов³³. Не позволять никому вмешиваться в [дела об] имуществе умерших в [этих] церквах без наследника.

Уважать их право на "муафство"³⁴ [при] условии, что они будут ежегодно платить в ереванскую казну 350 курушей, которые во время владычества персов они давали ереванскому хану.

На основании данного им верховного и священнейшего приказа они просили указ о том, чтобы, вопреки изложенному выше,

их не притесняли и не совершали посягательства на них. Вот да-
руется и издается [сей указ] о том, что на основании священно-
го приказа, после уплаты в ереванскую казну 350 курушей, ува-
жалось их "муафство", и что вопреки шар'у³⁵, закону и августейшему указу, их не притесняли и не совершали посягательства
[на них].

Пусть поступают, как сказано в августейшем приказе, и опа-
саются, избегают несоблюдения указа.

17 мухаррама 1139 г. (14 сентября 1726 г.)

ПРИМЕЧАНИЯ

1 Симеон Ереванци, "Джамбр" М., 1958 (далее -
Джамбр), с. 283.

2 Там же, с. 324.

3 См.: Католикосский диван, папка 1 г, док. 448, 479: **بيسقبوس
مقاطعهسى دفترلىرى**

4 Католикосский диван, папка 1 г, док. 439.

5 Джамбр, с. 312.

6 Католикосский диван, папка 1 д, док. 479.

7 Католикосский диван, папка 1 д, док. 480.

8 Католикосский диван, папка 1 г, док. 308, 309, 310, 316:

ممالك ايراندك فتح و تسخير و ضايم ممالك محرومة السالك قلنان

9 Джамбр, с. 311.

10 Католикосский диван, папка 1 г, док. 293, 316, 320, 332.

11 Подробнее об этих налоговых реестрах см.: А. Д. Папаян, Турецкие налоговые реестры села Вагаршапат 1725-1728 гг. (на арм. яз.). - "Вестник Матенадарана". № 5. Ер., 1960, с. 431-464.

12 Ö.L. Varkan. XV. ve XVI. nci asırlarda Osmanlı İmparatorluğunda ziraat ekonominin hukukî ve malî esasları. Cild 1. Kanunlar. İstanbul, 1945, с. 195-197.

13 ЦГИА АрмССР, ф. 52, д. 52, док. 1.

14 Персидские документы Матенадарана. 1. Указы. Вып. 1. Сост. А. Д. Папаян. Ер., 1956, док. 1, 2, 4.

15 Католикосский диван, папка 1 г, док. 298: **گردد که بر موجب
بيورلدى شريف قديمدن نه گونه ويره گمشلر ايسه اولمنوال اوزره ويردوب
خلاف شرع و خلاف بيورلدى شريف حرکت ايتمامك اوزره تنبيه اکيد ايليمسز**

16 Католикосский диван, папка 1 г, док. 304, 339, 340, 344 и т.д.

17 Католикосский диван, папка 1 г, док. 304, 344: **حرق مزبورک
هوئى جمله معرفتيله تنصيف اولنوب نصفى اوچ کلیسايه و نصف اخرى يگرى
پاره قريه يه ويريلوب نزاغلىرى قطع اولندى**

18 Католикосский диван, папка 1 г, док. 324.

19 Католикосский диван, папка 1 г, док. 308, 310, 311, 325, 343, 347 и т.д.

20 Католикосский диван, папка 1 г, док. 325. См. об этом также: А. Д. Папаян. Роль армян в производстве шелка в Турции и договор, заключенный в 1729 г. в Тавризе. - "Вестник Матенадарана". № 9. Ер., 1969, с. 241-253.

21 Судья, стоявший во главе административно-судебного округа (каза). См. терминологический комментарий в кн.: Аграрный строй Осман-

ской империи XV—XVII вв. Документы и материалы. Составл., пер. и коммент. А.С.Тверитиновой. М., 1963. Объяснение турецких терминов, встречающихся в нашем документе, в основном дается нами по указанной книге.

22 Чиновник государственного казначейства, ведавший той или иной статьей дохода.

23 Административная единица, входящая в состав вилайета.

24 Судебно-административная единица, являющаяся местом пребывания кази, т.е. судьи.

25 Движимое или недвижимое имущество, доходы с которого предназначались на религиозные или благотворительные цели.

26 Имеется в виду село Вагаршапат, в котором находится Эчмиадзинский монастырь, именуемый турками Учкилиса.

27 Мера зерна, в Араратских землях равная 48 кг.

28 "Десятина", основной подоходный налог с крестьян-райатов.

29 Общее название податей, взимаемых с населения в пользу государства и чиновничества главным образом наличными.

30 Чернецы, безбрачное духовенство, монахи.

31 Подушный налог, взимаемый с немусульманского мужского населения дифференцированно, согласно имущественной принадлежности налогоплательщика.

32 Подушный налог с немусульманского мужского населения, взимаемый вне зависимости от имущественного и семейного состояния в количестве 24 акче.

33 Толчая для очистки риса.

34 Налоговый иммунитет, освобождение от государственных налогов, иногда частично.

35 Здесь имеется в виду мусульманское законодательство.

ԱՅԳԻՆԵՐՆ ՈՒ ԱՅԳԵՏԵՂԵՐԸ ԸՍՏ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՊԱՐՍԿԵՐԵՆ
ԿԱՎԱԾԱԳՐԵՐԻ

ՀԱԿՈՒՔ ՓԱՓԱԶՅԱՆ

Գյուղական համայնքի տնօրինությանը ենթակա մշակելի հողային տարածությունների, համայնքի անդամ առանձին տնտեսությունների միջև կատարվող բաշխումների ու վերաբաշխումների և դրանց նկատմամբ սեփականատիրական իրավունքի գիտական ուսումնասիրության ուղղությամբ դեռևս շոշափելի արդյունքներ չեն արձանագրված: XIII—XIV դդ. Իրանի հողագործության և ագրարային հարաբերությունների պատմությանը նվիրված ծավալուն աշխատության մեջ բազմավաստակ արևելագետ Ի. Պետրուշևսկին շատ շնչին տեղ է հատկացրել այդ հարցերի լուսաբանմանը: Այդուհանդերձ, աղբյուրների համակողմանի ուսումնասիրությունը նրան բերել է այն եզրակացության, որ քանի դեռ գյուղական համայնքը շարունակել է գոյատևել, մշակելի հողերը որոշ չափով ենթակա են եղել վերաբաժանման՝ նույն համայնքում ընդգրկված առանձին տնտեսությունների միջև: Ինչ վերաբերում է գյուղացիների տներին, տնամերձ տնտեսությանը, պտղատու և խաղողի այգիներին, ապա Ի. Պետրուշևսկու կարծիքով, «դրանք համարվել են գյուղացիների անձնական սեփականությունը և որոշ դեպքերում դիտվել են որպես նրանց մուլբը»¹: Խոսքն այստեղ, անշուշտ, այդ հողերի օգտագործման ժառանգական սեփականության իրավունքի մասին է:

Աղբյուրներում ուշագրավ տեղեկություններ կան այն մասին, որ գյուղի ընդհանուր հողային տարածության մեջ որոշակի ոռոգվող հողակտորներ, որոնք մեծ մասամբ տրամադրված էին այգեգործությանը, սերնդից-սերունդ փոխանցվելով տվյալ ընտանիքի անդամներին, դարձել էին նրանց սեփականությունը և որպես այդպիսիք օտարվում էին ու փոխանցվում այլ սեփականատիրոջ: Առանձնապես ուշագրավ են հայերեն և պարսկերեն կալվածագրերի համարժեք տվյալները, որոնց զուգահեռ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի հստակ զաղափար կազմելու հողօգտագործման այդ ինքնատիպ բնագավառի առանձնահատկությունների մասին:

Որոշակի հողային տարածություն զբաղեցնող այգիների նկատմամբ այս կամ այն անձնավորության սեփականատիրական իրավունքները հաստատող կալվածագրերում կամ այգիների տարբեր կարգի օտարումներին վերաբերող նոտարական արձանագրություններում առաջին հերթին նշվում էր այգու տեղը և ապա նկարագրվում էին նրա շորս սահմանները: «Ջամբոտ» տեղ դրած նման վավերագրերի հիման վրա Ս. Երևանցին գրում է. «Ե Յօշական զայգի մի առնու ի գեղականացն... որոյ կողմունքն են ճանապարհն, Ուլուբեկի

¹ И. П. Петрушевский, Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV веков, М.—Л., 1960, с. 288.

այգին, Պետրոսի և Պողոսի այգիքն, որ Բուռմենց այգի ասի»²: Հ. Աբրահամյանի հրատարակած «Կալվածագրերում» հանդիպում ենք ավելի մանրամասն նկարագրությունների. «...իւր շորից հատերովն (սահմաններ), Սորայ առաջի հատն (սահման) է Մոնթէնց Ավաքի այգոյ ճանապարհն և այգին, Բ (2) հատն՝ Թամեղէնց այգին, Գ (3) հատն՝ Փանոսի այգին, Դ (4) հատն՝ էլի ջատահն (հասարակաց մայրուղի), որ և կատարեալ եղև Դ (4) կողմի սարհատներն (սահմանագրուիսներ) թամամ»³: Ռաշիդ-էդ-գինի կողմից հիշերթի 709 (1309—1310) թ., իր հիմնադրած կրոնական, կրթական և բարեգործական հաստատություններին նվիրված այգիները ևս թվարկված են շորս սահմանների մանրամասն նկարագրությամբ: «Կասըմի» կողմող այգու մասին, օրինակ, ասված է, որ այն «երկու կողմից սահմանակից է Մազա կոշվող առվին ու ճանապարհին, իսկ մյուս երկու կողմից՝ Սեյիդ Շարաֆ-էդ-գին Ալի բին-Մուրթուզայի այգուն, Կաջղաղ բին-Աբդուլլա Կութբիի ժառանգների այգուն և ճանապարհին»⁴:

Պարսկերեն կալվածագրերում հաճախ շորս սահմանները թվարկելիս նշվում են նաև կողմերը: Նախիջևանում 1738 թ. գրված մի կալվածագրում վաճառվող այգու սահմանները թվարկելիս ասված է, որ «նրա շորս սահմաններն են, արևելքից՝ Ցարամիշ կոշվող այգին, արևմուտքից՝ զիմմի խոջա-բեկի այգին ու փողոցը, հարավից՝ Բիլկան գյուղի ճանապարհը, հյուսիսից՝ գնորդի այգին»⁵: Առուծախի և այլ կարգի օտարումների ենթարկվող այգիների սահմանների նման ճշգրտված նկարագրությունն ավելի բնորոշ է վաղ շրջանի կալվածագրերին, ինչպիսիք են, օրինակ, XIII—XIV դդ. Բուխարայի կալվածագրերը, որոնց մեջ կան այսպիսի նկարագրություններ. «առաջին՝ արեվելյան, սահմանը միացած է մի այգու, որը հիշյալ Դուլադայի սեփական մուլքն է, երկրորդ՝ հյուսիսային, սահմանը միացած է նույն, վերոհիշյալ Դուլադայի այգուն և տանը պատկանող ճանապարհին, երրորդ՝ արևմտյան, սահմանը միացած է հասարակաց ճանապարհին և այս գյուղի ջրատարին, շորորդ՝ հարավային, սահմանը միացած է այն ճանապարհին, որով գյուղից գնում են դեպի գյուղի այգիները և որին կպած է նաև [այգու] ուղին և մուտքը»⁶:

Չորս կողմից սահմանագծված յուրաքանչյուր այգի դիտվում էր որպես մեկ միավոր և անվանվում «մեկ կտոր»—պրսկ. «եք կաթ'ա» (یکقطعه): Իսկ եթե այգին պարսպապատված էր և ուներ դուռ, ասում էին «մեկ դուռ այգի»—պրսկ. «եք դար բաղ» (یکدرباغ) կամ «եք բաբ» (یکباب)⁷:

² Սիմեոն Երևանցի, Զամբո, Վաղարշապատ, 1873, էջ 173:

³ «Կալվածագրեր», կազմեց՝ Հ. Աբրահամյան, պրակ 1, Երևան, 1941, էջ 77 (այսուհետև՝ «Կալվածագրեր»):

⁴ فضل الله رشيد الدين ، وفقنامه ربع رشیدی تهران ، ۱۳۵۰ (պրսկ. բնագրի նմանահանություն) էջ 94 (այսուհետև՝ Ռաշիդ-էդ-գին):

⁵ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան (այսուհետև՝ Կթղկ. դիվան), թղթ. 1գ, վավ. 365:

⁶ О. Д. Чехович, Бухарские документы XIV века, Ташкент, 1965, с. 74 (այսուհետև՝ «Бух. док.»).

⁷ Կթղկ. դիվան, թղթ. 1գ, վավ. 360, 362, 365, 394, 464, թղթ. 1է, վավ. 1069, 1141 և այլն. հմտ. «Զամբո», էջ 167, 177 և այլն:

Սովորական պտղատու այգիների զբաղեցրած տարածության շափի մասին կալվածագրերում նշումներ չեն հանդիպում: Բավարարվում էին միայն շորս կողմերի նկարագրությամբ: Սակայն խաղողի այգիների ընդհանուր մակերեսը շափելու տարբեր սկզբունքներ կային: Մեծ մասամբ շափի միավորը եղել է «տախտակը» — պրսկ. «թախթե» (تخت): Նախապես, հավանաբար, «տախտակ» ասելով հասկացել են խաղողի այգիներին հատուկ, որոշակի հեռավորությամբ զուգահեռ ձգվող հողի թմբաշարքերը, որոնց միջոցներն անվանվում էին «առու» (պրսկ. «ջուլ» — جوی):

Գյուղի մշակելի հողատարածությունների մեջ յուրաքանչյուր տնտեսությունը տրված այգետեղերը որոշակի մեծություն են ունեցել: Ուստի պետք է ենթադրել, որ խաղողի այգիների թմբաշարքերը ևս տվյալ վայրում որոշակի հեռավորություն պետք է ունեցած լինեն: Ամեն դեպքում, միջնադարում, ինչպես բոլոր շափ ու կշի միավորները, այնպես նաև հողի տարածքային շափերը յուրաքանչյուր վայրում տարբեր են եղել: Միավրված չենք լինի, եթե ասենք, որ Արարատյան դաշտի այգիների մեկ տախտակը և թավրիզում կամ Սպահանում, իսկ առավել ևս Բուխարայում գտնվող այգու մեկ տախտակը նույն մեծությունները չեն: Բայց որ տախտակը յուրաքանչյուր կոնկրետ վայրում որոշակի շափ է ունեցել, պարզ երևում է Վաղարշապատում գտնվող Ղևոնցի այգու՝ «Ջամբուում» տրված նկարագրությունից, որտեղ այգու տարածքը հաշվված է «եօթն տախտակ և երկու քաչ և տասն և երկու շուան»⁸: Իսկ «շվանը» — պրսկ. «թանաբ» (طناب) — հողաչափության ամենատարածված միավորն էր, որը նույնպես յուրաքանչյուր վայրում տարբեր մեծություն է ունեցել⁹:

Աղբյուրներում հանդիպում են նաև խաղողի այգիների ոչ միայն թմբաշարքերով կամ տախտակների քանակով, այլև դրանց արանքներում գոյացած «առուների» քանակով կատարված չափումներ: Սյունյաց Սուփան իշխանի 901 թ. նվիրատվական մի արձանագրության մեջ ասված է, «ետու և 5 կուղպակ ի յԱնի և 5 այգի յԵրևան և 500 առու այգի ի գիւղաքաղաքն Գառնի և 2 այգի յԵղեգիս»¹⁰: Դժվար չէ նկատել, որ այն վայրերում (Երևան և Եղեգիս), որտեղ այգիների քանակը մեծ չէ (2—5), նշված է այգիների թիվը, իսկ Գառնիում տրված է նվիրվող բոլոր այգիների առուների քանակը միասին վերցրած: Միջթմբային առուների քանակով այգիների տարածքը շափելու պրակտիկայի մասին վկայություն կա նաև Ռաշիդ-է-դ-գիսի վերոհիշյալ «Վակֆնամեում», որտեղ այլ նվիրատվությունների շարքում հիշված է նաև 700 աուլից բաղկացած «Նով-մով» (նոր որթ) կոչվող այգին¹¹: Ավելի փոքր տարածություն զբաղեցնող այգիների միջթմբային առուների քանակի մասին նշումներ հանդիպում ենք նույնիսկ XVIII դ. սկզբին գրված հայերեն կալվա-

⁸ «Ջամբու», էջ 167:

⁹ W. Hintz, Islamische Masse und Gewichte, Leiden, 1955, էջ 63—64:

¹⁰ «Պատմութիւն Նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 179:

¹¹ Ռաշիդ-է-դ-գիսի, էջ 367—368. تمامت باغ مشهور بنو مو هفتصد جوی

ծագրերում. «Մասխեցի իմ մայրենիքե բերած այգին, որ է հինգ յառու տեղ մալում», կամ «ծախսեցի իմ հայրենիք այգին մալում, որ է ութ յառու տեղ»¹²:

Տվյալներ կան նաև խաղողի այգիների տարածքն ըստ որթատունկերի քանակի որոշելու մասին: Արճեշի ս. Աստվածածին եկեղեցուն կատարված նվիրատվությունների մասին պատմող 1291 թ. մի վիմագրում, մասնավորապես ասված է, որ «ես խաչիկն զայգին ի Գողիսն Վ (3000) տակ, ետ Ատարշախն և Մեթարն զիրեանց այգին ի Գողիսն Բ (5000) տակ»¹³: Կարծում ենք, որ «տակը» պրսկ. tāk (تاک) բառն է, որ նշանակում է «որթատունկ», «խաղողի վազ»: Խոսքը, հավանաբար, խաղողի ընդարձակ այգիների մասին է, որոնք 3000—5000 տունկ են ունեցել: 1634 թ. շահ Սաֆիի հրովարտակով հաստատված, մակվեցի մելիք Կոստանտինին պատկանող 500 որթատունկից բաղկացած այգու սեփականատիրական իրավունքների մասին Դիվան-ալ սադարաթի հրապարակած վճիռը թույլ է տալիս ասելու, որ ըստ տնկերի քանակի, այգիների տարածքի որոշման պրակտիկան առկա է եղել նաև ավելի ուշ ժամանակներում¹⁴:

Այգիներին վերաբերող վավերագրերում մյուս կարևոր հանգամանքը տվյալ այգու ոռոգման հնարավորությունների հարցն է: Դրանցում հատկապես նշվում էր, թե խնդրո առարկա այգին ո՞ր առվից, աղբյուրից կամ քահրեղից, ի՞նչ պայմաններով է օգտվում: Հաճախ որոշվում էր նաև ջրի քանակը կամ ըստ հոսքի տեղումայան (շաբաթական մեկ օր, երկու օր և այլն, կամ այսքան օրը մեկ, այսքան ժամ և այլն) և կամ ըստ շարունակ հոսող ջրի տրամագծի (բաժին, բահ, թուխտ, լուլա և այլն): Ահա մի քանի օրինակ XVII—XVIII դդ. հայերեն կալվածագրերից: Աղամի որդի Հակոբն իր մայրենիք այգին վաճառում է Սիմոնի որդի Մուրեկին. «Նորահանի գահրէզէն Բ (2) զլուխ ջուր վերէն, օրն Ե շաբաթ (հինգշաբթի)»: Այվազի որդի Էվանեսն իր հայրենիք այգին վաճառում է Սարգսի որդի Ստեփանին «Մակարի քահրէզէն մեկ զլուխ ջուր վերէն, օրն Ե շաբաթ»: Մի այլ կալվածագրում ասված է. «Ետու յիշատակ վերոյիշեալ այգին ...ի միասին 2 (6) զլուխ ջրի հետ, վերոյ յիշեալ Գուզէգի կամ Քուսանի քահրէզիցն, վաղէն շաբաթ էր»¹⁵:

Թաշիդ-էգ-զինի վերոհիշյալ «Վակֆնամեում» Թավրիզի մոտ գտնվող մի այգու մասին ասված է, որ նրա մի կողմում է գտնվում ամիր Ալա-էգ-զին Տալաքիի ակունքից հոսող ջուրը, ամբողջ երեք քահրեզների հետ, որոնք նա հանել և կառուցել է հատկապես այս այգու համար¹⁶:

¹² «Կալվածագրեր», էջ 76, 77, 97:

¹³ Ն. Սարգսյան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 268—269:

¹⁴ «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտականք», պրակ Բ, կազմեց Հ. Դ. Փափազյան, Երևան, 1959, վավ. 21, يکقطعه باغ معينه موازی پانصد ساقه کروم واقع در قصبه ماکو

¹⁵ «Կալվածագրեր», էջ 76, 77, 97 և այլն, հմմտ. «Ջաբարիա Ազուլեցու օրագրությունը», Երևան, 1938, էջ 141: Ջրօգտագործման կարգի մասին, տե՛ս Հ. Փափազյան, Ջրատիրության մասին դիվանական վավերագրերը և Շահ Սաֆիի 1638 թ. հրովարտակը («Բանբեր Մատենադարանի», № 11, Երևան, 1973, էջ 223—231):

¹⁶ Թաշիդ-էգ-զին, էջ 382, بیاباری قناتی امیر علا الدین فلکی باتمامت سه کاریز که جهت این باغ انشاء واحیاء کرده است

Մատենադարանի կաթողիկոսական դիվանի պարսկերեն կալվածագրերում ևս պարտադիր կարգով նշված են այգիների ոռոգման իրավունքների մասին: Ազոուլեցի Խոջենց Մեհրաբի որդի Թումանին պատկանող այգու վաճառքին վերաբերող, հիշրեթի 1080 (1670) թ. Օրդուբադի Շար Դի հոգևոր ատյանում գրված կալվածագրում ասված է, որ վաճառվում է «ամբողջ մի կտոր խաղողի այգի, իր ջրի իրավունքով, որ ընդհանուր ութսուն ժամի վաթսուն երկու ժամն է»: Նույն կալվածագրում մի այլ այգու մասին գրված է. «քսանչորս ժամ ջրով, իր շինած աղբյուրից»¹⁷: Նախիջևանում վաճառված վերոհիշյալ այգու կալվածագրում նույնպես շեշտված է, որ խաղողի այգին վաճառվում է «իր ընդունված ջրի իրավունքի հետ միասին»¹⁸: Իսկ Դուխարդանում գտնվող էջմիածնապատկան երկու այգիների վերաբերյալ հիշրեթի 1148 (1735) թ. Նադիր շահին ներկայացված խնդրագրի և վերջինիս հրամանագրի մեջ ընդգծված է, որ այգիները իրենց որոշյալ ջրաբաժիններն ունեն¹⁹:

Բուխարայի XIII—XIV դդ. կալվածագրերում ևս անխտիր անվանված է այն առուն, որից հոսող ջրերով պետք է ոռոգվի խնդրո առարկա այգին. «Շեյխզադե Մուհին-էդ-դինի այգին, որ ոռոգվում է Ֆաշուն [գյուղի] առվից», կամ «մյուսը մի այգի է, որ հիշյալ վակիֆի (նվիրողի) սեփականությունն է և ոռոգվում է նույն Ֆարաբան [գյուղի] առվից», կամ «այգի, որ Մուրադ-շահն է մշակում և ոռոգվում է Շարիբան [գյուղի] առվից» և կամ «ևս մի այգի, որ Նաջիբի որդի Յուսուֆն է մշակում և ոռոգվում է Ֆադիթասին և Շարիբան [գյուղերի] առուններից»²⁰ և այլն:

Կալվածագրերում կարևոր տեղ է զբաղեցնում խնդրո առարկա այգու ներկա վիճակի նկարագրությունը. շեհն է արդյոք թե անմշակ, ի՞նչ ծառեր կան, ի՞նչ մասերից է բաղկացած, ունի՞ արդյոք հարակից շինություններ և այլն: Այդ տեղեկությունները երբեմն լինում են շատ համառոտ, մի քանի բառով, ինչպես, օրինակ, «մեկ կտոր այգի ծառերով և որթատունկերով», կամ «Դոնիս գյուղում մի այգի իր բոլոր ծառերով», «մեկ կտոր այգի խաղողի որթերով և ծառերով, բաղկացած վեց տախտակից», «Երևանի Դարաքյանդի

¹⁷ Կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 171, تمامت و همگی یکقطعه باغ معنب مشجر باحقابه تا بعد آن که شصت و دو ساعت بوده باشد از اصل هشتادساعت . بابیست و چهار ساعت آب قناتا احدائی خود

¹⁸ Նույն տեղում, թղթ. 1գ, վավ. 365. یکقطعه باغ مشجر و معنب و مکروم مع حقایه مستمری

¹⁹ Նույն տեղում, թղթ. 1է, վավ. 1178. دو قطعه باغ و رسد آب قناتا

²⁰ „Бух. док.“, էջ 44, 60—61, 74, 75 և այլն. * * * باغ شیخ زاده معین الدین * * * آبخوار جوی فاشون . دیگر باغ است ملک واقف مذکور آبخوار از همین جوی فارکن . دیگر باغی است که بکدیوری در دست مردانشاه است آبخوار جوی شریکان . دیگر باغ است که بکدیوری در دست یوسف بن نجیب است آبخوار جوی فعیطسین و جوی شریکان

գյուղում (Ձորագյուղ) գտնվող մեկ դուռ այգի, որթերով և ծառերով», «մեկ կտոր ավեր այգի, որ նախապես ծառ ու որթատունկեր է ունեցել»²¹: Հավելյալ մանրամասներ պարունակող ձևերից են, օրինակ, «Մեկ կտոր այգի ծառերով և խաղողի տունկերով, որ գտնվում է Ուշքիլիսա (Վաղարշապատ) գյուղում, որի վեց տախտակը մշակված է, մեկ տախտակը ավեր (անմշակ)», «Ուշքիլիսայում գտնվող մեկ կտոր այգի, ծառերով և խաղողի տունկերով, բաղկացած ութ տախտակից, մեկ դուռ հնձանի հետ միասին», «Մեկ կտոր այգի խաղողի որթատունկերով և մեկ ավեր հնձան»²²:

Առավել ուշագրավ են այգիների նկարագրությունները Օ. Չելսովիչի հրատարակած՝ Շելյա Յահյա Բախարզիի 1326 թ. Բուխարայի «Վակֆնամեում»: Այստեղ մանրամասն նշվում են այգու պտղատու և անպտուղ ծառատեսակները, խաղողի որթատունկերի զբաղեցրած տախտակների քանակը, այգում ջրավազանի կամ այլ շինության առկայությունը և այլն: Հաճախ նշվում են նաև թե այգին ո՞ւմ է տրված մշակելու: Կարևոր հանգամանք է եղել նաև խնդրո առարկա այգու տվյալ տարվա բերքի նկատմամբ սեփականության իրավունքի հաստատումը, որն արտահայտվել է «այգու երես» (روى باغ) տերմինով: Ստորև բերում ենք այգիների նկարագրության մի

քանի բնորոշ օրինակներ: «Այս այգին բովանդակում է այգու երեսը (ռու-յն բաղ), մեկ ջրավազան, տարբեր պտղատու և ոչ պտղատու ծառեր և երեք տախտակ խաղողի այգի», «Մյուսը մի այգի է, որ պատկանում է վակֆ անողին (նվիրատուին), որը տվյալ վակֆի մեջ չի մտնում՝ տրված է մշակելու Մահմուդ Մա՛րաշին, և որը բովանդակում է այգու երեսը, երկու ջրավազան, տարբեր պտղատու և ոչ պտղատու ծառեր, ուռենիների պուրակ, մեկ մեծ աղավնատուն և երկու տախտակ խաղողի այգի», «Մյուսը Մահմուդ-բեկի որդիներ Մուհամմադ-բեկի և Նիբիեյի այգին է, որը ոտոզվում է Ֆաղիթասին [գյուղի] առվից և բովանդակում է այգու երեսը, մեկ ջրավազան, շորս հրապարակ բարդի, հինգ տախտակ խաղողի այգի և մեկ նուսն այգի»²³:

²¹ Կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 171, թղթ. 1գ, վավ. 395, 423, թղթ. 1է, վավ. 1069, 1141 և այլն. يکقطعه باغ معنب و مشجر و مکرفم • یکقطعه باغ معنب و مشجر • مشتمل بر شش تخته • قریه در نسله بر قطعه باغ بالتمام مشجره سیله • یکدر باغ معین و معنب مشجر واقع در دره کندی ایروان • یکقطعه باغ خراب که ایضاً قد مشجر و تاک داشته •

²² նույն տեղում, թղթ. 1գ, վավ. 373, թղթ. 1դ, վավ. 489, 483, թղթ. 1ե, վավ. 756 և այլն. باغ معنب و مشجر واقع در قریه اوج کلیسیا مشتمل بر شش تخته معمر و یک تخته خرابه • یکقطعه باغ معنب و مشجر مشتمل بر هشت تخته واقع در قریه اوج کلیسیا بایکباب هنزان • یکقطعه باغ معنب و مشجر و یکباب هنزان خرابه

²³ Sk'u «Бух. док.», էջ 41—45, 76, 79—85 և այլն. این باغ مشتمل است بر روى باغ و حوض و درختان مختلف میوه دار و غیر میوه دار و سه تخته رز • دیگر باغ است که ملک و آقى است و داخل و قى نیست و بکدیوری

րումներով ցույց է տրվում, որ «ոագ» թեև նշանակում է «խաղողի որթ», «վագ», սակայն ընդհանրապես, «ոագ» են կոչվել նաև խաղողի այգիները:

Բաղքանդենների նկարագրության մեջ տվյալ տարածքում եղած ծառերի և բուսականության, ինչպես նաև որևէ մեկի կողմից մշակվելու մասին ոչ միայն խոսք չկա, այլև հաճախ նշվում է, որ այն գտնվում է ավեր վիճակում: Հատկանշական է, որ բաղքանդեններին կից միշտ հիշված են նաև այլ հողակտորներ (զամին) և նշված, թե այդ բաղքանդեններն ու հողերը ո՞ր ջրանցքի ոռոգման սիստեմի մեջ են գտնվում: Բերենք մի քանի օրինակ. «Մի բաղքանդեն և նրան կից 16 փարե (կտո՞ր) հող, իշավաճառ Սուքման Սուֆիի ժառանգների սեփականությունը, որ հայտնի է բոլորին, ոռոգումը Ախուրբաղին և Խունբուն [գյուղերի] առվից»: «Մյուսը մի բաղքանդեն է երկու փարե հողի հետ, որ նույն, վերոհիշյալ խոջա Մուհամմադ վաքիլի սեփականությունն է, և որտեղ կա մեկ ավեր ավազան և մեկ ավեր շենք: Այս բաղքանդեի ոռոգումը ևս նույն Ֆարաքան [գյուղին] պատկանող առվից է»: «Մյուսը մի ավեր բաղքանդեն է և նրան կից վեց փարե հող, որ Կազի Արվազի ժառանգների սեփականությունն է և հայտնի է բոլորին: Սրա ոռոգումը ևս նույն Ֆարաքան [գյուղի] առվից է»²⁵:

Այսպիսով, թվարկված բաղերի և բաղքանդենների նկարագրությունների համեմատությունները պարզ ցույց են տալիս, որ վերջիններս գործող, շեն այգիներ չեն, այլ, ինչպես հաստատում է նաև բառի ստուգաբանությունը, անմշակ կամ ավեր այգետեղեր են:

Այգետեղը որոշակի հողատիրական կատեգորիա է եղել և որպես մասնատիրական հողային սեփականություն աղբյուրներում հիշվել է այլ կարգի սեփականությունների շարքում ու գոյատևել մինչև մեր օրերը: Ս. Երեվանցին, իր «Ջամբու» աշխատության 16-րդ գլուխը վերնագրել է. «Յաղագս թէ սուրբ Աթոռս զո՞րքան ունի զայգիս, զպարտէզս զայգետեղս և զայլս այսպիսիս, և ո՞ւր և ո՞րպէս, տես ի ստորեդ»²⁶: Այս գլխում թվարկված այգետեղերից են, օրինակ, 1745 թ. Հովսեփի որդի տիրացու Նիկողոսից գնված՝ Փարաքարում և Թիֆլիսում գտնվող այգետեղերը: Վերջինիս մասին նա գրում է. «Ի ՌՄԺԶ (1767) թուռն մերում Թիֆլիզցի Լօյինենց Բէժանի հանգուցեալ Սիմէօնի կողակից Խանումն, գոլով ինքն այրի և անզաակ, զիր մէկ այգետեղն, որ Թիֆլիզ, ի Տափի թաղ կոչեցեալ մահլէն ետ յիշատակ սրբոյ Աթոռոյս»²⁷: Վաղարշապատում գտնվող մի այլ այգետեղի մասին նա հետևյալ

25 „Бух. док.“, էջ 42—45, 54—57, 67. یکی باغکنده است و شانزده پاره زمین متصل وی ملک و رثه سوکمان صوفی خرفروش که جمله معلومند آبخوار جوی آخور بدین و خنبون + دیگر یکی باغکنده است باد و پاره زمین ملک همین خواجه محمد و کیل مذکور در وی یکی حوض خراب و یکی کوشک خراب آبخوار این باغکنده از همین جوی خاص فارکن + و دیگر باغکنده خراب و شش پاره زمین متصل وی که ملک و رثه این قاضی ارواح است که جمله معلومند آبخوار همین جوی فارکن +

²⁶ «Ջամբու», էջ 164:

²⁷ Նույն տեղում, էջ 185—186:

մանրամասնություններն է հաղորդում. «Ի ժամանակս Օսմանցուց ի կողմն Ղուին (այգու անուն—Չ. Փ.) այգույ տեղ մի կայր անշէն, որ էր Տէր Մկրտչի որդի Սահակին, զայն տեղին ևս էառ սուրբ Աթոռս ձեռամբ վէթիլ Ալէքսանին, յիսուն դուռուշի, և Մեսրոպը վարդապետն (որ էր գործակալ և վեթիլ ի վերայ այսպիսեաց գործոց) նա ետ տնկել որթ և այգի շինել և խառնել ի սոյն այգիս ի ՌՃՂԸ (1729) թուին մերոյ»²⁸:

Այգետեղերի և նրանց շուրջ կատարվող դանազան գործարքների մասին ուշագրավ մանրամասնություններ են գրանցված XVIII—XIX դդ. հայերեն և պարսկերեն կալվածագրերում, որոնք մեծ մասամբ խոսում են դրանց վերստին այգու վերածելու կամ զանազան պայմաններով մշակութային տալու և հասույթ ստանալու մասին: 1815 թ. Գեղարդավանքին նվիրված մի այգու սահմանների նկարագրության մեջ ասված է, օրինակ, որ «այգուս մեկ կողմն է Զանգու գետոյ բաղն, երկրորդն՝ Աշտարակու ճանապարհն, երրորդն Մուղասի բաղառեղն, որ այժմ այգի է, չորրորդն՝ դուրս քաղաքն»²⁹: Իսկ 1823 թ. գրված մի կալվածագրից իմանում ենք, որ աշտարակցիներ էվանի որդի տեր Ղազարն ու նրա եղբորորդի Մանվելը Ձորահորի կողմով վայրում գտնվող իրենց մեկ տախտակ այգետեղը նվիրել են էջմիածնի վանքին³⁰. 1766 թ. թավրիզեցի Միրզա Շաֆին էջմիածնի կաթողիկոսին առաջարկում է թավրիզում տարիներ շարունակ անմշակ մնացած վանքապատկան այգետեղը (زمین باغ), որը 100 ման ցորենի ցանքատեղ է, տարեկան այդքան ցորենի հատուցման պայմանով 99 տարով վարձով տալ իրեն, որպեսզի այն միացնելով կից գտնվող իր այգուն, ծառեր տնկի և շենացնի: Առաջարկությունն ընդունվում է և նույն թվին պայմանագիր է կնքվում³¹: Աշտարակցի վարդապարի որդի Հովսեփը 1798 թ. էջմիածնի մայր աթոռին տված պարտավորագրում գրում է. «Աշտարակցի դալլաք Վարդապարի որդի Յուէփս իմ յօժար կամաւս յանձս առի այս խամ տեղն, որ է կոչեցեալ Սաղմոսավանից այգոյ տեղ, որ շինեմ նորատունկ յայգի, որ ժամանակն, որ մասիլ (բերք) տայ կատարեալ, այն ժամանակն ի սուրբ Աթոռն մեր էջմիածնայ հետ կես բաժին անենք»³²: 1771 թ. գրված մի այլ կալվածագրում կարդում ենք. «Ես սրբոյ խորվիրապու վանից առաջնորդ Աւետիք վարդապետս, մեր Չարեքանոց կոչեցեալ այգոյ տեղն, որ ի գեօղն նորգ, ետու նորգի Ղազարի որդի Մարկոսին, այսու պայմանաւ, որ իւր բոլոր խարճովն և մասրաֆովն նորապէս այգի և ծառ տնկեսցէ ի նմա, յորժամ պտուղն հասանիցի և այգի շինեսցի, այգույ կէսն Սրբոյ խորվիրապու վանիցն լինիցի և կէսն վերոյ յիշեալ Մարկոսինն եղիցի, որքան այգին շէն մնացէ և պտուղ բերցէ, և ի միասին, ըստ օրինի հարակաշի զխարճն հոգասցուք և զպտուղն կիսեսցուք, իսկ եթէ չկարիցէ թամամ և կատարեալ այգի շինել, վերստին բոլոր այգետեղն Սրբոյ խորվիրապու վանիցն է և եղիցի»³³: Պարզ է, ուրեմն, որ այգետեղերը որոշակի ոռոգման հնարավորություն ունեցող այն-

28 նույն տեղում, էջ 167:

29 «Կալվածագրեր», էջ 102:

30 նույն տեղում, էջ 104:

31 Կթղվ. գիվան, թղթ. 1դ, վավ. 457, հմմտ. «Ջամբո», էջ 185:

32 «Կալվածագրեր», էջ 100:

33 նույն տեղում, էջ 92:

պիսի հողամասեր էին, որոնք կարելի էր մշակել և այգի գցել: Դրա համար էլ ամենուրեք շեշտված է, թե այն ո՞ր ջրանցքի ոռոգման սխտեմի մեջ է գտնվում: Սակայն, ինչպես որ այգետեղերը մշակվելով վերածվում էին այգու, այնպես էլ տարբեր պատճառներով անխնամ թողնված, լքյալ այգիներն ավերվելով դառնում էին այգետեղեր: Այս տեսակետից առավել հատկանշական է Յահյա Բախարզիի «Վակֆնամեն»: Այդ վավերագրի ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սեյֆ-էդ-դին Բախարզիի դամբարան-մենաստանին նվիրվող Բուխարայի շրջակա գյուղերում լքյալ և անմշակ տարածություններն ու բաղբանդները մեծ թիվ են կազմել: Եղել են նույնիսկ ամբողջապես ավեր վիճակում գտնվող գյուղեր, ինչպես, օրինակ, Ուշմիուն գյուղը, որը հետևյալ կերպ է նկարագրված. «[Վակֆ է տրվում] նաև ամբողջ Ուշմիուն գյուղը, որը Բուխարային ենթակա գյուղերից է և ոռոգվում է նովխաս [գյուղին] և նույն Ուշմիուն [գյուղին] պատկանող առուներից, իր բոլոր դաստակերտներով և հանդակներով: Դաստակերտները մի բարձր բլրի [վրա են], որն այժմ ավերակ է, իսկ հնում նրա վրա շինություններ են եղել. մզկիթ, շնքեր, պահեստատներ և հողագործների տներ: Այժմ, սակայն, ամբողջ ամայի տարածության է վերածվել: Իսկ հանդակները ավեր բաղբանդներ են և մեկ շեն աղավնատուն: [Գյուղի] հողերը շատ են և հնարավոր չէ դրանք թվարկել՝ շատ լինելու և սահմանանիշերի անհետացման պատճառով»³⁴:

Անդրադառնալով այս և այլ գյուղերի ավերածության հանգամանքներին, Օ. Չեխովիչը գրել է. «Այս բոլորը, ըստ երևույթին, մոնղոլական արշավանքների և խաների միջև երկպառակտչական պատերազմների հետևանքով առաջացած սարսափելի ավերածությունների հետքերն են: Չէ որ Բուխարայի վերջին ավերումը մոնղոլների կողմից տեղի է ունեցել 1316 թ., այսինքն ներկա փաստաթղթի կազմվելուց ընդամենը տասը տարի առաջ»³⁵: Այստեղից էլ նա «քանդեն» դիտել է որպես «քանդան» (փորել, քանդել, արմատախիլ անել) բայի հարակատար դերբայ և «բաղբանդեն» պայմանակետերն թարգմանել է «выкорчеванный сад»: Սակայն 1979 թ. լույս տեսած «Բուխարայի XVIII դ. վակֆի» թարգմանության մեջ, ըստ երևույթին իր հեղինակակիցների (Ա. Արենդս և Ա. Խալիդով) խորհրդով, հարկադրված է եղել վերանայել այն և այդ բնագրում հանդիպած «բաղբանդենները» թողնել առանց թարգմանության: Այս առթիվ տրված ծանոթագրության մեջ փորձ է արված ստուգա-

³⁴ „Бух. док.“, էջ 46: همگی دیه اشمیون را که از دیهها بخارا است از عمل در آبخورد جوی نوخس و جوی خاص این اشمیون باهمگی عقرات و ضیاعات وی اما عقرات وی یکی تل است عالی که اکنون خراب است و در قدیم بروی عمارات بوده است از مسجد و سراپها و انبارخانهها و خانها کدیوران و اکنون جمله ساحات شده است و اما ضیاعات وی باغکندها عقرات است و یکی کبوترخانه آبادان وزمینها بسیار که در عدد نمی آید بسبب کثرت و اندراس نمرزهای وی

³⁵ Նույն տեղում, էջ 14: Առաջաբանում ընդգծված է նաև, որ «Վակֆնամեում» արժեքավոր տվյալներ կան ավերածությունների հետևանքով լքված ու կորցացման մատնված հողերի ու այգետեղերի, «Վակֆնամեն» շարագրմանը նախորդող տարիներին վերստին մշակման ու ծառատնկումների, ինչպես նաև մշակման ձևերի ու պայմանների մասին:

յակոչում է Նորադուզի «Հազախաչի» 1225 թ. արձանագրության մեջ հիշատակված «փասիլ» բառը, որը հմուտ վիմագրագետ Ս. Ավագյանի ենթադրությամբ նշանակում է ամբարտակ, իսկ ըստ Պ. Մուրադյանի՝ ջրամբար, և քանի որ զուգահեռ հիշված է նաև «խաղակ» (խանդակ) բառը, ապա դա թույլ է տալիս խանդակը հասկանալ որպես ոռոգման նպատակով փորված առու: Եվ արդ, քանի որ «բաղ» նշանակում է այգի, իսկ «քանդե» նշանակում է առու, ապա այդ երկու բառերի միացումից Պ. Մուրադյանը ստանում է «առու-այգի» տերմինը, որն իբր նշանակում է «միջմարզային առուներ ունեցող այգի»³⁹: Այնուհետև «մեկնաբանելով» այս նորաստեղծ տերմինը, հոդվածագիրը հայտարարում է, թե «բաղքանդեն սովորական բաղից-այգուց տարբերվում է իր միջշարքային, միջմարզային ոռոգման սխեմով»⁴⁰: Իր այս «թեզը» հաստատելու համար նա նույնիսկ գտել է այդ տերմինի հայերեն համարժեքն ու Սյունյաց Սուփան իշխանի 901 թ. մեզ ծանոթ նվիրատվական արձանագրության «ետու Շ (500) առու այգի ի գիւղաքաղաքն Գառնի» հատվածից «առու» և «այգի» բառերի արանքում մի գծիկ դնելով ստացել՝ «առու-այգի» ինքնակերտ տերմինը⁴¹:

Բանասեր Պ. Մուրադյանը կարող էր, իհարկե, չիմանալ, որ «առուն» այգիների տարածքի չափ է, բայց մի՞թե դժվար էր մտածել թե Գառնիում այդ ժամանակ քանի հազար այգի կարող էր լինել, որից միայն 500-ը Սուփան իշխանը նվիրել է Մաքենոցաց ս. Աստվածածին եկեղեցուն:

Այսպես, հոդվածում մեկը մյուսին են հաջորդում անհիմն մտքեր և ոչ մի տրամաբանության շենթարկվող հայտարարություններ: Զարմանում ես, օրինակ, թե երբ հոդվածագիրն այգիները բաժանել է երկու խմբի (միջմարզային առուներ ունեցող և չունեցող), չի՞ մտածել արդյոք, թե այդ անառու այգիները ինչպես պիտի ոռոգվեն և առհասարակ կարելի՞ է պատկերացնել այգի՝ առանց ներքին միջմարզային առուների, որոնցով ջուրը հոսում և հասնում է պտղատու կամ այլ ծառերին ու տնկիներին, հատկապես խաղողի որթերին, էլ չասենք, որ հոդվածագրի տրամաբանության մեջ ստացվում է այնպես, որ Բախարզիի «Վակֆնամեում» թվարկված բոլոր այգիները (բաղ), որոնք մշակվում էին հայտնի այգեպանների ձեռքով և որտեղ կային մրգերով ծանրաբեռ ծառեր և խաղողի վազեր, զուրկ էին միջմարզային ոռոգիչ առուներից, իսկ ահա, ամայի, ոչ մի բուսականություն չունեցող և մեծ մասամբ ավեր վիճակում գտնվող (խարաբ) այգետեղերը (բաղքանդե) օժտված էին ոռոգման այգորինակ հարմարությամբ:

Թող այն տպավորությունը չստեղծվի, թե այս եզրակացությունները հեղինակն արել է հենց այնպես, առանց «հիմնավորման»: Հոդվածագիրն ունի ազբուրներից օգտվելու և գրականության վկայակոչման իր մեթոդը, որի մի քանի օրինակների հետ արժե ծանոթանալ: Վերջինս, օրինակ, «Հազախաչի» վիմագիր արձանագրության վկայակոչման փաստը: Ըստ Ս. Ավագյանի ճշգրտած բնագրի, այդ արձանագրությունը հետևյալն է. «Անուամբն ար, ՈՂԵ թվիս, լիշխանութեան աթարակին Իւանի, Աւագին, Շահնշահի, ես մեփորելս, Խոշաքին սնուցածս, Նորատուս կացուց զիս, որժամ աստուծոյ բարկութե շար-

39 Նույն տեղում:

40 Նույն տեղում:

41 Նույն տեղում:

ժեցաւ, սուլտանն խորասանու կոտորածս բազում արար: Մեփորեալս շինիս, խաղակս հանի, փասիլս շինեցի, խաշս կազնեցի ի փկութիւն ինձ, ծնողաց իմոց, յեզր մեզանիս: Որք երկպագեք...»⁴²:

Ս. Ավագյանը ցույց է տվել, որ ինչպես «կազնեցի», «փկութիւն», «մեղանիս», «երկպագեք» բառերում բաց են թողնված, կամ շնն փորագրված ն, ը, յ տառերը, այնպես էլ «խաղակ» բառում պետք է վերականգնել «ն» տառը և կարդալ «խանդակ»: Ուրեմն, արձանագրության հեղինակը հայտնում է, որ աթաբեկ Իվանեի և շահնշահ Ավագի իշխանության օրոք, հայոց ՈՀԵ (1226) թ., այն ժամանակ, երբ աստծու զայրույթը շարժվեց և խորասանի սուլթանը շատ կոտորած արեց, իրեն կարգել են նորատուսի մեփորեկ (կառավարիչ), և քանի որ ինքը շննի մեփորեկ էր, խանդակ է հանել, փասիլ է շինել, ինչպես նաև իր և յուրայինների փրկության համար խաշ է կանգնեցրել գյուղի հրապարակի եզրին:

Ս. Ավագյանի առաջ քաշած այն միտքը, թե արձանագրության «խաղակս հանի, փասիլս շինեցի» հատվածը պետք է հասկանալ, այնպես, որ նորատուսի մեփորեկը ռոտզման նպատակով ջրանցք կամ առու է հանել և ամբարտակ է կառուցել⁴³, Պ. Մուրադյանին հիմք է տվել ասելու, որ «խանդակն» իրոք այս բնագրում առվի իմաստ ունի, իսկ «փասիլը» ոչ թե ամբարտակ է նշանակում. այլ դա արաբերեն «սաբիլ» բառի ազգավաղված ձևն է, որն, իբր վ. Մինորսկու թարգմանությամբ նշանակում է «ջրամբար»⁴⁴:

Մի կողմ թողնելով այն հարցը, թե տառադարձման այդ ո՞ր օրենքներով է «սաբիլը» դարձել «փասիլ» (քանի որ, ինչպես ստորև կտեսնենք, դա գործի հետ ոչ մի առնչություն չունի), ասենք անմիջապես, որ «սաբիլ» (سبيل) արաբերեն նշանակում է ճանապարհ, ուղի: (Սեմական լեզուներից փոխառնված այս բառը հայերենում պահպանվել է «շափիղ» ձևով): Սակայն ինչպես մի շարք լեզուներում, արաբերենում ևս այն ունի «համար», «հանուն» իմաստը: Որևէ բարեգործություն կատարելիս՝ ասում էին «Ֆի սաբիլ-ալլահ» (աստծո ճանապարհին), որ նշանակում է «ի սեր աստծո», «հանուն աստծո»: Զքավորներին ողորմություն տալը կամ հանրային օգտագործման համար որևէ բան կառուցելը, որ հավատացյալներն անում էին «աստծու ողորմությանը արժանանալու համար», այդպես էին անվանվում: X—XIV դդ. պարսկալեզու աղբյուրներում հանդիպում են անցորդների համար բարեգործական նպատակով ազատ տարածություններում կամ ճանապարհների եզրին տնկված պտղատու և անպտուղ ծառերի (թութ, ուռնի և այլն) մասին հիշատակություններ⁴⁵: Սակայն առավել տարածված էր հանրային օգտագործման

⁴² Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 232—234:

⁴³ Նույն տեղում, էջ 238:

⁴⁴ Պ. Մուրադյան, Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն (գրախոսություն), («Բանբեր Երևանի համալսարանի», 1979, № 2, էջ 203): Թերևս գրախոսության մեջ արաբերեն «սաբիլ» բառի ص-ով գրված լինելը տպագրական վրիպակ համարենք, այլպես դժվար թե որևէ տերմինի մեկնաբանությամբ դրազվողը ծանոթ չլինի բառի ուղղագրությանը:

⁴⁵ X դ. պարսկերեն աշխարհագրության անանուն հեղինակը նկարագրելով Աղվանքի մայրաքաղաք Բարդա (Պարտավ) քաղաքը, նշում է նաև, որ այնտեղ շատ կան ընդհա-

աղբյուրների կառուցումը, որ մինչև օրս էլ շարունակվում է: Այդ երևույթն այնքան էր տարածված, որ մինչև մեր օրերը Թուրքիայում հասարակաց աղբյուրները կոչվում էին «սաբիլ-խանե» կամ պարզապես «սաբիլ»: «Սաբիլ էթմաք» նշանակում էր «ձրի բաշխել», «սաբիլչի»՝ ձրի ջուր բաշխող⁴⁶: Սակայն սաբիլի բուն իմաստը, ինչպես վերը տեսանք, հասարակության օգտին որևէ բարեգործություն կամ նվիրատվություն կատարելն է⁴⁷: Անվանի արեւելեագետ Վ. Մինորսկին հենց այդ իմաստով էլ հասկացել է Անիի Շեղդադյան սուլթանի հիշրեթի 595 (1198—1199) թ. պարսկերեն արձանագրության այն հատվածը, որ *ل. Գյուզալյանի կողմից ընթերցված է* *آيين سرکه مسجد ابوالمعمر ان است تايدکان کو سبيل است*՝ from this point which is the mosque of the Abul-Ma'maran, down to the shop which is a pious foundation. («Աբուլ-Մուամմարանի մզկիթից մինչև այն խանութը, որը բարեգործական հաստատությունն է»)⁴⁸: Արդյոք սոսկ անգլիերենի թերիմացություն հետևանք պետք է համարել «pious foundation»-ի «ջրամբար» հասկանալը, թե պարզապես Պ. Մուրադյանին պետք է եղել, որ որևէ հեղինակավոր արևելագետ «սաբիլ-ը» թարգմանի «ջրամբար»:

նուրի օգտագործման համար (սաբիլ) տնկված թթի ծառեր. *وآنجا درختان تود* *سبيل است بسيار* (В. В. Бартольд, Худуд-Ал-Алем, Рукопись Туманского. Л., 1930, с. 65): Շեյխ Յահյա Բախարզիի հիշրեթի 725 (1326) թ. ընդարձակ «Վակֆնամեում» աղբիւրներից մեկի սահմանները նկարագրելիս նշված է, որ արևելյան սահմանի վրա է գտնվում ուռենիների մի ծառատան, որը ղրված է հանրային օգտագործման *پيوسته* *بيلستان* *زير تل ديه است که سبيل عامه است* примыкает к иновым зарослям у подножия холма деревни, которые находятся в общем пользовании (Бух. док. էջ 73 և 152):

⁴⁶ Պետրոս Զեքի Կարապետյան, Մեծ բառարան օսմաներեն հայերեն, Կ. Պոլիս, 1912, ան'ս նաև Ալի-Աբբաս Դեհլուդայի բառարանում *سبيل* և *سبيل* հոդվածները:

⁴⁷ Յու. Ռուբինիկի ղեկավարությամբ, հեղինակային կոլեկտիվի աշխատանքներով, 1970 թ. Մոսկվայում լույս տեսած պարսկերեն-ռուսերեն ընդարձակ բառարանում սաբիլի երկրորդ նշանակության տակ ասված է. «1. подаяние, раздача (чего-либо даром, как доброе дело); 2. разг. бесплатный, обильный (о пище), *سبيل کردن* — раздавать даром»:

⁴⁸ V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1953, p. 101: Այս առիթով ավելորդ չենք համարում նշել, որ խնդրո առարկա պարսկերեն արձանագրության բովանդակությունը գիտական շրջանակներին մատչելի դարձավ միայն Լ. Գյուզալյանի միանգամայն համոզիչ վերծանումով: Ի նկատի ունենալով արձանագրության ոչ այնքան գրագետ շարադրանքը և փորագրության ընթացքում թույլ տրված աղավաղումներն ու տարբերիչ նշանների ու կետերի անճշտությունը, Լ. Գյուզալյանը իրավացի ճշգրտումներ է կատարել և պարզել, որ արձանագրության նպատակն է եղել հայտարարել, թե Անիի կենտրոնական փողոցի ո՞ր մասում է թույլատրվում ղրաղվել բամբակի առևտրով և բամբակագործությամբ: Կարծում ենք, սակայն, որ այդ տարածության վերջին սահմանը ցույց տվող բառաշարը ոչ թե պետք է կարդալ *است* *سبيل* *بدکان* *است* *آيين سرکه مسجد ابوالمعمر ان است تايدکان کو سبيل است* թարգմանել՝ «Այս ծայրից, որ Աբուլ-Մուամմարանի մզկիթն է մինչև կոստանտինի խանութն է»: Այսինքն բամբակի վաճառքն ու բամբակագործությունը թույլատրվում է կրպակա-

«Հազախաշի» արձանագրությունից պարզ երևում է, որ այնտեղ նկարագրված շինարարական աշխատանքները պաշտպանական նշանակություն ունեն: Այդ թվականին, ինչպես այդ մասին հիշված է նաև արձանագրության մեջ, Խորեզմշահ սուլթան Զեյալեդդինի զորքերը ներխուժել էին Անդրկովկաս և ասպատակ սփռելով, առ ու ավարի էին մատնել բազմաթիվ շեներ ու քաղաքներ, այդ թվում նաև մայրաքաղաք Թիֆլիսը: Ահա այս օրերին, Նորատուսի մեփորել նշանակված անձնավորությունը, հավանական հարձակումներից պաշտպանվելու նպատակով, բնակավայրի շուրջը խանդակ է փորել և նրան զուգահեռ պարիսպ՝ փասիլ, է կառուցել: Փասիլ, արաբերեն՝ ֆասիլ շարքի այն մասում, որն սկսվում է Արու-Մու՛ամարանի մզկիթից և հասնում մինչև Կոստանտինի խանութը: کوسبیل ընթերցման ո՛չ չ. Գյուզայանի թարգմանությունը (Սարիլի փողոց) և ոչ էլ Վ. Մինորսկու մեկնաբանությունը, որը ګو ն համարում է کی և ډا դերանունների միացում (որը, ի դեպ, որպես հարաբերական դերանուն գործածվում է միայն չափածո խոսքում) և թարգմանում «որը», համոզիչ չեն և հակասում են պարսից լեզվի քերականությանը: Խանութին փոխարինում է ոչ թե ډا (նա), այլ آن (այն) դերանունը, Իսկ کوسبیل است كان հատվածը իդաֆեթով կարգալու դեպքում նախ պահանջվում է, որ լինի کوی և ոչ թե ګو, և ապա թարգմանվում է «Սարիլի փողոցի խանութը» և ստացվում միանգամայն անորոշ և անիմաստ մի նախադասություն: Ավելի անհասկանալի է Վ. Մինորսկու վերը նշված «shop which is a pious foundation» թարգմանությունը: Արձանագրության՝ Լ. Գյուզայանի ընթերցման համաձայն ստույգ արված լուսանկարի վրա պարզ երևում է, որ سجدل տառաշարքի վերևում ևս կետեր կան, որը պահանջում է ھ-ից հետո երկու ټ-ի և մեկ ټ-ի առկայություն, իսկ ھ-ին հաջորդող ատամների քանակը պարզ չէ, քանի որ, ինչպես ասվեց, այն ունտու է արված ըստ Լ. Գյուզայանի ընթերցման: Ուստի միանգամայն հնարավոր է այդ տառաշարքը կարգալ կոստենիլ: Իսկ «Կոստանտին» անվան նման տառադարձումը ամենուրեք կիրառական է եղել միջնադարյան պարսկալեզու մատենագրության մեջ և դիվանական վավերագրերում, որը հավանաբար դալիս է վրացերենից: XVI—XVII դդ. վրաց արքունիքի հրովարտակներում ևս հանդիպում ենք յոստանցոլ, երբեմն նաև ټ-ին հաջորդող ټ-ի ձայնեղացման հետեվանքով, յոստանցոլ և ներքին («Грузино-персидские исторические документы», изд. В. С. Пугуридзе, Тбилиси, 1955, с. 136, 343, 350, 353, 359, 362), Այս հնչյունափոխությունը կա նաև պարսկերենում. անունը հանդիպում է և՛ کوستنديل, և՛ ավելի շատ առանց ډ-ի کستنديل և նով («Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ», պրակ Բ, կազմեց Հ. Գ. Փափազյան, Երևան, 1959, վավ. 21, Իսրահայր Մոնշի, Թարիխ-ե լալամարա-յի արբասի (պրակ. բնագիր), Թեհրան, 1956, էջ 271, 648, 670, 671, 679—681, 688—695, 700, հմմտ. «Персидские исторические документы в книгохранницах Грузии», кн. I, вып. I, изд. В. С. Пугуридзе, Тбилиси, 1961 էջ 57):

Վարժում ենք նաև, որ արձանագրության երկրորդ տողի حد տառաշարքը ոչ թե պետք է կարգալ جد (պապ), այլ պետք է ուղղել և կարգալ خود (իր), քանի որ սուլթանը այդ թուլտվությունը կարող էր շնորհել իր և զավակների երկարակեցության համար և ոչ թե պապի ու զավակների: Ուրեմն պետք է լինի ټ-ի անուն ټ و فرزندان خود: Արձանագրության մեջ կան Լ. Գյուզայանի կողմից կատարված այդ կարգի միանգամայն իրավացի այլ սրբագրություններ, ինչպես օրինակ ټ-ը տողի گرفتار — گرفتار ուղղումը:

(فصيلا) են կոչվել այն պարիսպները, որոնք իրենց մեջ էին առնում քաղաքի բնակելի մասը և առջևում ունեին անանցանելի խրամ-խանդակ⁴⁹:

Ուշագրավ այս արձանագրությունը գալիս է հաստատելու, որ ամրացված քաղաքներից բացի, բոլոր քիչ թե շատ խոշոր բնակավայրերը ևս օժտված էին նման պաշտպանական միջոցներով, և դրսից կատարվող հարձակումների ժամանակ մոտակա այլ բնակավայրերի ժողովուրդը ևս ապաստանում էր այնտեղ: Այս իրողությունը հաստատող մեկ այլ վկայություն վերաբերում է 1401 թ., երբ դեպի Միջագետք կատարած արշավանքից վերադառնալիս Լանկ Թեմուրի հրոսակները ասպատակ էին սփռել Վասպուրականի և Սյունյաց մերձակա գավառներում: Այդ ժամանակ նույնպիսի ամրացված վայր է եղել Նախիջևանի Ճահուկ ավանը, որտեղ ապաստանած գրիչ Հովհան Քոնեցին իր չափածո հիշատակարանում գրում է.

«Յաղագս դառն ժամանակիս,
Որ էր ի Ճահուկ փապըլիս,
Յորժամ ՊՄ (1401) էր Հայոց թվիս
Ի յօգոստոս՝ փոխման տօնիս»⁵⁰:

Հասկանալի է ուրեմն, որ փասիլը որևէ բնակավայրի շուրջ կառուցված պարիսպն է, իսկ նրան զուգահեռ փորված խանդակը (կամ քանդեն)՝ պաշտպանական նպատակով փորված խրամ:

Ահա և մի երկու նմուշ Պ. Մուրադյանի թարգմանական «Ճշգրտումներից»:
Յահյա Բախարզիի 1326 թ. ընդարձակ վակֆնամեում հիշվող մեծ ու փոքր ջրանցքներն ու առուները (چوچر، جوی، کام، افلق) առավելապես անվանվում են այն գյուղի անունով, որին պատկանում է տվյալ ջրանցքը (Ֆաշուն, Ուշմիուն, Ֆարիշուն, Աքքա, Հովզ-ե արուսան, Ֆարաքան, Շարիքան, Ֆաղիթասին և այլն): Ուտի, երբեմն առվի տվյալ գյուղին պատկանելը շեշտելու համար գործ է ածված «խաս» (خاص—հատուկ, սեփական) բառը (جوى خاص فارکن، جوى خاص اشميميون): Իր թարգմանությունների մեջ Օ. Չեխովիչը «խասսը»-ը դիտում է որպես տերմին և զգուշավորությամբ թարգմանում է «особый» («сад снабжается водою из того особого канала форакан»). Եթե դա հասկանանք «տվյալ գյուղին հատուկ» առվի իմաստով, ապա կարելի է ասել, որ դա ընդհանուր առմամբ ճիշտ է: Սակայն կոնտեքստից միանգամայն պարզ երևում է, որ այդ բառով շեշտված է առվի՝ տվյալ գյուղին պատկանելը: Այսինքն՝ բառն օգտագործված է իր միանգամայն պարզ իմաստով և ոչ թե որպես տերմին: Պա հաստատվում է այն իրողությամբ, որ ընդհանուր օգտագործման առուներն անվանված են جوى عام (ընդհանրական, հասարակաց առու)⁵¹, «խաս» են

⁴⁹ Տես Ալի-Աքբար Դեհխոդաի բառարանում նույն հոդվածը, որտեղ վկայակոչված են հատվածներ Ջոսվեյնի «Թարիխ-ե ջհանգոշայից» և Նարշախիի «Թարիխ-ե բուխարայից»:

⁵⁰ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ժն դ.», մասն Ա, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 16:

⁵¹ «Бух. док», с. 47, 69, 208.

կոչվում նաև միայն դեպի տվյալ վայրը կամ գյուղը տանող ճանապարհները (راه خاص که بدیة کوشک آسیامی در آید) — այն հատուկ ճանապարհը, որ գնում է դեպի Քյոշուք-ի ասյա գյուղը կամ ասյա ցամաք (راه خاص باغ وسرای دلداى — հատուկ դեպի Դուլադալի այգին ու ապարանքը տանող ճանապարհը)⁵², Իսկ մյուս մայրուղիները անվանվում են راه عام կամ արաբերեն عامه شارع (ընդհանրական, հասարակաց ճանապարհ) (راه عامه که بنخشب وغیروی) (հասարակաց ճանապարհը, որով դեպի Նախշաբ և այլ վայրեր են գնում)⁵³: Նույն ձևով են անվանվում նաև ջրաղացների հատկացված առուները (نهر خاص این آسیا از این جوی آسیا آب) — այս ջրաղացի առուն, նույն այս Ասյա [գյուղի] ջրանցքից է ջուր վերցնում)⁵⁴:

Պ. Մուրադյանը, սակայն, անհրաժեշտ է գտել, «բառացի դարձնելու նպատակով» վերանայել Օ. Չեխովիչի թարգմանությունը և «особый» բառը փոխարինել է «лучший»-ով, միաժամանակ ընթերցողին խորհուրդ տալով «խաս» տերմինի մասին կարդալ ն. Մառի Аркауи, монгольское название христиан, հոդվածի 45—51 էջերը, որտեղ իբր «հանգամանորեն ուսումնասիրված է խաս տերմինը»: Բացում ենք նշված աշխատությունը և տեսնում, որ ոչ միայն մատնանշված էջերում, այլև ոչ մի էջում խաս-ի մասին մեկ բառ անգամ չկա գրված: Ն. Մառը ոչ թե հանգամանորեն ուսումնասիրել է «խաս» տերմինը, այլ, վկայակոչելով Ս. Մարտինին և Քատրմերին, ճշգրտել է հայերեն «տէրունի» համարժեք, մոնղոլական «խաս-ինջու» տերմինը⁵⁵:

Պարզ երևում է, որ այդ հղումը անելիս Պ. Մուրադյանը ն. Մառի նշված աշխատության հետ չի առնչվել: Այդ վրիպած վկայակոչումը առանց բուն աղբյուրը ստուգելու նա վերցրել է Ս. Ավագյանի «Վիմական արձանագրությունների բառաքննություն» գրքից⁵⁶, և քանի որ հայկական մի քանի վիմագիր արձանագրություններում հանդիպող «խաս» բառը մեկնաբանելիս Ս. Ավագյանը գտնում է հնարավոր այն թարգմանել «ընտիր»⁵⁷, Պ. Մուրադյանը միջին ասիական վավերագրերում առվի տվյալ գյուղին պատկանելը ցույց տվող նույն բառը թարգմանում է «лучший» և ստանում «ընտիր առու» անհեթեթությունը:

Շարունակելով Օ. Չեխովիչի թարգմանության «վերանայումները», Պ. Մուրադյանը Յահյա Բախարզիի «Վակֆնամեում» գլխավոր ջրանցքի իմաստով հիշվող «քամ» (کام) բառն, իր բառացի իմաստով թարգմանում է «пасть [канала]»⁵⁸, անտեղյակ այն իրողությունը, որ գետերից հատուկ բանդով

52 Նույն տեղում, էջ 74, 79:

53 Նույն տեղում, էջ 60, 62, 73, 74 և այլն:

54 Նույն տեղում, էջ 77:

55 Н. Я. Марр, Новые материалы по армянской эпиграфике, СПб., 1893, с. 78—80.

56 Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 119:

57 Նույն տեղում:

58 «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 4, էջ 207:

(بناد), որը համարվում էր առվի «բերանը», անմիջապես վերցվող գլխավոր առուն կամ ջրանցքը հենց այդպես էլ կոչվում էր՝ «քամ»։ Պ. Մուրադյանի թարգմանությամբ, սակայն, ստացվում է, որ այգին ոռոգվում էր ոչ թե այդ գլխավոր ջրանցքից, այլ՝ ջրանցքի գետից դուրս գալու տեղից։ Նա նեղություն չի կրել նայելու այն սկզբնաղբյուրները, որոնցից վերցված են «Վակֆնամեի» այգի հատվածները և որոնց հրապարակմանը առընթեր Օ. Չխոփիչը առանձին ծանոթագրությամբ (ծան. 50) բացատրում է «քամ»-ի իմաստը որպես «большой магистральный канал», վկայակոչելով նաև այլ աղբյուրներ ու հեղինակներ, և այստեղից էլ ահա ծագել է երկրորդ անհեթեթությունը։

Կարելի էր շարունակել Պ. Մուրադյանի ուսուցողական «Ճշգրտումները» շարքը։ Սակայն կարծում ենք, որ այսքանն էլ բավական է նրան հիշեցնելու Սադիի խրատական երկտողը.

ترسم نرسی بکعبه ای اعرابی کین ره که تومیروی بترکستان است

(Վախենում եմ Քաբա (Մեքքա) շահանես ո՞վ արար,

Քանզի այս ճամփան, որ դու գնում ես, դեպ թուրքեստան է տանում)։

САДЫ И САДОВЫЕ УЧАСТКИ ПО АРМЯНСКИМ И ПЕРСИДСКИМ КУПЧИМ


АКОП ПАПАЗЯН

Резюме

Фактические данные армянских документальных источников и, особенно, персидских шариятских-нотариальных актов XIV—XIX вв. позволяют уточнить обстоятельства собственности на сады и виноградники, находящиеся во владении крестьян-земледельцев, членов сельской общины или других лиц, занимавшихся садоводством.

Описания как возделываемых и благоустроенных, так и невозделываемых садов, переходящих от одного собственника другому путем передачи в наследство или посредством других видов отчуждения, позволяют уточнить определенные особенности этой специфической области землепользования.

В статье обсуждаются параллельные данные о собственности, наследовании и различных видах отчуждения садов в Армении, Азербайджане, Иране и Средней Азии и уточняются армянские и персидские эквивалентные термины, относящиеся к разновидностям, размещению, системе водоснабжения, принципам измерения площади садов.



НОВЫЕ ЭПИГРАФИЧЕСКИЕ ДАННЫЕ
О ПОСЛЕДНИХ ОТПРЫСКАХ АРМЯНСКОЙ ФЕОДАЛЬНОЙ ЗНАТИ
В СЮНИКЕ

Доктор ист. наук А. Д. ПАПАЗЯН

Издательство АН Азербайджанской ССР выпустило в свет книгу сотрудницы Института истории, доктора исторических наук М. С. Нейматовой «Мемориальные памятники Азербайджана», которая содержит расшифровку и переводы на русский язык 143 надгробных надписей, охватывающих период с XII по XIX вв. В конце книги на 75 таблицах даны также фотографии большей части публикуемых надписей, а в отдельных случаях и рисунки¹.

Издание само по себе интересно и похвально с точки зрения изучения традиций и особенностей исламской эпиграфики вообще и специфики азербайджанских надгробий в частности.

В кратком предисловии (с. 3—12) автором сделана попытка сгруппировать надписи по отдельным эпиграфическим школам, что, по нашему мнению, нуждается в некоторых уточнениях. Публикуемые надписи настолько разнообразны и пестры, они охватывают настолько обширный период, что трудно прийти к определенному выводу по этому вопросу. В предисловии также дана общая характеристика публикуемого изобразительного материала и подчеркнуто его познавательное значение. Кажется, однако, что автору необходимо было исследовать и попытаться уточнить принадлежность отдельных собственных имен, используя соответствующую литературу. Думается также, что без знания исторических источников данного района соответствующего времени, без сравнительно-критического изучения этих источников невозможна точная расшифровка надписей, тем более на надгробиях.

Оставляя общую критику и оценку проделанной эпиграфической работы специалистам, занимающимся собственно эпиграфическим материалом, мы хотели бы остановиться на некоторых очевидных ошибках, возникших в основном из-за неучета исторической реальности и палеографических данных. Речь идет о надгробиях кладбища села Урут Сисанского р-на АрмССР, которые, будучи весьма сходны по форме, строительным особенностям и рельефам бытового содержания с армянскими надгробиями того времени², несут на себе арабские или написанные арабскими буквами надписи, характерные для мусульманских надгробий.

Сюжеты и содержание рельефов дают все основания утверждать, что здесь похоронены представители местного княжеского сословия. Достаточно просмотреть «Историю области Сисакан» историка XIII в. Степаноса Орбеляна, чтобы убедиться, что начиная еще с XI века кре-

¹ М. С. Нейматова. Мемориальные памятники Азербайджана (XII—XIX века). Баку, 1981.

² Գ. Հ. Կ ա ռ ա ի ա ն յ ա ն . Հ ա յ ա տ ա ն հ ի մ ի շ ն ա դ ա Ր յ ա ն կ ե ն զ ա ղ ա յ ի ն ք ա ն դ ա կ ն եր ր (15—16-րդ դդ.).—ՀՄՄՀ ԳԱ «Իրարեր հաս. գիտ.», 1975, № 8, էջ 31—47. См. также Գ ի լ յ ա ն հ ա յ վ ի մ ա Ր ո թ Յ յ ա ն . Գ. 1—6, Երևան, 1966—1982 (далее Գ ի լ յ ա ն):

пость Оротн (совр. Урут) с округой, вместе с другими крепостями Сюника, находилась в пределах владений князей Орбелянов³. Известно также, что в период владычества монгольских ильханов весь Сюник, включая крепость Оротн, представлял инджу Орбелянов.

Однако памятные записи армянских рукописей XIV в. сообщают, что крепость и провинция Оротн с давних времен до 30-х годов XIV в. находились во владении потомков древнего княжеского рода Сисакянов, вассалов Орбелянов, бывших в свойстве с последними. Как показал акад. Л. С. Хачикян, представитель этой семьи Иване, сын Хасана Длениана, назывался «храбрым и благородным Иване, который был амиром и владыкой страны Оротн».

По свидетельству памятных записей и согласно Товме Мецопеци, знаменитый ученый и философ Иоанн Оротнеци—сын «храброго Иване, властителя Оротна», «из провинции Оротн, из села Вагадин, сын великого князя Иване, который был из рода первых князей Сюника, из которого был Васак»⁴. Из этих свидетельств явствует, что, хотя Иване считался князем Оротна, местом жительства его семьи было Вагадин (Вагуди). Данные последующих памятных записей указывают на то, что начиная с XIV в. сфера влияния этого княжеского дома постепенно ограничивалась. Согласно этим данным в 1385 г. во время нашествия хана Тохтамыша князем Оротна был Смбат, сын Иване (Инаник), из семьи Буртеянов, рода Орбелянов: «...пришли и захватили крепость Оротн и лишили родных поместий господина Смбата, сына Наника...»,— читаем в записи⁵.

Товма Мецопеци свидетельствует, что сын Тимурланка Омар-мирза, назначенный наместником Азербайджана, насильственно обратил в ислам Смбата и брата его Буртела и отправил их вместе с семьями в Самарканд. Эта ссылка, однако, длилась недолго; вскоре они возвратились в Сюник и вновь обратились в христианство. Спустя некоторое время, в 1407 г. умирает во время эпидемии Буртел, Смбат же продолжает править родными поместьями. Но его за содействие султану Ахмеду Джедайриду преследует Кара Юсуф Кара-коюнлу, который захватывает крепость Оротн. Смбат с семьей находит приют в Грузии, где и умирает в 1412—1415 гг.⁶

Продолжая свое исследование, Л. С. Хачикян показал, что при сыне Кара Юсуфа, Искандаре Кара-коюнлу (1420—1437), Буртеянам удалось восстановить свои поместья. В 1428—29 гг. сын Смбата Бешкен был уже в Сюнике, а его сын Рустам занимал высокие посты при дворе Искандара⁷. Однако в 1435 г., во время нашествия Шахруха, сына Тимурланка, Сюник снова подвергается набегу и Бешкен с тысячами беженцев перебирается в Лори, ища убежища у своего зятя грузинского царя Александра, который его предательски убил.

³ Ստեփաննու Օրրեւլլան. Պատմութիւն նահանգին Սիսական. Թիֆլիս, 1910, էջ 397, 411.

⁴ Լ. Խաչիկյան. Սյունյաց Օրրեւլլանների Բորթելյան ճյուղը.—«Բանբեր Մատենադարանի». № 5, նրևան, 1969, էջ 178; Քովմա Մեծոփեցի. Պատմութիւն Լանկ Թամուրայ կ յաջորդաց իւրոց. Փարիզ, 1860, էջ 14—15:

⁵ Լ. Խաչիկյան. նշվ. աշխ., էջ 180:

⁶ Там же, с. 180—181.

⁷ Там же, с. 182—183, см. также Հ. Փափաղյան. Մի էջ Արեւելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմութիւնից.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.). 1955, № 8, էջ 83—100:

В персидских шариатских документах и купчих имеются свидетельства о том, что сын Бешкена Рустам в 1450-х годах снова находился в Сюнике, но здесь его имени уже не предшествуют пышные титулы, а только упоминается его княжеское происхождение: «Армянский амирзаде, сын Смбата, сын Бешкена—Рустам»⁸. В памятных же записях 1470-х годов встречается лишь имя Смбата, сына брата Бешкена—Иване-Степаноса, после чего уже не встречаем никаких упоминаний о Буртелянах.

Как показано в наших прежних исследованиях, XV в. был порой роковой борьбы и агонии для армянской феодальной знати⁹, которая, по образному выражению Товмы Мецопеши, «оставалась подобно веточке виноградной грозди среди народа»¹⁰. Все памятные записи в один голос сообщают о принуждении (особенно при падишахе Якубе Аккоюнлу, 1479—1490) армянской феодальной знати к вероотступничеству и о случаях мученичества при этом. В памятной записи Айсмавурка, написанного в 1485 г. в Котайке, читаем: «...при владычестве Ягуба-бека была религиозная нетерпимость (*թաւազանքիւն — تعصب*), так как кади был татарин, и преследовали христиан в городе Тавризе, ибо некий мусульманин по имени Мехди убил большого защитника армян ходжа Мирака за веру Христову». Тот же переписчик, возвращаясь к теме вероотступничества, пишет: «Время было горестное, и от иноземцев потерпели мы много притеснений, а в году этом схватили 40 человек из знати (азаторди), принуждая принять ислам»¹¹. И хотя автор записи добавляет, что после семимесячного заключения армянская знать сумела сохранить веру, заплатив большой выкуп, тем не менее в последующие десятилетия нет упоминаний об армянских князьях, владевших целыми провинциями и крепостями; это говорит о том, что гонения продолжались и многие из преследуемой, знати в конце концов отступились от веры, не желая лишаться своих владений.

Нам уже приходилось замечать, что в купчих татевских монастырских сел XVI в. из Оротна выступают мусульманские свидетели, среди которых встречаются и потомки Буртелянов. Таков Сохраб, сын Смбата, из Урута¹², который, как отметил Л. С. Хачикян, мог быть сыном Иване-Степаноса, упомянутого в памятной записи 1470 г. Некоторые факты дают основание Л. С. Хачикяну предположить, что утрата Буртелянами своего армянства начинается именно с этого Смбата¹³.

Мы видели, что начиная с 1380-х годов крепость и село Оротн вышли из-под власти представителей древнего княжеского рода Сюника и находились в руках Буртелянов, а потомки дома Сисакянов жили в ближайшем селе Вагадин (Вагуди). Они, вместе со своими прежними

⁸ Персидские документы Матенадарана. Купчие. Вып. 1. Сост. А. Д. Папазян. Ереван, 1968, док. 7 (далее Купчие).

⁹ См. 2. Գ. Փափաղյան «Բելթ-ու-մալի» ինստիտուտը և հայ ֆեոդալների հոգեբերական գրավումները XV դ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 193—203; նույնի Ի՛ Օտար տիրապետությունը Արարատյան երկրում.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1960, № 7—8, էջ 21—40, ср. А. Д. Папазян. Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII вв. Ереван, 1979, гл. III.

¹⁰ Մեծնիգի, էջ 67, ср. Фома Метсопски. История Тимурланка. Перевод Т. И. Тер-Григоряна. Баку, 1957, с. 67.

¹¹ Գ. Հովսեփյան. Խաղրակյանք կամ Պոռշյանք հայոց պատմության մեջ. Անթիլիաս—Լիբանան, 1967, էջ 127:

¹² См. Купчие, док. 4, 7, 14, 18.

¹³ Լ. Խաչիկյան. Կշի. աշխ., էջ 137:

сюзеренами, подверглись принудительному обращению в ислам. Характерно, что эти потомки древних и новых армянских феодальных домов занимали места уже в сословии меликов и кетхуда. В одной из купчих того времени сын Смба́та Сохраб назван под заверительной надписью просто «мелик Сохраб»¹⁴. А в надгробиях Урута, как увидим ниже, имени принявших ислам потомков княжеского дома Сюника предшествует слово «кетхуда». Мы убедимся, что надгробия Урутского кладбища, как каменные свидетели, рассказывают о роковых перемещениях и обстоятельствах утраты своего национального облика последними представителями армянской феодальной знати Сюника и подвластными им армянскими сельскими общинами деревень Оротн (Урут), Вагадин (Вагуди), Агверц (Дарабаз) и др.

Армянские орнаменты на надгробных плитах и выполненные на них орфографически неграмотные арабские надписи свидетельствуют, что погребенным и их родственникам были чужды язык и орфография надписей. Характер графических и орфографических ошибок этих надписей со всей очевидностью указывает на то, что это не описки каменотеса, но результат очевидной неграмотности составителей текстов. Однако автор рассматриваемого издания недостаточно осведомленный в вышеизложенных исторических событиях, сделал попытку «расшифровать» надпись, предлагая читателю необоснованное и противоречащее данным палеографии и эпиграфики прочтение, снабженное русским переводом.

Вот пример прочтения М. С. Нейматовой текста эпитафии № 53, дошедшего до нас совершенно неповрежденным, легко читаемого и состоящего из двух строк:

الله محمد على امر و سل ولد كتخودا...
فی شهر رمان / سنه ۸۸۳ من اولاد اوغوا

В сноске отмечены только орфографические ошибки в словах «кетхуда» и «рамазан» и дан перевод: «Аллах, Мухаммад, Али, Амрусал сын кетхуды... в месяц рамадан 883, из рода агван». Ясно, что за группой *الله محمد على* должно следовать имя погребенного, которое М. С. Нейматова прочла как *امر و سل* (Амрусал). Подобное имя не известно ни в армянском, ни в азербайджанском, ни в каком-либо другом языке. Следовательно, нужно было искать более убедительное чтение, чтобы установить это личное имя. К тому же очевидно, что после слова «кетхуда» также должно следовать имя собственное, а поскольку вторая строка, оканчивающаяся сочетанием *سنه ۸۸۳*, предназначена для даты, то имя упомянутого «кетхуды» нужно было искать в конце первой строки. Исследователь, обладающий определенными знаниями в области арабской палеографии, не может не заметить грубых ошибок и искажения текста, допущенных при прочтении эпитафии, где следующие за буквенным сочетанием *اولاد* знаки *قم* (следом за словом *كتخودا*) приняты за предлог *من*, исполненный графикой шикасте, которая в исследуемый период не использовалась в лапидарных надписях. Далее этот мнимый предлог *من* переставлен с конца сочетания *اولاد* в начало его, с тем чтобы получить сочетание *من اولاد*. Затем, пренебрегая непонятыми знаками *دلو*, следующими за сочетанием *و عو*,

¹⁴ Купчие, док. 7.

автор произвольно прибавил к последнему по алифу в начале и на конце; в результате изобретено слово *اوغوا* («авгва» или «аугуа»), более непонятное, нежели предшествующее ему «Амрусал». Прделано все это с целью получить перевод «из рода агван»¹⁵.

Вместо того, чтобы установить имя отца захороненного, именованного ею «Амрусалом», автор предполагает его агванское происхождение, чтобы заявить, что, дескать, некогда в Сюнике жили агваны, которые впоследствии, став тюркоязычными, слились с азербайджанцами (предисловие, с. 11—12).

Что же на самом деле представляет собой текст эпитафии и как его следует читать? На фотографии надгробия, помещенной в конце книги на табл. 31, справа налево, в правильной последовательности написано следующее¹⁶.

الله محمد على امير وسك ولد كتخودا اولادم وعودلو
تحریر آفی شهر رمر ان سنه ۸۸۳

что следует читать так:

الله محمد على امير وسك ولد كتخدا اولافم وعودلو
تحریر آفی شهر رمضان سنه ۸۸۳

«Аллах, Мухаммед, Али. Амир-Васак, сын кетхуды Авлакума Вагудинского. Написано в месяце Рамазане 883 года (26. XI—26. XII. 1478)» (см. рис.).

Оба имени, упомянутые в надписи, переходили из поколения в поколение среди представителей родов Орбелян и Сисакян. Имя Авлакум и его варианты Еликум, Эликум, Элакум, Алукум, Алакум и Айлакум известны в роду Орбелянов в XII—XIV веках как по историческим источникам, так и по лапидарным надписям¹⁷. Что касается имени Васак, то

¹⁵ Примечательно, что ложному прочтению сопутствует неправильный перевод. Слово *اولاد*—форма множественного числа от *ولد*, которое в первой строке этой же надписи переведено М. С. Нейматовой как «сын». Следовательно, оно должно было бы быть переведено словом «сыновья» или «потомки», но никак не «род», которому в арабском соответствует слово *ال*. Наконец, после предполагаемого автором сочетания могло следовать имя, но никак не этноним.

Нелишне заметить, что в автореферате докторской диссертации М. С. Нейматовой неверное чтение *اوغوا* еще не интерпретируется как «агван» (см. М. С. Нейматова. Эпиграфические памятники и их значение в изучении социально-экономической истории Азербайджана XIV—XIX вв. Автореферат докт. дисс. Баку, 1968, с. 85).

¹⁶ В результате ретуширования надпись на публикуемом снимке несколько искажена. При сравнении с имеющейся у нас фотографией (см. рис.) выяснилось, что в первой строке вместо *مر* нужно читать *مير*, а вторая строка начинается с *تح*, а не *نح*. На снимке отчетливо видны три точки над сочетанием *مر* второй строки, из которых одна относится к этому сочетанию, а две—к слову *مير* первой строки.

¹⁷ См. *Օրբելիյան*, էջ 344, 353, 355. 361, 362, 390, 392, 396 и др., а также индексы собственных имен в *Գ. Հովսեփյան. Խաղրակյանք...* и в *Լ. Ս. Խաչիկյան. ՃԴ և ՃԵ դարերի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, Երևան. հ. 3, Երևան, 1967, էջ 211—230:

оно начиная еще с V века одно из наиболее традиционных имен Сюникского царского и княжеского дома. В более позднее время оно часто сопровождается титулом «амир»¹⁸, что полностью соответствует форме Амир-Васак рассматриваемой нами надписи. Можно с уверенностью утверждать, что Амир-Васак, отец которого был кетхудой в своем селе



Вагадин (Вагуди) и именовался Авлакум Вагудлу (Вагудинский), был представителем одной из ветвей Сюникского княжеского дома, обосновавшейся в Вагадине, родственной ветви Буртелян из рода Орбелянов и принявшей ислам в XV веке¹⁹.

В связи с этим заслуживает внимания надпись на правой стороне надгробия № 66 (памятник в виде барана; фото—таблица 41), где также довольно неграмотно высечено:

الله محمد على
آولاد و غو ل

К сожалению, это надгробие, как и четыре других, подобных ему (№№ 58, 60, 68, 69), исчезли со своих прежних мест, поэтому трудно проверить, была ли надпись искажена при ретушировании или нет. Как уже говорилось при разборе предыдущей надписи, после слов *الله محمد على* должно следовать имя погребенного, который, по нашему мнению, не кто иной, как отец того же Амир-Васака—Авлакум Вагудинский²⁰. Доволь-

¹⁸ Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. 4, 5, Երևան, 1962, էջ 43—53; Ղ. Ալիշան. Սիսական. Վեհերիկ, 1893, էջ 17:

¹⁹ Вероятно, в Оротне (Уруте)—родовой вотчине Сюникских князей, находились родовые усыпальницы последних, куда привозили для захоронения и их исламизированных потомков.

²⁰ Как ни странно, и здесь М. С. Нейматова, без всяких на то оснований, добавила в начале второй строки предлог *من* и получила такое же лишнее смысла прочтение *من اولاد اوغوا*, как в № 53, совершенно не считаясь с тем, что

но четко высеченная крупная мадда над начальным алифом показывает, что его нужно читать только как а. За ним следуют ۙ и довольно отчетливое ۞, после чего искаженные ق и م. Как и в предыдущей надписи, здесь видно, что составитель текста плохо знал правила соединения арабских букв; последние буквы не соединены друг с другом, так же, как в слове تحريرا начала второй строки предыдущей надписи. Затем следует дефектное сочетание وغل, которое с помощью первой надписи можно восстановить как (اولادهم وغلودلو) — وغلودلو[د]و[و].

Вообще бросается в глаза то, что надпись № 66 не только менее подробна и менее соответствует традиции, чем № 53, но и выполнена более безграмотно: очевидно, что составитель, с трудом приставляя одна к другой арабские буквы, кое-как воспроизвел имя усопшего. Это также подтверждает наше мнение, что надгробие № 66 действительно стоит над могилой отца Амир-Васака, скончавшегося раньше своего сына, причем на могиле сына, скончавшегося, по всей вероятности, позже, имя его передано уже более грамотно и полностью (اولادهم).

Мы убеждены, что другие надписи (без даты или датированные 986 г. хиджры = 1578—79), вырезанные (в отличие от разбираемой нами—рельефной) на других сторонах того же надгробия № 66 иным почерком и на тюркском языке (их снимки не опубликованы), изготовлены не менее чем сто лет спустя. Сам же памятник относится к тому же периоду, что и № 53, и под ним покоится отец Амир-Васака—Авлакун Вагудлу.

Архивные документы последующих веков свидетельствуют о том, что, действительно принявшие ислам отпрыски рода Буртелянов, к которым примкнули обедневшие потомки Сюникского княжеского дома, вместе с подвластными им исламизированными и отуреченными сельскими общинами, продолжали именовать себя Буртелянами—по-турецки «Буртеллу» (برتللو). В Матенадаране им. Маштоца сохранилось несколько датированных 70-ми годами XVII века жалоб настоятеля Татевского монастыря Ованеса вардапета (Шабаноглы), адресованных шаху Сулейману Сефеву, и полученные в ответ на них указы (хукм). Настоятель жалуется как на ущерб, причиняемый монастырским посевам, выгонам и хозяйству кочевыми племенами²¹ при их перекочевках на летние кочевья, так и, в особенности, на враждебные действия со стороны общины Буртеллу, утвердившейся в селении Дарабаз (Агверц), и ее претензии на монастырские владения. В протесте от 1679 г. читаем: «Вот уже четыре года, как община Буртеллу, проживающая в селе Дарабаз, привязалась к нам с целью отнять у нас несколько вакуфных мульков, принадлежащих монастырю... для подтверждения своей клеветы они составили подложный мирской приговор и представили местному хакиму и бекларбеки. По этой причине были посланы алиф в слове اولاد не требует мадды и что после слов «Аллах, Мухаммед, Али» должно следовать имя погребенного, но никак не этноним.

²¹ Матенадаран, Католикосский Диван, п. 2а, док. 65. Упомянуты племена Дживаншир, Огузики, Кячгарлу, Ширваншахлу, Сахиблу, Ходжа Абу-Исхаклу, а также курдские племена Карачорлу и Песан и туркменские племена (таракама) из Карабаха, перекочевывавшие на высокогорные пастбища Сюника с равнинного Карабаха из Баргушата и других местностей.

должностные лица, которые прибили и преследовали монахов и, засеяв в монастыре, взимали алафе, и улуфе, мохлатане, хидматане и другие подати, требуя воздаяний за каждый день»²².

Сохранились также мирские приговоры (махзар), составленные Ованесом вардапетом, и шариатские решения (худджат), на которых имеются многочисленные свидетельства мусульман по спорным владениям—о том, что они были переданы в свое время в вакф монастырю²³. Возможно, этот спор возник вокруг земель, пожертвованных (отданных в вакуфное владение) монастырю христианскими предками Буртелеянов почти за два столетия до этих событий; в сочетании с яркой ненавистью по отношению к покинутой религиозной общине он принял столь резкую форму²⁴.

История ассимиляторской политики мусульманских правителей в XV—XVIII вв. по отношению к немусульманским общинам и частного или массового вероотступничества в результате этой политики как представитель армянской феодальной знати, так и подвластных им армянских общин представляет определенный научный интерес. Она является особым предметом исторической науки, для исследования которого можно найти большой фактический материал в нарративных источниках и памятных записях рукописей, в армянских, персидских и турецких архивных документах и других первоисточниках.

**ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԵՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ՍՅՈՒՆՅԱՅ ԱՇԽԱՐՀԻ
ՆԱՅ ՅԵՈՐԿԱԼԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՄՆԱՅՈՐԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Գ. ՓԱՓԱՋՅԱՆ

(Ս. մ. փ. ո. փ. ո. մ.)

Ազդերեջանական ՍՍՀ ԳԱ Հրատարակչությունը լույս է քննալի Պատմության ինստիտուտի աշխատակցուհի Մ. Ս. Նեյմաթովայի «Мемориальные памятники Азербайджана» գիրքը, որտեղ հրատարակված XII—XIX դդ. 143 տապանագրերի մեջ ընդգրկված են նաև ՀՍՍՀ Սիսիանի շրջանի Ուռուֆ գյուղի գերեզմանատան արարերին, պարսկերեն և թուրքերեն տապանագրերի վերծանություններն ու ուսուերեն թարգմանությունները:


Անհաղորդ լինելով Սյունյաց աշխարհի Որոտն գավառի և բերդի ու տեղական իշխանական տների պատմության սկզբնաղբյուրներին, Հրատարակիչը չի կարողացել հաղթահարել տապանագրերում հիշվող անձնանունների ընթերցումը և թույլ տալով պալեոգրաֆիական վրիպումներ, ընթերցողին է ներկայացրել գիտականորեն չհիմնավորված, սխալ վերծանություն, որին և հաջորդել է այն տեսակետը, թե այդ շիրիմների տակ թաղվածները Սյունիքում բնակվող աղվաններ են, որոնք XV դարում թուրքացվել են ու դարձել ազդերեջանցիներ:

Ներկա հոդվածում, սկզբնաղբյուրների տվյալներով և արարական պալեոգրաֆիայի հանրահայտ սկզբունքների կիրառմամբ ցույց են տրված վերծանության ընթացքում թույլ տրված վրիպումները և ապացուցված, որ հրատարակված №№ 53 և 66 գերեզմանաքարերի վրա փորագրված են XV դարում մահանդականություն ընդունած, Որոտնի Օրբելյանների Բուրթելյան ճյուղի վերջին ներկայացուցիչների հետ խնամիական կապերի մեջ գտնվող և նրանց վասալ, Սյունյաց հին իշխանական տան՝ Սիսակյանների մահանդականացած շառավիղներ՝ Վաղաղնեցի Ավլակումի (Էլիկում) և նրա որդի Ամիր-Վասակի անունները: Մաշտոցի անվան Մատենադարանի կաթողիկոսական դիվանի պարսկերեն վավերագրերի հիման վրա ցույց է տրված նաև, որ ազգային դիմահերման ենթարկված Բուրթելյանների ճետնորդները և նրանց պատկանող Որոտն (Ուռուֆ), Վաղաղին (Վաղաղի), Ըղվերծ (Գարարաղ) և այլ գյուղերի մահանդականացված համայնքները XVI—XVII դդ. բազմիցս հիշատակվում են որպես «Բուրթելյանների համայնք» (շամասթ-և Բուրթելլու):

²² Матенадаран, Католикосский Диван, п. 2а, док. 69, 70а, 70б 70г, 70д и др.

²³ Там же, док. 71, 74, 75, 79, 80, 81, 85 и др.

²⁴ В жалобах Ованеса вардапета содержатся также описания насилия, неслыханных пыток и других омерзительных действий, совершенных представителями общины Буртеллу над армянским духовенством Татевского монастыря.



րուստ ժողովածուներ կան Պոլսի և Երուսաղեմի պատրիարքարանների արխիվներում, որոնք ցարդ մասնագիտական ուսումնասիրության չեն ենթարկվել: Իսկ բուն Հայաստանի կրոնական հաստատությունների, թեմական առաջնորդարանների ու վանքերի արխիվները մեծ մասամբ ոչնչացան մեծ եղեռնի օրերին:

Մեծ է Օսմանյան կայսրության մայրաքաղաքի Արքունի դիվանատներում հարյուրամյակների ընթացքում կուտակված վիթխարի քանակությամբ վավերագրերի⁴ նշանակությունը, որի արխիվային մշակման ենթարկված փոքր մասից կատարված հրատարակումները թեև, ինչպես ասեսանք, բավական շատ են, սակայն առկա նյութի շատ շեշին տոկոսն են կազմում: Պետք է նշել նաև, որ արխիվային գրանցման ենթարկված վավերագրերից օգտվելու հնարավորությունները ևս խիստ սահմանափակ են և այսօրվա դրությամբ դրանցից օգտվելը մեծ դժվարությունների հետ է կապված:

Իրերի բերմամբ, օսմանյան Արքունի դիվանատան վավերագրերի մի մեծ զանգված, 1920-ական թթ. խառը տարիներին, պատահականորեն հայտնվել է Բուլղարիայում և պահ տրվելով կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանին, տեղ գտել Արևելյան բաժնի արխիվում: Այս վավերագրերի նկատմամբ գիտական հետաքրքրությունը սկսվեց 1950-ական թթ. հետո, երբ Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության կառավարության հոգատարության շնորհիվ կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանը ընդարձակվելով դարձավ կրիլի մշակութային և գիտական խոշորագույն կենտրոններից մեկը: Այստեղ հավաքված երիտասարդ թուրքագետներին հանձնարարվեց սխտեմատիկ արխիվային մշակման ենթարկել և ցուցակագրել հարյուր հազարավոր փաստաթղթերի ժողովածու: 1960-ական թթ. վերջերին միայն ի մի բերվեցին կատարված աշխատանքները, որից հետո հնարավոր դարձավ դասակարգել վավերագրերն ու կազմել համառոտ ցուցակներ:

Անհրաժեշտ դարձավ Բուլղարիա գործուղել մասնագետ թուրքագետների՝ սկսելու համար այդ հարուստ արխիվային ֆոնդերի աղբյուրագիտական ուսումնասիրությունը: 1982 թ. հուլիսին կրտսեր գիտաշխատող Ն. Գևորգյանի ընկերակցությամբ մեկնելով Բուլղարիա, մենք հնարավորություն ունեցանք գրադարանի Արևելյան բաժնի վարիչ Ս. Անդրեևի և սպասարկող անձնակազմի սիրալիր գործակցությամբ տեղում ծանոթանալու վավերագրերի՝ այս մեծարժեք ժողովածուի հետ:

Մի քանի հարյուր հազար պատմական վավերագրերի այս հսկայական զանգվածում առկա են Օսմանյան կայսրության, Հյուսիսային Աֆրիկայից մինչև Արիմ ու Հյուսիսային Կովկաս և Գենտրոնական Եվրոպայից ու Բալկաններից մինչև Պարսից ծոց ու Արաբական թերակղզին ձգվող ամբողջ տարածքին վերաբերող բազմապիսի վավերագրեր, որոնք, բաժնի աշխատակիցների երկարամյա ջանադիր աշխատանքի շնորհիվ, աշխարհագրական խմբավորման են ենթարկված և ամփոփված առանձին ֆոնդերում: Դա հնարավորություն տվեց մեզ կարճատև ժամանակամիջոցում աչքի անցկացնել արաբական բազմապիսի խրթին գրություններով բրված ավելի քան 6000 տարբեր բովանդակության վավերագրեր (շուրջ 10 000 թերթ), տեղում վերծանելով և ընդօրինակելով բազմաթիվ կարևոր վավերագրեր և կատարելով առավել արժեքավորները պատճենահանումներ:

Մտաւոր ճշգրտությամբ կատարված հաշվումներով, տարբեր ֆոնդերում գրանցված մեզ հետաքրքրող վավերագրերի ընդհանուր թիվը մոտ 30 000 է (շուրջ 76 000 թերթ), որից 11 500 արխիվային միավորներ (30 000 թերթ) անմիջապես վերաբերում են Պատմական Հայաստանին (ներառյալ նաև Արևելյան Հայաստանը), իսկ 18 000 միավոր (46.000 թերթ) Կիլիկիային և Օսմանյան կայսրության այլ հայաշատ նահանգներին: Արևմտյան Հայաստանին վերաբերող վավերագրերը կենտրոնացված են Էրզրոմի, Վանի, Կարսի, Զլզլի, Բոքսի, Խարբերդի, Դիարբեքի, Մալաթիայի, Մարաշի, Ադանայի, Ալեքսանդրի, Ամասիայի, Անտիոքի, Եդեսիայի, Իկոնիայի, Հալեպի, Տրապիզոնի, ինչպես նաև Բյոթանիայի, Արիմի, Զմյուռնիայի, Թեբրիզազի (Ռոդոստո), Երուսաղեմի և այլ ֆոնդերում:

XVI—XIX դդ. ավելի քան 300-ամյա մի ժամանակաշրջան ընդգրկող բազմահարյուր վավերագրերի մեջ մեծ թիվ են կազմում Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր բնագավառներին վերաբերող փաստաթղթերը: Առանձնապես կարևոր են պետական պաշտոնեությունն ու զինվորականությունը որպես ռուսիկ տրվող ավատների «գիտնեթներ» և «թիմարներ» համանագրերն ու «գեֆթերները», որոնց մեջ մանրամասն թվարկված են գյուղական համայնքներից և հարկատու օրյեկաններից դանձվող հարկերի ընդհանուր գումարները կամ «մուկաթիա-

⁴ Մասնագետների կարծիքով Ստամբուլի պետական արխիվներում գտնվող վավերագրերի թիվն անցնում է 1,5 միլիոնից:

ները»: Աղբյուրագիտական մեծ արժեք են ներկայացնում XVII—XIX դդ. էրզրումի, Ղարսի, Վանի, Մուշի, Դերջանի, Բիթլիսի և այլ քաղաքների արհեստավորներից և առևտրական դասից գանձվող հարկերի ցուցակները և մեծածախ ու մանրածախ գների ռեկլամանտներն ու հարկային տարիֆները, ինչպես նաև մաքսատների, փողերանոցների և այլ պետական եկամտաբեր հաստատությունների վարձակալմանը վերաբերող պայմանագրերն ու պարտավորագրերը: Առանձին ուշադրության արժանի են նաև բերդապահ կայազորների ուժեղացուցակներն ու ռոճիկների հատուցման հանձնարարագրերը: Մեծ է հատկապես գլխահարկին կամ շիլդային վերաբերող վավերագրերի նշանակությունը թե՛ հայ ազգաբնակչության վրա դրված հարկային այդ ծանր ու մեծագոյն պարտավորության հարստահարիչ բնույթի ուսումնասիրության և թե՛ առանձին վարչական միավորների սահմաններում հայության ընդհանուր թիվը պարզելու տեսակետից:

Արխիվում ուրույն տեղ են գրավում Իրանի, Քբիլիսիի և Երևանի ֆոնդերում գրանցված, XVII դարում օսմանյան զորքերի կողմից Անդրկովկասի և Իրանի հյուսիս-արևմտյան նահանգների նվաճման շրջանի (1724—1736 թթ.), ինչպես նաև 1730-ական թթ. պաշտոնական վավերագրերը, որոնք նոր լույս են սփռում դարաշրջանի պատմության վրա և շափազանց կարևոր նշանակություն ունեն Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժումների և Ռուսաստանի հետ միավորման համար մղած հերոսական պայքարի պատմության բազմաթիվ հարցերի լուսաբանման համար՝:

«Հանդեսի» էջերում հնարավոր չէ սպառիչ խոսք ասել հիշյալ ֆոնդերի՝ Արևելյան Հայաստանին վերաբերող բոլոր արխիվային միավորների մասին: Ստորև կփորձենք բնութագրել միայն 1724—1736 թթ. նվաճումների շրջանի վավերագրերը՝ կանգ առնելով հատկապես Արարատյան երկրում թուրքական իշխանությունների ռազմաքաղաքական և ֆինանսահարկային համակարգի առանձնահատկությունների լուսաբանմանը նպաստող առավել կարևոր մի քանի վավերագրերի վրա:

Այս ֆոնդերի ընդհանուր բնութագիրը տալիս հատկանշական պետք է համարել այն փաստը, որ այնտեղ գրանցված վավերագրերը վերաբերում են օսմանյան զորքերի կողմից տարբեր ժամանակամիջոցներում նվաճված Քբիլիսիին, Երևանին, Նախիչևանին, Օրդուբադին, Գանձակին, Շամախուն և շրջակա վայրերին, իսկ Ղարսադին ու Զանգեզուրին վերաբերող մեկ փաստաթուղթ անգամ գոյություն չունի: Իսկ դա հաստատում է այն իրողությունը, որ նույն ժամանակահատվածում գերազանց ուժերին, նվաճողներին չի հաջողվել տեղանորեն ընկճել Աղձախների և Ղափանի գինավառ հայության հերոսական դիմադրությունը և թափանցել Սյունյաց և Արցախի ներքին գավառները: Ուշագրավ է նաև, որ Օրդուբադին վերաբերող վավերագրերի առկայությունը և կից գտնվող Մեղրուն և շրջակայքին վերաբերող վավերագրերի իսպառ բացակայությունը զայս է հավաստելու Գավիթ-Բեկի պատմության որոշակի վկայությունը այն մասին, որ 1727 թ. Մեղրին գրաված օսմանյան զորքերին շախախիչ պարտության մատնելուց, կոտորելուց և Մեղրու բերդը գրավելուց հետո Գավիթ-Բեկի զինվորները այրել ու ոչնչացրել են նաև թուրքական օկուպացիոն իշխանությունների կազմած Մեղրու և մոտակա շրջանների հարկացուցակները՝:

Արևելյան Հայաստանին վերաբերող վավերագրերի բնութագրության մեջ առաջին հերթին անհրաժեշտ է ընդգծել դրանց բացառիկ նշանակությունը որպես օսմանյան իշխանությունների որոշակի նվաճողական նկրտումների և նվաճված վայրերի բնակչության նկատմամբ կիրառվող համատարած կոդապուտի և հարստահարության հետևողական քաղաքականության մասին վկայող անհերքելի փաստաթղթեր: Այս առումով հատկանշական է հիշրեթի 1135 թ. շաբան ամսի 29-ին

5 Առկա են սահմանամերձ էալեթների փաշաների՝ Անդրկովկասի քաղաքական իրավիճակի մասին Արքունի դռանը ներկայացված մանրամասն զեկուցագրեր, որոնց մեջ ուշագրավ տվյալներ կան Հեթակ II-ի կամ սահմանամերձ խանությունների ու ռուսական արքունիքի միջև տեղի ունեցող բանակցությունների, Գաղտանի թուրքամետ իշխողների միջոցով օսմանյան գործակալների ծավալած հակառուսական ակտիվ գործունեության վերաբերյալ: Ուշադրության արժանի են նաև խաներին հղված գրությունների պատճեններն ու դրանց պարսկերեն պատասխանների բնագրերը և այլ փաստաթղթեր: Նախատեսված է առաջիկայում առանձին ուսումնասիրության ենթարկել վավերագրերի այս խումբը և տպագրության պատրաստել մի քանի առավել արժեքավոր վավերագրերի բնագրերն ու թագրմանությունները:

6 Գավիթ բեկ կամ «Պատմություն Ղափանցուց», աշխատասիրեց Հ. Սամունի վրդ. Արամյան. Վենետիկ, Ս. Ղազար, 1978, էջ 172—173 «...դրեռն հարկահանին բացին և անդ էրեսուն և երկու հազար թուղթս հարկաց գտին և զայն ամենայն ի հուր այրեցին»:

(1723 թ. հունիսի 4) դեպի Քրիլիսի արշավող օսմանյան զորաբանակի հրամանատար, էրզրումի Իբրահիմ փառաշի շտաբին առընթեր, Շարի ատյանում կազմված արձանագրությունը, ըստ որի Չըլլըբի էյալեթի Օրուջայա կոլվոզ բանակատեղում փառաշին են ներկայացել Կայդուլիի մահալի (ՀՍՍՀ Ամասիայի և Ղուկասյանի շրջաններ) 31 գյուղերի հայ քյադիուզանները և պարտավորվել նույն թվականից սկսած, երեք տարի շարունակ ստորին շափով չիզյա (գլխահարկ) վճարել օսմանյան իշխանություններին, որից հետո արդեն պիտի վճարեն ընդունված կարգով, այսինքն երեք՝ ստորին, միջին և բարձր սակերով: Բացի դրանից հիշյալ գյուղերի հայ համայնքներին պարտադրվել է հողային հարկի (խարաջ-ի մուվազզաֆա) և օրինական տուրքերի (աուտու-ի կանունիյա) պարբերական հատուցումը, որից հետո միայն նրանց «աման» է շնորհվել, այսինքն կանխվել է այդ շրջանի ասպատակումը, կողոպուտն ու գերեվարությունը դեպի Քրիլիսի արշավող զորքերի կողմից⁷:

Շարիաթական այս արձանագրությանը կամ մահզարին առընթեր պահպանված են նաև Իբրահիմ փառաշի՝ այս կապակցությամբ արբունիքին ներկայացրած զեկուզագրին ու սուլթանական դիվանից ստացված արտոնագիր-հրովարտակը (բերաթ): Վավերագրերի շարադրման եղանակից և բովանդակությամբ ընդհանուր տրամադրությունից պարզ երևում է, որ Անդրկովկասի նվաճման նպատակով արշավանքի էլած օսմանյան զինվորականության գերագույն հրամանատարությունը, սկզբնապես վարելով մեղմ քաղաքականություն, դիվանագիտորեն ձգտում էր առերևույթ դիջողական մեթոդներով կանխել բնակչության հավանական դիմադրության փորձերն ու խռովությունները, նույն ժամանակների այլ վավերագրերի համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս ավելի որոշակիորեն խոսելու հրամանատարության վարած այդօրինակ քաղաքականության մասին:

Ինչպես տեսանք, Կայդուլիի հայ համայնքների հետ համաձայնությունը կայացել է օսմանյան զորքերի հարձակման հենց առաջին օրերին (1723 թ. հունիս), որով և կանխվել է դիմադրությունն ու ուղի հարթվել դեպի Քրիլիսի զորքերի անարգել առաջնադասման համար: Իսկ ահա, 1725 թ. դեկտեմբերին, երբ արդեն զրավված էին Քրիլիսիի և Երևանի բերդերը և օսմանյան հրամանատարությունը պատրաստվում էր վճռական գործողությունների անցնել՝ ճնշելու համար Սղնախների ու Ղափանի զինվորված հայության դիմադրությունը, Արքունի դիվանին ուղղված պաշտոնական ղեկուցագրով Երևանի ղեկավարը հայտնում է այն մասին, որ «Երևանի ենթակա վայրերից Զարուզբիլի նահանգ (ՀՍՍՀ Վարդենիսի շրջան), նախապես սանջաքի իրավունքով տրված է եղել Օմար փառաշին: Սակայն, երբ Աստու կամքով պատուհասի ենթարկվեց, ռայաթները սարսափի ներքո միացան Սղնախի անհավատներին ու թեև հետո նորից հնազանդվելու ցանկություն ունեցան, սակայն, քանի որ նրանց խրատմանն ու կատարությունը դեռ չի անցել, առայժմ նպատակահարմար է դիտվել նրանցից պահանջվող ուշուրն ու ռեսմը (տասա-նորդ ու տուրք) անտես առնել և բավարարվել միայն չիզյայի գանձումով»⁸:

Պատմական կարևոր այս փաստաթուղթը, որ վերաբերում է Գեղարքունյաց երկրի հարավարևելյան շրջաններին, մեծ արժեք է ներկայացնում նաև XVIII դարի առաջին կեսի հայ ազատագրական կռիվների ծավալման ու աշխարհագրական սահմաններին վերաբերող հարցերի լուսաբանման տեսակետից:

Պարզ է, որ 1725 թ. վերջերին, երբ Արցախում ու Սյունիքում կռիվները դեռ շարունակվում էին, հսկայական զոհեր խլելով և ծանր կորուստներ պատճառելով նվաճողներին, կիսով չափ հնազանդեցված շրջաններում օսմանյան հրամանատարությունը հանդես էր գալիս խաբուսիկ, մեղմ հարկային քաղաքականությամբ: Նպատակ ունենալով այդ ձևով աստիճանաբար համոզել մարտնչող զանգվածներին՝ վերջ տալու դիմադրությանն ու ապավինելու նվաճողների ողորմածությանը:

Կարծում ենք, որ բոլորովին էլ պատահական չէ Արարատյան երկրի կենտրոնական գավառների և Երևանի վերաբերյալ այս կարգի փաստաթղթերի բացակայությունը: Դեռևս 1960 թ. Մատենադարանի «Մանրերի» 5-րդ հատորում հրապարակված Վաղարշապատի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակներից պարզ երևում է, որ Երևանի էյալեթի մանրամասն աշխարհագիրը կատարվել է Երևանի գրավումից հետո միայն, որը տեղի է ունեցել 1724 թ. հունիսին⁹,

7 Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրագրանի արխիվ (այսուհետև ԿՄԺԳԱ), ֆոնդ ДАК, վավ. 193/14:

8 Նույն տեղում, վավ. 268:

9 Զ. Փափյան, Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները.—«Մանրեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 437:

Քաղաքի և շրջակա դյուղերի հայ բնակչության հերոսական դիմադրությունը արյան մեջ խեղդելուց հետո էր, որ գործի դրվեց դաժան հարկապահանջության հարյուրամյակների մեծ փորձ ունեցող ֆինանսական-հարկային ապարատը, կազմելու համար հպատակեցված գյուղերի ու ավանների մանրամասն հարկացուցակները:

Բնորոշ է, որ հենց սկզբից էլ կիրառվել է կայսրության բոլոր հերթամասերին հատուկ հարկային համակարգը, հաշվի առնելով նաև տեղական առանձնահատկություններն ու ավանդույթները¹⁰: Այս հանգամանքը հաստատվում է նաև Օ. Լ. Բարբանի հրատարակած՝ Գանձակի վելայեթի նույն թվականների «Կանոննամեում» նշված մանրամասներով, որտեղ վկայակոչված են կըզըլբաշների օրոք ընդունված հարկային նորմերը¹¹:

Ինչպես ժամանակին նշել ենք, այստեղ ևս խիստ հատկանշական է, որ ընդամենը երեք տարի անց, երբ օսմանին զորքերը որոշ հաջողություններ ունեցան Սղնախների և Դավիթ-Բեկի դեմ մղված կռիվներում, ձեռնարկեցին նոր աշխարհագրի և 1728 թ. վերջերին կազմեցին նոր ընդարձակ հարկացուցակներ (զեֆթեր-ի մուֆեսսե), որտեղ բնակչությունից գանձվող հարկերի ու սուրբերի ընդհանուր դրամական համարժեքը, 1725 թ. հարկացուցակի համեմատությամբ, ավելացված էր 2,5 անգամ:

Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի Երևանի ֆոնդում պահվող, Արարատյան երկրից ստացվող եկամտուների մասին 1725—1731 թթ. Երևանի բերդի ղեկավարներին կողմից Արքունի ղեկմանատան գլխավոր հաշվապահությանը (բաշ մուհասիբա) ներկայացված ելումուտի հաշվեկշիռներն ու զեկուցագրերը բացառիկ արժեքավոր մանրամասնություններ են հաղորդում բնակչության տարբեր խավերից և եկամտարևր հաստատություններից գանձվող հարկերի ու սուրբերի և գյուղական բնակչության վրա բարդված հացահատիկի և այլ սննդամթերքների պարբերական մատակարարումների վերաբերյալ:

Չհաշված բազմաթիվ ստացական-անդորրագրերն ու շրջակա գյուղական համայնքներից Երևանի բերդի պահեստները կատարված մթերումների մասին եղած տեղեկանք-վկայագրերն ու հարակից այլազան գրությունները, պահպանվել են բերդի գանձատան (խաղիսա) ելից և մտից մի քանի հանգամանակից ցուցակներ (զեֆթեր-ի մուկաթիաթ), որոնց համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս ավելի որոշակիորեն բնութագրել նորանված վայրերում օկուպացիոն իշխանությունների վարած տնտեսական-հարկային քաղաքականությունը: Այս առումով, առավել պերճախոս տվյալներ է պարունակում հիշերթի 1137 և 1138 (1724—1726) թթ. Երևանի բերդի մուհասիֆի (բերդապահ կայազորի հրամանատար) Ռաջաբ փաշայի, ղեֆթերդար Սուլեյման էֆենդիի և ռուզնամչի (հաշվետար) Մուհամմատ էֆենդիի կողմից Արքունի ղեկմանի գլխավոր հաշվապահությանը Մուֆրադաթի ղեֆթերի (մայր հաշիվ) հիման վրա ներկայացված՝ հիշյալ թվականների ելից և մտից մանրամասն հաշվեկշիռը, որն ինչպես ասվեց, ընդունված էր կոչել «Դեֆթեր-ի մուկաթիաթ»¹²:

Դեֆթերը բաղկացած է երեք մասից. ա) Մուկաթիաների եկամտուները (երադ-ի մուկաթիաթ), բ) ծախսեր (մեսարիֆ), գ) մուծումներ պետական զանձարան (հեալաթ ան մալ-ի իրսալա-ի խաղիսա): Եկամտուների մասում նախ տրված է առաջին մուհասիֆի վեղիր Ահմադ փաշայի օրոք 1724 թ. հաստատված մուկաթիաների ցուցակը, ըստ որի պարզ է դառնում, որ Երևանի գրավումից անմիջապես հետո, սկզբնապես հաշվում են ենթարկվել միայն Կերիբուլազի, Կարպիի, Գառնիի, Շարուրի, Սուրմալուի, Դարաշիշազի, Դարալազազի նահիաների մուկաթիաները, և ապա մուկաթիաներ են նշանակվել նաև Սադարակի ու Աղազալայի մաքսատներում ու Կողբի աղահանքերում, որոնց ընդհանուր գումարը կազմել է 55870 շուրուշ կամ ասլանլու («զոլթ-ի ասադ») — առյուծով զլոտա): Այնուհետև տրված է 1725—1726 թթ., հաջորդ մուհասիֆի վեղիր Ռաջաբ-փաշայի օրոք կազմված մուկաթիաների ցուցակը, որտեղ նախորդ ցուցակում հիշված մուկաթիաներին ավելացել են Գուգլայի օջաթլըքի, Նախիջևանի կադայի, Աստապատի, Շորադայի, ինչպես նաև միլրաթության (չրբաշխության), Երևանի մաքսատան (գյուլարուզի), ներկատան, օճառանոցի, սպանդանոցի և էջմիածնի վանքի մուկաթիաները, որով ընդհանուր գումարը դարձել է 197370 շուրուշ, այսինքն նախորդ մուկաթիաների գումարից շուրջ 3,5 անգամ ավելի:

¹⁰ Նույն տեղում, էջ 439:

¹¹ Օ. Լ. Բարբան, «Kanunlar», s. 195—197.

¹² ԿՄՄԳԱ, ֆոնդ 327, վավ. 37:

Հայերից գանձվող գլխահարկը՝ ջիզյան, տրված է առանձին, որի ընդհանուր գումարը առաջին գանձման ժամանակ եղել է 36915, իսկ երկրորդ գանձման ժամանակ՝ 75080 ասլանլուու երկու գանձումների ընդհանուր գումարն է 111995 ասլանլուու: Այս գումարից 5490-ը վճարել են ունեւորները, 3460-ը միջակները, իսկ 103045-ը՝ չթափոքները: Զիզյայի գումարների մանրամասն վերլուծությունը կարոտ է առանձին ուսումնասիրության: Այն կարեւոր է հայ ազգաբնակչության ընդհանուր թվաքանակին և սոցիալական վիճակին վերաբերող հարցերի պարզաբանման համար: Սակայն առաջին հայացքից դժվար չէ նկատել, որ եթե սկզբնական գանձման ժամանակ, ջիզյա վճարող շափահաս հայերի թիվը 14317 շունչ էր, որից 79-ը ունեւոր, 212-ը միջակ և 14026-ը չթափոր, ապա երկրորդ գանձման ժամանակ 28138 շնչից 470-ը ունեւոր են, 480-ը միջակ և 27188-ը չթափոր: Այսինքն երկրորդ ցուցակագրության ժամանակ ունեւորների թիվն աճել է վեց անգամ, միջակներին՝ 2,26 և չթափորներիին՝ 1,22 անգամ: Ըստ որում, ճշտվում են նաև ջիզյայի վերին, միջին և ստորին (ալա, օլսաթ, աղնա) նորմերը՝ տարեկան 10, 5 և 2,5 ասլանլուու կամ դուրուշ:

Այնուհետև եկամտուների մեջ նշված են նաև երեւնում և նախընկած սեփականատերերի բացակայության պատճառով պետականացված (միրի դարձված) կալվածների վաճառքից գույացած գումարները՝ 27521 դուրուշ, վախճանված քյաթիր Մուհամմազ էֆենդու մոտ հայտնաբերված, բնակչությունից գանձված գումարների մնացորդը՝ 14608 դուրուշ, ինչպես նաև տեղում հավաքագրված շարքային զինվորների (երևու նաֆարաթ) համար նախատեսված, սակայն չհատուցված ռոճիկագումարները՝ 13317 դուրուշ, որոնց գումարը լինում է 57496, իսկ եկամտուների ընդհանուր գումարը դառնում է 412005: Սրանից տեղում կատարված ծախսերի ընդհանուր գումարը կազմում է 16677 դուրուշ, որի 2/3-ից ավելին բերդապահ կալազորի ռոճիկներն են և անուղի համար (միս, հաց, գարի և այլն) հատկացված գումարները: Գրանցումները կատարված են բավական մանրամասն, նշելով զորքերի բոլոր տեսակներն ու լուրաքանչլուրի ռոճիկների հատուցման շափն ու ժամանակը: Կան նաև նշումներ Ղարսում գնված հացահատիկը Շորագյալի վրայով երևանի բերդի պահեստները տեղափոխելու համար սալլապաններին տրված փոխարարավարների մասին:

Մնացյալ գումարի 80 տոկոսից ավելին բերդի վերանորոգման, խանդակների փորման և այլ ամրությունների՝ զորանոցների, պահեստների ու պահակատների (չեբեխանե, կարաուլխանե) կառուցման, ինչպես նաև հրետանու պարագանների (լեվազիմ-ի թոփխանե) հայթայթման համար կատարված ծախսերն են: Հիշվում են տարբեր մասնագիտության շինարարներ, մի՛մար (ճարտարապետ), բաննա (դրմանդի), դաշբասան կամ դաշի (քարգործ), նաջբար (հյուան), ահնգեր (երկաթագործ), սեւագործ բանվորներ (ռանջբարան) և այլն: Շինարարական աշխատանքները ղեկավարել է արբունի ճարտարապետ (մի՛մար-ի խասոս) Մուստաֆա-աղան:

Հաշվեկալման երրորդ և վերջին մասն, ինչպես ասվեց, վերաբերում է Արբունի գանձատուն կատարված մուծումներին, որոնք հիմնականում իրացվել են վերուստ կատարված ցուցումների համաձայն՝ փոխանցումներով (էվամիր-ի ալիյե իլե հեալե օլունան): Հաշվապահական ճշգրտությունը և մանրամասն բացատրություններով կատարված ելից գրանցումները ցույց են տալիս, որ երևանի գանձատան (խազինա) վրա ծանրացած է եղել ոչ միայն երևանի բերդապահ կալազորի, այլև էրզրումի, Վանի, Թբիլիսիի, Գորիի, Լոռու և այլ բերդերի ենիլերական բերդապահ զորամասերի (մուհաֆիզին-ի կալա) ռոճիկների հատուցման պարտավորությունը: Ավելին, հրահանգված է եղել երևանի գանձատան գումարներով տեղում կատարել հացահատիկների և այլ մթերքների մեծաքանակ գնումներ՝ ապահովելու համար էրզրումի բերդի ձմեռային պաշարները (գլխախորհրհաս-ի զիմսթանի): Բազմաթիվ հանձնարարագրերով գումարներ են հատկացվել նաև Անատոլիի և էրզրումի վալիներ, սարասկարներ՝ Մուստաֆա փաշաների հրամանատարության ներքո գտնվող Թավրիզ, Համաղան, Սպահան և Գանձակ արշավող զորաբանակների ռոճիկների հատուցման և պարենամթերքների ձեռք բերման համար:

Ի մի բերելով հաշվեկալի տվյալները, ղեֆթերի եզրափակիչ գնկույցում ասված է, որ երևանի գանձատան 1137 և 1138 (1724—1725) թթ. եկամտուներից բերդապահ կալազորի անձնակազմի ռոճիկների և այլ ծախսերի հաշվին գրանցված 166777 դուրուշից բացի, թեև նախապես արված հրամանի համաձայն որոշված է եղել մնացյալ 245228 դուրուշը մուծել պետական գանձարկը, սակայն այս ընթացքում ստացված հանձնարարականների և հրահանգների հիման վրա 241810 դուրուշ վերը նշված կարգով փոխանցվել է ուր որ անկ է, և այժմ դրամարկղում կանխիկ կա միայն 2400 դուրուշ:

Ինչպես տեսանք, երևանի նվաճումից ընդամենը մեկ ու կես տարի հետո, Ռաշաբ փաշայի

մուհահարիզության օրոք կազմված էլից և մտից (իրադաթ վե մասարիֆ) դեֆթերը օսմանյան օկուպացիոն իշխանութիւնների՝ նվաճված երկրամասերում վարած հարկային բաղաբականութեան հարստահարիչ բնույթը բացահայտող եզակի մի փաստաթուղթ է, որը, միաժամանակ, շարադրված լինելով վարչական ապարատում հարյուրամյակներ ի վեր կիրառվող հաշվապահական սկզբունքներով, կայսրութեան վարչատնտեսական համակարգի ուսումնասիրութեան առաջին հավաստի սկզբնաղբյուրների շարքը կարող է դասվել:

Նույնքան բովանդակալից և խոսուռ են նաև 1730-ական թթ. մուկաթիայի դեֆթերներն ու հարկերի հատուցմանը վերաբերող մյուս պաշտոնական վավերագրերը, որոնց մեջ ավելի մանրամասն են արձանագրված Արարատյան երկրի գյուղական համայնքներից գանձվող բնամլր-թերքների քանակն ու դրանց դրամական համարժեքները: Ուշագրավ տվյալներ են հաղորդված հատկապես Ուլքիխայի (Վաղարշապատ), Քանաբոնի, Բջնիի, Արզականի, Չագավանքի, Առինջի, Արզնիի, Գյամրեզի, Ծաթղուանի, Սամաղարի, Աղավնատան, Նազրեանի, Գյոզ-գյում-բեթի, Գառնիի, Չոլմազլիի (Նորք), Նորազեզի, Շենգավիթի, Կարպիի, Սաֆիաբադի, Մոլլաբայազիդի, Բաթնիչի, Ելղովանի, Արալղի, Ակոռու, Խալափարաիի, Հաջի-իլլազի, Մեհմանդարի, Ջանֆիդայի, Ջաֆարաբադի (Արզավանգ), Հաջի-բեկուի, Ղամարուի (Արտաշատ), Գավալուի (Արարատ), Խոլլասարի, Եղվարդի, Դվինի և բազմաթիվ այլ մեծ ու փոքր գյուղերի համայնքների վրա դրված հարկային պարտավորութիւնների մասին:

Կասկածից դուրս է, որ խնդրո առարկա վավերագրերի ճշգրիտ վերծանված գիտական բրնագրերի և դրանց թարգմանութիւնների՝ անհրաժեշտ ծանոթագրութիւններով օժտված հրապարակումները, մեծ չափով կարող են նպաստել նշված ժամանակաշրջանի և՛ սոցիալ-տնտեսական, և՛ քաղաքական պատմութեան առավել հանգամանալից հետազոտութեան կարևոր էական հարցերի լուսաբանմանը: Այդպիսի աշխատանքներ արդեն իսկ նախատեսված են Մաշտոցի անվան Մատենադարանի առաջիկա տարիների գիտահետազոտական սլլաններում:

Գիտական ավելի լայն շրջանակներին մատչելի դարձնելու նպատակով ստորև աղբյուրագիտ-պատմաբանների ուշագրութեան ենք ներկայացնում, մեզ արդեն ծանոթ, Երևանի բերդի 1724—1725 թթ. մուկաթիաների Արբունի դիվանին ներկայացված էլից և մտից դեֆթերի թուրքերեն բնագրի լիակատար վերծանութիւնն ու հայերեն թարգմանութիւնը: Կից տրվում է նաև վավերագրի նմանահանութիւնը, որը մի քանի անգամ փոքրացված լինելու պատճառով, առավել դժվարընթեռնելի լինելով հանգերծ, կարող է օգնել որոշակի գաղափար կազմելու այս կարգի հաշվետվութիւնների և օսմանյան պետական գրասենյակային հաշվապահական համակարգի մասին:

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Դ. ՓԱՓԱՉՅԱՆ

Մ ա տ յ ա ն

1137 և 1138 թթ. վերաբերող Երևանի մուկաթիաների

Երևանի մուհահարիզ, մեծարգո Ռաջար փաշայի ծանուցմամբ, որ համապատասխանում է Եոռեանի ռուզնամչի Մուհամադ [էֆենդիի] և դեֆդերդար Մուլեյման էֆենդիի [գրանցումներին] և գերագույն հրամանագրի բովանդակութեանը:

1139 թ. ռաբի՛ I ամսի 12-ին (1726 թ. նոյեմբերի 7)

1137 թ. վերաբերող Երևանի մուկաթիաների եկամուտները նախորդ մուհահարիզ մեծարգո վեզիր Ահմադ փաշայի օրոք

Կըրթբուլաղի նահիայի մուկաթիան՝	9500 առյուծով	
	զլոտա	
Կարպիի նահիայի մուկաթիան՝	7000	»
Գառնիի նահիայի մուկաթիան՝	7700	»
Շարուրի նահիայի մուկաթիան՝	15000	»
Սուրմալուի և Արալղիի նահիայի մուկաթիան՝	5400	»
Կողբի աղահանքերի մուկաթիան՝	6000	»
Դարաչիլազի մուկաթիան՝	1500	»

Դարալագյաղի մուկաթիան՝	3000	»
Սաղարակի մուկաթիան՝	380	»
Աղջաղալայի մուկաթիան՝	390	»
	<hr/>	
Գումարը՝	55870	»
Երևանի դեֆեբերդարի լիազոր Ադհամ Իբրահիմ	3000	»
էֆենդիի ստացածը՝	<hr/>	
	52870	»
Երևանի դեֆեբերդար Ահմադ էֆենդիի բարաթով	7726	»
ստացածը՝	<hr/>	
	45144	»

1138 թ. վերաբերող Երևանի էյալեթի մուկաթիաների եկամուտը
Երևանի մունաֆիզ, մեծարգո վեզիր Ռաջաբ փաշայի օրոք

Կըրխբուլաղի մուկաթիան՝	14500	»
Կարպիի նահիայի մուկաթիան՝	13060	»
Գառնիի նահիայի մուկաթիան՝	11980	»
Շարուրի նահիայի մուկաթիան՝	8000	»
Սուրմալիի և Արալըղի մուկաթիան՝	29500	»
Դարալագյաղի օջաքլըքի մուկաթիան՝	15500	»
Գյոզչայի օջաքլըքի մուկաթիան՝	18000	»
Աստապատի խասերի մուկաթիան՝	37500	»
Նախչևանի կաղայի մուկաթիան՝	20230	»
Դարաշիշազի մուկաթիան՝	2820	»
Շորագյալի մուկաթիան՝	1280	»
Աղջաղալայի մուկաթիան՝	1800	»
Կողբի աղահանքերի մուկաթիան՝	8100	»
Սաղարակի մուկաթիան՝	1850	»
Միրաբուլջան մուկաթիան՝	3000	»
Ներկատան և օճառատան մուկաթիան՝	900	»
Երևանի մաքսատան մուկաթիան՝	8500	»
Երևանի սպանդանոցի մուկաթիան՝	350	»
Ուշքիլիսայի (էջմիածին) մակթուի մուկաթիան՝	350	»
	<hr/>	
Գումարը՝	197370	»

Սիլահդարի ֆարսուղար, հանգուցյալ Մունամադ էֆենդիի
ձեռքով եկած թերթիկներից, 1137 թ. բաժանված ջիզայի թերթիկները՝

Վերին՝ 79 հատ	790	»
Միջին՝ 212 հատ	1060	»
Ստորին՝ 14026 հատ	35065	»

Ջոկդար Անմադ-աղայի ձեռքով եկած,
սույն օրհնյալ տարում բաժանված թերթիկները՝

Վերին՝ 470 հատ	4700	»
Միջին՝ 480 հատ	2400	»
Ստորին՝ 27188 հատ	67980	»

Սիլահդարի քարտուղար Մունամադ էֆենդիի մա-
հից հետո Շարի գիտությամբ հաշիվները ստուգելիս
պարզվեց, որ նրա կողմից գանձված է՝

	14608	»
--	-------	---

Երևան քաղաքում, Միրիի կողմից վաճառված սեփականատեր շունեցող մուլքերի գինը՝	17521	»
Նախջևանում Միրիի կողմից վաճառված սեփականատեր շունեցող մուլքերի գինը՝	10000	»
Երևանի փողերանոցի կապալառուից 1138 թ. մուհառամ ամսի սկզբից մինչև նույն թվականի վերջը (1725 թ. սեպտ. 9—1726 թ. օգ. 28)	2050	»

Նախապես օրապահիկ (ուլուֆե) տրված լինելու պատճառով, զաիմ Մուհամադ-աղայի ձեռքով եկած տեղի զինվորականության ռոճիկների [գումարից] նրանց միայն 4451 դուրուշ, 1137 թ. զիհաջայի ամսականը բաժանվեց, մնացյալ գումարը մուտք եղավ Երևանի գանձատանը.	13317	»
	412005	»

Մրանից՝ Լեբեդևիչյալ ծախսերը՝

Հստ մայր մատյանի, բարձրագույն հրամանով կափուկուլիների տեղացի զինվորների (երլուներ) և ալլոց մսի, հացի և գարու հատկացումների համար, 1137 թ. սաֆարի 22-ից մինչև 1138 թ. սաֆարի վերջը (1724 թ. նոյ. 10—1725 թ. նոյ. 6) 361 օր	34000	»
Հստ հանդիպակաց մատյանի, տարբեր տոկոսներով, տեղացի զինվորականության ռոճիկների համար 1138 թ. մուհառամի սկզբից մինչև հիշյալ տարվա վերջը (1725 թ. սեպտ. 9—1726 թ. օգ. 28)	55551	»
Միրիի լեվենդների օրապահիկի (ուլուֆե) և հատկացումների համար, 1138 թ. մուհառամի 15-ից մինչև 1138 թ. զիկա՛ղայի 15-ը (1725 թ. սեպտ. 23—1726 թ. հուլիս 15) 10 ամիս, 400 հոգի՝	23639	»
Հստ մայր մատյանի, Ղարսից գնված պաշարների, Շորագայի պահեստից Երևանի պահեստը տեղափոխելու դրաստների վարձի համար՝	12024	»
Բարձրագույն հրամանով, Երևանի օթևանի ու կարավանատան համար, 1138 թ. մուհառամի սկզբից մինչև նույն տարվա վերջը (1725 թ. սեպտ. 9—1726 թ. օգ. 28)	200	»
Խասեյի ճարտարապետ Մուստաֆա-աղայի ներկայացմամբ և կնքյալ մատյանով, խանդակի փորման և նոր զինանոցի ու պահակատների կառուցման, ճարտարապետի, որմնադրի, քարհատների և բանվորների վարձի համար, 1137 թ. սաֆարի 22-ից մինչև 1138 թ. զիհաջայի 11-ը (1724 թ. հոկտ. 11—1725 թ. օգ. 21) 110 օր՝	12413	»
Խանդակ փորելու և պարիսպներ կառուցելու համար, բանվորների, քարհատ վարպետների և հյուսնի տրված վարձն ու երկաթագործների ծախսի ու կարիքների գինը, 1138 թ. ռաբի՛ II-ի 12-ից մինչև 1138 թ. զիկաղայի վերջը (1725 թ. դեկտ. 17—1726 թ. հուլ. 30)	25950	»
Հրետանու որոշ կարիքների ծախսի և պետական պահեստների տեղեկագրերի համար՝	1200	»
	Գումարը՝ 166777	»
Մնացյալը՝ Երևանի գանձատան առաքած մալը՝	245228	»

Մրանից, զանձման բարձրագույն նրամանով, Երևանի զանձատնից առաջվող մալի փոխանցումներ՝

... ⁹ [Երևանի] բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ուճիկների հատուցման համար՝	10000	»
Թիֆլիսի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ուճիկների հատուցման համար՝	10000	»
Թիֆլիսի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ուճիկների ակչեի հատուցման համար՝	10521	»
Հրզրումի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. ձմեռային պաշարների գինը՝ 10 փարա	1116	»
Ձմեռային [կարիքների] գինը	451	»
	1567	»
Հրզրումի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների ուճիկների հատուցման համար՝	3182	»
Երևանի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ուճիկների հատուցման համար՝	5000	»
Երևանի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ուճիկների հատուցման համար՝	3868	»
Երևանի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ուճիկների հատուցման համար՝	5000	»
Գորիի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ուճիկների հատուցման համար՝	2913	»
Վանի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ուճիկների հատուցման համար՝	1789	»
«Պատճառ գրույս» 10 հրամանագրերով կատարված փոխանցումների գումարը՝	53841	»

Այնուհետև «պատճառ գրույս» և «արժույթի օրհանգի պատճենով» կատարված փոխանցումներ

Երևանի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ջեբեջիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ուճիկների հատուցման համար՝	2000	»
Անատոլիի վալի, մեծարգո վեզիր Մուստաֆա փաշային փոխանցելու համար, որը Թավրիզի վրայով գործուղված էր Համադանի ուղղությամբ առաջացող սարսակար Ահմեդ փաշայի մոտ, ինչպես նաև դեպի Գանձակ, 1139 թ. (1726—1727)	7500	»
Գումար՝	9500	»

* Բնագիրը պատված է:

Այնուհետև, բարձրագույն հրամանագրով կատարված փոխանցումներ

<p>Անատոլիի վալի Մուստաֆա փաշայի ցուցմունքով, Սպահանի ուղղութիւնով առաջացող զինվորականութեանը կատարված անհրաժեշտ հատկացումների գծով, 1139 թ. Երևանի էյալեթում պաշարներ գնելու համար՝</p>	<p>50600 »</p>
<p>Նորին սրբութուն, բարձրագույն սադրի աղաների աղա, Քուրդ Օսմանի վերակացութեամբ, Արդաբիլի էյալեթում ձեռք բերված պաշարների գնի [հատուցման] համար՝</p>	<p>25000 »</p>
<p>Համադանի և Սպահանի ուղղութիւնով նշանակված սարասկարի մոտ գործուղված, Անատոլիի վալի, մեծարգո վեզիր Մուստաֆա փաշայի ցուցմունքով, զինվորականութեան ուժիկների հատկացումների գծով, պաշարների և անասունների գնի [հատուցման] համար, որ ի հաշիվ 1139 թ. տրված է էմին-ի նազլ Իբրահիմ աղային՝</p>	<p>25000 »</p>
<p>Գանձակի ուղղութիւնով սարասկար նշանակված, էրզրումի վալի, մեծարգո վեզիր Մուստաֆա փաշային ենթակա զինվորականութեան ամենօրյա անհրաժեշտ հատկացումների գծով, պաշարների գնի [հատուցման] և այլ կարևոր ծախսերի համար, գանձատան 1139 թ. փաստաթղթերով հանձնված է Գանձակի դեֆթերդարի լիազորին՝</p>	<p>25000 »</p>
<p>Գանձակի ուղղութիւնով սարասկար նշանակված մեծարգո վեզիր Մուստաֆա փաշային ենթակա, բարձրագույն սեմի ենիչերիների, ջեբեջիների, հրետանավորների և հրետանու սալլապանների (արաբաջի), ինչպես նաև կոռիի բերդի պահպանութեան բարձրագույն սեմի ջեբեջիների 1139 թ. ուժիկների [հատուցման] համար՝</p>	<p>53469 »</p>
<p>Հինգ բարձրագույն հրամանագրերով կատարված փոխանցումների գումարը՝</p>	<p>178469 առլուծով դուրուշ</p>
<p>«Պատճառ գրույս», «արքունի օրհաշվի պատճենով» և բարձրագույն հրամանագրերով կատարված փոխանցումների գումարը՝</p>	<p>241810 »</p>
<p>Վերոհիշյալ փոխանցված գումարը ամբողջութեամբ հատուցվելուց հետո, Երևանի գանձատան առկա մնացորդն է՝</p>	<p>2418 »</p>
<p>Երևանի մուհաֆիզ, մեծարգո վեզիր, հանգուցյալ Ռաշաբ փաշայի դեֆթերդար Սուլեյման էֆենդու և ռուզնամշի Մուհամադ էֆենդու կնիքներով կրնքված, նախապես արձանագրված մալր մատչանի համաձայն, 1137 և 1138 թթ. Երևանի գանձատան բուն եկամուտներից 160777 դուրուշ, Երևանի բերդի տեղական զինվորականութեան ուժիկներից ու նախատեսված այլ ծախսերից բացի, Արքունի գանձատան հանձնվելիք 245228 դուրուշի վերաբերյալ, նախապես սրբազան հրամանագիր էր ստացվել, որպեսզի ուղարկվի և հանձնվի գանձատան, որից հետո, նշված ուղարկվելիք գումարից, այս կողմերում անցկացվող փոխադրումների վրա ծախսելու նպատակով, «պատճառ գրույս» հրամանագրերով, «արքունի օրհաշվի պատճենով» և բարձրագույն հրամանագրով 241810 դուրուշ, փոխանցումներով ուղարկվել է մատչանում գրանցված վայրերը, որից հետո գանձարկղում մնացել է 2418 դուրուշ, որի մասին և անհրաժեշտ համարվեց սույն պատճենը ներկայացնել:</p>	
<p>1139 շավալի 17-ին (1727 թ. հունիս 7)</p>	

Handwritten musical notation at the top of the page, consisting of a single line with notes and a clef.

Handwritten musical notation, likely a title or subtitle, centered above the first system.

First system of handwritten musical notation, featuring a treble clef, a key signature of one flat, and a 2/4 time signature. The notation includes several measures with notes and rests.

Handwritten musical notation, likely a title or subtitle, centered above the second system.

Second system of handwritten musical notation, continuing the piece with similar notation and a treble clef.

Handwritten musical notation, likely a title or subtitle, centered above the third system.

Third system of handwritten musical notation, featuring a treble clef and a 2/4 time signature. Below the notation is a block of handwritten text in Persian script.

Block of handwritten text in Persian script, likely a dedication or a note related to the music. The text is arranged in several lines and includes names and dates.

Handwritten musical notation, likely a title or subtitle, centered above the fourth system.

Fourth system of handwritten musical notation, featuring a treble clef and a 2/4 time signature. The notation includes several measures with notes and rests.

Fifth system of handwritten musical notation, featuring a treble clef and a 2/4 time signature. The notation includes several measures with notes and rests.

Handwritten musical notation on a staff, consisting of several measures of notes and rests.

Handwritten musical notation on a staff, consisting of several measures of notes and rests.

Handwritten musical notation on a staff, consisting of several measures of notes and rests.

Handwritten musical notation on a staff, consisting of several measures of notes and rests.

Handwritten musical notation on a staff, consisting of several measures of notes and rests.

Handwritten musical notation on a staff, consisting of several measures of notes and rests.

Handwritten musical notation on a staff, consisting of several measures of notes and rests.

Handwritten musical notation on a staff, consisting of several measures of notes and rests.

Handwritten musical notation on a staff, consisting of several measures of notes and rests.

Handwritten musical notation on a staff, consisting of several measures of notes and rests.

Handwritten musical notation on a staff, consisting of several measures of notes and rests.

Handwritten musical notation on a staff, consisting of several measures of notes and rests.

Handwritten text in Persian script, likely a commentary or explanation related to the musical notation above. The text is written in a cursive style and includes some decorative elements.

دفتر مقاطعات ایالت روان واجب سنه ۱۱۳۷ و سنه ۱۱۳۸ بر موجب
اعلام وزیر مکرم رجب باشا محافظ روان ۰۰۰ رانه دفتر محمد روزنامچی
روان و سلیمان افندی دفتر دار روان و تلخیص فرمان عالی فی سنه ۱۱۳۹

ایراد مقاطعات ایالت روان در زمان محافظ سابق وزیر مکرم
احمد باشا واجب سنه ۱۱۳۷

زولت اسدی	۹۵۰۰	مقاطعه ناحیه قرق بولاق
" "	۷۰۰۰	مقاطعه ناحیه کربی
" "	۷۷۰۰	مقاطعه ناحیه کارنی
" "	۱۵۰۰۰	مقاطعه ناحیه شرور
" "	۵۴۰۰	مقاطعه ناحیه سورملو و ارهلق
" "	۶۰۰۰	مقاطعه مصلحه قلب
" "	۱۵۰۰	مقاطعه دره چبچک
" "	۳۰۰۰	مقاطعه دره الاکز
" "	۳۸۰	مقاطعه صدرک
" "	۳۹۰	مقاطعه اقچه قلعه
" "	۵۵۸۷۰	یکون
" "	۳۰۰۰	مقبوضی ادهم ابراهیم افندی و کیلدنتردار
" "	۵۲۸۷۰	روان
" "	۷۷۳۶	مقبوضی برانی احمد افندی دفتر دار روان
" "	۴۵۱۴۴	

ایراد مقاطعات ایالت روان در زمان وزیر مکرم رجب باشا
محافظ روان واجب سنه ۱۱۳۸

زولت اسدی	۱۴۵۹۰	مقاطعه قرق بولاق
" "	۱۳۰۶۰	مقاطعه ناحیه کربی
" "	۱۱۹۸۰	مقاطعه ناحیه کارنی

"	"	8000	مقاطعة ناحية شرور
"	"	29500	مقاطعة سرملی و ارهلق
"	"	10000	مقاطعة دره الاكر او جلق
"	"	18000	مقاطعة كوچه او جلق
"	"	27500	مقاطعة خواص یزدآباد
"	"	20230	مقاطعة قضاء نخجوان
"	"	2820	مقاطعة دره چيچك
"	"	1280	مقاطعة شوره كل
"	"	1800	مقاطعة اچه قلعه
"	"	8100	مقاطعة مملحه قلب
"	"	1850	مقاطعة صدرک
"	"	3000	مقاطعة میرابلق
"	"	900	مقاطعة بويه خانه و صابونخانه
"	"	8500	مقاطعة کيرک روان
"	"	250	مقاطعة قصابخانه روان
"	"	250	مقاطعة مقطوع اوج کليسا
"	"	<u>19370</u>	يكون

ساحدار کاتبی متوفی محمد افندی یدیله کلان اوراقدن یوز
 اوتوزیدی-نه سنده توزیع اولنان جزیه اوراقی

زولت اسدی	790	اعلا - 79 عدد
" "	1070	اوسط - 212 عدد
" "	2070	ادنی - 14026 عدد

حوفدار احمد اغا یدیله کلان اوراقدن ایشوسنه مبارکهده
 توزیع اولنان اوراق

زولت اسدی	4700	اعلا - 470 عدد
" "	2400	اوسط - 2400 عدد
" "	77980	ادنی - 27188 عدد

- برای منزل روان و کاربار برای با امر عالی عن
 غره محرم سنه ۱۱۳۸ الی غایه سنه مزبور
 " " ۲۰۰۰
 برای اجرت معمار و بنا و طاش کسن ورنجبران
 در حفر خندق و بناه چیه خانه جدیده و قراولخانه
 ها با معرفت معمار خاصه مصطفی اغا و یاد دفتر
 میپور عن ۲۴ ص سنه ۱۱۳۷ الی ۱۱ د سنه ۱۱۳۸
 " " ۱۲۴۱۳ ۱۱۰- ایام
 برای اجرت رنجبران و طاشچیان و نجار و بهاء
 خرج و لازمه آهنگران در حفر خندق و بناه دیوارها
 عن ۱۲ ر سنه ۱۱۳۸ الی غایه ذ سنه ۱۱۳۸ - ایام
 " " ۲۵۹۵۰ ۲۵۱-
 برای مصارف بعضی لازمه طوبخانه و تقریرات میری
 " " ۱۲۰۰
 " " ۱۱۶۷۷۷ یکون
 " " ۲۴۵۲۲۸ الباقی مال ارساله خزینه روان

منها الحوالات عن مال ارساله خزینه روان با حکم سنیه تحریر

- برای اداء مواجب یکجیریان درگاه عالی در
 محافظه قلعه روان ...
 " " ۱۰۰۰۰ زولت اسدی
 برای اداء مواجب یکجیریان درگاه عالی در
 محافظه قلعه تغلیس واجب رشن لذذ سنه ۱۱۳۸
 " " ۱۰۰۰۰
 برای اداء ائجه مواجب یکجیریان درگاه عالی در
 محافظه قلعه نغلیس واجب رشن لذذ سنه ۱۱۳۸
 " " ۱۰۵۲۱
 برای نخیره بهاء زمستانی یکجیریان درگاه
 عالی در محافظه قلعه ارض روم واجب سنه
 " " ۱۱۱۶ ۱۰ پاره - ۱۱۳۸
 " " ۴۵۱ بهاء زمستانی
 " " ۱۵۶۷

برای اداء مواجب یکجیریان درگاه عالی در
 محافظه قلعه ارض روم واجب مصر رج رشن لذذ

		جانب اصفهان بامعینه مصطفی پاشا والی اناطولی در سنه ۱۱۳۹
زولت اسدی	۵۰۰۰۰	برای بهاء نخواستن جانب ایالت اردبیل و بمباشرت کورد عثمان اغا اعیان حضرت صدر عالی در سنه ۱۱۳۹
" "	۲۵۰۰۰	برای بهاء نخواستن و اغنیام برای تعیینات موجب عسکریه که بامعینه وزیرمکرم مصطفی پاشا والی اناطولی به نزد سرعسکر همدان و اصفهان مأمورشدگان در سنه ۱۱۳۹ تسلیم به ابراهیم اغا امین نزل
" "	۲۵۰۰۰	برای بهاء نخواستن لازم تعیینات روزمره طوایف عسکریه در نزد وزیرمکرم مصطفی پاشا والی ارض روم سرعسکر جانب کنجه و مصارف مهمه سایر به وکیل دفتر دارکنجه با تسلیم سند خزینه در سنه ۱۱۳۹
" "	۲۵۰۰۰	برای موجب یکجریان و جبه جیان و طوبجیان و عربجیان طوب درگاه عالی در نزد وزیرمکرم مصطفی پاشا سرعسکر جانب کنجه و جبه جیان درگاه عالی در محافظه قلعه لوری واجب سنه ۱۱۳۹
" "	۵۳۶۶۹	یکون بش قطعها و امر علیه ایله حواله اولنان یکون سبب تحریر احکامی و صورت روزنامه همایون و او امر علیه ایله حواله اولنان الباقی حواله اولنان مبلغ مزبور بالجمله ادا اولند قدده موجود خزینه روان اقتضا ایدن
غروش اسدی	۱۷۸۶۶۹	
" "	۲۶۱۸۱۰	
" "	۲۶۱۸	

روان محافظی متوفی وزیر مکرم رجب پاشا نیک و دفتر دار سلیمان
افندی و روزنامه محمدافندی که مهور مقدم کلوب قید
اولنان مفردات دفتر موجب بیگ یوزا و توزیدی و یوزا و توز سکر
سنه لری روان خزینه سینک اصل حاصل اولان ایرادنک روان قلعه سی
یرلو نفراتی موجب و سایر مصارف مقرره اوزره یوزا التمنس التي بیگ
یدیوز یتمیش یدی غروشدن غیری خزینه عامه به ارساله اقتضا ایدن


ایکیبوز قرق بش بیک ایکیبوز یگر می سکز غروش استا نه خزینه سنه ارسال
 و تسلیم خزینه ای تدر لکم اوزره بوندن اقدم امر عرف کوتدر لمشیدی
 بعده ارساله اقتضا ای دن مبلغ مزبور بو طرفه کلمش عبر و نقله مصرف
 اقتضا ایلمکله سبب تحریر احکامی و صورت روزنامه هما یون و او امر
 علیه موجبجه دفتر اولنان محللره ایکیبوز قرق بر بیک سکز یوز اون
 غروش حواله اولنمقله ادا و تسلیم اولندقدن صکره [ایکی بیک در تیون]
 اون سکز غروش یخی موجود خزینه اولمق لازم کلمکده اشبو صورت ورلدی
 فی ۱۷ شوال ۱۱۳۹ [امضاء]

ОСМАНСКИЕ АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ
 НАРОДНОЙ БИБЛИОТЕКИ КИРИЛЛА И МЕФОДИЯ В СОФИИ

Доктор ист. наук А. Д. ПАПАЗЯН

Резюме

В архивном фонде Восточного отдела Народной библиотеки Кирилла и Мефодия— крупнейшего культурного центра Болгарии, хранятся несколько сот тысяч архивных османских документов XVI—XIX вв.; в последнее десятилетие они привлекают к себе пристальное внимание источниковедов. Среди документов, касающихся различных стран, подчиненных Османской империи, в этом фонде около 30.000 имеют отношение к Армении и являются ценнейшими первоисточниками по истории политической, социально-экономической и общественной жизни Армении указанного периода. В настоящей статье вкратце излагаются результаты нашего исследования, проведенного в архиве Восточного отдела библиотеки во время научной командировки 1982 г. В архивном фонде хранятся также более тысячи документов, относящихся ко времени оккупации Закавказья турецкими войсками в 20—30-х гг. XVIII в. К статье прилагается полная расшифровка и армянский перевод турецкого текста отчета о доходах и расходах Ереванской крепости, отправленного в 1724—25 гг. в главное финансовое ведомство— Верховный Диван—командованием турецкими оккупационными войсками.



ՀԱԿՈՐ ՓԱՓԱԶՅԱՆ

ԿՈՒԼԹԵՆԿԻ ՈՐԳԻՆՆԵՐ ԳՈՒԼԱԲԻԻ ԵՎ ԳԱԼՈՒՍՏԻ 1847 ԹՎ.
ՍՈՒԼԹԱՆ ԱՐԳԻՈՒԼ-ՄԵՋԻԳԻՑ ՍՏԱՅԱԾ ԱՐՏՈՆԱԳԻՐԵՐԸ

Օսմանյան պաշտոնական դիվանական վավերագրերի ցարդ կատարված աղբյուրագիտական ուսումնասիրություններն ու գիտական հրապարակումները, առավելապես ընդգրկում են ֆեոդալական իմունիտետի կամ մուաֆուսթյան, ներքին վերաշտնտեսական և հատկապես հարկային սխտեմին վերաբերող վավերագրերն ու հարկացուցակները¹: Ներքին և արտաքին առևտրին, ապրանքափոխանակությանն ու առևտրական հարկերին ու մաքսային գանձումներին վերաբերող նյութերը մեծ մասամբ վերաբերում են կայսրության եվրոպական մայր ցամաքում գտնվող նահանգներին: Ուշագրավ են հատկապես անվանի թուրքագետ պրոֆ. Լ. Ֆեբեթեյի 1550—1580 թթ. Բուդապեշտի և մերձակա շրջանների մաքսատնային մատյանների գիտական բարձր մակարդակով կատարված հրապարակումները²:

XVI—XIX դդ. Օսմանյան սուլթանների և նահանգային փաշաների կողմից հրապարակված հրովարտական և հրամանագրերի մեջ յուրահատուկ տեղ են գրավում առանձին խոշոր վաճառականների և առևտրական ընկերությունների տրված բերաթներն ու բույուրուլիթիները, որոնք կայսրության ներքին և հատկապես արտաքին առևտրի վերաբերյալ առավել հավաստի փաստական տվյալներ պարունակող վավերագրական սկզբնաղբյուրներ են հանդիսանում:

Մասնակի ծանոթությունը վերջերս կատարված մի քանի հրապարակումների հետ, թույլ է տալիս խոսելու, արտաքին առևտրի բնագավառում և վաճառականության նկատմամբ Օսմանյան պետության ընդգծված ուշադրության և շահախնդրության մասին: Այս առումով հետաքրքիր են հատկապես Մ. Գուլ-օղլուի հրատարակած Ռումինական ժող. հանրապետության ԳԱ գրադարանում և Պետ. Արխիվում պահվող XV—XIX դդ. վավերագրերը: Հատկանշական է, որ Կոստանդնուպոլսի գրավումից ընդամենը երեք տարի անց (1456 թ.) հրապարակած հրովարտական, սուլթան Մուհամմատ 2-րդը գրում է. «Քանի որ Բողզանեյի տիրոջ՝ Պետրի վոյեվոդի հետ հաշտություն եմ կնքել և մեր մեջ եղած թշնամությունը վերացրել եմ և հրամայել եմ, որ նրա երկրում՝ Ակկեր-

¹ O. L. Barkan, XV ve XVI inci asirlarda Osmanli Imperatorlugunda zirai ekonomia hukuki ve mali esaslari, I cild "Kanunlar", Istanbul, 1945. H. Inalcik. Hicri 835 tarihli Sûret-i sancak-ı Arvanid, Ankara, 1945, Turk tarih Kurumu yayimlarından XIV seri: Tahrir defterleri n. 1. Kaldy-Nagy. Gy. Kanuni Devri Budin Tahrir defteri Ankara, 1971. دفتر مفصل ولايت گورجستان، نور كجه متنى ترجمه تدقيق و تحشيه.

2. Փափագյան, * Իդն ս. * յիկիա, Բրնջի Կտաբ—Մտն, Կիլիսի 1947.
Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, «Բանբեր Մատենագարանի», № 5, Երևան, 1960:

³ Rechnungsbücher Türkischer finanzstellen in Buda (ofen) 1550—1580, herausgegeben von L.Fekete und Gy. kaldy-Nagy, Budapest, 1962.

մանում գտնվող առևտրական նավերով մարդիկ զան և էղիրնեում, Բուրսայում և Ստամբուլում ժողովրդի հետ առևտուր անեն ու վաճառականություն զբաղվեն, ուստի, երթևեկության ընթացքում իմ սուբաշիներից, սիփահիներից և ղուլերից ոչ մեկը նրանց անձին և ապրանքին վնաս չպատճառի, և եթե լսեմ, որ հրամանիս հակառակելով, նեղություն են տվել, թող իմացած լինեն, որ ղուլ կողարկեմ և նրանց մեծագույն աղետի կենթարկեմ»³:

Մ. Գուբոզլուի օսմանյան դիվանագրության և հնագրության ժամանակագրական ուսումնասիրությանը նվիրված մեծարժեք աշխատության մեջ կան վաճառականներին շնորհվող արտոնությունների վերաբերյալ նաև այլ հետաքրքիր հրովարտականեր ու հրամանագրեր⁴:

Օսմանյան տերության պետական բյուջեյում կարևոր տեղ էին զբաղում արտահանվող և ներմուծվող ապրանքներից կատարվող մաքսային գանձումները: Ղ. Ինճիճյանի հավաստի տեղեկություններով XVIII դ. վերջերին և XIX դ. սկզբներին կայսրության պետական բյուջեն գոյանում էր ա) ոսկու և արծաթի հանքերից, բ) նվաճված ժողովուրդների վրա դրված հարկերից, գ) հողային տիրույթներից (մալիքանե, մուգադա, զիամեթ, թիմար, սեհիմ և այլն) և ներմուծվող ու արտահանվող ապրանքներից գանձվող մաքսերից⁵: Լայնածավալ կայսրության նավահանգստային և սահմանամերձ մաքսատնային լայն ցանցը, ինչպես նաև ներքին կարավանային ուղիների վրա գտնվող ճանապարհապաշտպան ծառայության կետերը, որոնք շատ հաճախ, արքունի գանձատուն կատարվող միանվագ մեծագումար մուծումների դիմաց կապալով տրվում էին առանձին վարձակալների, հսկայական եկամուտի աղբյուրներ էին, որոնց տեական գործունեությունը պայմանավորված էր միայն առևտրական կապիտալի անընդհատ և հարաճուն շրջանառությամբ:

Անընդմեջ պատերազմական գործողությունների ընթացքում նույնիսկ, ինչպես Արևմուտքում, այնպես նաև Արևելքում, թուրքական օկուպացիոն իշխանությունները նվաճված երկրների ընդհանուր մարդահամարին և հարկատու բնակչության ցուցակագրությանը զուգահեռ, շտապում էին կարգավորել նաև ներքին և արտաքին առևտուրը և ապահովել վաճառականական ապրանքներից կատարվող մաքսային գանձումները: 1729 թ., երբ օսմանյան բանակը ներխուժելով Անգրկովկաս ու Ատրպատական ռազմակալման էր ենթարկել Արևելք-Արևմուտք առևտրական գլխավոր մայրուղու վրա գտնվող վաճառաչահ քաղաքները, Թավրիզի զինվորական նահանգապետը ջանքեր էր ներդնում վերականգնելու Իրանից արտահանվող մետաքսի դեպի Թուրքիա և Եվրոպա առաքումը: Հատուկ շրջաբերական-հրամանով նա տեղեկացնում էր երկրի վաճառականներին, որ նրանց ներկայացուցիչների հետ փոխադարձ պայմանավորվածություններով մետաքսի բեռներից գանձվող մաքսի նոր սակեր են նշանակվել և սահմանվել է, որ մետաքսի առևտրով երթևեկողները մաքս վճարեն միայն Արդաբիլի և Թավրիզի մաքսատներում⁶:

³ M. Guboglu, Paleografia și diplomatica Turco-osmana, Editura Academiei Republicii Populare Romine, 1958, doc. 3.

⁴ Նույն տեղում, վավ. 15, 28, 89, 103, 115, 186 և այլն:

⁵ Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն շորից մասանց աշխարհի, հ. Ե., Վենետիկ, 1804, էջ 45-49:

⁶ Հ. Փափազյան, Հայերի դերը Թուրքիայի մետաքսագործության մեջ և 1729 թ. Թավրիզում կնքված համաձայնագրերը, «Բանբեր Մատենադարանի», № 9, Երևան, 1969:

Ապրանքափոխանակությունը հարևան և հեռավոր, արևելյան և եվրոպական երկրների հետ, իրագործվում էր տերություն սահմաններում բնակվող, նվաճված, մեծ մասամբ քրիստոնյա վաճառականության միջոցով, որոնց համար սահմանված էին հատուկ օրենքներ և տրված՝ որոշակի իրավունքներ: Կար առևտրի առանձին միևնույնություն (Թիջարեթ նեղարեթի), որը վերահսկում էր այդ օրենքների կիրառմանը և հսկում, որ վաճառականների առևտրական գործունեությունը ընթանա այլ երկրների հետ կնքված առևտրական պայմանագրերի սահմաններում:

Սակայն պետության բնույթից բխող անհանդուրժողական վերաբերմունքը այլապես, հատկապես օտարերկրացի քրիստոնյաների նկատմամբ և դրա հետևանքով ստեղծված անապահով վիճակը դժվարացնում էր, երկրի համար կենսական նշանակություն ունեցող ապրանքափոխանակությունը եվրոպական երկրների հետ: Խոսելով եվրոպական երկրների, Թուրքիայում ձեռք բերած «կապիտուլացիոն» իրավունքների մասին, 1854 թ. Կ. Մարքսը գրում էր. «Քանի որ Ղուրանը յուրաքանչյուր օտարերկրացու թշնամի է հայտարարում ոչ ոք չի համարձակվի գտնվել մուսուլմանական երկրում, առանց նախազգուշական միջոցներ ձեռք առնելու: Այդ պատճառով, առաջին եվրոպացի վաճառականները, որոնք համարձակություն են ունեցել առևտրական հարաբերությունների մեջ մտնելու այդպիսի մի ժողովրդի հետ, փորձել են նախ և առաջ անձամբ իրենց ապահովել բացառիկ պայմաններով և առանձնաշնորհումներով, որոնք, սակայն, հետագայում տարածվել են նրանց ողջ ազգի վրա: Այսպիսին է կապիտուլացիաների ծագումը»⁷:

Առաջին միջպետական համաձայնագիրը, որտեղ դիվանագիտորեն ձևակերպված են այլապես օտարերկրացիների վաճառականությանը տրվող արտերկրային (էքստերիտորիալ) առանձնաշնորհումները, դա 1535 թ. սուլթան Սուլեյման Կանունիի և Ֆրանսիայի կայսր Ֆրանսուա I-ի միջև կնքված պայմանագիրն է, որի օրինակով էլ հետագայում հար և նման պայմանագրեր կնքվեցին եվրոպական մյուս տերությունների հետ⁸:

Եվրոպացի վաճառականության արտոնյալ վիճակը զգալի չափով դժվարացնում էր տեղական, հատկապես հայ վաճառականության գործը: Ինքնին հասկանալի է, որ առևտրում անխուսափելի մրցակցության մեջ, այս պարագաներում նրանք առավել անբարենպաստ պայմաններում էին գտնվում և պարզ է, որ պիտի ուզիներ որոնեին դուրս գալու անիրավահավասար վիճակից և ձեռք բերելու որոշ իրավունքներ, մրցակցությանը դիմանալու և արդյունավետ առևտրական գործունեություն ծավալելու համար:

Օսմանյան կայսրության արտաքին առևտրում հայ վաճառականության գրաված տեղի և իրավական վիճակի մասին ուշադրավ մանրամասներ են պարունակում նշանավոր Կյուլպենկյան առևտրական տան նախնիների 1847 թ. սուլթան Աբդուլ-Մեջիդից ստացած երկու արտոնագիր-հրովարտակաները: Այդ հրովարտակաների (բերաթ, ֆերման) վավերական պատճենները պահպանվում են Կյուլպենկյան հաստատության Լիսաբոնի կենտրոնում, որոնց լուսանկարները հրապարակման իրավունքով տրամադրել է մեզ հաստատության տնօրեն Ռ. Կյուլպենկյանը⁹:

7 К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 10, М., 1958, стр. 168.

8 История дипломатии, т. I. М. 1959, стр. 258.

9 Ցավոք, այդ լուսանկարները հաջող չեն Ուտի, կից հրագրակվող հրովարտակաների

Պատճենները հանված են Կ. Պոլսի Մահմուդ-փաշա թաղամասի Շարի ատյանում (մահջամե), պահպանելով բնագրի ձևն ու շափը, ոսկեզօծված և զարդանկարված են բնագրերին համանման և հաստատված՝ «Իսկականին համապատասխան է» մակագրությամբ և գրասենյակի պետ, գործավար Սելիդ Իսմայիլի կնիքով: Ընդօրինակությունը կատարված է, նման բերաթնեթին բնորոշ, գեղեցիկ «ոհիլ» գրությամբ: Վավերագրերի ընդհանուր վիճակը գոհացուցիչ է, վնասված են միայն առաջին հրովարտակի 40 և 41-րդ տողերը:

Բերաթնեթը թեև տրված են Կեսարիայում հիմնված Կյուլպենկյան առևտրական տան արտոնատեր Կուլպենկի որդի Գուլաբիին և որպես լիազոր (վեթիլ) հանդես եկող եղբորը՝ Գալուստին, սակայն դրանց մեջ որոշակիորեն ուրվագծված են Օսմանյան Թուրքիայում բնավկվող հայ վաճառականության իրավունքները:

Նախապես նշելով սուլթանի հատուկ ուշադրությունը առևտրի ու վաճառականական դասի նկատմամբ, բերաթում ասված է, որ «անհրաժեշտ է բարձր տեղության զիմմի ուսյաթնեթի առևտրական գործունեությունը որոշակի կարգ ու կանոնի ենթարկել և այսպիսով ապահովել դրանից գոյացող բազմապիսի շահն ու օգուտը»:

Հրովարտակներից պարզ երևում է, որ եվրոպական երկրների հետ առևտուր անող զիմմի վաճառականության իրավունքները սահմանելիս, նկատի են առնված այդ երկրների քաղաքացիներ հանդիսացող վաճառականներին Թուրքիայի սահմաններում շնորհված արտոնությունները, «Որքանով որ վերոգրյալ մարդկանց (զիմմի վաճառականներ) առևտուրը բացառապես եվրոպական երկրների հետ է, ուստի օտար (մուսթեմին) թարգմանիչներին և գործակատարներին շնորհվող արտոնությունները, ապահովությունը, օժանդակությունն ու հովանավորությունը, նրանց և երկու գործակատարների նկատմամբ ևս, առանց խտրության գործադրվում է»:

Գծվար է ասել, թե այս արտոնությունները ո՞ր ժամանակից և ո՞ր սուլթանի օրոք են շնորհվել եվրոպական երկրների հետ առևտուր անող հայ վաճառականներին: Գիտենք միայն, որ յուրաքանչյուր նոր սուլթանի օրոք վերանորոգվում էին նախորդի կողմից տրված բերաթնեթը: Ինչպես որ այս բերաթնեթը ևս տրված են հիշք. 1249 (1833) թ., նախորդ սուլթան Մահմուդ II-ի բերաթի հիման վրա, և առևտրի միևնույնության կողմից ստուգվելուց (յոթլամա) հետո, նախորդ բերաթը վերցվել ու անվավեր (բատալ) է դարձվել: Ուրեմն միշտ ուժի մեջ է եղել գահակալ սուլթանի բերաթը, իսկ նախորդինը որպես հիմք վերցվել և պահպանվել է արքունի դիվանում: Հետևաբար պարզ չէ նույնիսկ, թե Կյուլպենկյաններին տրվող նմանատիպ առաջին բերաթը երբ և որ սուլթանի կողմից է հրապարակված:

Եվրոպական երկրների քաղաքացիները բերաթներում անվանվում են Մուսթեմին բերզումակար, որ բառացի նշանկում է «աման» կամ ապահովություն վայելող թարգմանիչներ: Խոսքը վերաբերում է արքունի ծառայության մեջ գտնվող եվրոպացի թարգմանիչներին, որոնք օժտված էին դիվանագիտական մարմիններին հատուկ արտերկրային իրավունքներով: «Մուսթեմին թերզումակար» տերմինի կիրառումը առևտրականներին տրվող արտոնագրերում, գալիս է հաստատելու, որ կապիտուլյացիոն արտոնությունների հայերեն թարգմանությունը առնթիւր տալիս ենք միայն Թուրքերեն վերծանված բնագիրն, առանց լուսանկարների:

րը, ըստ էության նույն այդ իրավունքներն էին բովանդակում: Հետևաբար հենց այդ իրավունքներից էր, որ պիտի օգտվեին Առևտրի մինիստրությունում գրանցված հայ վաճառականները, որոնք անվանված են «ղեֆթերու թաշիր»:

Այսպես, օրինակ, ազատ երթևեկության մասին, բերաթում ասված է. «օտարներին և նրանց վերաբերող մարդկանց տրվող հրամանագրերի նման, սրանց ևս, նույնօրինակ առևտրական պայմանների նշումով: Ճամբորդության հրամանագրեր տրվեն» և ապա մանրամասնելով նշված է. «Ինչպես որ օտար թարգմանիչների և նրանց զավակների ու կանանց սնունդի ու հագուստի նկատմամբ միջամտություն և ոտնձգություն չի թույլատրվում, այնպես նաև սրանց և իրենց զավակների ու կանանց սնունդի ու հագուստի նկատմամբ որևէ միջամտություն և ոտնձգություն չպետք է լինի»: Այնուհետև յուրաքանչյուր արտոնության մասին նշելիս միշտ վկայակոչվում է մուսթե՛միններին տրված արտոնությունները:

Բերաթներում ուշագրավ մանրամասնություններ կան ներմուծվող և արտահանվող ապրանքներից գանձվող մաքսերի տարբեր սակերի և իրացման կարգի, գիմմիններից գանձվող գլխահարկի կամ ջիզլայի հատուցման ձևերի, առևտրական բազմաբնույթ վեճերի քննության համար սահմանված օրենքների, վախճանված վաճառականների ունեցվածքի տնօրինման կամ ժառանգության, ինչպես նաև վաճառականական դասի համբարական կազմակերպությունների ու ավազների (կոշարեկի) ընտրության կարգի վերաբերյալ: Խստագույն հրամանով, բոլոր հրահանգների ճշգրիտ կիրառությանը հետևելու պարտավորությունը դրվում է պետական բարձրատիճան պաշտոնեության՝ վալինների, հաբիմների, զաբիթների և այլոց վրա, զգուշացնելով, որ բերաթ ունեցող վաճառականների նկատմամբ «նոր հաստատված օրենքներին հակասող ոտնձգություններ թույլ չտան, նեղություն չպատճառեն, այլ արքայական բարեխնամ իշխանության պահանջով, բոլոր դեպքերում հովանավորեն և պաշտպանություն ցույց տան»: Միաժամանակ շեշտված է նաև, որ «նշված առանձնաշնորհումները միայն անձամբ վերագրյալ վաճառականներին և նրանցից յուրաքանչյուրի երկու գործակատարներին է վերաբերում: Իսկ նրանց զավակների, աղզականների և տեղում մեծաշուք հրամանագիր չունեցող գործակատարների նկատմամբ, պետք է վարվել այնպես, ինչպես վարվում են մյուս ռայթների նկատմամբ»:

Ստորև հրատարակվող հրովարտականներից առաջինը սուլթան Աբդուլ-Մեջիդի բերաթն է տրված Կուլբենկի որդի Գուլաբիին, իսկ երկրորդը նույն բերաթի հիման վրա, Կեսարիո Շարի նախքին ուղղված ֆիրմանն է (հրաման), որով հայտնում է ի գիտություն, որ Կուլբենկի որդի Գալուստը ևս, սահմանված կարգով ջիզլա վճարելուց հետո, որպես Գուլաբիի երկու գործակատարներից մեկը, օժտված է նույնպիսի արտոնություններով:

I

Բարձրագույն իսկականին համապատասխան է:

Հնդգորինակվեց բարձրագահ մայրաքաղաքի Մահմուդ-փաշայի ատյանի (մահքամա), լիազոր-փոխարինող, նվաստագույն ժառա Աեյիդ-Իսմայիլ Ֆահիմի կողմից:

Տերն է տնօրինում Աեյիդ-Իսմայիլ ֆահիմի գործերը:

— ԿՆԻԲ —

ԲԱՐՁՐԱՇՈՒՔ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

Օսմանյան բարեբախտ զահի արքայական գերերջանիկ զահակալությանը արժանանալուց հետո, մեր մեծաշուք տերության ընթացիկ օրենքներին համապատասխան, ձեռնարկեցինք հրովարտակների ու հրամանագրերի նորոգմանը և տիրոջ օգնությամբ ձեռնամուխ եղանք երկրի բարեկարգմանն ու առևտրի ծավալմանը, ուշադրության առնելով հատկապես վաճառականների և ուսուցիչների վիճակի կարգավորումը:

Այս տեսակետից հարկ համարվեց, գործի ղեկավարման կատարելությանն ու արդյունավետությանը նախանձախնդիր և պետությունների օրենքների և բոլոր ազգերի միջև ընդունված կարգի համաձայն, նույն օրենքներին ենթարկվելով, թե ցամաքային և թե ծովային ուղիներով եվրոպայի, Պարսկաստանի և Հնդկաստանի հետ առևտուրով զբաղվող և վաճառականական դասի շարքերում լինելու և ընկերակցելու ցանկություն ունեցող մեր բարձր տերության զիմմի ուսուցիչների առևտրական գործունեությունը որոշակի կարգ ու կանոնի ենթարկել և այդպիսով ապահովել դրանից գոյացող բազմապիսի շահն ու օգուտը:

Արքայական պետության համոզմամբ, այս գործի անհրաժեշտ նախապայմաններից է հիշյալ վաճառականների վերաբերյալ, արքունական հրամանագրով հաստատված կարգի համաձայն, իրենց կողմից ընտրված վստահելի մարդկանցից բարձրագույն հրամանով, երկու հոգու որպես լիազոր նշանակումը:

Այս լիազորները ամեն տարի կարող են փոխվել և նրանց տեղը, կրկին բոլորի ներկայությամբ ու ընտրությամբ, ուրիշներ կարող են նշանակվել:

Որքանով որ վերոգրյալ մարդկանց առևտուրը բացառապես եվրոպական երկրների հետ է, ուստի օտար (մուսթեմին) թարգմանիչներին և գործակատարներին շնորհվող արտոնությունները, ապահովությունը, օժանդակությունն ու հովանավորությունը, նրանց և երկու գործակատարների նկատմամբ ևս, առանց խտրության գործադրվում է:

Եվ քանի որ վերոհիշյալ վաճառականներին և սրանց երկուական գործակատարներին առևտրի վերը նշված նախապայմանների և այլ իրավունքների մասին այլևայլ բարձր հրովարտակներ և հրամանագրեր են տրվում, նույն հիմունքներով մեր բարձր տերության ուսուցիչներից, եվրոպական երկրների հետ առևտրով զբաղվող Կեսարիո բնակիչ և արքայական բարձր հրովարտակ ստացող Կուլբենկի որդի Գուլաբի կոչվող վաճառականին 1249 թվականի ռաբի II ամին (1833 թ. սեպտ. 11—14) տրված բարձր հրովարտակը նորոգված լինելու պատճառով և Առևտրի մինիստրության կողմից կրկին ստուգվելուց հետո վերոհիշյալ հին հրովարտակը վերցված և անվավեր դարձված լինելու պատճառով, սույն արքայական հրովարտակը շնորհեցի:

Միաժամանակ հրամանագրեցի, որ հիշյալ Կուլբենկի որդի Գուլաբին այսուհետ ևս ճանաչվի որպես զբանցված (դեֆթերու) վաճառական և եթե ընդունված կարգով նշված եվրոպական վաճառականներից մեկը կամ նրանց գործակատարն ու պաշտոնյան պետք ունենան առևտրական նպատակներով որևէ տեղ գնալ, վերագրյալ լիազորներից կնքյալ խնդրագրեր ներկայացնելու դեպքում, օտարներին և նրանց վերաբերող մարդկանց տրվող հրամանագրերի նման, սրանց ևս, նույնօրինակ առևտրական պայմանների նշումով, ճամ-

բորգություն հրամանագրեր տրվեն, և ինչպես որ օտար թարգմանիչների և նրանց զավակների ու կանանց սնունդի և հագուստի (ուտելիք և հագնելիք) նկատմամբ միջամտություն և ոտնձգություն չի թույլատրվում, այնպես նաև սրանց և իրենց զավակների ու կանանց սնունդի ու հագուստի նկատմամբ որևէ միջամտություն չպետք է լինի:

Հրովարտակ ունեցող վաճառականների իրենց եղած վայրում, այլևայլ հրովարտակներով նրանց հատկացված երկուական գործակատարները ևս թող նույն առանձնաշնորհումներին արժանի համարվեն: Այդ երկու գործակատարներից մեկը անհրաժեշտության դեպքում իրավունք ունի Իզմիրում, կամ առևտրական կենտրոն հանդիսացող այլ վայրում հաստատվելու:

Հրովարտակ ստացողներից որևէ մեկը եթե ստորագրված և վճարման ենթակա մուրհակի համաձայն կամ լիազորների ու համաքրության (էսնաֆ) անդամների բանավոր վկայությամբ հաստատված պահանջ ունենա, ձեռքում եղած մուրհակը դատավորին (հաքիմին) ցույց տալուց և ապացուցելուց հետո, պահանջված գումարը ենթակա է գանձման և հարյուրին երկու տոկոսից ավելի տուրք (ոեսմ) չպետք է պահանջվի:

Հիշյալ վաճառականներից մեկը, լինի դա մուսուլմաններից, թե ռայաթներից, իր իրավունքները պաշտպանելու համար դատարան կամ բարձրագույն դուռը ուղարկելու նպատակով...*

Հաստատված վաճառականներն ու նրանց գործակալները առևտրի միևնիստություն կողմից վերակացուներ...** կողմից վերակացու շնչանակվի: Իսկ եթե հարկ լինի նրանց կալանքի տակ վերցնել, հիշյալ միևնիստության հանձնարարությամբ միայն կարելի է այդ անել:

Որքանով որ սրանք մեծ մասամբ եվրոպական ապրանքների առևտրով են զբաղվում, թե՛ օտարների, թե՛ մահմեդականների կամ այլ ազգությունների ներկայացուցիչների հետ վեճ ու տարաձայնություն առաջանալու դեպքում, հիշյալ միևնիստության համաձայնությամբ, վաճառականների և նրանց կողմից ընտրված, ճանաչված, վստահելի ու արժանահավատ մարդկանց ներկայացմամբ, վաճառականաց օրենքների համաձայն, առևտրական տանը գործին վերահասու լինեն ու վեճը հարթեն: Իսկ եթե հարկ լինի դիմել սրբազան Շարի-ին, այլ վայրում հարցը չքննեն, միայն շեյխ-ուլ-իսլամի ներկայությամբ, Շարի օրենքների համաձայն գործին նայեն և հարցը լուծեն:

Սրանից բացի, այդ վաճառականներին վերաբերող այլ կարգի գործերը ևս առևտրական փաստաթղթերում, հատկապես հաշվապահական մատյաններում թող մուտք արվի, և քանի որ դրանք հիշյալ միևնիստությանը վերաբերող գործեր են, որպիսությունը վերոգրյալ ձևով և հիշյալ վաճառականների ընդհանուր վիճակը հաշվի առնելով, նույն միևնիստության կողմից, ըստ ժամանակի պահանջների վերանայվի, և այդ ձևով միայն պատահող գործերը, միևնիստության վերահասությամբ նայվի և կարգադրվի:

Ինչպես որ պայմանագրում նշված կարգով 4000 ափսից ավելի գումարների շուրջ եղած վեճերը կարգադրված է լսել միայն մեր երջանիկ սեմում, այնպես նաև այս վաճառականների օտարների հետ ունեցած վեճերը նույն ձևով թող ներկայացվեն երջանիկ սեմին: Ի նկատի պետք է ունենալ, որ մեր

* Երեք տող չնջված է:

** Երեք բառ չնջված է:

բարձր տերուլթյան բերաթավոր ոռոգման և այլ պետութայն վաճառականների միջև վեճեր ծագելու դեպքում, պետք է հաշվի առնել երկու պետութայնների միջև կնքված պայմանագրերում նշված պայմանները և դրանց հակասող ոչինչ թույլ չտալ:

Այս դասի մարդկանց, նման իրավունքներ տալու նպատակն է դուրսբերել ստեղծել: Ուստի այդ վաճառականների միջոցով օտար երկրներից մեր ապահով երկրները բերվող ապրանքներից և իրերից, Անգլիայի, Ֆրանսիայի և որոշ այլ բարեկամ պետութայնների հետ վերջերս կնքված առևտրական պայմանագրերի և սահմանված սակագների համաձայն, ներմուծվող ապրանքներից, որպես մուտքի (ամադիյե) հարկ հարյուրին 3%, իսկ ելքի (ռաֆթիյա) թամդայի և այլ տուրքերի դիմաց, հավելյալ, հարյուրին 2% մաքսատուրք պետք է վճարել: Իսկ մեր արքայական ապահով երկրներում արտադրվող ապրանքները, իրենք ու մթերքները արտահանելիս, տեղում վաճառողի տասնորդից և պահանջվող թամդայի տուրքից բացի, ըստ վերոհիշյալ սակագնի, նավահանգստում ապրանքն իջեցնելիս, հարյուրին 8% մուտքի տուրք, իսկ շրջանները տանելու համար հարյուրին 3% ելքի տուրք թող վերցնեն: Մեր արքայական ապահով երկրներում արտադրվող ապրանքների, երկրի ներսում կատարվող առևտրի ժամանակ նմանապես, բոլոր, տեսակի ապրանքներից, իրերից և մթերքներից գանձվող տուրքերը ևս սահմանված կարգով առանց հարկադրանքի և խախտումների պետք է հատուցվի:

Երբ հիշյալ վաճառականները, նշված կարգով, պահանջվող մաքսատուրքը վճարած և վճարումը հաստատող անցաթուղթ ձեռք բերած կլինեն, նրանցից կրկին հավելյալ մաքս չպահանջեն և գանձումներ չկատարեն, և եթե մաքսատան լիազորները հավելյալ կամ կրկնակի մաքսի անվան տակ դրամ գանձած լինեն, անմիջապես ետ վերադարձնեն:

Վալիները, հաքիմները և այլ պաշտոնյաներն ու զաբիթները հիշյալ վաճառականների նկատմամբ սրբազան Շարիին հակառակ և նոր հաստատված օրենքներին հակասող ոտնձգութայններ թույլ չտան և նրանց նեղութայն չպատճառեն, այլ արքայական բարեխնամ իշխանութայն պահանջով բոլոր դեպքերում հովանավորեն և պաշտպանութայն ցույց տան:

Բերաթ ունեցող վաճառականների և նրանց գործակատարների նահանգային գործերին և ավագութայն (կոշաբաշիլըք) հարցերին ոչ մի դեպքում չմիջամտեն, նախապես եղած արտոնութայններով և կարգով թող լինի: Հակառակը չի թույլատրվում: Միայն եթե որոշ երկրներում բերաթավորներից զատ, լավատեղյակ անձանց մեջ ավագութայն պաշտոնին հարմար մարդ չլինի և կարիք լինի այդ վիլայեթի ոռոգմանին դեկավարելու և գործերին հասնելու համար, բերաթավոր վաճառականներից ավագ նշանակել, և եթե այդ երկրում գտնվող բոլոր ոռոգմանները ցանկանան, այդպիսի վայրում կարելի է միայն նրանց թույլատրել ավագութայն պաշտոնը վարել:

Սակայն ավագութայն պաշտոնը վարող անձնավորութայնը, այլևայլ առանձնահատկութայններից զերծ լինելու պատճառով, ոռոգմանի նկատմամբ ջիզայի օրենսդրութայնը հակառակ, որևէ բռնութայն կամ անվայել արարք թույլ չտա, իսկ եթե թույլ տա, նրա նկատմամբ պետք է գործադրել պատժական օրենսգրքով նախատեսված պատիժները:

Վերոհիշյալ վաճառականներից եթե մահացողներ լինեն, նրանց խափնութայնները, գրասենյակները և այլ ստացվածքները Շարիից և հիշյալ միսիս-

տրրությունից բացի ոչ ոք իրավունք չունի կնքել: Նրանց թողած անշարժ կայքն ու կալվածները և այլ մեծ կամ փոքր իրերն ու կանխիկ դրամը, եթե ժառանգներ կան, պետություն (միրի) կողմից միջամտության, կնքման և գրավման ենթակա չեն: Եթե տղա կամ աղջիկ անշահաֆաճաս ժառանգներ կան, օրենքով հաշվառման ենթարկվածներից հավելյալ տուրք պահանջելով նեղություն չպատճառեն, այլ ըստ սրբազան Շարի օրենքների, հիշյալ մինիստրության իմացությամբ, բաժանեն ժառանգների միջև: Իսկ անշահաֆաճաս կամ բացակա որդիներ և դուստրեր չլինելու դեպքում, բաժանման չենթարկվող ժառանգությունը ստիպմամբ կամ խնդրանքով գրանցման չենթարկեն:

Ջիզյայի առավելագույն չափը 12 ղուրուշ է, որ 8 ղուրուշ միրի եկամուտի հավելյալ գումարով դառնում է 20 ղուրուշ: Բերաթ ունենալու մասին ֆաստաթուղթ ներկայացնելուց հետո 1232 (1817), 1240 (1824—1825) և 1243 (1827—1828) թվականների հավելումներից բացի, այդ 20 ղուրուշ ջիզյան 1250 (1834—1835) թ. մուհառամ ամսից սկսած, կատարված ընդհանուր նոր հավելումներով մեկտեղ, մեր արքայական բարձր կամքով հաստատված օրենքներին համապատասխան, ամեն տարվա մուհառամ ամսի սկզբին իրենց տեղում հատուցեն:

Իսկ մեր բարձր հրամանագրերով գործակատար եղողները, կանոնադրության պայմաններին համապատասխան, վճարելիք միջին չափի շորս ղուրուշ ջիզյան [12]32(1817), [12]40 (1824—1825) և [12]43 (1827—1828) թվականների հավելյալ գումարից բացի, նորերս կատարված հավելումի հետ միասին, թող ամեն տարի որոշված ժամկետին հատուցեն:

Նշված առանձնաշնորհումները միայն անձամբ վերողրյալ վաճառականներին և նրանցից չուրաքանչյուրի երկու գործակատարներին է վերաբերում, իսկ նրանց զավակների, ազգականների և տեղում մեծաշուք հրամանագիր չունեցող գործակատարների նկատմամբ, պետք է վարվել այնպես, ինչպես վարվում են մեր մյուս ռայաթների նկատմամբ:

Բերաթներ և հրամանագրեր ձեռք բերած վաճառականներն իրենց հերթին պետք է մեր բարձր պետության ռայաթը լինելու արժեքը հասկանան և իրենց պատիվն ու հարգանքը բարձր պահեն և ռայաթների սովորույթին հակասող արարմունք թույլ չտան և ջանադիր լինեն իրենց շնորհված այս օժանդակությունն ու ողորմածությունը, հանապազ փառաբանությամբ և մեր թագավորական փառապանծ տերությունը երկար կյանք ու արևաշատություն մաղթելով հատուցելու:

Թող այսպես իմանան և վստահեն սրբազան գրությունը:

Գրվեց 1263 թվականի ջումադի II ամսի սկզբներին (1847 թ. մայիս 17—22), ապահով Կոստանդնուպոլսում:

II

Բարձրագույն իսկականին համապատասխան է:

Ընդօրինակվեց բարձրագահ մայրաքաղաքի Մահմուդ-ֆաշայի ասլանի (մահբամա) լիազոր փոխարինող, նվաստագույն ծառա Սեյիդ-Իսմայիլ Ֆահիմի կողմից:

Տերն է տնօրինում Սեյիդ-Իսմայիլ Ֆահիմի գործերը

— ԿՆԻԲ —

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՀՐԱՄԱՆԻ ՊԱՏՃԵՆԸ

Կեսարիո Շարի վեհադուլն տեղակալ (նաիր) մեվլանա ...ին,—թող ա-վելանա նրա իմացությունը:

Արքայական բարձր հրովարտական ստանալիս թող հայտնի լինի Ձեզ, որ Օսմանյան բարեբախտ զահի արքայական գերերջանիկ զահակալությանը ար-ժանանալուց հետո, մեր մեծաշուք տերության ընթացիկ օրենքներին համա-պատասխան, ձեռնարկեցինք հրովարտակաների և հրամանագրերի նորոգմանը, նպատակ ունենալով Եվրոպայի, Պարսկաստանի և Հնդկաստանի հետ առևտրով զբաղվող և վաճառականական դասի շարքերում լինելու և ընկերակցելու ցան-կություն ունեցող, մեր բարձր տերության ռայաթների առևտրական գործու-նեությունը որոշակի կարգ ու կանոնի ենթարկել:

Ըստ այդմ կարգադրվեց, որպեսզի օտար (մուսթեմին) թարգմանիչների և նրանց գործակատարների նկատմամբ գործադրվող առանձնաշնորհումները, ապահովությունը, օժանդակությունն ու հովանավորությունը, առանց խտրու-թյան, ամբողջությամբ, սրանց նկատմամբ ևս կիրառվի: Գրա համար էլ Եվ-րոպայի, Պարսկաստանի և Հնդկաստանի հետ առևտրով զբաղվող վաճառա-կաններին և նրանց գործակատարներին առանձին-առանձին հրովարտակներ ու հրամանագրեր շնորհվեցին:

Այս ուրույն կարգից ելնելով, գրանցված (դեֆթերու) վաճառականներից, ընդարձակ և մանրամասն վաճառականական հրովարտակի արժանացած, Կեսարիո բնակիչ, Կուլբենկի որդի Գուլարի անունով վաճառականի երկու գործակատարներից, Կուլբենկի որդի Գալուստ անունով գործակատարի հո-վանավորության և պաշտպանության մասին հրովարտակում նշված պայման-ներով, նախապես ստացած բարձր հրամանագիրը նորոգելու առնչությամբ, առևտրի միևնույնությունն կողմից ստուգում է կատարված և նշված է Արքունի դիվանում պահվող հրովարտակի վերաբերյալ: Ուստի ելնելով այն բանից, որ վերոգրյալ վաճառականը Եվրոպայի, Պարսկաստանի և Հնդկաստանի հետ առևտուր անող վաճառական է, նրան ևս սույն բարեբախտ տարվա ջումադի II ամսից, մեր հրովարտակը տրվելու մասին գրվել և նշվել է և վերոգրյալ գոր-ծակատարից վերցվել է այդ հին հրամանը, անվավեր դարձվել և ապա սույն սրբազան հրամանն է նրան շնորհվել:

Այժմ արդեն վերոգրյալ վաճառականի երկու գործակատարներից, վերո-գրյալ Կուլբենկի որդի Գալուստը, առաջվա պես կարող է նրա մոտ ծառայել և օրինական պայմաններով, հրամանագիր ունեցող գործակատարներից պա-հանջվող միջին շափի ջիզյան, ընդհանուր կարգադրությամբ կատարված նոր հավելումով և վերջերս հաստատված հիմունքներով, 1250 թ. մուհառամ ամ-սից սկսած (1834 թ. մայիսի 10-հունիս 9), ամեն տարի, նշված ժամկետին որոշված վալրում հատուցել, որից հետո այլևս նրանից վերստին ջիզյա շափտք է պահանջվի և այլ ոտնձգություններ շափտի թույլատրվի կամ նեղություն տրվի: Այլ հարկ եղած դեպքում պետք է նրան հովանավորել ու պաշտպանու-թյուն ցույց տալ:

Դու որ տեղի տեղակալն ես (նաիր), տեղեկանալով այս մասին, վերը բացատրված ձևով պետք է վարվես և խուսափես ընթացիկ օրենքներին և պալ-

منمكن رافع توفيع رفيع الشان خاقانى گلابى ولد فول بنگ نام تاجر يديه اينديور
 فرى ظنور سه سى اواخر ربيع الاخره ويرلعض اولان سرات عاليشان تحديد اولنمىق
 اورره نحارت نظارتى طرفندن سو دفعه بوقلمه اولمىق و دكر اولنان عتيق سرات
 عالى احد و بطالك حفظ ايندرلعض اولمىقيله وجه مشروح اورره اشونشان همايون
 ويردم و سيوردومكه مرفوم كما كان دفترلو تحاردين اولمىق سروج نظام اشيو
 اوروبا تاجرلردن حسب الاقتصا نرى باخود خدمتكار و آدملى لاهل التجاره بر
 محنه گتمك مراد ابدوت وكيلان مرفومانك مهور عرضاللىريله استدعا اولندقد
 طلق ستانسان و آدملىريله اعطا اولنديقى منللو نحارت شروطى درجيله بول امرلىرى
 ويرشه و ستانسان نرحمانلىرىك كندولرك و اولاد وعياللىرىك مأكولات ومشروبات
 و ملىسوانلىرىه نخل و تعرض اولنمىق منللو سونلرك و گرك عيال و اولادلىرىك
 مأكولات و مشروبات و ملىسوانلىرىه نحي قطعاً نخل و تعرض اولنمىه واصحاب بىروات
 اولان حارك بولندقلرى محلهه بانلرده بولمىق شرطيله شقه شقه اوامر شريفه مقله
 تحصيل فلنان ايكيشر نعر خدمتكارلى اشو امتيازاته عينيله نائل اولنلر و
 اشو ايكى محلهه اقامته مآدون اولنه و اصحاب بىرواتدن سىرىك هر كيمده اولور
 ايسه اولسون مصى و معمول به نصك موجبعه وكيلىلرى و اصنافدن تواتراً شها
 دتلىرىك منبت مطلوبسى اولمىق بدنده اولان نصكى حاكمه ابرازگدن لدى الشوب
 مطلوبسى اولان سلع تحصيل اولسوب يوزده ايكىدن ريباده رسم مطالبه اولنمىه و
 نحار مرفومدن سىرى گرك رعيلادن سىرى لاهل التدافع محكمه يه و يا خود باب
 عالى به گوندرمك مراديله السنه اعتمارحق بموجب اولمىق وضع قديم
 حفته او منللو معامله وقوع بولنه حسن فوايدنه
 سراتلو نحار و خدمتكارلى نحارت نظارتى طرفندن مباشر تعيينيه
 طرفندن مباشر تعيين اولمىه و حسلى اقتضا ايذر ايسه نظارت منارالبيها معرفتيله
 حس اولنه و سونلرك اكثر نحارتلى فرنگستان امتعه سنه متلق (!) اولنمىقندن
 گرك ستانسان ايله و گرك اهل اسلام و ملل ساثره دن هر كيمگله دعوا و نزاعلىرى
 ظهور ايدرايسه نظارت منارالبيهانك انضمام رأى و نحار وكيلىلرى و طرفندن
 بالانتخاب مأمور اولمىق معنسر و موثوق نحار معرفتلى ايله قاعده نحار اوزيره
 نحارتخانه ده رويت و قطع نزاعه مبادرت اولسوب شرع شريفه مراجعتلىرى لازم
 گلدكدن آخر محلهه رويت اولمىق حضور شيخ الاسلامك شرعه گوريله رك فصل

خصوصاته وحباً من الوجوه مذاخلة ايلميه لى و بوصول اقدم اسباب امتياز و نظام
 اولمقله سروقته خلاصى تحوير اولمعه شو قدر كه اگر بعضى مملكتده سراتلو
 اولاندن ماعدا ارباب يقيندن قوجه ماشيلقه ثابان كسمه بولمسيونك رعائى و لايتك
 حس اداره و رؤيت امورات بچون سروات اصحابى اولان نغاردن سرينك قوجه سائى
 اولمى ضرورنى ايجاب ايدركن اول مملكتنده اولان رعابانك عمومى استندعالتى
 وقوعبولوراييه فقط ار مقله محلده بونلرك قوجه ماشيلقى رؤيت ايلمسه حائز
 اولمحق شخصى اشو امتياراته نيابت (۹) مسنى سائردن سربس اولمى
 سبيله رعايا حننده خلاف تنظيمات حربه سرگوه تعدى و اطوار ناشايسته به
 وحباً من الوجوه تصدى ايلميه و ايدرايه سرموجت فاسوسامه حرا نأديسات ما
 لازمى احرا قلته و تحار مرقومه دن فوت اولنلرك دكان و اوطه و سائرا ملاكلرك
 حاسب شرعدن سفته و نظارت مشاراليتها طرفندن سفته مهيتر اولمسيون املاك منروك
 و املاك و عقار و سائر جزوى و كلّى اشيا و نفودلريمه ورته لرى موجود اولدغه
 حاسب ميريدن تعرض و نهبر و صط اولميه و صغير و صغيره لرك بولموب شرعاً
 تحريرى لازم گلنلردن زياده رسم طلبيله نصيف بيدرلمبوب سرفقتصاى شرعشريف
 بين الورنه نظارت مشاراليتها معرفتيله تقسيم ابتريله و صغير و صغيره و عانت
 و غائنه سى اولمسيون بين الورنه تقسيمى مراد اولمسيان تركه نحى سدر لولو (!)
 حسر و اسرام ايله تحرير ابندرلميه و اعلى حربه اون ايكى عروش ايكن صعباً
 للمعيرى سكر عروش صميله اصحاب سروات سدى ويره حكله بيگرميشر عروش حربه سى
 ايكيورا و تورايكى و فرى و فرى اوج تاريخلرى صميمه سندن سفته اللى سى
 محرمندن اعتناراً عمومى واقع اولان صم حديدايله معاً و نوحراً اراده سسيه
 شاهانه مله نأسيما اولسان اصوله نطيفاً سهر سه عره محرمده محلته تسليم
 ايليه لى و اوامر عليه مله خدمتكار اولنلر نحى شروط نظاملرى مقتصاسه
 درت عروش صعباً ويره گلنكلرى اوسط جريه سى كدلك اوتورايكى و فرى و فرى
 اوج سه لرى صميمه سندن ماعدا بيگى اولان صم ايله براسر سهر سه وقت و
 زمانده نأديه ايدلر و اشو امتيارات احق تجار مرقومه و ايكي ستر نعر
 خدمتكارلرينك كندو حقلريمه مخصوص اولموب اولاد و متعلقانلر ويره امر
 البتاتم اولمسيان خدمتكارلرى حقلرنده سائر رعايائى دولت عليه نصل
 معامله اولنمقده ايسه اولوجهله اجرا اولنه و يدلرينه بروات و اوامر شريفم

وہرہن تاجر لر دخی دولت علیہم رعیتینک قدریننی بیلوب ہر حالده عرض و ادب لریله مقید اولنه مغایر رسم رعیت حرکاتده بولنمیوب حقلرنده سوچہله ارزان قلنان مساعدات و عنایاتک شکریننی ادا یہ دقت و دوام عمر و دولت و قوام فر و شوکت شاہانہم بہ عوانن اشتغال و مواظبت ایلیدہ لرشویله بیلہ لر علامت شریفہ اعتماد قہلہ لر۔

تحریراً فی اوائل شهر جمادی الاخرہ در سنہ ثلث و ستین و ماہین والہ بمقام المحروسہ قسطنطنیہ

۴ —————

طبق اصل العالی

نمقہ عن العمد الفقیر بدار الخلاقہ العلیہ بمحکمہ محمود پاشا
المتولی خلاقہ سید اسماعیل فہیم

- مہر -

رب مفصل امور سید اسماعیل فہیم

صورت فرمان عالیخان

قدوت النواب المتشرعیہ قیصریہ نائبی مولانا رید علمہ توقیع ربیع
ہمایون واصل اولنجق معلوم اولاکہ تخت عالی بخت عثمانی اوزرہ جلوس
ہمایون میا سمقرون ملوکانہم شرف وقوعنہ مبنی قاعدہ ہرعیہ سلطنت سنہ مد ن
اولدیغنہ اوزرہ عموماً تجدید بیروات و احکام اولنمقدہ اولدیغنہ و اورویا و
عم و ہندستان تجارتیلہ مالوف اولان و سلك تجارت اشراك خواہش و آرزو سندہ
بولنان دولت علیہم رعایاسی تجارتلرینک تحت رابطہ و نظامہ ادخالیلہ مستأمن
ترجمانلرک و خدمتکارلرینک تأمل اولدق لری امتیازات و امنیت و مساعدہ و حمایت
نمایا بولنرک حقلرنده بلا استثنایا اجرا قلنمش و او مقولہ اوروپا و عجم و ہند
ستان فاجر لری و خدمتکارلرک بدلرینہ بشقہ بشقہ بیروات و او امر اعطا اولنمش
خصوصی نظامی مقتضاسندن اولندیغنہ بنایا اولوجہلہ دقتلرلو تجارندن اولنوب
یدیغنہ مفصل و مشروح تجارت براتی اعطا قلنمش اولان قیصریہدہ متمکن گلابی ولد
قول بئک نام تاجرک ایکی نعر خدمتکارلرندن قالوس ولد قول بئک نام بر نعر

خدمتکاری عروط سرائی موصیحه حمایت و صیانت اولعمو ساعد۔ مخدماً صادر اولان
 امر عالی تحدید اولمقی اورره بخار۔ نظارنی طرفندن بولمعه اولمعه و دیوان
 هما یومعه محفوظ بشار فندیست مراجعت اولمقددن تاخر مرفوم اورویا و عجم
 و هندستان بخارندن اولمعا اورره، اشرفه سیرک اوائل حمادی الآخره سندن
 بدینه تحدیداً سراج عالیشام ویرلمن اولدیعی سطور و معقد بولنمعا اولمقله
 خدمتکار مرفومک دخی بدینه اولان عتمو امر عالی احد و نظام حفظ ایله
 تحدیداً اشرفه مرفوم اعطا اولمقدن بعدی تاخر مرفومک ایکنی بفر خدمتکار
 لرندن مرفوم فالوس وند قول سنک کما کار کند سنک خدمتکار اولمور سروط
 بظا ملرک موصیحه اوسط اعتباریله فرمانلو خدمتکار لریک ویره گلدن لری جریه بی
 اللی سندی مرفومدن اعتباراً عمومی واقع اولان صد حدید ایله مباح و موخرأ
 تأسیر فلدار اصوله نظمیفاً شهر صد وقت و زمانند، مرفوم بحی محله تسلیم
 ایلدکجه مکرر جریه طلبی و مائت وجهله بعدی و رحیده اندر لمیوت سر موجب
 سروط حمایت و صیانت اولمعا لارندن ایله دکی سرک نائید سومی ایله سن
 معلومک اولمقددن سر وجه مشروح عمل و حرکت و معایر سروط نظام حالات
 مرفومدن مباح ایلیه سن سویله نیله سر علامت شریفه اعیان قیله سن
 تحریراً فی اوائل شهر حمادی الآخره سنه ثلث حسی و مابتن و الف
 محرره سن قسطنطیه

A. D. ПАПАЗЯН

ЛИЦЕНЗИИ, ПОЛУЧЕННЫЕ В 1847 Г. ОТ СУЛТАНА АБД-УЛЬ-
 МЕДЖИДА СЫНОВЬЯМИ ГЮЛЬБЕНКА ГУЛАБИЕМ
 И ГАЛУСТОМ

(Резюме)

Публикуемые здесь две лицензии—грамоты, полученные в 1847 г. жившими в Кесарии предками известного торгового дома Гюльбенкян от султана Абд-уль-Меджида, содержат заслуживающие внимания сведения о правовом положении и месте, которое занимало армянское купечество во внешней торговле Османской империи. Их заверенные копии хранятся в центре того же фонда, находящегося в Лиссабоне.

Дешифровка турецких оригиналов грамот осуществлена на основании любезно предоставленных директором фонда Р. Гюльбенкяном не очень удачных фотоснимков. Наряду с оригиналом вниманию специалистов предоставляется полный научный армянский перевод, сохраняющий формулировки и стиль, присущие османской дипломатике.

В кратком введении сделана попытка очертить источниковедческое

значение публикуемых документов, составленных по примеру экстерриториальных прав, даваемых европейским купцам.

Документы дают возможность изучить многие вопросы, связанные с деятельностью христианских купцов в Османской империи: привилегии, предоставляемые купцам-христианам, являющимся подданными империи (зимми), взыскиваемые с ввозимых и вывозимых товаров таксы пошлин и порядок оплаты, формы уплаты взыскиваемого с зимми подушного налога (джизья), порядок рассмотрения торговых споров, цеховую организацию, управление купеческого сословия и др.

H. D. PAPA ZIAN

LICENCES REÇUES EN 1847 DU SULTAN ABD-EL-MEDJID
PAR GULABI ET GALOUSTE, FILS DE GULBENK

(R é s u m é)

Les deux licences publiées, reçues en 1847 par les ancêtres résidant à Césarée de la célèbre maison de commerce Gulbenkian du sultan Abd el-Medjid, contiennent des données dignes d'attention sur la situation juridique et la place qu'occupaient les marchands arméniens dans le commerce extérieur de l'Empire Ottoman. Leurs copies certifiées sont conservées au Centre du Fonds Gulbenkian à Lisbonne.

Le déchiffrement des originaux turcs de ces licences a été effectué sur des photographies, d'ailleurs peu réussies, aimablement mises à notre disposition par le directeur du Fonds R. Gulbenkian. Outre l'original, les spécialistes pourront prendre connaissance de l'entière traduction arménienne scientifique qui conserve les formules et le style propres à la diplomatie ottomane.

La courte préface est un essai de mise en valeur de l'importance, du point de vue de l'étude des sources, des documents publiés, rédigés sur l'exemple des droits ex-territoriaux accordés aux commerçants européens.

Les documents donnent la possibilité d'étudier de nombreuses questions relatives au statut des marchands chrétiens dans l'Empire Ottoman: privilèges donnés aux commerçants chrétiens citoyens de l'Empire (zimmi), taxes des droits de douane perçus lors de l'importation et l'exportation des marchandises et leur paiement, formes de perception de l'impôt d'âme (djizzia) payé par les zimmi, examens des différents commerciaux, organisation syndicale ("esnaf"), administration des commerçants, etc.

ՄԵԼԻՔ ԵԳԱՆԻ ԸՆԳՈՒՆԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅՈՒՔ ՓԱՓԱՋՅԱՆ

Մեծալմաստակ վիճազարացեալ Սեդրակ Բարխուդարյանի վերծանությամբ 1982 թ. հրատարակվեց Դիզակի մելիք Եգանի Տող ավանում գտնվող ընդունարանի մուտքի որմին փորագրված ընդարձակ արձանագրության բնագիրը¹: Նույն արձանագրության խիստ աղավաղված ընթերցումն ու սխալ մեկնաբանությունը առաջին անգամ լույս էր տեսել Մ. Բարխուդարյանցի «Արցախ» աշխատության մեջ, ուր կային նաև մելիք Եգանի և նրա որդիների՝ այժմ անհետացած շիրմոնների, լատիներով տապանագրերի վերծանությունները²:

1960-ական թվականների սկզբներին, երբ Ս. Բարխուդարյանը նոր էր վերադարձել դարբասի գիտական գործուղումից, իր հետ բերել էր միայն արձանագրության՝ տեղում մատիտով գրված ընթերցումը. քանի որ տեխնիկական դժվարությունների պատճառով հնարավոր չէր եղել, թեև չէր հատվածաբար, լուսանկարել արձանագրությունը: Ոչ այնքան անվնաս մեզ հասած այս արձանագրության լիակատար ճշգրիտ վերծանությունը դժվարանում է նրանով, որ գրված է կիսագրագետ, բարբառային լեզվով, առանց ուղղագրական որոշակի սկզբունքի և տառերի բազում բացթողումներով:

Քանիցս առիթ ենք ունեցել Ս. Բարխուդարյանի հետ մտորելու ձեռքի տակ եղած գրաչգրի վրա, սակայն արդյունքը եղել է այն, ինչ որ հրատարակված է «Դիվանի» 5-րդ հատորում:

Այժմ, երբ անցել է շուրջ երկու տասնամյակ, որի ընթացքում նոր ուսումնասիրություններ են կատարվել, հրատարակի վրա է «Հայ ժողովրդի պատմության» բազմաշատորակը և գիտական առավել համակողմանի լուսաբանման են ենթարկված մելիք Եգանի անձնավորությանն ու հասարակական-քաղաքական գործունեությանը վերաբերող տվյալները, կարիք է զգացվում վերստին անդրադառնալու այդ արձանագրությանը, փորձելով հասնել առավել համոզիչ վերծանության:

«Դիվանում» արձանագրության զրչագիրը տրված է այն դասավորությամբ, ինչպես որ փորագրված է ընդունարանի մուտքի ճակատին և աջ ու ձախ կողմերի որմերի վրա: Տպագրված վերծանությունն արդեն հուշում է, որ արձանագրությունը սկսված է ճակատի վերին մասից, այսպա 15 կարճ տողերով շարունակված է դրան աջակողմյան բարե նեղ շրջանակի վրա, որին հաջորդում են աջակողմյան որմի վրայի 7 տողերը, այնուհետև մուտքի ձախակողմյան շրջանակի նեղ սյունակի 14 տողերն են, որոնց անմիջական շարունակություն են կազմում, արձանագրության ավարտը պարունակող, ձախակողմյան որմի 11 տողերը (Արձանագրության գրաչգրի պատկերը, նշված հերթականությամբ տե՛ս հաջորդ էջում):

Ելնելով արձանագրության բովանդակությունից, որտեղ մելիք Եգանը, տալով, իր հասարակական-քաղաքական գործունեության նկարագիրը, սովորում է այն փաստի նշումով, թե Նադիրը իրեն Ղարաբաղի վեց մահաչաների խան և բեկլարբեկի է նշանակել, հաստատապես կարելի է առել, որ այդ մասին կարող էր գրվել 1735 թ. հետո միայն³: Հետևաբար, տեղին է Ս. Բարխուդարյանի տարակուսանքը արձանագրության առաջին տողում իր վերծանած թվականի («Թ[ի]խն ՌձժԶ—1667») վերաբերելու: Բանն այն է, որ ամբողջապես գիտազերծով փորագրված արձանագրության մեջ որոշ տառեր (շ, շ, գ, ձ) փորագրված են հրեմն մեծատառ, հրեմն էլ փոքրատառ. ինչպես, օրինակ՝ առաջին սյունակի «շԱՀ», «շԱՓ», «ԻնՁ», երկրորդ սյունակի՝ «Ի ձնԻ» «ԴԻՂԱԿ», երրորդ սյունակի՝ «Ինձ», «Ի ձնԻէ», «շԱՓ» և չորրորդ սյունակի «շԱԲԱՅՊԹ» և «Ինձ» հատվածներում: Պարզ է, որեմն, որ թվականի տասնավորը ոչ թե «Ժ» է կամ «Մ», ինչպես ենթադրել է Ս. Բարխուդարյանը, այլ փոքրատառ «ձ», որպիսին, ինչպես

1 «Դիվան հայ վիճագրության» (այսուհետև՝ «Դիվան»), պրակ V, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 180—181:

2 Մ. Բարխուդարյանից, Արցախ, Բաքու, 1895, էջ 75—77:

3 «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 185—186:

ԹԱՄԱՍՊԵՒԹԷ ԹԱՔԱՈՐԻ ՅՐԵՆՉՂ չԱՓ ՂՈՒԼՈՒՂ ԱՐԲԿ]Է, ՈՐ ՊԵՐԱԻ ԻՆՏ ՏՈՒՆՅԷՍ ՄԷԼԻՔՈՒ-
ԹՈՒՆ ԴՎԱՎ, ԱՅԼ ՕՍՄԱՆԼՈՒՆ ԵԿԱՎ ԱՌԱՎ Ի ՏԵՌ ՆՈՐԱՅՆԻՑՆ, ՈՐ ՍԱՆ ԷՆ ԱՍ ՉԱՓ ՂՈՒԼՈՒՂ
ԱՐԿԷ, ՈՐ ՊԵՐԵՆ ԴԻՂԱԿ, ԵՍ ԹՈՂԵՑԻ ՈՆ ՉԱՅԱՍԴԱՆԱՍ ԵՍԻՐ ԳԵՆՅԱԼՈՒ, ԻՆՏ ԴՎԱՎ ՍՕՎԼՂ,
ԱՐԱՂԷ ՇԱՆ ՆԱՅԴԻՐ ԶՐԵՂ ԹԱՔԱՈՐ ԵԿԱԻ ԶՐԵՐ ԱՌԱԻ ՕԼՔԱՍ Ի ՏԵՌԵՍ ՕՍՄԱՆԼՈՒՆԷՆԱ-
ՆԱՅ: ՆՈՐԱՅ ԷՍ չԱՓ ՂՈՒԼՈՒՂ ԱՐԿԷ, ՈՐ ԴՐԱԻ ԻՆՉ ԱՅՍԵՐ Զ (Ե) ՄՈՂԻՒՍ, ԱԶԿ ՔՐԻՂՍ-
ԴՐՈՆՅԵՄԵՅ, ՈՐ ՄԷԿՆ ԹԱԼԻՇ, ՄԷԿՆ չԱՐՅՊՐԹ, ՄԷԿՆ ԽԱՉԱՆ, ՄԷԿՆ ՎԱՐԱՆԴԱՅ,
ՄԷԿՆ ՔՈՉԵՁ, ՄԷԿՆ ՏՈՒՉԱՂ, ԱՅՐՍՂԻՆՅ ԽԱՆ-Ը ՊԱԿԱՐՊԷԿԱՅ ՏԵՂ ԱՐԱՐ ԻՆՏ. ՇԱ-
ՓԱՅՂԱ ԱՐԱԻ: ՕՎ ՈՐ ՅԵԴՕՎ ԿԱՐԹԷ, ԱՅՍ ԴԻՐԵՍ ԻՄԱՆԱՅ, ՈՐ ՄԵՐ ՈՐՊԷՍՈՒԹՈՒՆ ԱՅՍ-
ՊԷՍ ԻՎԱԻ, ՄԻՆ ՈՂՈՐՄԵԱ ԱՅՍԷ: ԵՂԵԻ, ԱՄԷՆ:

Ժամանակի խոսակցական լեզվում պարսկա-թուրքական բառերի առկայությունը (բանա-
պա=ընդունարան, խելիս=ժողովուրդ, ջամ դեռիհ=հավաքվեցին, օլբա=երկիր, դալ=խառնա-
կություն, դալուղ=ծառայություն, եսիր=գերի, սովլը=հաշտություն, մոհիլ (մահալ)=գա-
վառ, խան-ը պակիարգեկ=բեկարբեկի պաշտոն ունեցող խան, շախադաք=գթություն, շնորհ) թեև դժվարացնում է բնագրի և՛ ընթերցումը, և՛ ճշգրիտ ընկալումը, սակայն դրանով հանդերձ
դժվար չէ նկատել, որ արձանագրության մեջ ժամանակագրական հաջորդականությամբ նկա-
րագրված են մինչև 1737 թ. տեղի ունեցած իրադարձությունները, որը արդի հայերենով կկար-
դացվի այսպես.

«ԻՋՁԶ (1737) թ.: Այս ընդունարանը հիշատակ է: Այսպես է, որ ես Ղուկաս վարդապետի
որդիս, որ իմ անունն է Մելիք-Եզան, նախապես ժողովուրդը հավաքվեց և ինձ քրոջավ (տա-
նուտեր) կարգեց: Դրանից հետո, երբ երկիրը խառնակության մատնվեց, շահ Սուլթան-Հուսեյնի
որդի շահ Քահանայի թագավորին որոշ ծառայություն մատուցեցի, և նա բերեց սրանց [վրա]
ինձ մելիքություն տվեց: Այնուհետև օսմանցին եկավ և [երկիրը] նրա ձեռքից վերցրեց: Սրան
էլ այս չափ ծառայություն ցույց տվի, որ երբ բերին Դիզակ, ես շնորհեցի, որ Հայաստանից գե-
րի գնան: Արաբից (Կենտրոնական Իրան) շահ Նադիր զորեղ թագավորը իր զորքով եկավ, եր-
կիրը օսմանուղի ձեռքից առավ: Նրան էլ այնքան ծառայություն մատուցեցի, որ նա քրիստոն-
յա ազգի 6 մահալների՝ Քալիշի, Չարաբերդի, Խաչենի, Վարանդայի, Քոչիղի և Դիզակի վրա,
ինձ որպես խան և բեկարբեկի կարգեց. շնորհ արեց: Ով հետո կարգա, այս գրությունից կի-
մանա, որ մեր օրպիտությունը այսպես է եղել և թող մի ողորմի ասի: Եղավ: Ամեն»:

Պետք է ասել, որ դեպքերի այս հակիրճ նկարագրության մեջ կան ուշագրության արժանի
սովորներ, որոնք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և կարող են օգնել XVIII դ.
20—30-ական թվականների բուռն իրադարձություններով հարուստ և բախտորոշ ժամանակա-
շրջանի պատմության առանձին հարցերի լուսարանմանը: Այսպես, օրինակ, պարզվում է, որ
Դիզակի նոր մելիքական տան հիմնադիր Ղուկաս վարդապետի որդի Եզանի մելիքական իրա-
վունքները նախապես հաստատված են եղել Սեֆյան վերջին շահ Քահանայի II-ի կողմից: Ամե-
նայն հավանականությամբ, դա տեղի է ունեցել 1724—1725 թթ., երբ վերջինս, աֆղաններից
հալածված, եկել էր Աղբրբայան և փորձում էր միավորել ընդգրկմադիր ուժերը՝ դիմագրավելու
օսմանյան ներխուժմանը Անդրկովկաս և Ատրպատական: Ուշագրավ է նաև մելիք Եզանի ոչ
այնքան պարզ ասած խոսքը օսմանցիների հետ լեզու դռնելու վերաբերյալ, որը նա փաստորեն
փորձում է արդարացնել այն իրողությամբ, որ նրանցից հաշտություն (սովլը) կորզելով, կա-
րողացել է կանխել բնակչության գերեվարումը: «Ես թողեցի ոչ Հայաստանս եսիր գնալու»,—
ասված է արձանագրության մեջ:

Կարծում ենք նաև, որ ուշագրության է արժանի արձանագրության այն մասը, որտեղ խոս-
վում է Նադիրի կողմից մելիք Եզանին տրված իշխանության և նրա աշխարհագրական սահ-
մանների մասին: Պարզվում է, որեմն, որ շրջակա բեկարբեկություններից անկախ, այդ հայ-
կական ինքնուրույն վարչական միավորման մեջ, հայտնի 5 մահալներից կամ մելիքություննե-
րից բացի, սկզբնապես մտնում էր նաև Քոչիղի կամ Քաշաթաղի մահալը, որտեղ վաղ ժամա-
նակներից իշխում էին մելիք Հայկազի սերունդները: Ուշագրավ է հատկապես «խան-ը պակ-
արպեկի» արտահայտությունը, որը թույլ է տալիս ասելու, որ մելիք Եզանը արձանացել է
«խան» տիտղոսի, որով մեծարվում էին նաև Արևելյան Վրաստանի վալիները (Շահնավազ-
խան, Իրակլի-խան և այլն) և, որ կարևոր է, նա օժտված է եղել բեկարբեկիներին տրվող
իրավունքներով, ինչպիսիք էին, օրինակ, Երևանի, Գանձակի, Շիրվանի, Քավրդի և մյուս բեկ-

5 «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, Երևան, 1974, էջ 172:

լարրեկինները: Դա փաստորեն «Հայոց Արեւից կողմանց» տարածքում հայկական ինքնավար իշխանության ճանաչումն էր, որը ձեռք էր բերված սղնախոնների ու Ղափանի զինավառ հալութիւն հերոսական պայքարի գնով: Այս իրողութիւնը հաստատվում է նաև մելիք Եգանի զերեղմանաբարի վրայի լափածո տապանագրով.

«Տիրապետեաց սալ ի երկրին
Ի Աղուանից ի նահանգին
Յոյժ պատուեցաւ պարսից ազգին,
Քան զիշխանս Հայոց երկրին...»⁶

Այսպիսով, Անդրկովկասում, Քարթլի-Կախեթի վրացական վալիութիւն կողքին, առաջին անգամ ստեղծվում էր նաև «Մահալ-ե խամսե» անվանվող հայկական առանձին բեկլարբեկիութիւն, որն ընդգրկում էր պատմական Արցախն ու մինչև Արտաքի ափը ձգվող հարակից տարածքները. սակայն, ինչպես գիտենք, այն երկար կյանք չունեցավ: Մելիք Եգանի և նրան հաջորդած որդու՝ Արամի մահից հետո (1744 և 1745 թթ.), քառասնական թվականների վերջերին, Իրանում վերստին առաջացած անիշխանութիւն և կենտրոնական իշխանութիւն բացակայութիւն շրջանում ներքին ֆեոդալական երկպառակութիւններից մելիքների միասնութիւնը քաղաքացից ու կաղմալուծվեց, ենթարկվելով խարզախուրթիւմը ու սաղրանքներով Շուշի բերդում հաստատված Զիվանշիր Փանահ-խանի հիմնադրած Ղարաբաղի խանութիւնը:

НАДПИСЬ НА ВХОДЕ В ПРИЕМНУЮ МЕЛИКА ЕГАНА


АКОП ПАПАЗЯН

Р е з ю м е

Надпись, сделанная на входе приемной Дизакского мелика Егана и опубликованная С. Бархударяном в 1982 г. в пятом томе «Свода армянских надписей», не могла войти в научный оборот как надежный и достоверный первоисточник. Наличие диалектизмов, орфографических погрешностей и грубых ошибок резчика надписи значительно затрудняют ее раошифровку.

Принимая во внимание особенности стиля и языка надписи, а также данные о мелике Егане, встречающиеся в современных ему армянских и персоязычных источниках, предлагаем новое, исправленное чтение надписи, что, на наш взгляд, может способствовать освещению отдельных вопросов, в частности, событий, имевших место в 20—30-ых гг. XVIII в.

⁶ «Դիվան», սրակ V, էջ 178, հմմտ. Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 75:



ՄԵՐԶԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XIII, 1985

2. Դ. ՓԱՓԱԶՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՒՀԱՄԱԳ-ԽԱՆ ՂԱԶԱՐԻ՝ ՄԻՐԶԱ-ԱՂԱ ՍԻՊԿԻՆ ԵՎ
ԱՀՄԱԳ-ԱՂԱ ԶԻՎԱՆԻՆ ՇՆՈՐՀԱԾ ԱՂԱՅՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ
(XVIII դ.)

Երևանի բեկլարբեկիների և խաների՝ XVII—XIX դդ. հրամանագրերը ու պաշտոնական գրությունները (հոբմեր և թա՛լիղաներ), որպես պատմական սկզբնաղբյուրներ, որոշակի գիտական հետաքրքրություն են ներկայացնում և օգնում են Արարատյան երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության բազում հարցերի լուսաբանմանը: Այդ վավերագրերը ներկայումս հիմնականում պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանի, արխիվային բաժնի կաթողիկոսական դիվանի թղթապանակներում: Մինչև 1650-ական թվականներին վերաբերող մի քանի հրամանագրերի բնագրերը հայերեն և ռուսերեն թարգմանություններով և ծանոթագրություններով արդեն լույս են տեսել «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշարի «Հրովարտականեր» շարքի Բ պրակում²: Իսկ հետագա դարերի հարյուրավոր հրամանագրեր, ժամանակագրական հաջորդականությամբ, կտպագրվեն հրատարակության պատրաստվող հաջորդ պրակներում:

Անշուշտ առավել մեծ թիվ են կազմում XVIII—XIXդդ. հրամանագրերն ու պաշտոնական այլ գրությունները, որքանով որ այդ շրջանում և հատկապես XVIII դ. երկրորդ կեսում, Երևանի խաներն ավելի ինքնիշխան էին և Իրանում կենտրոնական իշխանության բացակայության պայմաններում հանդիսանալով իրենց ենթակա վիլայեթի (Արարատյան երկրի) լիիրավ տերը, բոլոր հարցերը անձամբ էին տնօրինում:

Ինքնին հասկանալի է, որ կաթողիկոսական դիվանում առկա փաստաթղթերը իրենց գերակշիռ մասով վերաբերում են էջմիածնի վանքին, ուստի նրանց մեջ արտացոլված են Հայոց եկեղեցու և հայ համայնք-

ների իրավական վիճակին վերաբերող հարցերը, որոնք որպես դիվանական նյութեր զգալի չափով օգնում են այդ խառնակ տասնամյակներում երկրի ընդհանուր իրավիճակի և արևելահայոց ազատագրական շարժումների պատմության գիտական վերամշակմանը:

Տնտեսական, վարչական և այլ հարցերին վերաբերող խանական հրամանագրերն ու պաշտոնական հրահանգներ կամ կարգադրություններ պարունակող փաստաթղթերը, մեծ մասամբ, չեն պահպանվել: Այդպիսի մի քանի փաստաթղթերի բնագրեր կամ շարիաթական պատճեններ կան առանձին ազնվականների կամ մելիքական գերդաստանների տոհմական արխիվներում³:

Այս բացը մասամբ լրացնում է Մատենադարանի արաբատառ ֆոնդի № 233 պարսկերեն ձեռագիրը, որի մեջ ընդօրինակված են 1780—90-ական թթ. Երևանում իշխած Հուսեյն-Ալի, Ղուլամ-Ալի և Մուհամադ խաների օրոք խանական դիվանատանը գրի առնված բազմազան պաշտոնական գրությունների և նամակների պատճենները: Ընդօրինակությունը կատարված է խանի գլխավոր գրագիր (մունշի բաշի) Միրզա-Մուհամադ-Մուսլիմ Երևանցու խմբագրությամբ, խանի պահանջով, որպես պաշտոնական գրությունների, հրամանագրերի, նամակների և այլ փաստաթղթերի դասական օրինակների ժողովածու:

Շուրջ 200 վավերագրերի մեջ մեծ թիվ են կազմում ազգականներին և բարեկամներին, ինչպես նաև Ազերբայջանի խաներին ու վրաց Հերակլ արքային, թագուհուն (ղեղոփալի) և գահաժառանգին, Թուրքիայի սուլթանին, մեծ վեզիրին և սահմանամերձ փաշաներին, Դաղստանի Ումմա-խանին, Ալի-Մուրադ խան Զանդին, Աղա Մուհամադ-խան Ղաչարին, Վրաստանում ռուսական զորքերի հրամանատարին և այլ պաշտոնական անձանց հղված բազմաբովանդակ նամակները: Կարևոր են հատկապես վրաց արքունիքի հետ տեղի ունեցած գրագրություններ⁴, ինչպես նաև Խոյի Ահմադ-խան Դումբուլիին հղված նամակները: Վերջինիս հետ Երևանի խաները խնամիական կապեր ունեին և հաճախ հանդես էին գալիս որպես զինակիցներ:

Խանական հրամանագրերը կամ թա՛լիղաները, ընդամենը 14 հատ են, որոնց մեջ կան ինչպես տիտղոսների և պաշտոնների շնորհման, այնպես էլ կալվածատիրական իրավունքների մասին տրված թա՛լիղաներ և հորմեր: Հրամանագրեր են տրված խանի դիվանատան վեզիրին, գլխավոր աստղագետին, դատավորի (ղազի), պալատական արարողապետի (էշիգաղասի), էջմիածնի Ղուկաս կաթողիկոսի (1780—1799 թթ.), խանի մզկիթի կալվածների վերակացուի, հոգևոր ղարոցի (մադրասե)

տնօրենի, պալատական բժշկի և վերջապես քրդական Սիպկի և Զիլան ցեղերի առաջնորդների անուններով, որոնցով նրանք նշանակվում կամ վերահաստատվում են իրենց պաշտոններում:

Արարատյան երկրի տարբեր գավառներում կամ մահալներում բընակվող քրդական ցեղերի մասին առավել հավաստի տեղեկությունները վերաբերում են XIX դ. ՅՕ-ական թվականներին: Պետական խորհրդական Ի. Շոպենը Հայկական մարզին նվիրված մեծարժեք աշխատության մեջ բավական մանրամասն տվյալներ է հաղորդում Ռուսական կայսրությանը միացված այս նոր երկրամասի շիա, սյուննի և եզիդի քրդերի մասին⁵:

Հայտնի է, որ քրդական ցեղերի՝ բուն Քուրդիստանի և պատմական Հայաստանի տարածքի վրա տեղակայման վերաբերյալ հանգամանալից տեղեկություններ հաղորդող հիմնական աղբյուրը XVI դարի հեղինակ Շարաֆ խան Բիթլիսիի «Շարաֆնամեն» է, որտեղ Արարատյան երկրի մասին ոչ մի հիշատակություն չկա: Հայտնի է նաև, որ սահմանամերձ Ալաշկերտի և Բայազեդի շրջակայքում բռնի կերպով քրդական ցեղեր են բնակեցվել միայն XVI դ. սկզբում, սուլթան Սելիմ I-ի օրոք, մոլլա Իգրիս Բիթլիսիի նախաձեռնությամբ և հորդորներով: Շարաֆ-խան Բիթլիսիի վկայությամբ, այդ տարիներին «բազմաթիվ աշիրաթներ Սուլեյմանի քրդերից, որոնք բնակվում էին Միաֆարդինի կողմերում, զնացին բնակություն հաստատելու կրզլըբաշներից գրաված վայրերում, միաժամանակ հանձն տանելով պաշտպանել սահմանները»⁶: Նույն քաղաքականությունը կիրառվում էր նաև շահ Իսմայիլի կողմից, որն իրեն հավատարիմ Մահմուդի և Փազուկի քրդերին տիրույթներ էր տալիս Ալաշկերտի՝ դեռևս իր տիրապետության տակ գրտնրվող արևելյան հատվածում և Մակվի շրջակայքում⁷:

XVII դ. սկզբում արդեն, հիշատակություններ կան այն մասին, որ այդ ռազմիկ ցեղերը հաճախ ասպատակում էին Արարատյան դաշտի, Սուրմալուի և Շարուրի արգավանդ շրջանները. «Թողում ասել զՄարաց ազգացն, որ են Քրդաց,—գրում է Գրիգոր Դարանաղցին—որ սոքա մերձ լինելով վերին աշխարհացն, հանապազ ասպատակ առնելով ի վերա նոցա և գերի վարելով ի Բաղեշ, ի յԱրճէշ և ի Վան և յամենայն Ոստան: Եւ նոքա զՊարսից տէրութեանն հայքն հանապազ գերեցնելով, որ ահա երեսուն և երկու ամ է, որ հանապազ թշնամիք են միմեանց պարսիկք և տաճիկք»⁸:

Քրդական առանձին աշիրաթների՝ դեպի Արարատյան երկրի ներքին լեռնային գավառները ներթափանցելու համար նպաստավոր պայման-

ներ ստեղծվեցին հատկապես շահ Աբբասի ձեռնարկած մեծ բռնագաղթից հետո, երբ ամայացած շատ գյուղերում և ալպյան արոտավայրերում կայուն բնակություն հաստատեցին կրգըլբաշ քոչվոր ցեղերից, ինչպես նաև շիա քրդերի ցեղային խոշոր միավորումներից անջատված առանձին համայնքներ⁹:

Որոշակի տվյալներ կան XVII դ. վերջերից և XVIII դարում արդեն Աղմաղանի կամ Գեղամա լեռների, Եղեգնաձորի և Բազարչայի արոտավայրերում քրդական ցեղերի ձեռք բերած յայլաղների, ինչպես նաև Ղափանում և Բարգուշատում բնակություն հաստատած քրդական քոչվորության մասին¹⁰: Ուշագրավ է այս տեսակետից XVIII դ. սկզբներին արդեն թուրքացման ուղին բռնած Կարաչոուլու շիա քրդերի Զանգեզուրի «Ուլթափա», ինչպես նաև «Քյուրդլար» կոչվող արոտավայրերում, Դավիթ Բեկի շարժման դեմ գրաված թշնամական դիրքորոշումը, որն, ինչպես գիտենք, ավարտվեց Կարաչոուլուների գլխավոր պարտությանը և այդ վայրերից արտաքսումով¹¹:

Ի. Շոպենի վկայությամբ XVIII դարում Հայկական մարզում ավելի բազմաթիվ էին շիա քրդերը և հատկապես Կարաչոուլու մեծ աշիրաթի մեջ մտնող ցեղերը: Սյունիների մեջ առավել բազմամարդ է եղել Զիլանի աշիրաթը (2000 տուն), որոնց մեծ մասը, սակայն, չի ցանկացել մնալ ռուսական տիրապետության տակ, քոչելով դեպի Թուրքաց տիրապետությանը ենթակա Արևմտյան Հայաստանի մերձակա շրջանները¹²:

Աղբյուրները, մեծ մասամբ, վկայում են, որ քրդական ցեղերը Արարատյան երկրում համեմատաբար մեծ թիվ են կազմել XVIII դարում: Այս տեսակետից էլ որոշակի գիտական հետաքրքրություն են ներկայացնում Երևանի Մուհամադ-խան Ղաջարի՝ քրդական Սիպկի և Զիլան ցեղերի առաջնորդներին շնորհած հրամանագրերը, որոնք գալիս են հաստատելու նրանց տրված իրավունքներն ու քրդական ցեղերի վիճակը Երևանի խանության կամ Արարատյան երկրի սահմաններում:

Վավերագրերի պարսկերեն բնագրերը, ինչպես ասվեց, ընդօրինակված են Մատենադարանի արաբատառ ձեռագրերի ժողովածուի № 233 մատյանի 177—178 և 377—378 էջերում, ընթեռնելի նասթալիղ, մասամբ շիքասթե գրովյամբ, շարադրված են ժամանակի գրագրություններին բնորոշ վերամբարձ ոճով և ծանրաբեռնված խրթին ներբողագրական-այլաբանական արտահայտություններով:

Հրամանագրերի հրապարակումը կատարում ենք ընդօրինակությունը տրված վերնագրերով:

**Քուրդ մեծամեծներից, Միրզա-Աղա Սիպկիի աղայության
պաշտոնի վերաբերյալ շարադրված հրամանագիրը.**

Բարձր հրամանագիրս հրապարակվեց հետևյալի մասին.

Որքանով, որ հավատարիմ մերձավորներից յուրաքանչյուրի նկատմամբ սերն ու հոգատարությունը միշտ եղել է մեր շնորհափայլ մըտքում, գթառատ սրտում և ուշադրության կենտրոնում, մերձավորներ, որոնք իրենց նվիրվածությամբ, անկաշառ ծառայությամբ և հարատև անձնվիրություններով, շարունակ արժանի են եղել մեր հատուկ շնորհներին և ուշադրությանը և որոնց մենք իրենց դասից և մերձավորներից միշտ ջոկել ենք, բարձրացրել ու գերադասել, ուստի մեծափառ, բարձրագահ և բարձրաստիճան Միրզա-Աղա Սիպկիին, որի մեծատուն ցեղի հավատարիմ և բանիմաց մարդկանց մաքուր վարքն ու հավատարիմ աշխրաթի ջանադիր անձնվիրությունը հանրահայտ իրողություն է, մեծարեցինք և նշանավորեցինք քրդական ամբողջ փառապանծ Սիպկի ցեղի աղայության պաշտոնով և այս մեծ պարգևով նրան իր դասի մեջ հարգարժան ու արժանապատիվ դարձրինք, որպեսզի ըստ իր կարողության և ինչպես որ հարկն է և իր բնությանը վայել ձևով, ջանա կարգավորել նրանց գործերը և հոգալ կարիքները և խնամք ու հոգատարություն դրսևորելով ոչ մի վայրկյան շփերանա և անտես չառնի: Անհրաժեշտ է նաև, որ փառապանծ Սիպկի ցեղի մեծապատիվ քյադխուդաները, ավագներն ու մյուս դասերի մարդիկ այդ բարձրաստիճան անձնավորությունը իրենց արժանավոր աղան և մեծավորը ճանաչեն և ոչ մի դեպքում նրանից երես չդարձնեն և շփորձեն խուսափել նրան հպատակելուց և ծառայելուց և դուրս չգան նրան ենթարկվելու ու հնազանդվելու ճանապարհից և այս ընդունելով որպես խիստ կարգադրություն, իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց [1199] թ. Ռաբի, II ամսին (1785 թ. փետրվ. 11 — մարտ 11):

(Մատենադարան, Արաբատա րածին, ձեռ. 233, էջ 177—178):

**Հրամանագիր, որ նորին բարձրությունը շարադրել է Զիլանի քուրդ
Ահմադ-Աղայի աղայության և մեծավորության մասին**

Բարձր հրամանագիրս հրապարակվեց հետևյալի մասին.

Որքանով որ այս վեհազնյա զարմի մեծաշուք անձանց և իշխանավայել ցեղի անվախճան գերդաստանի հանգրվանելու և քոչելու առաջին

իսկ օրից, միշտ նկատի ենք ունեցել և ուշադիր ենք եղել, որպեսզի իրենց հնազանդութեամբ, անձնվիրութեամբ և անկեղծ ու հավատարիմ ծառայութեամբ առաջընթացներին, իրենց արժանիքներին և կարգին վայել աստիճաններով առավել արժանապատիվ դարձնենք և կշիռն ու աստիճանը բարձրացնելով և իր դասի մեջ մեծարյալ և ընտրյալ դարձնելով և նրանց նկատմամբ ցուցաբերվող անսպառ շնորհներով, բարերարութեամբ, գթութեամբ և ողորմութեամբ իր դասակիցների և այլ ցեղերի բարի նախանձը շարժենք, ուստի մեծափառ, գերապատիվ և բարձրագահ, անկեղծ ու հավատարիմ քուրդ Ահմադ-Աղա Զիլանիին, որ նախնիներից սկսած, սերնդից սերունդ միշտ աչքի է ընկել հավատարմութեամբ, վեհանձնութեամբ, խելահասութեամբ և գործիմացութեամբ ու փայլել կարողութեամբ ու ընդունակութուններով, ի տրիտուր բարի ծառայությունների և հրամանաց հնազանդության, մեծարեցիիք և նշանավորեցիիք քրդական ամբողջ փառապանծ Զիլան աշիրաթների աղայության պաշտոնով և այս մեծ պարգևով նրան իր ժողովրդի մեջ հարգարժան ու արժանապատիվ դարձրինք և հրամայեցիիք, որ ինչպես որ իր իմացությունն ու կարողությանը կվայելի, ուշադիր լինի հոգալու և կարգավորելու բոլոր ցեղերի գործերը և լուծելու բոլոր ցեղախմբերին վերաբերող հարցերը և հոգատարութեամբ զբաղվի նրանց գործերի ու հոգսերի կարգավորմամբ և ոչ մի դեպքում անփութություն չցուցաբերի ու շփերանա: Անհրաժեշտ է նաև, որ ցեղի բոլոր քյադխուդաներն ու ցեղախմբերի բոլոր ավագները վերոհիշյալ բարձրապատիվ անձնավորությանը բոլոր հարցերում ու խնդիրներում իրենց ազան ու մեծավորը ճանաչեն և ծառայություն մատուցելով՝ հնազանդվեն և ենթարկվեն նրան և այս ընդունելով որպես խիստ կարգադրություն՝ իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1200 թ. սրբազան մուհարամ ամսի 22-ին (30 նոյեմբերի 1785 թ.):

(Մատենադարան, Արարատառ, բաժին, ձեռ. 233, էջ 377—378):

بختیاری است که از عهد بزرگان بر او آمده است
 حکم عا شد که چون هر که از او خبری برساند که در آن خبری
 که هر یک از خبر شنیدان عرصه عرضی از او بر می آید و خلاص را که از او
 آگاشند احسن عقیدت و همت که از او بر این دل صلقت این روز
 طناب در درو طی استقامت و جان نثار استوار در روزی بنشیند
 درگاه با لطاف و صفیات خاصه فرزندان در زشت که آن کس این
 در آن زمان سر عهد و بنام بریم همه ایمان صلح استوار در روزی استوار
 میراث استوار در حجت و عظیمی که در کار او پیش خیر استوار
 و عفت بی عفت استوار در حجت و عظیمی که در کار او پیش خیر استوار
 استوار آن یا عظم این صلح اگر او سپاس سفر از بر بند و این استوار
 عظم او را این امثال مکر در عهد استوار در حجت استوار
 و انفرادی که در یاد و در عهد استوار در حجت استوار
 عودت و نظم و نسق امور و ضرورت استوار در حجت استوار
 ظهور از آنجا که در عهد استوار در حجت استوار
 که استوار در عهد استوار در حجت استوار
 حقیقت این عهد استوار در حجت استوار
 خود دانسته استوار در حجت استوار
 با هر چه در عهد استوار در حجت استوار
 دانسته در عهد استوار در حجت استوار

تسلیقه منصب آقایی میرزا آقا سبکی که از حمله نیرزان اکراد

سوده علمی شده

حکم عالمی شد آنکه چون مرکوز خاطر حظیر مکرمت مومن ضمیر مسیر
مرحمت منحوس است که هر یک از خیمه نشینان عرصه عربین الارجای بکرنکی و اخلاص
را که اوتاد قرین الشداد حسن عقیدت و خدمت گذاری را بر زمین دل صدائت
آئین رده طناب وار در طریق استقامت و جان نزاری استوار و سرفراز اندمانند
هنگام بارگاه بالکتاب و عنایات خاص سرفراز و متوارشات گوناگون بیس الاکفاء
والاشرفان سربلند و معنار ما ریم لهذا عالیشان معلی مکان منی المرتبه و
السمان میرزا آقا سبکی را که احتام عظیم الخیام خلوص کاروانسیر رحیل بیلاقی
ملهور و عنایر عقیدت سرا بر سعی و جان فنانیش مسوطن فتلای وقوع و عدور
است بمنصب آقایی عموم ایل حلیل اکراد سبکی معزز و سربلند و مابین موهبت
علمی او را بیس الامثال مکرم و ارجمند ساخته مقرر نمودیم که من حیث الامتداد
والانفراد چنانکه باید و باید و طریقینه از جوهر او سزد و آید در رفتن و تنق
سهامات و نظم و نسق امور و ضروریات ایشان ماعی جمیله و حسن اهتمام منصفه
ظهور و انجام رسائیده دقیقه ار نعمتیت و مرحامتی و صلاح دیدار ایشان از فرو گذارت
و سامرعی به معاید مقرر آنکه کدخدایان ذی شای و ریش سفیدان و سایر طبقات
ایل حلالک ننان سبکی عالیشان معزی الیه را بالاحتقاق آقا و بزرگ خود دانسته
په پیجوجه روگردان و گردن از خدمتگذاری و متابعت او در نکندیده بنا از جاده
اطاعت و انقیاد او بیرون نگذارند و در این باب قدغن لازم دانسه و در
عهده بناسند.

نحریراً فی شهر ربیع الثانی (۱۱۹۹)

نقدی بر سینه از روی و در
 حدیثی که در آن آمده که هر که از برون
 این خاندان عظمت فرجام و در آنجا از آنجا
 در دهان ادبیت انجام منظر از عظمت اثر در آن
 داشت که هر یک از فرزندان بر آن جان نشا
 دیگر تا شاعر اگر چند حسیه که نینان
 نشینان قشوق حسن صداقت و نه سگداز
 مناسب از جمله سرور و برتر مرتبه و
 سخته بر احم والطف بکوران محرومان
 کارن خیریه قیام در میان زین لینه
 و شکر نشان جهان که با عین بر این
 نویش تا بر در بر رشت و در آن
 در هر ایست در آنجا و بیرون
 اگر او دشت بر زبان مغز و بر
 الا نام مکرر در چند سخته فرمودیم
 و در نظم و نسق صادم کرب و ارادت
 که در بخش او آید در کمال رشد
 بعد از شربت و در پرکار و در این
 مستقر آنکه که در کف در این
 بچنان سابقی اللطاف را در باب
 صواب و در کف از او است لکن طریق
 آب قرین لازم در این شهر و در
 ۱۲

علیه که بندگان عالی در باب آفائی و بررگی احمد آفای
کرد ریلان قلمی نموده بوده

حکم عالی شد آنکه چون از ندو نزول احنام حنمت آئین این خاندان
عظمت فرجام و از آغاز ارتحال ایل ایالت فرین این دو دمان اندیت احمام
منظور نظر خسته افتیر و مکنون خاطر خطیر مرحمت گستر آنت که هر یک رفرمان
پران جان نثار و اخلاص کیشان ارادت و یکرنگی شعار را که سرخیل عیبه گریسان
صحرای عقیدت و چاکری و بیشتر و خوشنشینان فثلاق حسن صداقت و خدمتگذاری اند
فراخور قدر و رتبه بمناسب ارجمند سرفراز و بعزید مرتبه و مقدار بین الاکفا
معزز و ممتاز ساخته بمراحم و الطاف بیکران محسود اقران و باشفاق و عنایت
گونگون عطیه قبایل اهل جهان سازیم لهذا عالیشان رفیع القدر و المکان
اخلاص و عقیدت نشان (احمد آفای کرد ریلان را) که اباعنجد هواخواهی این
سلسله از سیمای سعادت نمایش ظاهر و آثار رشد و کاردانی ارجبین استعداد
و قابلیتش لامع و باهر اس در از انیکو خدمتیها و پذیرای فرمان منصب
آفایی عموم ایل جلیل اکراد و عنایر ریلان معزز و سربلند و باین موهبت
عظمی او را در بین الانام مکرم و ارجمند ساخته فرمودیم که ار رتق و فتق
امور مجموع ایلات و ار نظم و نسق مهام کل قبایل و الویات جناتکه از دست
فطانت و دانش او آید و سر کمال رشد و قابلیت او سزد و شاید متوجه و
سرحاس بوده در تعشیت و تدبیر کار و بار ایشان بهیچوجه مسامحه و تکاهل
چایر ندارد مقرر آنکه کافه کنخدایان ایل و قاطبه ریش سفیدان طوایف و
قبایل عالیشان سابق الالقاب را در هر باب و هر چه آقا و بزرگ خود
دانسته در امر صواب و خدمتگذاری او سالک طریق اطاعت و انقیاد باشند و
در این باب قدغن لازم دانسته و در عهده شناسید *

تحریراً فی ۱۲ شهر محرم الحرام ۱۲۰۰


А. Д. ПАПАЗЯН

УКАЗЫ ЕРЕВАНСКОГО ХАНА МУХАММАД-ХАНА
КАДЖАРА О ВОЗВЕДЕНИИ МИРЗЫ-АГА СИПКИ
И АХМАДА-АГА ЗИЛАНИ В ДОЛЖНОСТЬ «АГА» (XVIII в.)

Резюме

Многочисленные копии официальных бумаг и писем, составленных в 60—80 гг. XVIII в. старшим секретарем (мунши-баши) Ереванских ханов Мирза-Мухаммад Муслимом Ереванским, в те же годы были включены в рукописный сборник, который ныне хранится в Восточном фонде Матенадарана им. Маштоца под номером 233. Сборник также содержит указы (та'лика) Мухаммад-хана 1199 и 1200 гг. о даровании вождям курдских племен Сипки и Зилани проживавших в пределах ханства (Арагатский край), должности «ага» (мансаб-и ага-йи) и утверждающих их права как племенных вождей с приказом о подчинении им старейшин этих племен.

Расшифровка и публикация персидского текста указов параллельно с армянским переводом имеют целью сделать его доступным для более широких кругов курдоведов.



ՀԱԿՈՒ ՓԱՓԱԶՅԱՆ

**ՍՈՖԻԱՅԻ ԿԻՐԻԼ ԵՎ ՄԵՐՈՒԻԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆԻ
ՎԱՆԻ ԷՅՄԼԵԹԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՕՍՄԱՆՅԱՆ ԳԻՎԱՆԱԿԱՆ
ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ**

Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի Արևելյան բաժնի արխիվում պահվող օսմանյան պատմական վավերագրերի աղբյուրագիտական արժեքը բաղմիցս ընդգծված է ուշ միջնադարի սովետական և արտասահմանյան պատմագիտական գրականության մեջ¹։

1982 թ. Բուլղարիա կատարած ուղևորության ընթացքում, անձամբ ծանոթանալով այդ մեծարժեք ժողովածուի հետ, առանձին հողվածով փորձել ենք տալ խնդրո առարկա արխիվի, տարբեր ֆոնդերում խմբավորված բաղմահազար վավերագրերի ընդհանուր բնութագիրը, առանձնապես կանգ առնելով այն ֆոնդերի վրա, որոնք Հայաստանի և հայ ժողովրդի հատկապես արևմտյան, մասամբ նաև արևելյան հատվածների XVI—XIX դդ. սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության վերաբերյալ կզակի նշանակություն ունեցող փաստա-կան հարուստ տվյալներ են պարունակում²։

Ինչպես արդեն նշված է, Արևմտյան Հայաստանին վերաբերող վավերագրերը խմբավորված են էրզրումի, Վանի, Կարսի, Զըլզըրի, Թուրքի, Խարբերդի, Դիարբեքի և Քրզստանի ֆոնդերում, թեև հայերի մասին զգալի նյութ կա նաև Սեբաստիայի, Կեսարիայի, Մալաթիայի, Մարաշի, Ադանայի, Ալնթապի, Ամասիայի, Եդեսիայի, Անտիոքի, Իկոնիայի, Հալեպի, Տրապիզոնի, ինչպես նաև Քյոթհահիայի, Ղրիմի, Զմյուռնայի, Թեքիրդաղի, Երուսաղեմի և այլ ֆոնդերում գրանցված վավերագրերում։

Առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում էրզրումի և Վանի ֆոնդերը, որոնք ընդգրկում են պատմական Հայաստանի Բարձր Հայքի, Տարոն-Տուրուբերանի, Մոկքի և հատկապես Վասպուրականի տարածքներին վերաբերող և նշված ժամանակահատվածի պատմության հիմնական հարցերի լուսաբանմանը նպաստող բաղմաբնույթ վավերագրեր։ Այս երկու ֆոնդերում առկա, ընդհանուր թվով 4683 վավերագրերից Վանի էյալեթին վերաբերող փաստա-

¹ Траянов Велков. Османо турски документи о финансово съдържанне XVI—XVIII вв., София, 1977. Եսմալտուրի Լոզդյեմենտյուրի Մյարոլոբի անյալուսես և տղմոս Կոմեյեբոս Մյեսսեյե (XVII—XVIII), Զամոսալեյեմ Զոմոնա և ուոդար Մենյեյեոյեմ, Եթոլուսո, 1982. Իլոլդուրոս, ցոալեյեոս Կոնա և Զեյեոարո 1694-1732 Մ. Մ. Զամոսալեյեմ Զոմոնա և Կոսնա և Եթլեյեմ, Եթոլուսո, 1979.

² Հ. Կ. Փափազյան, Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան գի-վանական վավերագրերը, ՊՐԶ, 1984, № 3, էջ 195—214։

թղթերը 927 հատ են (1802 թերթ), որոնցից հնագույնը հիշքը. 985 (1577) թ. Վանի, Արճեշի, Ադիլջավազի (Արծկե), Բիթլիսի (Բաղեշ), Բերկրիի և Քեսունի (Կեղան) լիվանների, միջին չափսի վեց թղթերի վրա, մեծ մասամբ մանր սիակաթ գրությամբ գրված թիմարների ղեֆթերն է, որտեղ արձանագրված են այդ լիվաններին ենթակա Գավաշի, Արճեշի, Տասիկի, Օխկանի, Չուկուրի, Ամյուկի, Արգիլի, Մուշի, Ադիլջավազի, Կապանի, Բերկրիի և այլ նահիաներում գտնվող 104 գյուղերի ու ագարակների (կարիլյա և մազրաա) թիմարների, ինչպես նաև հանքերի, ներկատների, գինետների, անասունների և գերեվաճառության շուկաների, կաշվի դարադման արհեստանոցների (դաբաղխանե) և այլ եկամտաբեր օբյեկտների մուկաթիանների գումարները³:

Նույնպիսի մի ղեֆթեր պահպանված է նաև հիշրեթի 1012 (1603) թվականից⁴, որը հիմնականում համապատասխանելով 1577 թ. ղեֆթերին, մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես Բիթլիսում իշխող Ռոժակի ցեղի առաջնորդների ֆեոդալական տան զիամեթների ու թիմարների մանրամասն նկարագրությամբ: Հայտնի է, որ ղեռես ամիր Շամս-էդ-դինի ժամանակներից (XV դ.) Բիթլիսի, հլաթի, Մուշի, Խնուսի շրջանները, որպես սոյուրդայներ, Բիթլիսի ամիրների ֆեոդալական տիրույթներն էին⁵, որոնք XVI դարի երկրորդ կեսում (1578 թ.) ժառանգաբար անցան նույն ընտանիքի նշանավոր ղեմքերից, մեծ ամիր և անվանի պատմիչ, «Շարաֆնամե» պատմական երկասիրության հեղինակ՝ Շարաֆ-խան Բիթլիսիին⁶: Մույն ղեֆթերում գրանցված են Բիթլիսի ամիրների թիմարները սահմաններում գտնվող, ինչպես բուն Բիթլիս քաղաքից, այնպես նաև վերոհիշյալ կազաններին ենթակա Խուլփիկի, Խութի, Դատվանի, հլաթի, Տատիկի, Գավառի, Կարճկանի, Վանի, Մուշի, Ադիլջավազի (Արծկե), Արճակի, Արճեշի և այլ նահիաների հարյուրավոր գյուղերից ստացվող եկամուտները, որոնց ընդհանուր գումարը կազմում է 1415372 աքչե:

Վավերագիրը ուշագրավ մանրամասնություններ է պարունակում նաև Շարաֆ-խանի սպանությունից հետո նրա տիրույթների՝ շատ կարճ ժամանակով եղբորը Խալաֆ-խանին անցնելու, իսկ վերջինիս սպանությունից անմիջապես հետո նույն տիրույթների՝ Շարաֆ-խանի որդի Զիա-էդ-դինին տրվելու վերաբերյալ: Իսկ ղեֆթերի առաջին էջի վերի մասում, ավելի ուշ կատարված մակագրությունից պարզվում է նաև, որ հիշքը. 1028 (1619) թ. այդ նույն թիմարները տրվել են վախճանված Զիա-էդ-դինի որդուն՝ Շարաֆ-խանին⁷:

³ Կիրիւ և Մեթողի ժողովրդական գրադարանի Արևելյան բաժնի արխիվ, ֆոնդ 223 Ա, վավ. 511 (Այսուհետև՝ ԿՄԺԳԱ).

⁴ ԿՄԺԳԱ, ֆոնդ ՕԱԿ, վավ. 162/36:

⁵ Scheref-nameh ou Histoire des kourdes, par Scheref, prince de Bidlis. Publiée par V. Véliaminoſ-Zernof, t. I, texte persan, 1ère partie, St. Pétersbourg, 1860, էջ 376—378 (Այսուհետև՝ Շարաֆնամե):

⁶ Նույն տեղում, էջ 454:

⁷ Ցարդ հայտնի չէ պատմիչ Շարաֆ-խան Բիթլիսիի մահվան թվականը: Վ. Վելյամինով-Ջեռնովը հաստատում է, որ նա մինչև 1599 թ. ողջ է եղել (տե՛ս Շարաֆնամե, առաջաբան, էջ 16—17), որից հետո տեղեկություններ չկան, թե մինչև ո՞ր թվականն է ապրել: 1603 թ. կազմված սույն ղեֆթերում նկարագրված Բիթլիսի ամիրների հաջորդականությունից երևում է, որ նա սպանված պետք է լինի 1601—1602 թթ., որից հետո զիամեթներին տրե՛լ է նրա եղբայր Խալաֆ-խանը, որն այս ընթացքում սպանվել է իր իսկ աշխրեթի քրոջի ձեռքով, և նորից այդ տիրույթները տրվել են պատմիչի որդիներից Զիա-էդ-դինին, ինչպես երևում է, երկու եղ-

Կան նաև XVIII դարի 30-ական թվականներին վերաբերող Վանի բերդի մուտքի և ելքի, խրթին սիակաթով գրված մանրամասն հաշվեկշիռներ (Դեֆթերի իրադ վե մեսարիֆ-ի խազինա-ի վան)⁸, որոնք Վանի մերձակա, ինչպես նաև Ռշտունիքի, Շատախի, Գավաշի, Արճակի և այլ շրջանների բազմաթիվ գյուղերից ստացվող հացահատիկի (ցորեն, գարի, բլղուր, ալյուր և այլն), յուղի, մանր եղջերավոր անասունների (արու և էպ ոչխար, գառ, այծ և ուլ) վերաբերյալ ուշագրավ տվյալներ են պարունակում: Այս բնույթի վավերագրերը իրենց հարուստ բովանդակությամբ, որոշակի գիտական հետաքրքրություն են ներկայացնում նաև Վասպուրականի հիշյալ և այլ գավառների և նրանց, մեծ մասամբ հայկական անուններով պահպանված, հարյուրավոր գյուղերի տեղագրական ուսումնասիրության տեսակետից: Վանի մերձակա Շուշանց, Ավանց, Արճակ, հառակոնիս, Ղալաջուկ (Լեսկ) և այլ գյուղերից բացի հիշատակված են նաև վերոհիշյալ նահիաների Միրաբ, Այանս, Բերդիկ, Կղզի, Անկշտան, Սբուրթան (Սուրբ Վարդան), Նորավանց, Զբվրն, Դոնաշեն, Փակիս, Դանբաթ, Գոմս, Սոսրաթ, Քյոշք, Իսբելե (Ախավանք), Իշխանի գոմ, Քարվանց, Շխենի, Արտավեզ, Թիմար, Խիրաթան, Զուլալ, Խորավել, Անար, Մճառիզ, Փշրավանք և բազմաթիվ այլ գյուղեր:

Գյուղերի (կարիյա), ագարակների (մազրաա) և այնտեղ բնակվող ռայաթների վերաբերյալ վիճակագրական ուշագրավ տվյալներ կան մերթնդմերթ անցկացվող ընդհանուր գրանցումների (թահիր) և ստուգումների (յոբլամա) ժամանակ կազմված մեծ և փոքր ցուցակներում ու զեկուցագրերում: Այսպես, օրինակ, XVII դ. 80-ական թվականների նման մի ցուցակում հանրագումարի են բերված 631500 մուլքեր և հողեր և 196784 ռայաթներ⁹:

Վանի ֆոնդում առկա են արքունի խասերի (խավասս-ի հումայուն), զիամեթների ու թիմարների, բերդի գանձատան ելքի ու մուտքի և զինվորականության ռոճիկների (իրադ վե մեսարիֆ, թա'յինաթ-ի ասաբիր), բանակի կարիքների համար բնակչությունից գանձված կամ գնված մթերքների և այլ նյութերի (զախաիր), զլխահարկի (շիդյա) և նահիաների, գյուղերի, ագարակների և այլ եկամտաբեր վայրերի ու հաստատությունների վարձակալման գումարների (մուկաթիաթ) դեֆթերներ: Մեծ թիվ են կազմում հատկապես թիմարներին վերաբերող համառոտ և ընդարձակ ցուցակներն ու այլ պաշտոնական փաստաթղթերը¹⁰:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև ֆոնդում գրանցված մյուս բազմաբովանդակ տարաբնույթ գրությունները (բողոքներ, զեկուցագրեր, վիճարանական գրություններ, ստուգումների արձանագրություններ, հրահանգներ,

բայրների միջև սպանությունների դրող թշնամություն է եղել, որի ընթացքում, ամենայն հավանականությամբ, հոր հետ սպանվել է նաև մյուս որդին՝ Շամս-էզ-զիներ: Քանի որ իր պատմության վերջում Շարաֆ-խանը նշում է, որ թեև 1578 թվականից նա տիրում էր իր ժառանգական տիրույթներին, սակայն, հավանաբար զբաղված լինելով իր երկի շարագրությամբ, կառավարչական գործերը թողել էր ավագ որդուն՝ Շամս-էզ-զինին (Շարաֆնամե, Տ. Ա, էջ 456): Թվում է, թե իսլամ-խանի սպանությունից հետո, երբ կրկին տիրույթները սրվել են Շարաֆ-խանի ուղիղ գծով ժառանգներին, սկսեք է իշխեք ավագ որդին, որը փաստորեն իշխում էր դեռ հոր կենդանության օրոք:

⁸ ԿՄԺԳԱ, ֆոնդ 0245:

⁹ Նույն տեղում, ֆոնդ 233 Ա, վավ. 74:

¹⁰ Նույն տեղում, վավ. 313—447:

վճռագրեր և այլն), որոնց համակողմանի համեմատական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ պատկերացում կազմելու ինչպես սոցիալ-տնտեսական կյանքի առանձնահատկությունների, այնպես նաև պետական, զինվորական, վարչական ու ֆինանսական համակարգի վերաբերյալ:

Պետք է ասել, որ XVIII—XIX դդ. վավերագրերը ավելի մեծ թիվ են կազմում, հարուստ են բովանդակությամբ և մեզ են հասել առավել անվնաս վիճակում: Դրանք մեծ մասամբ վերաբերում են խաս, միրի և մալիքանե հողերի եկամտոնների մուկաթիաներին, այդ վայրերի բնակիչներից ստացվող հարկերի ու տուրքերի գանձման իրավունքի աճուրդով վարձակալման կամ իլլիզամով տիրելու համակարգին: Ուշագրավ մանրամասնություններ են պարունակում հատկապես Մոսկին, Սղերդին, Խիզանին, Սպարկերտին, Հաքքարիի շրջանում՝ Աղբակին, Շամդինանին, Ջուլամերիկին, Գավառին և Կոթուրին, Աղիլջավազի յուրթլըքներին և օջաքլըքներին, Բերկրիի գյուղերին, ինչպես նաև Վանի սանջաքի զինապարտության տուրքերին (բեդել ասկարի) վերաբերող վավերագրերը, որոնց մեջ արտացոլված է XVIII դ. երկրորդ կեսում և XIX դարում Օսմանյան կայսրության այս ծայրամասի տնտեսական անկումը, պաշտոնեություն և մուլթեզիմների հարստահարություններին ու քրդական աշիրեթների կողոպտիչ արշավանքներին ենթակա բնակչության աշխատավորական զանգվածների ծանր վիճակը: Առավել բնորոշ են այն վավերագրերը, որոնք վերաբերում են հողատիրության տարբեր ձևերին կամ վկայում են տեղական իշխանությունների զեկուցագրերի հիման վրա սուլթանական հրամանով հողերի սեփականատիրական կատեգորիաների փոփոխման մասին: Այս կարգի վավերագրերի, որպես բացառիկ արժեք ներկայացնող պատմական սկզբնաղբյուրների մասին գաղափար կազմելու համար բավական է ծանոթանալ Վանի սանջաքին և Բերկրիի, Ոստանի ու Գավաշի նահանգներին վերաբերող, հիշք. 1201 (1786) թ. բովանդակալից մի վավերագրի հետ, որը թեև ծավալով մեծ չէ, սակայն Օսմանյան կայսրության ավատատիրական համակարգի, պետական (խաս և միրի) և մասնատիրական (մալիքանե) հողատիրության և մանր ու խոշոր ավատատերերի հարստահարության ներքո հեծող ուսյաթների ծանր վիճակի վերաբերյալ ուշագրավ տվյալներ է պարունակում:

Վանի մուհաֆիզ Թեյմուր փաշան վերոհիշյալ թվականին Բարձրագույն դռնը ներկայացրած զեկուցագրերից մեկում տեղեկացնում է, որ հիշրեթի 1187 (1773) թվականից ի վեր Վանի մուհաֆիզներին որպես ոռճիկ նշանակված որոշ խասեր ինչ-որ ձևով մալիքանե են արձանագրվել, որի հետևանքով մուհաֆիզության հասույթները պակասել են: Միաժամանակ մյուս խասերի ուսյաթների վրա լրացուցիչ պարտականություններ են դրվել, որոնք նրանք ի վիճակի չեն հատուցելու, և այս պարագան կարող է պատճառ դառնալ ուսյաթների ցրվելուն: Ուստի, վկայակոչելով Վանի կազիի և ժողովրդի անունից ներկայացված գրությունը (թահրիր), խնդրում է կարգադրել, որպեսզի մալիքանե դարձված գյուղերը վերստին վերականգնվեն որպես խասեր և դրվեն միրմիրանի (բեյլարբեյության) տրամադրության տակ: Զեկուցագրին առընթեր տրված է Վանի միրմիրանին ենթակա Զրվանդանց, Կղզի, Աթանանց և Գավաշ գյուղերի և Բենդ-ի մահի (ձկան ամբարտակ) կողմող ձկնորսարանի, ինչպես նաև տեղի զինվորականության օջաքլըքների մեջ մտնող Օսման-բեկի ազարակի մուկաթիաների գումարներն ու դրանց վրա բերաթ ստացողների անունները:

Վավերագրի առաջին էջի վրա Քեյմուր փաշայի ղեկուցագրի քաղվածքն է և նշված վայրերի վերաբերյալ տրված տեղեկանքները: Երկրորդ էջի վերի աջ անկյունում գրանցված հարց ու պատասխանից պարզվում է, որ կատարված կարգադրությունը նախորդել է, որոշ քննություն պարզելու համար, թե նման այլ դեպքեր եղե՞ն ևն արդյոք: Թեև պարզ չէ, թե հարցն ում է ուղղված, սակայն պետք է ենթադրել, որ բացատրություն տվողը, հարցին լավատեղյակ, պատասխանատու պաշտոն զբաղեցնող անձնավորություն է եղել, որը պատասխանելով Բարձրագույն դասն հարցումին, նշել է, որ Վանի միրմիրանին պատկանող խասերը թեև ժամանակին մուհաֆիզների տնօրինությամբ տրվել են մասնավոր անձանց որպես մալիքանե, սակայն, որքանով որ մասնատիրական (մալիքանե) հողերի վերստին խաս կամ միրի դարձնելը հակասում է մալիքանեի օրենքներին, ուստի այդ կարող է տեղի ունենալ միայն սուլթանական հրամանագրով: Այս բացատրագրի հիման վրա էլ վավերագրի առաջին էջի կենտրոնական մասում, դիվանի խոշոր գրությունում, կարգադրված է նշված մուկաթիաների եկամուտները նորից վերականգնել որպես անմիջապես միրիին, կոնկրետ դեպքում Վանի միրմիրանին պատկանող եկամուտներ:

Ինչպես տեսանք, XVIII դ. հողատիրության առանձնակի մի հարցի վերաբերելով հանգերձ, վավերագիրը պարունակում է տարբեր պաշտոնատար անձանց տարաբնույթ ղեկուցագրեր, տեղեկանքներ և մակագրություններ, և այդ առումով էլ առավել բնորոշ մի օրինակ հանդիսանալով, ըստ ամենայնի բացահայտում է վավերագրերի այս խմբի, որպես որոշակի գիտական հետաքրքրություն ներկայացնող պատմական սկզբնաղբյուրների, ընդհանուր պատկերը:

Ստորև հրապարակելով վավերագրի բնագրի նմանահանությունը, վերծանությունն ու հայերեն թարգմանությունը, կարծում ենք, որ այն, վերը մասնակիորեն գնահատված փաստական նյութով, կարող է որոշակի գիտական ուշադրության արժանանալ ավելի լայն գիտական շրջանակների կողմից: Բնագրում տեղ գտած սոցիալ-տնտեսական, վարչական և այլ տերմինները, բավարար չափով հետազոտված և մեկնաբանված են մասնագիտական գրականության մեջ:

Ներկայումս Վանի մուհաֆիզ, մեծագու վեզիր, հորին վսեմություն, գեներալ-մայոր Քեյմուր փաշայից ստացված գրության մեկ հոդվածի համառոտ շարադրանքն է:

1201 թ. սաֆարի 13-ին (1786 թ. դեկտ. 5):

Թեև հնուց ի վեր Վանի մուհաֆիզներին որպես ապրուստի միջոց և ոռոգիկ նշանակված խասերն ու այլ եկամուտները ավելի քան 25000 զուրուշ է եղել, սակայն 1187 թվականից ի վեր, հիշյալ խասերից որոշ գյուղեր, ինչ-որ ձևով մալիքանե են արձանագրված, որի պատճառով վիլայեթի հասույթները նվազել ու պակասել են: Բացի այդ, հիշյալ խասերից, այն գյուղերի ռայաթներին, որոնք մալիքանե չեն արձանագրված, սովորական ձևով պարտադրվել են սե-

րայի (պալատական), ինչպես նաև վառելափայտի և այլ սովորութային ծախսերը, որոնք, ինչպես գեկուցված է, ռայաթները ի վիճակի չեն հատուցելու, և քանի որ պարզվում է, որ այս վիճակը շարունակվելու դեպքում, նշված ռայաթները թշվառության կմատնվեն և կցրվեն, ուստի պետք է վերոհիշյալ խասերի այն գույզերը, որոնք մալիքանե են արձանագրված, վերցվեն և ինչպես առաջ էր, նորից խաս արձանագրվելով միացվեն միրմիրանին: Վանի կազին և ժողովուրդը իրենց գրությամբ խնդրում են, գերագույն հրամանի հրապարակումով և շնորհումով, պահպանության տակ վերցնել վերոգրյալ ռայաթ-ծառաներին և թույլ շտալ, որ նրանք թշվառության մատնվեն ու ցրվեն:

Վանի միրմիրանին ենթակա

Վանին ենթակա Զրվանդանց գյուղը 1189 թ. գանձատուն ուղարկվող, տարեկան՝ 1000 դուրուշ

Վալիի խասի համար՝ 45 »

Մուհամադ-Սադիզ էֆենդիի անունով, 1197 թ. շավալի 29-ին բերաթներ են տրված, կանխիկ, առձեռն՝ 50 »

Հիշյալ գյուղը Վանի միրմիրանի խասերից լինելով, ամեն տարի մի մուլթազիմի էր տրվում, իսկ մուլթազիմները, անձնական շահերից զրզված, իրենց ռայաթների նկատմամբ ոտնձգություններ են թույլ տալիս և պատճառ դառնում մյուս միրմիրաններից ստացվող եկամուտների նվազելուն, որի համար էլ Վանի մուհաֆիզ Ահմադ փաշայի ներկայացմամբ, հիշյալ թվականին վաճառված է որպես մալիքանե:

Զկան ամբարտակի (բանդ-ի մահի) մուկաթիան, որը այսբան մալիքանեի հարկով (մալով) Վանի մուհաֆիզ Ահմադ փաշայի խնդրի հիման վրա վաճառվել է 1189 թվականին: Տարեկան՝ 200 դուրուշ

Դարվիշ սեյիդ-Մուհամադի, Մահմուդի և սեյիդ Ֆեյզուլլահի անուններով բերաթներ են տրված 1194 թ. շավալի 21-ին. կանխիկ առձեռն՝ 100 »

Տարիներ շարունակ որսավայր հանդիսացող գետի նախկին հունից շեղվելու հետևանքով, ձկան որսը վերացել է, որից և նվազել են միրմիրանի եկամուտները, և Վանի մուհաֆիզ Ահմադ փաշայի ներկայացմամբ, վերոհիշյալ թվականին վերավաճառվել է:

Վանի էյալեթի Ոստանի նահիայի Կղզի գյուղը 1189 թ., վալիի ներկայացմամբ, տարեկան՝ 50 դուրուշ

Սեյիդ Սուլեյմանի անունով, որպես մալիքանե բերաթ է տրված, 1192 թ. սաֆարի 18-ին կանխիկ առձեռն՝ 50 »

Հիշյալ գյուղին որպես մակթու տիրող Մուհամադի մահանալու պատճառով, Վանի մուհաֆիզի ներկայացմամբ, վերոհիշյալ թվականին որպես մալիքանե վաճառվել է:

Վանի էյալեթի Ոստանի նահիայի Աթվանանց գյուղը 1189 թ., տարեկան՝ 80 դուրուշ

Սեյիդ Սուլեյմանի անունով բերաթ է տրված, 1192 թ. սաֆարի 18-ին, կանխիկ առձեռն՝ 15 »

Մի քանի տարուց ի վեր ռայաթների ցրված լինելու պատճառով, վերստին շենացնելու նպատակով, Վանի մուհաֆիզի ներկայացմամբ, հիշյալ թվականին վաճառվել է որպես մալիքանե:

Վանի էյալեթի Գավաշ նահիայի Գավաշ գյուղը, Վանի մուհաֆիզ Թեյմուր փաշայի ներկայացմամբ, 1191 թ. ըստ ներկայացման 28000 փարա (°). տարեկան՝ 50 դուրուշ

Աղաների աղա Մուհամադ-Ամինի անունով, որպես մալիքանե բերաթ է տրված. 1191 թ., կանխիկ առձեռն՝ 50 »

Հիշյալ գյուղը միրմիրանի խասերից լինելով, մուլթաղիմների շահատակության, ընշաքաղցության և ոտնձգությունների պատճառով, ռայաթները թըշվառության են մատնվել ու ցրվել. գյուղն ավերվել է, միրմիրանի եկամուտները նվազել են ու պակասել: Վանի մուհաֆիզ Թեյմուր փաշան, գյուղը վերստին որպես մալիքանե վաճառելու մասին զեկուցել է և նրա ներկայացմամբ, նշված թվականին, որպես մալիքանե, աճուրդով վաճառվել է:

Վանի զինվորականության օջափլբին ենթակա

Ֆրիդունի (°) կազային ենթակա Օսման բեկի ազարակի մուկաթիան. կես բաժնի մալը—տարեկան՝ 1000 դուրուշ

Հասանի որդի Աբդուլլայի անունով բերաթ է տրված. կես բաժնի դիմաց, կանխիկ առձեռն՝ 15 »

Հիշյալ գյուղի կես բաժնին մակթուի իրավունքով տիրող Հուսեյնի մահից հետո, այդ թափուր բաժինը, նշված թվականին, որպես մալիքանե, աճուրդով վաճառված է:

Ամեն տարվա մալը Վանի մուհաֆիզներին հատուցվող վերոհիշյալ վեց մակթուները, այս շափի ձեակերպումներով, մալիքանեի կարգով արձանազրված են վերոհիշյալ անձանց վրա: Հրամանը նորին սրբություն, վսեմաշուք սուլթանինն է:

1201 թ. սաֆարի 16-ին (1786 թ., դեկտ. 8):

— Այս ձևի այլ օրինակներ կա՞ն:

— Այս ձևը, միրմիրանի խասերից լինելով, իրենց դիմումների համաձայն, շենացման պայմանով, որպես մալիքանե, շնորհված է ռայաթներ խնամող որոշ մարդկանց, որից հետո, վերստին վերացնելու օրինակներ չլինելուց բացի, հիշյալ մուկաթիայի հինգ կտորը Վանի նախկին մուհաֆիզների և մեկ կտորը ներկայիս Վանի մուհաֆիզ, վերոհիշյալ վեզիրի ներկայացմամբ, շնորհված լինելով, վերստին վերացումը, մալիքանեի պայմաններին հակառակ լինելու պատճառով, այժմ դրա վերացումը հաջիմների ցանկությունից է կախված. հրամանը վսեմաշուք և ողորմած նորին սրբություն սուլթանինն է:

(Ստորագրություն)

Հիշյալ թվականից ի վեր, միրմիրանի խասերից, Վանի էյալեթում գտնվող գյուղերի մալիքանե տրված այն մուկաթիաների մալն ու մուամիլաները, որոնք գրանցված են իրենց լիազորների վրա և արձակելով նորից մալիքանե են տրված, թող վերականգնվեն որպես միրմիր:

(Ստորագրություն)

حالا وان محافظی وزیر مکرم سعادتلو تیمورباشا حضرتلری طرفندن
وارد اولان تحریراتدن بر ماده نك خلاصه سیدر ۰ فی ۱۲ ص سنه ۱۲۰۱

وان محافظلرینه از قدیم مدار و معاش تعیین اولنان خواص و
سایر ایرادات اتحق بیکرمی بتی بیک غروشه بالغ اولور ایکن بیک یوز
سکان بدی تاریخندن برو خواص مرفوم قرالردن بعضیلری بر و تعریب
مالکانه قید اولندیعیبه بناء حاصلات ولایة کسرو نقصان ترتب
ایلدگندن ما عدا خواص مذکور قرالردن مالکانه قید اولمیان فرا
رعایا لرینه معتاد اولان سرای مصارفی و حلب و سائر مصارفات عرفیه
طرح و تحمیل اولندقجه ادا یه عديم الاقتدار اولدقلرینی بیان و بو
صورنده فالورایسه رعایای مذکوره بر اکنده و بریشان اوله جقلر ظاهر
اولمقله خواص مرفومه دن مالکانه قید اولنلر رفع و ینه قدیمی وزره
خاص قید اولنوب کما فی الاول خواص میرمیرانه الحاق و اقتضا ایدن امر
عالی اعتبار و عنایت و بو وجهله رعایای مرفومه قوللری برینا نیتدن
عیانت بیورلمسی مشارالیه وان قاضیسی و اهالیسی تحریر ایدرلر ۰

تابع خواص میرمیران وان

قریه زیرواندانس تابع وان در سنه ۱۱۸۹

فی ارساله خزینه فی سنه ۱۰۰۰ غروش

برای خاص والی فی سنه ۴۵ غروش

بنام محمد صادق افندی بروات داده فی ۲۹ ل سنه ۱۹۷

معهله ۵۰ غروش

قریه مزبور میرمیران وان خواصندن اولوب بهر سنه بر ملتزمه

ورلمک تقریبیله ملتزملر کندو نفعلری سوداسیله رعایا سه تعدی

معجله ۱۵ غروش

قریه مزبورک بر قاج سندهن برو رعایاسی پراکنده و پریشان
اولمقدن سن و آبادان اولمقلغه وان محافظی عرضی موجبنه تاریخ
مزبوره ده مالکانه فروخت اولمشندر .

قریه کواش تایع تاحیه کواش در ایالت وان پرمویچ عرض تیمور
باشا محافظ وان در سنه ۱۱۹۱

بر موجب عرض ۲۸۰۰۰ ناروب
فی سنه ۵۰ غروش

بنام محمد امین آغا اغابان وان پروچه مالکانه برات داده فی
سنه ۱۱۹۱

معجله ۵۰ غروش

قریه مزبوره خواص میر میراننده اولوب ملتوملری تفعلری چون
اکالیق و تعدیا نلرتدن تاشی رعایا پراکنده و پریشان وقریه مزبوره
اولندیغندن ایراد میر میران کسر و نقصان جاری اولمقلغه مرقوم مجدداً
مالکانه فروخت اولمشتی وان محافظی تیمور باشا عرضی اتمکله عرضی
موجبنه بالمزایده تاریخ مزبوره ده مالکانه فروخت اولتمشندر .

تایع اوچقلق نقرات وان

مقاطعه مزرعه عثمان یک تایع قضاء قریدون

مال نصف حصه فی سنه ۱۰۰۰ غروش

بنام عبدالله بن حسن پروچه مالکانه برات داده

نصف حصه معجله ۱۵ غروش

قریه مزبورک نصف حصه سنه پروچه مقطوع متصرف اولان حسین

فوت اولمنله حصه بی مطولندن بالمزایده بروجہ مالکانہ تاریخ
مزبورہ ده مالکانہ فروخت اولنمشد .

بهر سنه مالترین وان محافظترینه وریک التي مقطوعات مزبورہ
بو مقدار معاملات ابله مرقومونک بروجہ مالکانہ عہدہ لرنندہ اولدیقی
مقیددر - فرمان دولتلو سلطانم حضرتلرینگذر . فی ۱۶ ص سنه ۱۲۰۱

- بو مقولہ نك امثالی وارمیدر دیه .
- بومقوله میرمیران خواصندن اولوب کندو عرضلری موجینجه شنو
آبادان ایتمک شرطیله بعض رعایا برور کمنه یه عمار شرطیله بروجہ
مالکانہ توجیه اولتدقدن صگره تکرار رفع اولندیقک امثالی بولنمه
دیقندن باشقه مقاطعه مزبورک بش قطعہ سی سابق وان محافظلری عرضی
و بر قطعہ سی حالا وان محافظی وزیر منارالیه نك عرضی موجینجه توجیه
اولنمش اولمنله تکرار رفعی شروط مالکانه یه مخالف گورنمکله الحال
هذه رفعی اراده حکامه منوطدر - فرمان دولتلو عنایتلو سلطانم حضر
تلیرینگذر . فی ۲۰ ص سنه ۱۲۰۱ (امضاء)

تاریخ مذکوردن برو خواص میرمیران اولوب وان ایالتنده واقع
قرالرن مالکانه وریلان مقاطعات مالی و معامله لری وکیللرک اوزرینه
ایلدگی و ینه عتقته مبنی مالکانه ورلمش اولندیقی میسری و رقرار
اولنه .
صح

А. Д. ПАПАЗЯН

ОСМАНСКИЕ АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ НАРОДНОЙ
БИБЛИОТЕКИ КИРИЛЛА И МЕФОДИЯ В СОФИИ,
ОТНОСЯЩИЕСЯ К ВАНСКОМУ ЭАЛЕТУ

Резюме

В отдельном фонде Восточного архивного отдела Народной библиотеки Кирилла и Мефодия в Софии хранятся 927 документов, относящихся к Ванскому эалету Османской империи XVI—XIX вв., которые имеют значение важнейших первоисточников, освещающие социально-экономическую и политическую историю упомянутых веков.

Предварительное изучение документов показало, что среди них находятся большие и малые дефтеры знаметов и тимаров XVI—XVII вв., росписи прихода и расхода гарнизона Ванской крепости (ирад ве мезариф), перечни воинских жалований (та'йиннат-и асакир), документы о купле или изъятии у местного населения продовольствия и других продуктов на нужды армии (захаир). Кроме того, здесь находятся и списки поголовной подати (джизия), тексты контрактов об аренде доходов или предоставления во владение сел, хуторов (мазра'а) и других прибыльных мест и учреждений с илтизамом, а также другие документы, всестороннее изучение которых в большей степени будет способствовать освещению основных вопросов, связанных как с социально-экономической и политической историей Васпуракана в упомянутое время, так и с проблемами топографии и демографии этого региона.

В качестве примера, заслуживающего внимания, нами издается прочтение турецкого текста документа от 1201 г. х. (1786 г. н. э.) вместе с переводом его на армянский язык. Этот документ содержит разрешение султана, данного в ответ на докладную ванского Теймур паши о преобразовании ранее переведенных из категории «хасс» в «маликане», сумм «мукаг'а», сел Зрванданц, Кхзи, Атананц и Гаваш, рыбных угодий Бенд-и махи, находящихся в ведении мирмирана эалета (бейлербея), а также входящего в местный военный оджаклык хутора Османбека из категории «маликане» с переводом их снова во владение «мири».

H. D. PAPA ZIAN

LES DOCUMENTS D'ARCHIVES OTTOMANS CONCERNANT
L'EALET DE VAN DE LA BIBLIOTHEQUE CYRILLE ET METHODE
DE SOFIA

Résumé

Le fonds privé des Archives orientales de la Bibliothèque Cyrille et Méthode de Sofia conserve 927 documents des XVIe-XIXe siècles concernant l'éalet de Van de l'Empire Ottoman, documents qui présen-

tent l'importance de sources précieuses éclairant l'histoire sociale, économique et politique des siècles mentionnés.

L'étude préalable de ces documents montre qu'on y découvre des defters grands et petits des ziamets et des timars des XVIe-XVIIe siècles, l'enregistrement des recettes et dépenses de la garnison de la forteresse de Van (irad ve messarif), l'énumération des soldes militaires (ta'yinat-i assakir), des documents relatifs à l'achat ou la confiscation de chez la population locale de vivres et d'autres marchandises pour les besoins de l'armée (zakhaïr). En outre, on y trouve aussi les listes de la capitation (djizia), les textes des contrats de location de revenus ou de dons en propriété de villages, de métairies (mazra'a) et d'autres endroits et exploitations à revenus avec iltizam, de même que d'autres documents dont l'étude approfondie contribuera dans une grande mesure à l'éclaircissement des questions essentielles concernant l'histoire sociale, économique et politique du Vaspourakan à l'époque mentionnée, ainsi que les problèmes de la topographie et de la démographie de cette région.

En guise d'exemple, nous publions le texte turc d'un document de l'an 1201 du Hégire (1786) avec sa traduction en arménien. Ce document contient la permission du sultan, donnée en réponse au rapport de Telmour pacha de Van, pour la réforme des sommes "moukat'a", auparavant transférées de la catégorie "Khas" à la catégorie "malikané", des villages de Zrvandantz, Keghzi, Atanantz et Gavach, des exploitations poissonnières Bend-i mahi, qui se trouvaient sous la juridiction du mirmiran de l'ealet (beylerbey), ainsi que pour transférer la métairie d'Osman-bey, faisant partie de l'odjaklyk militaire local, de la catégorie "malikané" sous la juridiction "miri".

ARMENIA AND IRAN

vi. Armeno-Iranian Relations in the Islamic Period

Before the coming of the Saljuqs. The Arab invasions brought about a major transformation in the political life of the countries of the Near East and had a profound influence upon the relations between the peoples living there.

The Armenian mercantile class in Iran also played the role of *Kulturträger* to a certain extent, acting for the diffusion of Western civilization; Armenian government officials took upon themselves the same mission. One of these figures was the above-mentioned Dawit' Khan. But the greatest Iranian-Armenian diplomat, educator, publicist, and writer was Mīrzā Malkom Khan (q.v.). A liberal thinker and activist, he became a major force in the intellectual awakening of Iran and was instrumental in fostering the constitutional movement in Iran.

At the end of the century, Yovhannēs Khan Masehean held the position of palace dragoman, and other high diplomatic posts, defending Iran's state interests at a number of international conferences. He was an important educator and cultural figure, and president of the Tehran "Society of Philomaths." Later, he produced the highly-acclaimed Armenian translation of the works of Shakespeare. At Tehran, where the Armenian population grew rapidly, Masehean in 1894 founded the first Iranian-Armenian newspaper, *Šawil* (Path). In the following decades about thirty Armenian newspapers and monthlies were founded in cities with sizable Armenian populations (Tabrīz, Rašt, Isfahan) (*Haykakan Sovetakan Hanragitaran* VII, pp. 266-67; *Hay zolovrdi patmuṭ'yun* VI, pp. 718-19). Many other important Armenian public figures are known from the period of the Qajar dynasty.

There were strong cultural ties between the Armenians of Iran and those of Russian Armenia and the Transcaucasus. Instruction in schools paralleled the curriculum in Caucasian Armenian schools. There were elementary and middle schools in cities and in many villages; their free operation was ensured by firmans of Nāṣer-al-dīn and Moẓaffar-al-dīn Shah. Eastern Armenian newspapers and literature circulated widely in the Iranian-Armenian communities; and Raffi (Yakob Melik'-Yakobean), the novelist, is particularly notable amongst the Iranian-Armenian writers who contributed to the development of Armenian literature.

The Iranian-Armenian community was always absorbed, and often involved, in issues affecting the whole Armenian nation. Morally, materially, and sometimes militarily, it participated in the liberation movement of the Western Armenians, which began in the 1890s against Ottoman tyranny. Many young men joined the partisan groups that left the Caucasus through Mākū and Salmās for Van, to participate in the battle for freedom.

In the days of the anti-Armenian policy of Sultan 'Abd-al-Ḥamīd II and the mass killings of 1896, many Armenian refugees found refuge in the Armenian villages of Salmās and Urmia (Frangean, op. cit., p. 68).

Iranian-Armenians of every region took an active part in the Iranian Constitutional Revolution of 1905-11. The famed partisan and folk hero Ep'rem Dawṭ'ean, later called Yeprem Khan, directed Armenian armed revolutionary units; there were other such figures, and researchers have pointed out that of twenty-four major revolutionary leaders, some sixteen were Armenians (Şafā'ī, *Rahbarān*, p. 567). Voluntary units of Armenian fedayeen enlisted in the Transcaucasus and in Ottoman-occupied Western Armenia also came to the aid of the Iranian revolution. The Armenian armed units under K'eri (Aršak Gafafean), together with the Azerbaijani *mojāhedīn* fighting under the general command of Sattār Khan, participated in the defense of Tabrīz (*Haiykakan Sovetakan Hanragitaran* IV, pp. 452-53). In 1909 Yeprem Khan's Armenian fedayeen groups fought victoriously at Rašt, linked up with the forces of Sepahdār Tonokābonī and Sardār As'ad Baḳtīarī, and entered Tehran in triumph. After this victory, Yeprem Khan was made general

commander of the armed forces of the provisional government, and was killed fighting counter-revolutionaries near Hamadān in 1912 (Ēlmar, *Ep'rena*, pp. 572-89).

The years of World War I were tragic for the Armenian people, most of whom lived in the Ottoman territory. Taking advantage of war conditions, the Turkish government started mass deportation of Armenians from their traditional homeland. More than 1.5 million Armenians were uprooted, and a very large number of them lost their lives on the road into exile (Rā'in, *Qatl-e 'ām*, pp. 62-63).

Although Iran had declared neutrality from the beginning of the war, much of the country was still subjected to enemy occupation and destruction; the incursion of Turkish forces into Iran and their entry into Tabrīz was particularly hard upon the Assyrians and the Armenians of Azerbaijan. Although the Iranian authorities in Tabrīz were able to prevent the slaughter of the Armenian inhabitants, there were massacres of Armenians at Mākū, Salmās, and especially Kōy; many Armenians fled to the Caucasus, reaching as far as Tiflis (Mamean, ed., *Yušamatean*, p. 74).

In April, 1915, near the village Dīlmān of Salmās, Russian forces which included Armenian volunteer units dealt a crushing blow to the Ottoman armies of Kālīl Pasha and drove them out of Iran, eventually reaching Van, where the Armenians had been putting up a last-ditch defense against the Turkish enemies (*Haykakan sovetakan Hanragitaran* III, p. 387; *Hay žolovrdi patmuṭ'yun* VI, p. 567).

The February uprising and Great October Revolution of 1917 that gripped Russia produced profound reactions in neighboring countries, particularly in Iranian political life. The withdrawal of Russian forces from the southern front, Iran's northern districts, and the Transcaucasus, presented to the Turks a fresh opportunity to attack broad areas of northwestern Iran, with grievous results again for the local Armenian and Assyrian populations. Pursued by the Turks, the Armenians of the Van area were unable to enter the Transcaucasus and were forced to flee to Iran, where at Salmās and Urmia they joined masses of local Armenians intending to flee via Hamadān to the more secure regions of central and southern Iran; at New Julfa (Isfahan) and in surrounding villages, far from the horrors of war, their compatriots had dwelt for centuries. But a small group of

refugees scattered at Hamadān, whilst at the demand of the British occupation authorities the rest moved towards Iraq, suffering great losses on the road. The refugees were lodged finally at Ba' qūba camp (*Haykakan Sovetakan Hanragitaran* IV, p. 462).

In 1918-20, when the newly-created republics of the Transcaucasus seceded from Russia, relations between Iran and the Republic of Armenia did not take decisive shape. Some time after the establishment of Soviet rule in Armenia diplomatic relations were resumed, in the course of which an agreement was concluded for partial immigration and for the transport to Soviet Armenia via Iran of Western Armenians who had found shelter in Iraq in 1917 (*ibid.*). In 1922, when Armenia, as a part of the Transcaucasian Federative Republic, was joined to the Union of Soviet Socialist Republics, relations between Armenia and Iran were conducted by the diplomatic representatives of the USSR.

Many intellectuals had emigrated from Armenia in the early 1920s; these emigrés participated in and contributed to the educational and cultural life of Iran, especially of Azerbaijan, but this was not to be a lasting effect, for many returned, and Iran experienced renewed turbulence with a change of dynasty.

In the twilight of Qajar Iran, the Iranian-Armenians continued actively to participate in the social and political affairs of the country. Although as a religious unit the community continued to be dominated by the Diocese of Azerbaijan in the north and by that of India and Persia in the south, at New Julfa, the role of the expanding Armenian community of Tehran was becoming crucial in the establishment of ties with the authorities of the central government.

Bibliography:

Haykakan Sovetakan Hanragitaran (Armenian Soviet encyclopædia) III-VI, Erevan, 1977-80.

Hay žołourdi patmut'yun (History of the Armenian people) V-VI, Erevan, 1974-81.

N. H. Goroyean, *Parskastani hayerə* (The Armenians of Persia), Tehran, 1968. E. Frangean, *Atrpatakan* (Azerbaijan), Tiflis, 1905.

H. Ačemean, *S. Ț'adēi vank'ə* (The monastery of St. Thaddeus), Tehran, 1960.

A. Mamean, ed., *Yušamatean Tēr-Nersēs ark'episkopos Melik'-Ț'angeani* (Memorial volume of Lord Nersēs Archbishop Melik'-Ț'angean), Tehran, 1968.

Ēlmar, *Ep'rem*, Tehran, 1964.

H. H. Martirosyan, "Iranahay gałuȚ'i patmuȚ'yunic'," (From the history of the Iranian-Armenian settlement), *Merjavor ev MiȚ'in Arevelk'i erkrner ev žoġovurdner* (Lands and peoples of the Middle East), VIII: Iran, Erevan, 1975.

E. Şafā'ī, *Rahbarān-e maşrūta*, Tehran, 1344 Š./1965.

E. Rā'in, *Qatl-e 'am(m)-e armaniān dar dawrān-e salāȚin-e Āl-e 'Otmān*, Tehran, 1973.

(H. Papazian)


Originally Published: December 15, 1986

Last Updated: August 12, 2011

This article is available in print.

Vol. II, Fasc. 5, pp. 467-478

<http://www.iranicaonline.org/articles/armenia-vi>



ՄՈՒՐԱԳ-ԹԱՓԱՅԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱԿՈՒ ՓԱՓԱՋՅԱՆ

1985 թ. հունիս ամսին (ուղիղ 250 տարի անց այն օրից, երբ եղվարդի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում իրանական զորքերը նաղիրկուլի խանի ղեկավարությամբ ջախջախիչ պարտության մատնեցին օսմանյան զորաբանակներին), ՀՍՍՀ Նախրիի շրջանի Նոր Արտամեստ գյուղի մոտի Մուրադ-թափա բլրի գագաթին կատարվող շինարարական աշխատանքների ընթացքում գտնվել են մարմարի վրա փորագրված թուրքերեն շափածո մի արձանագրության բեկորներ*:

Եղվարդի ճակատամարտի նկարագրությունը բովանդակող պատմական սկզբնաղբյուրները հավաստում են, որ այդ բլրի գագաթին է հաստատված եղել Նաղիրկուլի խանի հրամանատարական կենտրոնը, որտեղից նա հետևել է ճակատամարտի ընթացքին և ղեկավարել մարտը¹: Բլուրը մինչ այդ, Ախիթ-յանդի գյուղի անունով կոչվել է Ախի-թափա²: Հաղթանակից հետո միայն, ի նշանավորումն այդ մեծ հաջողության, Նաղիրի կողմից այն վերանվանվել է Մուրադ-թափա, որ կարելի է թարգմանել «Ցանկալի բլուր»³:

Մանրամասն նկարագրելով ճակատամարտի ընթացքն ու ավարտը, Արարհամ կաթողիկոս Կրետացին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում ճակատամարտից երկու ամիս հետո Նաղիրի՝ վերստին կռվի վայրը զալու, կաթողիկոսի և Երևանի ավագանու հետ միասին բլրի գագաթը բարձրանալու և այնտեղ այդ հաղթանակը նշանավորող հուշարձան կառուցելու վերաբերյալ կաթողիկոսին կարգադրություններ անելու մասին. «Եւ յորժամ եկն մեծարաղղ խանս մերձ այսմ բլրիս, — կարգում ենք գրքի 16-րդ գլխում, — էի և ես ընդ նմա, քանզի խնդրեալ էր զիս: Եւ յառաօտուն, երբ կամէր չուել, ել ի բլուրն այն, կուշաց և գիս ընդ մեծամեծս՝ խաներօք և միրզօք հանդերձ, զքեալան-թարն և զմելիքն ես, ի գագաթ բլրին ի տեղին, որում հարեալ էր զվրանն իւր յալուր պատերազմի, յորում զյաղթութիւն արար: Եւ շատ երկար խօսեցաւ ընդ

* ՀՍՍՀ ԳԱ հնագիտության ու ազգագրության ինստիտուտի բաժնի վարիչ Ա. Քալանթարյանի հետ տեղերիս գրողը եղավ նշված վայրում: Պարզվեց, որ հայտնաբերված քարաբեկորներն արդեն փոխադրված են շինվարչության՝ Նոր Գեղիում գտնվող գրասենյակը, իսկ բլրի գագաթն արդեն հարթեցված էր և քարերի հայտնաբերման վայրում շինության որևէ մնացորդներ չկային: Կային միայն սև և կարմիր տուֆի մշակման ընթացքում գոյացած փշրանքների մնացորդներ, որոնք կարող էին վկայել տեղում էրբեք կատարված կառուցողական աշխատանքների մասին: Չկար մշակված քարի թեկուզ և մի բեկոր, իսկ եթե հատուկնա կտորներ եղել են էլ, թերևս մեքենաները ջրել էին և թաղել հարթեցված հողի տակ: Սակայն շինարարները պնդում էին, որ իրենք տեսել են միայն այս մարմարե բեկորները և ուշադրությամբ հավաքել ու փոխադրել են գրասենյակ:

¹ Абраам Кретацци, Повествование, изд. Н. К. Корганян, Ереван, 1973, հայերեն բնագիր, էջ 56, 63, (այսուհետև՝ Կրետացի), محمد کاظم نامہ جهان آری, میرزا محمد مهدی خان آستر آبادی - تاریخ نادری، تبریز، ۱۹۶۸، جلد ۱، ص ۶۲۱ (այսուհետև՝ Մուհամադ-Քյաղիմի), محمد کاظم نامہ جهان آری، تبریز، ۱۹۶۸، جلد ۱، ص ۶۲۱ (այսուհետև՝ Աստարացի):

² Հատ Մուհամադ-Քյաղիմի նաև՝ Ղարաթափա (տե՛ս Մուհամադ-Քյաղիմի, էջ 608):

³ Կրետացին նախապես նշում է, որ բլուրը վերանվանվել է Մուրադ-թափա — «Մուրք բլուր» (Կրետացի, էջ 63), սակայն մի այլ տեղ անվանում է Մուրադ-թափա (նույն տեղում, էջ 61):

մեզ... վասն գմբեթին, որում հրամայեաց շինել օրինակ վրանին իւրոյ, զի մնասցէ յիշատակ և յիշեսցին ապագայիցն»⁴:


Որեւէ այլ ազբյուրում Աբրահամ կաթողիկոսի այս տեղեկութիւնները հաստատող վկայութիւններ չեն հանդիպում: Նազիրի երկու պալատական պատմիչներ Մուհամադ-Քյազիմն ու Միրզա Մուհամադ-Մեհդի խանը, որոնք տալիս են դեպքերի մանրամասն նկարագրութիւնը, թեև խոսում են Մելիք Եգանի գլխավորութեամբ հայկական զինված ուժերի՝ մեր պատմութեան համար բախտորոշ այս ճակատամարտին մասնակցելու և հատկապէս Աշտարակի և շրջակա գյուղերի հայ զինվորութեան՝ օսմանյան զորքերի նահանջի ճամփան փակելու, թիկունքից կործանիչ հարված հասցնելու և ջախջախիչ պարտութեան մատնելու մասին⁵, սակայն Նազիրի՝ Կարս կատարած արշավանքից առաջ, կրկին Մուրադ-Յափա այցելելու և հուշարձանի շինութեան վերաբերյալ կարգադրութիւն անելու մասին ոչինչ չեն հաղորդում: Մինչդեռ Կրետացիին հաջորդ՝ 17-րդ գլխում տալիս է նաև հուշարձանի կառուցման մանրամասն նկարագրութիւնը. «Եւ ապա փութացուցար զգործաւորս ամարաթին (շինութիւն), զոր պատուիրեաց խանն շինել ի գլուխ բլրին ի տեղի վրանին իւրոյ: Եւ յանձնեաց ինձ և մէլիք Մկրտումին, զի վերակացու լիցուք, և մեր գիտութեամբն ծախքն լիցի: Եւ կամ՝ ի կողմանէ իմմէ գիտուն մարդ մի դիցեմ, զի և նա վերակացու լիցի ի վերա վարպետաց և շինուածոց: Այլ և Բ (2) մոհթէմէտ (վերակացու), զոր նօքա սարգեար անուանեն, զի գրեսցեն նօքա և զխարճն և օգնութիւն արասցեն վերակացուացն՝ կրել տալու զքարն և զկիրն ի գիւղորէից: Որ և ես իմոյ կողմանէ եդի զՂալաջճի-օղլու Ստեփանոս վարդապետն Արզրումցի, որ էր ընդ մէլիք Մկրտումին ի բլուրն այն ի վերա շինուածոցն և աշխատեցաւ անդ ի (20) աւուրն՝ մինչև ցաւարտումն նորին»⁶: Սրան հետևում է արդեն ավարտված կառույցի արտաքին նկարագրութիւնը, որն օգնում է դասավորելու հայտնաբերված բեկորները, վերականգնելու արձանագրութեան նախնական ձևը և պատկերացնելու մոտավոր ծավալը: «Եւ կատարեցաւ զշինութիւն, զի էր վրահանձն, գմբեթայարկ, և ի ներքոյ խորափիտ և ի տեղի ժողովելոյ ջուրց, զոր ի անձրև գայր ի վերնոտէ այնմ բլրին հորդեալ ճանապարհաւ ինչ և ժողովէր այնմ խորափտի սարընձաձև, յորում վերա կայր շինուածն: Եւ յորժամ լնանի աւելորդն, ելեալ ի ճանապարհէ խողովականման և հոսի զառ ի վայր ի ձորն»⁷:

Ինչպէս տեսանք, սույն նկարագրութիւնը վերաբերում է միայն կառույցի ձևին և շինարարական այն առանձնահատկութիւններին, որոնք պիտի հուշարձանն անվնաս պահեն տեղումներից և անձրևաջրերից առաջացող ավերումներից: Ասված է նաև, որ շինութեան համար քար և կիր է փոխադրվել բլրի գագաթը: Ուրեմն կառույցը քարաշէն է եղել, իսկ այն հանգամանքը, որ ոչինչ չի սոված մարմարե արձանագրութեան մասին, թույլ է տալիս ենթադրելու, որ այն արվել է ավելի ուշ, համեմայն դեպս՝ ոչ անմիջապէս շինարարութեան ընթացքում:

Գտնված 13 մեծ ու փոքր բեկորների կոտրվածքների և եզրերի համադրման շնորհիվ հնարավոր եղավ մոտավոր ճշգրտութեամբ պատկերացնել արձանագրութեան ընդհանուր տեսքը, որն, ինչպէս երևում է, կազմված է եղել տարբեր շափերի հինգ հղկված մտրմարե սալերից, որոնք հարթեցված եզրերով միացած են եղել իրար, ստեղծելով իրոք «վրանաձև գմբեթահարկ» (2,5×1,6 մ) հարթ մակերես, որի վրա գծագրվել են նախշերով երիզված 42 համաչափ վանդակներ և որոնցից յուրաքանչյուրի մեջ բարձրաքանդակ փորագրված է մասնավոր հանգով գրված շափածո արձանագրութեան մեկ երկտող (բեյթ): Չի փորագրված միայն ներքևի ձախ անկյան վերջին վանդակը: Ուստի լրիվ փո-

4 Նույն տեղում, էջ 63:
5 Մուհամադ-Քյազիմ, էջ 633: Աստարաբադի, էջ 88, հմմտ. «Հայ ժողովրդի պատմութիւն», հ. IV, Երևան, 1972, էջ 181—184:
6 Կրետացի, էջ 65—66:
7 Նույն տեղում, էջ 66:


րագրված վանդակների թիվը ընդամենը 41 է եղել: Դրանցից լրիվ անվնաս մեզ է հասել 14-ը, մասամբ թերի՝ 3-ը, 4 վանդակի միայն ձախակողմյան փոքր մասն է պահպանված (կարդացվում են երկտողերի վերջին հանգավոր բառերը), 1 վանդակի՝ աջակողմյան կեսը, իսկ երկու վանդակից՝ մեկական բառ:



Արձանագրության գտնված բեկորները:

Այսպիսով՝ արձանագրության ամբողջ տեքստից բացակայում են 17 լրիվ երկտող և 10 երկտողի՝ մեծ կամ փոքր մասը: Մեր ձեռքի տակ եղածը, փաստորեն, բնագրի կեսն է, իսկ եթե նկատի ունենանք, որ թերի երկտողերը մեծ մասամբ անհասկանալի են, ուրեմն եղածը բնագրի 40 տոկոսից ավել չէ: Արձա-

նագրության վերևի զմբեթածև մասի ձախակողմյան կամարածև բեկորի վրայի բառավերջը հուշում է, որ վերևում փորագրված է եղել **بِسْمِ اللّٰهِ الرَّحْمٰنِ الرَّحِیْمِ** (հանուն զեթառատ և ողորմած աստծու) և քանի որ զմբեթածև մասի



աջակողմյան ավելի մեծ հատվածը չի պահպանվել, ուստի բացակայում են 1, 4, 7 և 10-րդ երկատողերը, իսկ 2, 5, 8 և 11-րդ երկատողերից, ինչպես վերը նշվեց,

մնացել են միայն յուրաքանչյուր տողի վերջին հանգավոր բառերը: Եթե արձանագրության վերին գմբեթաձև հատվածից պահպանվել է միայն ձախակողմյան փոքր մասը, ապա ներքևի վրանաձև մասից՝ միայն աջակողմյան փոքր մասը և ձախակողմյանից՝ միայն երկու և կես երկտող պարունակող երկու բեկոր:

Այսպիսին է վերևի աջ անկյունից մինչև ներքևի ձախ անկյունը 41 վանդակից պահպանված լրիվ և թերի երկտողերի վերծանված թուրքերեն բնագրի թարգմանությունը: Երկտողերը համարակալված են ըստ վանդակների հերթականության, որով պարզ է դառնում, թե ո՞ր երկտողերն են բացակայում և բնագրի որ մասն է մեզ հասել:

- 2. սրբությունը,
- տերությունը:
- 3. Երբ հաջողություն շնորհեց հավերժ կենդանին,
- Այս վայրում պարտվեց օսմանյան զորքը,
- 5. անի,
- հավաքի:
- 6. Զափից ավելի հպարտ էր իրենով,
- Համարում էր իրեն անպարտելի,
- 8. իմ զորքն է,
- ինձ հավասար է,
- 9. Իմ կեռ թրի շողշողուն փայլեց,
- վախեցած շարունակ սարսափի մեջ էր:
- 11. իմ ասպատակը,
- ինձ ընդառաջող,
- 12. Իմ ահը Սպահանը սարսափեցրեց
- Հակառակորդը պարտվեց իմ առջև,
- 13. Երբ Խորասանն է մտքում նրա,
- Հոգսը պատում է Նիշաբարին:
- 14. Ազերբայջանի կողմը նվաճեցի,
- Թավրիզում էի, Երևանը գրավեցի,
- 18. Զորքը բռնեց այս սարերն ու քարերը:
- Կռիվն ընկավ այս կողմերը,
- 19. Ժամանակի տիեզերահուշակ տնօրենը,
- Ողջ Իրանի ընդհանուր հրամանատարը,
- 23. Դա աշխարհի տիրոջ հրամանն էր,
- Այդ հին հիմքերը նա նորից ամրացրեց,
- 24. Թշնամու հույսերը տակն ու վրա արեց,
- Եվ թողեց նրան ողբ ու կոծի մեջ,
- 28. Իր ճերմակ դեմքը նա հողին հպեց,
- Հիշելով ամենակարողին և ողորմածին:
- 29. Վեր կացավ ասեց զորքը հավաքվի,
- Հրամայեց որ շեփորները հնչեն
- 32. . . . իմացականության աշխարհի հրեշտակը
- ները ստույգ հրամայեց:
- 33. Արագավազ [ձի]երն են դուրս քաշել,
- արեգակն է փայլում արևելքում:
- 34. Երբ դյուցազնը հեծավ նժույգին,
- Փառաբանությունները բարձրացան երկինք,
- 36.
- Հարյուր և
- 37. Արձանագրիր այս պարտությունը, օսմանցին ջարդվեց:
- Ենիշերիբաշին դուրս եկավ հիմա:
- 38. [վեր]ցրեց
- -րորդը:
- 39. Երբ աստված նրան ձեռք մեկնեց,

- Օսմանցիներին պարտության մատնեց:
- 41 Բանակն այս դիպվածում
- Օսմանցոց սարասքյարը

Բավական անարվեստ այս շափածո ներբողյանում, որի սկզբի մասը գրված է առաջին դեմքով, խոսքը տալով Նաղիրին, պատմելու՝ սուլյն ճակատամարտին նախորդած իր վերելքն ու հաղթանակները խորասանից մինչև Ապահան ու Ագերբայջան, նկարագրված է «ողջ Իրանի հրամանատարի» ճակատամարտին նախապատրաստվելը, անձամբ ցուցաբերած քաջությունը, «աստծո օգնությամբ» ձեռք բերած հաղթանակն ու օսմանյան զորքերի ջախջախիչ պարտությունը:

Ինչպես ասվեց, արձանագրության վերջին՝ 42-րդ վանդակը դատարկ է թողնված: Նկատված է, սակայն, որ նման շափածո արձանագրությունների վերջին երկտողը հատկացվում է թվականի հիշատակմանը, որ սովորաբար տրվում էր որևէ իմաստավորված խոսքի տառերի, «արջադի» հաշվով, թվական համարժեքների գումարով: Այսպես օրինակ Նյաթում գտնվող շափածո վիճագիր արձանագրություններից մեկում հիշք. 972 (1565) թվականը արտահայտված է *أبد الحى* (հավետ կենդանի) խոսքով, իսկ մի այլ նման արձանագրության մեջ հիշք. 1006 (1597—98) թվականը՝ *قضى الدين* (կրոնի իրավարար) խոսքով⁸: Նույն ձևով են հիշված նաև Մակվի և Ղարսի բերդերի ավերման կամ նորոգման թվականները նույնանման պարսկերեն կամ թուրքերեն արձանագրություններում⁹, ինչպես նաև՝ Վանի պարսպի «Ոստանի դուռ» (Ոստան կափուսի) կոչվող դարբասի հիշք. 1177 (1763) թ. շափածո արձանագրության մեջ¹⁰:

Պետք է ենթադրել, որ Մուրադ-Յափայի արձանագրության հեղինակը դժվարացել է կազմել համապատասխան իմաստալից խոսք, որի տառերի թվական համարժեքների գումարը լինի 1148 (ճակատամարտի թվականը հիշրենթով): Դա, անշուշտ, ավելի երկար ժամանակ պահանջող դժվարին մի գործ էր, որ հետաձգվելով, այդպես էլ գլուխ չի եկել, թերևս հեղինակի մահվան կամ քաղաքական կյանքում տեղի ունեցող հեղաշրջիչ իրադարձությունների հետևանքով:

Արձանագրության կերտումը չուրովի դժվարությունների հետ էր կապվում. անհրաժեշտ էր գտնել համապատասխան շափի մարմար, որ մեծ մասամբ բերվում էր Թավրիզից: Այն պետք էր մշակել, հղկել և պատրաստել հուշարձանի ձևին համապատասխան մակերես, անհրաժեշտ էր հանձնարարել շարագրելու ներքողը և, ինչպես պարզ երևում է լուսանկարից, նախագծել համապատասխան զարդարուն վանդակներ ու դրանց մեջ փորագրել ամբողջ բնագիրը: Պարզ է, ուրեմն, որ գործին մասնակցել են մարմարը հղկող վարպետներ, ապա՝ թուրքալեզու մի ներբողագիր, գեղագիր, որը գեղեցիկ նասիաալիզ գրովթյամբ չուրաքանչուր վանդակում համաշափ գրել է մեկ երկտող և վերջապես՝ մի փորագրող վարպետ, որը բարձրաքանդակ փորագրեր և՛ զարդավանդակները, և՛ 41 երկտողը:

Հավանաբար փորագրությունը կատարվել է հայ վարպետի ձեռքով, արձանագրության ներքևի լայն լուսանցքում բարձր արվեստով փորագրված է հայերեն մեծատառ «Ա», որը, ամենայն հավանականությամբ, փորագրիչի անվան սկզբնատառը պետք է լինի: Այդ մասում փորագրությունը այնքան վար-

⁸ serif Apturrahim, Ahlat Kitabelari, Istanbul, 1932, S. 95, 96; W. Bachmen, Kirchen und Moschen in Armenien und Kurdistan, Leipzig, 1913, S. 67—69, ⁹ В. Минорский, Древности Маку, путевые заметки, Петроград, 1916, с. 12. ¹⁰ ՄՄՆՄ ԳԱ հնագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի ֆոտոարխիվ, Q-324, 31 (нег. III—1046):

պետորեն է կատարված, որ նման չէ այլ տեղերում հանդիպող պատահական այցելուների թողած ստորագրություններին ու հիշատակագրություններին: Առհասարակ արձանագրության պահպանված լուսանցքներում նման հիշատակագրություններ չկան: Պարզ երևում է, որ այն փորագրված է արձանագրության հետ միաժամանակ, համաչափ ուղղահայաց դիրքով: Քանի որ տառը աջակողմյան ստորին հատվածի ներքևի լուսանցքի սկզբնամասում է, կարելի է ասել, որ փորագրողը նպատակ է ունեցել շարունակել և լրիվ գրել իր անունը, սակայն ինչ-ինչ պատճառներով կիսատ է թողել:

Արձանագրության բեկորների հայտնաբերումը ոչ միայն հաստատում է Աբրահամ Կրետացու վկայությունները 1735 թ. Նադիրի հրամանով Մուրադ-Քափա վերանվանված բլրի գագաթին, ի նշանավորումն ձեռք բերած հաղթանակի, իր վրանի տեղում քարաշեն հուշարձանի կառուցման մասին, այլև վերջնականապես ճշգրտում է այն տարածքը, որտեղ տեղի է ունեցել ճակատամարտը:

Պարսիկ պատմաբանները ավելի հավաստի ու արժեքավոր են համարում ճակատամարտի նախապատրաստմանը, ընթացքին և հաղթական ավարտին վերաբերող Աբրահամ Կրետացու պարզ ու որոշակի նկարագրությունները, քան պալատական պատմիչներ Մուհամադ-Քյազիմի և Միրզա-Մուհամադ-Մեհդիի բազում էջեր զբաղեցնող ծանրաշունչ և ներբողագրությամբ խճողված ընդարձակ գլուխները:

«Եւ սկսաւ այնուհետև տեսանել զպատրաստութիւն իւր վասն պատերազմի,— գրում է Կրետացին,— ... և ընտրեաց իւր տեղի բանակի և վրանի զբլուր մի բարձրավանդակ, որ ի հնուց անուանեալ էր Ախի-Յէփէսի, և անդ հարեալ զվրանն, ամրացոյց զբլուրն բլրին այն, քարէ կարկառու... եւ ի շաբաթ օրն եհաս և Քօրբու-օղլին զօրօք իւրովք, և յկպարանու վերի կողմէն էջ ի ստորտան Արալի լեռան՝ յանդիման Եղուարդու, եւ ելեալ շարխաճիքն (առաջապահ զօրք) ընդդէմ միմեանց դիպան և անկեալ երկուց կողմանց սակաւ դիակունք ի բաց կացին ի միմեանց, իսկ զգիշերն ամենայն աշխատեցան պարսիկք վասն ջրոյն պակասութեանն... զի հեռի էր գետն Չանկի, իբրև ձիու արշաւանս Բ (2) յետուստ կողմանէ, և առաջի նոցա զօրքն թուրքաց»¹¹:

Երբ կանգնում ենք բլրի գագաթին, զեմքով դեպի Արալի լեռը և մտաբերում Կրետացու՝ ճակատամարտի ընթացքին և ավարտին վերաբերող տողերը, պարզ է դառնում, թե ինչպես է (իր գլխավոր ուժերը թաքցնելով բլրից մինչև Հրազդանի կիրճը ընկած տարածքում) Նադիրը խաբել Աբգուլլա փառաչին, որը, տասնապատիկ գերազանց ուժերի վրա վստահ, հրամայել է իր բանակին՝ իջնել Արալի լեռան նպաստավոր դիրքերից և Եղվարդի դաշտով հարձակում գործելով, պարտության մատնել հակառակորդին: Տեսնելով իրանական երեք փոքրաթիվ զնգերը, օսմանյան հեծելազորի բարձրաստիճան հրամանատարներից մեկը գոչել է. «Ինչ պիտի լինին պարսիկք, զի առ ոտս հեծելազորացն իմոց տամ առաթուր կոխել զնոսս»¹²:

«Իսկ ի խմբել պատերազմին,— շարունակում է Կրետացին,— որովհետև վասն սակաւութեան պարսից զօրաց պատերցան օսմանցիքն և հեռացան ի ոտորոտէ լեռան Արալի և դիմեցին ի վերա պարսից զօրացն, և սոցա խոյս տուեալ սակաւ-սակաւ հեռացուցին ի լեռնոտէ անտի և ածին մինչև Եղարդայ դաշտն: Ապա ելեալ ի ձորոց ի կողմանցն Երևանու զօրք պարսից, որպէս ասեն թուօք ԺԸԹ (18000)-աց, և թէպէտ այնքան էին և գունդ-գունդ կազմեալք, բայց հայէին ի հեռաստանէ և ոչ պատերազմէին, զի ոչ ունէին հրաման ի խանէն, այլ միայն Գ (3) գունդն հաղարական արամբ: Այն, որ կարգեաց խանն, նոքա պատերազմէին: Իսկ խանն ըստ արիական սովորութեանն իւրոյ կազմէր, յօրինէր, կարգէր, յորդորէր և զիւր հրահանելիքն յաջմէ և յաճեկէ և ի մէջտեղաց տեղաւորէր...: Եւ խմբեցան ընդ միմեանս ճակատ առ ճակատ և ընդ թՖանկսն

¹¹ Կրետացի, էջ 56—57:

¹² Կրետացի, էջ 58, հմմտ. Մուհամադ-Քյազիմ, էջ 608:

զմիմեանս յաղթահարէին հետեակք ի յերկուց կողմանցն: Յունիսի Ը (8) օրն կիրակի, սկսեալ ի երորդ ժամէ ատուրն մինչև ցհինգերորդ ժամն հրօք և հրահանելօք պատերազմեցան: Օսմանցիքն Բ (2) կամ Գ (3) թօփ միայն կարացին ձգել, իսկ պարսից կողմն՝ թուի թէ Յ (300) և այլ աւելի թօփ ձգեցին և զամպարակներն զամենայն և ձեռաց թֆանկներն՝ բազում:

Եւ հանկարծակի խանն հասաւ ի թօփխանային (արտիլերիա) օսմանցուց և տիրեաց: Եւ չորժամ տեսին և լուան զտիրելն թօփխանային, առժամայն ի փախուստ դարձան օսմանցիքն, և պարսիկքն՝ զկնի կոտորելով, կոտորելով հասուցին զմի ծալրն ի վերի կողմն Արայի լեան՝ հանդէպ Սաղմոսավանից և զվարի ծալրն զօրաց՝ ի կողմն Աշտարակու և ի միջի եղեալսն՝ դէմ ածին Քարսահ գետոյն ի դիմաց Յոհանավանից և Կարբու և Մօղնու: Որ և թուի թէ բազումք էին գահավիժեալքն ի ձորն Քարսահ գետոյն, բան թէ սրով սպանեալքն¹³:

Բոլոր սկզբնաղբյուրները միաբերան հաստատում են Կրետացու այս համոտ, սակայն ստույգ նկարագրութիւնը: Իրողութիւնն այն է, որ իրանական հրետանու կրակային հզորութիւնը, հեծելազորի շեշտակի ճակատային հարվածներն ու թուրքական հրետանու հանկարծակի գրավումը թշնամու բանակի խորքը մխրձված ջեզայիրչիների կողմից, լիովին կազմալուծել են թուրքական զորքերի մարտական կարգը, որին և հաջորդել է անկանոն ու խուճապահար նահանջը:

Ինչպես տեսանք, միօրյա այս ճակատամարտը տեղի է ունեցել Հրազդան գետից ոչ շատ հեռու գտնվող Մուրադ-թափայից մինչև Արայի լեռը ընկած տարածքում և օսմանցիների ջախջախիչ պարտութիւնով ու հրամանատար Աբդուլլա փաշայի սպանութիւնով ավարտվել է Քասախի կիրճում:

НОВОВЫЯВЛЕННАЯ ТУРЕЦКАЯ НАДПИСЬ НА ХОЛМЕ МУРАД-ТАПА

АКОП ПАПАЗЯН

Резюме

Летом 1985 г. при проведении земельных работ на вершине холма Мурад-тапа, близ села Нор Артамет Наирийского района Армянской ССР были найдены обломки мраморной плиты с турецкой надписью, составленной в стихотворной форме. Эта надпись была составлена в ознаменование победы Надир-шаха над турками 21 июля 1735 г., т. е. ровно за 250 лет до находки.

Упоминание о сооружении памятника на вершине холма в честь победы имеется в «Повествовании» Абраама Кретаца. Сопоставление сведений Абраама Кретаца с сохранившимися фрагментами надписи дает возможность восстановить общий вид памятника и определить количество строк в тексте. Текст надписи состоял из 41 довольно неуклюжего бейта панегирического содержания. Бейты составлены в форме маснави. В нашем распоряжении имеется только 14 полных и 10 неполных бейтов.

Обнаружение фрагментов надписи не только подтверждает сообщение Абраама Кретаца о сооружении памятника «в виде шатра» на вершине холма, на том месте, где находился шатер Надира, но и одновременно, окончательно устанавливает место, где происходило сражение.

¹³ Կրետացի, էջ 58—59:

Դավիթ-բեկի ՊԱՅՔԱՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ԴԵՄ ԵՎ
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՕՍՄԱՆՅԱՆ ԳԻՄԱԳՐԱԿԱՆ
ՈՒԺԵՐԻ ՀԵՏ

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Գ. ՓԱՓԱՋՅԱՆ

Դավիթ-բեկի գլխավորությամբ 1722—1728 թթ. Սյունիքում մղված ազատագրական կռիվների պատմության հիմնական սկզբնաղբյուրը վենետիկի Մխիթարյան հայրերից, սերաստացի Ղուկաս Ստեփանոսյանի գրի առած պատմությունն է, որը նախապես գիտական շրջանակներին ծանոթ էր «Ընտիր պատմութիւն Դավիթ-բեկին և պատերազմաց հայոցն Խափանու» վերնագրով, Ա. Գուլամիրյանի հրատարակությամբ¹, իսկ վերջերս Սամվել վարդապետ Արամյանի աշխատասիրությամբ լույս տեսան այդ կարևոր աղբյուրի ճշգրտված նախնական և համապատում բնագրերը՝ «Պատմութիւն Ղափանցոց» վերնագրով։ Եթե առաջին հրատարակությունը գիտական շրջանառության մեջ մտավ որպես իրեն շարժման նախաձեռնող ներկայացնող Ստեփանոս Շահումյանի, մասամբ նաև իր զինակիցներից ոմանց պատմածի հիման վրա Ղուկաս Ստեփանոսյանի կողմից շարադրված պատմություն, ապա այս նոր, լիակատար հրատարակությունը եկավ վերջնականապես հաստատելու, որ պատմությանը հիմք են հանդիսացել շարժման կարևոր մասնակիցներից՝ նույն Ստեփանոս Շահումյանի և հավասարապես նաև Տեր-Ավետիսի բանավոր նկարագրությունների Ս. Արամյանի հրատարակած Ա. բնագիրը այդ երկու անձնավորությունների պատմածի գրեթե անմիջական գրառումն է³, իսկ Բ. բնագիրը այդ զույգ գրառումների հիման վրա խմբագրված «համապատումը»՝ ամփոփված առանձին վերնագրեր կրող երեք զույգներում⁴։ Այս պարագաներում, հասկանալի է, որ նշված բնագրերում շարժման հանգամանքների և նկարագրված դեպքերի ու դեմքերի վերաբերյալ որևէ այլ աղբյուրի ամեն մի տեղեկություն կարող է ամրացնել մեր վստահությունը այս եզակի պատմական երկասիրության նկատմամբ և բարձրացնել նրա արժեքը, որպես ճշմարտապատում և հավաստի սկզբնաղբյուր։

Այս առումով ուշագրավ տեղեկություն է պարունակում Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի 1922 թ. հրատարակած, 1746 թ. մի հիշատակարանը, որտեղ, որպես Դավիթ-բեկի աներորդին հանդես եկող Ղուլանենց Փարսաղանբեկի որդի Թաղին, թվարկելով իր գերդաստանի անդամներին, եղբայրներից մեկի մասին գրում է, «Մեր միւս եղբայր Արտյմասեհն որ Վրաստան պարոնի հրամանան գնացին տեղն զօրաժողով առնելոյ, որ եղբայրս էլ զօրպ էր, որոց գլխաւորն էր Ալիխանի որդի Դաւիթ-պէկն, որ է իմ փեսայ, որք ընդ պարսից և օսմանցոց բազում պատերազմս ետուն, և ի վախճանի անկան ի մարտին»⁵։ Դավիթ-բեկին վերաբերող բանավոր գրույցներից ու վավանդություններից բա-

¹ Դավիթ բեկ. Ընտիր պատմութիւն Դավիթ բեկին և պատերազմաց հայոցն Խափանու... Վաղարշապատ, 1871:

² Դավիթ բեկ կամ «Պատմութիւն Ղափանցոց», աշխ. հ. Սամվել վրդ. Արամյան. Վենետիկ, 1978 (այսուհետև՝ Պատմութիւն Ղափանցոց):

³ Նույն տեղում, էջ 119—145:

⁴ Նույն տեղում, էջ 147—181:

⁵ Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, գիրք Ա և Բ, Վաղարշապատ, 1921—1922, էջ 136—137, հմմտ.:

ցի, սա փաստորեն առաջին գրավոր տեղեկությունն է, որ գալիս է հաստատելու շարժման սկզբնավորման և ընթացքի մասին «Պատմության» մեջ ավելի ընդարձակ շարադրվածը: Այն տարբերությամբ միայն, որ «Պատմության» հեղինակը, հիմք ունենալով շարժմանը մինչև վերջ մասնակցած Տեր-Ավետիսի վկայությունը, գրում է. «Եւ եղև ի ժամանակի յայսմիկ հիվանդանալ Դավիթ և մեռանել իսկ խաղաղութեամբ ի տան իւրում ի Հալիձոր», իսկ հիշատակարանում, ինչպես տեսանք, ասված է, որ Քաղիի եղբայր Աբուլմասեհը Դավիթ-բեկի հետ միասին մարտնչելով պարսիկներին և օսմանցիների դեմ «ի վախճանի անկան ի մարտին»:

Այս հակասությունը առիթ է տվել ուսումնասիրողներից ոմանց կասկածի տակ առնելու «Պատմության» վերոբերյալ տողերը և առաջ քաշելու այն տեսակետը, թե հավանաբար Դավիթ-բեկը սպանվել է 1726 թ., Վկայակոչելով Ն. Աղոնցին և Պ. Հարությունյանին, որոնք ելնելով մինչև Ս. Արամյանի հրատարակությունը գոյություն ունեցող այն սխալ կարծիքից, որ ամբողջ «Պատմությունը» թելադրված է Ստ. Շահումյանցի կողմից⁶, որը 1725 թ. Խոտանանի կոիվների ժամանակ գերի ընկնելուց հետո հեռացել էր ասպարեզից ու գնացել Վենետիկ, Աշ. Հովհաննիսյանը գտնում է, որ նա «անկարող էր ստույգ պատկերացում ունենալ Դավիթ-բեկի ապստամբության հետագա ընթացքի մասին»⁷: Առաջ է քաշվում նաև Կրուշինսկու վկայությունը այն մասին, որ 1726 թ. Դավիթ-բեկի զինակիցներից Մխիթար-բեկը, որին նա մեղիք Մխիթար է անվանում, իշխան է օձվել և թուրք նվաճողներին մի քանի անգամ աղետալի պարտության է մատնել: Եվ քանի որ 1726 թ. մարտի 24-ին, Ղափանի հայերի անունից Ռուսաց կայսրին հղված աղերսագիրը ստորագրված է ոչ թե Դավիթ-բեկի, այլ Մխիթար-բեկի կողմից, ապա, ինչպես Պ. Հարությունյանը, այնպես նաև Աշ. Հովհաննիսյանը գտնում են, որ «Պատմության» տվյալները Դավիթ-բեկի մահվան հանգամանքների մասին ճշգրիտ չեն և 1726 թ. հետո տեղի ունեցած իրադարձություններին նրա մասնակցությունը մտացածին է և հակասում է իրողության:

Սակայն, ինչպես արդեն ասվեց, Ս. Արամյանի՝ հրատարակությանը առնթեր կատարված ուսումնասիրությունը վերջնականապես հաստատում է, որ «Պատմության» այդ հատվածը գրված է կոիվներին մինչև վերջը մասնակցած Տեր-Ավետիսի պատմածի հիման վրա⁸: Ուստի, ավելի ստուգապատում կարող է լինել, քան ղեպերից շուրջ երկու տասնամյակ անց, հեռավոր Աստրախանում, թեկուզ և ազգակից, սակայն իրադարձություններին մոտիկից անհաղորդ, Ղուզանենց Թաղիի՝ բերնեբերան անցնելով տեղ հասած և պատահականորեն հիշատակարանում գրի առնված տեղեկությունները: Աշ. Հովհաննիսյանը գրտնում է, որ Ղուզանենց Թաղիին «չհավատալու հիմք չունենք»: Այսպես կարելի էր մտածել այն ղեպում, եթե գոյություն չունենար շարժման ամբողջ ընթացքում մարտերի անմիջական մասնակից, Դավիթ-բեկի մերձավորագույն զինակից Տեր-Ավետիսի՝ մեր կարծիքով, առավել արժանահավատ վկայությունը:

Ինչ վերաբերում է Կրուշինսկու նույնպես միջնորդաբար հաղորդած տեղեկություններին Մխիթար-բեկի օձման վերաբերյալ, ապա պետք է ասել, որ դա բոլորովին էլ հիմք չի տալիս պնդելու, թե օձումը տեղի է ունեցել անպայման Դավիթ-բեկի մահից հետո և որպես նրան փոխարինողի:

Ինչպես աղերսագրից, այնպես էլ «Պատմությունից» պարզ երևում է, որ 1726 թ. օսմանյան զորաբանակները կարողացել էին Օրդուբազի և Ազուլիսի ուղղությամբ թափանցել Ղափան և պառակտում առաջացնելով հայոց մեջ,

⁶ Պ. Հարությունյանը Ս. Շահումյանի համարում է «Դավիթ բեկի պատմության» հեղինակ. տե՛ս Ս. Լ. Арутюнян. Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века. М., 1954, с. 252, 258, 260—272 и пр.

⁷ Աշ. Հովհաննիսյան, Դավիթ բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը. — «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 1, էջ 106:

⁸ Տե՛ս Պատմության Ղափանցոց, էջ 77—85:

մուտք գործել երկրի ներքին գավառները: Ուժերի այս ջլատման պայմաններում, երբ չկար միասնական ղեկավարություն, դժվար է որոշակի խոսք ասել 1726 թ. մարտի 24 թվակիր աղբյուսագրի շարադրման հանգամանքների մասին: Մի բան պարզ է, որ, ինչպես դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, Կասպից ծովեզերքում գտնվող ուսական գործերի հրամանատարությունը իրավասու չէր ռազմական օգնություն ցույց տալու ո՛չ Ղափանում և ո՛չ էլ Ղարաբաղի սղնախներում օսմանյան գործերի դեմ մենմենակ մարտնչող հայ զինվորությունը, քանի որ 1724 թ. օսմանցիների հետ կնքված պայմանագրով համաձայնություն էր կայացել, որ Ատրպատականն ու ամբողջ Անդրկովկասը, բացի ծովափնյա շրջաններից, պետք է ռազմակալման ենթարկվեին օսմանյան զորքերի կողմից:

Առանձին հոգվածում անդրադառնալով այս ուղերձ-աղբյուսագրին, Ա. Միրզոյանը, համադրելով այն «Պատմության» տվյալների հետ և ելնելով Դավիթ-բեկի ու Մխիթարի փոխհարաբերություններում մերթնդմերթ առաջացած և հաճախ սուր բնույթ ստացած տարաձայնությունների փաստից, հավանական է գտնում, որ այդ ծանր օրերին ևս հակասություններ են եղել նրանց միջև, որպես պայմաններում Մխիթարը, սեփական նախաձեռնություններ, համախոհ մի քանի այլ յուզբաշինների ընկերակցությամբ, փորձել է կապ հաստատել ուսական բանակի հրամանատարության հետ և օգնություն ստանալ նրանցից⁹:

Ժամանակին առիթ է եղել նշելու, որ ստեղծված պայմաններում դիմադրական ուժերի կազմալուծմանը նպաստել են դասակարգային ներհակություններն ու դրսից ակնկալվող օգնության և օսմանցիների դեմ անհավասար պայքարում դաշնակիցներ որոնելու վերաբերյալ թեր և դեմ կարծիքները¹⁰: Երբ քննության ենք առնում 1726 թ. Ղափանում ստեղծված իրավիճակը, դժվար չէ նկատել, որ օրհասական այդ օրերին, սկզբից եեթ Ռուսաստանի օգնությունը ապավինած և ներկա դեպքում դիմադրությունը շարունակելու կողմնակից հայ զինվորականությունը պիտի փորձեր օգնություն ստանալ այդ կողմից, որը կգար նաև ի կատար ածելու մասնագրական բանատիրության լծից հայ ժողովրդի ազատագրության դարավոր երազանքը: Սակայն, ինչպես վերը նշվեց, 1724 թ. կնքված ուս-թուրքական պայմանագիրը բացառում էր Կասպից ծովի առափնյա շրջանները նվաճած ուսական զորքերի որևէ շարժում դեպի Անդրկովկասի ներքին նահանգները:

Այս պարագաներում, ինչ խոսք, կարող էին և տարաձայնություններ առաջանալ շարժման ղեկավարների միջև: Առավել իրատես անձինք, ինչպիսին էր պետական ու զինվորական գործունեության անցյալ ունեցող Դավիթ-բեկը, հստակորեն վերլուծելով քաղաքական իրադրությունը, չէին կարող հույսեր կասկած չափորինակ օգնության հետ: Իսկ լավատեսորեն տրամադրվածները, առանց հաշվի առնելու վերոհիշյալ անբարենպաստ քաղաքական զարգացումները, ավանդական մղումներով կարող էին պնդել՝ մեկ անգամ ևս նման մի աղերսագրով դիմելու հզոր Ռուսաց տերությունը, որպես քրիստոնյաների ազատարարի, խնդրելով «վասն Քրիստոսի սէրն» օգնության հասնել զոյամարտի ելած հայությունը¹¹:

Երբ ելնում ենք այն իրողությունից, որ քննարկվող պատմական ժամանակահատվածում ազատագրական պայքարի դրոշ պարզած լեռնաշխարհի հայության զլխավոր թշնամին իրանական բռնակալական լծի տակ տառապած Անդրկովկասի ժողովուրդներին հրի և սրի ուժով իրեն ենթարկելու և ստրկացնելու նպատակով արշավանքի ելած օսմանյան զորքերն էին, ինքնին պարզ է

⁹ Ա. Միրզոյան. Մխիթար-բեկի կողմից ուսական կառավարության ուղղված ուղերձի հարցի շուրջը.— ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 8, էջ 90—94:

¹⁰ Հայ ժողովրդի պատմություն. հ. IV, Երևան, 1972, էջ 171:

¹¹ П. Арутюнян. Послание Мхитар-бека русскому правительству — ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 3, էջ 98—99:

դառնում, որ դրանց դեմ մղվող հերոսական պայքարով հայ զինվորությունը ակամա հանդես էր գալիս որպես օսմանցիների դեմ մարտնչող իրանական զինված ուժերի դաշնակից: Իսկ այդ ուժերին Իրանի արևմտյան շրջաններում և հատկապես Ատրպատականում գլխավորում էր Սեֆեհիների գահի օրինական ժառանգորդ շահ Թահմասպ II-ը:

Պատմողական սկզբնաղբյուրների տվյալներն ու դիվանական նյութերը հաստատում են, որ 1722 թ. իրեն շահ հայտարարած Թահմասպ II-ը, 1723 թ. գտնվում էր Ատրպատականում, որտեղ նա փորձում էր միավորել զզբաշեներին հավատարիմ բեկլարբեկիների, խաների ու ռազմիկ ցեղախմբերի ամիրների զինված ուժերը՝ Մյունչայց և Արցախի հայության ապստամբությունը ճնշելու և օսմանցիների ներխուժմանը դիմագրավելու համար:

Նադիր շահի պալատական պատմիչ Մուհամադ-Քադիմը, պատմելով աֆղանների կողմից Սպահանի գրավումից և Սեֆյան վերջին շահ Սուլթան-Հուսեյնի գահազրկումից հետո նրա ավագ որդու Թահմասպի, վտարանդիության մեջ իրեն շահ հռչակելու մասին, հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև երկրում ծայր առած անիշխանության և ծայրամասերում, այդ թվում հատկապես Հայաստանում սկսված և արագորեն ծավալվող ապստամբությունների դեմ Թահմասպի վարչաքաղաքական ու ռազմական գործունեության վերաբերյալ: Նա գրում է, որ գահակալությունից անմիջապես հետո շահին են ներկայացրել Գանձակի և Ղարաբաղի կողմերից եկած պատգամավորներ, որոնք տազնայով պատմել են հայերի ապստամբության մասին, ավելացնելով, որ այն ծավալվելով սպառնագին բնույթ է ստացել և եթե շտապ միջոցներ ձեռք չառնեն, շուտով Գանձակի և Երևանի բերդերը ևս նրանց ձեռքը կանցնեն¹²:

Նոր միայն Բարձրագույն դիվանի վեքիլ նշանակված Մուրթուզա-կուլի խանը կարգադրում է ամիր Ռուստամ Կարակոչունլուին, քսան հազարանոց բանակով գնալ ճնշելու հայերի ապստամբությունը: Միաժամանակ հրահանգ է ուղարկվում Մարաղայի, Ուրմիայի, Խոյի, Սալմաստի, Դումբուլիի, Բարգուշատի և այլ շրջանների խաներին ու ամիրներին, որ անմիջապես իրենց զորքերով գան և հիջր. 1135 (1723) թ. լինեն Թավրիզում: Մինչ նրանք կներկայանային, պալատականներից Մուհամադ-Ալի խանի սաղաթնքով, շահը հրամայում է գլխատել Մուրթուզա-կուլի խանին, որը և պատճառ է դառնում խաների պառակտման և զորքերի դասալքման¹³:

Շահ Թահմասպ II-ի նույն թվականների հրովարտակները՝ ուղղված Արգաբիլի Մուրթուզա-կուլի բեկ Սաֆավիին, նույնպես վերաբերում են այդ կողմերի, ինչպես նաև Կըզըլ-աղաջի, Ույրուդի, Քասգարի, Աստարայի, Լենքորանի և այլ վայրերի բոլոր զինված ուժերի (չերիք և իլչարի) շտապ զորահավաքին և արքունի զորակայանը ներկայանալուն¹⁴:

Այս տեսակետից ուշագրավ է հատկապես շահ Թահմասպ II-ի հիջր. 1136 թ. գիհաջա մասին (1724 թ. օգ. 21-սեպ. 19) Բարգուշատի Ֆաթհ-Ալի սուլթանի դիմումի հիման վրա հրապարակված հրովարտակը¹⁵, որը կարևոր տեղեկություններ պարունակելով Դավիթ-բեկի գլխավոր հակառակորդի վերաբերյալ, գալիս է նաև հավաստելու «Պատմության» մեջ նկարագրված դեպքերի ճշգրտությունը: Այս հրովարտակը ցարդ անծանոթ է եղել գիտական

¹² ۹۹ جلد اول، ص ۹۹، مسکو، ۱۹۶۱، عالم آرای نادری، محمد کاظم، نامه عالم آرای نادری، مسکو، ۱۹۶۱، جلد اول، ص ۹۹ (այսուհետև՝ Մուհամադ-Քադիմ):

¹³ Մուհամադ-Քադիմ, հ. I, էջ 100—101:

¹⁴ Bert Fragner, Ardabil zwischen Sultan und Schah. Zehn Urkunden Schah Tahmasps./Turcica, Revue d' études turques, t. VI, 1975, Paris—Strassburg, doc. 1, 2 3, 4.

¹⁵ ՎՍՄՀ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆոնդ 1452, վավ. 116. Հրովարտակը հրապարակման իրավունքով մեզ է տրամադրել իրանագետ Մ. Ա. Տողոան, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

շրջանակներին, ուստի ստորև մեջ ենք բերում դրա հայերեն թարգմանությունը ամբողջությամբ և վավերագրի նմանահանությունն ու պարսկերեն բնագիրը:

«Աշխարհը հայտատկեցնող սույն հրամանագիրը հրապարակվեց այն մասին, որ Բարգուշատի և Ղափանի հափիմ, էմիրության և իշխանության ապաստան և տնօրեն, հաղթական բանակի շարխչիրաշի¹⁶ Ֆաթհ-Ալի սուլթանը արժայական բարեխնամությամբ փառավորվելով թող իմանա, որ իր գեկուցագրի մասին, որ նա ներկայացրել էր բարձրաստիճան սարդար, Ազերբայջանի բեկլարբեկին այլ խնդիրների շարքին, խնդրելով նաև իրեն էլայեթության տիտղոս շնորհել և խալաջ Ամիր-անբարիի համայնից և Բարգուշատի հայերից զանձվող հարկերն (մութավաջեհաթ) ու Ղափանաթում գտնվող Զանգիան, Դարբալա, Փիրի-ղարբազ և Մուխթարի կոշվող գյուղերը, ինչպես նաև խալխսեներ, եկամուտների պակասորդի դիմաց, տրվեն իրեն,—բարձրաստիճան բեկլարբեկի կողմից, բարձրագույն սեմում գեկուցվեց:

Նորեն էմիրության և իշխանության ապավենի նկատմամբ եղած արժայական անսպառ զթուրյամբ, վերահիշյալ խալաջներից (ցեղեր) և հայերից զանձվող հարկերը (մութավաջեհաթ) և հիշյալ շուրս գյուղերը, եկամուտների պակասը լրացնելու համար շնորհեցինք նրան: Ինչպես նաև խալխսե վայրերը, որոնք նախապես տրված էին բյուրաքի (արժունի արհեստանոցներ) բարձրաստիճան նազիրին, նրան հանձնեցինք որպեսզի հիշյալ խալխսե վայրերի հարկերը (վջուհաթ) գանձելով ուղարկի պետական գանձարան: Ուրից հետո նա պետք է իր մոտ հավաքի այդ կողմերի բոլոր զինված ուժերն ու կովի էլած ամբոխը (իլշարի) և անմիջապես գնա Օրդուբադ գյուղաֆաղաքը և Նախչևանի ու Մաբանդի բարձրաստիճանի հափիմների հետ միասին, որոնց նույնպես կարգադրված է գալ նշված գյուղաֆաղաքը, գան Զուխուր-Մա'դի բարձրաստիճան բեկլարբեկի Մանսուր-խանի մոտ և վերջինիս հետ խորհրդակցելով, միացյալ ուժերով հայերին, նաև ազ օսմանցիներին և ֆրդերին վանեն ու ոչնչացնեն և հիշյալ գյուղաֆաղաքը նրանց ձեռքից ետ վերցնեն:

Անհրաժեշտ է նաև, որ նա հավաքի, սիրաշահի և հուսադրի Զիվանշիր և Քարիլու ցեղերին և սրտապնդելով, անհրաժեշտ հոգատարություն դրսևորի նրանց նկատմամբ, և թող իրեն այս պարտականություններից ազատ չհամարի: Քանզի մեր արժայական մեծությունը հայերի և մյուս հակառակորդների սաստումը նրանից է պահանջում, և թող իմանա, որ հայերին սաստելու գործում նրան ազատություն է տրված. իրերի լավ կամ վատ ընթացքի համար մենք նրան ենք պատասխանատու նաևաչում: Անհրաժեշտ է, որպեսզի բոլորը միատեղ, նվիրյալ ծառայություն մատուցեն և այս գործում չքերանան:

Թող ձեռք էմիրության և իշխանության ապավենը բոլոր հարցերում իր ծառայություններն ու նվիրվածությունը դրսևորի, որպեսզի, ասածով, նրան խանության և էլայեթության տիտղոսներ շնորհենք և այլ պարգևներով ու բարձրացումներով փառավորենք, և թող արժայական հոգատարությամբ մխիթարված լինի:

Գրվեց 1136 թ. սրբազան զինաջա ամսին (1724 թ. օգ. 21-սեպ. 19)»:

Հրովարտակի վերի մասում շահ Քաճմասպի հիշքը, 1135 թ. կնիքն է, ինչ որ հաստատում է վավերագրի բնագիր լինելը: Իսկ թե ինչ ճանապարհով անձամբ Ֆաթհ-Ալի սուլթանին հղված հրովարտակի բնագիրը ի վերջո հասել է Քիֆլիս և հանգրվանել պետական արխիվում, այդ մասին մեզ հայտնի է: Թեև հարցն ինքնին հետաքրքիր է և կարոտ առանձին ուսումնասիրության: Թերևս այն կարող են պարզել միայն վրաստանի արխիվային ֆոնդերի պատմությամբ զբաղվող մասնագետները:

Պետք է ենթադրել, սակայն, որ Ֆաթհ-Ալի սուլթանի մոտ գտնվող այս կարևոր փաստաթուղթը, որն է ձևով նրա հակառակորդների ձեռքն անցնելուց

16 Առաջագահ զորագնդի հրամանատար:

(مهر شاه طهماسب ثانی ۱۱۳۶ هـ)

حکم جهانمطالع شد آنکه امارت و حکومت پناه نظاماً الاماره و
الحکومه فتحعلی سلطان چرخچی باشی سپاه نصرت پناه و حاکم برگشاط
و قیان بشفقت شاهانه سرافراز گشته بدانند که شرحی که در باره
استدعای لقب ایالت جهة خود و مقرر شدن متوجهات خلج امیر عنبری
و ارامنه برگشاط و چهار قریه مذکوره ذیل قیان
قریه زنگین، قریه داربالا، قریه پیبری داریاز، قریه مختلری
در عوض کسر مداخل در وجه او و داده شدن خالصجات نیز بان امارت
پناه و سایر مراتب بعالیجاه سردار و بیگلربیگی آذربایجان نوشته
بود عالیجاه مشارالیه حقیقت انرا معروض شده والا داشته بود و
بنابر وفور مراحم خدیوانه در باره آن امارت و حکومت پناه متوجهات
اخلاج و ارامنه مذکور و چهار محل مذکور را که استدعا نموده بود
در عوض کسر مداخل بان امارت پناه مرحمت و محال خالصه را که بضبط
عالیجاه ناظر بیوتات سرکار خاصه شریفه مقرر بود بضبط او مقرر
فرمودیم که وجوهات محال خالصه مزبوره را ضبط و انفاذ خزانه عامره
و چریک ایلجاری محال مذکور را نزد خود جمع نموده و بزودی زود
بقصبه اردوباد امده باتفاق عالیجاه حاکم نخجوان و و حاکم مرند که
مقرر فرموده ایم که ایشان نیز بقصبه مزبوره نزد عالیجاه منصور
خان بیگلربیگی چخور سعد آیند بصلاح و اتفاق عالیجاه منصور خان
مشارالیه بدفع و رفع ارامنه و مخاصمین رومی و اکراد و امترداد
قصبه مزبوره از تصرف ایشان پردازد و ایالات جوانشیر و کبیرلو را
نیز مستمال و امیدوار و نزد خود جمع نموده آنچه لازمه جانفشانی
و اهتمام است در هر باب بعمل آورد و خود را معاف نداند که نواب
هملیون ما تنبیه و دفع ارامنه و مخالفین دیگر را از او میخواستیم
و او را در باب تنبیه ارامنه مرخص فرموده ایم و نیک و بد را از او
می بینیم می باید همگی باتفاق یکدیگر آنچه لازمه جانفشانی است
بتقدیم رسانند و کوتاهی نورزند و آن امارت و حکومت پناه حسن
خدمت و جانفشانی خود را در هر باب بمنصه ظهور رسانند که انشاءالله
اورا بلقب خانی و ایالت و سایر نوازشات و ترقیات سرافراز می
فرماییم و بتوجهات پادشاهانه مستمال باشد.

تحریراً فی شهر ذیحجه الحرام سنه ۱۱۳۶.

հետո միայն կարող էր հայտնվել վրաստանում: Իսկ դա կարող էր տեղի ունենալ նաև 1724—1725 թթ. Դավիթ-բեկի հետ ունեցած այն ընդհարումների ժամանակ, որոնց ընթացքում եղան դեպքեր, երբ սուլթանը, ջախջախիչ պարտություն կրելով, հազիվ կարողացավ ամեն ինչ թողած ճողոպրել: Անհավանական չէ նաև, որ հրովարտակը տանողները ճամփին գերված լինեն Դավիթ-բեկի մարդկանց կողմից, որոնք վերցնելով նրանցից հրովարտակը, ուղարկած լինեն Վախթանգին ի գիտություն:

Այս բոլորն անշուշտ սոսկ ենթադրություններ են, քանի որ մինչև սույն հրովարտակի հայտնաբերումը, Ֆաթհ-Ալի սուլթանի մասին մեր տեղեկությունները հիմնականում սահմանափակվում էին «Պատմություն» և «Սալի Հասան-Ջալալյանի օվյալներով, որոնց հիման վրա Ս. Արամյանը իր ուսումնասիրության մեջ խոսելով 1722 թ. լեզգիների արշավանքի մասին գրում է. «Պարսիկ Չարխաչի խանը, գլուխ անցած մեծ բանակի մը՝ լեզգիներու դեմ կելլեր. բանակ դնելով Պարկուշատ գավառի մեջն անցնող Արաքս գետի եզերքը»¹⁷: Պարզ է, որ խոսքը շարխաչի բաշի Ֆաթհ-Ալի սուլթանի մասին է, որը, ինչպես նույն տեղում կարդում ենք, խուսափում է լեզգիների հետ ընդհարվելուց և հեռանում¹⁸: Հրովարտակում նրան տրված «չարխաչիբաշի» տիտղոսը կասկած չի թողնում, որ լեզգիների դեմ ելնողն ու ապա փախչողը նույն ինքն է՝ «Պատմություն» մեջ բազմիցս հիշվող Բարգուշատի Ֆաթհ-Ալի սուլթանն է եղել:

Մեջ բերված հրովարտակի բովանդակությունից պարզ երևում է, որ նախապես արդեն շարխաչիբաշու գինվորական պաշտոն զբաղեցնող Ֆաթհ-Ալի սուլթանը որոշակի հանձնարարություն է ստացած եղել՝ իր հրամանատարության տակ եղած զորքերին միացնելով նաև տեղի մահմեդականներից հավաքագրված աշխարհազորականների շոկատներն (իլջարի) ու Ջիվանշիր և Քաբիրլու ցեղերի զինված ուժերը, հարձակման անցնել ճնշելու Ղափանի հայոց ապստամբությունը: Շեշտված է հատկապես, որ «հայերի և մյուս հակառակորդների սաստումը նրանից է պահանջվում» և որ «հայերին սաստելու գործում նրան ազատություն է տրված»:

«Պատմությունից» մեզ արդեն հայտնի է, թե ինչ ընթացք ունեցան կողմերի միջև բորբոքված արյունահեղ կռիվները: Բացի խոտանանի կռիվից և հատկապես Բարգուշատում տեղի ունեցած մեկ ընդհարումից, որտեղ մեկիք Ֆրանգուլի դավաճանությունը հետևանքով Թորոս իշխանի հրամանատարությամբ կռվող հայոց զորքերը ծուղակի մեջ ընկնելով պարտություն կրեցին, մնացյալ բոլոր ընդհարումներում վերջնական հաղթանակը միշտ էլ հայոց կողմն է եղել:

Սակայն, եթե 1724 թ., ինչպես այդ երևում է նաև հրովարտակի բովանդակությունից, շահը հրահանգում էր միավորել ուժերը ոչնչացնելու «հայերին, անարգ օսմանցիներին ու քրդերին», ապա երկու տարի անց արդեն, երբ օսմանյան ռազմակալման հետևանքով կռվող կողմերի հարաբերություններում լուրջ տեղաշարժեր էին կատարվել, նա կարգադրում էր իր հավատարիմ խաներին՝ օգնության հասնել Դավիթ-բեկին, որը միայնակ կռիվ էր մղում Բեքիր և Արաբ-Ալի փաշաների, նրանց միացած նույն Ֆաթհ-Ալի սուլթանի և օսմանցիներին հնազանդություն հայտնած այլ ուժերի դեմ:

Վ. Ոսկանյանն ու Վ. Դիլոյանը, XVIII դարի 20-ական թթ. Անդրկովկասում Ռուսաստանի քաղաքականությունը վերաբերող այլ արժեքավոր վավերագրերի շարքին, 1964 թ. հրատարակեցին նաև Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում պահվող շահ Ռահմասպ II-ի հիշք. 1139 թ. ջումադի I ամսին (1727 թ. հունվար) տրված մի հրովարտակի ռուսերեն թարգմանությունը, որով շահը կարգադրում է Մուհամադ-Ռիզա խան Արդալլուին շտապ օգնության հասնել Դավիթ-բեկին, որ «իրազրության փոփոխությունների հե-

¹⁷ Պատմություն Ղափանցոց. Առաջարան, էջ 29, Հմմտ. Ն ս ա յ ի Հ ա ս ա ն-Ջ ա լ ա լ յ ա ն. Պատմություն Աղուանից. Շուշի, 1839, էջ 44:

¹⁸ նույն տեղում:

տեանքով ծանր կացութեան մեջ է ընկել»¹⁹։ Մուհամադ-Ռիզա խանը, որ զորչիբաշիի զինվորական աստիճան ուներ, Գիլանի բեկլարբեկին էր և ուսուցական զորքերի կողմից Գիլանի գրավումից հետո շահ Քահանասպի կողմից նշանակվել էր զինված ուժերի ընդհանուր հրամանատար (սիփահասալար)²⁰։

Ցավոք, ձեռքի տակ շունենք այս հրովարտակի պարսկերեն բնագիրը, որով թերևս հնարավոր կլիներ պարզել հրապարակմանը նախորդող իրադարձություններին և քաղաքական նախադրյալներին վերաբերող որոշ մանրամասնություններ։ Այս պարագաներում առավել հավանական է թվում, որ 1726 թ. մարտի 24-ին Մխիթար-բեկի և մի քանի զինակից յուզբաշիների ստորագրությամբ ուսաց արքունիք հղված աղերսագիր-ուղերձից հուսալի պատասխան չստանալով, փորձ է արվել օգնություն ստանալ այդ ժամանակ Անդրկովկաս և Ատրպատական ներխուժած օսմանյան զորքերի դեմ իրանական զինված ուժերի դիմադրությունը գլխավորող շահ Քահանասպից, որին և շահն արձագանքել է զխավոր հրամանատար, սիփահասալար Մուհամադ-Ռիզա խանին ուղղված սուլն հրովարտակով։

Վերը շարադրվածները գալիս են հաստատելու, որ ուսաց արքունիքին հղված դիմումի Մխիթար-բեկի կողմից ստորագրված ինքնը չի կարող դիտվել ո՛չ որպես Դավիթ-բեկի բացակայության և ո՛չ էլ նրա և Մխիթար-բեկի միջև եղած տարածանությունների առկայության մասին վկայող փաստ։ Միանգամայն հավանական է, որ հաշվի առնելով ստեղծված առանձնահատուկ իրավիճակից թեև զորվող որոշակի նկատառումներ, նպատակահարմար է համարվել, որ խնդրո առարկա աղերսագիրն ուղարկվի շարժման ճանաչված ղեկավարներից մեկի՝ Մխիթար-բեկի ստորագրությամբ, և ավելի քան ութ ամիս սպասելուց և դրական պատասխան չստանալուց հետո միայն, հավանաբար, շեշտելով ընդհանուր թշնամու դեմ մղվող կռիվներում ուժերը միավորելու և դաշնակցություն անհրաժեշտությունը, Դավիթ-բեկը դիմել է շահին, հուսալով որոշ օգնություն ստանալ նրանից։ Իսկ շահը չէր կարող հաշվի չառնել, որ այն ժամանակ, երբ օսմանյան զորքերը թափանցել էին Նախջևան ու Ղափան և դիվանագիտությամբ կամ զենքի ուժով իրենց ենթարկել տեղի խաներից շատերին, նրանց դեմ անզիջում կռվի ելածները հիմնականում Դավիթ-բեկի զխավորությամբ մարտնչող հայկական զորախմբերն էին։

Սակայն, ինչպես գիտենք, այս հույսերն էլ, չնայած շահի կողմից սիփահասալարին տրված հրահանգի, ի դերե ելան։ 1727 թ. գարնանը Հալիձորի տակ մղված վճռական ճակատամարտում, Դավիթ-բեկն իր հավատարիմ զինակիցները՝ Մխիթար-բեկի և Տեր-Ավետիսի հետ հայ մարտիկների փորթաթիվ ուժերով կարողացավ ետ մղել թուրքական զորաբանակների և նրանց հետ դաշնակցած Ցաթ-Ալի սուլթանի, Ղարաղազի խանի, Ղարաշուղուների և նրանց միացած տեղական ֆեոդալների բազմահազար զորքերի դրոհները և ապա հարձակման անցնելով՝ ջախջախիչ պարտության մատնել նրանց։ Կրնկակոխ հետապնդելով սարսափահար փախչող թշնամուն, որը կռվի դաշտում թողել էր մի քանի հազար սպանված, մարտական դրոշներ, ռազմամթերք ու հանդերձանք, հայ մարտիկների արագ բազմապատկվող ուժերը մեծ արագությամբ կարողացան Ղափանի երկիրը մաքրել օսմանյան զորքերից և առաջնալ դեպի Գողթն։

Այս հաղթանակից հետո էլ Նախջևանն ու Գողթնը նվաճած օսմանյան զորաբանակների դեմ կռիվը շարունակելու համար Դավիթ-բեկը կրկին փորձում էր մարտի մեջ ներգրավել նաև Արաքսի մյուս ափում առկա իրանական ընդդիմադիր ուժերը. «Արդ իբրև ետես Դաւիթ թէ Աստուած օգնական է իւր,— կարդում ենք «Պատմության» առաջին օրինակի Տեր-Ավետիսի պատմած երկ-

19 Վ. Կ. Ոսկանյան, Վ. Ա. Գիլոյան. Ռուսաստանի քաղաքականությունը Անդրկովկասում XVIII դարի 20-ական թթ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 267։

20 Մուհամադ-Քադիմ. հ. I, էջ 355։

որոգ մասում, — խնդրէր այնուհետեւ տալ պատերազմ ընդ օսմանցոց, և առաքեաց առ խանն Տուզալի՝ Քեզում, զՄխիթար հազարապետն և զտէր Աւետիսն՝ վաթսուն և վեց արամբ, և ասէ. «Եկ միաբանեալ տացուք պատերազմ ընդ օսմանցոց»: Եւ եկեալ գտին զխանն ի շէնն Քուրդաշեան, և պատմեցին նմա զբանն, բայց նա երկեաւ առնել զայն: Իսկ եղբայր նորա, խանն լե Քազում ջանայր հաւանեցուցանել: Եւ մինչդեռ ընդ այս վիճէին, զօրքն օսմանցոց եկեալ լցին զղաշտն Կեշեան»²¹:

Տեր-Ավետիսի պատմածը վերաշարադրելիս հայր Ղուկաս Ստեփանոսյանը որոշ շեղումներ ու աղավաղումներ է թույլ տվել, տեղանունը դարձրել է անձնանուն, մեկի անունը վերագրել է մյուսին, աղճատել է տեղանուններ, շփոթել բնակավայրերի տեղադրությունը և այլն: Անկասկած, որոշ աղավաղումներ հետևանք են այն բանի, որ պատմողն ու գրի առնողը իրարից խիստ տարբեր Սեբաստիայի և Ղարաբաղի բարբառների ներկայացուցիչներ էին: Սրանով հանդերձ, ձեռքի տակ եղած հայ և պարսկալեզու աղբյուրները հնարավորություն են տալիս վերացնելու աղավաղումներն ու ճշտելու բնագիրը:

Այսպես, մեջ բերված հատվածից պարզ երևում է, որ դաշնակցության առաջարկով Դավիթ-բեկը դիմել է Արաքսից հարավ, Դուզալի շրջանին տիրող Քյազում-խան Կարաղաղլուին²²: Պատվիրակներ Մխիթար-բեկն ու Տեր-Ավետիսը, 66 զինվորների ուղեկցությամբ, խանին հանդիպել են նույն շրջանում գտնվող Քյուրդաշտ գյուղում և հայտնել Դավիթ-բեկի պատգամը, որին խանը չի համաձայնվել, իսկ նրա եղբայրը աշխատել է համոզել Քյազում-խանին ընդունել այդ առաջարկը: Այնինչ, լավ չհասկանալով իր առաջին գրառման ժամանակ շարադրվածը, Ղ. Ստեփանոսյանը «Դուզալի խանը» ընկալել է որպես անձնանուն (Դուզ-Ալի) և ճիշտ չընկալելով կիսաբարբառային ձևով արտահայտված «և եղբայր նորա խանն լե Քազում ջանայր հաւանեցուցանել» խոսքը, համապատասխան բնագրում խանի եղբորը անվանում է «Լեքազի»²³: Մինչդեռ, պարզապես Ղարաբաղի բարբառում տարբեր իմաստներ արտահայտող «լե» կամ «լա» մակբայը այս դեպքում շեշտում է, որ խան ասելով ի նկատի ունի Քյազումին:

Եթե փորձենք անձնանուններն ու տեղանունները ճշտելով, արդի հայերենով շարադրել այս հատվածը, կստացվի այսպես.

«Արդ, երբ Դավիթը տեսավ, որ աստված օգնական է իրեն, այնուհետև ցանկացավ օսմանցոց դեմ պատերազմել, և Մխիթար հազարապետին ու տեր Ավետիսին 66 մարդով ուղարկեց Դուզալի խան Քազումի մոտ, որպեսզի ասեն նրան՝ «Երբ միաբանված պատերազմ մղենք օսմանցիների դեմ»: Նրանք խանին գտան Քյուրդաշտ գյուղում և ասացին իրենց խոսքը, սակայն նա վախեցավ այդ անել, իսկ նրա եղբայրը աշխատում էր համոզել Քազում-խանին: Եվ մինչդեռ նրանք վիճում էին այս հարցի շուրջ, օսմանյան զորքը եկավ լցվեց Կարճևանի դաշտը»:

Ըստ Տեր-Ավետիսի նախնական պատումի, միայն այն ժամանակ, երբ Մխիթար-բեկի հետ, իրենց 66 զինվորներով վերադառնում են Քյուրդաշտից և փախստական մեղրեցիներին հուսադրելով պատրաստվում են գիշերային հարձակումով դուրս քշել Մեղրի մոտած օսմանցիներին, Քյազում-խանը հիսուն զինվորից բաղկացած մի ջոկատ է ուղարկում, որոնց Մխիթարը թողնում է Մեղրի վերևի դարանում, հանձնարարելով առավոտյան մտնել քաղաք և մասնակցել ձեռնարկվելիք հարձակմանը: Սակայն նրանք ուշանում են, և երբ օսմանցիք, զգալով սպառնացող վտանգը փորձում են հեռանալ քաղաքից, հայերը հարձակվելով փախուստի են մատնում նրանց և սպանում հարկահանին և ապա խանի դարանամուտ զինվորների մասնակցությամբ հետապնդում են փախչող-

²¹ Պատմութիւն Ղափանցոց, էջ 137—138:

²² Մ ու հ ա մ ա գ Քազիմ. հ. I, էջ 613:

²³ Պատմութիւն Ղափանցոց, էջ 171: Առհասարակ «Դուզ-Ալի» և «Լեքազի» մահմեդական անձնանուններ գոյություն չունեն:

ներին: Տեսնելով, որ սպասվող օժանդակ հայկական ուժերը ուշանում են, Մխիթարը առաջարկում է խանին միացյալ ուժերով գնալ և փակել դեպի Օրդուբադ տանող Ուզունբանդի կիրճը: Սակայն այստեղ խանը լքում է Մխիթարին ու հեռանում, շքանկանալով մասնակցել հետագա գործողություններին: Հայ զինվորները միայնակ կտրում են կիրճը, օսմանցիք հարկադրված փորձում են անցնել Արաքսի մյուս ափը, որի ընթացքում շատերը խեղդամահ են լինում, իսկ մնացյալները մահ են գտնում հայ զինվորների ձեռքով²⁴:

Ուշագրավ են Տեր-Ավետիսի տեղեկությունները Մեղրիում օսմանցիների տված գոհերի, նրանցից ձեռք բերված հարուստ ավարի և հատկապես հարկահանի (ղեֆթեղար) բեռների մեջ հայտնաբերված ու ոչնչացված 32000 հարկային թղթերի մասին: Այլ առիթով նշել ենք, որ Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի արևելյան բաժնի արխիվում, Նախչևանի, Օրդուբադի, Ագուլիսի փաստաթղթերի կողքին բացակայում են Մեղրիին վերաբերող փաստաթղթերը, որը գալիս է հաստատելու Տեր-Ավետիսի պատմածների ճշմարտացիությունը²⁵, Սպանված հարկահանի բեռներում եղած 32000 հարկաթղթերը հայերից դանձվող շիզյայի թերթիկներն են (էվրագ-ի շիզյա), որ նախապես գրվում և բաժանվում էին շափահաս հայ տղամարդկանց և ապա ըստ կարողության՝ ստորին, միջին և վերին շափերով, տարվա ընթացքում դանձվում էր հատուկ պաշտոնյաների՝ շիզյադարանների միջոցով: Դա նշանակում է, որ հարկային պաշտոնյաների նախնական հաշվումներով, այդ շրջանում գրված թերթիկների քանակությունը շափահաս հայ տղամարդիկ կային:

Այս դեպքերին հաջորդում են օսմանյան զորքերի և հրամանատար փաշայի ջախջախումը Բեխ գյուղում, Բարգուշատից շարժվող զորքերի ոչնչացումը Օբյուզյարաթ լեռան մոտ և այլ օսմանյան ուժերի պարտությունը Մանլե գյուղի ուղղությամբ, որից հետո ամբողջ Ղափանի տարածքը մաքրվեց օսմանցիներից:

Նկարագրելով այս բոլորը, Տեր-Ավետիսը այնուհետև պատմում է Դավիթ-բեկի կողմից՝ սպանված օսմանցիների գլուխները շահ Քահմասպին ուղարկելու և Քահմասպից դրվատական խոսք և արտոնությունների շնորհման վերաբերյալ հրահանգներ պարունակող հրովարտակ ստանալու մասին:

«Արդ իբրև ետես Դաւիթ պէկն,—կարդում ենք Տեր-Ավետիսի թելադրած հատվածում,—յամենայն ուրեք զթշնամիսն իւր առաջի իւր վանեալս, առաքեաց շահ Քահմասպին երկուս բեռինս գլխովք սպանեցելոց: Իսկ նա ևս առաքեաց սմա մի նժոյգ ձի, մի խաշալամ և իւրաքանչիւր զօրաստացն մի մի վերարկու, և զիշխանութիւն հատանելոյ զդրամ: Գրեաց նաև զհրովարտակ և ասէ. Որքան խանք գոն ի կողմանսդ յայդոսիկ՝ գլխաւորն լիցի Դաւիթ պէկն, և գնացեալ ի բաց հանցէլ զօսմանցին յերկրէն իւրմէ»²⁶:

Սույն հատվածը համապատում բնագրում վերաշարագրելիս Ղ. Ստեփանոսյանը կրկնապատկել է ուղարկված գլուխների քանակը՝ դարձնելով չորս բեռ և ապա ավելացրել, որ ի տես այդ «ավարի», շահը «ուրախ լինէր յոյժ ի վերայ քաջութեանցն Դաւթի և զօրավարաց նորա, զընծայս պարգևէր, հրովարտակս գրէր առ նա՝ ըստ բանիցս ըստ այսոցիկ»²⁷: Այնուհետև փորձ է արված Տեր-Ավետիսի բանավոր նկարագրության հիման վրա տալ հրովարտակի շարագրանքը, որն, ի դեպ, իր ձևով և ոճով բավական նման է այդ շրջանից մեզ հասած նմանատիպ հրովարտակներին:

«Շահ Քամասզ արքայ Պարսից՝ առ քաջդ Դաւիթ պէկ, և առ քաջ զօրավարսդ Հայոց՝ որք ընդ քեզ են, ողջոյն:

24 Պատմութիւն Ղափանցոց, էջ 138:

25 Հ. Դ. Փ ա փ ա զ յ ա ն. Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 3, էջ 197:

26 Պատմութիւն Ղափանցոց, էջ 139:

27 Նույն տեղում, էջ 173:

Ի բազմաց բաղում անգամ արդ եղև մեզ գրաչութեանց քոց, բայց արդ իբր ականատես իսկ եղևալ մեր զձերոց մեծամեծ քաջութեանց՝ որ ընդդէմ թշնամեացն մերոց, ահա՛ արդ կացուցի զքեզ իշխան և զուխ ամենայն իշխանաց մերոց, որք են ի կողմանսդ յայդոսիկ, և երկիրդ Ղափան՝ զոր կալար քաջութեամբ, քեզ լիցի. բայց դու ելցես և ժողովեացես առ քեզ զամենայն ցորս և զխանս ի կողմանսդ յայդոսիկ և ի բաց հանցես զօսմանցին ի սահմանաց քոց»²⁸:

Հետևում է նախնական գրատման մեջ հիշված նվերների թվարկումը, նշելով դրամահատման իրավունքի մասին, ինչպես նաև այն մասին, որ «եկին հնազանդեցան նոա (Դավթին) իշխանք և զաւառապետքն Թուրքաց»²⁹:

Ինչպես ժամանակակիցների, այնպես էլ հետագա պատմագիրների կողմից շահ Քահամասի 1722—1732 թթ. գահակալությունը իրավացիորեն գնահատված է որպես քաղաքական և ռազմական հենարանից զուրկ, աստանդական վիճակում գտնվող, անկալուն մի իշխանություն: Եթե մինչև 1727 թ., երբ Նադիրը, իրեն վերանվանելով «Քահամասպուլի», իր ղեկավարած շարժման նպատակն էր համարում Սեֆեհինների գահի վերականգնումը, այդ իշխանությունը ղեռ որոշ կշիռ ուներ, ապա այնուհետև, երբ ձեռք բերած հաղթանակների շնորհիվ բարձրացավ Նադիրի հեղինակությունը, որպես օտար նվաճողների դեմ երկրում ծավալված պայքարի միակ ղեկավարի, Քահամասպը լիովին հեղինակազրկված էր, ուստի և նրա արձակած հրովարտակներն ու հրահանգները, մեծ մասամբ, գործնական հետևանքներ չէին ունենում: Անհաջող ընդհարումները օսմանցիների հետ ավելի քան թուլացրին նրա դիրքերը, որից հետո դրություն տերը փաստորեն Նադիրն էր:

Մենք արդեն տեսանք, որ 1727 թ. հունվարին սիփահասալար Մուհամադ-Ռիզա խան Արզալուսին հղված հրովարտակը, որով կարգադրվում էր օգնություն ցույց տալ Դավթի-բեկին, ոչ մի հետևանք չունեցավ և անհավասար պայքարում հալ մարտիկները, փոքրաթիվ ուժերով կարողացան պարտության մատնել օսմանցիներին և զուրս քշել Ղափանի սահմաններից: Հաղթանակի լուրն ստանալուց հետո Դավթի-բեկին շնորհված հրովարտակով էլ թեև տեղի ադրբեջանական խաներին կարգադրված էր ենթարկվել Դավթի-բեկին, սակայն դրանք մեծ մասամբ հնազանդվել էին օսմանցիներին և օգնում էին նրանց՝ Դավթի-բեկի դեմ մղված կռիվներում, իսկ Դուզալի Քյազում-խանի մասնակի համագործակցությունը Դավթի-բեկի հետ և մասնակցությունը հետագա կռիվներին, ինչպես տեսանք, ձևական բնույթ էր կրում. երբ ձեռք բերած հաջողություններից գոտեպնդված Դավթի-բեկը, հետապնդելով օսմանցիներին, մուտք գործեց Ազուխս, այստեղ առավել ևս հաստատվեց, թե որքան սնամեջ և ապարդյուն կարող էին լինել քաղաքականապես սնանկ գահի հավակնորդի արձակած հրահանգները:

Նկարագրելով օսմանցիների դեմ Ազուլխում մղված կռիվները, Տեր-Ավետիսը, առանց անունները նշելու, խոսում է նաև շահի Պահլավազով օգնության եկած խաների մասին. «Ապա յետ այսորիկ արքայն Պարսից Շահ Քահամաս առաքեաց յօգնութիւն Դավթի զերիս խանս, և վերստին դիմեաց օսմանցին և խորտակեցաւ ի սոցանէ: Սակայն իշխանքն Ազուլէսի ծածկապէս դաշնադիր էին ընդ օսմանցոց, և սոքա ոչ գիտէին»³⁰, Այնուհետև հաջորդ ձևկատամարտի նկարագրության մեջ նշված է, որ օսմանցոց դեմ Դավթի թեկերից մեկում նշանակում է օգնության եկած խաներին, մյուսում Տեր-Ավետիսին, իսկ ինքը գլխավոր ուժերով ամրանում է ձախատի կենտրոնական մասում: Եվ ահա թշնամու առաջին իսկ հարձակումից խաները լքում են դիրքերն ու փախուստի դիմում, ծանր կացության մեջ զնելով Դավթի-բեկին: Սակայն,

²⁸ Նույն տեղում, էջ 173—174:

²⁹ Նույն տեղում, էջ 174:

³⁰ Նույն տեղում, էջ 140:

ինչպես գրված է «Պատմության» նշված հատվածում, «զօրքն Հայոց պինդ կացին, հարին և վանեցին զօսմանցին, և իբրև փախստականս արարին, և ապա պնդեցան զկնի խանիցն (մինչդեռ փախստեայ երթային նոքա ի թավրէզ), հասին նոցա և դարձուցին զամենայն զօրս նոցա, և բերին ի յԱգուլէս, բայց երկու խանքն փախան»³¹:

«Պատմության» հետագա շարադրանքից կարելի է վստահորեն եզրակացնել, որ խաների փախուստով էլ ավարտվում է շահի հրահանգով օգնության եկած իրանական ուժերի «մասնակցությունը» օսմանցիների դեմ մղված կռիվներին³²: Դրանով հանդերձ հայ մարտիկները միայնակ ոչ միայն կարողացան պարտության մատնել հակառակորդին, այլև հետապնդել և պատուհասել փախչող խաներին:

Ձեռք բերած ռազմական հաջողությունների զարգացմանը, սակայն, խանգարում էր ոչ թե խաների դասալքումը, այլ լրջորեն խոչընդոտում էր դասակարգային հակադիր ձգտումներից մղված և օսմանցիների խորամանկ խոստումներից խաբված, Ագուլիսի մեծահարուստ առևտրական դասի ներկայացուցիչների նենգավոր դիրքորոշումը, որոնք եթե նախապես «ծածկապէս դաշնադիր էին ընդ օսմանցոց», ապա, ինչպես կարդում ենք «Պատմության» համապատասխան հատվածում, «չետ այսորիկ իբրև երկու աուրք ի վերայ անցին, արքն Ագուլէսի և մելիք Մուսի զդաւաճանութիւնս իւրեանց յայտ արարեալ, գրոհ տուին ի մէջ քաղաքին և արձակել սկսան ի վերայ զօրացն Դաւթի թօփս: Իսկ նոցա խնայեալ ի նոսա (վասն զի ամենայն քաղաքացիքն էին հայ, և ոչ ոք այլազգի գոյր անդ)»³³:

Համապատում բնագրում վերաշարադրելով այս դեպքերը, Ղ. Ստեփանոսյանը ավելի է շեշտում եղբայրասպան կռիվից Դավիթ-բեկի խուսափելու հանգամանքը, ավելի մանրամասն բացատրելով, որ «սոքա խնայեցին ի նոսա, վասն զոլոյն համազգային, և զի ոչ կամէին մտանել յարին այնքան քրիստոնէից. վասն զի ի քաղաքի անդ էին աւելի քան զտասն հազար տուն հայոց»³⁴:

Այս խոռվահույզ իրադարձությունների գլխավոր կազմակերպիչը Ագուլիսի բալանթար մելիք Մուսին էր, որի նենգ մտադրությունները նախապես կռահելով, Դավիթ-բեկը սկզբում կարգադրել էր գլխատել նրան, սակայն անսալով իր զինակից մելիք Փարսադանի միջնորդությանը, հրաժարվել էր այդ մտքից: Իսկ երբ նրան ենթան Ագուլիսի զինված ջոկատները բացահայտ թշնամական դիրք գրավելով սկսեցին գնդակոծել թովմա Առաքյալի վանքը, ուր իր զինվորներով ամրացել էր Դավիթ-բեկը, և վերջինս հաշտության նպատակով մելիք Փարսադանին ուղարկեց բանակցելու, մելիք Մուսիի մարդիկ սպանեցին նրան³⁵:

Այս պարագաներում էր, որ Դավիթը որոշեց, առանց արյունահեղության, իր զորքերը դուրս բերել թշնամու հետ համագործակցող հայրենակիցների ծուղակից և գնալ ամրապնդելու Ղափանի հայության միասնությունը, որի մեջ նույնպես, օսմանյան իշխանությունների ռազմական ճնշման հետ զուգորդված դավադրությունների հետևանքով, մերթնդմերթ ճեղքվածքներ էին առաջանում:

Շուտով անհրաժեշտ եղավ վճռական քայլերի գիմել՝ կանխելու համար Չավնդուրի զինվորության պարագլուխների ենթարկումը օսմանյան իշխանություններին: Տեր-Ավետիսի գլխավորությամբ Հալիձորից ուղարկված զինվորները, ձեռքակալելով խոռվարարներին, օսմանցի կռուավարչի հետ միասին տարան Հալիձոր, որտեղ նրանք հնազանդության երզում տվին Դավիթ-բեկին:

31 Նույն տեղում, էջ 140—141:

32 Նույն տեղում, էջ 141—142:

33 Նույն տեղում, էջ 141:

34 Նույն տեղում, էջ 176:

35 Նույն տեղում:

Միաժամանակ, անընդմեջ շարունակվում էին անհավասար մարտերը Ղափան ներխուժած օսմանյան զորքաբանակների և նրանց միացած Ֆաթհ-Ալի սուլթանի և այլ տեղական ֆեոդալների ասպատակիչ զորքերի դեմ:

Գավիթ-բեկի մահից և Հալիձորի անկումից հետո, Մխիթար-բեկի գլխավորությամբ շարունակվող ազատագրական պայքարը, առավելապես, ամրացված հենակետերից զուրկ պարտիզանական կոիվներով էր բնորոշվում: Հերոսական դրվագներով հարուստ այդ գոյամարտն անշուշտ բախտորոշ դեր խաղաց Սյունյաց լեռնաշխարհի հայության պատմական ճակատագրում, ամրապնդելով հետագա սերունդների հավատքը սեփական ուժերի նկատմամբ: Սակայն, ինչպես վերը տեսանք, 1722—1728 թթ. ծավալված հաղթական ռազմական գործողություններին ղուգահեռ երևան եկան նաև Գավիթ-բեկի՝ իրավիճակի արագ փոփոխությունների ոլորտում ճիշտ կողմնորոշվող, իրատես պետական-քաղաքական գործչին բնորոշ հատկանիշները, որով և կարճ ժամանակամիջոցում, օգտվելով Իրանում կենտրոնական իշխանության բացակայության պայմաններից, պատմական Սյունիքի լեռնային տարածքում ստեղծվեց զուտ հայկական մի իշխանություն, որից սարսափում էին ոչ միայն տեղական խաներն ու այլազգի իշխանավորները, այլ նաև օսմանյան բանակի զորահրամանատարները և որին ստիպված էր ճանաչել և հաշվի առնել օտար ներխուժման դեմ դիմադրությանը նախանձախնդիր շահ Թահմասպ II-ը³⁶:

БОРЬБА ДАВИД-БЕКА ПРОТИВ ОСМАНСКОГО ВТОРЖЕНИЯ И ЕГО ВЗАИМООТНОШЕНИЯ С СИЛАМИ ИРАНСКОГО АНТИОСМАНСКОГО СОПРОТИВЛЕНИЯ

Доктор ист. наук А. Д. ПАПАЗЯН

Резюме

Осуществленное С. Арамяном новое полное, оснащенное научным исследованием критическое издание исторического труда представляет собой основной источник по истории освободительных боев 1722—28 гг. в Сюнике, возглавленных Давид-беком, записанного Г. Степаносяном. Оно дает возможность пересмотреть, уточнить и заново истолковать некоторые обстоятельства политической деятельности и военных действий, осуществлявшихся руководителями движения в условиях быстрых перемен политических ситуаций.

На основе параллельных данных некоторых армянских и, в особенности, персидских источников и архивных документов в статье раскрываются отдельные вопросы, имеющие отношение к событиям периода османской оккупации.

Прилагается персидский оригинал с переводом на армянский язык одного из использованных источников—новонайденного указа 1724 г. шаха Тахмаспа II, направленного одному из противников Давид-бека, правителю Баргушата, Фатх-Али-султану.

³⁶ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 161—175:

ВОЗВРАЩАЯСЬ К «ДЕШИФРОВКЕ»
УРУТСКОЙ ЭПИТАФИИ

Доктор ист. наук А. Д. ПАПАЗЯН

В статье «Новые эпиграфические данные о последних отпрысках армянской феодальной знати в Сюнике» («Историко-филологический журнал», 1983, № 4) мы рассмотрели две арабоязычные эпитафии XV в. из села Урут Сисианского района АрмССР, изданные азербайджанским эпиграфистом М. Нейматовой¹.

Исходя из общеизвестных принципов и многовековых традиционных методов мусульманской эпиграфии, а также на основе данных рукописных и документальных источников, мы показали, что лишенное научной основы «чтение» М. Нейматовой является продуктом антиисторической «концепции», выдвинутой некоторыми азербайджанскими историками. Своей статьей, опубликованной в ответ на нашу критику², М. Нейматова окончательно подтвердила высказанное нами мнение. Искажая данные армянских источников о «стране Алуанк» (в позднем грабаре и среднеармянском—«Агванк») или «Восточном крае», она «доказывает», что Сюник якобы являлся частью Алвани, был населен алванами, к XV веку уже принявшими ислам и ставшими тюркоязычными. «Поэтому,—пишет М. Нейматова,—наличие слова «агван» в урудских эпитафиях XV—XVI вв. совершенно естественно»³. Воодушевленная этой «находкой» она пытается также дать источниковедческую оценку своего «открытия». «О григорианизации—арменизации и грузинизации албанских племен писали много,—пишет М. Нейматова,—а о тюркизации их имеются косвенные данные, археологические и другие материалы. Урудские памятники являются единственным письменным, а также подлинным материальным доказательством, указывающим на длительный процесс тюркизации и исламизации албанских племен и на их роль в формировании азербайджанского народа (да и грузинского и армянского народов)»⁴.

Выходит, что если бы М. Нейматовой не удалось «обнаружить» слова «агван» в урудских эпитафиях, то невозможно было бы проследить процесс формирования не только азербайджанского, но, что еще более странно, грузинского и армянского народов.

Любое историческое исследование, каких бы деталей оно ни касалось, может быть полезным в том лишь случае, когда исследователь знает материал, вооружен знанием соответствующих языков, обладает необходимой подготовкой во вспомогательных дисциплинах и, что важнее всего, делая выводы, исследователь должен постоянно думать о том, какие аргументы могут быть выставлены против выдвинутого им положения.

¹ М. С. Нейматова. Мемориальные памятники Азербайджана (XII—XIX вв.), Баку, 1981.

² М. С. Нейматова. Еще раз об урудских памятниках Зангезура.—Известия АН АзССР, серия истории, философии и права, 1985, № 4, с. 87—94.

³ Там же, с. 88.

⁴ Там же, с. 92.

Предоставляя специалистам-алвановедам критику общих исторических вопросов, мы снова обратимся к ее «прочтению» упомянутых эпитафий, с тем, чтобы еще раз убедиться в том, что имеем дело с «дешифровкой», полностью лишенной научной основы и изобилующей погрешностями против элементарных принципов восточной текстологии, палеографии и эпиграфики.



Рис. 1.

Хотя эпитафия № 53 содержит ряд погрешностей как орфографического характера, так и в графическом исполнении, своей формой и содержанием она, тем не менее, ничем не отличается от подобных надписей и составлена в соответствии с традициями мусульманских эпитафий. В начале упомянуты имена бога, пророка, и, согласно шиитской традиции, имя ближайшего сподвижника и непосредственного преемника пророка—Али (الله محمد علي), затем, как обычно в подобных эпитафиях, следует имя захороненного. В конце надписи помещена дата, которая обычно и завершает эпитафию (рис. 1).

Согласно мнению М. Нейматовой, в рассматриваемой эпитафии после формулы الله محمد علي следует некое имя امر و سل (Амрусал). После того, как мы отметили, что такого имени не существует, М. Нейматова не только снова объявила это никому не известное имя существующим в азербайджанском языке, но даже попыталась этимологизировать его, производя его от известного имени Мурсал (مرسل), якобы с прибавлением «а» (алифа) по каким-то фонетическим закономерностям какого-то «местного диалекта». В качестве доказательства своей

«лингвистической» аргументации она приводит следующие примеры: Рамазан—Ирамазан, Фируддин—Афируддин⁶.

Однако, в надписи, согласно прочтению самой же М. Нейматовой, написано не *مرسل*, а *مروسل* (Мрусал), что никак нельзя идентифицировать с именем Мурсал. Следует отметить еще, что протетический гласный в некоторых азербайджанских диалектах появляется отнюдь не перед всеми согласными, но только перед начальным «р» (например, в именах Раджаб, Рахим, Риза и т. п.). Во всяком случае мы не имеем ни одного примера появления этого гласного в словах с начальным согласным «м». Об этом же свидетельствуют и примеры, приведенные самой М. Нейматовой. Ко всему сказанному нужно еще прибавить, что совершенно недопустимо приписывание фонетических явлений современного азербайджанского языка языку алван XV века, только недавно принявших ислам и тюркизированных.

Как видим, усилия М. Нейматовой создать новое имя Амрусал тщетны. В нашей предыдущей статье мы показали, что в рассматриваемом имени за начальным алифом следует сочетание букв *عمر*, что дает полное основание для прочтения *مير*. Такое прочтение подтверждают не только следы двух точек под этой группой букв, но и свидетельства современных этим надгробиям памятных записей рукописей, в которых встречается имя Амир Васак. Итак, наиболее вероятным следует считать прочтение *اميروسك*, имя, которое издревле и вплоть до XV в. носили представители всех поколений древнего сюникского княжеского рода, владевшие крепостью Воротн⁶.

Отсутствие верхней черты над буквой «каф» не может служить аргументом против чтения имени *وسك*, так как в конце слова (в отличие от положения в начале и в середине) эта буква пишется без верхней черты. Итак, если существует имя, написание которого соответствует орфографии эпитафии, к тому же оно упоминается в источниках соответствующего времени, то к чему упражняться в фабрикации несуществующих имен? Только лишь с целью утверждать обратное?

⁶ Там же, с. 93; пример с именем Фируддин, на наш взгляд, совершенно неудачен. Какое имя имеет в виду М. Нейматова—непонятно. Если это—Фируддин (от Фаридун, Фридун), то гласный «а» в начале слова—не явление «местного диалекта» (непонятно, какой именно диалект и какого именно языка имеет в виду автор), а возник еще на почве арабского языка и является примером хорошо известной фонетической закономерности арабского языка, а именно, устранения двухслогового начала при помощи *alef protheticum*. Ср. греч. Πλάτων—арабск. أفلاطون, греч. κλίμα—арабск. اقليم, арм. Хлат—арабск. اخلاط и пр. См.: С. Brockelmann. Arabische Grammatik, Leipzig, 1969, S. 13; Н. В. Юшманов. Грамматика литературного арабского языка, М., 1985, с. 36. Если же имеется в виду какое-то арабское имя типа Фахр уд-дин, то такого арабского имени нет и быть не может. См.: Onomasticon arabicum, ossia repertorio alfabetico, compilato per cura di Leone Caetani e Giuseppe Gabrieli, v. I, Roma, 1915.

⁶ А. Д. Папазян. Новые эпиграфические данные о последних отпрысках армянской феодальной знати в Сюнике.—Историко-филологический журнал. Ереван, 1983, № 4, с. 122.

Подобно тому как имени покойного сопутствует название его должности (амир), имя отца его также упоминается вместе с названием должности—кетхуды. Правда, слово это написано с орфографической ошибкой *کتخودا*, с лишним *و* (написание этого слова с «т» вместо «д»—к этому времени уже давно утвердившийся орфографический вариант). В первом варианте своей «дешифровки» М. Нейматова приня-



Рис. 2.

ла первое слово второй строки: за имя отца захороненного, однако, не сумев подогнать его к какому-либо имени, ограничилась только прочтением *ولد کتخودا*. Между тем, очевидно, что вся вторая строка надписи заполнена датой, которая, по нашему убеждению, начинается словом *تحریرا* (составлено) как это принято во многих подобных надписях (см. ниже). Что касается имени отца покойного, то оно занимает всю левую часть эпитафии и является непосредственным продолжением первой строки, что указывает на особое уважение к данной личности.

Ознакомившись с нашей поправкой и не желая отказываться от своего «открытия», М. Нейматова, как ей кажется, решила вопрос по-новому и в своей последней статье, прибегнув к таким же лженаучным ухищрениям, как и в случае с вышеупомянутым именем Амрусал, предложила читать первое слово второй строки как Ших-Риза⁷.

Рассмотрим подробно две буквы первого слова второй строки. Возможно ли прочтение их как «ших», либо «шейх»? Небольшую косую черточку, что справа соединяется с буквой «ха» никак нельзя читать как «шин», так как в нашей надписи в словах *فک* в первой строке и *شهر* во второй строке ясно видно, что резчик одинаково вырезал буквы «син» и «шин» крупными, длинными и непременно — с зубчиками. Это обстоятельство было замечено автором прорисовки (рис. 2). Кроме того, здесь отсутствуют буква «йа» и точка над «ха». Таким образом, предложенного М. Нейматовой слова *شیح* здесь прочесть невозможно. Невозможно также читать следующее сочетание *زیرا*, как Риза, так как это имя пишется через «дад» и без «йа». К тому же над второй буквой «ра», которую М. Нейматова читает как «за», нет точки. Мож-

7. М. С. Нейматова. Еще раз об урудских памятниках Зангезура, с. 93. Неясно, однако, рассматривается ли здесь Ших-Риза как одно имя. Если же нет, то был ли этот предполагаемый Риза шейхом или: кетхудой, или же и тем и другим одновременно?

но ли допустить, чтобы составитель эпитафии, который несомненно был мусульманином-шиитом, не знал орфографии имени столь почитаемого после Али и Хусейна восьмого имама Ризы, чья могила в Мешхеде—одна из величайших святынь шиитов?⁸ Орфографическая ошибка в названии месяца рамазан—недостаточное основание для того, чтобы допускать, что с такими же ошибками могут быть написаны имена святых. По такой логике можно допустить возможность написания слова *محمد، آلله* как *الله* — через *ه* либо, по нынешнему азербайджанскому произношению — *محمد، على* — через алиф (*الى*) и т. п. Но ведь это совершенно невозможно!

Судя по азербайджанской (а отнюдь не арабской) форме имени Ших-Риза, М. Нейматова и на этот раз исходит из современного азербайджанского диалектного произношения (что, как уже говорилось, совершенно не правомерно). Однако она забывает, что именно в этом случае и должен был появиться тот самый протетический «а», который она пытается пристроить к началу выдуманного ею имени захороненного.

На ретушированном фотоснимке, изданном М. Нейматовой, сочетание двух букв первого слова второй строки надписи больше похоже на одну букву «'айн». Основываясь на имеющейся у нас фотографии, на которой видны две точки над этой группой букв, а также учитывая наличие следующего за нею сочетания *ريرا*, мы считаем возможным прочтение этих двух букв как *تح*. Таким образом складывается слово *تحريرا*, часто сопутствующее дате.

Предложенное нами чтение *تحريرا* обусловлено еще и тем, что за этим словом следует (с одной орфографической ошибкой) полная дата: *٨٨٦ شهر سنه* «в месяце рамазан 886 года», чем и завершается единственно разумное чтение этого текста. Здесь несколько необычно то, что буква «ха» не соединена со следующей за нею буквой «ра», однако, хотя подобные примеры не встречаются в эпитафиях, в туграх и на печатях, практика полного написания букв *ح، ع، خ، ح، غ* в соединениях с другими буквами довольно распространена⁹. Во всяком случае обычное применение этой формулы на других надписях¹⁰ предполагает наличие ее и здесь.

Обратимся теперь к чтению текста левой части эпитафии, который, по нашему убеждению, является продолжением первой строки и содержит имя отца захороненного Амир Васака. М. Нейматова, как уже говорилось, считает, что отчество захороненного помещено перед

⁸ Однако, как справедливо заметил О. Г. Большаков, уровень познаний М. Нейматовой в истории ислама явствует из того факта, что на с. 9 ее книги черным по белому написано: «Монголы вторглись в Азербайджан под лозунгом джихада». — Эпиграфика Востока, XXIII, Л., 1986, с. 107.

⁹ M. Guboglu. Paleografia și diplomatița turco-osmana. București, 1958, p. 48—49.

¹⁰ М. С. Нейматова. Еще раз об урудских памятниках Зангезура, с. 91.

датой, т. е. выражено в сочетании *تحریراً*, которое она читает как *وشیخ ریزا*, и продолжает настаивать, что левую часть эпитафии следует читать *من اولاد اوغوا*, предлагая перевод: «Из рода агван»¹¹.

В нашей статье мы уже отмечали, что слово *اولاد* нельзя переводить как «род» и что означает оно «сыновья», в лучшем случае «потомки». Для обозначения же понятия «род» в арабском языке существуют слова *آل* и *بنی*¹². Но в любом случае хочется спросить М. Нейхматову, видела ли она хоть одно надгробие, на котором кроме имени захороненного и его отца упоминалась бы еще и его этническая принадлежность?

Прежде чем перейти к детальному рассмотрению этой части эпитафии, считаем необходимым коснуться одного обстоятельства. Дело в том, что буква *η* в древнеармянском языке обозначала фонему «л», что отразилось в многочисленных именах, в особенности этнонимах и топонимах, в частности—в передаче арабской графикой. Из множества примеров приведем лишь некоторые: известный по армянской историографии топоним Хаг-хаг передается в арабских и персидских текстах как *خلخال* (Халхал), так же он называется и ныне¹³, Капагак передавался как *قبلة* (кабала¹⁴), Багасакан—*بلاسجان* (Баласаджан¹⁵), Егегис—*الكيس* (Елегис¹⁶), Агбак—*الباق* (Албак¹⁷), Джуга—*جولاه* (Джулах¹⁸), Ангелакот—*انگلكوت* (Ангелакот¹⁹), Колб—*قلب* (Колб²⁰) и т. п. Этноним агуан, как известно — армянская передача названия племени, где армянское «*η*» передает греческое «л» (ср. греческое

¹¹ Там же, с. 89. Ср. Мемориальные памятники..., с. 21.

¹² А. Д. Папазян. Новые данные..., с. 122.

¹³ حمد الله قزوينی ' نزهة القلوب ' تهران ۱۳۳۶ ' ص ۸۵ ' ۹۲ - ۹۳

¹⁴ Там же, с. 106.

¹⁵ *معجم البلدان* ' *ياقوت الحموی* ' *Jacuts geographisches Wörterbuch*... Leipzig, 1924, S. 157, 171.

¹⁶ А. Д. Папазян. Новые источники по истории курдского народа.—«Вестник» Матенадарана, № 8, Ереван, 1967, с. 243; Ср.: Матенадаран, Восточный фонд, рук. № 622, л. 726, 776.

¹⁷ *المكندر بيك تركمان منشی* ' *تاریخ عالم آرای عباسی* ' تهران ' ۱۳۳۴ ' جلد ۲ ' ص ۶۷۹ ' ۶۸۵ ' ۶۹۵ ' ۷۰۴ ' ۷۰۶ ' *عبد الرزاق دنبلی* ' *مآثر سلطنتیه* ' تهران ' ۱۳۵۱ ' ص ۳۵۸ ' ۳۶۰.

¹⁸ Там же, с. 643, 668, 669.

¹⁹ А. Д. Папазян. Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII вв. Ереван, 1972, с. 107. Ср. Он же. Персидские документы Матенадарана Купчие, вып. I, Ереван, 1968, док. 7, 14, с. 440, 466.

²⁰ А. Д. Папазян. Османские архивные документы Народной библиотеки: Кирилла и Мефодия в Софии.—Историко-филологический журнал, 1984, № 32, с. 208—209.

'Ալβανοί). Стало быть и по-арабски оно должно было бы передаваться и писаться через «л»—الوان (البان). Итак, неужели М. Нейматова полагает, что исламизированные и тюркизированные алваны писали собственное этническое название (если допустить, что они называли себя так) в такой форме, в какой оно существует *только* в армянском языке?

Однако обратимся снова к нашему тексту. В левой части надписи после слова كتحود на первой строке и سنه ۸۸۶—на второй вырезана черта, занимающая первую и вторую строки. Как верно заметила и М. Нейматова, это не разделительная черта, а два алифа, расположенных вертикально друг над другом, из которых верхний является последней буквой слова كتحودا, а нижний, по нашему мнению—начальная буква имени отца захороненного اولافم (Авлакум²¹). По мнению же М. Нейматовой, это—первая буква слова اولاد. Итак, если левая часть надписи начинается этим нижним алифом, то на каком основании следующее за группой ولا сочетание, более похожее на م, не только прочтено как من, но переставлено и, по воле М. Нейматовой, помещено впереди сочетания ولا? Все это сделано с целью во что бы то ни стало получить желаемое (хотя и бессмысленное) من اولاد. На самом деле эти две буквы читать как من невозможно. Первая буква более похожа на «каф», чем на начальный «мим». В надписи имеется три случая употребления начального «мима» и они определенно отличаются от того, который видит в предлагаемом ею من М. Нейматова, которой без предлога «из» никак не обойтись. Эта разница была замечена автором прорисовки (рис. 2).

Перестановка сочетания م с целью объявления его предлогом من была необходима М. Нейматовой еще и для того, чтобы использовать нижнюю часть буквы «мим» в качестве первой буквы (алифа) вожделенного слова اوغوا. Однако за этим воображаемым алифом следует буква «зав», которую можно прочесть либо как «у», либо—при наличии предшествующего «алифа»—как «ав». Следом идет сочетание عو, которое вероятнее всего нужно читать как عو. Таким образом получается некое сочетание «угв» либо «авгв», которое М. Нейматова не раздумывая читает как اوغوا—«угван» и, что еще более неожиданно, переводит как «агван», при том, что никакими усилиями невозможно обнаружить алифа, который якобы следует за сочетанием عو, а буква «нун», составляющая необходимый компонент

²¹ Об этом имени, хорошо известном из фамильного ономастикона армянских княжеских домов Сюника, см.: А. Д. Папаян. Новые данные..., с. 122.

слова «агван», просто отсутствует как в этой надписи, так и (в чтении самой же М. Нейматовой) на эпитафии № 66.

Примечательно однако, что подогнав по «алифу» к началу и к концу сочетания *وَعُو* и получив таким образом бессмысленное *اوعوا*, выдаваемое за искомое «агван», наш уважаемый эпиграфист не пожела- лала заметить, что над группой *وَعُو* вырезаны еще другие буквы. Эти буквы представляют собой окончание *دلو* слова *وَعُوْدِلُو* (Вагуд- лу²²), выполненного несколько сжато и втиснутого в левый угол над- писи (рис. 1).

Ясно, что отсутствие в эпитафии этнонима «агван» делает ненуж- ным также бессмысленное «чтение» и предшествующего ему *اولاد*.

Однако М. Нейматова в подтверждение своей версии ссылается на эпитафию, вырезанную на боковой стороне надгробия № 66 (надгроб- ный камень в форме барана), в начале второй строки которой имеется сочетание *اولا*. Следующую за этим сочетанием букву М. Нейма- това читает как «дал» и, состряпав таким образом слово *اولاد*, отожд- ествляет этот отрывок текста эпитафии № 66 со своим чтением фраг- мента левой части эпитафии № 53. Мы также считаем, что на обоих надгробиях написано одно и то же слово, именно—одно и то же имя Авлакум. Заметим, что огромная мадда над алифом в надгробии № 66 полностью исключает возможность чтения этого сочетания букв как *اولاد*. С другой стороны, как нами было отмечено и в предыдущей статье, после слов *الله محمد على* в первой строке надписи, либо после какой-либо другой формулы религиозного значения всегда следует имя захороненного. Это видно из эпитафий, изданных самой М. Неймато- вой²³. В этом случае также на этом месте нужно искать лишь имя соб- ственное и ничего более.

В своей книге М. Нейматова опубликовала также надпись верхней части надгробия № 66, не прочитав, однако, ее до конца и не прило- жив фотографии. В последней своей статье она вновь ссылается на эту надпись и снова без публикации фотоснимка, ограничиваясь лишь прорисовкой, осуществленной на основе ее «чтения». На примере над- гробия № 53 мы уже видели, как, придумав предлог *من* и переместив его с конца группы *اولا* в начало ее, М. Нейматова решила, что полу- чила желаемое сочетание *اولاد من*, которое она перевела: «из рода». В своей книге она, не задумываясь, переселила этот выдуманный ею пред- лог из эпитафии № 53 в начало первой строки эпитафии № 66, так как этого предлога ей не хватало и там. В своей последней статье М. Ней- матова отказалась от своего прежнего «чтения» и непосредственно

²² От топонима Вагуди, где в XV в. обосновались последние отпрыски ислами- зированной армянской княжеской семьи. См.: А. Д. Папазян. Новые данные..., с. 120—121.

²³ М. С. Нейматова. Мемориальные памятники..., № 55, 56, 57, 69, 87, 88, 89, 90, 91 и др.

после расшифрованного ею отрывка *افتخار ولد اميرم سنه ٩٨٦*, выписанного на спине барана, поместила текст *الله محمد على اولاد اوعوا*, отбросив мадду на алифе в начале первой строки.

Как уже говорилось, фотография надгробия не опубликована, памятника на месте нет, следовательно трудно проверить, в какой степени соответствует оригиналу чтение М. Нейматовой и опубликованная ею зарисовка. Однако, судя по публикациям комплекса урутских надгробий, осуществленным как М. Нейматовой, так и А. Хачатрян²⁴, дата надписи на спине барана прочтена М. Нейматовой верно, т. е. 986 (1578—79 гг.). Значит надгробие № 66 установлено спустя почти сто лет после установления памятника № 53. Однако мало вероятно, чтобы надпись на боковой стороне памятника относилась к тому же времени. Соотношением букв и способом резьбы слова *الله محمد على* в первой строке боковой надписи чрезвычайно сходны с тем, как они выписаны на надгробии № 53. Очевидно, что это—работа того же времени и, может быть, того же мастера. Не исключено, что старый камень был заново использован по прошествии ста лет после установления впервые, и на свободном пространстве спины барана была выполнена новая надпись. Правда, это предположение, исходящее из манеры письма и внешних данных надписей, не может считаться окончательным при отсутствии фотоснимков надписи и самого памятника. Ясно одно, что и здесь слово, следующее после формулы *الله محمد على*, может быть только именем собственным, что мадда над первым алифом исключает чтение этого слова как *اولاد*, которое, в свою очередь, не может быть переведено как «род». И наконец, если бы даже за этим словом действительно следовали буквы *او و ن و ا*, то из них можно было бы сложить только бессмысленное сочетание *اوعوا* (угва, либо авгва), которое не имеет ничего общего со словом «агван».

Таким образом, очевидно, что в этой надписи невозможно видеть ничего, что могло бы служить «единственным письменным и подлинным доказательством» утверждения, что Сюник якобы был населен алванскими племенами. Таковых доказательств быть и не могло, так как это утверждение не соответствует исторической действительности. Поиски же данных, противоречащих исторической действительности, обречены на провал.

Понятно, конечно, что М. Нейматовой и ее единомышленникам, трудно отказаться от их «открытия», но наука в первую очередь требует правдивости.


²⁴ М. С. Нейматова. Еще раз об урутских памятниках Зангезура, с. 89—90; Ср. А. Хачатрян. К расшифровке и интерпретации некоторых арабских надписей Армении (XV—XVI вв.).—Вестник обществ. наук АН АрмССР, Ереван, 1984., № 12, с. 60—62.

ԱՆԿՐԱԿԱՌՆԱԼՈՎ ՈՒՌՈՒԹԻ ՏԱՊԱՆԱԳՐԻ «ՎԵՐԾԱՆՈՒԹՅԱՆԸ»

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Գ. ՓԱՓԱԶՅԱՆ

Ա մ փ ո փ ո յ մ

«Պատմա-բանասիրական հանդեսի» 1983 թ. № 4-ում հրատարակված «Վիմագրական նոր տվյալներ Սյունյաց աշխարհի հայ ֆեոդալականության վերջին մնացորդների մասին» հոդվածում մասնագիտական ուսումնասիրության ենթարկելով ճանաչված վիմագրագետ Մ. Նեյմաթովայի կողմից հրատարակված՝ ՀՍՍՀ Սիսիանի շրջանի Ուտոթ գյուղում գտնվող XV դարի երկու արաբերեն տապանագրերը, ցույց էր տրված, որ գիտական հիմքից զուրկ այդ ընթերցումը հետևանք է հակապատմական մտացածին պնդումների, որոնք հատուկ նպատակներով առաջ են քաշվում և տեղի ու անտեղի թմբկահարվում են որոշ ազդրեջանական պատմաբանների կողմից: Վերջերս Մ. Նեյմաթովան հանդես է եկել նաև ատանձին հոդվածով, որտեղ նա ոչ թե փորձում է հիմնավորել իր ընթերցումը, այլ, խեղաթյուրելով սկզբնաղբյուրների տվյալները, վերաշարադրում է վերոհիշյալ պատմաբանների կողմից համառորեն հետապնդվող հակապատմական նույն «տեսակետը», ըստ որի, իբր, Սյունիքը միշտ Աղվանքի մասն է կազմել և մինչև XV դարը բնակեցված է եղել աղվաններով և որը, իբր, հիմք է տալիս Ուտոթի տապանագրերում որոնելու «աղվան» անունը: Ներկա հոդվածով վերստին համակողմանի, մանրազնին վերլուծության ենթարկելով հիշյալ տապանագրերը, ցույց է տրված, որ Մ. Նեյմաթովայի «ընթերցումները» մասնագիտական քննության չեն դիմանում, շինծու են ու բռնազբոսիկ և զալիս են մի անգամ ևս հաստատելու, որ պատմական իրողությունը հակասող և ոչ գիտական նպատակներ հետապնդող որոնումները դատապարտված են ձախողման:



ԱՐԵՎՄՍԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ԸՍՏ ՕՍՄԱՆՅԱՆ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՖԵՐՄԱՆՆԵՐԻ
(XVI—XVIII դդ.)

Ա. Հ. ՓԱՓԱԶՅԱՆ

Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող ոչ մահմեդական ժողովուրդներն աշխարհիկ և հոգևոր «արտոնություններ» ստացան սուլթան Մեհմեդ II-ի (1451—1481) գահակալության շրջանում: Այլազավան հայտակներին աշխարհիկ և հոգևոր իշխանություն տալով սուլթան Մեհմեդ II-ը և նրա հաջորդները ջանում էին համայնքների համակարգը ժառանգելու իրենց նպատակներին: Նրանք օգտագործում էին պատրիարքների հեղինակությունը հպատակներին հլու հնազանդ և օտար պետությունների ազդեցությունից հեռու պահելու համար: Հարսանիքը, ապահարգանքը, գույքային և կենցաղային վեճերը լուծվում էին տվյալ համայնքի կրոնական օրենքներով: Նրանց միջոցով պանծվում էին տարբեր տեսակի հարկեր թե՛ պետության օգտին և թե՛ տվյալ պատրիարքության համար:

Սուլթան Մեհմեդ II-ի և նրա անմիջական հաջորդների ֆերմանները, որոնք վերաբերում էին հույն և հայ պատրիարքների «առանձնաշնորհումներին», շին պահպանվել: Այդ ֆերմանները շեն հայտնաբերվել ո՛չ հույն, ո՛չ հայ պատրիարքարաններում և ո՛չ էլ Օսմանյան կայսրության արխիվներում: Միայն հատկապես է, որ դրանք ոչնչացել են Կ. Պոլսում բռնկված հրդեհներից: Միայն հետագա պատմագիրներն են արձանագրում այն փաստը, որ Մեհմեդ II-ը Կ. Պոլիսը գրավելուց հետո հույն և հայ համայնքների համար հատուկ ֆերմանով հաստատել է պատրիարքարաններ:

Հալ համայնքի (Ermeni milleti) պատրիարքությունը հատուկ հրովարտակով հաստատվել է 1461 թ., այն ժամանակ, երբ Մեհմեդ II-ը, Բուրսայի Հովակիմ եպիսկոպոսին տեղափոխելով Կ. Պոլիս, նշանակեց պատրիարք: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հովակիմ եպիսկոպոսով չէ, որ սկսվում է հայոց պատրիարքության գոյությունը Կ. Պոլսում: Փաստերը վկայում են, որ Կ. Պոլսում հայկական հոգևոր առաջնորդություն է եղել դեռևս բյուզանդական կայսրության օրոք: 1360 թ. Կ. Պոլսում հայերն ունեին Ս. Սարգիս եկեղեցին և նրա շուրջը համախմբված հայկական համայնք:

Մեղ հասած ամենահին սուլթանական հրովարտակը, որը հաստատում է հայոց պատրիարքության իրավունքներն ու պարտականությունները Օսմանյան կայսրության սահմաններում, 1764 թ. հունիսի 3-ին Գրիգոր Պասամճյանին (1764—1773 թթ.) շնորհված բերաթն է, որն առաջին անգամ հայատառ թուրքերենով հրատարակել է Ա. Բերբերյանը¹: 1774 թ. հունվարի 22-ին սուլթան Աբդուլ Համիդ I-ը (1774—1789) համանման բերաթ է շնորհել նաև Զաքարիա պատրիարքին (1773—1781), որի հայերեն թարգմանությունը՝ «Ազգիս հայոց պատրիարք Զաքարիա աստվածաբան վարդապետի պատրիարքության խատտի շերիֆի հայկական թարգմանյալ օրինակն է» վերնագրով

¹ Ա. Պ եր պ ե լ յ ա ն. Հայոց պատմություն. Կ. Պոլիս, 1871, էջ 227—233: Վերջին շրջանում թուրքիայում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ Ստամբուլի «Մինիստրների խորհրդի» և «Թոփթափու պալատի» արխիվներից բացի մեծ թվով դաֆթրաներ պահպանվել են նաև Վճյամիլ Գեփեջիի անձնական հավաքածուում: Թուրք պատմաբան Յավուզ էրջանի տվյալներով այս հավաքածուում ամենահնազույնը 2539 համարի տակ գտնվող դաֆթարում ամփոփված 1517 թ. Յավուզ սուլթան Սելիմի (1512—1520) կողմից նրուադեմի հայ պատրիարք Սարգիս Գ-ին տրված հրովարտակն է: „Belleten“, 1984, № 188, S. 1120.

հրապարակված է «Դիվան հայոց պատմության» մեջ²: Ընդհանրապես, համայնքների կողմից ընտրված կրոնական առաջնորդը հաստատվում էր կայսերական հատուկ բերաթով, ուր սովորաբար կրկնվում էին նախորդ սուլթանների կողմից տրված հրամանները: Այս մասին սուլթան Աբդուլ Համիդ I-ի կողմից շնորհված ֆերմանում կարդում ենք՝ «Զի բուրը և համանգամայն ֆերմանքն և հրամանագիրք առ նախնեօք մեծազօր արքայից, կրկին և վերստին նորոգիցի և հաստատիցի ընդ որս և հրամայեցաւ ի տերութենէ նորոգիլ և ֆերմանքն մեծի Պօլտուս»³: Այնուհետև բերաթում նշվում էին համայնքի կրոնական առաջնորդի վարչական իրավունքները իր հօտի նկատմամբ, ինչպես նաև կրոնական ծիսակատարությունները, որոնք յուրահատուկ էին տրվել համայնքին: Այդ բոլորը, ինչպես նշվում էր հրամանագրերում, չպետք է հակասեին շարիաթի դոգմաներին: Այդ բարձր բերաթները շաղախված էին լինում կեղծ խոսքերով և փքուն խոստումներով, որոնց մեծ մասը, բնականաբար, չէր գործադրվում կյանքում:

Հայոց պատրիարքությունը շնորհված բերաթների բովանդակությունը ցույց է տալիս, որ հայ համայնքի կողմից առաջադրված յուրաքանչյուր նոր պատրիարք պարտավոր էր 100 հազար աղչե⁴ միանվագ նվիրել սուլթանական գանձարանին, որպեսզի ձեռք բերեր իր պաշտոնին նշանակվելու բերաթը: Այնուհետև պատրիարքը պարտավոր էր հայ համայնքից հավաքել «Միրի մուկաթա» հարկը (100—1400 հազար աղչե) և հանձնել կառավարությանը: Այս հանգամանքը խիստ շահագրգռում էր սուլթաններին հաճախակի փոփոխելու պատրիարքներին, որպեսզի ամեն մի նորընտիր պատրիարքից կորզեր 100 հազար աղչե: Հովակիմից սկսած մինչև Հակոբ եպիսկոպոս Պոլսեցին (1848 թ.) պատրիարքական աթոռին հերթականորեն բազմել են մոտ 82 անձնավորություններ: Վերջին հարյուրամյակում դրամի ավելի շատ կարիք զգացող սուլթանները առանց պատճառի փոխել են սրանց, երբեմն նույն մարդուն երկու անգամ նշանակելու արտոնություն տվել և ամեն անգամ էլ ստացել սահմանված հարկագումարը: Փաստերը ցույց են տալիս, որ սուլթանները ժամանակի ընթացքում բարձրացրել են պատրիարքության գինը: 1657 թ. Թովմաս Բերիացին մեծ վեզիր Քյոփրյուլու Մեհմեդ փաշայից պատրիարքության հրովարտակ է ձեռք բերել վճարելով 400 000 աղչե⁵: Պատրիարքները միաժամանակ պարտավոր էին նոր վեզիրին տալ 500 զուրուշ, վեզիր-փոխանորդին՝ 250 զուրուշ, շավուշ բաշուն՝ 200 զուրուշ⁶: Մի խոսքով, հայ հոգևորականությունը օսմանյան կենտրոնական կառավարության համար եկամտի կարևոր աղբյուր էր: Ով տրամադրում էր մեծ գումար, նա էլ ձեռք էր բերում բարձր պաշտոն:

4. Պոլսի հայ համայնքին և ոչ մահմեդական այլ հպատակներին վերաբերող թուրքական պաշտոնական ֆերմանները հիմնականում ամփոփված են թուրք պատմաբան Ահմեդ Ռեֆիկի «Ստամբուլի XVI դարի կյանքը» խորագրով փաստաթղթերի ժողովածուում⁷: Առաջաբանում հեղինակը նշում է, որ բոլոր վավերագրերը վերցված են Ստամբուլի պետական արխիվից: Յուրաքանչյուրին՝ ըստ բովանդակության, տրված է համապատասխան վերնագիր: Իսկ ֆերմանների վերջում նշված տարեթիվերը ցույց են տալիս, որ դրանք հրապարակվել են սուլթան Սուլեյման I-ի (1520—1566), սուլթան Սելիմ II-ի

² Գիրք Ժ, Մանր մատենագիրք, ԺԵ—ԺԹ դդ., հրատ. Գյուտ Ազանյանց. Թիֆլիս, 1912, էջ 219—228:

³ Նույն տեղում, էջ 248:

⁴ Թուրքական արծաթյա դրամ:

⁵ Մ. Զոուլալյան. Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ. Երևան, 1980, էջ 232:

⁶ Ղ. Ինճիճեան. Աշխարհագրութիւն շորից մասանց աշխարհի. հ. 5, 2-րդ մաս, վեկտոր, 1804, էջ 117:

⁷ Ahmet Refik. On altıncı asırda İstanbul hayatı (1553—1591). 2-ci ab sim. İstanbul, 1935.

(1566—1574) և սուլթան Մուրադ III-ի (1574—1595) ժամանակաշրջանում: Սուլթանական այս հրովարտակաները բովանդակում են եկեղեցիների և այլ բարեպաշտական շինությունների քանդման, դավանափոխության, կրոնական ծիսակատարությունների և քրիստոնյա բնակչության ազգային տարազի հարստում եղած սահմանափակման, գինու վաճառքի արգելման վերաբերյալ և այլ բնույթի նյութեր:

Սուլթանական այս հրովարտականներից իմանում ենք, որ սուլթան Աելիմ I-ի ժամանակ Կ. Պոլսի եկեղեցիներից շատերը քանդվել են⁸: Իսկ Սուլթան Մուլեյմանի գահակալության շրջանում, Կ. Պոլսի կադիին ուղղված հատուկ ֆերմանով քանդվել է Սուլու-մանաստրի (Ս. Գևորգ) հայկական եկեղեցուն կից կառուցված շինությունն ու սահմանափակումներ են դրվել կրոնական ծիսակատարությունների վրա. «Իմ բարձր հրամանագիրը առնելուդ պես քանդել տուր շարիաթի սկզբունքներին հակասող շինությունը: Միևնույն ժամանակ թույլ չտաս իրենց հնազույն եկեղեցիներում ծնծղա խփելու, բարձր ձայնով երգելու և գինի խմելու: Պետք եղածի պես զգուշացրու հիշյալ վանքի քահանաներին, որ եթե այսուհետև շարիաթին կամ իմ բարձր հրամանին հակառակ որևէ շինություն կառուցեն, նույնպես ենթարկվելու է քանդման»⁹:

Հարկ է նշել, որ հայկական և թուրքական պատմագրական աղբյուրներում ևս եկեղեցիների քանդման կամ մզկիթի ձևափոխման փաստերը շատ են: Հայտնի է, որ Կ. Պոլսի գրավման հաջորդ օրը Ս. Սոֆիա տաճարը վերածվեց մզկիթի: Նույն ձևակառուցչական արժանացան նաև Ս. Առաքյալների տաճարը և այլ եկեղեցիներ: Սուլթանական հրովարտակով արգելվեց նաև նոր եկեղեցիների կառուցումը:

Այս շարաբաստիկ երևույթը շարունակվեց նաև հետագա դարերում ոչ միայն Կ. Պոլսում, այլև պատմական Հայաստանի քաղաքներում և գյուղերում: Այս կապակցությամբ XVI դարի ժամանակագիր Հովհաննիսիկ Մարեցին նշել է. «Իսկ Ռիֆ (1583) թվականին, դարձեալ հրաման եղև ի Մուրադ խոնդկեարէն զօրապետաց և զօրաց իւրոց՝ ելանել ի վերայ Յէրևանայ և առնուլ զնա: Եւ եկին իսկ և աւերեցին, և բազում եկեղեցիք քակեալ, զբարինս ի շինումն բերդին տանէին, որ և կամեցան զմեծ եկեղեցին, որ Յերկու երեսի ասի, ևս քակել»¹⁰:

Մի այլ ժամանակագիր էրզրումի բերդում կատարված ավերածությունների մասին հայտնել է հետևյալը. «...Բազում եկեղեցիք, զորն երկին և զորն արարեալ են մզկիթ և զորն քակեալ կան: Եւ է գերեզման սրբույն Սահակայ և Յօսեփայ, որ այժմ եկեղեցին անարատ և է ի ձեռս անհաւատիք»: «Եկեղեցիք բազումք, որ այժմ է ի ձեռս Տաճկաց անկեալ կան, զորն արարին ամբարանոյք և զորն քակեալ և քայքայեալ են այժմոյս չեն երևիլ»¹¹:

Իսկ XVII դարի թուրք հանրահայտ ճանապարհորդ էվլիա Չելեբին Կարսում եկեղեցիները մզկիթի վերածելու մասին արձանագրել է հետևյալը. «Կարսում գտնվող «Սուլեյման էֆենդի» մզկիթը մուսուլմանական հավատի ոճով կառուցված, շքեղ արտաքինով լավ սրբավայր է: [Նախկինում] այն քրիստոնեական եկեղեցի է եղել և ձևափոխվել է մզկիթի: «Հյուսեյն քեդիսուղա» մզկիթը նախապես եղել է քրիստոնեական հոյակապ մի տաճար, որը կոչվել է «Կարմիր եկեղեցի», սակայն սուլթանական հրամանագրով այն ևս ձևափոխվել է մզկիթի և այդպես փրկվել անհավատների ձեռքից»¹²:

Սուլթանական ֆերմաններից իմանում ենք, որ նույնիսկ նախկին եկեղեցիների վերանորոգման համար անհրաժեշտ էր դիմել կայսերական դիվանին

⁸ Նույն տեղում, էջ 45:

⁹ Նույն տեղում, էջ 27:

¹⁰ Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան. հ. 2, Երևան, 1956, էջ 244:

¹¹ Նույն տեղում, էջ 563, 564:

¹² Эвлия Челеби. Книга путешествия, вып. 3, М., 1983, с. 197.

և հատուկ թուլլտվություն ստանալ: Մահմեդականներից կազմված հանձնաժողովը ստուգում, արձանագրում էր վերանորոգման ենթակա կետերը և այնուհետև տալիս էր արտոնությունը այն պայմանով, որ նորոգումը կատարվեր նախկին շինության նյութով և միևնույն չափսերով: Այս մասին եկեղեցիների նորոգման վերաբերյալ սուլթան Համիդ I-ի հրովարտակում (22 հունվար 1774 թ.) ասված է. «Նախապէս ուր ուրեք և իցէ քաղաքի մօլլայն և այլք կարգացօղք և տաճիկք մեծամեծք, գնացեալ աջօք իւրեանց տեսցեն և քայքայեցեալ աւերեալ տեղեացն վերահասու լիցին, երկայնութիւնն և լայնութիւնն այնը եկեղեցուցն ըստ բնականի շինութեանն՝ ոչ աւելի և ոչ պակաս՝ զննիցեն՝ տեսցեն և վկայեսցեն և ի գիրս աւանդեսցեն հէօճէթիւ, ապա յետ այնը՝ հրամայեցեալ է զաւերեալ տեղիս նորոգել և շինել ոչ ավելի և ոչ պակաս, մի լիցին ձեռնամուխ ըստայլք, զի մի յետոյ վնասիցին»¹³:

Եկեղեցիների ստուգման վերաբերյալ սուլթան Աբդուլ Համիդ I-ի ֆերմանում նշված է, թե ինչպես մի շարք մուսուլման թուրքեր իրենց շարամիտ նպատակներով օգտագործել են եկեղեցիների վերանորոգման առիթը և անտեղի բողոքներ ներկայացրել կառավարական պաշտոնատար անձանց և մահմեդական հոգևորականությանը: Սրանք, օգտագործելով առիթը, իրենց հերթին անարգել գործադրել են հայ ուսուցիչ նկատմամբ իրենց թշնամանքի ու ատելության կիրթը. «Այլև յոմանս քաղաքս և գիւղս, և յայս նահանգս ոչ գլուխ խոնարհեալ ցուցանելով բարձրագոյն մերոյս հրամանի առ նախանձու, կամ վասն կաշառս առնելոյ և կամ վնասս հասուցանելոյ մաքառին ընդ խղճալի հայոց ազգին և երթեալ առ մօլլայն, առ մօլլատայն և առ մեծամեծ անձինս բառնալով՝ դրդեն զնոսս ի բարկութիւն, զի կամ տուգանք վնաս հասուցեն և կամ զնորոգեցեալ տեղիս քայքայեսցեն, մեծամեծքն տէրութեան իմոյ, հավատացեալ նոցին նախանձախնդիր խօսից՝ զօրացուցանեն զբարկութիւնս իւրեանց, և լինին վրեժխնդիրք խղճալի ըստայն, զի կրկին տուգանք և փող առցեն, և զծարավս ազահութեանց չագեսցուցեն, և եթէ ոչ տայք դտուգանս ասեն ըստայն ի բանտ և ի տանջանս մատնեմք զձեզ, որով երկուցեալ վշտացուցանեն զազգն հայոց, և նոքա ոչ կարացեալ տանին զայսպիսի նեղութիւնն, թողումն գտեղիս և գտունս և փակողին անտի, լինելով ցիր ու ցան և ոմանք ևս ի բանտ արգելեալք և խոշտանկեալք ախ վալութեամբ գրաւեն ցկեանս իւրեանց»¹⁴: Այնուհետև սուլթանական ֆերմանում նշվում է, թե ինչպես նոր պաշտոնի անցած կադիները, մօլլաները, հարստանալու տենչով համակված, զանազան որոգայթներ են հյուսում և տուգանքներով, կաշառակերութեամբ նեղում և վշտացնում հայ ուսուցիչին:

Փաստերը ցույց են տալիս, որ XVII—XVIII դդ. ընթացքում ևս այս կամ այն պատրվակով հիմնահատակ քանդել են մեծ թվով եկեղեցիներ: Բերենք մի օրինակ Թոքաթին վերաբերող թուրքական վավերագրերից. «1720 թ. հոկտեմբերին Թոքաթում Քառասուն[մանկանց] եկեղեցին ընդարձակելու համար երբ կառավարությունից թուլլտվություն է ձեռք բերվում, մահմեդական բնակչությունը զազազելով (22 շեվվալ, կիրակի օրը), եկեղեցու վերանորոգման աշխատանքները սկսելու ժամանակ աղմուկ աղաղակ բարձրացնելով, հարձակվում են, եկեղեցին քանդում, իսկ վանքն էլ այրում»¹⁵: Այս իրադարձությունը արձանագրված է նաև հայկական աղբյուրներում: Թոքաթում պահվող «Պատկերահանի Ավետարան» կոչված մի ձեռագիր հիշատակարանում նշված է. «Ֆէրման բերին գտորք քառասնից եկեղեցիի նորոգելու, առին հրաման և նորոգիցին մինչև ոչ թամամիլն ժողովեցան Թոքաթու այլազգիքն ամենայն գրոհ տուեալ հասին ի սուրբ Քառասունք և քակեցին»¹⁶:

¹³ Մանր մատենագիրք, էջ 250—251:

¹⁴ Նույն տեղում էջ 251:

¹⁵ H. T. Çinlioğlu, Tokat tarihi, 2-ci kısım, 1950, s. 34—35.

¹⁶ Մանր մատենագիրք, էջ 378:

Աստվածատուր, Հովհան և Առաքել ակնեցիների ժամանակագրութեան մեջ (XVIII դար) Ակնում և շրջակայքում եկեղեցիների քանդման մասին խոսելիս նշվում է հետևյալը. «Դարձեալ թուին ՌՄԼԲ (1783) որ մտաք Ստամպոլ Տաճիկներն արգուհալ էին տուեր թագաւորին, թե Զոպի Մուստաֆան նոր ժամ է շինել տուեր. թագաւորն ալ խափուճիպաշին թային արաւ, թէ «գնա տես թէ սուտ է, թէ իրաւ»: Մեծ պասին իբինճի (երկրորդ) կիրակին (մարտի 12-ին) խափուճիպաշին եկաւ, ելաւ ժամուն վրայ. Տաճիկները ոտք կոխեցին, թէ ժամ է պարիսպ չէ: Խափուճին ալ մնացածն ալ քակել տուաւ, քարն աստիս անդին տէվր ընել տուաւ: Շատ ստակ գնաց թե խափուճուն, թէ խատուն, իլամին, կարծեմ թէ ճ(100) քեսէ ստակ գնաց, պատն ալ մնաց այնպէս երեսի վրայ»¹⁷:

XVII դարի հայ ակնանալոր հրապարակախոս և պատմագիր Երեմիա Քյոմուրճյանը ևս սրտի կսկիծով տալիս է թուրք տիրակալների կողմից քրիստոնյա եկեղեցիները քանդելու, թալանելու, հրդեհելու նկարագրութեանները, ինչպես նաև ժողովրդի դառը բողոքը. «Յայն ժամ և սուգ առնոյր երկրին և ողբայր երկիր վասն դիպուածոյ մերում թշվառութեանս, զի ի նոյն ժամու յորում քանդէին տաճարք՝ լինէր որոտ ահագին և արև ծածկեցալ և հողս սաստկագին յոյժ յոյժ մինչև ամենայն սեռից միանգամայն յարտասուս հարեալ՝ զաղաղակս իրեանց յերկինս տարածէին ընդ հողմոյն և փոշոյն, որ բարձրանայր յերկրէ, և ծովն ալեօքն փրփրայր և բարձրանայր ընդ պարիսպն և անձրև գայր»¹⁸:

Շարիաթը քրիստոնյաներին զրկում էր բազմաթիվ ազատութուններից: Քրիստոնյան իրավունք չունէր մահմեդական թաղամասերում բնակութուն հաստատելու: 1809 թ. մեծ վեզիր Յուսուֆ Ջիա փաշան (1809—1811 թթ.) Թորաթից անցնելու ընթացքում երբ տեղեկանում է, որ մահմեդական տներում քրիստոնյա վարձակալներ են ապրում, հրամայում է նման մարդկանց անմիջապես հեռացնել մահմեդական թաղերից, փաստարկելով, որ այդ երկվույթը հակառակ է շարիաթի սկզբունքներին¹⁹: Այս կարգը մի անգամ ևս հիշեցվում է 1872 թ. սուլթան Աբդուլ Ազիզի (1861—1876) արձակած հրամանագրով և շեյխ ուլ-իսլամի հաստատած ֆեթվայով: Այս հրամանագրում շատ պարզ ասվում է, որ «այսուհետև մուսուլմանական թաղամասերում գտնվող տներում ըստ օրենքի պիտի բնակվեն միայն մահմեդականները»²⁰:

Խտրականութուն է եղել նաև բնակարանների կառուցման շափսերի խրնդրում: Այս կապակցութեամբ թուրք տարեգիր Շանի Զադեն գրել է. «...Հնուց ի վեր ընդունված կարգով մուսուլմանների շենքերի երկարութունը 12 արշին էր, իսկ ուսլաներինը՝ 10 արշին, ավելին արգելված էր: Ռեայաների դասի շենքերի համար ընդամենը 10 արշին հատկացված լինելով, այն հողամասը (արսա), որի վրա կառուցվում էր շենքը, շատ էր նեղ, շենքերի միջև ընկած տարածութունը նույնպես նեղ էր, իսկ շենքերը ցածր էին»²¹:

Մահմեդական հոգևոր և աշխարհիկ վերնախավի համար սկզբունքային հարց էր ալլահավատ հպատակների մահմեդականացումը, որի իրականացման համար նրանք գործադրում էին ամեն տեսակի բռնութուն: Օսմանյան պետութեան կողմից նվաճված երկրներում տեղի բնակչութեանը մահմեդականացնելու ուղղութեամբ խիստ և համառարած միջոցներ են ձեռնարկվել: Առաջին հերթին ավատատերերից պահանջվել է հավատափոխ լինել, հակառակ դեպքում սպառնացել են նրանց հողերը բռնագրավել: Բազմաթիվ փաստեր կան, որոնք վկայում են հայ ավատատերերի բռնի մահմեդականացման և հրաժարվողների հողերի հափշտակման մասին:

17 Ման ժամանակագրութուններ, հ. 2, էջ 473:

18 Օրագրութիւն Երեմիա Քյոմուրճեանի. Երուսաղեմ, 1939, էջ 386:

19 Հ. Չինլիօղլու. նշվ. աշխ. 3-րդ մաս, էջ 55:

20 Düstür. Tertip-i evvel. Istanbul. 1300, c. 4, s. 375. (արաբատառ):

21 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. 1, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան. Երևան, 1964, էջ 250:

Ա. Ժելյազկովան, բալկանյան երկրներում բռնի մահմեդականացման քաղաքականության մասին խոսելիս, հենվելով թուրքական ֆերմանների ու այլ վավերագրական նյութերի վրա նշում է, որ նույնիսկ քաղաքային բնակչության ամենացածր խավը դիմել է հավատափոխության, նախ, որպեսզի ազատվի ծանր հարկապահանջությունից և երկրորդ՝ ստանա մահմեդականությունը ընդունողի համար սահմանված նվերներն ու դրամական բարձր պարգևը: Իր հետազոտության վերջում Ա. Ժելյազկովան, ընդհանրացնելով, նշել է այն կարևոր գործոնները, որոնք նպաստում էին մահմեդականության բռնի տարածման քաղաքականությանը: Դրանք են. Սրբազան պատերազմների (չիհադ) ընթացքում մահմեդական կրոնի մոլեռանդության սաստկացումը, գերեզմանությունը, մանկաժողովը և ծանր հարկապահանջությունը²²:

Թուրք պատմաբան Շ. Թյունջերի հրապարակած թուրքական միջնադարյան կանոնադրմաններում ևս պարզ նշվում է, որ մահմեդականության ընդունելու ղեկավարում քրիստոնյան ազատվում էր իսպենջի հարկ վճարելուց. «Ոչ մահմեդական ուսուցիչ սիփահին իսպենջի հարկ է գանձում: Հետագայում եթե ոչ մահմեդականը դավանափոխ լինելով մահմեդականություն ընդունի, սիփահին իրավասու չէ նրանից իսպենջ գանձելու: Միմիայն բեննաքի հարկ կարող է գանձել: Այս մասին գոյություն ունի կայսերական ֆերման»²³:

Իսկ նրանց համար, ովքեր հրաժարվում էին մահմեդականությունից և ձգտում էին կրկին վերադառնալ իրենց նախկին հավատին, սահմանվում էր խիստ պատիժ: Բանտային խոշտանգումներից կարող էր ազատվել նա, ով վերջնականապես կվերադառնար ղեպի մահմեդականությունը:

Ահա թե ինչ է գրում այդ մասին միջնադարի հայ ժամանակագիր Գրիգոր Դարանաղցին. «Տաճիկը մեծ վարձք համարելով զքրիստոնեից ուրանալ զքրիստոս և ի Մահմեդի օրէնս և ի կրօնս դառնալ, զիսաչ և զեկեղեցի բեկանել և խորտակել և հավատացնալք, որ ոչ հաւանին Մահմեդի և շար կրօնից նորին, աղգի-ազգի տանջանօք շարչարեն և հրով ալրեն և համարեն պաշտօն աստուծոյ մատուցանել»²⁴:

Իսկ Մուշից Կ. Պոլիս ուղարկված մի բողոքագրում ասվում է. «Խլաթա մեջ հայ կին մը սաստիկ ծեծելով թևն ու գլուխը ջարգեցին զորով տաճիկցնելու համար»²⁵:

Ձանգվածային բռնի մահմեդականացման լավագույն օրինակ կարող է հանդիսանալ Համշենի բնակչության հավատափոխությունը: Համշենահայերը՝ բուն Համշենում, Կարադերեի շրջանում և Ճորոխի հովտում մահմեդականություն են ընդունել տասնամյակներ տևած համսու պայքարից հետո: Համշենի հայության կողմից մահմեդականությունը բռնի ընդունելու և թրքանալու մասին կարևոր տեղեկություն է տալիս Ղ. Ինճիճյանը. «Բնակիչք երկրին յառաջագոյն հայք էին, այլ ի յելս Ժէ դարուն և ի սկիզբն ԺԸ երրորդին առհասարակ հանդերձ ամենայն շրջակայ գիւղօրէիք դարձան ի տաճկութիւն սակս բնութեան հարկապահանջութեան...»²⁶: XIX դարի վերջին տասնամյակներին արդեն այդ շրջաններում մահմեդականությունն ըստ ամենայնի զանգվածային տարածում էր ստացել²⁷:

22 А. Желязкова. Некоторые аспекты распространения ислама на балканском полуострове в XV—XVIII вв.—Османская империя, сб. статей, М., 1986, с. 113—115.

23 Н. Тüncер. Osmanlı İmparatorlugunda toprak hukuku. Ankara, 1962, S. 77.

24 Գրիգոր Դարանաղցի. Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, էջ 467—468:

25 Մանր մատենագիրք, էջ 493:

26 Ղ. Ինճիճյան. նշվ. աշխ., էջ 396:

27 Լ. Խաչիկյան. էջեր համշենահայ պատմությունից.—«Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 2, էջ 138:

Մահամեղականների և ոչ մահամեղականների միջև խտրականություն կար սովորական կենցաղային հարցերում: Քրիստոսյան չէր կարող իր ցանկացած ձևով հարսանիք կատարել ու հուղարկավորություն անել պատշաճ ծիսակատարություններ: Չէր կարող նաև մահամեղականին հատուկ զգեստներ և կոշիկներ կրել և ձի նստել նրա ներկայությամբ: Անդրադառնալով մահամեղական թուրքերի իրավական դրույթները, Կ. Մարքսը գրել է: «Սոցիալական ինչպիսի դրույթյան մեջ էլ լինի, թուրքը պատկանում է արտոնյալ կրոնին և ազգության: Միայն նա իրավունք ունի զենք կրելու և ամենաբարձր դիրք ունեցող քրիստոսյան պարտավոր է ամենացածր խավին պատկանող մահամեղականին ճանապարհ զիջելու»²⁸:

Հասարակական անբարո Երևույթների և քրեական հանցագործությունների մասին սուլթան Սելիմ II-ի ժամանակ կազմված օրենքի մեջ նույնպես նկատվում են խտրականության փաստեր: Քրեական հանցագործություններին վերաբերող հոդվածների վերջում նշվում է, որ «եթե վերահիշյալները անդի ունենան անհավատների [քրիստոսյանների] հետ, կամ արտոնյալ իրավունքներից օգտվող [օտարականների] հետ, թող որ հարկը նրանցից գանձվի կրկնակի չափով»²⁹:

XVII դարի սկզբներին թուրքիայում և Արևմտյան Հայաստանում ճանապարհորդած Միմենոն Լեհացին ևս մանրամասն նկարագրում է այն հարստահարություններն ու ճնշումները, որոնց ենթակա էր սուլթանական բռնապետության տակ հեծող հայ ժողովուրդը: Միմենոն Լեհացին կենցաղային խտրականության մասին խոսելիս նշել է, որ գավառական քրիստոսյանները զրկված էին լավ շուխա հագնելու կամ մեծ տուն ու այգի ունենալու իրավունքից: Նրանց արգելված էր անգամ ձի, ջորի կամ էլ հեծնելը: Հակառակ պարագային պետք է «սուխա» կոչված դրամական տուգանք վճարեին³⁰:

Ահա թուրքերեն մի փաստաթուղթ (թեզքերե), որը տրված է եղել կարնեցի երեւելի սարաֆ Մահուտի Մանուկ Աստվածատրյանին (Ալահվերտի ամիրա)։ «Օսմանյան պետության բարձր պաշտոնատներում իր մատուցած ծառայություններով համբավ ձեռք բերած, սարաֆների դասակարգին պատկանող հիշյալ [անձնավորությունը] հիվանդ և ծեր լինելու պատճառով սույն թեզքերեն տրվեց: Մահամեղականի ձի նստելու կերպին չնմանվելու պայմանով»³¹:

Թուրքական ֆերմանները միանգամայն հաստատում են, որ հրեայի, հույնի, հայի հագած տարազը թանկարժեք կերպասից կամ ոտնամանը արժեքավոր կաշվից չպետք է լինեին: Թուրքերը գլխապանի գուլնից և ձևից պետք է ճանաչեին, թե մարդիկ որ կրոնի կամ ինչ դիրքի են պատկանում: Հենց այս մասին էլ 1577 թ. սուլթան Մուրադ III-ը Ստամբուլի կազդին անում է հետևյալ կարգադրությունը. «Այսուհետև հրեաների և քրիստոսյանների հագած շուխաները, իշթարլատները³², խալաթները չպետք է պատրաստված լինեն ատլասից, կամկայից³³ և այլ մետաքսյա գործվածքներից: Ֆերաջեները³⁴ նույնպես չպետք է մետաքսից լինեն, այլ աստառացու կտորից: Դյուլբենտը (շղարշ) նույնպես բարակ և նուրբ տեսակի չի լինելու և իրենց գլխի փաթթոցներն էլ՝ ոչ այնքան շքեղ: Մի խոսքով, չպետք է իրենց արտաքինով և շարժուձևերով նմանվեն մահամեղականներին... Նրանք ուլբեր չեն հնազանդվի և կվարվեն հակառակ իմ բարձր հրամանին, ենթարկվելու են պատժի: Անհնա-

28 К. Маркс и Ф. Энгельс. Сочинения. Т. 9, М., 1957, с. 6.

29 Книга законов султана Селима I. Публикация текста, перевод, терминологический комментарий и предисловие А. С. Тверитиновой. М., 1969, с. 35.

30 Միմենոն Լեհացի. Ուղեգրություն. Վիեննա, 1931, էջ 193—194:

31 «Բազմապես», 1934, № 1, էջ 31:

32 Խտալերեն skarlato բառից: Կարմրագույն վենետիկյան շուխա:

33 Մետաքսե գունավոր գործվածք:

34 Լայն թևերով ծածկոցանման հագուստ, որի մեջ փաթաթվում էին մահամեղական կանայք:

ղանդներին կալանքի տակ առնելով կբանտարկես և կտեղեկացնես»³⁵։ Ոչ մահապատժապետներին վերաբերող այս սահմանափակումները հաստատվում են նաև տվյալ ժամանակաշրջանի հայկական աղբյուրներով։ XVI դարի մի ժամանակագրության մեջ արձանագրված է. «Եւ ի Ռիթ (1580) թիւն հայոց նեղացեալ Մուրատ խոնդրեարն ի հրէից և ի քրիստոնէից համարձակութենէն և վերացոյց զփակիղն ի գլխոց նոցա, և սաստիկ հասախ արար և սահմանեաց զսև գտակ դնելն, բայց ի տեղիս կաշառս ետուն և առին զհրաման դնել զփակիղ, լետ ժՐ ամի (1598 թ.) ապա կոստանդինուպոլիս. և այլ բազում քաղաքք մնացին գտակով»³⁶։

Երեմիա Քյոմուրճյանը իր օրագրության մեջ նշում է. «Իսկ յայգուցն մունետիկ աղաղակեալ յամենայն քաղաքս՝ հասաղ արարին զփակեղս քրիստոնէից զխալտ և զկապուտն զի բնավ մի երևեսցի։ Եւ ի մեծամեծաց մինչև ցփոքունս եղին գտակ ի գլուխս և զալփաղ և զհանդերձս ի վատ և ի տգեղ ամենևինք»³⁷։

Հետագա դարերում ևս արգելված է եղել ազգային տարազի ազատ կրուձը. այդ է վկայում XVIII դարի թուրք պատմագիր Վասըֆը։ Նա իր տարեգրության մեջ 1757 թ. դեպքերը շարադրելիս, «ոայաների հագուստի կանոնի» տակ նշում է հուլյն, հայ և հրեա համայնքների սահմանափակմանը վերաբերող սուլթանական հրամանագրի մասին³⁸։ Տարօրինակ է, որ ժամանակակից թուրք պատմաբան Յավուզ էրջանը տարազի խնդրում գոյություն ունեցող այդ խտրականությունը փորձում է մեկնաբանել տնտեսական դժվարությունների հոգի վրա³⁹։ Մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ խտրականություն է եղել կենցաղային ամենապարզ հարցերում ևս։ Օրինակ, միջնադարյան կանոններից մեկում կարգում ենք. «[Բաղնիքում] միևնույն սրբիչը քրիստոնյային և մահմեդականին տալը արգելված է։ Քրիստոնյաներին տրվող սրբիչները պետք է նշանով առանձնացված լինեն։ Վարսավիրները միևնույն ածելիով չեն կարող մահմեդականի և քրիստոնյայի գլուխը ածելիլ»⁴⁰։ Մի խոսքով, շարիաթի դոգմաները չէին կարող հավասարություն դնել մահմեդականի և ոչ մահմեդականի միջև։ Չնայած քրիստոնյան էլ միևնույն պետության հպատակն էր, բայց նա միշտ պիտի ենթարկվեր ու հարկատու լիներ մահմեդականին։

Արևմտյան Հայաստանում մանկաժողովի (դեշիրմե) կիրառման քաղաքականությունը ևս կատարյալ մի պատուհաս էր հայ ժողովրդի համար։ Արևմրտյան Հայաստանի նահանգներում մանկաժողովը սկսել է կիրառվել 1519 թ.։ Այդ մասին Անանուն Սեբաստացին իր ժամանակագրության մեջ նշում է հետևյալը. «Ի թիւն ԶԿԸ (1519) բարկութիւնն Աստուղ սաստկացաւ և սուլթան Սելիմն տղայ ժողովեց ի քրիստոնէից»⁴¹։ Վկայություն կա նաև այն մասին, որ հայերից մանկահավաք կատարվել է դեռևս 1464 թ.։ Մի ձեռագիր հիշատակարանում ասված է հետևյալը. «...իսկ անօրեն արքայն տաճկաց ժողովեաց զքրիստոնէից մանկուսն և երբը ըստամբօլ, իսկ եպիսկոպոսն եկեալ ի հետ մանկացն և երբը զթուղթ ազատութեան հայոց, իսկ անօրէն արքայն ուղինչ համարեցաւ զթուղթն»⁴²։

Մանկաժողովին վերաբերող պատմագրիտական և հատկապես վավերագրային նյութերը Ստամբուլի արխիվներից հավաքել և երկու հատորով հրատարակելու նպատակով

35 Ա. Ռեֆիկ. նշվ. աշխ., էջ 51։

36 Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 516։

37 Օրագրություն Երեմիա Քյոմուրճյանի, էջ 400։

38 Թուրքական աղբյուրներ, հ. Ա, էջ 215։

39 Belleren, 1984, № 188, s. 1142.

40 Հ. Թյուրքեթ. նշվ. աշխ., էջ 62։

41 Մանր ժամանակագրություններ, հ. 1, Երևան, 1951, էջ 169։

42 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան. մասն Բ, Երևան, 1956, էջ 302։

տարակել է թուրք պատմաբան Ի. Ուզունչարչըրըն⁴³։ Հրապարակված հրովարտակներից իմանում ենք, որ մանկաժողովը տեղի է ունեցել չուրաքանչյուր երկու կամ հինգ տարին մեկ անգամ։ Մանկաժողովի պաշտոնին նշանակված վերակացուն սուլթանական ֆերմանը ձեռքին շրջում էր իրեն հատկացված կադրիտիլուններում (վարչադատական միավոր) և հավաքագրում ութից քսան տարեկան ֆիզիկապես առողջ և ամրակազմ քրիստոնյա տղաներին։ Այնուհետև պահակների հսկողության ներքո տղաներին բերում էին Ստամբուլ և հատուկ գրանցման դաֆթարներով ներկայացնում ենիչերինների աղային։ Այստեղ փոխելով նրանց հագուստները, հագցնում էին դեղին գուլյնի դոլամա⁴⁴, իսկ վրայից էլ կարմիր արա⁴⁵։ Մանկաժողովի ենթարկված չուրաքանչյուր խմբին, Ստամբուլ հասնելուց հետո, տրվում էր երկու-երեք օր հանգիստ։ Այնուհետև փոխում էին նրանց անունները, կատարում մահամեղական հավատը ընդունելու երգման արարողություն և ապա ենթարկում թլփատման։ Պարզվում է, որ մանկաժողովի ենթարկված տղաների հագուստն ու ճանապարհածախսը, «կուլակչեսի» (Ստրուկի ակչե) անվան տակ, գանձել են նրանց բնակավայրերից, 80 կամ 100 ակչեի սահմաններում։ Փաստերը վկայում են, որ այս գումարը XVII դարում հասել է մինչև 600 ակչեի⁴⁶։

Վերոհիշյալ արարողությունից հետո հատուկ զորանոցային պայմաններում տղաներին դաստիարակում էին մոլեռանդ մուսուլմանական ոգով և դարձնում ենիչերի։ Մանկաժողովին վերաբերող հրովարտակներից տեղեկանում ենք նաև, որ զինվորական ծառայության փոխարեն հաճախ տղաներին որպես ձրի աշխատուժ աշխատացրել են նավաշինարաններում, անտաններում, շինարարության վրա և այլուր։ Իսկ գեղեցիկ, վայելչակազմ տղաներին օգտագործել են պալատական զանազան աշխատանքներում⁴⁷։

Մանկաժողովի ընթացքում երեխաներին ծնողներից բաժանելու տխուր պատկերը, որը զուգակցվում էր թուրք պաշտոնյաների գործադրած վայրագություններով, մի կատարյալ ողբերգություն էր։ Ծանր զրկանքներից և հատկապես հավատափոխությունից խույս տալու նպատակով հաճախ տղաները փորձել են փախուստ տալ կամ էլ ծնողները կաշառքի ուժով ամեն կերպ ձրեցտել են ազատել իրենց երեխաներին այդ շարաքաստիկ աղետից։ Այսուհանդերձ ալդպիսիների նկատմամբ ձեռնարկվել են կտրուկ միջոցներ և հայտնաբերվածներին կրկին վերադարձրել են ենիչերների աղային։ Այս մասին Կեսարիո բեյին ուղղված սուլթանական հրովարտակներից մեկում ասված է. «Արդ, հրամայում եմ, երբ իմ բարձր ֆերմանը տեղ հասնի, հետամուտ եղիր այս գործին և իմ բարձր հրամանով գեշիրմեի ենթարկված այն տղաներին, որոնք փախուստի դիմելով հավատափոխ են եղել, հավաքիր, անունները գրելով դաֆթար կազմիր և վատահելի անձանց հետ ուղարկիր Ստամբուլ։ Նրանց հսկող անձանց կարգադրիր, որ ճանապարհին խիստ ուշադիր լինեն»⁴⁸։

Ի. Ուզունչարչըրըն ընդունում է, որ բալկանյան ժողովուրդներից բացի հայերն ու վրացիները ևս ենթարկվել են մանկաժողովի։ Նույնիսկ բերում է մի քանի օրինակներ, որտեղ ցույց է տրվում, թե գեշիրմեի ենթարկված հայ պատանիները հետագայում հասել են բարձր պաշտոնների։ Պարզվում է, որ XVI դարի հանրահայտ ճարտարապետ Կոչա Սինանը նույնպես գեշիրմեով հավաքագրված երեխաներից է։ «Ճանրահայտ ճարտարապետ Սինանը,—

43 I. H. Uzunçarşılı. Osmanlı devleti teşkilatından kapukulu ocakları. Ankara, c. I, 1943, c. 2, 1944.

44 Արտահագուստ (թուրքերեն փաթաթել բառից). այդպես է կոչվել, որովհետև փեշի ծայրերը փաթաթվելով մտցվել են մեջքի մեջ։ Հագուստի վերին մասը մինչև գոտկատեղը կոճկվել է, թևերը եղել են լայն, բազուկների մոտ՝ նեղ։

45 Կոշտ բրդյա կտորից վերարկու։

46 Ի. Ուզունչարչըրըն. Նշվ. աշխ., հ. 1, էջ 18։

47 Նույն տեղում, էջ 126։

48 Նույն տեղում։

գրում է Ի. Ուզունչարը՝—սուլթան Սելիմ Ահեղի ժամանակ Կեսարիայից առաջին անգամ մանկաժողովի ենթարկված երեխաներից էր»⁴⁹։ Սակայն Ի. Ուզունչարը ճարտարապետ Սինանի մասին խոսելիս ստույգ չի նշում նրա ազգությունը։ Փաստերը ապացուցում են, որ Սինանը ազգությամբ եղել է հայ։ Այդ հաստատվում է Թուրքիայի մինիստրների խորհրդի արխիվում պահվող մի վավերագրից⁵⁰։ Այս վավերագրի հիման վրա Բարս Թուղաչըն (Բարսեղ Թուղայջյանը) նշում է հետևյալը. «Կոչա Սինանը, որը XVI դարում օսմանյան ճարտարապետական արվեստի զարգացման գործում իր խոր ազդեցությունն է ունեցել, ծագումով եղել է հայ»⁵¹։

Յավուզ էրջանը, աղավաղելով փաստերը, աշխատում է ժխտել պատմաբանների կողմից ընդունված այն թեզը, որ դեշիրմեն, իբր, պատմականորեն մեծ դեր չի խաղացել քրիստոնյաներին զանգվածաբար մահմեդականացնելու և թուրքացնելու խնդրում⁵²։ Յավուզ էրջանը, համենայն դեպս, պետք է որ ծանոթ լիներ Ի. Ուզունչարը շարձանագրած հետևյալ փաստին. «Յըլդըրըմ Բայազեթից հետո հպատակ քրիստոնյա երեխաներին մանկաժողովի ենթարկելու համար կազմվել է մի օրենք։ Այս նոր օրենքով Ռումելիի բոլոր ոչ մահմեդական ժողովուրդները աստիճանաբար պիտի մահմեդականացվեին։ Իսկ մահմեդականացված այդ զինվորների քանակով հզորանալու էր թուրքական բանակը»⁵³։

Իրոք որ, զինվոր հավաքագրելու այս եղանակով օսմանցիները նախ կըրկնապատկում էին իրենց զինվորների քանակը և միևնույն ժամանակ աշխատում էին մեջտեղից վերացնել քրիստոնյաների ամենաառնական տարրերին։ Այս նույն միտքը հաստատում է նաև անգլիացի հանրահայտ պատմաբան Հ. Ա. Գիրբոնսը, նշելով, որ բալկանյան ժողովուրդների շրջանում բանակի համար զինվոր հավաքագրելը իրենց համար առավել մի ծանր հարված էր, քան հարեմի համար աղջիկների հավաքը, որովհետև ընտրում և հավաքում էին ամենավալելակազմ և ուժեղ պատանիներին⁵⁴։

Անկասկած մանկաժողովը մի հզոր միջոց էր թուրք կառավարողների ձեռքին՝ իրենց համաձուլման քաղաքականության իրականացման ճանապարհին։ Այստեղ տեղին է հիշատակել XVI դարի թուրք պատմագիր Մուստաֆա Սելանիկի էֆենդիի եզրակացությունները դեշիրմենի մասին։ Նա իր «Պատմության» մեջ գրել է. «Ժամանակի իշխողները տղաների դեշիրմենի գործում անխիղճ են եղել և նվերի անվան տակ շատ մեծ կաշառքներ են վերցրել, ինչպես գայլն է հարձակվում ոչխարի հոտի վրա, այնպես էլ նրանք ազահորեն հարձակվել են երկրի ուսանների վրա։ Հարուստ ուսաններից խլել են անթիվ անհամար հարստություն, իսկ աղքատ ուսաններից՝ նրանց զավակներին, քանդել են նրանց տունն ու տեղը»⁵⁵։

Հարկ է նշել, որ XVI—XVII դդ. նվաճողական քաղաքականության հետևանքով տեղի ունեցած երկարատև պատերազմական գործողությունները Թուրքիայի և Իրանի միջև ավերիչ հետևանքներ ունեցան հատկապես Հայաստանի համար։

Տվյալ ժամանակաշրջանի հայ պատմիչները, ժամանակագիրներն ու հիշատակարանների հեղինակները, ամենայն իրավամբ, խիստ մոռյալ գտնվեցին

⁴⁹ Նույն տեղում, էջ 20։

⁵⁰ Başbakanlık sarayı, mühimme defterleri serisi, nu. 123. s. 240. Pars Tuğlacı. Osmanlı mimarlığında batılılaşma dönemi ve Balyan ailesi. İstanbul, 1981, s. 1.

⁵¹ Նույն տեղում։

⁵² Sê'u Belleten, 1984. № 188, s. 1137.

⁵³ Ի. Ուզունչարը՝ նշվ. աշխ., հատ. 1, էջ 13։

⁵⁴ H. A. Gibbons. Osmanlı İmparatorluğunun kuruluşu. İstanbul. 1928, s. 100 (արաբատա թուրքերեն թարգմանություն)։

⁵⁵ Sê'u Թուրքական աղբյուրներ, հ. Բ., էջ 137։

են նկարագրում հայ ժողովրդի վիճակը թուրքական և պարսկական տիրապետության տակ: Այդ ժամանակաշրջանը հայկական աղբյուրներում բնորոշվում է որպես «վրդովման» ու «ալեկոծման» շրջան: Բերենք մի հատված Հովհաննես Արճիշեցու տարեգրությունից (XVI դար), որտեղ հեղինակը ականատեսի աչքով նկարագրել է 1531—1534 թթ. թուրքերի և պարսիկների միջև տեղի ունեցած պատերազմները Վանա լճի շրջակա գավառներում. «Աւաղ զիմ հոգիս հայրք և եղբայրք, թէ քանի շարիք գործեցաւ ի յայս հեծեալ շարժութեանցս և ի վրդովմանցս,—գրել է Հովհաննես Արճիշեցին,—քանի քաղաք և գաւառ աւերեցան և քանի վանօրայք և եկեղեցիք քակտեցան, քանի մեծատունք աղբատացան, և վաճառականք թալանեցան, քանի քրիստոնեայք գերի վարեցան, և անմեղ տղայքն ի յանօրէնքն խառնեցան և շնմ կարնայ գրել շարիքն, զոր վերին աշխարհն քաշեց ևս առաւել ծովու բոլորս»⁵⁶: Իսկ Ա. Դավրիժեցին այսպես է սյատկերում այդ պատերազմները. «Եւ ի շարժմանէ այսց երկուց տիեզերակալացս՝ որք զարթուցեալք են ի պատերազմ, եթէ Սարգարն՝ որ եկն յարևմտից, և թէ շահն՝ որ ի կողմս արևելից՝ թէ որքան աւերումն և քանդումն եղև աշխարհի, թէ ի գալն և թէ ի դառնալն, թէ որքան ծանրաբեռն հարկապահանջութիւն եղեալ ի վերայ ժողովրդեանն...»⁵⁷:

Գանձվող բազմաթիվ հարկերի պատճառով ռայայի վիճակը այնքան էր ծանրացել, որ գյուղերից ցիր ու ցան լինելով՝ սկսել էին փախչել այս ու այն կողմ: Տվյալ ժամանակաշրջանի թուրքերեն մի անանուն ուղերձում, որն ուղղված է սուլթան Մուստաֆա II-ին (1695—1703), կարդում ենք. «Իմ տիրակալ, Ձեզ համար շատ կարևորություն ունեցող ռայայի վրայից անհրաժեշտ է վերացնել անսեղի հավաքվող հարկերը: Միևնույն ժամանակ բարձր հրաման արձակեք Օսմանյան կայսրությունում հաշվառում անցկացնելու մասին: Բեյլերբեյիներին և սանջակբեյիներին կայսերական հանձնարարական տվեք, որպեսզի այսուհետև ռայայից չգանձվեն կաֆիան բահայի, սելամիլիայի և նալ բահայի հարկերը»⁵⁸, քանի որ ռայայի վիճակը առանց այն էլ շատ ծանր է»⁵⁹:

Ոչ մահմեդական բնակչությունից գանձվող ամենածանր հարկերից մեկը գլխահարկն էր (չիդիեն): Ամենածանր հարկ լինելով հանդերձ, այն երբեք կայուն չափ չի ունեցել: Թեև թուրքական կանոննամեններում, որպես օրենք, բնորոշված է եղել 25 ալլե գումար, սակայն այն ունեցել է խիստ փոփոխական բնույթ և տարբեր ժամանակներում հասել է մինչև 240 ալլեի: Նախ գլխահարկի հավաքման ընթացքում պաշտոնյաները գործադրել են կոպիտ կամայականություններ, իսկ պատերազմների ընթացքում պետության կողմից ապօրինի գլխահարկ է գանձվել տարին 2 անգամ: Հակոբ Կարնեցին ևս անդրադարձել է Օսմանյան կայսրության կենտրոնական և տեղական իշխանությունների հարկային ծանր քաղաքականությանը: Նա իր ինքնագիր հիշատակարաններում ահա թե ինչ է գրում. «Ով եղբայրք, յորժամ հանդիպեք ի յայս թղթիս մի մեղայգրէք գրիս, զի Տաճիկք խիստ կու նեղացրնին հարկապահանջութեան և խիստ տրտմեալ էի և իբր զերազի գրեցի»⁶⁰:

Երկարատև այդ պատերազմների ընթացքում հայերի և մյուս քրիստոնյա բնակչության համար աղետալի հետևանքներ է ունեցել նաև խաղաղ բնակչության գերեզմանությունը և նրանց՝ որպես ստրուկների վաճառքը Կ. Պոլսում և այլ մեծ քաղաքներում: Էվլիա Չելեբիի տվյալներով ստրուկների առևտրով զբաղվող վաճառականների թիվը միայն Կ. Պոլսում եղել է մոտ 2000, «որոնք Կովկասից, Վրաստանից և Ղրիմից իբրև նվիրական պատերազմի ապրանք, ստրուկներ են բերել և վաճառել»⁶¹:

56 Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 231:

57 Պատմութիւն Աւաքել վարդապետի Դարիժեցւոյ. Վաղարշապատ, 1896, էջ 78:

58 Անօրինական գանձվող հարկեր:

59 Belleten, 1969, № 129, s. 24—34.

60 Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 584:

61 Թուրքական աղբյուրներ, հ. 9, էջ 36:

Միջնադարի հայ պատմիչ Սիմեոն Տիգրանակերտցին ահա թե ինչպես է նկարագրում քրիստոնյաների գերեվարման տխուր պատկերը. «Ի թուականիս հայոց Ռիթ (1580)... բազում զօրս առաքեաց (սուլթան Մուրադը—Ա. Փ.) ի Պարսկաստան... և աւերեցին զբազում երկիր՝ և զամենեսեանսն սուր սուսերի մաշեցին. և ի քրիստոնէից բազում և անթիւ գերի վարեցին... զոմանս սրոյ ճարակ տուին, և զբազումս գերեցին, զայր և զկին, զմեծ և զփոքր, զաղջկունս և զանմեղ տղայս ի քրիստոնէից, և այլ բազում ոճիրս գործեցին, զոր ոչ կարէ ոք ընդ գրով արկանել կամ լեզուով ճատել զդառնութիւն և զնեղութիւն ժամանակիս...»⁶²։

Սիմեոն Լեհացին ևս ակնառեսի աչքով նկարագրել է և տվել Կ. Պոլսի «Եսիր բազարում» հայ գերիների վաճառահանման սրտաճմիրիկ պատկերը. «Որք ծերք են և պառուր նստել են։ Իսկ զաղջուկնս և զմանկունս, զտղայս և զաղվորերես կանայս տէլլայինն առեալ ի ձեռս զնոսս՝ շուրջ ատէին և ծախէին որպէս զծի և զչորի. և զայս ժողովեալ ի տեղի ինչ կամ ի մօլտանի՝ իբրև զոչխարս ի փարախի։ Իսկ գնօղքն եկեալ բանային գերեսս և զծօցս կոյս աղջկանց և զամենայն մարմինս նոցա շօշափէին յոտաց մինչև ի գլուխ, զի մի փոս, խոց կամ այլ ինչ սպի վեր ունիցին։ Եւ նոքա լուռ և անմոտել կային, և զօրս հաճէին՝ գնէին, և որոշեալ ի հօրէ, ի մօրէ կամ ի քվերաց և յեղբարաց բաժանեալ առեալ տանէին ի տուն»⁶³։

Հայ կրօնական առաջնորդներն ու հեղինակություն վայելող անձինք անտարբեր չեն մնացել և ամեն կերպ պայքարել են՝ կանխելու և վերջ տալու հայ բնակչության գերեվարության ողբերգական երևույթին։ Հակոբ Կարնեցին վկայում է, որ 1630 թ. կաթողիկոսի, ինչպես նաև էրզրումի հայ մեծահարուստ վաճառականների ջանքերով դրամի ուժով ազատել են մեծ թվով հայ գերիներ և ուղարկել իրենց նախկին բնակավայրերը⁶⁴, իսկ 1724 թ. (հավանաբար օգոստոս ամսին) հայոց Կոլոտ պատրիարքը բողոք է հայտնել մեծ վեզիր Իբրահիմ փաշային, նկատի ունենալով, որ Կովկասի կողմերից մեծ թվով հայ գերիներ են բերված Կ. Պոլսում վաճառելու համար⁶⁵։ Հայերը ինչպես նաև մյուս ոչ մահմեդական բնակիչները Կ. Պոլսում հաճախ ձգտել են գնել իրենց ազգակից ստրուկներին և պահել իրենց տներում։ Սակայն XVI դարում արձակված սուլթանական հրովարտականներում նկատում ենք, որ Կ. Պոլսի ոչ մահմեդական հարուստներին խստիվ կերպով արգելվել է ստրուկ գնելը։ Օրինակ, 1560 թ. սուլթան Սուլեյմանի արձակած մի ֆերմանում կարդում ենք. «Այսուհետև հրեաների և քրիստոնյաների մոտ գերիները ծառայություն չպետք է անեն, ազատ արձակված գերիները հանձնվելու են մահմեդականներին, իսկ գերի համարվողները վաճառվելու են նույնպես մահմեդականներին»⁶⁶։

Բնորոշ է, որ XVII դարի թուրք պատմագիր Կոչի բեյը իր ժամանակին խիստ քննադատության է ենթարկել օսմանյան թուրքիայում ժողովրդական զանգվածներին ճնշող և շահագործող շրջանների շարաշահումներն ու բռնությունները, հարկերի գանձման գործում արմատացած ապօրինությունները, երկրում ստեղծված անապահովությունը, թալանն ու կողոպուտը, ենիչերիական բանակի և այլ զորամասերի սանձարձակությունները⁶⁷։

Հայ ժողովրդի ծանր դրություն մասին տեղին է հիշատակել նաև 1584 թ. Աղարիա կաթողիկոսի կատարած հետևյալ դառը եզրահանգումը. «Եմք իբրև զմի այգի առանց պարսպի և պահնորդի ցրտեալք աստ և անդ, և եմք գետ ոչ-

62 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայոց նոր վկաները (1155—1843). Վաղարշապատ, 1903, էջ 413—414։

63 Ս ի մ ե ո ն Լ ե հ ա ց ի. նշվ. աշխ., էջ 18—19։

64 Մ անր ժամանակագրություններ, հ. 2, էջ 566։

65 Տևս Գ. Բ ա մ պ ու ր ճ յ ա ն. Հովհաննես պատրիարք Կոլոտ և իր աշակերտները, Ստամբուլ, 1984, էջ 43։

66 Ա. Ռ ե ֆ ի Կ. նշվ. աշխ., էջ 43—44։

67 Թուրքական աղբյուրներ, հ. Բ, էջ 230։

խար ի մէջ գալոց և որպէս զգառինք ի մէջ արիւծոյ, և ամենեքին եմք գերի ի ներքոյ անողորմ տէրանց, որք վասն ամենայն օր տանջեն և շարշարեն զմեզ ազահութեամբ և ոչ կշտանան բնաւ զի տնանկ և աղքատ եմք և ոչ կարեմք շարժել քայլ մի առանց երկիւղի մեծ փորձանաց»⁶⁸,

Այսպէս ուրեմն: Վերևում բերված փաստերը վճռականորեն հերքում են ժամանակակից թուրք պատմաբանների ու քաղաքական գործիչների այն պնդումները, թե իբր օսմանյան սուլթանները հանդուրժողական քաղաքականութիւն են վարել հպատակ ազգերի նկատմամբ, թե քրիստոնյա ժողովուրդները ունեցել են արտոնութիւններ և շեն ենթարկվել ազգային ու կրոնական ճնշման ու հալածանքների:

ПОЛОЖЕНИЕ ЗАПАДНЫХ АРМЯН ПО ФЕРМАНАМ ОСМАНСКИХ СУЛТАНОВ (XVI—XVIII вв.)

А. Д. ПАПАЗЯН

Резюме

В многочисленных ферманах османских султанов, как и в средневековых армянских источниках, содержатся важные сведения о тяжелом положении армянского народа, находившегося под гнетом османского деспотизма.

ՀԱԿՈՐ ՓԱՓԱԶՅԱՆ

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բուլղարիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի Արևելյան բաժնում պահվող թուրքերեն արխիվային նյութերի մեջ առանձին տեղ են գրավում 1723—1735 թթ. օսմանյան զորքերի կողմից Անդրկովկասի նվաճման ժամանակաշրջանի վավերագրերը: Նախապես առիթ ենք ունեցել նշելու, որ դրանց մեջ կան նաև տարբեր ուղղութիւններով առաջացող զինված ուժերի հրամանատարութեան կողմից սուլթանական արքունիք առաքված զեկուցագրեր, արշավանքին մասնակցող զորամասերի և բերդապահ կայազորների մատակարարումների, ռազմական ծախսերի և զինվորականութեանը տրվող ռոճիկների հաշվետվութիւններ, բնակչութեանից գանձվող հարկերի ընդարձակ և համառոտ ցուցակներ և այլ վավերագրեր, որոնց մեջ առկա փաստական նյութը հնարավորութեամբ է տալիս ավելի համակողմանի ուսումնասիրութեան ենթարկելու մեր ժողովրդի պատմական ճակատագրում բախտորոշ նշանակութեամբ ունեցող այդ ժամանակահատվածի քաղաքական և սոցիալատնտեսական պատմութեան, ցարդ դիտական մեկնաբանման շարժանացած որոշ հարցեր¹:

Այս նյութերի վրա աշխատելիս մեր ուշադրութեամբ գրավեցին «Թիֆլիսի Ֆոնդում» գրանցված 1723 թ. երեք ընդարձակ վավերագրեր, որոնցից առաջինը Թիֆլիսի ուղղութեամբ շարժվող օսմանյան զորքերի ընդհանուր հրամանատար, էրզրումի վալի, սարասքար Իբրահիմ փաշայի շտաբին առընթեր, Շարի ատյանում հաստատված մի համաձայնագիր է, երկրորդը՝ այդ համաձայնագրի հիման վրա Արքունի դիվանից սուլթան Ահմեդ 3-րդին ներկայացված զեկուցագիր, իսկ երրորդը սուլթանի պատասխան-հրովարտակը ուղղված Իբրահիմ փաշային²:

Համաձայնագիրը կնքված է սարասքար Իբրահիմ փաշայի և Կայդուլիի շրջանի 31 հայկական գյուղերի համայնքների միջև, հիշք. 1135 թ. շաբան ամսի 29-ին (1723 թ. հունիս 4), առ այն, որ Զրլըբի էյալեթի Օրուջայա կոչվող բանակատեղում օսմանյան զորքերի հրամանատարութեանն են ներկայացել հիշյալ 31 գյուղերի քյադխուղաները և հպատակութեամբ հայտնելով դեպի Թիֆլիս արշավող զորքերի հրամանատարին, ապահովութեան (աման) խոստում են ստացել նրանից: Այս կամավոր հնազանդութեան հա-

1 Հ. Փափագյան, Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը, «ՊԲՀ», 1984, № 3, էջ 196—199.

2 Կիրիլ-Մեթոդի ժող. գրադարան (այսուհետև՝ ԿՄԺԳ), OAK, № 198/14:

մար նրանց թույլ է տրվել երեք տարի շարունակ օսմանյան իշխանություններին վճարել միայն ստորին չափի գլխահարկ (ջիզյա), իսկ երեք տարին լրանալուց հետո, մյուս զիմմի ռայաթների նման, պիտի վճարեին եռաստիճան (ստորին, միջին և վերին) չափերով, միաժամանակ կատարելով նաև խարաջ-ի մուվազաֆայի և ռուսում-ի կանունիյայի պարտավորությունները:

Այս որոշման արձանագրությունը (հուլիսի 1723-ի շարի'յա), Իբրահիմ փաշան ուղարկել է Արքունի դիվան, որտեղ, այդ համայնքներին երեք տարի արքունի հարկերից ազատելու և միայն ստորին չափով ջիզյա գանձելու վերաբերյալ, հիշք. 1135 թ. ռամազան ամսի 29-ին (1723 թ. հուլիս 3) կազմվել է ընդարձակ մի զեկուցագիր, խնդրելով այն հաստատել սուլթանական ֆերմանով: Նույն թվականին հրատարակվել է նշված հրովարտակը, որտեղ համարյա նույնությամբ կրկնված է ներկայացված զեկուցագրի բովանդակությունը:

Պահպանված այս երեք վավերագրերից առաջին երկուսը՝ Շար'ի ատյանում կազմված արձանագրությունն ու Արքունի դիվանի զեկուցագիրը— բնագրեր են, իսկ ֆերմանը՝ այն, այսպես կոչված, սեագիր օրինակն է, որի հիման վրա գրվել է թուղրայով զարգարուն ֆերմանն ու ուղարկվել Իբրահիմ փաշային առ ի գործադրություն: Հատկանշական է, որ բնույթով տարբեր այս փաստաթղթերը, վերաբերելով նույն հարցին, Արքունի դիվանում պահպանվել են միատեղ և ներկայումս կիրիլ և Մեթոդի ժող. գրադարանի Արևելյան բաժնում գրանցված են նույն համարի ներքո:

Կայդուիիի նահան կամ մահալը համապատասխանում է պատմական Հայաստանի Գուգարաց աշխարհի Աշոցք գավառին, որի Սեֆյան Իրանի տիրապետության շրջանի վարչական բաժանմամբ ենթարկվում էր Արևելյան Վրաստանի վախուժյանը, հանդիսանալով Թուրքիային սահմանակից գավառներից մեկը: (Ներկայումս Հայաստանի Հանրապետության Աշոցքի շրջան):

Նախորդ ուսումնասիրություններում վերլուծելով 1724—1735 թթ. Անդրկովկասի ռազմակալման տարիներին օսմանյան զինվորական իշխանությունների կողմից կիրառվող հարկային քաղաքականության բնույթը բացահայտող վավերագրերը, նշել ենք, որ դրանք մեծ մասամբ վկայում են սկզբնապես ցուցաբերվող մեղմ ու սիրաշահող վերաբերմունքի մասին, որը նպատակ ուներ դյուրացնելու այդ երկրամասի արագ նվաճումը, որից հետո արդեն անցկացվող հաճախակի մարդահամարների, հատկապես բնակչության և եկամտաբեր ստացվածքների ու մուկաթիանների հաշվառման և վերստուգման (յոբլամա) փաստաթղթերն ու համառոտ և ընդարձակ մատյանները (դեֆթեր) պատմում են հարկերի ու տուրքերի, հատկապես քրիստոնյաներից գանձվող գլխահարկի (զիջյա), բազմապատիկ չափերով ավելացման և բնակչության սանձարձակ կողոպուտի ու հարստահարման մասին⁸:

Օսմանյան զորաբանակների, նվաճված երկրներում ծավալած ավերի ու ավարի, համատարած կողոպուտի և բնակչության զանգվածային գերեզմա-

8 Հ. Փափազյան, Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, «Բանբեր Մատենադարանի», Մ 5, Երևան, 1960, էջ 440—446. տե՛ս նաև նույնի՝ Սոֆիայի կիրիլ և Մեթոդի ժող. գրադարանի օսմանյան զինանական վավերագրերը, էջ 197—199:

րուծյան բազում դեպքերի ականատես և ականջալուր սահմանամերձ այս շրջանի հայ ազգաբնակչությունը, տեղեկանալով սկսվող արշավանքի մասին, շտապել է կանխել սպառնացող վտանգը: Այդ իրադարձություն մասնաբաժան նկարագրությունը պարունակող այս վավերագրերը թույլ են տալիս ենթադրելու, որ սկզբնական շրջանում այդ նրանց հաջողվել է: Սուլթանի հրովարտակում շարադրված հրահանգներում դրսևորված է օսմանյան իշխանությունների գոհունակությունը, որից ելնելով, կարգադրված է մեղմ և զգուշավոր լինել նրանց նկատմամբ, որպեսզի մյուս վայրերի ժողովուրդը ևս հետևի նրանց օրինակին:

Թե ինչ չափով են իրագործվել այդ հրահանգները, մեզ ոչինչ հայտնի չէ: 1724—27 թթ. Հայաստանում և Վրաստանում թուրք նվաճողներին ցույց տրված ուժեղ դիմադրությունը, Արարատյան երկրում, Երևանում, Սյունիքում, Արցախում և այլ վայրերում մղված հերոսական կռիվները վկայում են այն մասին, որ Կայսրուլի բնակիչների նախաձեռնությունը ոչ միայն օրինակ չի հանդիսացել, այլ ընդհակառակը, որտեղ որ հնարավոր է եղել կազմակերպված հանդես գալ, ժողովուրդը կատաղի դիմադրություն է ցույց տվել, շնավատալով ապահովության (աման) մասին օսմանյան իշխանությունների կողմից կատարվող հայտարարություններին ու հավաստիացումներին:

Մենք չգիտենք նաև, թե ինչպիսին է եղել այդ զուտ հայաբնակ շրջանի բնակչության վիճակը օսմանյան ռազմակալման հաջորդ տարիներին: Կայսրուլի վերաբերյալ սկզբնաղբյուրների հետագա տեղեկությունները վերաբերում են 1735 թվականին, երբ իրանական զինված ուժերը, որոնց միացել էին նաև Արցախի հայ մելիքների և Արարատյան երկրի հայության զինված ջոկատները, նադիր-կուլի խանի զլխավորությամբ Եղվարդի մոտ պարտության մատնելով Արդուլա-փաշայի հրամանատարության տակ կովող օսմանյան զորքերին, անցան սահմանն ու գնացին պաշարելու Ղարսի բերդը⁴:

Նադիրի պալատական պատմիչներ Մուհամադ-Քյազիմի և Միրզա-Մուհամադ Մեհդի-խանի վկայությամբ, Ղարսի պաշարման օրերին Նադիրի զորքերը ասպատակ էին սփռել շրջակա գավառներում հասնելով մինչև էրզրում, Կաղվան և Բայազետ⁵: Ղարսից վերադառնալուց հետո, երբ նադիրը պատրաստվում էր արշավել Քիֆլիս, նա իր զորքերին կարգադրել է ասպատակել նաև Տայոց և Գուգարաց աշխարհի շրջանները: Պատմելով այս մասին, Արդահամ կրետացիները գրում է. «Այլ և ասպատակա արձակեաց երկուց կողմանց, մինչ գնայր ի Ղարս՝ յաջ և յահեակ, զմի կողմն ի վերա Պայազիտո՛ւ՝ կրկին, և զմիսն կողմն ի վերա Կաղզուանայ և ինքն ի միջի: Յորում գնացեալ քանդեցին զերկիրն, այրեցին զշինուածսն, գերեցին զմարդիկը և զանասունս և բազում աւարաւ դարձան ի բուն բանակն՝ ի Ղարս: Եւ անտի կրկին արձակեաց ասպատակս, որ գնացեալ հասին մերձ Քէղղուպոյսոյ: Եւ գերեցին զնարիմանու նահանգն, զՋաւախէթու, զՉլտրու

⁴ «Հայ ժող. պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 183—184:

محمد كاظم، نامه عالم آرای نادری، جلد اول، مسكو، ۱۹۶۰، ص ۳۱۴-۳۱۶
⁵ محمد مهدي خان استا بادی، تاریخ نادری، تبریز، ۱۲۸۴، ص ۸۹

և գՂայիդուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ: Եւ քշեցին զայր և զկին, զծեր և զտղայ և տարան ի Խորասան՝ թուով ՉՌ (6000), որպէս և լսեմք»⁶:

Այնուհետև Կրեւտացին ավելի մանրամասն պատմում է Քիֆլիսի և Երեւմանի հայության գերեզման մասին, նշելով իր ջանքերը, որոնց շնորհիվ հնարավոր է եղել 3000 թուման կանխիկ դրամ և 3000 սոմար ցորեն հատուցելով կանխել թիֆլիսեցիներին աքսորը: Իսկ Երեւանից 300 տուն բռնի ուղարկվել է, մյուս բնակիչներից փոխադրական միջոցներ ու այլ օգնութիւն հավաքելով և տալով մեկնողներին⁷: Ինչ վերաբերում է Կայդուլի բնակչության աքսորին, ապա ինչպես երևում է այն իրագործվել է ամենայն խստութեամբ, որը տեղի է ունեցել Կրեւտացու Քիֆլիսում Նադիրին ներկայանալուց բավական առաջ և մեծ արագութեամբ:

1735—36 թթ. Նադիրի հրահանգով Անդրկովկասից քշված բնակչության մեջ մեծ թիվ էին կազմում նաև դաշտային Ղարաբաղում, Բարգուշատում և այլուր բնակվող ադրբեջանական այն ցեղերը, որոնք օսմանյան ռազմական մարտերի շրջանում հնազանդվել էին նվաճողներին և նույնիսկ համագործակցել նրանց հետ, ճնշելու Արցախում և Սյունիքում մարտնչող հայությանը: Գեպի Խորասան աքսորվեցին Օթուզիթի (երեսուն երկու), Սարուջալի և Զիվանշիր կոչվող ցեղային միավորումների մեջ մտնող բազմաթիվ ցեղախմբեր (այմաղներ), ինչպես նաև Բարգուշատի Ամիրանբարի, Քարիլու և այլ ադրբեջանական համայնքներ⁸: Ուստի անհավանական չէ, որ Կայդուլի բնակչության, փաստորեն, հարկադրյալ անձնատվության և Իբրահիմ փաշային հնազանդութիւն հայտնելու հանգամանքը ևս հիմք հանդիսացած լինի այս անողոր բռնի տեղահանութեանն ու աքսորին:

XIX դ. վերջերի դրական-հասարակական գործիչ Ն. Հ. Գորոյանը, իրանահայ համայնքների պատմությանը նվիրված աշխատության մեջ, խոսելով Նադիրի օրոք տեղի ունեցած այս բռնի տեղահանութիւնների մասին, հաստատում է զանգվածային աքսորները Խորասան, տողատակում տալով հետևյալ ծանոթագրութիւնը. «Թեև այս գաղթականութեանց հիշատակը Զուղայի հայոց ողբերգական երգերի մեջ պահված է, սակայն ոչ մեկ գրիչ որևէ տեղեկութիւն չէ թողել, զեթ ես որևէ բան չեմ գիտեր այս բազմաթիվ հայոց ճակատագրի մասին»⁹:

Իրողութիւնն այն է, որ այս աքսորից հետո Խորասանում հայաբնակ կենտրոններ չստեղծվեցին, ինչպես այդ եղավ XVII դ. սկզբի Շահ Աբասի հրամանով կատարված մեծ գաղթից հետո կենտրոնական Իրանի որոշ շրջաններում: Այդ նշանակում է, որ կորուստներ տալով, ցաք ու ցրիվ տեղ հասած հայութիւնը, ենթարկվելով բռնի հավատափոխության, ձուլվել է ու անհետացել:

Հրապարակվող թուրքերեն վավերագրերը վերաբերելով մեր հանրապետության ժայռամասային շրջաններից մեկի ոչ այնքան հեռու անցյալին, գալիս են հաստատելու ողբերգական այս իրադարձութիւններին անմիջապես նախորդող ժամանակներում, պատմական Աշոցքի գերազանցապես հայաբնակ լինելու փաստը: Նրանք միաժամանակ որոշակի գիտական հետա-

⁶ Абраам Кретацу, Повествование, Ереван, 1973, հայ. բնագիր, էջ 67:

⁷ Նույն տեղում, էջ 71:

⁸ Ան, Երկերի ժողովածու, հ. III, գիրք Բ, Երևան, 1973, էջ 364:

⁹ Ն. Հ. Գորոյան, Պարսկաստանի հայերը, Քեհրան, 1968, էջ 257:

քրթրություն են ներկայացնում որպես Օսմանյան կայսրության նվաճողական նկրտումներն ու նվաճված վայրերում կիրառվող հարկային քաղաքականության բնույթը բացահայտող հավաստի պաշտոնական փաստաթղթեր:

Ստորև հրապարակում ենք միայն Շարի ատյանում գրի առնված համաձայնագրի (հոջջաթ) և սուլթանական հրովարտակի հայերեն թարգմանությունն ու թուրքերեն բնագրերը, դուրս թողնելով Արբունի դիվանի զեկուցագիրը, որի բովանդակությունը, ինչպես ասվեց, համարյա նույնությամբ կրկնված է հրապարակվող հրովարտակում:

I

Հաստատում եմ ինչ գրված է այստեղ:

Գրեց Աստոն փառփի առաջ տնանկ, Թիֆլիսի բանակի կազի, Սեյիդ Մուհամմադը, Վերին կարգադրությամբ:

— Կնիֆ —

Սույն գրության պատճառը հետևյալն է.

Ներկայումս բարձրագույն հրամանով Թիֆլիսի բերդի զրավման հրահանգ ստացած հաղթական զինվորների հրամանատար, սույն արձանագրության առիթ հանդիսացող, ասսիաշնորհ վեզիր, էրզրումի մուհաֆիզ, նորին սրբություն, գերերջանիկ սիլահդար Իբրահիմ փաշան, — թող Աստված բարեկեցություն շնորհի նրան, — հիշյալ բերդից շորս օրվա ճանապարհի վրա գտնվող Չըլզըրի էյալեթի Օրուջայա կոչվող վայրում կանգ առնելուց հետո, եպարքոսական ատյան հաստատեց, որտեղ լուսավոր Շարի նիստին ներկայացան Թիֆլիսի բերդին ենթակա վայրերից, Կալդուլիի նահայում գտնվող՝

Ալբուլաղ կոչվող գյուղի քյադխուդա՝ Ավագի որդի Բաբին,
Ջիգարաշեն կոչվող գյուղի քյադխուդա՝ Ուլիբեկի որդի Թամազը,
Թարքաշ գյուղի քյադխուդա՝ Մխիի որդի Մինասը,
Վերին Օրթուլի կոչվող գյուղի քյադխուդա՝ Գրիգորի որդի Անանիան,
Ներքին Օրթուլի կոչվող գյուղի քյադխուդա՝ Շահնազարի որդի Օսեփը,
Ղըզըլզոշ կոչվող գյուղի քյադխուդա՝ Նարիմանի որդի Բաբին,
Ղազանչի կոչվող գյուղի քյադխուդա՝ Պողոսի որդի Սարգիսը,
Խանբուլաղ կոչվող գյուղի քյադխուդա՝ Վարդանի որդի Օհանը,
Մելիք կոչվող գյուղի քյադխուդա՝ Մելիքի որդի Մըսթըրը,
Կուռի-չայ կոչվող գյուղի քյադխուդա՝ Բաջուրի որդի Ասլանը,
Ղուկաս կոչվող գյուղի քյադխուդա՝ Ջանիբեկի որդի Շահրիմանը,
Օքուսթաբ կոչվող գյուղի քյադխուդա՝ Առաքելի որդի Սալիմը,
Դավագոյզ կոչվող գյուղի քյադխուդա՝ Ավանեսի որդի Ղարագոյզը,
Ալահվերդի կոչվող գյուղի քյադխուդա՝ Մխիթարի որդի Դանիելը,
Ղըզըլզոշ կոչվող գյուղի քյադխուդա՝ Գրիգորի որդի էմինը,
Քեշիշթափա կոչվող գյուղի քյադխուդա՝ Տեր Հակոբի որդի Գրիգորը,
Կազանչի կոչվող գյուղի քյադխուդա՝ Խաչատուրի որդի Ավագը
և ավագներից Կիրակոսի որդի Բաբիջանը,

Վալիբջանդ կոչվող գյուղի քյադխուդա՝ Վալիդի որդի Ղազարը,
 Մըսըրբջանդի կոչվող գյուղի քյադխուդա՝ Դամիրի որդի Սարգիսը,
 Սարգիս կոչվող գյուղի քյադխուդա՝ Կոստանի որդի Արուսթինը,
 Թաթոս կոչվող գյուղի քյադխուդա՝ Թաթոսի որդի Օսեփը,
 Դադրասբջանդի կոչվող գյուղի քյադխուդա՝ Օսեփի որդի Կիրակոսը,
 Քեշիշբջանդի կոչվող գյուղի քյադխուդա՝ Քեշիշի որդի Ներսեսը,
 Վերին Ղվարզվար կոչվող գյուղի քյադխուդա՝ Ղվարզվարի որդի
 Սարգիսը,

Ներքին Ղվարզվար կոչվող գյուղի քյադխուդա՝ Մարտիրոսի որդի
 Շահրիմանը,

Քուսիբջանդի կոչվող գյուղի քյադխուդա՝ Մարտիրոսի որդի Գրիգորը,

Դուրզլի կոչվող գյուղի քյադխուդա՝ Դորջանի որդի Յավրուն,

Ղագիբջանդի կոչվող գյուղի քյադխուդա՝ Սարբիջանի որդի Շահիջանը,

Բուլաղբջանդի կոչվող գյուղի քյադխուդա՝ Ղարագյուզի որդի

Հախնազարը,

Սուֆի կոչվող գյուղի քյադխուդա՝ Գասպարի որդի Մեհհարը և

Բեկբջանդի կոչվող գյուղի քյադխուդա Թորոսի որդի Սարգիսը, նշված նահիայի վերոհիշյալ գյուղերի բնակիչների և ռայաթների ընդհանուր լիազորութեամբ, վերոհիշյալ նորին սրբութուն վեղիրից ապահովութուն (աման) խնդրելով, պարտավորվեցին, սույն օրհնյալ թվականից սկսած, երեք տարի շարունակ, բոլոր ջիզայի ենթակաները, իրենց ջիզյան ստորին շափով, վճարեն թագավորական իշխանութեան կողմից նշանակված ջիզյա գանձողներին, իսկ երեք տարին լրանալուց հետո, վճարումները կատարեն երեքդասյան սկզբունքով և իրենց ձեռքում գտնվող հողերի համար, նշանակված զաբիթներին ու հաբիմներին խարաջ-ի մուվազզաֆա և ռուսում-ի կանունիյա վճարելով և թագավորական իշխանութեան ներքո ապահովութուն վայելելով, շարունակեն ապրել իրենց նախկին գյուղերում: Իսկ նրանց պատկանող հողերը, առաջվա նման մնան իրենց ձեռքում, այն պայմանով, որ հողային և զիմմիութեան հարկերը հատուցեն այն անձնավորութեանը, որը իշխանութեան կողմից նշանակված կլինի այդ հարկերը հավաքողի պաշտոնում:

Հիշյալ նորին սրբութուն վեղիրը, ըստ վերոգրյալի, թագավորական հովանավորութեան ներքո գտնվելու պայմանով, նրանց ապահովութուն (աման) շնորհեց և այլ զիմմիների դասի շարքն անցկացնելու վերաբերյալ իրենց իսկ խնդրանքով արձանագրվեց:

Գրվեց 1135 թ. մեծագոր շաբան ամսի 29-ին (1723 թ. հունիս 4):

Իրողութեան վկաներ.

Ներկայումս Ղարսի մուհաֆիզ, մեծապատիվ Մուստաֆա փաշա,

Ալազլուզ անունով հայտնի, Յուսուֆի որդի, մեծապատիվ Ահմադ-աղա,

Բարձրագույն դասն ղոնապանների գլխավորը,

Միրալայ՝ Շահնավաղզադե Սուլեյման,

էրզրումի միրալայ՝ Մուստաֆա-բեկ,

Բայբուրդի միրալայ՝ Աբդուլլա-աղա,

էրզինջանի միրալայ՝ Սուլեյման-աղա,

Քելքիթի միրալայ՝ Օսման-աղա,

Միրալայ՝ Հասան-աղա,
Իբրահիմի որդի, միրալայ՝ Օմար-աղա,
Իսպիրի միրալայ՝ Մահմուդ-աղա,
Դեբջանի միրալայ՝ Օմար-աղա:

Հրամայված է սուլյն շարիաթական վճիռը արձանագրել և պահել գլխավոր հաշվապահությունում:

27 ռամազանի: 1135 թ. (1723 թ. հուլիս 1):

II

Թիֆլիսի ուղղությամբ սարսաքար նշանակված, էրզրումի վալի, Իբրահիմ փաշային՝ հրաման.

Դու, որ հիշյալ վեզիրն ես, հրամանատարության տակ գտնվող իսլամական հաղթական զինվորների հետ, հրահանգված ուղղությամբ շարժվելով և ուղևորվելով, երբ հասել ես Թիֆլիսի կողմերը, Թիֆլիսին ենթակա վայրերից, Կայդուլի կողմող նահիայի ռայաթներն իրենք և նրանց լիազորները, պուղերի քյադիուղաներն ու ավագները (կոջաբեկիներ) եկել են քեզ ընդանաջ և մեր արքայական բարեշնորհությունից մեղմություն և ապահովություն (իսթիման) խնդրելով, մեր բարձր տերության հովանու տակ ապաստանելու ցանկությամբ, ընդունել և հանձն են առել մեր զիմմիներն ու ռայաթները լինել: Որով և, սուլյն օրհնյալ տարվանից սկսած, մինչև երեք տարի, օրենքով չիզայի ենթակա եղողները, իրենց ռայաթության պարտքը հանդիսացող օրինական չիզյան, բոլորը միահավասար, ստորին շափով պետք է վճարեն նրանց, ովքեր նշանակված կլինեն այն զանձելու: Իսկ երեք տարին լրանալուց հետո պարտավորվում են վճարել երեքդասյան սկզբունքով՝ ըստ կարողության, և իրենց ձեռքում գտնվող հողերի համար էլ օրինական և ռայաթներին վերաբերող մյուս տուրքերը (ռուսումաթ-ի կանունիյա և ռուսում-ի ռախիյաթ) ամեն տարի պետք է հատուցեն զաբիթներին: Այս պայմանով, նրանք բոլորը իրենց կամքով և հոժարությամբ, սրբազան շարի ներկայությամբ, օրինավոր վճռագիր (հոջաթ-ի շարիյա) են տվել, որն ուղարկվել է մեր երջանկության դուռը, և քո կողմից ևս այդ մասին զեկուցվել է ու տեղեկացվել:

Քանի որ, վերոհիշյալ Կայդուլիի նահիայի ժողովուրդն ու ռայաթները մեր բարձր տերության հովանավորությանն են ապավինել և հանձն են առել դառնալ մեր զիմմիներն ու ռայաթները, ուստի, մեր արքայական բարի սովորության համաձայն, նրանց վերցնում ենք մեր հովանու ներքո, նրանց վրա տարածելով մեր խնամքն ու հոգատարությունը: Մեր գթության շվաքում և արքայական ափի մեջ նրանց պատսպարումն ու հանգիստը, մեր արքայական գործերի և թագավորական պահանջների թելադրանքն է: Մանավանդ, որ հիշյալ նահիայի ժողովուրդը առաջինն է, որ առանց տատանվելու ապաստանել է մեր արքայական ողորմածությանը և զիմմիություն ու ռայաթություն են ընդունել և մյուսներից կանուխ է շտապել անցնել մեր հավերժական տերության հնազանդության և հպատակության ներքո: Ի տրիտուր նրանց կողմից դրսևորված այս հնազանդությանն ու հպատակությանը, ներկայումս իրենց ձեռքում գտնվող մուլքերն ու հողերը պետք է թողնել նրանց ձեռքում և հանձն առած ստորին շափի չիզայից բացի,

երեք տարի շարունակ նրանք հողային հարկից և ուսաթններից զանձվող այլ օրինական տուրքերից (ռուսումաթ-ի կանոնիչյա) ազատված են համարվում, և մինչև նշված ժամկետի լրանալը միայն տարին մեկ անգամ ստորին չափով իրենց ջիզյան պիտի հատուցեն:

Սակայն դու, որ հիշյալ վեզիրն ես և այդ կողմերի հանրության բոլոր գործերը ամբողջապես քո աստվածընկալ կամքին է հանձնված, հիշյալ նահիայի ուսաթնների տված օրինավոր համաձայնագրում արձանագրված հանձնառության համաձայն, սույն օրհնյալ տարում նրանցից պահանջվող օրինական ջիզյայի գանձումը նախընտրում ենք քեզ հանձնարարել, նպատակահարմար չգտնելով ուրիշ մեկին գործուղել, քանի որ հիշյալ նահիան նոր միայն գրավված մի երկիր է, իսկ ուսաթնները, վախից, դեռևս իրենց խնդիրքում վարանոտ:

Արդ, քանի որ նրանց ջիզյայի գանձման գործի կարգավորումը, անհրաժեշտաբար քեզ վրա է դրված, վերը նշված ձևով, ապահովության (իսթիման) քղանցքին ապավինելով, մեր Բարձր տիրութունից ապաստան խնդրած, Թիֆլիսին ենթակա Կայդուպի նահիայի ժողովրդի մեր կողմը ուղարկած վերահիշյալ օրինական համաձայնագրում գրված կարգով, հատուցումը հանձն առած ստորին չափի ջիզյանների գանձումը սկսել 1135 թվականի սկզբից և ըստ իրենց խոստման, հիշյալ ուսաթնների օրինական ջիզյան մինչև նշված ժամանակի ավարտը, իրենց հանձնառության համաձայն, երեք տարի շարունակ գանձել համահավասար, ստորին չափով, իսկ երեք տարին լրանալուց և որոշված ժամանակը ավարտվելուց հետո, օրինական կարգով նրանց վզին դրված ջիզյան երեքդասյան կարգով պետք է նշանակվի և ըստ կարողության գանձվի: Հրամայված է, նշված ժամկետը դեռ ավարտին չհասած, հանձնառության հակառակ, ստորին չափի ջիզյայից ավելի ոչ մի ակշե չպահանջել:

Կարևոր է նաև, որ հիշյալ նահիայի ժողովուրդը, բոլոր տեսակի ոտընձգութուններից, ճնշումներից և ապօրինութուններից պահպանված լինի, որի համար էլ նրանց ջիզյանները գանձելու համար անհրաժեշտ չենք համարում առանձին ջիզյա գանձող (ջիզյադար) նշանակել և առաջմ ջիզյայի թղթեր ևս չենք ուղարկում: Ստանալով սույն մեծաշուք հրամանագիրը, հիշյալ ուսաթններից 1135 թ. ստացվելիք ստորին չափի ջիզյան գանձելու համար, քո կողմից և անձամբ քո հայեցողությամբ, ուսաթններին խնամող, չափավոր վստահելի և ինքնուրույն մարդիկ կնշանակես, և եթե հիշյալ նահիայում ջիզյայից ազատելու առիթ լինի, որևէ հիվանդությամբ հիվանդներից բացի, օրենքով որքան ջիզյայի ենթակա զիմմի ուսաթններ կան, իրենց հանձնառության համաձայն, յուրաքանչյուրից երկուսուկես ղուրուշ, համահավասար, ստորին չափով, օրինական ջիզյան ապահովաբար գանձիր և պետական(միրի)թերթիկների փոխարեն, ջիզյան վճարած լինելու մասին վկայող, քո իսկ կնիքով կնքված, թղթեր հանձնիր, և երբ այս ձևով ջիզյանները գանձես, հավաքված ջիզյան, առանց մի ստակը պակասելու կամ պահելու, ճշտությամբ գրանցելուց և լրացնելուց հետո, կնքված և ստորագրված մատյանը մեր երջանկության դուռը կուղարկես: Յուրաքանչյուր անձից ջիզյայի դիմաց գանձվելիք երկուս ու կես ղուրուշը լրիվ հատուցելուց հետո, հարկահավաքության, գրագրության (թահսիլդարիչյա և քայթիբիչյա) անվան տակ, կամ այլ պատուակով, ոչ մի ակշե և ոչ մեկ ստակ չվերցնես

և ուրիշ ոչ ոքի ևս թույլ շտաս վերցնել և խնամք տանես նրանց ապահովությանն ու հովանավորվածությանը:

Հիշյալ նահիայի ռայաթները, բոլորից առաջ, մեր Բարձր տերությանը հնազանդություն և հպատակություն հայտնելով և մեր հաստատուն հպատակությանն ու ապահովությանը ձգտելով, իրենց բարի վարքն են դրսևորել, հետևաբար նրանց նկատմամբ մեր արքայական առատաբուխ, բարձր ողորմածությունն ու թագավորական գթությունը ցուցաբերելով, 35 թվականից սկսած անընդմեջ, մինչև երեք տարի, հանձն առած ստորին շափի ջիզյայից բացի նրանց ազատում ենք հողային հարկից և ռայաթներից գանձվող այլ օրինական տուրքերից (մուաֆ և մասալլամ ենք դարձնում): Այս ազատության պայմանների (շրութ-ի մուաֆիյյաթ) պահպանումը խիստ կարևոր է: Եվ դու, որ հիշյալ վեզիրն ես, այդ կողմերի բոլոր հասարակաց գործերի մեջ ռայաթների և ժողովրդի գործերի խաղաղ ընթացքը կամ անհանգիստ վիճակը, ընդհանրապես և ամբողջությամբ քո տնօրինությանն է վերապահված: Հիշյալ նահիայի ժողովրդին վերաբերող բոլոր գործերի տնօրինումը բեզանից է պահանջվում: Նրանց հովանավորության և հարկերից ազատ լինելու (մուաֆիյյաթ) վերաբերյալ մեր արքայական բարեհոգության մասին նրանց փոքրերին ու մեծերին, ստորին և վերին խավի մարդկանց տեղեկացրեք և հայտարարեք, որ այսուհետև նրանք մեր արքայական հովանու և շուքի ներքո ամեն կողմից պաշտպանված պիտի լինեն: Նախապես և ներկայումս էլ իրենց տիրապետության տակ գտնվող մուլքերն ու հողերը թողնում եմ իրենց ձեռքում:

Ամենակարող աստծու օգնությամբ, կարևորագույն գործերը կարգավորելով և բոլոր դեպքերում խեղճերին և կարոտյալներին հովանավորելով ու պաշտպանելով, մեր արքայական մեծագոր փառքի հավերժացման և թագավորական կենաց և տերության հարատևման համար բարի աղոթքների առաքման համար հոգալու մասին, մեծաշուք հրամանս հրապարակվեց: Որով հրամայում եմ:

1135 թ. ռամազանի 29-ին (1723 թ. հուլիս 3):

Հաշվապահությունից:

Կարգադրված է հրամանագիր տալ:

1135 թ. ռամազանի 29-ին (1723 թ. հուլիս 3)

(Ստորագրություն)

Բացատրված կարգով գլխավոր հաշվապահությունից, ջիզյայի գրասենյակին հաշվեցուցակ տալու համար, գլխավոր հաշվապահությունում արձանագրելով, այլ գրություններ գրի առնել:

الأمر حبيبا مرور قبه تمقه الفقير اللد عز شأنه
السيد محمد القاضي بارود و تفلين
من قبل امر من له الأمر - مهر -

سبب تحرير كتاب بودر كه حالا يا فرمان عالی تفلين قلمعی
تسخیرینه مأمور جنود منصوره نیک سرداری اولان اشبویاعت الوثیقه
وزیر آصف رسوم محافظ ارض روم سعادتلو سلحدار ابراهیم پاشا یسر
الله بالخیر ما یشاء حضرتلری قلعه مزبوریه درت مرحله قریب چلدیر
ایالتندن اوروجایه نام محلّه نزول ایدوب ترتیب ایلدکلی دیوان
آصفیلرنده عقد اولنان مجلس شرع انورده قلعه تفلین نواحیلرندن
قیغیلی ناحیه سنده واقع آغ بولاقی نام قریه کتخداسی بابی ولد اوک
جکرشین نام قریه کتخداسی تاماس ولد اولی بیگ و ترکیش قریه
کتخداسی مناس ولد مخی و اورتولی علوی نام قریه کتخداسی انانیه
ولد کرکور و اورتولی سفلی نام قریه کتخداسی اوسیب ولد شاه نزار
و قزل قوج نام قریه کتخداسی بری ولد نرمان و قزنجی نام قریه سی
کتخداسی سرکز ولد بوشوس خان بولاقی نام قریه کتخداسی اوهان ولد
و ارتان و ملک نام قریه کتخداسی مصر ولد ملک و قوری جای نام قریه
کتخداسی اصلان ولد باجلو غوکاس نام قریه کتخداسی شرمان ولد چانی
بیگ و اوکوستاب نام قریه کتخداسی سلیم ولد اراکیل دوه کوز نام
قریه کتخداسی قره کوز ولد او انیس و الله و مهدی نام قریه کتخداسی
دانیل ولد مختار قزل قوج نام قریه کتخداسی امین ولد کرکور کیشی
دیه نام قریه کتخداسی کرکور ولد یاغوب کیشی و قزنجلی نام قریه
کتخداسی عوز ولد مختار و اختیار لرنندن با بیجان ولد کراکوس و الس

شهود الحال

عزتلو مصطفى باغا محافظ قارص حالياً
 عزتلو احمد اغا ابن يوسف الشهير بالاكوز سربوآبان درگاه عالی
 شهنواززاده سليمان اغا ميرالای
 مصطفى بيك ميرالای ارضروم
 عبدالله اغا ميرالای بايبورد
 سليمان اغا ميرالای ارزنجان
 عثمان اغا ميرالای کلکیت
 حسن اغا ميرالای
 عمر اغا بن ابراهيم ميرالای
 محمود اغا ميرالای اسبر
 عمر اغا ميرالای درجان

اعتبر حجت شرعیہ باش محاسبہ یہ قید و حفظ اولدنی بیوردی

۲۷ رمضان سنہ ۱۱۲۵

ارض روم والیسی اولوب تغلیس جانبینده سرعسکر اولان وزیر
 ابراهیم باغایه حکم که سنکی وزیر مشارالیه سن مقیتکه ما موراولان
 جنود منصوره اسلامیه ایله صوب ما موزه حرکت و عزیمت اهل یوب تغلیس
 جانبینه واردوقده تغلیس مضافتندن فیغولی ناحیه سنک اھالی
 و رعایاسی طرفلرندن اصل و وکیللری و قراکندالری و قوجه باغیلری
 طرفکه کلوب عواطف علیہ پانچاھانہ مدن استقطاف و استیمان و زیر
 سایه دولت علیہم التجا ایله ذمت و رعیتی تعهد و قبول ایتملریله

خدیوانه من جمله سنه اشاعت و اعلان و فیما بعد ظل و رفیق پادشاهانه
 مدد من کل الوجوه نحی الاطراف و لاجلترین صغیر و کبیر و وضع و
 رفیعته افاده و ابتداده و حالا متصرف اولدقلری املاک و اراضیلرینی
 یدلرنده ایقا و تقریر ایلیرب بیمن سبحانه تعالی اوامر خطیر
 صورت حسن نظام افراغ ایتمکده جدیاتی و هر حالده فقرا و ضعیفایی
 حمایت و صیانت ایله قیام فر و شوکت ملوکانه و دوام عمر و دولت
 پادشاهانه استجاب دعوات خیریه ایلمکده تفهید و اهتمام ایلمکی
 باینده فرمان عالیبنام صادر اولمندر بیوردمکی .

فی ۲۹ رمضان سنه ۱۱۳۵

[امضاء]

محاسبه‌دن تذکره امر داده
 فی ۲۹ رمضان سنه ۱۱۳۵

وجه مشروح اوزره باش محاسبه‌دن جزیه قلمنه قائمه و یرلمک
 اوزره باش محاسبه‌یه قیدایله باشقه یازوایله یازیله .

А. Д. ПАПАЗЯН

НОВЫЕ МАТЕРИАЛЫ О НАЛОГОВОЙ ПОЛИТИКЕ ТУРЕЦКИХ ВЛАСТЕЙ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ

Резюме

В Тифлисском фонде Восточного отделения Народной библиотеки им. Кирилла и Мефодия в Болгарии хранятся три османских документа 1723 г. Первый из них является утвержденным в Шариатском присутствии при штабе командующего двигающихся в направлении Тифлиса османских войск Ибрагима-паши соглашением. Второй документ—рапорт, представленный на основании этого соглашения из дворцового дивана султану Ахмеду III, а третий—указ султана, адресованный Ибрагим-паше.

Документы рассказывают о том, что 4 июня 1723 г. в лагерь османских войск направлявшихся в Тифлис, явились старейшины (кетхуды) 31 армянского селения переименованной в Кайгули провин-

ции Ашоцк (область Гугарк исторической Армении), входящей в этот период в подвластное Сефевидскому Ирану валийство Восточная Грузия и, выразив подданство, сумели предотвратить набег и грабеж своих областей. Взамен «добровольного» принятия подданства, уплатив лишь по размерам поголовную подать (джизью), указанные селения были освобождены на три года от других поземельных налогов.

Публикуя в приложении к статье турецкий текст и армянский перевод двух документов (протокола Шарнатского присутствия и султанского указа), мы показываем на основании параллельного анализа других архивных материалов, грабительский характер налоговой политики Турции и соответствующие способы взимания налогов в Закавказье в 1723—1736 гг. турецкими оккупационными властями.

A. D. PAPAŽIAN

NOUVEAUX DOCUMENTS SUR LA POLITIQUE D'IMPOSITION DES AUTORITES TURQUES EN ARMENIE ORIENTALE

Résumé

Le Fonds de Tiflis du Département oriental de la Bibliothèque Nationale Cyrille et Méthode de Bulgarie conserve trois documents ottomans de 1723. Le premier est un accord confirmé en lieu public du Charlat près l'état-major du commandant des troupes ottomanes d'Ibrahim-pacha se dirigeant vers Tiflis. Le second document est un rapport présenté, en se basant sur l'accord mentionné, par la chancellerie du palais au sultan Ahmed III, le troisième, un ordre du sultan adressé à Ibrahim-pacha.

Ces documents témoignent que le quatre juin 1723, le camp des troupes ottomanes en route pour Tiflis reçut la visite des doyens (kathoudas) de 31 villages arméniens de la province d'Achotzk, nommé Kayghouli par les Ottomans (région de Gougark de l'Arménie historique), qui faisait partie à cette époque du vilayet de la Géorgie orientale soumise à l'Iran Séfévide qui, ayant fait acte de soumission, réussirent à prévenir le pillage de leurs régions. En récompense de cette soumission „Involontaire“ et ayant seulement payé une capitation (djizzia) modérée les villages mentionnés furent libérés pour trois ans des autres impôts, fonciers.

En publiant en appendice à l'article le texte turc et la traduction arménienne de deux documents (le protocole du lieu public du Charlat et l'ordre du sultan), nous montrons, par l'analyse parallèle d'autres documents d'archives, le caractère inhumain de la politique d'imposition de la Turquie et les procédés de levée des impôts en Transcaucasie par les autorités d'occupation turques aux années 1723—1736.

**ՄԻՐԶԱ-ՅՈՒՍՈՒՖ ՆԵՐՍԵՍՈՎԻ «ԹԱՐԻԽ-Ե ՍԱՖԻ»Ն
ՈՐՊԵՍ ԱՐՑԱԽԻ 18-19 ԴԴ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ**

1804-1813 թթ. ուսու-իրանական պատերազմի տարիներին Ղարաբաղից դեպի Իրան քշված Հայ գերիների մեջ է եղել դեռահաս մի պատանի Հովսեփ անուկով, որ աքսորում մահմեդականացվել ու վերանվանվել է Յուսուֆ: Իսլամ ընդունած այն պատանին, գտնվելով բարձրաստիճան մի անձնավորության՝ Ամիր-խան սարգարի խնամակալության տակ, ազնվական ընտանիքներից սերած անձանց վայել կրթություն ստանալով, որպես մայրենի լեզու քաջ տիրապետել է պարսկերենին եւ խորացել պարսկալեզու մատենագրության ուսումնասիրության մեջ: 1820-ական թվականներին նա արդեն Թավրիզի փոխարքայական, պետական շրջանակներում ճանաչված է եղել Ղարաբաղի Միրզա-Յուսուֆ (Միրզա-Յուսուֆ Կարաբաղի) անունով եւ վարել է **միրզայի** պաշտոն:

Ռուս-իրանական երկրորդ պատերազմի ավարտից եւ 1828 թ. **Թուրքմենչայի** հաշտության պայմանագրի կնքումից հետո, երբ տեղի էր ունենում իրանահայոց գաղթը դեպի Արեւելյան Հայաստանի ուսսական գործերի կողմից նվաճված շրջանները, վերանվանյալ Միրզա-Յուսուֆը գաղթականության հետ անցնում է Արաքսը եւ գալով Հայրենիք՝ հաստատվում է Շուշի քաղաքում ու վերստին դառնալով հայ-լուսավորչական հավատին, իր հայրական ազգանունով սկսում է անվանվել Միրզա-Յուսուֆ Ներսեսով, իսկ գրական անունով նաեւ **«Կարաբաղի»**:

Կարճ ժամանակում յուրացնելով մայրենի լեզուն, նա ուսումնասիրում է գրաբարը եւ ծանոթանում Հայ պատմագրությանը, շարունակելով, սակայն, գրել եւ ստեղծագործել պարսկերեն: Միրզա Յուսուֆ Ներսեսովը քաջատեղյակ լինելով թուրքերենին, զբաղվել է այդ լեզվով ստեղծագործող բանաստեղծների ու գուսանների գործերով: 1856 թ. հայագրի Միրզաջան-բեկ Մադաթովի խնդրանքով նա Մոլլա-Փանահ Վազիֆի՝ իր հավաքած բանաստեղծությունները, գեղեցիկ գրությամբ արտագրում է մի մատյանում եւ դրան կցելով նաեւ ժամանակակից այլ գուսանատիպ բանաստեղծների, այդ թվում նաեւ Միրզաջանի, մի քանի չափածո գործերը, վիճաբար հրատարակությանը լույս է ընծայում Դեմիրխանշուրայում, որտեղ պաշտոնավարում էր կասպիական երկրամասի զինվորական նահանգապետ, գեներալ-լեյտենանտ, իշխան Գրիգորի Օրբելյանի նահանգապետարանում:

Վերջինիս Հանձնարարությանը եւ իշխան Դիմիտրի Դավիդովիչ Գեորգաձեի հովանավորության ներքո, Միրզա-Յուսուֆը 1854 թ. սկսում եւ 1855 թ. ավարտում է իր պատմագրական երկասիրությունը, որը նա վերնագրում է. «Թարիխ-ե Սաֆի», որ կարելի է թարգմանել «Հստակ» կամ «Ճշմարտացի պատմություն»: Այս գործի միակ ձեռագիր օրինակը պահպանվում է Վրաստանի Հանրապետության Կ. Կենկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի արեւելյան բաժնում եւ գրանցված է P-195 համարի տակ: Ձեռագրի միկրոթապավենը ժամանակին մեզ տրամադրել է ճանաչված իրանագետ, հանգուցյալ Վ. Ս. Փուլթուրիձեին:

Սոսելով սույն պատմության շարադրման վերը նշված նախադրյալների մասին, գրքի ներածության մեջ հեղինակն անցնում է Նիկոլայ կայսեր փառաբանությանը, որի

իշխանութեան ներքո «տարբեր կրօնների ու դավանանքների հետեւող ժողովուրդները հաշտ ու խաղաղ պարուժում են միասին» եւ ապա պատմում է, թե ինչպես խորանալով պատմական եւ կրօնական գրականութեան, հատկապես, հին ու նոր կտակարանների ուսումնասիրութեան մեջ, ընթերցել է պարսկերեն եւ հայերեն բազմաթիվ գրքեր եւ փորձելով հեռու մնալ կրօնական կողմնակալութունից, բարեկամների խորհրդով ձեռնարկել է պատմական մի ուսումնասիրութուն, նպատակ ունենալով տալ «Կովկասում իշխող խաների եւ այլ մեծամեծների պատմութունը, եւ թե ինչպես այդ երկիրն ի վերջո անցավ Ռուսաց հզոր պետութեան իշխանութեան ներքո, մանավանդ, որ կռիվներից շատերին նա ներկա է եղել եւ մեծ մասամբ նաեւ ականատես, իսկ շատ իրադարձութունների մասին էլ լսել է լավատեղյակ անձնավորութուններից եւ տեղեկութուններ հավաքել հայերեն ու այլ արժեքավոր գրքերից»:

Հետեւելով պարսկալեզու միջնադարյան պատմագրութեան ավանդներին, մեր հեղինակն պատմութունն սկսում է աշխարհի արարչագործութունից եւ հասցնում մինչեւ իր ժամանակները: Շարադրանքից երեւում է, որ նրա ձեռքի տակ եղել են ոչ միայն պարսկերեն պատմագրական երկեր, այլ նաեւ **Չամչյանի** պատմութեան հատորները, որոնցից օգտվելով նա անգրագարձել է հայոց վաղ եւ միջնադարյան շրջանի պատմութեանը, տալով յուրաքանչյուր շրջանի համառոտ բնութագիրը:

Ինքնին հասկանալի է, որ պատմութեան, այսպես կոչված, այս կոմպիլատիվ մասը, որ զբաղեցնում է գրքի կեսից ավելին, գիտական որոշակի հետաքրքրութուն չի ներկայացնում: Ուշագրավ է միայն, որ պարսկերենով շարադրված այս երկը, թեեւ գրված է Իրանի պատմութեան հիմքի վրա, սակայն հիմնական նպատակն է տալ Արեւելյան Հայաստանի, հատկապես Արցախի, հետ-նադիրյան շրջանի, **Խամաշի մելիքների եւ Ղարաբաղի խանութեան** պատմութունը՝ մինչեւ Ռուսաց տիրապետութեան հաստատումը Անդրկովկասում:

Նախանադիրյան շրջանին վերաբերող 6 գլուխները հետեւյալ վերնագրերն են կրում.

1. Աղամի սերունդների եւ լեզուների տարածման մասին,
2. Անցյալի թագավորների մասին,
3. Նախախլամական շրջանի պարսից արքաները,
4. Իսլամից հետո եկող ավագ խալիֆների մասին,
5. Իսլամական շրջանի թագավորների մասին,
6. Շրջանում անիշխանութեան եւ **Նադիր-շահի** հանդես գալու մասին:

Հաջորդ՝ 7, 8 եւ 9-րդ գլուխները վերնագրված են՝

7. Այն իրադարձութունների մասին, որ **Նադիր-շահից** հետո են տեղի ունեցել,
8. Հայոց երկրի վիճակը եւ տեղեկութուն հինգ **մահալների** ու **Ձանդեղուրի** մասին եւ այնտեղ իշխած **մելիքների** ու **խաների** ծագումն ու սերնդաբանութունը,
9. Ռուսների մուտքը Կովկաս, երկրի նվաճումը եւ **գըզլբաշների** ու այլոց դեմ մղված կռիվների նկարագրութունը:

Պետք է ասել, որ թեեւ նադիրյան ժամանակաշրջանը Արցախի համար բավականին բախտորոշ նշանակութուն ուներ, սակայն աղբյուրագիտական առումով, առավել հանգամանալից եւ արժեքավոր տեղեկութուններ են պարունակում սույն պատմութեան վերջին՝ 8 եւ 9-րդ գլուխները:

Նախապես ընդգծելով, որ Ղարաբաղը գտնվում է Հայաստանում, վկայակոչվում են Նիզամու տողերը **«Խոսրով Շիրին»** պոեմից, այն մասին, որ **Պարտավը** կամ Բարդան Հայաստանի քաղաքներից է: Այնուհետեւ նկարագրում է Պատմական Հայաստանի Սյունիք, Արցախ, Ուտիք եւ Փայտակարան նահանգները, գծելով նրանց սահմանները ու տալով ժամանակակից անվանումները. Սյունիքն անվանված է **«Լեռներից այն կողմ»** կամ **«Ձանդեղուր»**, իսկ Արցախը՝ **«Ղարաբաղ»**:

ելնելով պարսկալեզու պատմական աղբյուրներից, նշված է, որ այս տարածքները կոչվել են «Արմենիա», եւ այդ անվանումը նա բացատրում է Արամ անունով եւ ապա թվարկում Նոյի սերունդները, շարադրելով թորգոմյան սերնդաբանությունը, ըստ Խորենացու «Պատմության»:

Ուշագրավ է, որ Ղարաբաղի լեռնային մասը, որ Համբնկնում է ներկայիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ Շահումյանի, Խանլարի եւ մեզ ծանոթ մյուս շրջաններին, Միրզա Յուսուֆը անվանում է նաեւ «Թախտա-կափու», որ նշանակում է «փայտե դուռ»: Այս անվանումը մեզ այլ տեղ չի հանդիպել, եւ դժվար է մեկնաբանել եւ պարզել, թե երբ եւ ինչից է այն առաջացել: Թվում է սակայն, որ այն կարող էր այդպես կոչված լինել ի դիմաց Դաղստանի եւ Դերբենդի «Դամուր Կափու» անվանման, որ նշանակում է «Երկաթե դուռ»:

Արցախի Հինգ գավառների նկարագրությունը տրված է հետեւյալ ենթավերնագրի տակ. «Ղարաբաղի Հինգ մահալների մասին եւ այնտեղի մելիքների ծագման մասին», եւ անմիջապես բացատրված է, որ «Ղարաբաղի Թախտակափուի Հինգ մահալները, որոնց բնակիչներն ամբողջութամբ քրիստոնյաներ են Հայտնի է «Խամսա» անունով, որովհետեւ արաբերեն «խամսա» նշանակում է «Հինգ»:

Ապա, մեկ առ մեկ թվարկվում են Հինգ մահալները, սկսելով **Դիզակից**, որի սահմանները տարածվում էին մի կողմից **Հաքարի** գետից մինչեւ **Քյուլ-Թափա** եւ **Մալթափա** եւ մյուս կողմից՝ Արաքս գետից մինչեւ Խորհատ լեռը: Վարանդայի սահմաններն էին՝ Քիրս լեռից մինչեւ Ալիբալի հովիտ եւ Խորհատ լեռից մինչեւ Շուշիքենդ գետն ու Խալֆալու, Խաչենը տարածվում էր **Խորխոր** գետից մինչեւ Կաբարթու եւ Փարուխֆարից ու Մըխոբան լեռից մինչեւ Բայաթի անտառները, Ջրաբերդի սահմաններն էին Բայաթի անտառներից մինչեւ Կըրըխֆար ու Բարդա եւ Խաչեն գետից մինչեւ Կաբարթու եւ Թառառ գետը, իսկ Թալիշն ընդգրկում էր Գուլխստանից եւ Մուավ լեռից մինչեւ Կուր գետն ու Թարթառ գետից մինչեւ Կուրան ընկած տարածքը:

Թվարկված են այս մահալներում մշակվող գյուղատնտեսական արդյունքները. մետաքս, բամբակ, բրինձ, ցորեն եւ այլ հացահատիկներ:

Համառոտ նկարագրված են Արցախի անցուղարձեբը, վաղ ժամանակներից մինչեւ Սեֆյան Իրանի տիրապետության ժամանակներն ու Նադիր շահի կողմից **Խամսայի** մելիքությունների հաստատումը: Մելիքական տներից առավել մեծ տեղ է հատկացված Դիզակի մելիքներին, հատկապես կանգ առնելով **Մելիք Եղանի** վրա եւ վեր հանելով նրա քաղաքական գործունեությունն ու դիվանագիտական հատկանիշները, մեղ բերելով նաեւ բանավոր զրույցներ նրա եւ ընտանիքի մյուս անդամների մասին: Նախապես նշելով, որ Վարանդայի մելիքները եկել են **Գեղարքունիքի Ջեյվա** գյուղից, Միրզա-Յուսուֆը հատուկ վրդովմունքով է խոսում **Մելիք-Շահնազարի** դավաճանական արարքների մասին, դատապարտելով նրա համագործակցությունը Փանահ-խանի հետ: Մեղ են բերված Հայտնի մանրամասներ Խաչենի Հասան Ջալալյանների մասին, նշելով նաեւ, որ հետո այդ շրջանի մելիքությունն անցավ **Խնզրաստանցի** Մելիք-Միրզաջանին: **Ջրաբերդի** մելիքներին, որոնք ըստ մեր հեղինակի ծագում էին **Մաղավուզից**, վերագրված են մեծ քաղաքործություններ, հատկապես Ջերմուկի բերդի ինքնապաշտպանության կռիվներում փառաբանված են **Մելիք Ալլահուլիի** քաղաքործությունները, որին Նադիրը Եղվարդի ճակատամարտից հետո հռչակեց **Ալլահ-կուլի-սուլթան**: Գուլխստանի կամ որ նույնն է Թալիշի մելիքները **Մելիք-Բեգլարի** սերունդներն էին, որոնք ավելի վաղ եկած են եղել Շիրվանի կողմերից, նրանցից նշանավորը **Մելիք-Յուսուպն** էր, որ ամրացել էր Գուլխստանի բերդում:

Հատուկ տեղ է հատկացված նաեւ Ջանգեղուրին, ճշգրտելով, որ «**Լեռներից այն կողմը**», կոչվող երկիրը, որ նաեւ Ջանգեղուր է կոչվում, շատ ընդարձակ մի երկրամաս է, նշված է, որ անմիջապես լեռներից այն կողմում

Հոծ հայկական բնակչություն է եղել, իսկ այժմ քրդական **Կարաչոու, Հաջի-Սամլու** եւ **Քելբաջար** քոչվոր ցեղերն են նստած, Զանգեզուրում թվարկված են մի քանի **յուզբաշուկություններ**: Դրանցից են Խնձորեսկն ու Գորիսը, Տաթեւն ու Սիսիանը, Մեղրին ու Ղափանը, որոնք մասամբ ենթակա են նաեւ Ազադ-Ջիրանին ու Օրդուբադին, իսկ Սիսիանը՝ Նախջեւանին: Այստեղ տրված է Օրբելյանների ճուղագրությունը, ավելի վաղ ժամանակներից մինչեւ 19-րդ դարի կեսը: Համառոտ խոսք կա նաեւ Դավիթ-բեկի, Տեր-Ավետիսի եւ Հովհաննես Խանդամիրովի մասին, տվյալները վերցված են Զամչյանի պատմությունից:

Շատ մանրամասն է խոսվում դաշտային Ղարաբաղում թափառող Ջիվանչիր ցեղի **Սարուջալու օյմաղից սերած Ջարջի** (մունետիկ) **Փանահի** հանդես գալու եւ Վարանդայի Մելիք-Շահնազարի միջոցով Շուշիում ամրանալու, հայտնի դեպքերի մասին, խորանալով եւ վերլուծելով բախտորոշ այդ իրադարձությունների քաղաքական նախադրյալները: Այստեղ նկարագրված են **Փանահ-խանի** հայ մելիքների դեմ մղած կռիվները եւ կարճ ժամանակում նրանցից շատերին զանազան խարդախություններով իրեն ենթարկելն ու Շուշիա խանություն հիմնադրումը: Ուշագրավ են բերդի վայրի ընտրության վերաբերյալ մանրամասներն ու տեղանքի, ինչպես նաեւ շինության պաշտպանական ու ռազմավարական հատկանիշների մասին տեղեկությունները:

Առավել մանրամասն է տրվում ինչպես **Փանահ-խանի**, այնպես էլ, հատկապես, որդու՝ **Իբրահիմ-խանի** նվաճողական արշավանքների եւ շրջակա խաների հետ ունեցած ընդհարումների պատմությունը. կարեւոր տեղ է հատկացվում այդ խաների՝ Վրաստանի վալի Հերակլ II-ի հետ հարաբերություններին, ու թեեւ հեղինակը ձգտում է տալ դեպքերի եւ իրադարձությունների անկողմնակալ նկարագրությունը, սակայն զգալի է համակրանքը վրաց արքայի նկատմամբ:

Այս հարաբերությունների մեջ ուշագրավ են Իրանում կենտրոնական իշխանության բացակայության շրջանում, Իբրահիմ-խանի ձեռք բերած հաջողությունների, շրջակա մի շարք խաների իրեն ենթարկելուց հետո Ավարիայի Ումմա-խանի հետ խնամիական կապեր հաստատելով, նրան եւս իրեն դաշնակից դարձնելու մասին մանրամասն մեկնաբանությունները: Վրաստանի վալիի կողմից իր ձեռք բերած իշխող դիրքի նկատմամբ որեւէ վտանգ նա կարողանում էր կանխել **Ումմա-խանին** հրահրելով նոր ավերիչ արշավանք կատարելու դեպի Վրաստան, ինչպես այդ տեղի ունեցավ 1790-91 թթ., երբ Ումմա-խանը, Իբրահիմ խանի պահանջով, արշավեց դեպի Քուի հովիտը, զրավեց Գյումուշխանեի ամրությունները եւ ասպատակ սփռեց այդ կողմերում եւ մեծ ավարով ու գերիներով անցավ Ախալցխա: Ամբողջ ձմեռը հյուսիսային Սուլեյման փաշայի կողմից, նա գարնանը նորից անցավ Վրաստանով, զրավեց իշխան Աբաշիձեի բնակավայրը հանդիսացող Դաղխանի բերդը եւ գերելով նրա դուստրերին, մեկին ուղարկեց նվեր Իբրահիմ-խանին, իսկ մյուսին տարավ իր կանանցը:

Առավել հավաստի ու արժանահավատ են Միրզա-Յուսուֆի հաղորդած տեղեկությունները Իբրահիմ-խանի իշխանության վերջին տասնամյակի իրադարձությունների մասին, նա ժամանակակից, իսկ վերջում նաեւ ականատես ու մասնակից լինելով տեղի ունեցող ռազմական գործողություններին, ուշագրավ մանրամասնություններ է հաղորդում Աղա-Մուհամադ-խան Կաջարի 1795 եւ, հատկապես, 1797 թ. արշավանքների մասին, հանգամանալից շարադրելով Շուշիա բերդի առաջին անհաջող պաշարման ու, մասնավորապես, երկրորդ արշավանքի սկզբում բերդի զրավման ու Աղա-Մուհամադ-խանի՝ իր իսկ մերձավորների ձեռքով սպանության պատմությունը:

Եզակի նշանակություն ունեն պատմության՝ Թիֆլիսի գրավմանը վերաբերող էջերը, ինչպես նաև Աղա-Մուհամադ-խանի հեռանալուց հետո Իբրահիմ-խանի կրկին աշխուժանալուն եւ Հերակլի հետ համատեղ դեպի **Գանձակ** արշավանքին, Ջրաբերդի Մելիք-Մեջլումի սպանությանը վերաբերող մանրամասները: Այդ դեպքերը խիստ բախտորոշ էին հայ մելիքությունների հետագա պատմության համար:

Պատմության վերջին՝ 9-րդ եւ ամենածավալուն գլուխը, որ վերնագրված է «Ռուսների կովկասյան երկիրը գալու հանգամանքներն ու այդ երկրի գրավումը, պատերազմն ու կռիվները **ղըզլուքները** դեմ եւ այլն» ընդգրկում է 1804 թ. մինչև 1855 թ. ընկած շուրջ կեսդարյա մի ժամանակաշրջան, որն, ինչպես գիտենք, բավականին հանգամանալից հետազոտության է ենթարկված նախախորհրդային եւ խորհրդային պատմագիտության կողմից:

Այստեղ հետաքրքրական են հատկապես 1826 թ. Շուշիի հերոսական պաշտպանության նկարագրությանը նվիրված էջերը: Գտնվելով Աբբաս-Միրզայի բանակում, Միրզա-Յուսուֆը պաշարման օրերին զարգացող դեպքերի անմիջական մասնակիցն է եղել եւ հաղորդում է այնպիսի մանրամասներ, որոնք կարող են մեծ չափով նպաստել ուսուիրանական պատերազմի առանձին դրվագների լուսաբանմանը:

Շուշի պեղքի պաշտպանության լավագույն սկզբնաղբյուրն է պաշտպանության մասնակից **Պոտտոյի** հուշագրությունը, որի տեղեկությունների գույությունը հակասակորդի բանակում գտնվող Միրզա-Յուսուֆի հաղորդած, առանձին դեպքերում եզակի տվյալների հետ հնարավորություն է տալիս հետեւելու մղված մարտերի ընթացքին, որտեղ ընդգծվում է բերդի հայ պատշպանների վճռական դերը ուսական փոքրաթիվ բերդապահ կայազորի հետ համատեղ մղված կռիվներում:

Անհրաժեշտ է նշել նաև, որ քաղաքական անցուղարձեղի նկարագրությանը գուհահեռ Միրզա-Յուսուֆը ուշագրավ տեղեկություններ է տալիս ոչ միայն Արցախի հինգ գավառների աշխարհագրության, տեղանքի, գյուղատնտեսության եւ տնտեսական կյանքի տարբեր բնագավառների մասին, այլև հետեւելով կարճ ժամանակում արագ մեծացող Շուշի քաղաքի զարգացմանը, պատմում է, թե ինչպիսի գաղթեցված հայ եւ թուրք զանգվածներից է գոյացել քաղաքի բնակչությունը: Քանիցս շեշտված է, որ 1850-ական թվականներին հայերը քաղաքի բնակչության 2/3-ն են, իսկ թուրքերը՝ 1/3-ը:

Պատմության բնագիրն ունի նաև բանասիրական հետաքրքրություն, ոչ միայն լեզվաոճական առումով, այլ նաև ժամանակի պահանջից բխող առանձին արտահայտությունների, ինչպես նաև հայկական եւ ուսական անձնանունների եւ տեղանունների, տիտղոսների եւ կոչումների պարսկերեն համարժեքների եւ հատկապես արաբական տառադարձման տեսակետից:

Սույն համառոտ հաղորդման սահմաններում հնարավոր չէ տալ խնդրո առարկա սկզբնաղբյուրի համակողմանի գնահատականը. մենք փորձեցինք միայն հակիրճ կերպով բնութագրել այն, խոսելով միայն մի քանի, հատկապես, Արցախի ու շրջանի պատմության համար որոշակի գիտական հետաքրքրություն ներկայացնող առանձնահատկությունների մասին:

Մատենադարանի գիտահետազոտական թեմատիկ պլանով նախատեսված են ձեռագրի վերծանման, պարսկերեն բնագրի ուսերեն թարգմանության աշխատանքները: Այդ ուղղությամբ որոշ գործ կատարված է արդեն, սակայն, ինչպես վերը նշվեց, հավանաբար, պետք է ծանրանալ միայն վերջին 8-րդ եւ 9-րդ գլուխների վրա, թեև արժե նաև, որ պարսկերեն բնագիրը առանձին հրատարակվի ամբողջությամբ (թերեւս պատճենահանմամբ), որով արեւելագիտական ավելի լայն շրջանակների ուշագրությանը կներկայացվի հայ հեղինակի պարսկերեն պատմագրական երկասիրությունը:

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՓՈՐՔՈՒԳԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայրս՝ Դավիթ Փափազյանը (ծն. վան, 1884 թ.) պատանեկան տարիքից ներգրավված է եղել վանում ծավալված ազգային-ազատագրական շարժման մեջ և ինչպես Հ. Սերինգյուլյանի (Վարդգես) ու Վ. Փափազյանի (Կոմս) օրոք և հատկապես Արամ Մանուկյանի ղեկավարության շրջանում, համարվել է վանի «նոր սերնդական» շարժման գործունյա անդամներից մեկը: Ե՛վ Արամը, և՛ նրա զինակիցներ Վառժանն ու Իշխանը նրա ամենամոտ կուսակցական ընկերներն են եղել: Նա մասնակցել է վանի 1915 թ. ապրիլյան հերոսամարտին՝ զբաղեցնելով «Զինաբաշխ մարմին» նախագահի պատասխանատու պաշտոնը: Վանի առաջին հայկական կառավարության օրոք Արամի հրամանով նշանակվել է վանի ոստիկանապետ: Վասպուրականի մեծ գաղթից հետո Բաքվում Թիֆլիսում և այլուր ղեկավարել է գաղթականական կոմիտեների աշխատանքը և թղթակցել «Գործ» ամսագրին և «Тифлисский листок» թերթին: 1920 թ. ղեկավարել էր ճաշակել է բոլշևիկյան բանտերի դառնությունը և երաշխավորությանը ազատվելով, անմիջապես մասնակցել է փետրվարյան ապստամբությանը և ապա «Փրկության կոմիտեի» նախագահ Ս. Վրացյանի հրամանով 1921 թ. մարտի 4-ին նշանակվել Երևան քաղաքի միլիցայետ: Կարճատև այս պաշտոնավարությունը ընդհատվել է բոլշևիկյան իշխանության վերականգնումով, որից հետո բազմաթիվ այլ տարագրիչների հետ անցել է Իրան և հաստատվել Քավրիզ քաղաքում:

Անցյալ տարի, երբ ես, որպես Իրանագետների միջազգային կոնգրեսի նախագահության անդամ հրավիրված էի մասնակցելու թե՛հրանում գումարված առաջին համագումարի աշխատանքներին, ինձ հաջողվեց գտնել հորս անձնական արխիվը, որտեղ կան բավական անվանի անձնավորությունների (Վ. Փափազյան (Կոմս), Վ. Նավասարդյան, Ռ. Տեր-Մինասյան, Ս. Վրացյան և այլն) նամակներ և նրանց հասցեագրված պատասխան նամակների պատճեններ: Այդ արխիվում, սակայն, պահպանվել է նաև անվանի մշակութային և հասարակական-քաղաքական գործիչ Մկրտիչ Փորթուգալյանի 1906 թ. գրված նամակը՝ ուղղված իր երիտասարդության շրջանի պոլսահայ ընկեր Միհրան Բաղդասարյանին, որն այդ տարիներին ուսուցիչ էր Մարաղայի հայոց դպրոցում: Նա շփազանց զարգացած, բարի համբավի տեր մի անձնավորություն էր, որ 1920—30-ական թթ. բնակվում էր Քավրիզում, մեր տան հարևանությամբ: Այս նամակը նա տվել է, որպեսզի հայրս ծանոթանա վանում ժամանակին մեծ կրթական և լուսավորական գործունեություն ծավալած անձնավորության դիրքորոշման հետ՝ վանի «Արմենական» կուսակցության նկատմամբ:

Կարծում եմ, որ նամակը կարող է օգտակար լինել նշված ժամանակաշրջանի մեր ազգային-ազատագրական շարժման պատմության ուսումնասիրությանը զբաղվող պատմաբաններին, առավել ճշգրիտ պատկերացում կազմելու համար Մ. Փորթուգալյանի և «Արմենական» կուսակցության փոխհարաբերությունների մասին, և համոզվելու, որ քաղաքային սխալ է նրան համարել այդ կուսակցության «հիմնադիր և ղեկավար» (Հայկական հանրագիտարան, հ. 12, էջ 364)¹:

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Գ. ՓՈՓՈՋՅԱՆ

Մարտի 21, սեպտ. 21/4 հոկտեմբեր 1906

Մեծապատիվ
Տիար Միհրան Պաղտասարյան
Մարաղա

Միրելի հայրենակից և բարեկամ,
Մեծ ուրախությամբ և շնորհակալությամբ ստացած եմ անցյալ տարի մարտ 29-ին Ձեր գրած նամակը, որ ընտանիքիս մոտ ալ կարդացի և ամենքն

1 Այս սխալ տեսակետի հերքումով վերջերս հանդես է եկել նաև Ա. Հ. Կարապետյանը (տե՛ս «Լրաբեր հասարակական գիտություններ», 1993, № 2, էջ 3—12):

ալ գոճ եղան Ձեր ընտանեկան ուրախառիթ լուրերն իմանալով, մանավանդ օրիորդ Աստղիկին այդտեղ ամուսնացած լինելը շնորհալի և ազնիվ երիտասարդի մը հետ: Միայն թե տխրեցա Ձեր աներոջ՝ Հայրապետ Աղայի մահն իմանալով, որ Կ. Պոլսի մեջ ամենեն առաջ ճանչցած վանեցիկներես մին էր, Ազգային երեսփոխանական ժողովի վեճերին պատճառով եղած ցույցերին իր մասնակցությամբ:

Մեր ընտանեկան վիճակն ալ դանազան փոփոխություններ կրած է այստեղ. Թյուրքիա ունեցած երկու զավակներս ալ մեռան այստեղ. անդրանիկ աղջիկս, Արմենուհին, որ եվզոկիա ծնած էր և Վան բերած էի, 17 տարեկան հասակին մեջ մեռավ այստեղ. Տիգրանս ալ, որ Վան ծնած էր և 2 ամսական եղած ատեն այստեղ բերված, 7 տարեկան հասակին մեջ մեռավ: Այժմ ունիմ 2 մանչ և 4 աղջիկ զավակ, որոնք ամենքն ալ Մարսելյ ծնած են: Ամենեն մեծը, Վահանս, 19 տարեկան է այժմ և մեկ տարի հետո պետք է զինվորագրվի, որովհետև ֆրանսիական օրենքին համեմատ ամեն ֆրանսացի պետք է որ զինվոր լինի. զինվորական գործոն բանակին մեջ ծառայությունը կը տևե երկու տարի. այնուհետև կարճակվի և պահեստի զօրքերի շարքին մեջ կը նշանակվի: Այստեղ լիսեին ընթացավարտ լլած է Bachelier-ի դիպլոմով. բայց որովհետև հայոց վարժարան չկա Մարսելյ (քանի մը տուն միայն հայ կա այստեղ) և ես ալ այնչափ ճնշված եմ զբաղումների ծանրության տակ, որ ժամանակ չեմ կրնար գտնել իրեն հայերեն դասեր տալով զբաղելու, անցած տարի զրկեցի էջմիածին Գեորգյան ճեմարանը հատկապես հայերեն սովորելու համար. այս օրեր վերադարձավ անկե և կը տեսնեմ որ բավական հառաջադիմություն ունեցեր է:

Ես շատ ցավ զգացի Ձեր նամակի մեջ կարգալով, որ Ձեզ դեմ հալածանքներ և մինչև իսկ մահի սպառնալիքներ եղեր են այն պատճառով, որ Գուրբ ազգային խնդիրների մասին այդ սպառնացող պարոններեն տարբեր կերպով կը մտածեք եղեր: Գիտեք որ ես կարծիքի ազատության ջերմ բարեկամ եմ, թեև իմ համոզումներս ալ ջերմորեն կը պաշտպանեմ և կաշխատիմ տարածել: Եթե կարծիքի տարբերության համար իրար հալածել, իրար սպաննել հարկ լիներ՝ ո՞վ կրնար ուրեմն ապրելու իրավունք ունենալ. որչափ մարդիկ, այնչափ կարծիք, կրնե առած մը և նույնը կը հաստատե իրականությունը: Ցավալի է, որ հրապարակի վրա ազատության պաշտպան հանդիսացողներ իրենք կենն ուրիշների մտածելու ազատությունը բռնաբարել և մահի սպառնալիքով ստիպել որ իրենց պես միայն մտածեն:

Ձեր նամակի մեջ նախկին աբմենիստ բուռը դործածված կը տեսնեմ անձի մը համար, որի հետ բնավ հարաբերություն ունեցած չե Աբմենիան: Շփոթության տեղի չտրվելու համար այս ալ հայտնեմ, որ ես երբեք ճանչրցած չեմ «Աբմենական» անունով կազմակերպություն մը, երբեք պաշտոնական հարաբերություն մը ունեցած չեմ այդ անունով կազմակերպության մը հետ: Վանի մեջ մի խումբ երիտասարդներ կազմակերպվեր են ինքնապաշտպանության համար Մ. Ավետիսյանի առաջնորդության տակ և որովհետև Ավետիսյանի հետ մեկտեղ մեր ուրիշ աշակերտներ և համակիրներ ալ գտնրված են որոնց մեջ, դրսեցի հեղափոխականներ (Հնչակականներ և Գաշնակցականներ) «Աբմենական» կոչեր են այդ Վանեցիների խումբը, անոնք ալ սիրեր են այդ անունով կոչվիլ. Ավետիսյան զիջանելով իրեն հետևողներին մեծ մասի ցույց տված այդ փափագին (քանի որ կոտորածին մոտիկ և եռուզեռի ատենն էր, այդպիսի երկրորդական խնդրով մը այդ միջոցին չծանրանալու համար), պայման դրեր է, թե քանի որ «Աբմենական» անունը վրանին առած են, պետք է իրենց կազմակերպության ծրագիր զրկվի Աբմենիայի խմբագիրտնորենին և անոր հավանությունն ալ ստացվելով իրմե վավերացվի: Ավետիսյան այդ ծրագիր և անոր հետ իր մեկ նամակ կը զրկե Պարսկաստան, որ անկե փոստի միջոցով հասցունեն ինձ. բայց Պարսկաստան գտնվող իրենց ընկերներ անհոգությունով թե հետին մտքով կը պահեն այդ նամակ և չեն զրկեր ինձի: Քիչ հետո Վանի կոտորածը պատահեցավ և Ավետիսյան ու իր

ուղեկիցներ նահատակվեցան, ինչպես գիտեք, Աղբակի Ս. Բարթողիմեոս վանքի մոտեր: Քիչ ժամանակ հետո, ներսես Գրիգորյան անուն վանեցի երիտասարդ մը, որ ժամանակ մը աշակերտած է մեր Կեղրոնական վարժարանի մեջ, եվրոպա կու դայ, նախ Պուլկարիա անցնելով և կը սկսի շրջաբերականներ հրատարակել «Արմենական» կազմակերպության մը անունով, որ իբր թե կապ ունի եղեր Արմենիա լրագրին հետ. իրենց շրջաբերականների մեջ այնպիսի միտքեր կը հայտնեն, որոնց զեմ կը գրեր արդեն Արմենիան: Ես ստիպվեցա Արմենիայի մեջ հողված մը հրատարակել «Զգուշություն» վերնագրով և հայտարարել, թե մենք այդ անունով կազմակերպություն մը բնավ չենք ճանչնար և ոչ ոք իրավունք չունի Արմենիայի անունով կազմակերպություն մը ներկայացնելու ժողովրդին: Արժ. Տ. Գեորգ քահանա Ստյան, մեր նախկին աշակերտներն մին և այժմ հանգուցյալ, որի ձեռքն անցած է եղեր վերջապես Ավետիսյանի ինձ գրած նամակն ու Արմենական կազմակերպության ծրագիրն (որը ներսես Գրիգորյան Սալմաստ թողած և ինձ չէր դրկած), այդ «Զգուշություն» վերնագրով հողվածս կարգալե հետո, Ավետիսյանի նամակն, որով ուզած էր իմ հավանության ու վավերացման ենթարկել «Արմենական» անունով կազմակերպության ծրագիրը, փութաց դրկել ինձի և եղելությունը բացատրել: Այդ միջոցներ Մարսելյ կեպավ և վերահիշյալ ներսես Գրիգորյան՝ որին բացատրեցի թե ապօրինություն, պաշտպոզությունն է Արմենիայի անունով կազմակերպություն մը ինքնին ելնել ներկայացունել ժողովրդին, առանց Արմենիայի տնօրենի գիտության և վավերացման և թե ոչ մեր սկզբունքին և ոչ ալ եվրոպական սովորության և ոչ իսկ թյուրքիայի հայերի սովորության, կը համապատասխանե լրագրի անունով կուսակցություն կազմակերպելը. Անգլիայի մեջ կա պահպանողական կուսակցություն, ազատական կուսակցություն և ոչ թե Ստանտարտյան կուսակցություն, Տեյլիսյանյան կուսակցություն, թեև Ստանտարտը պահպանողական և Տեյլիսյանյանը ազատական կուսակցություններն եղող լրագիրներն են: Գնացիք աշխատեցեք առանց Արմենիայի անունը վրանիդ աննելու, ըսի ներսեսին, եթե լավ բան անեք, Արմենիան կը համակրի Ձեր արածին. իսկ եթե գեշ բան անեք, Արմենիան հակակր կը լինի Ձեզ. նույնիսկ եթե իր անուն վրանիդ առած և զայն տարածած լինիք, նա շպաշտպաներ: Ներսես համոզվեցավ, կամ այդպես ձևացուց թե համոզվեցավ, և գնաց: Բայց վերջերս այնպես կը լսեմ, որ դարձյալ «Արմենական» կուսակցություն անունով կը շարունակե եղեր ներկայանալ միամիտներին առջև և այդպիսի կեղծ անունով մը շարունակելով իր գործունեություն, խաբել դուրահավատները:

Գիտեք որ ես Հնչակյանների և Դաշնակցականների վնասակար գործունեությունները քննադատած եմ, չնայելով որ ատով շատ մը թշնամիներ ունեցած եմ. բայց եթե Հնչակյան մը կամ Դաշնակցական մը լավ բան մը անե, չեմ վարանիր գովել զայն, անունին չեմ նայիր ես, այլ գործին: Ուստի Արմենիայի համակրությունն ունենալու համար հարկ չկա Արմենիական կուշվելու, այլ կանոնավոր օգտակար կերպով պետք է գործել: Հնչակյանների դիմավոր թերությունն այն եղավ, որ չուզեցին նախապես ուսումնասիրել այն երկիրը որի համար գործելու, որի պահանջները ներկայացուցնելու հավակնությունն ունեին: Հիվանդի մը դեղագիր տալե առաջ պետք է անոր վիճակը, անոր հիվանդության ի՞նչ լինելը զննել և իմանալ: Հնչակյանությունը կազմակերպող երիտասարդներն եվրոպայի մեջ փոքր ի շատե ուսում առած, բայց Տանկահայաստանը ճանչցած չլինելով, կարծեցին թե եվրոպայի հեղափոխականներն ինչ պահանջներ որ ունին և ինչ կերպով որ կը գործեն, Հայաստանի համար ալ նույն պահանջներ պետք են և հեղափոխությունը միևնույն միջոցներով պետք է գործել հոն ալ և հայկական դատը ընկերավարականության խնդրին հետ միացուցին. մինչ մեզնե շատ ու շատ առաջացած եվրոպան ու Ամերիկան դեռ չեն կրցած ունենալ և նույն իսկ իրենց մեջ եղրակացություն մը գալուս կրցած, այդ խնդրին օրինավոր և գործնական լուծում մը տալու համար դեռ երկարորեն վիճաբանություն մեջ կը գտնվին և որոշ

ծրագրի մը հանդած շեն, մեր Հնչակյաններ կը վարդապետեին սոսիալիզմի դրուժյուն մտցնել Հայաստանի վարչության մեջ և այլն...

Իհարկե ասոնք տեսութունների տարբերություններ են, յուրաքանչյուրի ապրած միջավայրների տպավորություններն զոյացած. հետևապես չպահանջվիր ամենքեն ալ որ միևնույն տեսություններն ունենան ամեն խնդրի վրա: Կարծիքի ազատությունը կը պահանջե ծանր արժողությամբ (tolérance) վարվիլ հակակարծիքների հետ. միայն թե կարելի է պահանջել ամենքեն ալ, համակարծիք թե հակակարծիք, որ անկեղծ լինին և ուղղամիտ իրենց հարաբերությունների մեջ:

Շնորհակալ եմ Ձեր մարտ մեկի նամակով դրված թղթակցության համար, որի վերջին մասը (Ձեր ձեռքով գրված և Պարսկաստանի վերաբերյալ) հրատարակվեցավ Արմենիայի մեջ. իսկ ուս-ճաբոնական[ի] մասին գրվածը նորություն մը չէր ներկայացուներ մեր եվրոպարնակ և ամերիկարնակ ընթերցողների համար: Շատ շնորհակալ կը լինիմ, եթե հաճիք երբեմն թղթակցություններ դրկել տեղային կյանքեն, պարսկական և հայկական (այս վերջնի մասին ավելորդ կը համարիմ ըսել թե կուսակցական վեճերը գրողել չենք սիրեր): Պարսկաստանի տնտեսական, քաղաքական, առևտրական, կրթական ևն. վիճակին վրա տեսություններ: Ինչպես հայտնի է, մենք հայերին պարսիկ կառավարության հետ բարեկամական վարմունք մ'ունենալը օգտակար կը համարենք մեր ազգային քաղաքականության համար:

Ընդունեցեք հարգանքներիս հետ սիրալիր բարևներս:

Ձեր

Մ. Փոքրուզալյան

- Յ. Գ.* Ամուսինս և քոյրս հարգանքով կը դրկեն իրենց բարևներ Ձեզ, Ձեր զոքանչ Տիկին Շիրակյանին, նույնպես նաև Տիկին Աստղիկ Շահգալտյանին:
- Յ. Գ.** Արմենիան կը շարունակեմ նվեր դրկել տեղիդ Ազգ. ընթերցարանին: Կը հուսամ թե անարգել կը ստացվի: Փոխադարձ բարևներ Տիար Ալեքսան Տեր Վարդանյանին: Այսօր դրկեցի նաև մի քանի կտոր զիրքեր (Փոքրուզալյան հրատարակություններ) նվեր Մարաղայի Ձեր այդ ընթերցարանին:

* Գրված է առաջին էջի լուսանցքին—Շ. Փ.:

** Գրված է երկրորդ էջի լուսանցքին—Շ. Փ.:

«ԺԵ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ»-Ի Ա ՀԱՏՈՐԸ

Հաջորդաբար լույս են տեսնում Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի «նյութեր հայ ժողովրդի պատմության» մատենաշարի նոր, արժեքավոր ժողովածուներ¹: 1955 թ. ընթացքում լույս տեսավ Լ. Խաչիկյանի կազմած «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուի Ա մասը, որն ընդգրկում է 1401—1450 թվականները: Ինչպես գիտենք, ընկ. Լ. Խաչիկյանը 1950 թ. առանձին հատորով լույս է բնծայել ԺԴ դարի հիշատակարանները: Ներկա հատորը փաստորեն այդ նույն գործի շարունակությունն է հանդիսանում:

Պետք է ասել, սակայն, որ ԺԵ դարի հիշատակարանները թե՛ բանակով, թե՛ ծավալով ու ընդգրկող նյութի հարստությամբ, մեծ չափով գերազանցում են ինչպես ԺԴ, այնպես էլ նրան նախորդող դարերի հիշատակարաններին: Եթե «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» հատորը ընդգրկում է ընդամենը 845 մեծ ու փոքր հիշատակարան, 659 էջ (41 տպ. մամուլ) ծավալով, ապա ԺԵ դարի միայն առաջին կեսի հիշատակարանների գրախոսվող հատորն ունի նույն ծավալը և պարունակում է 744 հիշատակարան: Հրատարակի վրա է հանգուցյալ Գարեգին Ա. կաթողիկոս Հովսեփյանի աշխատասիրությամբ 1951 թ. Անթիլիասում լույս տեսած «Յիշատակարանը ձեռագրաց» չորս հատորանոց ժողովածուի Ա հատորը, որի մեջ ամփոփված են Ե դարից մինչև 1250 թ. առկա համարյա թե բոլոր հիշատակարանները՝ թվով 472 հատ:

Անշուշտ համեմատաբար ավելի վաղ շրջանի վերաբերող հիշատակարանների սահմանափակ քանակը առաջին հերթին պետք է բացատրել այն բանով, որ այդ ժամանակներից ավելի քիչ թվով ձեռագիր մատյաններ են հասել մեզ: Սակայն ԺԵ դարի հիշատակարանների առատությունը և հատկապես նրանց բովանդակության հարստությունը սխալ կլինեք բացատրել միայն ձեռագրերի առատությամբ: Մեզ հասած ձեռագիր մատյանների համեմատաբար մեծ թիվը ինքնին վկայում է այն մասին, որ ԺԵ դարում ձեռագրերի ընդօրինակման գործը բավական լայն չափեր էր ընդունել: Եվ դա պատահական չէր: Դեռևս ԺԴ դարում հիմնված կուլտուրական խոշոր կենտրոններից շատերը շարունակում էին գոյություն ունենալ և գործել նաև ԺԵ դարի առաջին կեսում: Հայաստանի տարբեր շրջաններում իրենց բուռն կրթական գործունեությունն էին ծավալել այդ դարիցներից դուրս եկած բազմաթիվ անվանի գործիչներ, որոնք նոր

¹ 1948—1956 թթ. ընթացքում լույս են տեսել հետևյալ սկզբնաղբյուրները՝

ա) Крестьянское движение в Армении в XIX веке, сост. В. Рштуни при участии К. Степаняна, Ереван, 1948.

բ) ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950:

գ) Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հատ. I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951:

դ) Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX века, (Сборник документов), сост. проф. В. Рштуни при участии К. Степаняна, Ереван, 1951.

ե) Армяно-русские отношения в XVII веке, Сборник документов. Подготовили к печати В. А. Парсамян, В. К. Восканян, С. А. Тер-Авакимова, под редакцией проф. В. А. Парсамяна, Ереван, 1953.

զ) ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա. (1401—1450 թթ.), կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955:

է) Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հատ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956:

Թափով շարունակում էին զարգացնել վանական դպրոցությունն ու դպրոցական գործը: Ժն դարի ընթացքում մեծ թվով ձեռագրեր են գրվել և արտագրվել ինչպես Հայաստանի ամենահեռավոր անկյուններում, այնպես նաև հայ գաղթաշխարհի կարևոր կենտրոններում:

Ինչպես գիտենք, կուլտուրական կյանքում նկատվող այս աշխուժությունը երկար շարունակվեց: Երկրում տեղի ունեցող քաղաքական վայրիվերումների, քոչվոր տիրակալների միջև անընդհատ կրկնվող միջֆեոդալական ընդհարումների, ասպատակությունների և հարստահարության պայմաններում տեական կուլտուրական զարգացման մասին խոսք լինել չէր կարող: Եվ իրոք, եթե ժն դարը տվեց միայն մի թուվմա Մեծոփեցի, որն իր հիշատակարաններից բացի թողեց նաև ժն դարի սկզբի համառոտ պատմությունը, ապա ամբողջ ԺՁ դարի ընթացքում չգտնվեց մեկը, որպեսզի գրի առնեք տառապալ ժողովրդի կոտորածների, գերեվարության, սարսափի ու սիստեմատիկ կոտորածների մռայլ տարեգրությունը: Հրապարակի վրա կան միայն մի քանի համառոտ ժամանակագրություններ, որոնք շատ կցկտոր կերպով են անդադառնում ԺՁ դարի անցքերին: ԺՁ դարի հիշատակարանները նույնպես անհամեմատ ազբատ են ժն դարից:

Ժն դարի ձեռագրերի բազմաթիվ և երբեմն բավական ընդարձակ հիշատակարանների փաստական հարուստ նյութը գալիս է մասամբ մեղմելու այս շրջանի պատմության ուսումնասիրությանը՝ զբաղվողների համար ստեղծված դժվարին վիճակը, որն հետևանք է հայ պատմագրության բնագավառում հիշյալ ժամանակաշրջանում նկատվող ամլություն: Ուստի և որքան էլ հարուստ լինեն նրանք ու քանակով շատ, այդուհանդերձ հիշատակարանների ամեն մի տողն անգամ թանկ է մեզ համար և արժանի ուշադրության ու հրատարակման:

Թե որքան կարևոր նշանակություն ունեն ժն դարի հիշատակարանները նույն ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմության սիստեմատիկ շարադրանքը տալու համար, այդ երևում է հենց ժողովրդուհի կցված ընդարձակ առաջաբանից, որտեղ առաջին անգամը լինելով շարագրված է ժն դարի առաջին կեսի պատմությունը՝ անհրաժեշտ նյութերը մեծ մասամբ քաղելով հրատարակվող հիշատակարաններից: Պետք է ասել, որ այս առաջաբանը առ այսօր փաստորեն հանդիսանում է միակ աշխատությունը, որտեղ փորձ է արված ի մի բերել առկա բոլոր նյութերը և տալ այդ ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական և կուլտուրական կյանքի համեմատաբար մանրամասն պատմությունը:

Դարերի ընթացքում մշակված և տրագիցիոն կերպով կրկնվող հիշատակարանների շարադրման ձևը, ըստ որի ձեռագրի ընդօրինակող գրիչը հիշատակում է ընդօրինակման ժամանակը, վայրը, պատվիրատուի, ստացողի և ձեռագրի գրման ու ծաղկման գործի հետ անմիջապես առնչություն ունեցող անձնավորությունների անունները, ընդհանրապես կաշկանդել է գրիչներին և պատճառ դարձել հիշատակարանների միօրինակ բովանդակությունը: Բայց և այնպես քիչ չեն եղել նաև զբաղեւտ և անվանի գրիչներ, որոնք չեն վարանել խախտելու ընդունված շարունակ և կամ այդ իսկ սխառմով հիշատակագրելիս, առանձին դեպքերում, և հատկապես գրչության ժամանակն ու հանգամանքները նկարագրելիս, ընդարձակարանել են և թողել շափազանց արժեքավոր մանրամասնություններ, այդպիսով անգնահատելի ծառայություն մատուցելով հետագա սերունդներին:

Հիշատակարաններում բավական արժեքավոր տվյալներ կան ժն դարի առաջին կեսի, ինչպես քաղաքական անցուղարժեքի, այնպես նաև ժամանակի պետական, եկեղեցական և հասարակական գործիչների մասին: Հիշատակարանների տվյալներով ճշտվում են նաև կանգ-Թեմուրի արշավանքների, Կարա-Կոլունու, Ամիր Յուսուֆի, նրա որդու՝ Իսքանդարի և սրա եղբոր՝ Զհանշահի իշխանության ժամանակաշրջանի վիճելի թվականները, և որոշ մանրամասնություններից հնարավոր է դառնում մոտավոր կուսումներ անել առանձին իշխանավորների վարած ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ:

1441—1443 թթ. հիշատակարանների մեջ հետաքրքիր տեղեկություններ կան նաև կաթողիկոսական աթոռի Սպից Լյմիածին տեղափոխելու և դրան հաջորդող իրադարձությունների մասին (էջ 522, 531—532, 536, 538 և այլն):

Մեզ համար առանձնապես կարևոր են այն, թեև շափազանց ժլատ, տեղեկությունները, որ հաղորդում են հրապարակվող հիշատակարանները, Հայաստանի տարբեր մասերում դեռևս իրենց գոյությունը պահպանած հայ ֆեոդալական տների վերջին շառավիղների և նրանց վայելած իշխանական իրավունքների վերաբերյալ: Չափազանց հետաքրքիր է երուսաղեմի Մատենադարանի

№ 1617 ձեռագրի մեջ պահպանված և Համշենի հայ իշխան պարոն Դավթին հասցեագրված գրությունը (էջ 345):

Հայտնի է, որ Համշենի հայկական իշխանության մասին մինչ այժմ մեր ունեցած տեղեկությունները սահմանափակվում էին միայն Կլավիխոյի ուղեգրության տվյալներով, որոնք վերաբերում են 1406 թվականին: Այնինչ, ըստ հիշյալ գրության և նույն ձեռագրում պահպանված հիշատակարանի (էջ 344), 1425 թվականին Համշենում իշխել է պարոն Դավթիբը, որն ամենայն հավանականությամբ Կլավիխոյի մոտ հիշված պարոն Առաքելի որդին պետք է լինի: Այստեղ նույնպես, ինչպես Կլավիխոյի մոտ, կարևոր տեղեկություններ կան Համշենի սահմաններում երթևեկող վաճառականներից և փոխադրվող ապրանքներից գանձվող մաքսի մասին:

Ուշագրության արժանի են նաև հիշատակարանների հաղորդած տեղեկությունները երկրում ծավալվող կուլտուրական շինարարության, կրթական գործի և դպրոցական կյանքի, ինչպես նաև առանձին գրական-կրթական գործիչների վերաբերյալ: Բանասիրության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում հիշատակարանների մեջ պահպանված՝ Գրիգոր Տաթևացու, Թովմա Մեծոփեցու, Մատթոս Զուլայեցու, Առաքել Սյունեցու, Գրիգոր Նաթանեցու և մեծ ու փոքր այլ գործիչների կենսագրական տվյալներն ու նրանց գիտական-հասարակական գործունեության կարևոր մանրամասնությունները, գրված երբեմն այդ գործիչների, իսկ շատ հաճախ նրանց մերձավոր աշակերտների ձեռքով:

Այս մանրամասնությունների մեջ է, որ հիշատակվում են առանձին հեղինակների կարևոր աշխատությունները, որոնցից զվազվորների ցուցակը (շուրջ քսան անուն). մեջ է բերված ժողովածուի առաջաբանում (էջ XL—XLI):

Այս հատորում զգալի տեղ են գրավում նաև չափածո հիշատակարանները: Առավել արժեքավորներից է Գրիգոր Մեքենց Նաթանեցու հայտնի «Յիշատակարան Աղվտից»-ը, որը առաջին անգամը լինելով լույս է տեսնում ամբողջությամբ՝ չորս տարբեր ձեռագրերի ու հրատարակված տարբերակների բարեխիղճ համեմատությամբ (էջ 272—286): Բանասիրության համար գիտական հետաքրքրություն է ներկայացնում նույն հեղինակի «Պատմություն արշաւանաց և ասպատակութեանց զարաց Լանկ-Թամուրի, ի Գրիգորէ ի Նաթանեցու» խորագիրը կրող չափածո ստեղծագործությունը (էջ 286—288), որը պարունակում է այնպիսի մանրամասնություններ, որոնց մասին լուր է «Յիշատակարան Աղվտից»-ը:

Ժն դարի սկզբի քաղաքական անցուղարձերի մասին հետաքրքիր մանրամասնություններ են պարունակում նաև Առաքել Սյունեցու «Աղամագրքի» 1403 թ. և Նիզանում ընդօրինակված «Ճայմաւուրքի» 1407 թ. Հովհաննես գրչի չափածո հիշատակարանները (էջ 34—37 և 68—71): Ուշագրության արժանի է նաև Գրիգոր Նաթանեցու աշակերտներից՝ Առաքել Բաղիշեցու չափածո ողբը, նվիրված իր ուսուցչի եղբորական մահվան նկարագրությանը (էջ 322—333): Նաթանեցու նահատակվեց 1425 թ. Խառաքատի կամ Յիպնա վանքում Բաղեշի քրդական Ռոժակ ցեղի հրոսակների ձեռքով:

Հիշատակարաններում ավելի սակավ են հանդիպում տվյալներ երկրի տնտեսական կյանքի՝ առևտրի, վաճառականության, արհեստների և այլնի վերաբերյալ: Հողային հարաբերությունների մասին մասնակի տեղեկություններ կարելի է գտնել միայն վանական տնտեսությունների նկարագրությունների և հավատացյալների կողմից վանքերին ու եկեղեցիներին կատարված նվիրատվությունների մասին վկայող հիշատակությունների մեջ: Սակայն դրանք մեծ մասամբ վերաբերում են վանական՝ «վանֆային» հողատիրությանը: Ժն դարում մեծ տարածում ստացած ֆեոդալական խոշոր հողատիրական ինստիտուտներ՝ «սողաբուլայի», ինչպես նաև «իկթայի» կամ «իկթա-յն թամլիքի» մասին ոչ մի հիշատակության չենք հանդիպում: Մուսլիմ մասին եղած տվյալները վերաբերում են նույնպես վանքերի կողմից ձեռք բերված «դանձագին» կամ «արծաթագին» մուսլիմներին (էջ 565, 581, 582): Մուսլիմ ժառանգական խոշոր հողատիրության վերաբերյալ նույնպես ոչ մի հիշատակություն չկա:

Ինչպես ասվեց, կցկտուր են նաև տեղեկությունները քաղաքային կյանքի, առևտրի և արհեստավորության վերաբերյալ: Սակայն եթե ի նկատի ունենանք, որ դեռևս ժՊ դարում Հայաստանի խոշոր և վաճառաշահ քաղաքներից շատերը, որոնք գտնվում էին միջազգային տարանցիկ առևտրի զլխավոր ճանապարհների վրա, մոնղոլական տիրապետության շրջանում քայքայվեցին և որպես առևտրի և արհեստագործության կենտրոններ, հետզհետե կորցրին իրենց արժեքը, ապա այդ հատ ու կենտ և համառոտ հիշատակություններն ու աղբյուրիկ տվյալները (էջ 136, 167, 237, 344, 510 և այլն) ավելի քան մեծ նշանակություն են ստանում և կարող են

դիտվել որպես տվյալ ռամանակաշրջանի և նրան հաջորդող դարերի հայ արհեստավորության և առևտրական դասի պատմության համար կարևոր փաստաթղթեր:

Բայց եթե ընդհանրապես վերցրած կարելի է ասել, որ արհեստավորության վերաբերյալ տեղեկությունները կցկտուր են ու համառոտ, ապա արհեստավորական դասի մեջ իրենց առևրևույթ համեստ, սակայն շատ կարևոր տեղ գրավող ձևազրեթի քրտնաշնն արտագրողների, գրիչների և ծաղիկողների սոցիալական վիճակի և աշխատանքի պայմանների մասին հիշատակարանները բավական հարուստ նյութ են պարունակում: Ենթահիվ այդ հիշատակությունների, մենք մանրամասն ծանոթանում ենք ինչպես առհասարակ գրչության և ձևազրեթի ընդօրինակման արվեստին, այնպես նաև հայ մատենագրության անձնավեր աշխատավորների հերոսական ստեղծագործական աշխատանքին, ճանաչում ենք նրանց և արձանագրում նորանոր անուններ, որոնք գալիս են հարստացնելու հայ կուլտուրայի անխնայ մշակների՝ բազմաբղուն գրիչների ու ծաղիկողների առանց այն էլ բավական պատկառելի ցանկը:

Որքան բնորոշ են Զաքարիա գրչի հետևյալ խոսքերը, որ նա գրել է իր ուսուցիչ՝ Հովհաննես գրչի մասին:

«Ան արդ, գրեալ եղև Յոհան գլուխն ձեռամբ վարդապետին իմոյ տէր Յոհանիսի Մանգասարենց, քաջ բարտողին, որ ՀԲ(72) տարի՝ ամառն և ձմեռն, գիշերն ու ցերեկ ի գրել կեաց: Որ գրեալ եղև ձեռամբ նորա Խ(40) Այսմաուար և Տարենգիբք, իսկ փոքր գիրք՝ Տետր և Աղօթամատոց, Եարակնոց և Սաղմոսարան, Մաշտոց և Գանձասետր Մ(50) — Կ(60) և այլ աւելի, և Աւետարանս ԼԲ(32): Ան զայս Յոհան գլուխս ի ծերութեան ժամանակս, որ աշք չէր հայիլ և ձեռքն կու դողալու, բազում շարչարանօք հապիւ կարաց աւարտել, և այլ շկարաց գրիչ բունել մինչ ի վախճան, որ հանգեաւ ի Քրիստոս ՁԶ(86) ամաց» (էջ 587):

Կարևոր են նաև տեղեկությունները երաշտի, մորեխի, սովի, թանկության, համաճարակների (մահատարածամ) և այլ բնական աղետների վերաբերյալ: Հատկապես ուշագրության արժանի են ապրանքների գների մասին եղած հատուկներ տվյալները, որոնց շնորհիվ հնարավոր է մոտավոր պատկերացում կազմել բնակչության տնտեսական վիճակի և նյութական բարեկեցության մասին:

Հիշատակարանների մեջ մեծ չափով արտացոլված են նաև ժամանակի սոցիալ-տնտեսական, հարկային, վարչական և այլ կարգի տերմիններ, որոնցից շատերը արաբա-պարսկական տերմինների հայերեն համանիշներն են և այս տեսակետից էլ արժանի են հատուկ ուշադրության: Այդպիսի տերմիններից են, օրինակ, «հաւատի գին» (ջիդյա), «թագավորական հարկ» կամ «դեմոսական հարկ» (հոկուկ-ե դիվանի), «կողմնապետ» (ամիրթուման կամ բեկլարբեկ), «տեղապահ» (նայիբ), «գավառապետ» (հաբիմ), «հազարապետ» (միքբաշի), «սեպուհ» (աայան, աշրաֆ), «տանուտեր» (քյադխուդա), «վերակացու» (մուբաշիր) և այլն և այլն:

Ենթահիվ այն բանի, որ ձևազրեթի պատմության կապակցությամբ, հիշված են բազմաթիվ հայտնի և անհայտ անձնավորությունների անուններ, որոնց կվլված են նաև նրանց սոցիալական դիրքին հատուկ տիտղոսներ և պաշտոնների անուններ, ուստի հիշատակարանների բնագրերի մեջ մեծ թիվ են կազմում հատկապես սոցիալական տերմինները:

Ավելորդ չենք համարում այստեղ նշել, որ ընկ. Լ. Խաչիկյանը մեծ և կարևոր աշխատանք է կատարել կազմելով ինչպես տեղանունների, այնպես նաև առարկայական ցանկեր, որոնք զգալի չափով հեշտացնում են հիշատակարանների օգտագործումը: Դեռ ավելին, անձնանունների և աշխարհագրական անունների ցանկը հարստացված է յուրաքանչյուր անվանը հաջորդող համառոտ բացատրություններով, որոնց շնորհիվ այս ցանկերը նաև բառարանների դեր են կատարում և գիտական մեծ արժեք են ստանում: Կալ կլինեն ռակայն, որ նույն սկզբունքով կազմվեին նաև առարկայական ցանկերը, և հարկային, սոցիալական, վարչական և այլ տերմիններին ևս տրվեին համառոտ բացատրություններ, որով «ցանկեր»-ի այս ստվար մասը (150 էջ) ավելի քան անթիբրի կդառնար:

Այսպիսի բացատրություններ տրված են միայն օտար տերմիններին, որոնք առանձնացված են «օտար բառեր»-ի բառարանում (էջ 814): Այս առանձնացումը պատճառ է դարձել, որ մի շարք կարևոր սոցիալ-տնտեսական տերմիններ դուրս են մնացել առարկայական ցանկից, ինչպես՝ «ողֆ» կամ «ոխվ» (վակֆ), «մուլք», «թարխան անել», «խաս անել», «ղապալա», «թաման», «գանուշման», «ղատի» և այլն, և փոխարենը այնպիսի տերմիններ, որոնք տեղ են գտել առարկայական ցանկի համապատասխան բաժիններում, ինչպես ասվեց, մնացել են առանց բացատրության (տես «աթափազ», «ամիրա», «ամիրզա», «խան», «մելիբ», «նայիպ», «ոսայիս»):

«ջազայ» (ջիզայ), «Ֆանկա», «ժոխալ» և այլն): Իսկ օտար բառերի բառարանից դուրս են մնացել՝ «սըրեխ» (արար.) — զենք (էջ 276), «Էմնություն» (արար.) — ապահովություն (էջ 280), «քամ» (պրոկ.) — սակավ (էջ 324) և հատուկենտ նման, մեծ մասամբ հանրահայտ, բառեր:

Մի քանի խոսք հիշատակարանների հրատարակման գիտական սկզբունքի մասին:

Պետք է նշել, որ ներկայումս հնարավոր չէ տալ որևէ ժամանակաշրջանի հայերեն բոլոր ձևազրկերի հիշատակարանների լիակատար ժողովածուն: Մի կողմ թողած այն փաստը, որ շատ ձևազրկեր դեռևս գտնվում են մասնավոր անձանց ձեռքում, մեծ թվով ձևազրկեր կան կենտրոնացված արտասահմանյան երկրների թանգարաններում ու ձևազրկատներում, որոնք մատչելի չեն մեզ: Հիշյալ ձևազրկերի շատ շնչին մասն է նկարագրված լույս տեսած ձևազրկացուցակներում: Այսպես, Երուսաղեմի Մատենադարանի 4000 հայերեն ձևազրկերից նկարագրված են ընդամենը 383 ձևազրկեր¹, Վենետիկի շուրջ 3500 ձևազրկերից նկարագրված են 319-ը², Վիեննայի մոտ 1000 ձևազրկերից՝ 573-ը³, իսկ Սպահանի ս. Ամենափրկչի վանքի 1000-ի չափ ձևազրկերի հրատարակված ցուցակներ չկան: Մենք այստեղ ի նկատի ունենք այն ձևազրկերը, որոնք գտնվում են արտասահմանի հայություն և հայ ազգային-կենդանական հաստատությունների ձեռքում, մինչդեռ թեև անհամեմատ փոքր թվով, սակայն եվրոպական զանազան խոշոր թանգարանային հաստատություններում ևս պահպանվում են հայերեն ձևազրկեր, որոնք թեև ուսումնասիրված են առանձին եվրոպացի հայագետների կողմից, սակայն հրատարակված ցուցակները հեռու են լիակատար և սպառիչ լինելուց:

Պարզ է, ուրեմն, որ հիշատակարանների հրատարակվող ժողովածուները այս կամ այն չափով թերի են և չեն ընդգրկում առկա բոլոր ձևազրկերը: Սակայն, քանի որ միաժամանակ լույս են տեսնում նաև Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի «Յիշատակարանը ձևազրկաց» մեծածավալ ժողովածուի հատորները, ուստի կարելի է հուսալ, որ այս երկու զուգահեռ հրատարակությունները մեծ չափով կարող են լրացնել միմյանց:

Լ. Խաչիկյանը ջանք չի խնայել, որպեսզի, որքան հնարավոր է, քիչ հիշատակարաններ դուրս մնան այս ժողովածուից: Այդ նպատակով նա պրպտել է նաև մի քանի անտիպ ձևազրկաց ցուցակներ, որոնցից քաղել է զգալի թվով արժեքավոր հիշատակարաններ:

Հիշատակարանների քննադրերի հրատարակությունը կարելի է օրինակելի համարել Դրանք վերածանված և ընթերցված են ամենայն ուշադրությամբ և գիտական բարեխղճությամբ: Նման բնագրերի հրատարակության ժամանակ, չափազանց կարևոր նշանակություն ունի ճշգրիտ կետադրության վերականգնումը, որը հնարավոր է միայն բեազրի մտքի ճիշտ ընկալման դեպքում: Այս տեսակետից ևս գրախոսվող հատորը արժանի է դրվատանքի: Կան միայն հատուկ կենս վիճելի տեղեր, ինչպես, օրինակ, Մատենադարանի № 6862 ձևազրկի 1441 թ. հիշատակարանի այն հատվածում (էջ 514), որտեղ գրիչը նկարագրելով Ջահանշահի արշավանքը դեպի Վրաստան և Սամշվիլից քաղաքի ավերումը գրում է. «Եւ յորժամ եկն ազգն Տանկաց՝ փախըստական եղևն աղոն Վրաց և մտան ի յԱփխազս, և մնաց ազգս Հայոց, որք եկեալ էին և բնակեալ ի Վրացստունս՝ միջանկյալ նախադատություն է, հետեաբար վերջին բառից հետո՝ բուլի փոխարեն պետք է լինի ստորակետ: Խոսքը այստեղ վերաբերում է Շահաբադի արշավանքների ժամանակ Վրաստան ապաստանած հայերին:

Իսկ Մատենադարանի № 4829 ձևազրկի 1444 թ. հիշատակարանի հետևյալ հատվածը. «Կըրըրվաւ և նոյն Թումայ վանից հաւր ձեռօքն նաջըաղընի վէջբու հողն արտ, ամիրաց մըլըրաթըղթովն և նըշանովն՝ սուրբ Վարդանայ մուլք գընալ և...» էդին, և կաթողիկոսնց արտերն, և Պէշգէնի դրախտն՝ սուրբ Վարդանայ վանիցն մուլք, շինեցաւ և ձիթահանքն սուրբ Վար-

¹ Տես Մայր ցուցակ հայերեն ձևազրկաց Երուսաղէմի սրբոյ Յակոբեանց վանքի, առաջին հատոր, կազմեց Արտավազդ արք., Սյուրմեյան, Վենետիկ, 1948, երկրորդ և երրորդ հատորները, կազմեց Նորայր Եպս. Պողարյան, Երուսաղեմ, 1953—1954:

² Տես Մայր ցուցակ հայերեն ձևազրկաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատ. Ա և Բ, կազմեց Բարսեղ Վ. Սարգիսյան, Վենետիկ, 1914—1924:

³ Տես Ցուցակ հայերեն ձևազրկաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Հակովբոս Վ. Տաշյան, Վիեննա, 1895:


* Բնագրում մեկ բառի տեղ ազատ է թողնված, որտեղ հավանաբար պետք է լիներ այգեախիրջ անունը:

դանայ, ի Գուաշ գեաւոս», մենք կառաջարկեինք կետադրությունը փոխել և կարդալ այսպես. «Կըտըրվաւ և նոյն թումայ վանից հաւր ձեռօքն Նաշրադրնի վէցքու հողն արտ, ամիրաց մըլ-քաթըղթովն և նըշանովն, սուրբ Վարդանայ մուլք. գընաւ և... էգին և Կաթողիկոսենց արտերն և Պէշգէնի գրախոսն՝ սուրբ Վարդանայ վանիցն մուլք. շինեցաւ և ձիթահանքն սուրբ Վարդանայ, ի Գուաշ գեաւոս»:

Համառոտ և չափազանց ժլատ են ձեռագրերի ներկա վայրի և վիճակի մասին տրված տեղեկությունները: Կան հիշատակարաններ, որոնք թեև քաղված են Մատենադարանում պահվող ձեռագրերից, սակայն դրանք ժամանակին լույս են տեսել կամ ձեռագրաց ցուցակներում և կամ այլ ժողովածուներում և ուսումնասիրություններում: Այս դեպքում անշուշտ վատ չէր լինի նշել այդ մասին և ցույց տալ, թե ի՞նչ առիթներով և որտե՞ղ են լույս տեսել այդ հիշատակարանները: Գրանից աշխատությունը մեծ չափով կշահեր Նախորդ հրատարակությունների մասնակի համեմատությունը ընկ. Լ. Խաչիկյանի կազմած հատորներում հրատարակված քննադրերի հետ, թույլ է տալիս ասելու, որ հին հրատարակություններից շատերը աղավաղված են և կրճատված, ուստի և չեն կարող հավաստի սկզբնաղբյուրներ համարվել:

Այսպիսով, ժն դարի առաջին կեսի հայերեն ձեռագրերի հիշատակարանների այս ստվար հատորը ոչ միայն դալիս է վկայելու նրա հրատարակչի գիտական բարձր հատկանիշների և կատարած քրտնաջան աշխատանքի մասին, այլ այն միաժամանակ հանդիսանում է սովետահայ հայագիտության լուրջ նվաճումներից մեկը: Կասկածից դուրս է, որ նման արժեքավոր և լուրջ հրատարակությունները նոր թափ են հաղորդում հայագիտության զարգացմանը:

Լ. ՓԱՓԱԶՅԱՆ



ԺՆ ՂԱՐԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՃԵՆԱԳՐԵՐԻ ՏՐՆՆԱԿԱՐԱՆՆԵՐ, ՄԱՍԻ Բ, ԿԱՂ-
ԱՅԳ Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ, ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԱ ՀԻՃԱՏԱՐԱԿԼԵՐՅՈՒՆ, ԵՐԽԱՆ, 1958,
600 էջ:

Լ. Խաչիկյանի «ԺՆ Ղարի Հայերեն Ճեռագրե-
րի Տրննակարաններ» մեծածավալ աշխատու-
թյան Բ մասը նույն հեղինակի «ԺԻ Ղարի Հա-
յերեն Ճեռագրերի Տրննակարաններ» և «ԺՑ
Ղարի Հայերեն Ճեռագրերի Տրննակարան-
ներ» Ա մասի օրգանական շարունակությունն
է: Գրախոսվող հատորը բովանդակում է
1451—1480 թվականներին գրված 575 ճեռա-
գրերի Տրննակարաններ, որոնց բովանդակու-
թյունը մեծ արժեք է ներկայացնում Հայաստանի
և Հարևան երկրների ինչպես բաղաբական, այն-
պես նաև սոցիալ-տնտեսական պատմության
ուսումնասիրության համար:

Հանրահայտ փաստ է, որ մի տասնամյակ
սրանից առաջ XV դարի հայ ժողովրդի պատ-
մության վերաբերյալ հրապարակի վրա եղած
նյութերը շատ աղքատիկ էին, և հայագետները
այդ շրջանի մասին սեղմ և ընդհանուր դատողու-
թյուններից այն կողմ չէին կարող անցնել: Իրա-
վացի էր Հ. Մանանդյանը, երբ պնդում էր, որ
Տրննակարանների պատմության գիտա-
կան լրիվ ուսումնասիրությունը հնարավոր
կդառնա միայն այն ժամանակ, երբ հրապարակ
կգան դեռևս չհրատարակված հայ և օտար աղ-
բությունները, որոնց թվում նա ընդգծում էր հա-
յերեն ճեռագրերի Տրննակարանները: Ուրա-
խություններ պետք է նշել, որ այդ աշխատանքը
մեզ մոտ սկսվել է և նորմալ կերպով առաջ է
ընթանում: Արդեն լույս են տեսել Վ. Հակոբ-
յանի «Մանր ժամանակագրություններ» (XIII—
XVIII դդ.) երկու սուլար հատորները, «Մատե-
նագրանի պարսկերեն վավերագրերը» մատե-
նաշարի «Հրովարտակներ» շարքի Ա և Բ պրակ-
ները և Լ. Խաչիկյանի «Հայերեն ճեռագրերի
Տրննակարաններ» երեք սովորածավալ հա-
տորները:

Եթե գրախոսվող գրքի մասին դատելու լի-
նենք ելնելով սոսկ նրա վերնագրից, ապա պետք
է կարծել, որ մենք գործ ունենք միայն 1451—
1480 թթ. հայերեն ճեռագրերի Տրննակարան-
ների մի ժողովածուի հետ: Սակայն իրականում
գիրքն ընդգրկում է ոչ միայն Տրննակարանները,
այլև նրան կցված 143 էջից բաղկացած մի ըն-
դարձակ առաջաբան, որը իրավամբ համարվում
է XV դարի երկրորդ կեսի պատմությանը նվիր-

ված խիստ արժեքավոր մենագրություն՝ գրված
ինչպես Տրննակարանների, այնպես էլ տպա-
գիր և անտիպ այլ աղբյուրների ընձեռած փաս-
տական հարուստ նյութի հիման վրա: Այս առա-
ջաբանը XV դարի Տրննակարանների Ա մասին
կցված առաջաբանի հետ միասին ամբողջաց-
նում է XV դարի բաղաբական և տնտեսական
պատմությունը, հանդիսանալով XV դարի պատ-
մությանը նվիրված միակ լուրջ գիտական ու-
սումնասիրությունը:

Քանի որ Տրննակարանների գիտական հրա-
տարակության սկզբունքները Լ. Խաչիկյանի
հրատարակած նախորդ հատորներից արդեն
ժանոթ են և դրանց մասին նախորդ գրախո-
սողները արդեն խոսել են և վեր հանել դրանց
բանասիրական ու արքայադպրական առավե-
լությունները¹, ուստի մենք ավելորդ ենք համա-
րում այստեղ կրկին անդրադառնալ այդ հար-
ցերին: Մենք կփորձենք միայն կանգ առնել Տրն-
նակարանների և հատորին կից հարուստ գի-
տական ապարատի վրա:

XV դարի երկրորդ կեսի պատմությանը նվիր-
ված այս ընդարձակ «Ներածությունը», որ հե-
ղինակի կողմից համեստորեն անվանված է
«Համառոտ ակնարկ», բաղկացած է երկու մա-
սից, որոնցից առաջինում քննության է առնված
բաղաբական պատմությունը, իսկ երկրորդում՝
շատ ազնիվ մանրամասն ուսումնասիրության են
ենթարկված երկրի ներքին կյանքի հետ կապ-
ված բազմաթիվ հարցեր:

Խնդրոտ առարկա ժամանակաշրջանի բաղա-
բական անցուղարձեղի պատմությունը Հայաս-
տանում բնորոշվում է այն անդադար պայքա-
րով, որ տեղի էր ունենում թուրքմենական երկու
ազգակից ցեղերի՝ աղ-կոյունյունների և կարա-
կոյունյունների միջև: Այդ երկու ցեղերը հաս-
տատվել էին Նիքարտի ու Տիգրիսի վերին հո-
սանքում, դեռևս XIII դարում: XV դարի սկզբը-
ներում, Լանկ-Թեմուրի արշավանքներից հետո
նրանք սկսեցին ակտիվ գործունեություն ծավա-

¹ Տե՛ս Վ. Հակոբյան, ԺԻ Ղարի հա-
յերեն ճեռագրերի Տրննակարանները, Հայկ.
ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1951, № 3,
Հ. Փ ա փ ա գ յ ա ն, ԺՆ Ղարի հայերեն ճե-
ռագրերի Տրննակարանների Ա հատորը,
Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ.,
1956, № 10:

լել Փոքր Ասիայում: Նրանց միջև պայքարը սկսվել էր դեռևս XV դարի 30-ական թվականներից և զրա հիմնական նպատակը ամբողջ Հայաստանի վրա տիրապետության հաստատումն էր: Փոփոխական հաջողություններով այդ պայքարը տեղեց մինչև 1488 թվականը և ավարտվեց Աղ-կոյունլու Ուզուն Հասանի Մարանդի մոտ տարած հաղթանակով:

Այդ երկարատև պատերազմների ժամանակ ստանալ էր գնում աշխատավոր հայ ժողովուրդը, կոտորվում, կողոպտվում, գաղթի մատնվում. այդ մասին կան սրտաճմրկ նկարագրությունների ակնատես գրիչների թողած հիշատակարաններում: Սակայն աղ-կոյունլուների տիրապետության շրջանին ևս բնորոշ էին հաճախակի ընդհարումները հարևան երկրների և հատկապես օսմանյան Քուրքիայի հետ: Ուզուն Հասանից և համակապես նրա որդի Յաղուբ փաղիշահից հետո աղ-կոյունլուների պետությունը բզկտվում էր ներքին զահակալական կռիվներից, և երկիրը իրաստորեն մատնված էր անիշխանության: Դեռևս Յաղուբ փաղիշահի օրոք արդեն շափազանց ծանրացած էր սազաբնակչության վիճակը: Հիշատակագիրները նրան անվանում են «այր ժանտ և անօրէն, անգութ և անողորմ, հայածիշ բրիստոնէից», որ «խափանեաց ի բրիստոնէից թամբով ձի հծնել, զհնչումն ժամուց և զանգակաց, զզնմունս, և զսպիտակ գօտի առանց կապուտի, և այլ բազում շարիս արար» (Առաջարան, էջ XXXVIII): Նա փորձում էր նաև բռնի մահմեդականացնել Սյունիքում և Այրարատում դեռևս իրենց գոյությունը պահպանող հայ ֆեոդալներին. «Յայսմ ամի (1488) ասված է մի հիշատակարանում,— ևս (40) ազատորդի կլան թէ տաճկացէք. այլ ողորմածն աստուած ձեռնուռ և ազնական եղև նոցա... որ է (?) ամիս կալուլական կացին և բազում տուգանք տվին և ի հաւատոցն Քրիստոսի ոչ դարձան» (նույն տեղում):

1480-ական թվականներից սկսած օսմանցի թուրքերի և եգիպտական զորքերի միջև մղվող պատերազմները իրենց հերթին ոտնատակ էին անում օսմանցիների կողմից զբաղված հայկական շրջանները և Քուրքիայի հայաշատ քաղաքների բնակչությանը:

Առանձնապես աղետաբեր էին Արդարիլում հաստատված Սեֆյան շեյխերի կազմակերպած կրճրված մուրիդների սիստեմատիկ արշավանքները դեպի Դաղստան և Վրաստան, որոնց ժամանակ ավերվում և կողոպտուի էին ենթարկվում Հյուսիսային Ազրբեջանի ու Վրաստանի գյուղերն ու քաղաքները: «Եւ զամենեսեան,— ասված է մի հիշատակարանում,— որ ի ձեռն էած (Շեյխն-Հալալար) ի բրիստոնէից և ի տաճ-

կաց զարս և զկանայս սրով կոտորեաց և զքաղաքն ամենայն (Շիրվանը) հրով այրեաց կումաշօքն և որ ինչ էր ի նմա... Եւ զանասունս ամենայն զձի և զըորի, զուխտ և զոյսար սրով կոտորեաց, և այնպէս ոչ խնայեաց ի մարդ և յանասուն» (էջ XXXVII):

Ինչպես այս հատորում, այնպես նաև «Ժեղարի հիշատակարանների» Ա մասում, ընդգրկված մեծ թվով հիշատակարանները կարևոր սկզբնաղբյուրներ են նաև հարևան Վրաստանի պատմության համար: Ստեփանոս Զմշկաձագեցի բանաստեղծ հիշատակագիրը, Մելիքսեթ գրիչը և շատ ուրիշներ վառ գծերով նկարագրում են այն կողոպտիչ արշավանքները, որ կատարել է Ուզուն Հասանը իր հրոսակախմբերով Վրաստանի շրջաններում, հատկապես Քրիստիում և Գորիում (էջ 394—395, 415):

Ներկա հատորի, ինչպես նաև Ա հատորի առաջարանում Լ. Խաչիկյանը ի մեխ բերել XV դարի քաղաքական պատմությանը վերաբերող հիշատակարանային բազմաթիվ կարևոր տվյալներ, որոնք, որպես դեպքերին ժամանակակից, ակննատես և ակնեջալուր գրիչների ճշմարտապատում արձանագրություններ, մեծ շափով օգնում են ճշտելու թուրքմենական դինաստիաների տիրապետության շրջանի ժամանակագրական մուծ և վիճելի շատ հարցեր: Պետք է ասել, որ արևելագիտությանը հետաքրքրող պատմական կարևոր ժամանակաշրջաններից մեկը հանդիսանում է հենց ժեղարի թուրքմենական դինաստիաների տիրապետության ժամանակաշրջանը: Այդ շրջանի քաղաքական պատմությանն ու ժամանակագրական որոշ հարցերի լուսաբանմանն են նվիրված նշանավոր արևելագետ Վ. Մինորսկու «Turkmenica» հոդվածաշարքի մեջ մտնող տասնից ավելի հոդվածներ: Եթե իսխանության և սեֆեյիների տիրապետության շրջանը հայտնի է պարսկալեզու անվանի պալատական պատմիչներով, ապա կարա-կոյունլուների և աղ-կոյունլուների շրջանը այս տեսակետից գրավում է ամենահետին տեղերից մեկը: Այս շրջանը չունի Աթամելիք Ջուլիջիի կամ Ռաշիդ ադ-դինի, Հասան բեկ Ռեմլուի կամ Իսքանդար Մունշիի նման պատմագրության հսկաներ: Եղած մի բանի խոշոր պատմագրական երկերը (Մաթևա՝ ուս-սաադեյն, Ռովզաթ-ուս-սաֆա, Հաբիր-ուս-սիար և այլն) ստեղծված են հարևան մյուս մուսուլմանական թագավորների ուրբունիքներում և հիմնականում նվիրված լինելով իրենց երկրների պատմությանը, հիշյալ թուրքմենական տերությունների պատմությանը անգրագարձել են միայն այնքանով, որքանով որ այն կարող էր վերաբերել երկու պետությունների փոխադարձ հարաբերություններին:

Պարզ է ուրեմն, որ նշված ժամանակաշրջանի պատմական սկզբնաղբյուրները սահմանափակվում են միայն մեծ ու փոքր ժամանակադրություններով և հիշատակագրություններով, որոնց մեջ բավական կարևոր տեղ են գրավում հայերին ձեռագրերի հիշատակարանները:

Ակներև է սակայն, որ հիշատակարանները առավել անմիջական նշանակություն ունեն Հայաստանի և հարևան երկրների հայաշատ կենտրոնների ներքին կյանքի ուսումնասիրության և հատկապես տնտեսության ու կուլտուրայի մասին ափելի պարզ պատկերացում կազմելու համար: Այդ համոզիչ կերպով ապացուցված է գրախոսվող գրքի «Ներածական» մասում, որտեղ միանգամայն նոր տվյալների հիման վրա է. Խաչիկյանը բազմակողմանի ուսումնասիրության է ենթարկել Հայաստանի ներքին կյանքին վերաբերող մի շարք կարևոր հարցեր:

Այստեղ մենք գտնում ենք Հայաստանի տերիտորիայի վրա գոյություն ունեցող մանր իշխանությունների շարադրված պատմությունը, որտեղ լայնորեն պարզաբանված են նաև այդ իշխանությունների փոխհարաբերությունները կաթողիկոսության և աղղիկոսության հետ: Հատկապես կարևոր են ինչպես Բաղշի, այնպես նաև Խիզանի, Ոստանի, Հազոյի, Սասունի, Ջերմուկի, Սպարկերտի, Բալուխի, Մժնկերտի և Հարավային Հայաստանի այլ վայրերի քրդական ամիրությունների մասին հաղորդվող նոր տեղեկությունները, որոնք ուսումնասիրողին բերել են այն ճիշտ եզրակացությունը, որ Շտարբերվելով Հարավային Հայաստանում գոյություն ունեցող քրդական կիսանկախ ամիրություններից, որոնք ժառանգաբար կառավարվում էին տեղական քուրդ ամիրների դինաստիաներով, Հայաստանի մյուս մասերում թուրքմենական քոչվոր ավագանիներից և ոչ մեկը չկարողացավ կազուց ափրապետություն հաստատել (էջ ԼԼX—ԼX): Հիշատակարանների տվյալները թույլ են տալիս հաստատապես պնդելու, որ Հարավային Հայաստանի քրդական ամիրությունների ու թուրքմենական «կողմնապետությունների» բնակչության մեջ գերակշռում էր հայ էթնիկական տարրը և որ հայ խոշոր առևտրականներն ու վաշխառուները վարչական ու հարկային տեղական ատյաններում կարևոր պաշտոններ էին գրավում, քուրդ ու թուրքմեն ցեղապետների հետ միասին սննդաշահաբաժան ենթարկելով հայ աշխատավոր գյուղացիությանը:

Հատորն ընդգրկում է նաև զգալի թվով հիշատակարաններ, որոնք պարունակում են արժեքավոր տվյալներ Հայաստանի դանազան մասերում զեռուս իրենց գոյությունը պահպանող հայ ֆեոդալական տների մասին: Հայտնի է, որ

մահմեդական իշխանավորները հավածելով հայ ֆեոդալական տների վերջին ներկայացուցիչներին, որոշ չափով հովանավորում էին վանական հաստատությունները, համեմատաբար արտոնյալ վիճակ ստեղծելով հայ հոգևոր ֆեոդալականության համար: Այդ էր պատճառը, որ հայ աշխարհիկ ֆեոդալականության վերջին շառավիղներին շատերը սեփական կալվածները հափըրտակուցից փրկելու համար ստիպված էին լինում իրենց պատվարել վանական կալվածատիրության ցուցանակներով (էջ ԼXII): Հոգևորական սրբամի մեջ պարտրված այս ֆեոդալական տները, լինելով հայ ժողովրդի անկախ գոյության վերջին հիշատակները, սնում էին ազատագրական պայքարի գաղափարներ ու որոշակի դեր էին խաղում ժողովրդի կուլտուրական տրագիզիաների պահպանման ու զարգացման գործում: Դրանցից էին Էջմիածնի, Գանձասարի, Աղթամարի կաթողիկոսությունները, Վարդ ձորի Պոռչյանների ֆեոդալական տունը, Սյունիքի Օրբելյան ֆեոդալական տունը, Արցախի Հասան-Ջալալյան և Գոփյան ֆեոդալական տները, Գառնիի շրջակայքի գյուղերին տիրող և իրենց Գրիգոր Պահլավունուց սերված համարող իշխանների տունը, Լոռվա հայկական իշխանությունը և շատ ուրիշներ:

Առաջարանում մի մի են բերված հիշատակարանային միանգամայն նոր նյութեր այդ վանական հաստատությունների, նրանց կալվածքների, տնտեսության, եկամտի աղբյուրների, երկրի կուլտուրական կյանքում կատարած դերի մասին: Կան նաև տվյալներ բազմաթիվ վանքերի վերաշինության ու կառուցման վերաբերյալ: Այդ տեսակետից մեծ արժեք է ներկայացնում առաջին անգամ սույն հատորում հրատարակվող Ջաքարի կաթողիկոսի կոնդակը, որը հրապարակվել է Ալյուսարյանի գավառում կատարված շինարարության կապակցությամբ (էջ 173—174):

Հանրագումարի բերելով ձեռքի տակ եղած քուրդ փաստերը է. Խաչիկյանը ցույց է տալիս, թե ինչպես վանքերն ու եկեղեցիները նվիրատվությունների, «մեղաց զնի» գանձման, գնումների, բանադրանքը շահույթի աղբյուր դարձնելու, իշխողների բռնություններից ու կամաչականություններից այլ երկրների գաղթող գյուղացիների անշարժ ունեցվածքի սեփականացման, առևտրի և բազմապիսի այլ միջոցներով ընդարձակում էին իրենց շարժական և անշարժ գույքը:

XV դարի երկրորդ կեսում, երբ փակվել էին Գլաձորի և Տաթևի նշանավոր համալսարանները, ուսումնական կյանքն այնուամենայնիվ չէր դադարել Հայաստանում: Սեպուհ լեռան

Ավագ վանքում, այս նրա մոտիկ գտնվող Կապուի վանքում հիշատակարանների տվյալների համաձայն, կրթական բուռն գործունեություն էր ծավալել Հովհաննես Համշենցին, ստեղծելով աշակերտների մի մեծ խումբ, որոնք այստեղ էին ժամանում Հայաստանից և Հայաստանից դուրս գտնվող հայաշատ այլ շրջաններից: Հիշատակարաններում կան տեղեկություններ նաև այլ ուսումնական հաստատությունների մասին՝ Քրիլիսիի, Կոսոջ անապատի, Խարբերդի մոտ գտնվող Սուր վանքի, Վայոց ձորի Բոլորաբերդ անապատի և այլն:

Բացառիկ մեծ արժեք են ներկայացնում հրատարակվող հիշատակարանները տվյալ ժամանակաշրջանում հայ աշխատավոր գյուղացու արտադրական կենցաղի և հատկապես գյուղական համայնքի հետ կապված հարցերը լուսաբանելու համար:

Հիշատակարանների և այլ փաստաթղթերի ընձեռած նյութի հիման վրա Լ. Խաչիկյանը գալիս է այն եզրակացության, որ հիշյալ ժամանակաշրջանում համայնքի տնտեսական և իրավական հիմքերը դեռևս բավարար չափով ամուր էին: Որևէ հողամասի օգտագործման իրավունքի օտարման ժամանակ պահանջվում էր գյուղական համայնքի համաձայնությունը: Երբ խոսք է լինում գյուղական համայնքի մասին, ապա պետք է նշել և այն հարուստ նյութի մասին, որ ընձեռում են հիշատակարանները ազգագրագետներին՝ գերդաստանների գոյության հարցը լուսաբանելու համար: Վերջիններս ցույց են տալիս նաև, որ ունեւոր գեղատնտեսները հաճախ սեփականացնում էին համայնքին պատկանող հողերի մի մասի օգտագործման իրավունքը, որոնց տնօրինման գործին համայնքը իրավունք չուներ միջամտելու:

Ուշագրավ են գյուղական ընդհանուր հողատարածության (քլոֆշան) մեջ մտնող Լ. Խաչիկյանի թվարկած հետևյալ 5 կատեգորիաները: ա) հողարածանման ենթակա համայնքապատկան վարելահողեր, խոտհարքներ, արոտավայրեր և այլն, բ) տարբեր ճանապարհներով մասնավոր սեփականություն («հայրենիք», «մուլք») դարձած այրիներ, պարտեզներ, վարելահողեր, գ) գյուղատերերի կողմից սեփականացված վարելահողեր, որոնք տրվում էին վարձակալման, դ) վանական հաստատություններին նվիրաբերված հողակտորներ և, վերջապես ե) անմշակ, խոպան ու ճահճոտ հողային տարածություններ: Ի դեպ պետք է ասել, որ նույն կատեգորիաները պրոպրիետարները որոշ տարբերությամբ պահպանված էին նաև XVI—XVII դարերում:

Ներածության այս մասը շարադրելիս Լ. Խաչիկյանը մեծ շահով օգտագործել է նաև ձեռագրերում

գրերում պահպանված բազմաթիվ կալվածագրեր, որոնք XIV—XV և հետագա դարերի արարային հարաբերությունների պատմության համար մեծ արժեք են ներկայացնում և արժանի են առանձին հրատարակության:

Չնայած XV դարի Հայաստանի քաղաքների, արհեստագործության ու առևտրի մասին հիշատակարանները և օժանդակ այլ աղբյուրները քիչ նյութ են տալիս, այնուամենայնիվ այդ սակավ նյութի հիման վրա, ինչպես նաև օտար և հայ ճանաչարհորդների ուղեգրություններից քաղած նյութերով Լ. Խաչիկյանը իր առաջաբանում բավականին մանրամասն ուսումնասիրում է հայ ժողովրդի պատմության այդ քիչ լուսաբանված բնագավառը: X դարից սկսած և բազմաթիվ հարյուրամյակներ շարունակված զանազան քոչվոր ցեղերի կողոպուիչ արշավանքները Հայաստանում, դրան հաջորդած թուրք-թաթարական ու մոնղոլական տիրապետությունը ուժեղ հարված հասցրին վաղեմի փարթամ, վաճառաշահ ու բազմամարդ քաղաքներին: XV դարում որոշ չափով սկսեցին աշխուժանալ այն քաղաքները, որոնք ընկած էին Հայաստանի վրայով անցնող Քավրիզ-Հալեպ առևտրական ճանապարհի վրա: Նրանցից հիշատակվում են Վանը, Արճեշը, Արժիկն, Խալթը, Բաղեշը, Երզրեկան, Խիզանը, Մուշը, Ուտանը, Խարբերդը, Բաբերդը, Սղերդը և ուրիշներ: Լ. Խաչիկյանը իր ուսումնասիրության մեջ կանգ է առնում ոչ միայն բուն Հայաստանի տերիտորիայի վրա գարգացող քաղաքների վրա, այլև պատմական Հայաստանի հարավ-արևմուտքի, Ադրբեջանի, Վրաստանի և Իրանի քաղաքների հայ գաղութների կյանքի վրա, ուր հայ առևտրականներն ու արհեստավորները մեծ կշիռ ունեին: Գրանցից էին Ամիրի, Հալեպի, Հըսեյնի, Շամախու, Վրաստանի սահմանագլխին գտնվող Արեշի, Ադրբեջանի, Շամբբանի, Դերբենդի շրջակայքի, Քավրիզի, Մարաղայի, Արդաբիլի, Սուլթանիայի, Քրիլիսիի, Գորիի, Ախալցխեի և այլ քաղաքների հայկական գաղութները: Այստեղ հայ առևտրականներն ու արհեստավորները նպաստում էին քաղաքային կյանքի զարգացմանը: Լ. Խաչիկյանը թվարկում է վերոհիշյալ քաղաքներում առկա շուրջ 30 տարբեր արհեստներ, այդ ցանկը համարելով խիստ թերի:

Ուսումնասիրության վերջին մասը նվիրված է աղ-կոյունիւնների և կարա-կոյունիւնների հարկային քաղաքականությանը: Լ. Խաչիկյանը չի բավարարվել միայն հիշատակարանների տվյալներով և որոշ վիճելի գրություններով հանդերձ, նրան հաջողվել է տալ հարկերի ու հարկապահանջության ընդհանուր պատկերը, սակայն հարկային սխտեմի և հարկերի իրաց-

ման սկզբունքների ու նորմերի հարցը դեռևս կարող է հետագա ուսումնասիրության: Առարկայի վրա էնթանալ է նաև հարկերի այն ստորաբաժանումն ու խմբավորումը, որն առաջարկում է և. հաշիվյանը: Այլիկի ձիշտ, դա հարկերի սոսի թվարկում է՝ համառոտ բացատրությանը, առանց զրանց տնտեսական էության և բնույթի մեջ խորանալու: Այստեղ, առաջին անգամ, փորձ է արված պարզելու նաև որոշ հարկերի հատուցման շափերը: Այսպես օրինակ, ամենամանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա է. հաշիվյանը համոզեցուցիչ կերպով ցույց է տալիս, որ հայ հպատակներից գանձվող ամենածանր հարկը՝ գլխահարկը կամ որ նույնն է, «չիզվան», XV դարի բնթացում անընդհատ բարձրացել է և դարի վերջում, 1435 թ. համեմատությանը, գանձվել է կրկնակի շափով:

Շահեկան են նաև և. հաշիվյանի կատարած բավական մանրազնիքն ուսումնասիրությանը ներքև ու ճշտումները XV դարի գրամական սիստեմի և ժամանակ առ ժամանակ գրամի կուրսի տատանումների վերաբերյալ:

Պետք է ասել, որ ինչպես նախորդ հատորում, այս հատորում ևս կան հիշատակարանների բնագրերի վերծանման որոշ վրիպումներ, որոնք հիմնականում հետևանք են ոչ ճիշտ կետագրության կամ օտար բառերի խմատի սխալ ընկալման: Այսպես, օրինակ, «Լուսավորչի աչի» պատմությանը նվիրված հայտնի հիշատակարանում (էջ 174, տող 18—19) «տուեալ ձեռագիր և մտեալ դաման առնուլ հարկս յամիրայէն Բաղիշու» հատվածը պետք է լինի «տուեալ ձեռագիր և մտեալ դաման՝ առնուլ հարկս յամիրայէն Բաղիշու»: Այսինքն Ջարարիա կաթողիկոսը պարտավորագիր տվեց և «գամանի» (گامان) — երաշխավորության տակ մտավ կամ հանձն առավ Բաղիշի ամիրայից ստանալ հարկի և տալ Ջհանշահին, օրից հետո, ինչպիսի ասված է հիշատակարանում, «ճաւանեալ արքայն և դժխոյն ետուն նմայ նշանագիր և հրաման առնել զինչ և կամիցի»: Որ այս հատվածը սխալ է ընկալվել, այդ երևում է նաև օտար բառերի բառարանից (էջ 598), որտեղ փոխանակ բացատրելու «մտեալ դաման» խոսքը՝ հիշված է «գաման առնուլ» և ենթադրաբար բացատրված է «արգարություն խնդրել»: Այս կարգի մի բանի այլ վրիպումներից բացի կան նաև կուպիտ տպագրական վրիպակներ, որոնք տեղի են տալիս մտքի ազավազումների, ինչպես օրինակ, էջ CXXVIII, տող 14-ում տպված է «զորաշարքեր», փոխանակ «զորաշարժերի», կամ էջ 176, տող 1, «բնդառաջ էլ գոռոզն Մահմուտ-բեկ» փոխանակ «բնդառաջ էլ գոռոզն Մահմուտ-բեկ» և այլն:

Մատենադարանի № 3756 ձեռագրի, Շմավոն Անգեղակոթցու հիշատակարանը տպագրված է երկու անգամ (հիշ. № 162 և 402, էջ 124 և 318), ըստ որում մի անգամ 1459 թ., իսկ մյուս անգամ 1471 թ. տակ, երբ Շմավոն վարդապետը վաղուց արդեն վախճանված էր:

Ինչպես նախորդ հատորից և ԺԴ դարի հիշատակարանների մի հատորակից, այս հատորից ևս անշուշտ դուրս են մնացել որոշ հիշատակարաններ, հիշենք թեև կողմ Մատենադարանի № 3759 ձեռագրի էջ 712 հիշատակարանի: Թեև այս ձեռագրից հաշիվյանը վերցրել է և գրախոսվող հատորում զետեղել № 258 հիշատակարանը, սակայն աչքաթող է արել մի այլ, ոչ պակաս կարևոր, հիշատակարան, որ նույնպես ըստ ժամանակագրության պետք է ընդգրկվեր այս հատորում: Այդտեղ ի միջի այլոց ասված է. «...պակասեցաւ աչս ի լուսոյ և զարութիւն մարմնոյ, որ պատեաց զմեզ մեղաց հարուածն՝ մահ տարածման և գԳառնի և գերևան շարդեաց լատերն Ի (20) և թող զանարին շարն որչափ կայր: Աղաչեմ զձեզ զմեզ ի յաղաւթս յիշեցէք, ծնաւզաւքն մեր հանդերձ»:

Հիշյալ հատուկներ վրիպումները անխուսափելի են նման ծավալուն տեքստարանական բնույթի աշխատություններում: Ուշագրություններից վրիպած հիշատակարանները հեղինակը խոստանում է հավելվածաժամար հրատարակության հանձնել ժե գարի հիշատակարանների Գ մասում: Դա կլինի վերջին հատորը և կգա ամբողջացնելու այս մեծաթուկը գործը, որ ընդհանրապես վերջրած կատարված է խորին պատասխանատվությամբ ու գիտական բարձր մակարագրով:

Գիտական մեծ արժեք են ներկայացնում ավելի քան 150 էջ զբաղեցնող անձնանունների, տեղանունների, առարկայական ցանկերն ու օտար բառերի բառարանը, որ ոչ միայն ղուրացնում են հատորի օգտագործումը, այլև հսկայական նյութ մատակարարում այն մասնագետներին, որոնք զբաղվում են Հայաստանի պատմական աշխարհագրությանը, հայոց լեզվի պատմությանը և որ գլխավորն է՝ հայոց անձնանուններով: Միայն «Ընդհանրապես» անունը կրող 400 անձնավորություն է հիշված, որոնցից նշանավորների մասին, ինչպես ընդհանրապես, արված են համառոտ, բայց կարևոր բացատրություններ:

Կասկածից դուրս է, որ ժԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների» այս Բ հատորը, Ա հատորի և «ԺԴ դարի հիշատակարանների» մի հատորակի հետ միասին իրենց արժանի տեղն ունեն հայկական միջնադարյան սկզբնաղբյուրների շարքում: Մակայն, ինչպես

արդեն նշեցինք, այս և նախորդ հատորի գլխավոր արժանիքը նաև այն է, որ դրանք ոչ միայն անգնահատելի նյութ են տալիս հայագետին հետազոտումն անսխալությամբ համար, այլև իրենց կցված ընդարձակ «առաջաբաններով», որոնք դուրս են գալիս սովորական առաջաբանի սահմաններից, հանդիսանում են XV դարի պատմությանը նվիրված նախընթաց չունեցող

արժեքավոր ուսումնասիրություններ, մի ավելորդ անգամ ընդգծելով նրանց հեղինակի գիտական խորը հմտությունն ու քարեխղճությունը նման դժվարին աշխատանքի կատարման մեջ:

Հ. ՓԱՓԱԶՅԱՆ

Հ. ԲԱՐՔԻԿՅԱՆ

ЭЛЛАЗМАЛАРЫ КАТАЛОГУ. I чилд (Тарих, чографија, эдәбиј-
јат нәзәријјәси, тәзкирәләр, бәдиуи эдәбијјат вә мунишәат). Азәр-
бајчан ССР Елмләр Академјасы Нәшријјаты, Бақы, 1963, 513 сәһифә,
ғијмәти 2 манат.

Ձեռագրերի ՑՈՒՑԱԿ. I հատոր (Պատմություն, աշխարհագրու-
թյուն, գրականության տեսություն, թագրերաներ, գեղարվեստական
գրականություն և գրագրություն), Ազգրբեջանական ՍՍՌ գիտությունների
ակադեմիայի հրատարակչություն, Բաքու, 1963, 513 էջ, գինը 2 ո.

Ազրբեջանական ՍՍՌ ԳԱ ձեռագրերի ֆոնդը Սովետական Միության ամենաբերտասարդ ձեռագրատներից մեկն է: Այն հիմնադրված է Ազրբեջանում սովետական իշխանության հաղթանակից շուրջ 10 տարի հետո ժողովածուն նախապես պատկանել է Ազրբեջանի պետական պատմական ինստիտուտին, ապա փոխադրվել ԱզՖԱՆ-ի կենտրոնական գրադարան: Սակայն մեծ շահով այն անել և հարստացել է գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտին հանձնվելուց հետո:

Ազրբեջանական ՍՍՌ Մինիստրների սովետի 1950 թ. հատուկ որոշմամբ գրականության ինստիտուտի ձեռագրերի բաժինը վերակազմվեց որպես ձեռագրերի ինքնուրույն սեպարատիվական ֆոնդ. նույն որոշման համաձայն Ազրբեջանի բոլոր գիտական հիմնարկություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում պահպանվող ձեռագրերը կենտրոնացվեցին այս ֆոնդում: Մինիստրների սովետի որոշումը նպաստեց ֆոնդի արագ անմանր: Բավական է ասել, որ նույն թվականին ֆոնդի ձեռագիր միավորների թիվը 8000-ից բարձրացավ 15000-ի: Հետագա տարիներում նույնպես ձեռագրերի թիվը աճում էր մեծ արագությամբ:

Հարուստ է ֆոնդում պահվող ձեռագրերի թեմատիկան, պատմություն, գրականություն, լեզու, բժշկություն, աստղաբաշխություն, մաթեմատիկա, բուսաբանություն, աստվածաբանություն և գիտության այլ բնագավառներ:

Ազրբեջանի տարբեր շրջաններից այստեղ հավաքված են ազրբեջաներեն, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն, թուրքմեներեն, ուզբեկերեն, ինչպես նաև հնդկերեն, հայերեն, վրացերեն, ռուսերեն և այլ լեզուներով գրված ձեռագիր մատյաններ:

Ֆոնդի հնագույն ձեռագրական միավորներից են X դարում մագաղաթի վրա «թուֆի» գրությամբ գրված «Ղուրանի» հատվածը, Զովհարիի «Սիհահ-ալ-լուղա» աշխատության 1117 թ. ձեռագիրը, ինչպես նաև Աբու-Ալի Իբն-Սինայի «Կանոնի» 1140 թ. ընտիր ընդօրինակությունը:

Ռեսպուբլիկական ֆոնդը հարուստ է հատկապես իսլամական Արևելքի ժողովուրդների դասական գրականության այնպիսի ներկայացուցիչների դիվանների և ամբողջական երկերի հնագույն ու հազվագյուտ ընդօրինակություններով, ինչպիսիք են ազրբեջանական կլասիկներ Խականին, Նիզամին, Մահմուդ Շարուսթարին, Նասիմին, Ասար Թարրիզին, Խաթային, Յուզուլին, Վազիֆը և Բաբիխանովը, պարսկալեզու գրականության կլասիկներ Ֆիրդուսին, Խայամը, Անվարին, Մաս'ուդ-Մա'դ Սամանին, Մա'դին, Քյամալ Խոջանդին, Հաֆեզը, Սալման Սավոջին, Զամին, Ամիր-Խոսրով Դահլավին և Հասան Դահլավին, ուզբեկ հեղինակներ Ալիշեր Նավոյին և Ուլուղ-բեկը, թուրքմեն բանաստեղծ Մախտում-կուլին, թուրք գրողներ Նազիմը, Սաբիթն ու Լամին, արաբ բանաստեղծներ Մութանաբին, Իբն-Մալիքը և ուրիշներ:

Ձեռագրական ֆոնդի գիտաշխատողների կուլեկտիվը ղգալի աշխատանք է կատարել այս մեծ ու արժեքավոր ժողովածուի գիտական նկարագրությունը նախապատրաստելու համար: Նախապես, ըստ շուրջ հիմնական ֆորմատների, վերադասավորել և համարակալել են բոլոր ձեռագրերը և ապա սկսել գիտության տարբեր ճյուղերին վերաբերող ձեռագրերի նկարագրությունը:

Հիմնական հարցերին հանգամանալից պատասխաններ տալու համար առանձին աշխատակիցներ հանձնարարություններ են ստացել պատրաստելու օժանդակ ձեռնարկներ, որոնք մեծ շահով գալիս են հեշտացնելու հատկապես ձեռագրական միավորների անվանման, հեղինակների և գրիչների ինքնությունը ճշտելու աշխատանքները: Այս առումով գովասանքի արժանի աշխատանք է կատարել ֆոնդի գիտական աշխատակից Փանահի-Մաքուլուն: Իր ձեռքի տակ եղած արևելյան 10 հիմնական աղբյուրների հիման վրա նա կազմել և հրատարակել է գրականագիտական ընդարձակ մի աղյուսակ, որն ընդգրկում է Մերձավոր Արևելքի իսլամական ժողովուրդների գրավոր ժառանգության մեջ

հիշված մատենագրական հուշարձանների, նը-
րանց հեղինակների, գրական անունների և
տիրադրանքի, ինչպես նաև գրիչների ու միջնա-
դարյան մատենագրության այլ գործիչների այը-
րենական ցանկը¹:

Ռեսպուբլիկական ֆոնդի այս անդամակալ ցու-
ցակում ձեռագրերի նկարագրված են թեմատիկ
խմբավորման սկզբունքով: Նկարագրված 1281
ձեռագրերից 154-ը պատմա-աշխարհագրական
բովանդակություն ունեն, 165-ը թագրեր են
և գրականագիտական բնույթի ձեռագրեր, 888-ը
գրական երկեր ու վերը նշված հեղինակների և
այլոց շափածո կամ արձակ ստեղծագործու-
թյունների դիվաններ և այլ ժողովածուներ, իսկ
74-ը նամականիներ և նամակագրության ու
գրագրության ուսուցման նպատակով կազմված
ձեռնարկներ:

Այս անհամաշխարհային, հավանաբար, ար-
դյունք է ցուցակագրողի և գլխավոր խմբագրի
գրականագիտական նախասրտվյալն: Նման
պարագաներում նպատակահարմար կլիներ,
անշուշտ, ամբողջ հատորը նվիրել գրական եր-
կերին, իսկ պատմա-աշխարհագրական ձեռ-
ագրերը, որոնցով ռեսպուբլիկական ֆոնդը նույն-
պես բավական հարուստ է, նկարագրել առան-
ձին հատորում, ինչպես այդ արված է Ուզբեկա-
կան և Տաջիկական ակադեմիաների արևելյան
ձեռագրերի նկարագրության ժամանակ: Դա
հնարավորություն է տալիս ձեռագրերը նկարա-
ցելիս կատարել ըստ առանձին շարքերի կամ
երկրների և այլ բնույթի խմբավորումներ, դրա-
նով աչն ավելի մատչելի դարձնելով ուսումնա-
սիրողին: Այդպիսի նկարագրության հաջող օրի-
նակ կարող է ծառայել Տաջիկական ՍՍՌ ԳԱ
արևելյան ձեռագրերի ցուցակի I հատորը², որը
թեև ամբողջովին նվիրված է պատմա-աշխարհ-
ագրական բնույթի ձեռագրերի և պատմական
սկզբնաղբյուրների նկարագրությանը, սակայն
ձեռագրերը նկարագրված են հետևյալ խմբա-
վորումներով. ա) Պատմություն.— 1. Ընդհանուր
պատմություն, 2. Միջին Ասիայի պատմություն,
3. Իրանի պատմություն, 4. Աֆղանստանի
պատմություն, 5. Հնդկաստանի պատմություն,
6. Թուրքիայի պատմություն, 7. Այլ երկրների
պատմություն. բ) Մեթոսներ և պատմական
կենսագրություններ. գ) Աշխարհագրություն և
պատմական տեղագրություն. դ) Ուղեգրություն-

ներ. ե) Ժամանակագրություններ և պատմական
վավերագրեր: Ինքնին հասկանալի է, որ նման
ստորաբաժանումներ կարելի է կատարել նաև
գրական հուշարձանների և գրականագիտական
երկերի, ինչպես նաև միջնադարյան մատենա-
գրության այլ բնագավառներին վերաբերող ձե-
ռագրերի նկարագրությանը նվիրված առանձին
հատորներում:

Հատորի գրական-գրականագիտական թե-
քումով է պայմանավորված նաև այն հանգա-
մանքը, որ նկարագրված ձեռագրերի մեջ գերա-
կշռում են պարսկերեն ձեռագրերը: Չնայած
այն բանին, որ ընդհանրապես պարսից «գարի»
լեզուն ՄX—X դարերից սկսած շարունակ եղել է
Մերձավոր Արևելքի մի շարք ժողովուրդների
գրական լեզուն (Իրանում, Ադրբեջանում, Միջին
Ասիայում, Աֆղանստանում, Հնդկաստանում և
այլուր) և այդ լեզվով են գրվել պատմագրա-
կան և գրական-գեղարվեստական երկերը, սա-
կայն առավելապես այդ լեզվով են գրված տար-
բեր ազգությունների պատկանող միջնադարյան
բանաստեղծների ու տաղասացների արձակ և
շափածո ստեղծագործությունները: Կարելի է
չկասկածել, որ եթե նկարագրված ձեռագրերի
մեջ մեծ թիվ կազմեին շղարիտ գիտություննե-
րին վերաբերող, ինչպես նաև փիլիսոփայական
կամ աստվածաբանական, կրոնա-դավանաբա-
նական ձեռագրերը, ապա գերակշռող լեզուն
կլիներ արաբերենը, որը դարձրել շարունակ եղել
է իսլամական աշխարհային գիտության լեզուն:

Այսուհանդերձ հետաքրքիր է և արաբատառ
ձեռագրերի յուրաքանչյուր մեծ կամ փոքր ժո-
ղովածուի համար բնորոշ ներկա հատորում
նկարագրված ձեռագրերի այսպես կոչված
«ազգային կազմը». գրախոսվող հատորում
նկարագրված են 826 պարսկերեն, 193 արաբե-
րեն, 113 ադրբեջաներեն, 61 թուրքերեն, 43 ուզ-
բեկերեն, 26 ադրբեջաներեն-պարսկերեն, 5
թուրքերեն-պարսկերեն, 5 արաբերեն-պարսկե-
րեն, 1 կումուկերեն (Գաղստան), 1 թաթարե-
րեն, 1 ադրբեջաներեն-կումուկերեն, 1 պարսկե-
րեն-ուզբեկերեն և 1 ուսուերեն ձեռագրական
միավորներ:

Նկարագրված ձեռագրերի ժամանակագրական
սահմանը ձգվում է 1377-ից մինչև 1937 թվա-
կանը: Նկարագրության համար հիմք ընդունե-
լով առանձին հարցերին տրվող հակիրճ պա-
պասխանների մեթոդը, հասկանալի է իհարկե-
որ ոչ բոլոր ձեռագրերը նկարագրելիս սպառիչ
պատասխաններ կարող էին տրվել հետևյալ
հարցերին.

- 1. Հեղինակ.
- 2. Գրքի վերնագիրը.
- 3. Ի՞նչ լեզվով է գրված.
- 4. Ինքնագիր է թե ոչ.

¹ Пәнаһи Мақулу, Өдәби Мә’лумат
Чөлвәли, Бакы, 1963.

² Каталог восточных рукописей Ака-
демии наук Таджикской ССР, т. I, под ре-
дакцией и при участии проф. А. М. Мир-
зоева и проф. А. М. Болдырева, Дюшанбе,
1960.

- 5. Գրչութիան թվականը.
- 6. Գրիչ.
- 7. Վայր.
- 8. Գրութիուն.
- 9. Մանրանկարներ և դարդանկարներ.
- 10. Սկիզբ.
- 11. Վերջ.
- 12. Համառոտ բովանդակություն.
- 13. Չափ.
- 14. Թերթերի քանակը.
- 15. Շիֆրը.

Ինչպես իրավացի կերպով նշված է հատորի առաջաբանում, գրչութիան թվականի ճշտումը ձեռագրերի նկարագրության հիմնական հարցերից մեկն է, և պետք է ասել, որ դրախոսվող հատորում նկարագրված ձեռագրերի մեծ մասում գրչութիան թվականները որոշ են: Սակայն եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ նկարագրված 1281 ձեռագրերից միայն 719-ի գրչութիան թվականն է որոշակի նշված, որոնցից 28-ը XV դարից, 51-ը XVI, 105-ը XVII, 81-ը XVIII, 405-ը XIX և 49-ը XX դարերից, սակա պետք է նշել, որ XV—XVIII դդ. շոշափելի թվով ձեռագրեր, գրչութիան թվականները չպահպանվելու հետևանքով, անորոշ են մնացել: Լավագույն դեպքում փորձ է արված հնագրական տվյալների օգնությամբ պարզել միայն մոտավոր դարը, իսկ առանձին դեպքերում հարցը լիովին անպատասխան է թողնված (ձեռ. №№ 41, 95, 380, 381, 583, 584, 748 և այլն):

Պատմագրական և գրական-գեղարվեստական հուշարձանների վերնագրերի ճշտման և ձեռագրերի անվանումների մեջ վրիպումներ չկան. եթե հաշվի չառնենք այն, որ բազմահատոր երկերը նկարագրելիս, չի նշված, թե նկարագրվող ձեռագիրը տվյալ երկի ո՞ր հատորն է պարունակում: Այսպես օրինակ, հայտնի է, որ XVI դարի պատմիչ Խանդավիրի «Հարիբ-ուս-սիար» խորագիրը կրող պատմությունը բաղկացած է երեք սովոր հատորներից: Ձեռագրացուցակից տեղեկանում ենք, որ ռեսպուբլիկական Ֆոնդում կան այդ երկի 7 գրչագրեր, որոնք ցուցակում նկարագրված են 29—35 համարների տակ, առանց նշելու սակայն, թե դրանք «Հարիբ-ուս-սիարի» ո՞ր հատորներն են: Ենչքան պետք է ասել Միրյանի 5 հատորանոց «Թովմագր-ուս-սաֆախ» 9 գրչագրերի (ձեռ. №№ 20—28), Իսթանբուլի Մունչիի «Քարիխ-ե ալամարա-յե աբ-բասիի» (ձեռ. №№ 49, 50) և այլ բազմահատոր երկերի մասին: Անշուշտ, ուսումնասիրողը կարող է այդ կոահել նկարագրության ժամանակ մեջ բերված ձեռագրի սկզբի և վերջի տողերից, սակայն եթե հաշվի առնենք, որ շատ հաճախ ձեռագրերը սկզբից կամ վերջից և կամ երկուս-

տեք թերի են լինում, այդ դեպքում հարցը փաստորեն անպատասխան է մնում:

Նման և այլ դեպքերում միշտ էլ խրախուսելի է օժանդակ գրականության օգտագործումը: Նկատելի է, որ հատորը կազմողները առանձին դեպքերում օգտվել են այդ կարգի գրականությունից, սակայն առանց վկայակոչման: Հաշվի առնելով Ուզբեկական և Տաջիկական ակադեմիաների, ինչպես նաև ՍՍՌՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի և Խնինգրադի բաժանմունքի, Լենինգրադի համալսարանի արևելագիտական ֆակուլտետի և մի շարք այլ միութենական և արտասահմանյան մեծ ու փոքր ժողովածուների նկարագրության միջև այժմ կատարված հրատարակությունները, ձեռագրերի նկարագրությանը կցված համապատասխան բիրլիոգրաֆիան մեծ շափով օգնում է պարզելու նկարագրվող ձեռագրի արժեքն ու նշանակությունը տվյալ մատենագրական հուշարձանի ուսումնասիրության գործում:

Ձեռագրերի արտաքին նկարագրությունները համառոտ լինելով հանդերձ, գոհացուցիչ են: Ձեռագրաց ցուցակից օգտվողները որոշակի տեղեկություններ են ստանում յուրաքանչյուր ձեռագրի չափի, ծավալի (թերթերի քանակը), գրութիան ձևի (նասխ, նասթա'լիկ, սուլս, շիքասթե, շիքասթե-նասթա'լիկ և այլն), օգտագործված թանաքի, մանրանկարների ու դարդանկարների մասին: Առանձին դեպքերում մանրամասն նկարագրված են նաև ուշադրության արժանի կազմերը: Վերջում նշված է նկարագրվող ձեռագրերի շիֆրը, որն անհրաժեշտ է նկատված նման թեմատիկ ցուցակներում, քանի որ ձեռագրերը ինվենտարային համարակալությամբ չեն նկարագրված:

Առանձին հուշարձանների բովանդակության մասին տրված տեղեկությունները խիստ համառոտ լինելով, հանրահայտ գործերի նկարագրության մեջ դրանց անհրաժեշտությունը չի զգացվում, հատկապես արևելագիտությանը քաջ ծանոթ այնպիսի կարևոր երկերի նկարագրության ժամանակ, ինչպիսիք են Իսթանբուլի Մունչիի «Քարիխ-ե ալամարա-յե աբբասիի», Հասան-բեկ Ռումուլի «Ահսան-ուլ-Քավարիի», Մուհամմադ Չահր-էդ-դինի «Քարուրհամեն», Խանդավիրի «Հարիբ-ուս-սիարը», Արզուլսի ին-Ֆազլուլլայի «Քարիխ-ե Վասսաֆը» և այլ պատմագրական երկեր:

Գեղարվեստական գրականության հուշարձանների բովանդակության նկարագրությունները ավելի օակավ են: Կլասիկների մեծ մասի երկերի ու դիվանների բովանդակությունը չի տրված, և դա ճիշտ է: Պետք է ի նկատի ունենալ, որ ցուցակը կազմված է մասնագետների համար, որոնք Ֆիրդուսու «Շահնամեի», Նի-

զամու «եսամսի» կամ նրա առանձին պոեմների, Խականիի «Թոճֆաթ-ուլ-արակեխի» կամ Ալիշըր Նավոյի «Նիզամ-ալ-շավաճիրի», ինչպես նաև Վերը Հիշատակված և այլ պատմիչների երկերի բովանդակության մեկ-երկու տողով տրված նկարագրություններ, կարիքը շնն զգում:

Ձեռագրաց ցուցակում առանձին համարներ են ստացել ձեռագրերի ոչ միայն հիմնական բնագրերը, այլ նաև նույն ձեռագրի լուսանցքներում ընդօրինակված այլ հեղինակների համանուն ստեղծագործությունները: Այսպես օրինակ, 524 համարի տակ նկարագրված Ամիր-խոսրով Դահլավիի Դիվանի լուսանցքներում ընդօրինակված Քյամալ խոջանդիի, Բասաթիի, Շահիի (Աղա Մալիք Սամարղանդի), Իբն-Յամինի և Ազարի (Համգա իբն-Արդ-ալ-Մալիք Խոսի-Բեյհակի) դիվաններն ու զազալները նկարագրված են 540, 591, 596, 610 և 612 համարների տակ: Գա, անշուշտ, բավական հեշտացնում է ցուցակի օգտագործումը և հնարավորություն է տալիս նույն հեղինակին վերաբերող բոլոր բնագրերն ամփոփելու մեկ տեղ:

Յուցակի օգտագործումը մեծ շահով հեշտացնում են հեղինակների, երկերի, ինքնագիր ձեռագրերի, գրիչների, ձեռագրերի գրչության թվականների ու վայրերի և այլ օժանդակ բնույթի ցանկերը: Խիստ օգտակար են հատկապես, աղբյուրներին ցանկերից բացի, հեղինակների, երկերի և գրիչների զուգահեռ արաբատառ ցանկերը ձեռագրերի լեզուներով, որոնք ցուցակը մատչելի են դարձնում նաև աղբյուրներին անտանոթ արևելագետներին:

Ռեսպուբլիկական ֆոնդի ամբողջ ձեռագրերի հազիվ տանհճինգ տոկոսի նկարագրությունը պարունակող ձեռագրացուցակի այս անդրանիկ հատորը իր հարուստ բովանդակությամբ գալիս է վկայելու ժողովածուի մեծ արժեքի և արևելագիտության տարբեր բնագավառների, հատկապես տեքստաբանական աշխատանքների համար նրա կարևոր նշանակության մասին:

Բավական է նշել, որ գրախոսվող հատորում կան 70-ից ավելի հեղինակային ինքնագրեր, որոնցից հնագույնը Արա-ալ-Կազվիի «Մանահիջ ալ-թայիբի» վա Մաարիֆ ալ-Սադիկին» խորագրերը կրող աշխատության 1377 թ. ձեռագիրն է: Ինքնագրերի մեջ, սակայն, զգալի տեղ են գրավում XIX դարի, մասամբ նաև XX դարի սկզբի որոշ հեղինակների գործերը, որոնցից են 1091—1114 համարների տակ նկարագրված Միր Մոհսին Կարաբաղիի և կամ Հուզնի Սալեհ իբն-Հաջի Բաբա էֆենդի Նախավիի (№ 1117), ինչպես նաև Շուաի Միրզա Քյարիմ իբն-Խարաֆի Դարբանդիի (№ 1118), բանաստեղծուհի Խուրշիդ-բանու Նաթավանի (№ 1121), բա-

նաստեղծ Կասիրի (№ 1123) և այլ ինքնագրեր:

Քիչ շնն նաև կապի արժեք ներկայացնող և արևելյան բանասիրության ու տեքստաբանության համար բացառիկ նշանակություն ունեցող բնագրերը: Պատմական սկզբնաղբյուրներից կարելի է հիշատակել Հասան բեկ Ռումուլի «Ահսան-ու-թ-թավարիխ» XVII դարի առաջին կեսի ընտիր ընդօրինակությունը (№ 40), Միրզա Մուհամմադ-Մեհդի խան Աստարադղիի «Թարիխ-և նադիրի» 1775 թ. ձեռագիրը (№ 67), Աբբաս-Միրզայի կողմից Նախլանի Քյալբ-Ալի խանին տրված հրովարտակների ժողովածուն, XIX դարի աղբյուրներին պատմագրության նշանավոր ներկայացուցիչներ Աբբաս-կուլի խան Բաբխանովի «Գյուլիսթան-և Իրամի» հեղինակի ձեռքով սրբագրված օրինակը (№ 105) և Միրզա Աղիյուզալ բեկի «Ղարաբաղնամե» ինքնագիրը:

Առավել արժեքավոր ձեռագրեր կան նկարագրված ձեռագրաց ցուցակի գրական-գրականագիտական բաժիններում: Կան ձեռագրեր, որոնք իրոք ունիկալ արժեք ունեն և որոնցից մի քանիսը արդեն իսկ ենթարկված են բանասիրական ուսումնասիրության և գիտական լայն ճանաչում են ստացել: Աղբյուրներին գրականության պատմության համար վերին աստիճանի ուշագրավ երևույթ է XII—XIII դդ. պարսիկ բանաստեղծ Շեյխ-Աթթարի «Աստարնամե» 1478 թ. թավիրված կատարված աղբյուրներին թարգմանությունը (№ 390 և 391), որն արդեն պատրաստված է հրատարակության: Բազմաթիվ են պարսկական և աղբյուրներին կրակների արժեք ու շահման ստեղծագործությունների դիվանների հին և ընտիր ընդօրինակությունները, որոնք շնն կարող վրիպել բանասեր-տեքստաբանների ուշադրությունից և առանց որոնց հնարավոր չէ կազմել միջնադարյան այնպիսի հեղինակների երկերի համեմատական բնագրերը, ինչպիսիք են Ջալալ-է-դ-դին Ռումին (№ 413), Ամիր Խոսրով Դահլավիի (№ 524, 1436 թ. ընդօրինակություն), Իմադ-է-դ-դին Նասիմին (№ 603, XV դ. ձեռագիր), Մուհամմադ Յուզուլին (որի տարբեր աշխատություններից ձեռագրաց ցուցակում նկարագրված են 63 ամբողջական ձեռագրեր, №№ 800—862), Սաիթ Թարբիզին (№ 940, 1677 թ. ձեռագիր) և բազմաթիվ այլ հեղինակներ:

Հրատարակության որակը ընդհանրապես բարձր է, եթե հաշվի չառնենք արաբատառ մասերում տեղ-տեղ նկատվող տպագրական վրիպակները: Պետք է ասել, սակայն, որ օգտագործված արաբական սև տառերը, որով շարված են և՛ վերնագրերը, և՛ ձեռագրերի սկզբի ու վերջի տողերը, և՛ ցանկերը այնքան էլ նպատակահարմար չեն ձեռագրաց ցուցակի համար:

Գրանք հարմար են միայն վերնագրերի և ենթավերնագրերի համար: Լավ կլիներ եթե ձեռագրերի սկզբի և վերջի տողերը տրվեին տեքստերի համար ընդունված սովորական՝ սպիտակ տառերով:

Հատորում ղեկավարված են մանրանկարչության տեսակետից առավել հետաքրքիր ձևագրերից հանված 38 մեծադիր նկարներ, դրանցից 4-ը անհաջող գունավոր պատճենահանումների ներդրեր են՝ տպված լիտոգրաֆիական ստվար թղթի վրա: Անհամեմատ ավելի հաջող են և ձեռագրերի մանրանկարների վարպետության բարձր աստիճանի մասին ավելի ճշգրիտ պատկերացում են տալիս գրքին հատկացված կավճապատ թղթի վրա սովորական սև ներկով

տպված նկարները, որոնք մեծ մասամբ վերցված են կլասիկների դիվաններից (Հաֆեզ, Նիզամի, Ֆուզուլի, Նավոյի և այլն):

Ազրբեջանական ՍՍՌ ԳԱ ռեսպուբլիկական ձեռագրական ֆոնդի աշխատակիցների ջանքերով, ֆոնդի ղեկավար Մ. Արսլանովի ղեկավարությամբ և պրոֆ. Հ. Արասլիի խմբագրությամբ հրատարակ հանված ձեռագրաց ցուցակի գրախոսվող հատորը գալիս է վկայելու ձեռագրերի հավաքման և ուսումնասիրության բնագավառում Ազրբեջանում վերջին տարիներին ընթացքում ձեռք բերված հաջողությունների մասին:

Հ. ՓԱՓԱՉՅԱՆ

ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ» ՊԱՐՍԿԵՐԵՆ

Անմահ պատմահոր, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» հայ պատմագրություն մեծագույն հուշարձանը լինելով, միաժամանակ այլազգի անվանի պատմաբանների կողմից գնահատված է որպես իր ժամանակի համաշխարհային պատմական գրականության գլուխգործոցներից մեկը: Այն դիտվում է որպես դասական պատմագրության ներկայացուցիչների՝ Հերոդոտոսի, Տակիդոսի, Պլուտարքոսի և այլոց երկերին համարժեք, իսկ առանձին հարցերում՝ առավել արժեքավոր աշխատություն: Դրանով է բացատրվում այն բուռն հետաքրքրությունը, որ միջազգային պատմագրությունը ցուցաբերել ու շարունակում է ցուցաբերել այդ մեծարժեք աշխատության նկատմամբ, և, պատահական է, որ վերջին հարյուրամյակի ընթացքում՝ Խորենացին թարգմանվել է քաղաքակիրթ աշխարհի բազում լեզուներով (լատիներեն, իտալերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն):

Գիտական լայն հետաքրքրությունը այս մեծարժեք պատմագրության նկատմամբ բացատրվում է նաև այն իրողությամբ, որ Խորենացին, շարադրելով հայոց պատմությունը ամենավաղ ժամանակներից մինչև 5-րդ դարը, մանրամասն տեղեկություններ է տալիս նաև հարեվան երկրների՝ Վրաստանի, Աղվանքի, կովկասյան ժողովուրդների, Բյուզանդիայի և հատկապես Իրանի վերաբերյալ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իրանի նախաիսլամական, պահլավական գրականության հետ միասին արաբները ոչնչացրել են նաև երկրի քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմությունը վերաբերող պատմագրական երկերը, կարելի է ասել, որ Խորենացին, որպես վաղ շրջանի Իրանի պատմության կարևորագույն հարցերի լուսաբանմանը նպաստող սկզբնաղբյուր, բացառիկ արժեք է ներկայացնում:

Այս տեսակետից էլ ողջունելի է Երևանի համալսարանի հրատարակչության նախաձեռնությունը, պարսիկ և պարսկախոս պատմաբաններին և ընթերցող հասարակությանը մատուցելու հայ միջնադարյան պատմագրության այս մեծարժեք հուշարձանի վաղուց սպասվող պարսկերեն թարգմանությունը:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Մ. Նալբանդյանին Հաջողվել է հաղթահարել լեզվական, բնագրագիտական, բանասիրական և բազում այլ դժվարություններ, հասնելու համար առավել ճշգրիտ թարգմանություն և, գտնելով միջնադարյան մատենագրությանը բնորոշ պարսկերեն համարժեք արտահայտություններ, հնաէրավորին չափ հարազատ մնալ բնագրի ոճին ու լեզվական յուրօրինակությունը: Թարգմանությունը օժտված է նաև պարսկալեզու ընթերցողին տրվող անհրաժեշտ ծանոթագրություններով, պատշաճ կերպով օգտվելով նաև Մ. Էմինի և Ստ. Մալխասյանի աշխարհաբար թարգմանություններին առնթեր կատարված ուսումնասիրություններից ու ծանոթագրություններից: Վարպետորեն են կատարված պատմության գրական արժեք ներկայացնող հատվածները՝ գողթան երգերի, Արտաշեսի ու Սաթենիկի և մյուս վիպերգությունների, հատկապես հոչակավոր «Ողբի» թարգմանությունները:

Այս հրատարակությամբ քերթողահայր Մովսես Խորենացու երկը հարստացավ ևս մի արժեքավոր թարգմանությամբ, որը պիտի գա ընդարձակելու ընթերցողների շրջանակը և նպաստելու միջազգային խորենացիագիտության հետագա զարգացմանը:

Հ Ա Կ ՈՒ Փ Ա Փ Ա Ջ Յ Ա Ն

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ: Հայոց պատմություն: (Պարսկերեն):

Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները

Գ. Նալբանդյանի: Համալսարանի հրատ., 1984:

ԳՐՔԵՐԻ ԱՇԽԱՐՀ

№ 8 (215), 17.08.1986

ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ԳՐԱԽՈՍԸ ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ . ԹՈՒՐՔԵՐԵՆՆ-ՀԱՅԵՐԵՆՆ ԲԱՌԱՐԱՆ

Եղիա Մուշեղյանը, որ գիտական շրջանակներին ավելի ծանոթ է Եղիա Կարնեցի անունով, 18-րդ դարի առաջին կեսի հայ իրականության ուշագրավ դեմքերից է, նա որդին էր խոտրջուրցի վաճառական Աստվածատուրի, նախնական կրթությունը ստացել էր Կարինում, տիրացու Գրիգորից և ապա ուսումը շարունակել կաթոլիկ հոգևորականների մոտ և ենթարկվելով նրանց քարոզչությանը՝ լծվել այդ գործին: Սակայն որոշ ժամանակ անց, զգալով պապական գործակալների հետին նպատակներն ու ծավալուն գործունեությունն ազգակործան բնույթը, հրաժարվել էր և սկսել զբաղվել հոր մասնագիտությամբ:

Ձեռք բերած լինելով բազմակողմանի գիտելիքներ և տիրապետելով ֆրանսերեն և այլ լեզուների, նա միաժամանակ հանդես է եկել որպես բանահավաք-բանասեր, թողնելով գրական հարուստ ժառանգություն, որն իր արկածալից կյանքի հետևանքով ընկել է Ռուսաստան և այժմ պահվում է Մոսկվայի Ռուսաստանի արտաքին քաղաքականությունից արխիվի «Հայաստանի հետ Ռուսաստանի հարաբերությունների» ֆոնդում:

Այս արխիվը, ներկա դարի 20-ական թվականներից իր վրա է հրավիրել պատմաբանների, տնտեսագետների և բանասերների ուշադրությունը, դառնալով ճանաչված հայագետներ Ա. Հովհաննիսյանի, Հ. Ոսկյանի, Ա. Աբրահամյանի և այլոց հետաքրքրության առարկա: Այստեղ առևտրական հաշվեմատյանների, իր ժամանակի պատմության տարբեր հարցերին վերաբերող բազմաթիվ նամակների, պաշտոնական վավերագրերի և բանահյուսական այլազան նյութերի հետ պահպանվել են մեծ մասամբ գործնական նպատակներով կազմված տարբեր լեզուների բառացանկեր և բառարանագրական փորձեր, որոնցից առավել կատարյալն ու գիտական որոշակի հետաքրքրություն ներկայացնողը շուրջ 2000 բառից կազմված թուրքերեն-հայերեն բառարանն է:

Հրատարակելով բառարանի քննական բնագիրը, բանասեր Բ. Չուգասոյանը կից կատարված ուսումնասիրութեան մեջ համառոտակի անդրադարձել է հեղինակի կյանքին և գործունեութեանը վերաբերող հարցերին և գիտական հանգամանալից ուսումնասիրութեան ենթարկելով այս ուշագրավ բառարանագրական հուշարձանը, կանգ է առել հատկապես այն արժանիքների վրա, որոնք կարևոր, երբեմն նաև եզակի նշանակութիւն ունեն ուշ միջնադարում հայոց լեզվի բառակազմի, գրական և խոսակցական լեզուների առանձնահատկութիւնների և լեզվի պատմութեանը վերաբերող այլ հարցերի լուսաբանման համար:

Առանձին գնահատականի է արժանի հատկապես արդի լեզվաբանութեան պահանջներին համապատասխան գիտական մակարդակով շարադրված «բառաքննական դիտողութիւնների» բաժինը, որտեղ օժանդակ հարուստ գրականութեան քննական օգտագործմամբ, հանգամանորեն ստուգաբանված, ճշգրտված և մեկնաբանված են թուրքերեն բառերի հայերեն համարժեքները, որոնք կամ առաջին անգամ են հանդիպում և կամ ցարդ բավարար մեկնաբանութիւն չեն ստացել:

Եղիա Կարնեցու այս արժեքավոր գրական երախայրիքի գիտական հրատարակութիւնը անտարակույս իր որոշակի նպաստը կրերի հայոց լեզվի բառագիտութեան ուղղութեամբ մեզ մոտ տարվող աշխատանքներին:

ՀԱԿՈՒ ՓԱՓԱԶՅԱՆ

Պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅՐԵՆԻ ԴՊՐՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ

Իր վաստակաշատ կյանքի 60-րդ տարին բոլորեց արգի հայագիտության խոշոր ներկայացուցիչ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, Մեսրոպ Մաշտոցի անվան Հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանի տնօրեն Լևոն Խաչիկյանը:

Գիտության ասպարեզ իջնելով 1940-ական թվականների սկզբներին և ասպիրանտական ուսումնառությունը անցկացնելով անվանի հայագետ, ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի ղեկավարությամբ, պաշտպանության ներկայացրած՝ «Եղիշե Արարածոց մեկնությունը» դիսերտացիոն աշխատությամբ, երիտասարդ գիտնականն իր վրա հրավիրեց հայրենի դպրության մեծ ուսուցչապետներ Հ. Մանանդյանի, Մ. Աբեղյանի, Հ. Աճառյանի և Ս. Մալխասյանցի ուշադրությունը:

Այդ տարիներից սկսած՝ Լ. Խաչիկյանի գիտական գործունեությունը անխզելիորեն կապված է եղել Մաշտոցի անվան Մատենադարանի հետ, որտեղ նա աշխատել է և՛ որպես շարքային մատենագիր, և՛ որպես ձեռագրատան վարիչ, իսկ 1954 թ. նրան է վստահվել հայ մշակույթի այդ աշխարհահռչակ գանձարանի և ինքնատիպ գիտական հաստատության տնօրինությունը: Այդ վստահությունը նա նվաճել էր տասնամյա քրտնաջան ու բեղմնավոր աշխատանքի արգասիքը հանդիսացող, Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի հետազոտությանը նվիրված այնպիսի ուսումնասիրություններով, որոնք հարըստացնելով հայրենի գիտությունը, միաժամանակ հավաստում էին նրանց հեղինակի խոր և բազմակողմանի գիտելիքները մեր ձեռագրական մշակույթի գնահատման ասպարեզում:

Հետամուտ լինելով հարագատ ժողովրդի պատմական անցյալի սակավ ուսումնասիրված կամ բոլորովին չուսումնասիրված հարցերը լուսաբանող աղբյուրների բացահայտմանն ու գիտական հրապարակմանը, Լ. Խաչիկյանը կարճ ժամանակում գիտական հասարակայնության ուշադրությունը ներկայացրեց վաղ միջնադարի սոցիալական շարժումները, հայ շինականի իրավական կացությունն ու գյուղական համայնքը, արհեստագործությունն ու արհեստավորական եղբայրությունները: Հրապարակ բերեց Հայաստանում գիտության տարբեր ճյուղերի զարգացմանը և այլ հանգուցային հարցերին նվիրված աշխատություններ, ինչպես նաև միջնադարյան մտածողներ Մովսես Խորենացու, Գրիգոր Մագիստրոսի, Վարդան Արևելցու, Հովհաննես, Հակոբ և Մատթեոս Զուղայեցիների,

Կոնստանդին Բարձրբերդցու, Սարգիս Աբեղայի, Հակոբ Սանահնեցու և Հայ մատենագիտության այլ երախտավորների քաղաքական, հասարակական և մշակութային գործունեության տարբեր կողմերը լուսաբանող բնագրեր և ուսումնասիրություններ:

Հայ ժողովրդի պատմության նվազ ուսումնասիրված ժամանակահատվածների և շրջադարձային նշանակություն ունեցող հարցերի լուսաբանման ձեռնարկ էր, որ Լ. Խաչիկյանին մղեց դեպի 14-15 դդ. ձեռագրաց հիշատակարանների գիտական հրատարակությունը, որը սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության վերաբերյալ մի հարուստ փաստական նյութով պիտի դար լրացնելու հայ պատմագրության նախորդ դարերի համեմատությամբ, նկատելի ամրության հետևանքով առաջացած սկզբնաղբյուրների զգալի բացը:

Տարիների մեղվաջան աշխատանքի արգասիքը հանդիսացող ձեռագրաց հիշատակարանների չորս սովոր հատորներով ոչ միայն գիտական շրջանառության մեջ դրեցին միանգամայն նոր և հավաստի սկզբնաղբյուրներ, այլև առաջին անգամ տրվեց 15-րդ դ. քաղաքական սոցիալ-տնտեսական, ինչպես նաև կրթական և մշակութային կյանքի պատմության սիստեմատիկ շարադրանքը: Մեր ժողովրդի ազատագրական մաքառումների տարեգրության մեջ գիտական պատշաճ գնահատական ստացան 15-րդ դ. հայ աշխարհիկ և հոգևոր ավատատիրության ներկայացուցիչների՝ Վասպուրականում, Արարատյան երկրում և Սյունիքում ծավալված գործունեության տնտեսական, քաղաքական և գաղափարական նախադրյալները և պատմական հեռանկարները:

Իրավացիորեն Լ. Խաչիկյանի այդ հրապարակումները և հետազոտությունները գնահատվեցին որպես խոշոր ներդրում հայագիտության մեջ՝ հեղինակին բերելով պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան և դարձնելով Մաշտոցյան մրցանակի առաջին դափնեկիրը:

Մեծ է ակադեմիկոս Լ. Խաչիկյանի ավանդը հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի ստեղծման գործում:

Բեղուն է եղել Խաչիկյանի շուրջ քառորդաբայա գործունեությունը Մատենադարանում: Հայագիտության ամենատարբեր բնագավառների բազմազան հարցերի և մեր ձեռագրական գանձերի խոր իմացությամբ միայն կարելի էր ճշտել ընթացիկ գիտահետազոտական-բնագրագիտական աշխատանքների գլխավոր ուղղությունները. ստեղծել համապատասխան գիտական-ստեղծագործական օղակներ և համալրել բանիմաց, որակյալ կադրերով, գտնել, առաջ քաշել և դաստիարակել երիտասարդ, խոստումնալից մասնագետների և պայմաններ ստեղծել արդյունավետ ու շահեկան աշխատանքի համար:

Ընդամենը երկու տասնյակ տարիների ընթացքում ավագ և երիտասարդ սերնդի պատմաբանների, բանասերների և մասնագիտացած բնագրագետների ջանքերով լույս ընծայվեցին մեծ թվով պատմական, գրական, փիլիսոփայական, իրավագիտական, բնագիտական, բժշկական, աստղաբաշխական, տիեզերագիտական և այլ գիտահամեմատական, քննական բնագրեր, հրատարակվեցին պատմական, փիլիսոփայական, բժշկական և այլ հուշարձանների ռուսերեն թարգմանությունները, հրատարակության պատրաստվեցին և հրատարակվեցին հայ և այլալեզու դիվանական

պատմական վավերագրերի ժողովածուներ, երկու սովար հատորներով մասնագետների տրամադրության տակ դրվեց մեր ձեռագրական ֆոնդերի համառոտ ցուցակը և հրատարակության հանձնվեց ընդարձակ ցուցակի առաջին հատորը: Մեծարժեք հրապարակումներին զուգահեռ, Մատենադարանի գիտական աշխատողները հանդես եկան նաև միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության, գրականության, փիլիսոփայության և մեր ժողովրդի ստեղծած մշակութային արժեքների ուսումնասիրությանը նվիրված արժեքավոր մենագրություններով:

Ծանրաբեռ և բազմազբաղ է ակադեմիկոս-տնօրենի աշխատանքային առօրյան: Մատենադարանի օրըստօրե ընդլայնվող համամիութենական և միջազգային կապերը, որոնք դրսևորվում են գործարար համագործակցության և գիտական փորձի փոխանակման տարբեր ձևերով (փոխադարձ գործուղումներ, համատեղ գիտական նստաշրջաններ և այլն), շարունակ պահանջում են ավելի ուժեղ և արդյունավետ աշխատանք:

Ձկա Հայագիտության հետ առնչվող որևէ հաստատություն կամ հասարակական կազմակերպություն, որի աշխատանքներում իր գործուն մասնակցությունը չունենա ակադեմիկոս Լ. Խաչիկյանը, լինի դա գիտությունների ակադեմիայի հասարակագիտական բաժանմունքում, պատմության և արևելագիտության ինստիտուտների գիտական խորհուրդներում, Հայկական սովետական հանրագիտարանի խմբագրությունում, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում, Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի Հայկական ընկերությունում. նա ներկա է իր բոլորանվեր, անբասիր աշխատանքով:

Սակայն այս ընթացքում միշտ շարունակվել են անվանի հայագետի գիտական պրպտումները, որոնք միշտ էլ պսակվել են նորահայտ մի բնագրի հրատարակության մբ (Հովհ. Ծարեցի, Հովհ. Քոնեցի) կամ հայ ավատատիրական իշխանական տների պատմությանը վերաբերող նորագույն հետազոտության մբ («Արտագի Հայկական իշխանությունն ու Ծործորի դպրոցը», «Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը» և այլն): Բազմամյա ջանադիր աշխատանքի շնորհիվ ավարտված է արդեն Թովմա Մեծոփեցու (15-րդ դ.) մատենագրության լրիվ ուսումնասիրությունը, նորահայտ նյութերի հիման վրա շարագրված է նոր աշխատություն վաղ շրջանի հայ-ուսական տնտեսական և քաղաքական հարաբերությունների վերաբերյալ, իսկ թղթապանակներում իրենց վերջնական մշակմանն են սպասում նորանոր այլ բնագրեր և ուսումնասիրություններ:

Եվ այս բոլորից հետո, որքան խորհրդանշական է ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի պարգևատրումը կառավարական բարձր պարգևով՝ ժողովուրդների բարեկամության շքանշանով: Իրոք, ավելի կարճանում են ժողովուրդների մերձեցման և բարեկամության ուղիները, երբ անկաշառ նվիրումով ուսումնասիրվում են հարագատ ժողովրդի հոգևոր գանձերը և դառնում համայն մարդկության սեփականությունը:

ՆԱՀԱՏԱԿ ՖԻԴԱՅՈՒ ՆԱՄԱԿԸ

ԵՍ ԶԱՎԱԿՆ ԵՄ ԶԵՐ, ԻՆՁ ՄԻ ՄՈՌՈՒԱՑԵՔ...

1982 թ. օգոստոսին, երբ գիտական գործուղման մեջ էի Բուլղարիայում, ուսումնասիրելու համար «Կիրիլ և Մեթոդի» ժողովրդական գրադարանի արխիվներում պահվող և Հայաստանի 16–19-րդ դդ. սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմության վերաբերյալ հարուստ տեղեկություններ պարունակող օսմանյան պաշտոնական վավերագրերը (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1984 թ. № 3), Սոֆիայի «Երևան» մշակութային կազմակերպության տանը մի հայրենակից ինձ հանձնեց դպրոցական տետրի քայքայված մի թերթիկ: Այն պարունակում էր հայատառ թուրքերենով գրված վեց էջանոց մի նամակի վերջին երկու էջերը: Նա չէր հիշում, թե ինչպես է այդ թերթիկը հայտնվել իր մոտ և ոչինչ չգիտեր նամակի սկզբի երկու կորած թերթերի մասին: Իմ թախանձանքները՝ որոնելու և գտնելու դրանք, ոչ մի արդյունք չտվին:

Թերթիկի առաջին իսկ ընթերցումից պարզվեց, որ այն հայ ֆիդայական շարժման փառաբանված դեմքերից մեկի՝ Պետրոս ՍերեմՂյանի (Պետո) 1895 թ. հուլիսի 5-ին Թիֆլիսից իր ծնողներին գրած նամակի վերջին մասն է, որտեղ սրտառուչ խոսք է ասված այն մասին, թե ինչպես Հայրենիքի հանդեպ սրբազան սերն ու անձնուրաց նվիրումը նրան մղել են հարելու ֆիդայական շարժմանը: Վերին աստիճանի գրագետ և գեղեցիկ լեզվով շարադրված նամակի այս թանկարժեք մասունքից պարզվում է, որ Բուլղարիայի Ֆիլիպե (Պլովդիվ) քաղաքում բնակվող թրքախոս հայ ընտանիքի անդրանիկ զավակ Պետրոսը, առանց ծնողներին տեղյակ պահելու, հեռացել է տնից և մեկնել Թիֆլիս, միանալու Ավետյաց երկիր մեկնող ֆիդայական խմբերին:

Ահա նամակի թարգմանությունը (ընդգծված բառերը հայերեն են գրված).

«... Մնաք բարով... հանցանքս ներեցեք... որդիական պարտա-
կանություններիս մեկն անգամ չկատարեցի... ձեր հոգեհատոր որդին
ապերախտ գտնվեց... որպես անդրանիկ զավակ, ծերության հասա-
կում ձեզ օգնելու և մխիթարելու փոխարեն, այսպես վարվեցի...
զրկեցեք ինձ անդրանիկության իրավունքից... Ո՛հ, գիտեմ, թե որքան
բարձր և նուրբ զգացմունքներով է լի ձեր սիրտը: Ձեմ հավատում, որ
ձեր մայրական գորովագութ սրտից ինձ կվանեք և կանիծեք. քավ
լիցի, չեմ հավատում: Ձեր ցուցաբերած հազարավոր մայրական
գորովանքն ու սերը մինչև վերջին շունչը կպահպանվի իմ սրտում...
աշխարհում կարելի՞ է միթե ձեզ մոռանալ: Աներկբա համոզված եմ,
որ անսահմանորեն սիրում եմ ձեզ: Սակայն ամեն ինչս զոհաբերեցի
Հայրենիքիս սրբազան սիրուն... հեռացա ձեր մայրական գրկից...
ապագաս ոչնչացրի... ազգիս և Հայրենիքիս հանդեպ սրբազան
պարտքս հատուցելու համար, բոլոր աշխարհիկ վայելքներս տառա-
պանքով և կյանքս մահով փոխարինեցի:

Հեռու գտնվելով ձեզանից, վերջին անգամ լինելով խնդրում եմ,
ներեցեք, շարունակեք բարի աչքով նայել: Ձեզ անսահմանորեն
սիրելուս մի կասկածեք, մի զրկեք ինձ ձեր օրհնությունից, աղոթեցեք
ինձ համար... Ձեր օրհնության շնորհիվ սիրելի Հայրենիքիս արժա-
նավոր մի ֆիդայի կդառնամ:

Թիֆլիս

5 հուլիս 95

Համբուրելով ձեր ձեռքը, խնդրում եմ ընդունեք արտասուքով
զրված այս նամակս ու հարգանքներս:

Ձեր որդի՝ Պետրոս»:

Մեզ հայտնի է, որ Պետրոս ՍերեմՂյանը ընդգրկված է եղել անվանի
հայդուկ Նիկոլ Դոմանի խմբում, նրա կազմում մասնակցել մար-
տական գործողություններին: Հայտնի է նաև, որ Նիկոլ Դոմանի խում-
բը 1897 թ. հուլիսին, քրդական մզրիկ ցեղի ցեղապետ, օսմանյան հա-
միդիե պատժիչ ուժերի հրամանատար Շարաֆ-բեկի դեմ կազմակերպ-
ված ինսանսորի վրիժառու արշավանքին մասնակցած ամենամարտա-
կան ջոկատներից էր: Պահպանվել է խմբի լուսանկարը, որից և հանված

է Պետրոս ՍերեմՂյանի տպագրվող նկարը: Այս դեպքերից հետո, վերադառնալով իր ծննդավայրը, նա որոշ ժամանակ որպես սպա ծառայել է բուլղարական բանակում: Սակայն ժողովրդի ազատութեան համար բռնակալութեան դեմ մարտնչող հայդուկի մարտական խառնվածքը կրկին նրան մղում է դեպի հեղափոխական պայքարի հորձանուտը:

Դա այնպիսի ժամանակ էր, երբ կրկին մեծ ծավալ էր ստացել հայդուկային շարժումը: Ազատագրված Բուլղարիայից զինավառ խմբերը, անցնելով պետական սահմանը, մուտք էին գործում, դեռևս օսմանյան լծի տակ հեծող Մակեդոնիայի կամ Արևելյան Ռումելիի տարածքը, տոն տալով ժողովրդական ըմբոստ ելույթներին: Սերտ համագործակցություն էր ստեղծվել վտարանդիության մեջ գտնվող մակեդոնական և հայ հեղափոխական կուսակցությունների միջև, որոնց ենթարկվող հայդուկային ջոկատները համատեղ պայքարի ելած՝ ուսուսի կռվում էին օսմանյան բռնակալության դեմ: Պետրոս ՍերեմՂյանը այդ մարտական խմբերի առաջին շարքերում էր: Հանդուգն գործողություններից մեկում, բուլղարացի ընկերների հետ ընկնելով թուրքերի ձեռքը, մահապատժի ենթարկվեց: Ժնևում հրատարակվող Հ. Հ. Դաշնակցության օրգան «Դրոշակ» պարբերականի 1901 թ. 9-րդ համարում տպագրվեց հակիրճ մի տեղեկագրություն. «Ազրիանապոլսում դեկտեմբերի 9-ին, հրապարակավ կախաղան հանվեցին մեր երկու թանկագին ընկերները՝ Պետրոս ՍերեմՂյան և Օննիկ Թորոսյան: Նրանց հետ միաժամանակ կախաղան բարձրացան իրենց զինակից երկու բուլղար ընկերները՝ Սվիատոսլավ Մերձանով և Հաճի-Խրիստո Իլիև»:

Ազատության անվեհեր մարտիկի հերոսական նահատակության լուրը ոգեշնչեց Ֆիդայական բազում երգերի հեղինակ, ալեքսանդրապոլցի գուսան Միջագին՝ նոր երգով հավերժացնելու նրա պայծառ հիշատակը:

*Վերքերով լի ջանֆիդա ես,
Թափառական, տուն չունեմ,
Յարիս փոխան զենք եմ գրկել
Մի տեղ հանգիստ բուն չունեմ:*

*Արնոտ երկրիս սուգ շիվանը
Ինձ դուրս կանչեց փակ կյանքից,
Տանջված հայրենիքիս սերը
Չը վախեցուց վտանգից:*

... Մակեդոնիա իմ եղբայրս
Իմ խաչովս պսակվեց,
Եղբայրական սիրո զենքով
Գազան սուլթան խորտակվեց:
Կախազանից երբ որ բամին
Ինձ տարուբերեց ճոճալեն,
Հիշեք Պետրոս Սերեմյանին
Թուրքից վրեժ գողալեն:

ՀԱԿՈՒ ՓԱՓԱԶՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՄՐՑՈՒՅԹՆ ԱՎԵԼՈՐԴ Է

Մեր վերածնված պետականության խորհրդանիշերի մասին հրապարակվող թեր ու դեմ կարծիքները չեն կարող չմտահոգել հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու: Հետևելով ցարդ հրապարակված կարծիքներին, դժվար է նկատել համազգային հավանությունները խորհրդարանի 1990 թ. օգոստոսի 24-ի որոշմանը, որով 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության եռագույնը կրկին վերահաստատվեց որպես մեր նորոգ անկախության պետական դրոշ: Ինչ վերաբերում է, սակայն, նոր հիմնի և գինանշանի ստեղծման համար մրցույթ հայտարարելու մասին ընդունված հապճեպ որոշմանը, ապա հրապարակված կարծիքների մեջ գերիշխում է այն տեսակետը, որ մեր անկախության վերականգնման հետ, պետք է վերականգնվեն նաև նրա խորհրդանշանները: Այս է ժողովրդի բոլոր խավերի անխախտ տեսակետը: Մենք նոր պետություն չենք հիմնել, մենք հետ ենք խլել 70 տարի առաջ մեզնից խլված անկախությունը:

Մեր Հանրապետությունը հիմնվել է 1918 թ. Մայիսի 28-ին, և երբ Ազգային խորհրդում քննվել է նոր պետության խորհրդանիշերի հարցը, հիմն ստեղծելու մասին խոսք անգամ չի եղել, որովհետև կարարեն հերոսական ազգային-հեղափոխական պայքարի բովում ծնունդ առած, հայրենիքի ազատության համար մինչև վերջ մաքառելու կոչող սրբազան հիմնը՝ «Մեր հայրենիքը»:

Կա Անդրանիկի՝ Սասնո հերոսամարտի և Առաքելոց վանքի կռիվների շրջանի (1901 թ.) Ֆիդայական հագուստով, հրացանով և փամփռչտակալներով լուսանկարը, թիկունքում իր խմբի դրոշակը, որի վրա ասեղնագործված է «Մեր հայրենիքի» մի քառատողը.

**«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ յուր ազգի
Ազատության կզոհվի»:**

Հեղափոխական շարժման մեջ ընդգրկված հայ կանանց ձեռքով գործված այս դրոշի հանձնումը Անդրանիկի խմբին, ինչպես նաև այլ փաստական տվյալներ, գալիս են հաստատելու, որ Մ. Նալբանդյանի

«Իտալացի ազջկա երգ»-ից հանված առանձին քառատողերից արդեն կազմվել էր մեր ազատագրական պայքարի քայլերգը, որն արագ տարածվեց և ընդունվեց ժողովրդի կողմից: Իսկ 1900-ական թվականների վերջերին արդեն «Մեր հայրենիքը», որպես այդպիսին, հոտնկայս երգվում էր բոլոր ազգային հանդիսություններում:

Ինչպես տեսնում ենք, մեր հիմնը «Մարսելյեզի», «Ինտերնացիոնալի» և այլ հեղափոխական հիմների նման ստեղծվել է ազատագրական պայքարի բուռն վերելքի ընթացքում և թրծվել ու սրբագործվել թե՛ կռիվների վառողի բուլյրով: Այն խորխտ հնչում էր Վանի հերոսամարտի օրերին ինքնապաշտպանություն ղրքերում ու խրամատներում: Այդ երգը շուրթերին մեր գինվորները գրոհի էին նետվում Սարդարապատում, կերտելով մեր անկախություն հիմնաքարը հանդիսացող պատմական Հաղթանակը: Ս. Վրացյանը՝ անդրադառնալով ճակատամարտին նախորդող իրադարձություններին, պատմում է, թե ինչպես Երևանի նահանգապետարանի շենքի առաջ խմբված բազմահազար ժողովուրդը «Մեր հայրենիք» երգելով շարժվեց դեպի Արամ Մանուկյանի բնակարանը, պահանջելու, որ նա այդ օրհասական օրերին հանձն առնի երկրի ղեկավարությունը: Ս. Վրացյանի վկայությունամբ, «1918 թ. օգոստոսի 1-ին Երևանի քաղաքային ակումբի դահլիճում հանդիսավոր շուքով բացվեց Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստը: Երբ նախագահ Ա. Սահակյանը ավարտեց բացման ճառը և հայտարարեց նիստը բացված, դուրսը՝ խորհրդարանի շենքի գլխին, բարձրացավ Հանրապետության եռագույն դրոշը և հազարավոր բերաններ որոտացին «կեցցե», ծափահարությունները թնդացրին օդը: Հնչեց «Մեր հայրենիքը»: Զորքը պատվի կանգնեց»:

Ազգային-հեղափոխական հիմները այսպես են ստեղծվում, դրանք պատվերով չեն գրվում: Պատվերով գրվում են կայսերական-միապետական սովետական երկրների հիմները, և, որպես օրենք, միշտ սկրսվում են արքայի փառաբանությամբ կամ արևշատության տենչանքով:

Բոլշևիկյան բռնակալության պայմաններում 70 տարի շարունակ խորհրդային կայսրության մեջ մեր ժողովուրդը հարկադրված էր սեղմել շրթունքները և մոռանալ սրբազան երգը: Իսկ նրանք, ովքեր փորձում էին հիշել, իրենց մահկանացուն կնքում էին հեռավոր հյուսիս տաժանակրության ճամբարներում: Եվ թվում էր, թե սերունդների փոփոխությամբ այն իսպառ պիտի ջնջվի ժողովրդի հիշողությունից: Սակայն մենք երջանիկ վկաներն ենք այն իրողության, թե ինչպես 1988 թվականի փետրվարից սկսված ազգային մեծ զարթոնքի հետ համատեղ վերստին ընձյուղվեց «Մեր հայրենիքը» և հաղթական

հնչեց հարյուրավոր հայորդիների զանգվածային համաժողովներում ու երթերում: Այդ երգով օրհներգվեց մեր անկախության հռչակումը Ազգային խորհրդարանի 1990 թ. օգոստոսյան նստաշրջանում:

Ձեռք կարծում, որ իրավացի են նրանք, ովքեր առարկում են երգի տեքստին, հատկապես անընդունելի համարելով սկզբի երկու տողը (ի դեպ՝ 1918-20 թթ. այն փոխված է եղել «Մեր հայրենիք ազատ, անկախ, մեր թշնամուց ազատված» երկտողով): Այս առումով, թերևս, կարելի է համաձայնել Ա. Շեկոյանի տարբերակի հետ՝ զեղչել առաջին տունը և սկսել «Մեր հայրենիք շղթաներով այսքան տարի կապկապված» երկտողով: Սխալ է այն տեսակետը, որ երգի չորս տները չեն արտահայտում մեր ազգի ներկա գաղափարական նկրտումները: Մի՞թե մեր հայրենիքի մեծ մասը, սկսած Արցախով, Նախիջևանով, Գողթնով և վերջացրած ամբողջ Արևմտյան Հայաստանով, դեռևս շղթաների մեջ չէ, որ պետք է ազատագրվի «յուր քաջ որդոց սուրբ արյունով»:

Խորհրդանշական է նաև 3-րդ տունը, ուր փառաբանված է մեր «եռագուլյնը» և մանավանդ 4-րդ ու վերջինը, որն ավարտվում է «Թող միշտ պանծա Հայաստան» բառերի հանդիսավորությամբ:

Վերջում անհրաժեշտ է նշել ևս մի հանգամանք: Ոմանք առաջ են քաշում առավել հաջող կամ համապատասխան մեղեդի ստեղծելու անհրաժեշտությունը, որն, ինչպես ասում են՝ ճաշակի հարց է: Սակայն կա նաև ավանդությունը հարազատ մնալու անվիճելի և կենսական պահանջը, որ անհնար է հաշվի չառնել: 200 տարիների ընթացքում քաղաքական բազում վայրիվերումների ենթարկված Ֆրանսիայում ոչ մի, թեկուզև շատ հանճարեղ պոետ կամ երաժիշտ չի փորձել ստեղծել «Մարսելյեզին» փոխարինող այլ երգ: Դա նշանակում է, որ ժամանակները փոխվել են, սակայն ազատության պայքարի բոցերում ծնված հիմները երբեք չեն հնանում:

Հ. ՓԱՓԱՋՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԳԱՓՆԵԿԻՐԸ

Հուլիսի 2-ին, Օշականի Մեսրոպ Մաշտոցի անվան դպրոցում դուժարված ՀՍՍՀ ԳԱ նախագահության ընդլայնված նիստում, հանրապետության գիտական հասարակայնության ներկայացուցիչների և Աշտարակի շրջանի ու Օշականի մտավորականության և բնակչության ներկայությունը, հանդիսավոր պայմաններում, տեղի ունեցավ հայագիտական լավագույն աշխատության համար սահմանված Մաշտոցյան մրցանակի հանձնուժը անվանի հայագետ, ՀՍՍՀ ԳԱ թղթակիցանդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Լ. Ս. Խաչիկյանին:

Հիշյալ գիտական մրցանակը շնորհվում է յուրաքանչյուր հինգ տարվա ընթացքում հայագիտության բնագավառում կատարված առավել ուշագրավ ու ծանրակշիռ աշխատության համար:

Այս առումով էլ դժվարին և պատասխանատու խնդիր էր դրված ՀՍՍՀ ԳԱ հասարակագիտական բաժանմունքի բյուրոյի առաջ, ներկայացված մի քանի, իրենց նշանակությամբ մեկը մյուսին չգիշտող, գործերից ընտրելու առավել կարևորն ու հայագիտության մեջ խոշոր ներդրում հանդիսացող աշխատությունը: Ձայների մեծամասնության կենտրոնացումը Լ. Ս. Խաչիկյանի «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» եռահատոր աշխատության օգտին, գալիս է վկայելու, որ ԳԱ հասարակագիտական գիտությունների բաժանմունքը ըստ արժանվույն է գնահատել սովետահայ պատմագրության վերջին տարիների կարևոր նվաճումներից մեկը հանդիսացող այդ մեծարժեք աղբյուրագիտական աշխատությունը, և պատահական չէ, որ գնահատականը հավանության արժանացավ մեր հանրապետության գիտական հասարակայնության և ընդհանուր հայագիտական շրջանակների կողմից:

Ձեռագիր հիշատակարանների հավաքման և դրանց բնագրերի գիտական հրատարակման գործով Լ. Ս. Խաչիկյանը զբաղվել է շուրջ երկու տասնամյակ: Տարիների համար ու քրտնաջան բնագրագիտական աշխատանքների առաջին արդասիքը 1950 թ. լույս տեսած «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» սովոր հատորն էր, որից հետո նա անմիջապես ձեռնամուխ եղավ առավել կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունեցող ԺԵ դարի հիշատակարանների հավաքման մեծ ու դժվարին գործին:

15-րդ դարը իրավամբ դիտված է որպես հայկական ավատատիրության եզրափակիչ դար: Ուստի հասկանալի է, որ մեր ժողովրդի վերջին հարյուրամյակների պատմական ճակատագրի սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալների բացահայտման բանալին պետք է փնտրել այն բախտորոշ իրագործությունների և քաղաքական վայրիվերումների մեջ, որոնք եկան վերափոխելու երկրի սոցիալ-քաղաքական ու էթնիկական պատկերը և որոնց շնորհիվ հայ աշխարհիկ ավատատիրական դասը դուրս մղվեց ասպարեզից՝ որպես որոշակի քաղաքական ուժ:

Քաղաքական դժնդակ պայմանների և տնտեսական ու մշակութային կյանքում առաջացած ծանր, անկումային վիճակի հետևանքով վրա հասած հայ պատմագրության գրեթե ամուլ այս շրջանում, ձեռագրաց հիշատակարանները աղբյուրագիտական բացառիկ արժեք են նրանում: Այս իրողությունը գիտական խորը հավատումը տվեց Լ. Խաչիկյանը իր եռահատոր աշխատակամների և առընթեր կատարած ընդարձակ ու բազմակողմանի ուսումնասիրությանը: Երազդովեց հայ ժողովրդի ամենամուգ և միաժամանակ ամենասակավ ուսումնասիրված շրջանի պատմությունը, որը կայուն հիմք է հանդիսանում հետագա դարերի պատմության մի շարք բարդ ու հանգուցային հարցերի լուսարանման համար: Կատարված է պատմության այդ ժամանակահատվածի սպառիչ ուսումնասիրությունը: Գիտական շրջանառության մեջ են դրված եզակի արժեք ներկայացնող միանգամայն նոր նյութեր, որոնց աղբյուրագիտական նշանակությունը դուրս է դալիս հայագիտության սահմաններից՝ ճանաչվելով և բարձր գնահատականի արժանանալով ընդհանուր արևելագիտական շրջանակներում:

Հաճելի է նշել, որ մաշտոցյան բարձր մրցանակի առաջին դափնեկիրը՝ հեղինակն է բազմաթիվ այլ կարևոր գիտական աշխատությունների, մեր հարուստ մատենագրության հմուտ և մեղվաջան հետազոտողն ու հայագիտական մտքի փայլուն ներկայացուցիչներից մեկը, և ավելի քան 15 տարի նրան է վստահված ձեռագրագիտական և աղբյուրագիտական խոշորագույն և միջազգային հռչակ վալելող հաստատության՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինության պատվավոր ու պատասխանատու պաշտոնը:

Հայ գրի ու դպրության հիմնադիր անմահ Մեսրոպ Մաշտոցի անունով սրբազործված արժանի մրցանակը կողեշնչի և ստեղծազործական նոր թափ կհաղորդի բազմալստակ զիտնականին, նորանոր մեծարժեք աշխատություններով հարստացնելու հայագիտության դանձարանը:

Հ. ՓԱՓԱԳՅԱՆ

ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Անժամանակ մահը մեր շարքերից խլեց մեծավաստակ հայագետ-արևելագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Տեր-Ղևոնդյանին:

Հանգուցյալը մեկն էր այն գիտնականներից, որն իր ամբողջ գիտակցական կյանքը անմընացորդ նվիրել էր հայրենի գիտության զարգացմանն ու առաջընթացին:



Դպրոցական ուսումնառության ավարտը կահիրեում զուգահեռակց այն բուռն ոգևորության տարիներին, երբ երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո ծայր էր առել ի սփյուռս աշխարհի ցրված հալ համայնքների զանգվածային հայրենազարծությունը: Եվ ահա Մայր Հայրենիքի կանչին ակնդետ, ուսման ծարավի խանդավառ պատանին, իր գերզաստանի հետ, բազմաճազար այլ եզրպտահայերի ուղեկցությամբ, ոտք դրեց հայրենի հողին և անմիջապես ընդունվեց Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան բաժինը: Փայլուն տիրապետելով արաբերենին, նա

այստեղ հետևում է իրանական բաժնի դասընթացներին, ձեռք բերելով ևս մեկ արևելյան լեզվի իմացություն: Ուսման ընթացքում բախտորոշ հղավ նրա ծանոթությունը մեծանուն հայագետ, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի հետ. մեծ գիտնականը անմիջապես նկատեց նրան՝ ուղղություն տալով, խրախուսելով և սատար լինելով նրա գիտական մղումներին:

Համալսարանի երրորդ շրջանավարտ Ա. Տեր-Ղևոնդյանը ամենահամապատասխան թեկնածուն հղավ 1955 թ. արարական աղբյուրների գծով ԳԱ պատմության ինստիտուտի հայտարարած ասպիրանտական տեղի համար: Ասպիրանտական ուսումնառության տարիներն անցան լենինգրադի արևելագիտության ինստիտուտում: «Պարծյալ ինձ բախտը ժպտաց, իմ գիտական ղեկավարը ակադեմիկոս Հովսեփ Օրբելին էր»,— հաճախ շեշտում էր նա: Եվ իրոք, այդ հմուտ ղեկավարության և ջանասեր աշխատանքի շնորհիվ հասունացավ և հայագիտության անդատանը ոտք դրեց լենինգրադյան արևելագիտական դպրոցի արժանավոր սաներից մեկը, որի պաշտպանության ներկայացրած թեկնածուական դիսերտացիոն աշխատությունը՝ «Արարական ամիրությունները Բագրատունյաց Հայաստանում», բարձր գնահատականի արժանացավ գիտական շրջանակներում և ճանաչված բյուզանդագետ Ն. Գարսոյանի կողմից թարգմանվեց անգլերեն:

1958—1981 թթ. բեղուն գործունեությունը ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում ծավալվեց աղբյուրագիտության, բնագրագիտության, պատմագրական և պատմաբանասիրական ուղղություններով: Ազգաբանագիտության և պատմության արարական խմբագրության լիակատար բնագրի հայտնաբերումն ու նրա մինչ այդ անհայտ հատվածի ուսումնասիրությունն ու գիտական հրատարակությունը (1963 թ.) Ա. Տեր-Ղևոնդյանին տարավ դեպի այդ կարևոր սկզբնաղբյուրի առավել բազմակողմանի հետազոտմանը, որի արդյունավետ հետևանքներն են իր «Պատմության» և սպա, զորարար բնագրին զուգահեռ, ամբողջական աշխարհարար թարգմանություննե-

րի հրատարակությունները (1977, 1983): Ավելի ուշ նա կատարեց նաև իր պատմագիտական հետազոտությունների հետ սերտորեն առնչվող, VIII դարի պատմիչ Ղևոնդի Պատմության աշխարհաբար թարգմանությունը (1987 թ.):

Սակայն Ա. Տեր-Ղևոնդյանի հիմնական հետազոտությունների բնագավառը VII—XII դդ. Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության հարցերն են եղել: Այդ շրջանի հայկական, առավել ևս արարական սկզբնաղբյուրների համակողմանի համեմատական ուսումնասիրությունները հիմք հանդիսացան ոչ միայն արժեքավոր հրատարակումների, ինչպիսին էր XII—XIII դդ. արբեր պատմիչ Իբն-ալ-Ասիրի՝ Հայաստանում արաբական նվաճումների ու տիրապետության, Բագրատունյաց և Կիլիկիայի հայկական թագավորությանը վերաբերող ընդարձակ հատվածների հայերեն թարգմանությունն ու ուսումնասիրությամբ և հարուստ ժանդագրություններով «ժողոված հրատարակությունը, այլ նաև ծնունդ տվին բազմաթիվ այլ մեծ ու փոքր ուսումնասիրությունների, աղբյուրագիտական և բանասիրական ուշագրավ նորությունները պարունակող հոդվածների ու գիտական հաղորդումների:

Լայն ու բազմաբովանդակ է եղել Ա. Տեր-Ղևոնդյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Քաջ տիրապետելով արևելյան ու եվրոպական մի քանի լեզուներին, նա կարճ ժամանակում ոչ միայն կարողացավ հայ աղբյուրների հետ համագրությամբ խորազնին ուսումնասիրության ենթարկել արաբական աղբյուրների հարուստ տվյալները, այլև քննադատաբար յուրացնել արևմտյան արևելագիտական և հայագիտական զբաղանդությունը: Այդ նպատակալաց հետազոտությունների արգասիքը եղան մեր պատմության մի քանի ճանդուցային հարցերի լուսարանմանը նվիրված հայերեն, ռուսերեն, ինչպես նաև ֆրանսերեն հոդվածները:

Արարական խալիֆայության և Բագրատունյաց Հայաստանի ժամանակաշրջանի պատմաաշխարհագրական, վարչական և սոցիալ-տնտեսական խնդիրների վերաբերյալ մի քանի տասնյակ ուսումնասիրությունների հրատարակումը որոշակի ճանաչում բերեց Ա. Տեր-Ղևոնդյանին որպես պատմական այդ ժամանակահատվածի հրատարակչության մի քանի ճանդուցային հարցերի լուսարանմանը նվիրված հայերեն, ռուսերեն, ինչպես նաև ֆրանսերեն հոդվածները:

Արարական խալիֆայությունը՝ ռուսերեն ծավալուն մի մենագրություն, որը լույս տեսավ 1977 թ., նրա հեղինակին շնորհելով պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Իր գլխավոր գիտահետազոտական պրպերտումներին զուգահեռ Ա. Տեր-Ղևոնդյանը կատարել է նաև հայ և արաբ մատենագրական, բնագրագիտական և վիճագրական նյութի բազմա-

թիվ ուշագրավ ուսումնասիրություններ և հրատարակումներ: Մի շարք հոդվածներ նվիրված են հայ և քրիստոնյա արաբական մատենագրական առնչություններին, արաբական մատենագրության մեջ հայ ժողովրդի ծագման, սովորությունների, առասպելների ու յեզանդների արձագանքների հրատարակմանն ու գիտական քննությունները: Նա քաղատեղյակ էր հայերենի և արտասահմանյան հայագիտության և արևելագիտության ընթացքին: Միշտ հետեւելով հրատարակական նորություններին ու գիտական մամուլին, նա հաճախ հանդես էր գալիս արժեքավոր գրախոսություններով և բնագիտական հոդվածներով:

Ա. Տեր-Ղևոնդյանը իր նշանակալից ավանդըն ունի Հայ ժողովրդի պատմության բազմաստորյակի ստեղծման գործում: Նրա գրչին են պատկանում II և III հատորների այն բաժինները, զյուսներն ու ենթագլուխները, որոնք վերաբերում են VII—IX դդ. քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմությանը, մինչև XII դարը ներառյալ պատմական Հայաստանի տարածքում արաբական և այլ մահմեդական իշխանությունների համակարգին, արաբական երկրներում հայկական գաղթյալներին ու հայարաբական քաղաքական, տնտեսական ու մշակութային կապերին: Նույնպիսի նվիրվածությամբ նա շարունակում էր մասնակցել նաև մեր պատմության ուսերին շարունակելով շարադրման ու խմբագրական աշխատանքներին: Նշանակալից է նաև նրա մասնակցությունը Հայկական սովետական հանրագիտարանում: Մեծ հետաքրքրությամբ էին լսվում նրա զեկուցումներն ու գիտական հաղորդումները ինչպես մեր հանրապետության, այնպես նաև միութենական ու միջազգային գիտական կոնֆերանսներում ու գիտաժողովներում: Նրա յուրաքանչյուր հաղորդում Մոսկվայում պարբերաբար կալաքող Բարտոլոյան ընթերցումներում պարունակում էր գիտական ինքնատիպ մի նորույթ և լսվում էր մեծ ուշադրությամբ:

1981 թ. ի վեր Ա. Տեր-Ղևոնդյանը գլխավորում էր ԳԱ արևելագիտության ինստիտուտի աղբյուրագիտական և բնագրագիտական բաժինը, որտեղ կենտրոնացված էին արևելյան երեք լեզուներով՝ արաբերեն, պարսկերեն և թուրքերեն, ինչպես նաև հայերեն պատմագրական, մատենագրական, վիճագրական հուշարձանների ուսումնասիրության, հրատարակման և թարգմանական աշխատանքները: Մեծ հոգատարությունն ու մտահոգությունը հայ արևելագիտության ավանդները շարունակելու և ձեռնհաս մասնագետներ պատրաստելու ուղղությամբ, Ա. Տեր-Ղևոնդյանին մղում էին զուգահեռ հետազոտական, անձանձիր աշխատանքի, որը և արդեն սկսել էր տալ առաջին պտուղները: Այդ մասին են վկայում բաժնի

աշխատակիցների ու աուպիրանտների պաշտպանության ներկայացրած գիտերտացիոն աշխատություններն ու գիտական հրատարակությունները:

Արդյունավետ ու բեղմնավոր էր նաև Ա. Տեր-Ղևոնդյանի ուսումնամակալարժական գործունեությունը Երևանի պետական համալսարանի արևելյան ֆակուլտետում, որտեղ նա դասախոսում էր «Արաբական երկրների հին և միջին դարերի պատմություն», «Արաբական բանասիրության ներածություն» առարկաները և մասնագիտական այլ հատուկ կուրսեր, ղեկավարում և գրախոսում էր շրջանավարտների ավարտաճանաչում, օգնում, խրախուսում և ուղղություն էր տալիս գիտական աշխատանքի հակումներ գրքակորոզ ուսանողներին:

Բարձր գնահատելով նրա ավանդը արաբագիտության բնագավառում, Հալեպի համալսարանի ղեկավարությունը նրան ընտրել էր գիտության պատմության ինստիտուտի պատվավոր

անդամ, իսկ 1986 թ. նա ընտրվեց նաև Հոմի Տիբերիների ակադեմիայի պատվավոր անդամ:

Ա. Տեր-Ղևոնդյանը միաժամանակ ինտելեկտուալ բարձր արժանիքներով օժտված շիտակ ու ազնիվ անձնավորություն էր, մեծ հայրենասեր ու քաղաքացի, մինչև վերջը նվիրված իր ժողովրդին: Թիկունքում ունենալով ավելի քան 30-ամյա գիտական աշխատանքի համընդհանուր ճանաչում գտած վաստակ, նա գտնվում էր ստեղծագործական ուժերի հարաճուն ծաղկման շրջանում, լի եռանդով՝ շարունակելու բեղմնավոր գործունեությունը և հարստացնելու հայրենի գիտությունը նորանոր մեծարժեք գործերով: Ունենալով տարածամ մահը եկավ ընդհատելու արգասավոր կյանքը, սակայն եղած վաստակով արդեն նա իր ուրույն ու որոշակի տեղն ունի գրաված հայագետ-արևելագետների պանթեոնում:

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Գ. ՓԱՓԱՋՅԱՆ

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

<i>Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԶ դ.)</i>	5
<i>Զրատիրության մասին դիվանական վավերագրերը և չաճ Սաֆիրի 1638 թ. հրովարտակը</i>	17
<i>Մատենադարանի թուրքերեն վավերագրերի աղբյուրագիտական արժեքը</i>	27
<i>Новые источники по истории курдского народа</i>	39
<i>Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դար)</i>	57
<i>Ակոռու Ս. Հակոբա վանքի քյոթուկը</i>	73
<i>Ռաշիդ-էդ-դինը Կիլիկյան Հայաստանի մասին</i>	99
<i>Понятия “мулк”, “малек” и “малеканэ” по кабале-вакфнаме (1431 г.) селений, принадлежавших Эчмиадзину</i>	111
<i>Ներսես Աշտարակեցու 1823 թ. բողոքագիրը</i>	117
<i>Источниковедское значение турецких документов Матенадарана</i> ..	130
<i>Այգիներն ու այգեսեղերը ըստ հայերեն և պարսկերեն կալվածագրերի</i>	141
<i>Новые эпиграфические данные о последних отпрысках армянской феодальной знати в Сюнике</i>	160
<i>Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը</i>	169
<i>Կուլբենկի որդիներ Գուլաբիի և Գալուստի 1847 թ. Սուլթան Աբդ-ուլ-Մեջիդից ստացած արտոնագրերը</i>	190
<i>Մելիք Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը</i>	207
<i>Երևանի Մուհամմադ-խան Ղաջարի՝ Միրզա-Աղա Սրպկիին և Ահմադ-Աղա Զիլանիին շնորհած աղայության հրամանագրերը (XVIII դ.)</i>	212
<i>Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի Վանի էյալեթին վերաբերող օսմանյան դիվանական վավերագրերը</i>	224

<i>Armenia and Iran VI. Armeno-Iranian Relations in the Islamic Period...</i>	238
<i>Մուրադ-թափայի նորահայտ թուրքերեն արձանագրությունը...</i>	265
<i>Դավիթ Բեկի պայքարը օսմանյան ներխուժման դեմ և հարաբերությունները իրանական հակաօսմանյան դիմադրական ուժերի հետ.....</i>	273
<i>Возвращаясь к дешифровке Урутской эпитафии.....</i>	287
<i>Արևմտահայությունը վիճակը ըստ Օսմանյան սուլթանական ֆերմանների.....</i>	298
<i>Նոր նյութեր Արևելյան Հայաստանում թուրքական իշխանությունների հարկային քաղաքականության վերաբերյալ.....</i>	311
<i>Միրզա-Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի»-ն որպես Արցախի 18-19 դդ. պատմության սկզբնաղբյուր ...</i>	328
<i>Մ. Փորթուգալյանը Արմենական կուսակցության մասին.....</i>	333
ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
<i>«Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ի Ա հատորը.....</i>	337
<i>«Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Մասն Բ..</i>	344
<i>Ձեռագրերի Յուզյակ. 1 հատոր.....</i>	350
<i>Խորենացու «Պատմությունը» պարսկերեն.....</i>	355
<i>Բառարանագրական հուշարձաններ. Թուրքերեն-հայերեն բառարան.....</i>	357
ՄԱՄՈՒԼԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ	
<i>Հայրենի դպրոցության անխոնջ մշակը.....</i>	359
<i>Նահատակ ֆիդայու նամակը.....</i>	362
<i>Մրցույթն ավելորդ է.....</i>	366
ԱՅԼ	
<i>Մաշտոցյան մրցանակի առաջին դափնեկիրը.....</i>	369
<i>Արամ Տեր-Ղևոնդյան (Մահախոսական).....</i>	371

ՀԱԿՈՒՔ ՓԱՓԱԶՅԱՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Հատոր Բ

NAKOB PARAZIAN

ARTICLES

Volume II

ԱԿՕՍ ՍԱՍՅԱՆ

СТАТЬИ

Tom II

Պատկերների մշակումը՝ Մարտիրոս Տղմաճեանի

Համիկ Մխիթարյանի

Մարիամ Բրուտյանի

Անահիտ Խանգաղյանի

Սրբագրումը՝ Մարիամ Բրուտյանի

Էջարումը և ձևավորումը՝ Համիկ Մխիթարյանի

Հայկիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տղմաճեանի

Հրատարակչական խմբագիրը՝ Հայկ Համբարձումյան

Մատենագարան

Մեսրոպ Մաշտոցի անվան Հին ձեռագրերի ինստիտուտի Հրատարակչական բաժին

Երևան, Մաշտոցի պող. 53, Հեռ. (+374)10 513033

publishing.matenadaran@gmail.com

Չափսը՝ 70X100, 1/16: Ծավալը՝ 25^{1/2} տպ. մամուլ:

ISBN 978-9939-9237-7-2



9 789939 923772



Անտարես

Գիրքը տպագրված է

«Անտարես» հրատարակչատան տպարանում

ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի պ. 50ա/1

Հեռ.՝ (+374 10) 58 10 59

antares@antares.am | www.antares.am